



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

**You are free to:**

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

4922

297

2-99

2010

297


2-99

ար

2001

ՄՈՒՀԱՄՄԷՏ

ԳՈՒՐԱՆ



Արարատու բնագրին և Գագմիրսիի՝ Ամիրխանի  
 և այլ հեղինակաւոր արարագէտներու բարգա-  
 նութեանց առաջնորդութեամբ հայրենի վերածեց

ՅԱԿՈՅ ԳՈՒՐՊԷՆՅԱՆ



Վ.Ա.Ռ.Ն.Ա.

ՏՊԱՐԱՆ «ԻՐԱՒՈՒՆԷՔ»

1912

8833



1005

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՂՄԷ

27663-4.3

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

Գիրք ստանալու իրաւունք ունի ամէն անգամ :

15 օրէն պէտք է վերադարձնել գիրքը կամ նորոգել պայմանաժամը գրադարանապետին լուր տալով :

Ոչ անդամներ կրնան գիրք ստանալ օրական մէկ սէնթ վճարելով : գիրքերը վերադաձուելու են մաքուր եւ անաղարտ : փնտուած գիրքերու համար տուգանք մը կը պահանջուի գիրքի արժէքին համեմատութեամբ զոր կ'որոշէ գրադարանապետը :

Կորուած գիրքին գնոյն եռապատիկ գումարով տուգանքի կը դատապարտուի կորսնցնող անձը :

Կ'սպասուի որ Պ. ընթերցողներ՝ իբրև նկարագրի, և սկզբունքի տէր անձինք՝ համակերպին վարչութեանս կողմէն ներկայացուած սոյն կանոններուն :



10480-57

2012

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Թ Ա Ր Գ Մ Ա Ն Ի Ջ Ի Ն Կ Ո Ղ Մ Է

Իսլամական կրօնքին հիմը կազմող Գուրանը որ 250-300 միլիոն հետեւողներ ունենալով, գրեթէ է վեր շատ մը ազգերու ու պետութիւններու ճակատագիրը վճռողն եղած է, և իմասնաւորի հայերու անդեալին ու ներկային վրայ անզին ազդեցութիւն ունեցած է և ունի, կարծէ որ մեր ուսումնասիրութեան առարկայ ըլլայ, որպէսզի գէթ փոքր ի շատէ թափանցենք անոր հետեւող մեր դրացիներու, մեր վրայ տիրողներու հոգեբանութեանը, հակումներուն ու արամադրութիւններուն, որոնք գրէթէ միշտ Գուրանի պատգամներէն ու քարոզներէն կը ներշնչուին և կառաջնորդուին իրենց թէ՛ քաղաքական, թէ՛ տնտեսական, թէ՛ ընկերական կեանքին և թէ՛ յարաբերական ամէն փուլերուն մէջ :

Գուրանին՝ որ Շէրաաթին ալ հիմն է, հայերէնը ունենալ անհրաժեշտութիւն մըն էր մեզի համար՝ մինչ Եւրոպացիք պարզ հետաքրքրութենէ մղեալ շատ մը լեզուներու թարգմանած են զայն : Հայերու համար այդ անհրաժեշտութիւնը, այդ պակասը ընցունելու նպատակաւ ձեռնարկեցինք սոյն գործին :

Գուրանին շատ մը ճապարղ ու մօթ կէտերը հասկանալի ընծայելու համար, նոր գրքով ամբողջացուցած ենք զօրութեամբ իմանալի բառերը, և բազմաթիւ ծանօթութիւններով լուսարանած ենք ինչ ինչ պատմական կէտեր ու պարագաներու նաև գիրքի սկիզբը Մուհամմէտի համառօտ կենսագրականը դնելէ զատ, վերջի մասէն յետոյ ալ «Պատկեր նիւթոց» մը աւելցուցած ենք, յաւելում մը, որ մեծ գիրութիւն կ'ընծայէ ընթերցողներուն, որոնք այդ

չնորհիւ մէկ ակնարկով կը տեսնեն ինչ ինչ նիւթե-  
րու մասին Գուրանին բոլոր խօսքերը մի առ մի  
Առանց այդ «Պատկեր Նիւթոց»ին ու ծանօթութիւն-  
ներուն և առանց Մուհամմէտի կեանք ու վայքէն-  
տեղեկութիւն ունենալու՝ յոկ Գուրանը կարգացող  
ներ որոշ գազափար մը չեն կարող կազմել անոր  
պարունակութեանց մասին: Վասն զի չէ կարելի  
երևակայել զիրք մը որ Գուրանին չափ ճապաղ,  
խառն ի խուռն և առանց դասաւորումի ըլլայ:

Սենք աշխատեցանք կարելին ընել Գուրանին այս  
հայերէնը հասկանալի ընծայելու համար ընթերցող-  
ներուն. և բնագրէն բառ մը չպակսեցնելու համար՝  
կրկնութիւններէ չխուսափեցանք, հակառակ հայ  
գրականութեան պահանջին, որպէսզի թարգմանու-  
թիւնը հարազատ ըլլայ:

Յ. Գուրպիք:



## Մ Ո Ւ Հ Ա Մ Մ Է Տ Ի

### Կ Ե Ն Ս Ա Գ Ր Ա Կ Ա Ն Ը

Արարներու մարգարէն Մուհամմէտ ծնած է 571 թ.  
(բառ սմանց 569 թն) Մէքքէի մէջ: Իր հայրը Ապտու-  
լահ Գուրեյշիան ցեղին կը պատկանէր. որ իբր թէ  
չառաւիզն եղած ըլլայ Արրահամի հարճորդի Իսմայիլի  
սերունդին:

Մուհամմէտի ծնունդէն քանի մը ամիս առաջ հայ-  
րը մեռած եւ մայրը Էմինէն ալ տկար ըլլալով, ե-  
րախան Հալիմէ անունով վրանաբնա՛յ գայնակի մը  
յանձնուեցաւ: Մօրը կեանքն ալ կարճ տեւեց եւ  
մանուկ Մուհամմէտի պաշտպանութիւնը ստանձնեց  
մեծ-հայրը. Ապտուլ Մութթալիպ. բայց այս ծերուկն  
ալ երկու տարի յետոյ մեռնելով, որը Մուհամմէտը  
մնաց իր հօրեղբոր Ապու Թալիպի պաշտպանութեան  
տակը: Իր այս պատանեկութեան շրջանին հովու-  
թեամբ եւ յետոյ ուղտապանութեամբ զբաղեցաւ, եւ  
կարաւաններու հետ Սուրիա երթեւեկելով, քրիս-  
տոնեաներու հետ շփում ունեցաւ. որով կրօնքի ու  
վաճառականութեան մասին փոքր իշատէ հմտութիւն  
ստացաւ:

Մէքքէի մէջ մսմահարուստ վաճառականի մը այրի-  
ացեալ կիներ Հատիճէ իրին գործակալ կարգեց Մու-  
համմէտը, որ այդ պաշտօնով շարունակեց Սուրիա  
երթեւեկութիւնը: Հատիճէ հրապարուելով իր գոր-  
ծակալին գործունէութենէն եւ թարմ գեղեցկութենէն  
ամուսնութիւն առաջարկեց զոր Մուհամմէտ սիրով  
ընդունեցաւ, թէեւ կիներ 38-40 տարու էր, եւ ինք  
24 տարեկան: Ատիճէ ազդեցիկ եւ խորամանկ կիւ-  
մը ըլլալով, Մուհամմէտ անոր ենթարկուեցաւ, ու  
մինչեւ անոր մահը (619) ուրիշ կին չկրցաւ առնել:

Մուհամմէտը իր արտոնագրով չորս արջիկ ունենալով, փոքրը Ֆաթիմէն ամուսնացուց Ալիին հետ, որ իր հօրեղբոր Ապու-Թալիպի որդին էր: Թէեւ երկու մանչ զաւակ ալ ունեցած է, բայց կանուխէն մեռած են:

Մուհամմէտը քառասուն տարեկան էր երբ իր քարոզութիւնը սկսաւ. իսկ անկէ առաջ իր տասն հինգ տարուան կեանքին համար վաւերական պատմութիւններ կը պակսին. միայն կ'ըսուի թէ այդ շրջանին Մուհամմէտ ստէպ Հիրայ լեռը երթալով, քարայրի մէջ կը ճգնէր Բամազան ամօռոյն: Գիշեր մը երատիճէ կարթննայ ու կը տեսնէ որ Մուհամմէտը չկայ. Սպասուորները կը զրկէ փնտօնելու, եւ անա Մուհամմէտ կուգայ ու սապէս կը պատմէ. «Խորունկ քունի մէջ էի երբ երազիս մէջ հրեշտակ մը երեւցաւ ձեռքը մետաքսեայ լաթ մը բռնած, որուն վրայ գրերով լեզուն էր, գայն ինձ ցոյց տուաւ ըսելով, կարո՞ւ Պատասխանեցի. է՛ն կարո՞ւ: Ես ինձ փաթաթեց այդ լաթով ու կրկնեց կարո՞ւ: Ես ալ կրկնեցի թէ է՛ն կարո՞ւ: Ես պատասխանեց, կարո՞ւ յանուն Աստուծոյ որ սրեղծած է ամէն բան եւ մարդը իմ յրացեալ արեւնէ, կարո՞ւ Տէրըդ անունովը որ վերանշէ եւ որ սովորեցուցած է Գիրքը եւ այն ամէն որ մարդ դեր գիտեր: Ես այս բառերը կրկնեցի հրեշտակէն յետոյ, եւ անիկա հեռացաւ. ես ալ արթնացայ, եւ գուրս ելայ երթալու լեռնի վերս Հոն լեցի գլխուս վերեւէն ձայն մը որ կրսէր, Ով Մուհամմէտ՝ դու Աստուծոյ մարգարէն ես եւ ես Գարբէլը: Վեր նայեցայ եւ տեսայ հրեշտակը. անչարժ մնացի աչքերս անոր վրայ առած, մինչև որ անյայտացաւ:» Խաթիճէ յուզուեցաւ այս պատմութիւնէն եւ զնաց իր հօրեղբոր որդի վարազային պատմեց: Վարազա քրիստոնեայ աւրար մըն էր եւ Աւետարանը արարելէն կը թարգմանէր: Վարազա լսելով Մաթիճէի պատմածը, ըսաւ

Ի՞նչ քանի որ Գարբէլը յայտնուած է Մուհամմէտին, ուրեմն սա Մովսէսին եւ Յիսուսին նման մարգարէ է: Այս եւ ուրիշ պարագաներով Մաթիճէ կը լանար համոզել Մուհամմէտը թէ իրօք մարգարէ է:

Իրողութիւնը այն էր որ Մուհամմէտ իր մանկութիւնէն լուսնոտութեան (սարա) ենթակայ էր: Մանկութեան օրերուն երբ տակաւին դայեակին քով էր, գետին ինկած է ուշակարոյս ու լուսնոտած, եւ սթափելուն պատմած էր, թէ երկու մարգիկ իր փոքր ճեղքեցին եւ մէջը բան մը փնտօնեցին: Դայեակը Մուհամմէտը դիւանար կարծելով մօռ վերադարձուց: Իսլամ պատմիչներ յօրինած են կարգ մը ուշաթափութեան դէպքեր եւ զորս իբր տեսիլք կամ յայտնութիւն կը ներկայացնեն: Այս տեսիլքներու ամէնագլխաւորն է Մուհամմէտի պիշրուան ճամբորդութիւնը՝ Գարբէլի առջնորդութեամբ Մէքքէէ Երուսաղէմ եւ անկէ երկինք տարուիլը: Ուր՝ եօթը երկինքներէն վեր՝ Աստուծոյ գահը եւ շատ բաներ տեսնելը ու ետ գարձուիլը: Մինչդեռ Մուհամմէտի Աւիշէ կինը վկայած է թէ այդ ճամբորդութեան զիշերը ամուսինը մինչեւ առաջտիւ իր քովն էր, հետեւաբար պատմածը պարզ երազ մըն է:

Մուհամմէտի ժամանակակից Արաբիան խոր ազդեցութեան ու սնանաւատութեան մէջ էր: Արաբները մեծու մասամբ կուսապաշտ էին. Բեապէի տաճարը որ Արաբահամի ժամանակէն հիմնուած կ'ենթադրուի, կուռքերով յեցուած էր: Մուհամմէտ ուղեց Արաբահամի միաստուածեան կրօնքը վերահաստատել եւ կուռքերը ջնջել: Այն ատեն թէեւ այդ կողմերը բազմաթիւ հրեաներ ու քրիստոնեաներ կային, բայց Մուհամմէտ այդ երկու ճշմարիտ կրօնքներէն տարբեր կրօնք մը կուղէր հիմնել եւ անոր հիմնադիրը ու ղեկավարը ինք ըլլալու Այս նպատա-

կառնուած իր քարոզները երբ 40 տարեկան էր: Իր քարոզութեան հիմն էր «Ատուած մէկ է եւ Մուհամմէտ անոր մարգարէն է»: Իր առաջին քարոզները միայն ծաղրանքի առարկայ եղան. բայց բոլոր Արաբիոյ սրբազայրը համարուող Քեապէի տաճարին առջեւ ուր 360 կուռքեր շարուած էին, կուռքերը կործանելու յանդուգն ու յամառ թելադրանքովը Մուհամմէտ ատելի դարձաւ շատերու, որոնք սկսան անոր կեանքին դէմ դաւադրել. սակայն իր աղագահանները կը պաշտպանէին զանի. թէեւ անոր քարոզած իսլամական կրօնքը ընդունած չէին տակաւին: Մուհամմէտ փողոցներէ անցած ատեն շատեր երեսնէ վեր կը պոսային. «Իննդ. յիմար. խարեբայ, դիւանար» ըսելով (Տես Գուրանի ՀԳ. Գլուխը):

Սակայն եւ այնպէս իրեն հետեւողներու թիւը աւելցաւ ու խտանացութեանց առթիւ, երբ Արաբիոյ ամէն կողմերէն ու խտի կուգային Մէքքէ: Մուհամմէտ համարձակ կը քարոզէր այդ ուխտաւորներուն առջև: Մէտինէցք ուխտաւորներ ստուար թիւով հաւատացին անոր: Եւ երբ Մուհամմէտ եւ իր հետեւորդները ստիպուեցան Մէքքէի հալածողներէն փախչիլ, գացին Մէտինէ ապաստանեցան իրրեւ Մուհամմէք:

Մուհամմէտի ցեղակից Գուրէյցիները անոր կ'առաջարկէին կա՛մ չքարոզել եւ կամ հրաշք մը ցոյց տալ: Եւ կը պատասխանէր. «Իմ պաշտօնս է միայն միաստուածեան կրօնքը քարոզել. ինձ տրուած չէ հրաշք գործել»: Եւ ինչպէս Գուրանին մէջ կ'երեւայ. Մուհամմէտ ոչ մէկ հրաշք չէ գործած

Մուհամմէտ որչափ ատեն որ Մէքքէի մէջ էր. իր քարոզութիւնները շափաւոր և բարոյալից էին և ինք անձամբ անպարկեշտ հակումներ ցոյց չէր տուած. վասնզի միշտ հալածանքի ենթակայ ու անզօր ըլլալով, անհաշիւ քայլեր չէր առներ ու մասամբ կը

համակերպէր իսկ կուսպաշաներուն. ինչպէս որ իր մէկ քարոզին մէջ Արաբներու մէկ քանի կուռքերն ալ պաշտել յանձնարարեց (Ը. 67-68): Բայց երբ Մէտինէ փախչիլ ստիպուեցաւ (մեր 622 թուականի Յունիս ամսոյն, և այդ օրէն կ'սկսի Մահմէտականաց Հիճրէթի թուականը), հոն սկսաւ յոյժ դատապարտելի կեանք մը վարել, որ երբէք չէր համապատասխաներ մարգարէի մը կեանքին: Մէտինէի մէջ անոր գործերը ու քարոզները գլխաւորապէս սա մօլութեանց յագուրդ տալու կը ծառայէին. աւարառութիւն, աշխարհակալութիւն և իգամօլութիւն: Մեր այս ըսածին ապացոյց են Գուրանին Մէտինէական գլուխները. որոնք կը պարտաւորեն իր հեռեւորդները կարաւաններ կողոպտելու, զիւղեր ու քաղաքներ այրել ջարդելու անխնայ և անպայման տէր դառնալու պարտուած ժողովուրդներու ինչքերուն, հողերուն, կիներուն և աղջիկներուն: Այս խեղճ գերութիւնները յաղթական միւսիլմին իրրեւ «աջ բազուկին արգար վստակը» պարտաւորուած էին ցմահ և սերունդէ սերունդ ծառայել մարգարէին ու իր հետեւորդներուն քմահաճօքին ու կիրքերուն ստրկօրէն ու մեքէնաբար: Եւ հաւատացեալները բնաւ պատասխանատու չէին անոնց համար ոչ մարդոց և ոչ Աստուծոյ առջև:

Մարգարէն շարունակ ի մարտ հրաւիրուած հաւատացեալներուն յաջողութեան պարտալիք վերք վայելքները ապահովուած էին. իսկ եթէ պատերազմի մէջ մեռնէին, անոնց աւելի փառաւոր ու հեշտալի գրախար խոստացուած էր. ուր, ամէն վայելքէ դատ. խոշոր ու սև սև աչքերով և կլորիկ ծիծերով բողմաթիւ աղջիկներ—իրենց տարիքին համապատասխան—և անթառամ թարմութեամբ մանչեր անոնց հաճոյքին պիտի ծառայէին (Տես ՄԵ

46-78: ԾԶ. 14-39: ՀԶ. 11-23: ԼԸ. 50. 51:  
(ՊԳ. 70-73: ԽԷ. 16-17: ՀԼ. 31-36:)

Մուհամմէտի փրկամտութեան չափը ցոյց տալու համար կը բաւէ ըսել, թէ անիկա 30ի չափ հարճեր ու գերուհիներ միշտ իրեն արամադրելի ունենալէ զատ, 10-12 օրինաւոր կիներ ունէր: Ինք 50 տարեկան եղած ատեն 6 տարեկան Այիշէին հետամուտնացաւ. որուն հայրը Ապուպէքիրն էր. բայց Այիշէն 9 տարեկան ըլլալէ յետոյ միայն իր տունը առաւ: Մուհամմէտ երբ 55 տարեկան էր, օր մը իր որդեգիր Չէյտին տունը երթալով, անոր կինը, Չէյնէպը, առանձինն գտաւ ու սիրաբանեց անոր: Չէյնէպը ցաւալի ղէպքը ամուսնոյն պատմեց, սա ալ այդ պատճառաւ ձգեց իր կինը. մարգարէն ի զուր հասողեց օր չձգէ: Եւ Չէյնէպը իրեն կին առաւ: Բայց այս գայթակղելի վարմունքին առթիւ. ժողովուրդի կարծիքին առջև չդատապարտուելու համար, յօրինեց Գուրանի 1Գ. գլուխին կարգ մը պատգամները. տես ի մէջ այլոց 37 բղբ:

Աւարտառութեան ու ձէննէթի փայլուն խոտուսներով Մուհամմէտ հետզհետէ իր հետևորդները կը բազմացնէր և զինու զօրութեամբ շրջակայ գիւղերը, քաղաքները ու ցեղերը իրեն կը հպատակեցնէր. և վերջապէս լաջողեցաւ Մէքքէին ալ տիրել և բոլոր Արաբներուն բռնութեամբ բնդուներէ տալ իսլամութիւնը և իր մարգարէութիւնը. ով որ չընդունէր սպաննուելու էր (Թ 5.): Այս կերպով ամբողջ Արաբիան նուաճելէ զատ, օտար վեհապետներու ալ, Յունաց, Պարսից և այլոց, ղեսպաններ ղրկելով, կը հրաւիրէր զանոնք բնդուներու իսլամութիւնը ու իր մարգարէութիւնը: Բայց երբ տեսաւ թէ իր հրաւերը ապարդիւն մնաց, սկսաւ ոչ իսլամ պետութեանց ղէմ կրօնական պատերազմի

և նոր արշաւանքներու: Հիճրէթի իններորդ տարին Մուհամմէտ լսեց թէ Յունաց կայսերական քրանակ մը ղէպի Արաբիա կը յառաջանայ. ուստի 30000 մարտիկներ իր շուրջ հաւաքելով, մինչև թէպուք արշաւեց, բայց իր ղէմ թշնամի բանակ չտեսաւ. և սակայն այն կողմերու հրեայ և քրիստոնեայ ցեղերը նուաճելով ու կողոպտելով ետ դարձաւ: Այդ տարւոյն մէջ էր որ Այիին տուաւ հրովարտակ մը կուպաշաները կոտորելու և քրիստոնեաները ու հրեաները հարկատու ընելու իր ստրակներ (տես Թ գլուխ.) և Այի գործադրեց այդ հրովարտակի պահանջները: Հետևոր կողմեր զանուող շատ մը արաբ իշխաններ ու ցեղապետներ Մուհամմէտի և իր զօրավարներուն յարձակումին ենթարկուելու վախով, ինքնաբերաբար կուգային այլևս Մուհամմէտին հպատակութիւն յայտնելու, և առ անի իսլամութիւնը կ'ընդունէին:

Հիճրէթի տասներորդ տարին մարգարէն Ային Եէմէի երկիրը զրկեց հեծելազօրքով: Հոնկէ շատ աւարներ ու գերիներ առաւ, հակառակ օր ժողովուրդը այն ատեն քրիստոնեայ ու հրեայ էր. շատ մը ձուլ ոսկի զրկեց Մուհամմէտին: Այդ ոսկին բաժնելու ատեն մեծ կռիւ առաջ եկաւ: Արաբիոյ ուրիշ կողմերը զանաւազ քրիստոնեաներուն՝ որոնք մահ մէտականութիւնը չէին ընդուներ, տարեկան տուրքեր սահմանեցան. իսկ յետոյ, Էծէթի իսլամութեան ժամանակ, քրիստոնեաները Արաբիանէն չբուրս հանուեցան:

Այս տարւոյն մէջ էր որ Մուհամմէտ հանդիսաւոր և վերջին ուխտագնացութիւնը կատարեց ի Մէքքէ. և մարգարէն ինքն ալ կատարեց այն ամէն ձեւ կերպութիւնները Մէքքէի, Քեսպէի ու շրջակայից մէջ, ինչ որ աւելի առաջ կը կատարէին կուպաշա Արաբները. անիկա միայն կուռքերը և արձանները

վերցուց. բայց թողուց Աև քարը և գայն համբուրեց  
ու կատարեց աւանդական ծէսերը. անշուշտ Արար-  
ները բոլորովին չվշտացնելու համար: (Տես Բ. 153.  
192—196):

Այդ ատենները Արարիոյ այլևայլ կողմերը ու-  
րիշ մարդարէներ ալ երևան եկան. բայց Մուհամմէտի  
և յետոյ իր խայրֆէներու ուժը գերակշիւս ըլլալով  
նուաճեցին միւսները:

Այլևս Մուհամմէտ ձերացած ու տկարացած էր.  
սեռային յարաբերութեանց մէջ իր գործած չափա-  
զանցութիւնները զինք անկարողութեան մասնած  
էին. այնպէս որ կրները սկսան վէճ յարուցանել,  
թէ մարգարէն զիրենք չգոհացներ. բայց աներները,  
Էմէր և Ապուպէքիր, խրատեցին իրենց ազջիկ-  
ները. ըսելով «մի պահանջէք անկէ այն բանը որ  
այլևս չկրնար»:

Եւ կըր մահուան օրերը մօտեցած էին. Մուհամմէտ  
իւր էն զեղանքի ու դեռափի կնոջ Այիշէի սենեակէն  
դպրաւ Ելլել չէր ու զեր. թէև Այիշէ չէր քաշուեր  
մերթ զանի անարգելէ, ըսելով, «դու ալ կը կարծես  
որ մարգարէ ես»:

Անոր հիւանդ ու մահամերձ վիճակը տեսնելով ազ-  
գականները, Ալին, Էմէրը, Ապու—Պէքիրը և այլք,  
սկսան վէճ յարուցանել թէ մարդօրէին յաջորդը ով  
պէտք է ըլլայ: Ետին իսկ հիւանդին սենեակին մէջ  
սկսան վիճարանիս Մուհամմէտի հօրեղբորորդին  
Իպնի-Ապպասը կրէ. իւր հիւանդութեանը ժամա-  
նակը երբոր ազգականները և աւագանին ժողովը-  
ուած էին, մարգարէն հրամարեց որ գրիչ կաղամար  
բերեն որ բան մը գրէ, որպէսզի իրմէ յետոյ մոլո-  
րութեան մէջ չիյնան: Բայց ներկաներէն ոմանք կաս-  
կածեցան, թէ Մուհամմէտ կուզէ իր մարգարէու-  
թիւնը ջրող բան մը գրել. ոմանք ալ կարծեցին թէ

իր յաջորդներուն կարգը պիտի նշանակէ: Ուստի  
ներկաները վէճ յարուցին. որը կըսէր, «ձգեցէ՛ք ու-  
զածը թող դուրսի. ուրիշներ կըսէին «պէտք չէ գրել  
իր սա ցնորեալ վիճակին մէջ»: Վէճը մեծցաւ և  
չթողուցին որ Մուհամմէտ իր վերջին խօսքը ըսէ:  
Սա ներդացած այլևս, վստաց իր քովէն գանձնք  
գողչելով. հեռացէ՛ք քովէս մարգարէի մը քով  
կոտորին վայել է»:

Վերջապէս Մուհամմէտ զլուխը Աիշէի կուրծքին  
վրայ դրած աւանդեց իր հօգին 632 Յունիս 8 ին:  
Իսլամ պամմիշներ կարգ մը խօսքեր կը գնեն Այի-  
շէին բերանը. իբրև թէ այս կիսը լսած ըլլայ Գար-  
րիէլ հրեշտակը և Մուհամմէտի խօսակցութիւնը հո-  
գիառութեան վայրկեանին: Մուհամմէտ թողուցաւ  
Մէտինէի մէջ:

\*\*\*

Գուրանին կաշմութիւնը: Գուրանը Մուհամմէտին խօսած  
քարոզներուն հաւաքածուն է: Մուհամմէտինք կար-  
դալ չգիտնալով, ինչ որ լսած էր լքրիսաթանաներէ,  
հրեաներէ և պատմութիւններէ. միայն բանաս-  
տեղծական դարձուածքներով իբր քարոզ կը պատ-  
մէր տգէտ արար ժողովուրդին: Անոր այդ քարոզ-  
ները գրի կառնէին ոսկորներու, կաշիի և տերևնե-  
րու վրայ, և ոմանք ալ դոց կը սովորէին: Այնպէս  
որ Մուհամմէտի ժամանակ գիրքի ձև Գուրան մը  
գոյութիւն չունէր: Ինչպէս որ Գուրանին մէջ ա  
կը տեսնուի որ կուսպաշտ Արարները անոր կըսէին,  
«դու մարգարէ չես. այլ օտարներէն կը սովորիս ու  
մեզ կը քարոզես»: Մուհամմէտ ալ լա խեղճ պա-  
տասխանը կուտար. «այն ինձ հետ խօսողները Արար  
չես այլ օտարներ են. բայց իմ խօսածներս արարե-  
րէն են». (Տես Ժ. 2. 105, 116, 3):

Մուհամմէտ մեռնելէն յետոյ՝ առաջին խալիֆէ Ապուպէքիրը հարկ տեսնելով Գուրանը անպատճառ ժողովել, պաշտօն տուաւ մարգարէին գրագիրներէն Զէյաին որ ժողովէ. և սա կատարեց ըստ կարելոյն Գուրանին երբմն հատուածները գոց ընողներու ու գրի աւնողներու աջակցութեամբ: Ապուպէքիրի մահէն յետոյ Էմէրը երբ խալիֆէ եղաւ իր Հաֆիզէ ազըհան քով (որ Մուհամմէտի այրին էր) ի պահ-դրուած Գուրանը փոփոխութեանց ենթարկեց կըրուի: Էմէրի սպաննուելէն յետոյ, այ երբ Օսման խալիֆէ հռչակուեցաւ, ուղեց Գուրանը տարածել բոլոր միւսլիմաններու մէջ. բայց տեսաւ թէ իրար հակասող չառ մը Գուրաններ կա՛ տեղ տեղ. ա-նոնց բոլորէն մէկ նոր Գուրան մտ կազմեց և միտ-ները ջնջեց այրեց. նոյն իսկ Մուհամմէտի հրամա-նով դրուած հատուածները: Ահա Օսմանի կազմած այդ Գուրանն է որ դարերէ ի վեր ի ձեռին ունին մահմէտական ժողովուրդները. և այդ Գուրանին հայերէնն է որ մենք այսօր ի լոյս կընծայենք:






## Ա. Գ. Լ. ՈՒԽ

(Ս ՈՒՐ Է Ֆ Ա Թ Ի Հ Է Թ Ի Ի Լ Բ Ի Թ Ա Պ)

### Մէֆֆէական 7 Պատգամ

Յանուն Աստուծոյ գթածի սղորմածի .

1. Փառք Աստուծոյ, աշխարհներու փրկող :
2. Գթած սղորմողին .
3. Գառստանի օրուան Տիրոջ :
4. Քեզ կը պաշտենք և օգնութեան կը կոչենք բեզ,
5. Մեզ շիտակ ճամբէն առաջնորդէ .
6. Անոնց ճամբէն, որոնց շնորհք ըրած ես .
7. Ոչ բարկութեանդ արեւանագոյնեաւն, ոչ ալ մոլորեալներու ճամբայէն :



## Բ. Գ. Լ. ՈՒԽ

(Ս ՈՒՐ Է Պ Ա Կ Ա Ր Ա)

### Մէֆֆէական 286 Պատգամ

Յանուն Աստուծոյ գթածի սղորմածի :

1. Ա. Լ. Մ. Այս այն գիրքն է որ անկասկածեմ է Աստուծազատներուն առաջնորդող է :
2. Որոնք որ աներեւոյթին կը հաւատան ու ազօթք կ'ենն և ինչ որ իրենց տուեր ենք անոնցմէ սղորմութիւն կուտան :

3. Եւ որոնք կը հաւատան այն բանին որ երկնքն վար իջած է քեզ, և անոր որ քեզմէ առաջ վար իջած է և անոնք հանդերձեային նշամամբ համոզուած են:

4. Անոնք իրենց Տիրոջմէ ուզիլ կառաջնորդութիւն և երջանիկ են:

5. Իսկ որոնք որ չեն հաւատար, անոնք վախցնես ալ չպիտի հաւատան, չը վախցնես ալ:

6. Աստուած անոնց սրտերը կ'ըփեր է, ականջները փցեր ու աչքերը վարագուրեր է և անոնց համար ծանր տանջանք կսպասէ:

7. Եւ կան մարդիկ որ կըսեն «մենք կը հաւատանք Աստուծոյ և վերջին օրուան», բայց ատոնք չեն հաւատար:

8. Անոնք կը խաբեն Աստուած և հաւատացողները. Բայց անոնք միայն ինքզինքնին կը խաբեն ու չեն հասկնար:

9. Անոնց սրտերը ախտաւոր են. ուստի Աստուած ալ կաւելցնէ անոնց ախտը և անոնց համար խիստ տանջանք կայ սուա խօսելու և պատճառաւ:

10) Եւ երբ անոնց կըսուի որ երկրի վրայ տպականութիւն մի՛ ընէք, կըսեն անոնք «մենք միայն առաքինութիւն գործողներ ենք»:

11. Աւասիկ թէ անոնք ապականողներ են, բայց չեն հասկնար:

12. Եւ երբ անոնց կ'ըսուի թէ հաւատացէ՛ք ինչպէս մարդիկ կը հաւատան, կըսեն անոնք «արդեօք հաւատանք յիմարներուն նման»: Իրենք են յիմարները, բայց չեն գիտեր:

13. Անոնք երբ հաւատացողներու կը հանդիպին, կըսեն «մենք կը հաւատանք». բայց երբ կառանձնան իրենց սատանաներու քով, կ'ըսեն «մենք ձեր հետն ենք, մենք միայն կը ծաղրենք զանոնք»:

14. Աստուած այնպիսիները կը ծաղրէ և զանոնք կը պահէ միշտ իրենց ըմբաստութեան մէջ շփոթեալ:

15. Անոնք են որ շիտակ ուղեցոյսը թողլով մոլորութիւնը առեր են. բայց իրենց առւատութիւնը անօգուտ եղած է և չեն կրցած առաջնորդուիլ:

16. Անոնք կը նմանին անսր որ կրակ վառած է և որ յուսաւորուած է անոր շորս կողմը, Աստուած մարած է յոյսը և զանոնք թողած է խաւարի մէջ որ շաննեն:

17. Սուլ, համր, կոյր են անոնք ու ետ չեն դառնար:

18. Նման երկինքի փոթորիկին, աւր խաւար, որոտում ու կայծակ կայ: անոնք մրրիկէն վախնալով թէ կը մեռնին, մտաբերին ականջնուն մէջ կը դնեն. բայց անհաւատները կը շրջապասէ:

19. Քիչ կը մնայ որ փայլատակումները անոնց աչքի լոյսը առնեն, ամեն անգամ որ անոնց համար կը փայլատակի, անոնք այդ լոյսով կերթան և երբ վերանին կը յիշէ կը կայնին: Եւ եթէ Աստուած ուզէր կառնէր անոնց լսելիքը և տեսանելիքը, վասնզի Աստուած ամենակարօլ է: Ո՛վ մարդիկ, պաշտեցէք ձեր Տէրը, որ ձեզ և ձեզմէ առաջինները ստեղծեր է որ երկրւղած ըլլաք:

20. Ան է որ երկիրը ձեզի համար անկողին ըրեր է և երկինքը շինութիւն, և երկինքէն ջուր իջեցուցեր է և անով պտուղները արտադրեր է, որով դուք սնանիք: Ուստի Աստուծոյ նմանող բաներ մի չինք, վասնզի դիտէք դուք:

21. Եւ եթէ դուք կը կասկածիք այն բանի մասին որ մենք վար իջեցուցեր ենք մեր ծառային, ուրեմն դուք ալ անոր նման օրինակ մը (սուրէ) բերէք և կանչեցէք Աստուծմէ զատ ձեր վկաները, եթէ ճշմարիտ էք:

22. Բայց եթէ չընէք, և չէք ալ հրահրել ընել, ուրեմն վախճէք այն կրակէն՝ որուն վառելիքը թըր ժարգիկ և քարեր են, պատրաստուած անհաւատներու համար:

23. Եւ աւետիս տուր անոնց որոնք կը հաւատան և բարեգործութիւններ կընեն, թէ անոնց համար գրախտեեր կան, որոնց տակէն զետեր կը հոսին: Ամեն անգամ որ անոնց պտուղովը կը կերակրուուին իբր կերակուր, կըսեն «այս այն է որով առաջ ալ կը կերակրուէինք». և անոնց նմանը կը տրուին անոնց. և անոնց համար այն գրախտեան մէջ մաքուր կիներ կան և անոնք յաւիտեան անոնց մէջ կը մնան:

24. Իբրք Աստուած չամչնար, որ մտեղ կամ անկէ վեր բան մը առակ բերէ: Իսկ անոնք որ կը հաւատան, գետեն որ ճշմարիտ է իրենց Տիրոջ կողմանէ. բայց անոք որ անհաւատ են կ'ըսեն «ի՞նչ կուզէ Աստուած այս առակով»: Նա անով շատերը կը մոլորեցնէ և շատերն ալ ուղիղ կառաջնորդէ: Սակայն նա անով միայն չարագործները կը մոլորեցնէ:

25. Անոնք որ Աստուծոյ ուխտը կը դրժեն անոր պայմանէն յետոյ և կը կտրեն ինչ որ Աստուած պատուիրեր է որ անով կապեն և երկրի մէջ ապահանութիւն կը դորձեն, անոնք են փաստողները:

26. Դուք ինչպէս Աստուած կուրանաք. մինչդուռ մեռածէիք և անիկա ձեզ ողջնացուց, յետոյ ձեզ պիտի մեռցնէ յետոյ կենդանացնէ: Վերջը անոր պիտի դառնաք:

27. Ան է որ երկրի վրայ բոլոր գտնուածները ձեզ համար ստեղծեց և յետոյ երկինքի վրայ հաստատուեցաւ, ու շինեց եօթը երկինքը և անիկա գիտէ ամեն բան:

28. Եւ երբ Տէրը ըսաւ հրեշտակներուն թէ «Ես

երկրի վրայ փոխանորդ մը կը սահմանեմ». անոք ըսին, «արդեօք անոր վրայ կը շինե՞ս զայն որ անոր մէջ ապականութիւն ընէ և արիւն թափէ, մինչդեռ մենք քու օրհնութիւնը կ'երգենք և քու սրբութիւնդ կը փառաւորենք»: Նա ևս ըսաւ, «Ես գիտեմ անիկա, զոր դուք չէք գիտեր»:

29. Եւ նա Աղամին սովորեցուց բոլոր անունները յետոյ զանոնք հրեշտակներուն ներկայացուց ու ըսաւ, «Ինչ ըսէք ասոնց անունները եթէ ճշմարիտ էք»:

30. անոնք ալ ըսին, «Սուրբ ես, մենք քու սովորեցուցածէդ զատ ուրիշ բան չենք գիտեր, ահա դուն ես գիտունը և իմաստունը»:

31. Անիկա ըսաւ «ո՛վ Աղամ, ասոնց ըսէ իրենց անունները»: Եւ երբ նա ըսաւ անոնց անունները, ըսաւ թէ «Ես յոսի ձեզ, թէ ես գիտեմ երկնից և երկրի գաղանիքը և գիտեմ ինչ որ կը յայտնէք և ինչ որ կը ծածկէք»:

32. Եւ այն ատեն մենք հրեշտակներուն ըսինք, «Աղամին երկրպագութիւն բրէք» և անոնք երկրպագեցին բացի սատանան, որ մերժեց և հպարտացաւ և անհաւատեցէն եղաւ:

3. Եւ ըսինք, «ո՛վ Աղամ, բնակէ՛ դու և կինդ գրախտի մէջ, և կերէք ձեր ուղածին պէս որ որ կ'ամենաք, բայց սա ծառին չմտենաք, որովհետեւ մեզաւոր կըլլաք»:

34. Բայց սատանան զանոնք իրենց եղած տեղէն քշեց ու հանեց: Եւ մենք ըսինք, «Վար ընկէք, մէկը միւսին թշնամի. և դուք մինչև ժամանակ մը երկրի վրայ կրնաք մնալ և վախելի»:

35. Եւ Աղամ իր տիրոջը խօսքերը ընդունեց և անոր դարձաւ. որովհետեւ Անիկա զայն ձող ողորմածն է:

36. Մենք ըսինք, «Վար ինկէք այնտեղէն բոլորդ

բայց իմ կողմէ ձեզ առաջնորդութիւն պիտի գայ և ուր որ իմ առաջնորդութեանս նստեի անոնց վայր և արամութիւն չկայ :

37. Իսկ անհաւատ եղողները և մեր նշանները սուս համարողները կրակի բնկերներ են, յաւիտեան կը մնան անոր մէջ :

38. Ո՛վ Բարայէի որդիներ, իմ շնորհքս յիշեցէք, գոր ձեզ շնորհցի, և ինձ ուխտերսիդ վճարեցէ՛ք և հաւատացէ՛ք այն բանին գոր ես վար իջեցուցած իմ որ կը հաստատուի ձեր քով եղածը, և մի ըլլալք անոր առաջին չհաւատացողները և աժան մի ծախէք իմ նշանները, և ինձսէ վախցէ՛ք :

39. Եւ ճշմարտութիւնը մի շփոթէք ոչինչ բանին հետ, քանի որ դուք գօտե՛ք :

40. Եւ ազօթք ըրէք և մաքրութեան տուրքը վճարեցէ՛ք ու ծնրագրողներու հետ ծանր իջէ՛ք :

41. Մարգոց արդարութիւն կը հրամայէք. բայց ձեր անձերը կը մտնաք, երբ դուք գիրքը կը կարդաք, միթէ չէ՛ք հասկնար :

42. Համբերութիւնով և աշօթքով օգնութիւն ինդրեցէ՛ք. իրաւ այդ մեծ բան է, բայց ոչ թէ խոնարհներու համար :

43. Որոնք որ կը կարծեն թէ Տիրջը կը զիմագրեն, և անօք ետ պիտի դառնան զէպի նա :

44. Ո՛վ Բարայէի որդիներ, յիշեցէ՛ք իմ շնորհքը գոր ձեզ շնորհցի, և ես աշխարհներէն վեր ձեզ գերադաս ըրի :

45. Եւ վախցէ՛ք այն օրէն որ անձ մը ուրիշ անձի մը տե՛, առգանք չտայ և անկէ բարեխօսութիւն չընդունի, և անկէ արդարութիւն չաւնուի և անոնց օգնութիւն չըլլայ :

46. Եւ երբ ձեզ ազատեցինք Փարաւոնի ժողովուրդէն, որոնք ձեզ տանջանքներով կը շարչարէին, ձեր գաւակները մօրթելով և ձեր կիները ողջ պահելով :

այդ բանին մէջ ձեր Տիրոջ կողմէ պատահաս կար :

47. Եւ երբ ձեզմով ծովը ձեզ քեցինք ու ձեզ վերկեցինք, Փարաւոնի ժողովուրդը ընկղմեցինք, մինչդեռ դուք կը նայէիք :

48. Եւ երբ Մովսէսի հետ կ'ուխտէինք քառասուն գիշեր, անկէ յետոյ դուք հորթը ընդունեցիք, և դուք անիրաւներ էիք :

49. Անկէ յետոյ ալ մենք ձեզ ներեցինք, որ շնորհակալ ըլլաք :

50. Եւ երբ Մովսէսին տուինք գիրքը ու Քուրկանը (?) որ առաջնորդուիք :

51. Եւ երբ Մովսէս ըսաւ իր ժողովուրդին, «ով իմ ժողովուրդս, դուք այն ձեր անձին անիրաւութիւն ըրիք հորթը ընդունելով. ուրեմն գարձէ՛ք ձեր Աշարիչին և սղաննեցէ՛ք ձեր անձերը, այդ բարի է ձեզ համար յայս. ձեր Արարչին, այդ միջոցաւ նա զէպի ձեզ կը վերադառնայ, որովհետեւ ես ներող և սղարմած է :

52. Եւ երբ դուք ըսիք, «Ո՛վ Մովսէս, մենք ձեզ բնաւ չենք հաւատար, մէնչև որ յալտնօրէն չը տեսնենք զՍտաուած», և փոթորիկը ձեզ վեր հանեց մինչդուք կը նայէիք :

53. Չեր մեռնելէն յետոյ մենք ձեզ յարութիւն տուինք որպէսզի շնորհակալ ըլլաք :

54. Եւ ձեր վրայ ամպերով շուք բերինք և ձեզ իջեցուցինք մանանան և լորամարզին. «կերէ՛ք այն բարիքներէն զոր տուինք ձեզ կերակուրի համար և մենք անիրաւութիւն չենք ըրած, այլ իրենք իրենց անիրաւութիւն կ'ընէին :

55. Եւ երբ ըսինք, «մտէ՛ք այս գիւղը և կերէ՛ք ձեզ հաճոյ թուածները և մտէ՛ք դռնէն երկրպագելով և ըսէք «հիօնաօն» և մենք կը ներենք ձեր սըլտանները և աւելի կուտանք բարեգործներուն :

56. Այն ատեն անոնք՝ որ անիրաւութիւն կ'ընէին, փոխեցին իրենց ըսած խօսքը ուրիշի, և այն անիրաւութիւն բնողներուն վրայ պատուհաս զրկեցինք՝ երկիրքէն վասնզի չարագործներ էին:

57. Եւ երբ Մովսէս իր ժողովուրդին ջուրի համար աղօթք ըրաւ, սենք ըսինք. «գաւաղանդ քաւրին գա՛րկ», և անկէ տանսերկու ազրիւրներ հոսեցան, այնպէս որ արդէն ամեն մարդ իր խմելիքը գիտէր. «կերէք և խմեցէք Աստուծոյ պարգևէն և շարութիւն ընելով մի տարածուիք երկրի երեսը»:

58. Եւ երբ ըսինք, «ով Մովսէս, մենք միայն մէկ կերակուրով չենք կրնար զիմանար, ուստի Տիրոջմէ խնդրէ որ մեզ համար հանէ երկրի բուսուցած բաներէն, կանանչեղէն, վարունկ, ոսպ և սոխ»: Միթէ դուք ստորինը լաւին հետ կը փոխէ՛ք: Վար եղիպտոս գացէք, ահա ձեզ համար կայ ինչ որ աւգեցիք: Ու անոնց վրայ եկաւ տառապանք ու թշուառութիւն, և անոնք Աստուծոյ պատիժին ենթարկուեցան: Ասոր պատճառը այն էր որ Աստուծոյ պատիժին ենթարկուեցան: Ասոր պատճառը այն էր որ Աստուծոյ նշաններուն չէին հաւատար և մարգարէ ներք կ'սպաննէին անիրաւարար: Այս անոր համար էր որ ապստամբեցան և թշնամութիւն կրնէին:

59. Անոնք որ կը հաւատան և անոնք որ Հրեայ են, նաև նազովբեցիք և ՍաՄէացիք որոնք հաւատացած են Աստուծոյ ու վերջին օրուան և բարեկործութիւն կընեն, իրօք անոնց վարձքը իրենց տիրաջքովն է, և անոնց մասին երկիւղ չկայ և անոնք չեն տխրիր:

60. Եւ երբ ձեր ուխտը ընդունեցիք և լեռը բարձրացուցինք, «ընդունկցէ՛ք ինչ որ ձեզ տուինք ու՝ ժող, և յիշեցեք ինչ որ անոր մէջ կայ, որպէս չի երկիւղաւած ըլլաք»:

61. Յետոյ անկէ վերջ դուք ետ դարձաք, սակաւեթէ Աստուծոյ շնորհը և ողորմութիւնը չ'ըլլար, դուք ալ վնասուողներէն կ'ըլլայիք. բայց դուք կը ճանչնաք ձեզմէ այն մարդիկը որոնք շարաթը պղծեցին, և մենք անոնց ըսինք «կապիկներու նմանեցէ՛ք, կորսուեցէ՛ք»:

62. Եւ այս ըրինք մենք, որ անոր առջևը և ետեր գտնուողներուն համար խրատ և աստուածափախներուն համար քարոզ ըլլայ:

63. Եւ երբ Մովսէս իր ազգին ըսաւ թե «Աստուած ձեզ կը հրամայէ որ կով մը զօնէք». անոնք ալ ըսին «միթէ դուս մեզ կը ծագրեն» ըսաւ «Աստուած չընէ, որ ես ազգաներէն ըլլամ». ըսին մեզ համար աղօթէ քու Տիրոջը որ մեզ բացատրէ թէ ինչ է ան»: Ըսաւ, կրսէ որ կովը ոչ տարիքոտ պէտք է ըլլայ և ոչ ալ տնաս, այլ միջին հասակով ըլլայ. ուրեմն գործեցէք ինչ որ ձեզ կը հրամայուի»:

64. Անոնք ըսին, «ազօթք բրէ մեզի համար քու տիրոջը, որ մեզ բացատրէ թէ անոր գոյնը ինչ է»: Կ'ըսէ ըսաւ, «Ան գեղին կով մընէ կարմիր գոյնով, որ նայողները զուարճացնէ»:

65. Անոնք ըսին, ազօթք բրէ մեզի համար քու տիրոջը որ մեզ բացատրէ, թէ ինչ տեսակ կով պիտի ըլլալ ան. որովհետև մեզի համար կովերը միմեանց նման են, և մենք կամօքն Աստուծոյ, հնազանդողներ ենք:

66. Ան ալ ըսաւ թէ կրսէ «այնպիսի կով մըն է այն երկիրը հերկելով և արտերը ջրելով չը տկարացաւ, առողջ է և պակասութիւն մը չունի»: Անոնք ըսին, հիմակ ճշմարտութեամբ եկարք և անոր զոհեցին. ու քիչ չէր մնացեր որ չընէին:

67. Եւ երբ դուք ա ձ մը սպաննէք և անոր վրայ գիճարանիք, այն ատեն Աստուած կը յայտնէ ձեր ծածկած բանը:

68. Այն ատեն մենք ըսինք, «անոր զարկէք իր մէկ մասովը»: Աստուած այսպէս կը կենդանացնէ մեռածները և ճոյց կուտայ ձեզ իր նշանները որ խորհիք:

69. Անկէ վերջն ալ կարծրացան քարի նման և աւելի ձեր սրտերը. որովհետև քարեր կան որոնցմէ գետեր կը բղխին և այնպիսին ալ կայ որ կը ձեղձուի. ջուր դուրս կուտայ, և անանկն ալ կայ որ Աստուծոյ վախէն վաբ կիյնայ. ուրեմն Աստուած անտեղեակ չէ ձեր ըրածներուն:

70. Արդեօք կը փափաքի՞ք որ անոնք ձեզի հաւատան: Բայց անոնց մէկ մասը յսած էին Աստուծոյ խօսքը. սակայն հասկնալէ յետոյ, զիտնալով հանդերձ կը ծռեն:

71. Եւ երբ հաւատացեալներուն կը՝ հանդիպի՝ կրտսն «մենք կը հաւատանք» բայց երբ իրարու հետ կառանձնանան կրտսն «միթէ դուք կը պատմէք անոնց այն բաները զորո Աստուած ձեզ յայտնած է, որ ձեր Տիրոջ նկատմամբ ձեր հետ վիճաբանութեան բռնութիւն միթէ չէ՞ք հասկնար»:

72. Անոնք չեն գիտեր որ Աստուած գիտէ անոնց պահածն ալ, յայտնածն ալ:

73. Անոնցմէ ոմանք ագէտներ են, գիրքը չեն գիտեր այլ միայն առասպելներ. անոնք միայն կը կարծեն. ուստի վայ անոնց որ իրենք ձեռքովնին կը գրեն գիրքը և յետոյ կըսեն, թէ «աս Աստուծոյ կողմէ է» որպէսզի ատով իրենց շահ մը հանեն: Ուրեմն վայ անոնց որոնց ձեռքերը կը գրեն, և վայ անոնց վատակամիտ:

74. Եւ անոնք կ'ըսեն, թէ «կրտկը մեզի միայն քանի մը որ պիտի դպչի»: Եւ «դուք Աստուծոյ հետ պայմանաւորուեր էք, Աստուած իր պայմանը բնաւ չը գրե՞, կամ Աստուծոյ մասին կը խօսիք ձեր չգիտցածը»:

75. Այո՛, ով որ չարիք կը գործէ և անոր յանձանքները զինքը կը պատին. անոնք կրակի բնկերներ են և կրակին մէջ կը մնան յաւիտեան:

76. Իսկ անոնք որ կը հաւատան ու բարիք կը գործեն, զբախտի ընկերներն են և հոն կը մնան յաւիտեան:

77. Եւ երբ Իսրայէլի որդիներէն ախտ առինք որ բազի Աստուածմէ ուր չբան չպաշտէք և բարիքներ ըրէք անանողներուն և ազգականներուն և որքերուն ու խեղճերուն, և մարդոց հետ քաղցրութեամբ խօսեցէ՞ք, մարբութեան տուրքը վճարեցէ՞ք այն ատեն ետ գարձաք ձեզմէ և մէկ քանիներէն գատ, և դուք հակառակեցա՞ք:

78. Եւ երբ դուք ուխտը ըրիք մեզ որ ձեր արինը չթափէք և ձեր երկիրներէն ձեզ չաքսորէք. այն առեն դուք խօսք տուիք և վկաներ էիք:

79. Բայց յետոյ դուք եղաք այն մարդիկը որ ձեզմէ մարդեր կ'սպաննէիք և ձեզմէ քանիններ ձեր երկրէն կ'աքսորէիք. անոնց գէմ կողնէիք տուք իրարու յանցանքներով ու թշնամութիւնով, և եթէ ձեր քով կուգան իրր գերիներ. զանոնք կաղատէիք ինչ որ ձեզ որգիրուած էր. այսինքն զանոնք աքսորել: Դուք գիրքին մէկ մասին կը հաւատաք միթէ միւս մասը կուրանաք: Ձեզմէ այս բանը գործողին պատիժը ինչ է, եթէ ոչ այս աշխարհի կեանքին մէջ և դատաստանի օրուան նախատինք անոնք ամենասոսկալի պատիժը կը կրեն: Եւ Աստուած անտեղեակ չէ ձեր գործածներու մասին:

80. Անոնք որ այս աշխարհի կեանքը հանդերձ և այի կեանքովը ծախու կառնեն, անոնց պատիժը չը թեթեւար, և անոնց օգնութիւն չըլլար:

81. Բայց մենք արդէն տուած ենք Մովսէսին գիրքը, և անկէ յետոյ մարգարէները զրկեցինք և

տութիւնք Մարիամի որդի Յիսուսին հրաշքերը և զանի զօրացուցինք Սուրբ Հոգիով. և ամեն անգամ որ ձեզի մարգարէ կուգար, որ ձեր անձին հաճելի չէր ըլլար, դուք կը հպարտանայիք անով. դուք մէկ քանին սուտ կը համարէիք և մէկ քանին կ'սպաննէիք:

82. Եւ անոնք ըսին, «Մեր սրտերը թլփատուած չեն»: Սակայն Աստուած զանոնք անիծեց իրենց անհաւատութեան պատճառաւ. և քիչերը կը հաւատային:

83. Բայց երբ Աստուծոյ կողմէն անոնց համար գէրք մը եկաւ, որ իրենց քով դանուածը կը հաստատէր և իրենք ալ առաջէն անհաւատներու դէմ յաղթութիւն կը խնդրէին երբ իրենց զիացածն եկաւ անոնք ուրացան զանի, Աստուած ալ անհաւատները անիծեց:

84. Գէշ բանով մը ծախեցին իրենց հօգիները որ Աստուծոյ վար իջեցուցածին դէմ ապստամբելով անհաւատ եղան. որ Աստուած իր սիրած ծառաներուն իր շնորհքովը բան կ'իջեցնէ. և բարկութեան վրայ բարկութեան հասան. Եւ անհաւատներուն համար խայտառակ տանջանք կայ:

85. Եւ երբ անոնց կ'ըսուի թէ «Աստուծոյ իջեցուցած բանին հաւատացէ՛ք», կըսեն «մենք կը հաւատանք այն բանին զոր Աստուած մեզի համար իջեցուցեր է», և անկէ զատ մնացածները կուրանան. բայց նա ճշմարիտ է կը հաստատէ անոնց քով եղածը: Եւ ի՞նչու համար ասկէ առաջ Աստուծոյ մարգարեները կ'սպաննէք, եթէ հաւատացեալ էիք:

86. Եւ երբ ձեր ուխտը ընդունեցի՛րք և լեռը ձեր վրայ բարձրացուցի՛րք, «ընդունեցէ՛ք ինչ որ ձեզ տուածնք ուժով և լսեցէ՛ք, ըսին «լսեցանք և ապստամբեցանք», Եւ իրենց անհաւատութեան պատճառով խմցուցին հորթը իրենց սրտերուն մէջ: Ըսէ՛:

գէշ բան է ձեր հաւատքին ձեզ հրամայածը, եթէ դուք հաւատացեալներ էք»:

88. Ըսէ՛, «եթէ ձեզ համար Աստուծոյ մօտ միւս մարդերէ տարբեր ուրիշ տուն մ'ըլլար, այն ատեն մահուան կը փափագէիք, եթէ ճշմարիտ էք:

89. «Բայց դուք բնաւ և երբէք անոր չէք փափագիր այն բաներուն պատճառաւ զորս ձեր ձեռքորը գործած են առաջ, և Աստուած չարագործները գիտէ»:

90. Եւ դուն անշուշտ կը տեսնես որ անոնք աւելի չատ ծարաւի են կեանքի բան մարդիկ և չեթանոսները, անոնցմէ մէջը կուզէ հազար տարի ապրիլ բայց պատժէն չազատիր ան եթէ հազար տարի ալ ապրելու ըլլայ և Աստուած կը տես է թէ անոնք ինչ կընեն:

91. Ըսէ՛ «ով թշնամի է Գարբիէլին, որ Աստուծոյ հրամանով զանի Բու սրտիդ մէջ իջեցուցած է որ կը հաստատէ իրմէ առաջ եղածը, և ուղիղ ուղեցոյց և աւետիս է հաւատացեալներուն համար»:

92. «Ան որ թշնամի է Աստուծոյ և իրէջտակներուն և անոր մարգարէներուն և Գարբիէլին ու Միքայէլին, Աստուած ալ այն անհաւատներուն թշնամի է»:

93. Եւ մենք արդէն յայտնի նշաններ իջեցուցեր ենք քեզ և չարագործներէն զատ մէկը զանի չուրանար:

94. Եւ անոնք Բանի անգամ ալ ուխտին, անոնց մէկ մասը զայն կը մերժէ, և մեծ մասը չի հաւատար:

95. Եւ երբ Աստուծոյ մարգարէ մ'եկաւ անոնց հաստատեց անոնց քով եղածը, անոնց մէկ մասը, թէ սուրբ գիրք տրուած է իրենց: Աստուծոյ գիրքը մերժեցին, իրենց ետեւ նեակեցին որպէս թէ չեն հասկընար:

96. Եւ կը նեակին այն բանին որ սատանաները կը կատարէին Սողոմոն թագաւորին, բայց Սողոմոնը անհաւատ չէր այլ սատանաները անհաւատ էին, որոնք մարդոց կը սովորեցնէին կախարդութիւն և այն բանը որ Բարեխոսի մէջ եղող Հարութ և Մարութ երկու ճրագներուն իջաւ վերէն, այդ երկուքը մէկու մը բան չէին սովորեցներ, մինչև որ չըսէր «մենք իրաւ փորձանք էնք», ուրեմն ա հաւատ մի՛ բլլար: Եւ անոնցմէ ա ն ալ սովորեցան որ այր և կի՞ն իրարմէ բաժնուին: բայց առաջ մէկու մը չ'ն վառեար, եթէ Աստուծոյ կամէր չըլլայ: Եւ անոնք կը սովորեցէին ինչ որ առնոց կըսէր և անոնց օգուտ չէր ընէր, և արդէն զիտէին թէ ով որ ծախու առնէ ա ն հա գերձեայի» ս է ջ արժէք չունի, իրենց հոգիները ծախելով առածնին անտարակոյս գէշ բան է, երանի թէ հասկնային:

97. Եւ եթէ հաւատային և երկրւղած բլլային, Աստուած լաւ կը վարձատրէր, երանի թէ հասկնային:

98. Ո՛վ հաւատացեալներ, մի՛ ը-էք «բասան» այլ բռնէ «անզարն» եւ յտեղէ՛ք. եւ լաւ հաւատներուն համար սաստիկ առնջա՞ն՛ կայ:

99. Սուրբ Գիրքի ժողովուրդէն անհաւատները եւ կատաղաշաները յե՞ն ուղեր որ ձեր Տիրոջմէ ձեր վրայ բարիք ի՞նչ բայց Աստուած իր ողորմութիւնը իր ուղածին կը յատկացնէ, և Աստուած մեծ շնորհներու տէր է:

100. Ինչ որ մե՞նք Ղուդանն մէկ տուն ոչնչացնենք կամ մոռնաք, անկէ աւելի լաւը կամ անոր նմանը կը բերենք: Մի՛թէ չե՛ս զրտեր որ Աստուած ամենակարող է:

101. Չե՞ս զրտեր որ երկնից և երկրի իշխանութիւն Աստուծոյ է, և զուք Աստուծոյ, և զուք Աստուծմէ զատ օգնական ու պաշտպան չունիք:

102. Կամ կուզե՞ք որ ձեր մարդարէէն ալ պահանջուի այն ինչ որ առաջ պահանջուեցաւ Մովսէսէն: Եւ ով որ հաւատարմ անհաւատութեան փոխէ, անկեկա արդէն մոլորած է շիտակ ճակրէն:

103. Սուրբ Գիրքի ժողովուրդէն շատերը ճշմարտութիւնը իրենց յայտնուելէն յետոյ, իրենց մէջ նախանձ տիրելով ու զեցին որ զուք հաւատաք ստանալէ յետոյ անհաւատութեան զառնաք. բայց զուք ներեցէք և մեղմ վարուեցէք մինչև որ Աստուած իր պատգամը ապ, որովհետեւ Աստուած ամեն բանընելու կարող է:

104. Եւ աղօթք կատարեցէք եւ մաքրութեան տուրքը տուէք, և ձեր հոգիներու համար ինչ բարիք որ առաջուց զրկէք, Աստուծոյ մօտ կը զրտնէք, որովհետեւ ինչ որ կընէք Աստուած կը տեսնէ:

105. Եւ անոնք կրտեն որ բնաւ մէկը զբախտ չի մտներ եթէ Հրտեայ կամ Քրիստոսնեայ չըլլայ: Անոնց բաղձանքն է այդ: Բսէ՛, «բերէք ձեր ապացոյցները եթէ ճշմարիտ էք»:

106. Այո՛, այն որ երեսը Աստուծոյ կը դարձնէ բարեգործ է, եւ անոր վարձքը Տիրոջը քովէ, եւ անոնց համար երկրւղ չկայ եւ անոնք չեն ախրիր:

107. Հրտաները կրտեն, թէ քրիստոսնեաները մէկ բանի վրայ չեն, եւ քրիստոսնեաներն ալ կ'րտեն, թէ հրտաները մեկ բանի վրայ չեն թէև անոնք զիրքը կը կարդան, Անոնց ըսածին պէս կրտեն անոնք ալ, թէ չեն զրտեր: Բայց Աստուած յարութեան օրը կը վճռէ այն կէտը որուն մասին անոնք անհամաձայն են:

108. Եւ ո՞վ աւելի անիրաւ է քան այն որ կարգիլէ Աստուծոյ աղօթատեղիին մէջ անոր անուան յիշուիլը եւ կաշխատի զանոնք քանդել, անոնք իրաւունք չունին աղբիւրէն մտնելու առանց երկրւղածութեան: Անոր համար այս աշխարհի մէջ նա-

խառնիք եւ անոնց համար հանդերձեալին մէջ մեծ տանջանք կայ:

109. Արեւիքը եւ արեւմտարը Աստուծոյ է: Դէպի որ կողմ որ գտնանք այնտեղ է Աստուծոյ ետեւը, որովհետեւ Աստուած ամենուրէք եւ ամենազէտ է:

110. Եւ կրեւն թէ Աստուած որդիներ բնգուներ է. Աստուած չընէ: Երկնից եւ երկրի մէջ ինչ որ կայ անորն է. ամենքը հնազանդ են անոր:

111. Երկնից եւ երկրի ստեղծողն է. երբ անկաբան մը կ'որոշէ եւ կրտէ «եղիբ» իւրոյն կըլլայ:

112. Եւ չգիտցողները կլսեն թէ «ի՞նչու համար Աստուած ինքը չը խօսիր մեզի հետ, կամ մեզի հրաշք մը չընեն»- Անտեցմէ ատա՛յ եղողներն ալ այնպէս խօսած են, անոնց խօսքերուն նման. անոնց սրտերը իրարու նման են: Մենք արդէն նշաններ յայտնած ենք հաւագուած ժողովուրդին:

113. Մենք զրկեր ենք քեզ իբր աւետիս եւ երկրի տուող: Եւ չեն հարցնել քեզի գթութիւնը կերներու մասին:

114. Եւ հրեաները ու քրիստոնեաները քեզմէ գոհ չեն ըլլար, մինչեւ որ դուն անոնց կրօնքին հետեւիս: Դուն ըսէ՛. «Աստուծոյ ասաջնորդութիւնն է ճշմարիտ ասաջնորդութիւն. եւ եթէ դուն իմաստութիւն ստանալէ յետոյ անոնց քմահաճոյքներուն ծառայես, այն ատեն դուն անպաշտպան եւ անօգէտ կան կը մնաս:

115. Որոնց որ մենք զիրքը տուեր ենք, անոնք ուզիլ կը կարգան դայն. անոնք անոր կը հաւատան եւ անոր չը հաւատացողները իմաստ աններն են:

116. Ո՛ր Իսրայէլի որդիք իմ ձեզ շնորհած շնորհքս իջեցէք, ես ձեզ աշխարհներէն զիրազատ ըրի-

117. Եւ վախցէք մէկ օրէն որ անձ մը ուրիշ անձի մը տեղ տուցանք չափ, եւ անկէ արդարութիւն

չընդունի. եւ անոնց օգնութիւն չըլլայ:

118. Եւ երբ Տէրը վորձեց Արբանամբ իր խօսքերով, եւ անիկա զանոնք կատարեց, այն ատեն ըսաւ. «Ես քեզ ասաջնորդ կը զրկեմ կոր մարդոց»: Ան ալ ըսաւ. «Բայց ի՞նչ իմ սերունդէն»: Արարիչն ալ ըսաւ. «Իմ ուխտս անիրաւնորուն չի վերաբերիր»:

119. Եւ երբ աւելը ժողովանդի եւ ապաստարան շինեցինք, եւ Արբանամբ տեղն ալ աղօթատեղի շինեցինք եւ Արբանամբն ու Իսրայէլին ուխտ րբինք որ իմ տունս պաշտողներուն եւ հոն նստող ու ծընրազրոյցներուն եւ երկիրպագողներուն համար մաքրեն:

120. Այն ատեն Արբանամբ ըսաւ. «Ո՛ր Տէր ի՛մ, այս տեղը ապահովէ եւ պառզներովը կերակրէ անոր ժողովուրդը անոնք որոնք կը հաւատան Աստուծոյ եւ վերջին օրուան: Ան ալ ըսաւ. «Բայց չը հաւատացողին ալ քիչ մը վայելիլ կուտամ. սակայն յետոյ զանի կը յանձնեմ կրակի տանջանքին. եւ սա անտանելի բնթացք մըն է»:

122. Ո՛վ մեր Տէրը, մեզ անձնատուր ըրէ քեզ եւ մեր սերունդէն ալ քեզ անձնատուր մի ժողովուրդ, եւ ցոյց տուր մեզ մեր արարողութիւնները եւ դէպի մեզի դարձիր, որովհետեւ դու ներող սորմածն ես»:

123. Ո՛վ մեր Տէրը, անոնց իրենց ցեղէն մարգարէ մը զրկէ որ քու նշաններդ անոնց կարգայ. եւ անոնց օտարացանէ զիրք եւ իմաստութիւն ու մաքրէ զանոնք որովհետեւ դու հօր իմաստուն ես»:

124. Եւ ո՞վ է որ զգուի Արբանամբ կրօնքէն, եթէ ոչ նա որ անձնազէտ լիմար է: Մենք զանի ալ աշխարհի մէջ լաւ գտանք. եւ հանդերձեալին ալ անիկա արդարներէն է:

104801





Որոնց որ գիրք տրուած է անոնք գիտեն անտարա-  
կոյս թէ իրենց Տիրոջմէ ճշմարտութիւն է: Եւ Աս-  
տուած անտեղեակ չէ անոնց գործի մասին:

140. Եւ եթէ դու անոնց համար՝ որոնց որ գիրք  
տրուած է, ամէն նշան ալ բերես, անոնք քու ազօ-  
թարանին ուղղութեանը չեն հետևիր, և մէկը միւսին  
ազօթարանի ուղղութեան չհետևիր: Եւ եթէ քեզ  
իմաստութիւն գալէ յետոյ անոնց կամքին հետևիս,  
այն ատեն դուն անիրաւեն երէս ես:

141. Որոնց որ գիրքը տուած ենք անոնք զայն  
կը ճանչնան իրենց որդիներուն նման. բայց անոնց  
մէկ մասը ճշմարտութիւնը կը ծածկէ, թէև գետին  
իրենք:

142. Ըշմարտութիւնը քու փրօջմէն է, ուրեմն  
կասկածողներէն մի ըլլար:

143. Ես ամէն մէկը իր ուղղութիւնը ունի որ այն-  
կողմը կը դարնայ բայց դուք հետևեցէք աւելի լա-  
ւերուն. Ուր որ գտնուի՞ք, Աստուած ամենակա-  
րող է:

144. Եւ ուրկէ ալ որ դուրս ելլես, երեսդ գէպի  
Հարամի տաճարը դարձուր որովհետև քու Տիրոջմէ  
ճշմարիտը սա է, և Աստուած քու դործերուդ ան-  
տեղեակ չէ:

145. Եւ ուրկէ ալ որ դուրս ելլես, երեսդ գէպի  
Հասեամի տաճարը դարձուր և ուր ալ ըլլաք երես-  
նիդ գէպ այն կողմը դարձուցէք. որպէս զի մարդիկ  
պատճառ չոկնենան քեզ գէթ վիճելու բացի անոնցմէ  
որոնց մէջ անիրաւեն կան: Անոնցմէ մի՛ վախնաք,  
այլ ինձմէ վախեէք որ ես չնորհքս ձեր վրայ կա-  
տարեալ ընեմ որ դուք շիտակ ընթանաք:

146. Ինչպէս որ ձեզմէ մարգարէ մը զրկեցենք ձեզ

որ մեր նշանները ձեզ կը կարդայ և ձեզ կը մաքրէ  
ու գիրքը և իմաստութիւնը և ձեր չի գիտցածները  
կը սովորէցնէ ձեզ:

147. Ուրեմն զիս յիշէցէ՛ք, և ես ալ ձեզ կը յի-  
շեմ և ինձմէ գո՛հ եղէք, և անհաւատ մի ըլլաք:

148. Ո՛վ հաւատացեալներ, օգնութիւն խնդրե-  
ցէք համբերութեամբ և ազօթքով, որովհետև Աս-  
տուած համբերողներուն հետ է:

149. Եւ Աստուծոյ ճամբուն մէջ սպաննուողին մի՛  
ըսէք «մեռեալ» այլ «կենդանի». բայց դուք չէք հաս-  
կրնար:

150. Եւ մենք անպատճառ ձեզ փորձելու ենք վա-  
խի, սովի, չքաւորութեան և անձի ու պտուղներու  
պակասութեան նման բանով մը: Դուն ալ աւետիս  
տուր համբերողներուն:

151. Որոնք փորձանք մը պատահելուն կրեսն,  
«մենք Աստուծոյ կը պատկանինք, և մենք անոր  
պիտի դառնանք»:

152. Անոք են որոնց վրայ իրենց Տիրոջմէ ա-  
զօթք և ողորմութիւն կըլլայ, և անոնք են շիտակ  
առաջնորդուածները:

153. Ընչդ է որ Սաֆան և Մարվան Աստուծոյ  
ճէռերէն են, ուրեմն ով որ տաճարը ուխտի կերթաց  
կամ կայցելէ, անոր վնաս չկայ, որ անոնց շուրջը  
պարտի: Եւ ով որ յօժարութեամբ բարեգործութիւն  
ընէ Աստուած գո՛հ և ամենագէտ:

154. Իրաւ անոնք որ գիրքը մեր մարդոց բացա-  
տրելին յետոյ կը ծածկեն այն ապացոյցները և առաջ-  
նորդութիւնը, Աստուած զանոնք անիծէ և անիծող-  
ները զանոնք անիծեն:

155. Անոնցմէ զատ դարձի կուգան և կ'ուղղուին  
և կը յայտնեն. ահա ես ալ գէպի անոնց կը շառնամ  
և ես դարձող ողորմողն եմ:

156. Եւ անոնք որ չէին հաւատար ու մեռան և անհաւատաներ էին, անոնց վրայ է Աստուծոյ և չքէշտակներու և բոլոր մարդոց անկէքը:

157. Անոնք յաւիտեան անոր մէջ կը մնան, անոնց տանջանքը չի թեթեւցոյիր, և անոնց օգնութիւն չըլլար:

158. Իսկ ձեր Աստուածը մէկ Աստուած է. Աստուած մըն ալ չկայ բացի այն զթամ ողորմածէն:

159. Ճշմարիտ երկնից և երկրի ստեղծման մէջ և գիշեր ու ցերեկ փոփոխման մէջ, և ծովու վրայ գացող նաւին մէջ, որով մարդիկ կօզտուին, և այն ջուրին մէջ՝ զոր Աստուած երկինքէն կանձրեւէ և մնաւած երկիրը անով կը կենդանացնէ և անոր մէջ աւմեն տեսակ կենդանիներ կը աւարածէ. և հոգերու և ամպերու փոփոխութեան մէջ, որ չուզելով կը կուտարուին երկնի և երկրի միջև, նշաններ կ'ըն հասկըցող ժողովուրդի համար:

160. Եւ կան երբեմն մարդիկ որ աստուծմէ զատ պատկերներ կընդունին, զանոնք Աստուծոյ սրբոյն պէս կը սիրեն. բայց անոնք որ կը հաւատան, անոնց սէրը ղէպի Աստուած աւելի զօրաւոր է: Մ'չ եթէ անիրաւութիւն գործողները տանջանքը տեսնելու, տեսնէին նաև թէ ամեն զօրութիւն Աստուծոյն է, և թէ Աստուած խիստ պատժոյ է:

161. Այն ատեն որ հեռեկոյններ իրենց հեռակոյններէն զատուելով կազաթին և կը տեսնեն տանջանքը և իրենց միջև եղած կապակցութիւնը կը կտրուի:

162. Այն ատեն հպատակները կըսեն, «եթէ մենք առիթ մ'ունենայինք, անոցմէ կը մաքրուէինք մենք ալ, ինչպէս որ անոնք ինքզինքնին մաքրեցին մեզմէ»: Ահա Աստուած անոնց կը ցուցնէ իրենց գործերը, մեզք անոնց որ կրակէն գուրս չպիտի կրնան ելլել:

163. Ով մարդիկ, երկրի վրայ մաքուր և հաճելի և

զաճները կ'երէք և սատահաներու հեաքերուն մի հեաւեիք, որովհետև այն ձեզ թշմամի է որոշապէս:

164. Ան ձեզ գիշութիւն և չարութիւն միայն ընել կը հրամայէ և որ Աստուծոյ համար ձեր չգիտցածը ըսէք:

165. Եւ երբ անոնց կ'ըսուի «Աստուծոյ իջեցուցածին հեաւեցէք» կըսեն, ոչ մենք կը հեաւելնք մեր հայրերու սովորութիւններուն»: Բայց չէ որ անոնց հայրերը տգէտ էին և ուղիղ չէին առաջնորդուած:

166. Անհաւատները գոռացողի մը կը նմանին որ միայն կոչ ձայն կը լսեն, համբ. խոյ, կոյր են և չեն հասկնար:

167. Ով հաւատացեալներ, կերէք ձեզ պարզեւում բաներէն և զո՞ւրեք Աստուծմէ եթէ զանի կը պօշտէք:

168. Զեզ արգիլուած են սատկածր և արիւնր և խոզի միսը և այն բանը որ մորթուելու ատեն նստուծմէ զատ ուրիշի մը անունը յիշուած է: Բայց եթէ մէկը առանց անհազանդութեան ստիպուած ըլլալ ակամայ ուտուած անոր մեզք չսեպուիր որովհետև տուած ներող և ողորմած է:

169. Անոնք որ Աստուածոյ իջեցուցած գիրքէն բան մը կը պահեն անով փոքր բան մը կ'առնեն, անոնք միայն կրակ կուտեն փորերնուն համար. և յարութեան օրը Աստուած անոնց հետ չը պիտի խօսի ու զանոնք չպիտի մաքրէ, այլ անոնց համար դառն տանջանք կայ:

170. Անոնք ծախու կ'առնեն մօրութիւնը ճշմարտութիւնով և ներողութիւնը տանջանքի հետ կը փոխեն Անոնք կրակին լ'նչպէս պիտէ տոկան:

171. Սա անոր համար է ո՞ր Աստուած գիրքը ճշմարտութիւնով իջեցուցած է, սակայն գիրքի մասին արակարծիք եղողները շատ պառակտումներու բաժնուած են:

172. Արդարութիւնը այն չէ որ երեսնիդ Արեւելք և արեւուտք դարձնէք. այլ արդարութիւնը այն է որ հաւատայ Աստուծոյ և վերջին օրուան հրեշտակներուն և գիրքին և մարգարէներուն և իր գոյքէն սիրով տայ ազգականներուն և որբերու և ազքատներու և ճանապարհորդներուն և մուրացիկներուն և կայանաւորներուն և իր ազօթքը կատարէ եւ մարթութեան տուրքը տայ եւ օւխտերը կատարէ և փորձանքներու և նեղութիւններու և տառապանքներու միջոցին համբերէ: Ահա ասոնք են արդարները և երկիւղածները:

173. Ո՛վ հաւատացեալներ, սպաննուածներու համար ձեզ արեան վրէժխնդրութիւն (բըւս) պատուիրուած է, ազատի տեղ ազատ, ծառայի տեղ ծառայ և կնոջ տեղ կին, բայց եթէ անձի մը իր եղբոր կողմէ ներուի, անոր բան մը տալով արդարութիւնը գործադրել և ընդունելին վճարել պէտք է:

174. Այս ձեր Տիրոջ կոյմէ թեթեւացում եւ ողորմութիւն մըն է եւ ով որ տսկէ լետոյ լանցանք գործէ անոր համար դառն տանջանք կայ:

175. Եւ ձեզի համար արեան-վրէժխնդրութեան մէջ կեանք կայ, ով խելացիներ, որպէսզի երկիւղածներ ըլլաք:

176. Զեզ նրաման եղած է որ ձեզմէ մէկը երբ մեռնելու մօտ է, իր օւնեցած ստացուածքներէն պէտք է ինչպէս որ երկիւղածներուն վրայ պարտք դրուած է կտակ ընէ իր ծնողներուն եւ ազգականներուն օրինաւորապէս:

177. Եթէ մէկը այն կտակը լսելէն յետոյ զայն փոխէ, անոր մեղքը փոխողներուն վրայ է վասնզի Աստուած կը յտէ ու գիտէ:

178. Եթէ մէկը կը վախճայ թէ կտակողը կա՛մ որ խալած է եւ կամ անիրաւութիւն ըրած է, այս պա-

րագային անոնց միջեւ թող հաշտութիւն գոյացնէ. այս բանին համար իրեն յանցանք չկայ, որովհետեւ Աստուած ներող եւ ողորմած է:

179. Ո՛վ հաւատացեալներ, ձեզ ծով է պատուիրուած, ինչպէս որ առաջ եկողներուն ալ պատուիրուած էր, որպէսզի երկիւղած ըլլաք:

180. Որոշ օրերու, եթէ ձեզմէ մէկը հիւանդ է կամ ճամբորդութեան մէջ է, այն նոյնչափ օրեր ուրիշ ծով թող պահէ, սակայն անոնք որ կըրնային ծով պահել և չպահեցին պէտք է ազքատի մը կերակուր տան. եւ ով որ այս իր կամբովը ընէ, այդ իրեն համար բարիք է: Եւ եթէ ծով պահէք ձեզի համար լաւ է, եթէ հակցողներ էք:

181. Բամազան ամսոյն մէջ Ղուբանը իջաւ մարգոց իրբեւ ուղղեցոյց և առաջնորդութեան ապացոյց ու փրկութիւն. ուստի ձեզմէ ով Յոր այդ ամսոյն հասնի, ծով թող պահէ. և ով որ հիւանդ է կամ ճանապարհորդ, թող նոյնքան ուրիշ օրեր ծով պահէ Աստուած ձեր զիւրութիւնը կուզէ և ձեզ համար դժուարութիւն չուզեր, բաւական է որ դուք օրերուն հաշիւը լման ընէք և ձեզ առաջնորդող Աստուածը փառաբանէք և շնորհակալութիւն յայտնէք:

182. Եւ ծառաներս երբ զիս հարցնեն, ահա ես մօտ եմ, ազօթողին կը պատասխանեմ, երբ ինձ ազօթէ բայց անոնք ալ թող ինձ հաւատան և հետեւին որ ուղիղ առաջնորդուն:

183. Ծովապահութեան գիշերը ձեր կանանց հետ զուգաւորութիւն ընել ձեզ թող կը տրուի: Անոնք ձեզի համար հազուա ևն և դուք անոնց համար Աստուած գիտէ որ դուք անձերնիդ նեղեր էք: Անոր համար ձեզ զարձու ու ներեց ձեզ, ուստի հիւմա անոնց հետ զուգաւորեցէք և Աստուծոյ ձեզի

տուածը պահանջեցէք. և կերէք և խմեցէք մինչև արշալոյսին երբ ալ կրնաք ճերմակ թեկը սև թեկին զանազանել. յետոյ մինչև իրիկուն ծով բռնեցէք. և մի զուգաւորութիւն, արդէն զուք ազօթատեղիներու մէջ կը ճգնէիք. Անա ասոնք են Աստուծոյ սահմանները. ուստի անոնց մի մօտենաք. Այս կերպով ևս տուած իր պատգամները մարդոց յա սնած է որ երկիւզած ըլլան:

184. Եւ ձեր ստացուածքները ի զուր մի մօտէք կամ անով դատաւորին չուրջը մի պըտըաիք որ ուրիշներու ստացուածքէն մաս մը անիրաւարար ուտէք քանի որ զուք գիտէք:

185. Քեզ պիտի հարցնեն յունի մասին. ըսէ թէ անիկա մարդկանց և ուխտագնացութեան համար ժամանակները կորոշէ:

186. Եւ Աստուծոյ ճամբուն մէջ սպաննեցէք ձեզ սպաննել աշխատողները. բայց զուք մի սկսիք. ուրովնեա և չափազանցութիւն ընողները չի սիրեր:

187. Եւ զանոնք մեղացեցէք ուր որ ալ հանդիպիք և զանոնք դուրս բրէք այն տեղէն ուրիկ ևս նոնք ձեզ դուրս են բրեր. և խռովութիւնը ըսպանութեանէն գէշ է: Բայց անոնց նեա մի կուրիք Հարամի ազօթատեղին մօտիկը մինչև որ անոնք նեա ձեզ սպաննել սկսին. բայց եթէ սպաննեն. զուք ալ զանոնք սպաննեցէք: Անհաւատները այսպէս պէտք է պատմել:

188. Բայց եթէ անոնք բազրեցնեն. Աստուած ախերոց ոգորմած է:

189. Եւ զանոնք սպաննել աշխատեցէք՝ մինչև որ ալ խռովութիւն չմնայ և Աստուծոյ կրօնքը տիրէ: Եւ եթէ զազրեցնեն, այն ատեն չարագործներէն զատ ուրիշ մէկու մը թշնամութիւն չըլլալ:

190. Սուրբ ամիսը սուրբ ամիսի տեղ գործածե-

ցէք և սուրբ տեղերու փոխարէն վրէժ լռեցէք: Զեր վրայ յարձակողին վրայ զուք ալ յարձակեցէք անոր բրածին պէս: Եւ Աստուծմէ վախցէք և զխտցէք թէ Աստուած երկիւզածներուն նեա է:

191. Եւ Աստուծոյ ճամբուն մէջ համաձայնեցէք և զուք ձեզ վտանգի մի ենթարկէք և բարեգործութիւն բրէք. վասն զի Աստուած բարեգործները կը սիրէ:

192. Եւ Հաճճի ուխտագնացութիւնը կատարեցէք Աստուծոյ համար բայց եթէ արգելութիւնք. գունէ զիւրին ընծայ մը բերէք և ընծան իր տեղը մինչև որ նանի գլուխնից մի՛ անիլէք. սակայն եթէ ձեզմէ մէկը նիւանդանայ կամ գլուխը ցաւի, այն ատեն թող ծով պահէ, կամ ոչսրմութիւն տայ կամ զսնէն փրկանք մը տանի: Իսկ երբ ապահովէք և մէկը ուխտագնացութիւնը յետաձգէ մրնչև Հաճճի ժամանակ գունէ թոր փոքր ընծայ մը տանի, սակայն եթէ մէկը այդ չգանէ, երնք որ ծով թող պահէ Հաճճի ժամանակ, և եթը որ ալ երբ ետ դառնաք. այսինքն զումարը տասը որ ծով: Այս այն մարդուն համար է որուն ընտանիքը Հարամի ազօթատեղին չէ կրցեր երթալ. Արդ Աստուծմէ վախնայով այսպէս ըրէք. վասն զի Աստուած խիստ պատիւ տուող է:

193. Հաճճին ամիսները սրոշ են: Ով որ այդ ամիսներուն ինքզինքը Հաճճի կը պարտաւորէ, այն միջոցին պէտք չէ որ ոչ զուգաւորութիւն, ոչ գէշ խօսք, ոչ կոխ ընէ և ինչ բարեգործութիւն որ բնէք Աստուած զայն գիտէ: Ըմբու համար պաշար առէք, և էն յաւազոյն պաշարը կրկիւզածութիւնն է ուստի երկիւզած եղէք ո՛ր խելացիներ:

194. Զեզ համար յանցանք չէ եթէ ձեր Տիրոջմէ շնորհք խնդրէք: Եւ երբ Արփաթէն վաղելով կուգաք. յիշեցէք զԱստուած Հարամի մօտերը, այսին-

քըն յիշեցէք զանի թէ ինչպէս ձեզ առաջնորդեր է.  
եւ դուք անկէ առաջ մոլորեալներէն էիք:

195. Յետոյ վազեցէք մարդոց վազած սեղերը եւ  
Աստուծոյ ներողութիւն խնդրեցէք. վասն զի Աստ-  
ուած ներող ողորմած է:

196. Եւ երբ ձեր ձեռքերը վերջացնէք յիշեցէք  
զԱստուած ինչ որ ձեր ծնողները կը յիշէք եւ կամ  
անկէ աւելի ուժով յիշեցէք զԱստուած: Բայց մար-  
դիկ կան որ կրօնն «ով տէր, այս աշխարհի մէջ  
տուր մեզ մեր բաժինը». եւ անոնց համար հանդեր-  
ձեալին մէջ բաժին չկայ:

197. Եւ անոնց մէջ այնպիսիներ ալ կան որ կը-  
անն «ով Տէր, մեզ այս աշխարհին մէջ բարիք տուր  
եւ հանդերձեալին մէջ ալ բարիք տուր եւ մեզ պահ-  
պանէ կրակի տանջանքներէն»:

198. Ասոնց իրենց աշխատանքէն բաժին մը կայ,  
եւ Աստուած շուտով հաշիւ տեսող է:

199. Որոշ ժամերի մէջ զԱստուած յիշեցէք, եւ ով  
որ աճապարանօք այդ երկու օրուան մէջ լինցնէ,  
անոր յանցանք չի հախարուիր եթէ Աստուծոյ կը  
վարանայ եւ ով որ ուշանայ, ան ալ յանցաւոր չի  
սեպուիր եթէ երկիւզած է. ուրեմն վախցէ՛ք Աս-  
տուծոյ, եւ գիտցէք որ անով պիտի յարցուիք:

200. Երբեմն մարդ կայ որ իր խօսքերովը քեզի  
այս աշխարհի կեանքի մասին կը հիացնէ (եւ զԱս-  
տուած ալ վկայ կը կանչէ իր սրտի մէջ եղածի մա-  
սին. բայց անիկա խիստ թշնամի է):

201. Եւ երբ ետ կը դառնայ, կաշխատի ապակա-  
նութիւն գործել երկրի վրայ, եւ կաւրէ հունձքը եւ  
արդիւնքը բայց Աստուած ապականութիւնը չի  
սիրեր:

202. Եւ երբ անոր ըսուի Աստուծոյ վախցիր, ա-  
նոր հպարտութեւնը եւ բռնութիւնը զանի կարգի-

ին, եւ անոր դժոխք կը վայլէ. աս ալ շատ գէշ  
տեղ մըն է:

203. Երբեմն մարդ ալ կայ որ Աստուծոյ հաճու-  
թիւնը խնդրելով իր հօգին կը ծախէ, եւ Աստուած  
կը գթայ իր ծառաներուն:

204. Ով հաւատացեալներ, բոլորնիդ ալ մտէք  
խաւարն մէջ եւ սատանային հեաքերուն մի հետեւ-  
իք. վասնզի նա որոշապէս ձեզի թշնամի է:

205. Եթէ ճիշդ վարդապետութիւնը ձեզ հասնե-  
լէն յետոյ շեղիք. գիտցէք թէ Աստուած հօր իմաս-  
տուն է:

206. Արդեօք կ'սպասե՞ն որ Աստուած սպիտակ-  
ամպերու ստուերին մէջ կուգայ հրեշտակներն ալ  
անոր հետ: Սակայն հրամանը վճռուած լինցած է.  
ամեն բաներ զէպի Աստուած պիտի դառնայ:

207. Հարցուր Իսրայէլի որդոց թէ մենք անոնց-  
որչափ նշաններ տուած ենք. հիմա ով որ Աստու-  
ծոյ շնորք գալէն յետոյ զայն փոխէ, Աստուած  
ծանր պատիժ կուտայ:

208. Անհաւատներուն (քեաֆիր) համար այս աշ-  
խարհի կեանքը զարդարու է, եւ անոնք կը ծաղրեն  
հաւատացեալները բայց յարութեան օրը (գըլամէթ)  
երկիւզածները անոնցմէ բաժը պիտի կենան, եւ Աս-  
տուած սիրածին անհամար ուտեստ կուտայ:

209. Մարդիկ միայն մէկ ազգ էին եւ Աստուած  
աւետատու եւ սպանացող մարդակներ զրկեց աւե-  
տիս տալու համար եւ անոցմով իջեցուց ճշմարտու-  
թեան գիրքը որ մարդկանց մէջ անհամաձայնութիւնը  
վճռէ: Եւ գիրք ունեցողները միայն իրենց յայտ-  
նութիւններ ըլլալէն յետոյ՝ նախանձով իրենց մէջ  
անհամաձայն գտնուեցան. սակայն Աստուած ուղիղ  
առաջնորդեց հաւատացեալները՝ որոնք ճշմարտու-  
թեան մասին անհամաձայն էին: Եւ Աստուած իր  
ուզածը ուղիղ ճամբէն կառաջնորդէ:

210. Կր կարծէ՞ք թէ ձեզմէ առաջ եկող անցնող-  
նեցուն պատահած բաները ձեզ ալ չի պատահած  
դրախտ կը մտնէք. անոնց փորձանքներ և տառա-  
պանքներ պատահեցան և այնպէս չփոխեցան, որ  
նոյնքով մարդարէներուն հետ գտնուողները կ'ըսէին  
«Աստուծոյ օգնութիւնը ե՞րբ պիտի հաւնի»: Անա  
Աստուծոյ օգնութիւնը մօտ է:

211. Քեզ պիտի հարնեն թէ ինչ ողորմութիւն  
տան: Դու ըսէ, ձեր ստացուածքէն ողորմութիւն  
տաք ձեր ընողքներուն և ազգականներուն և օրբե-  
րուն և ազքատներուն և ճամբորդներուն, և ինչ  
բարի գործ որ ընէք Աստուած գիտէ:

2.2 Ձեզի պատերազմ հրամայուած է, բայց դուք  
զայն զգուելի կը գտնէք:

213. Բայց կարելի է դուք այն բանէն կը պժգաք  
կոր որ ձեզ օգտակար է բան մը կը սիրէք որ ձեզ  
մաստակար զըլլայ: Սակայն Աստուած գիտէ ու դուք  
չէք գիտեր:

214. Անոնք քեզ պիտի հարցնեն Հարամ ամսայ  
մասին պատերազմի համար: Դու անոնց ըսէ՛, այն  
ամսոյն պատերազմը մեծ մեղք է և Աստուծոյ ճամ-  
բայէն հեռանալ և գանի ուրանալ է. բայց Հարամ  
ազօթատեղին և անոր ժողովուրդը անկէ դուրս  
հանելը Աստուծոյ առջեւ անկէ աւելի մեծ մեղք է  
և խաղաղութիւնը սպանութենէն աւելի մեծ մեղք է:  
Անոնք պիտի դադրին ձեր հետ պատերազմելէ  
մինչեւ որ ձեզի ձեր կրօնքէն՝ եւ դարձնեն եթէ  
կարենան: Սակայն ձեզմէ որոնք որ իրենց կրօնքէն  
դառնալով մեռնին անոնք անհաւատներ են և ա-  
նոնց լաւ գործերը թէ այս աշխարհի մէջ և թէ  
հանդերձեալին կը փճանան և անոնք կրակին ընկե-  
րանալով լաւիտեանս հոն կը մնան:

215. Իսկ անոնք որ կը հաւատան և գաղթեր են  
և Աստուծոյ ճամբուն մէջ կը կուսին (ճէհաթ), ա-  
նոնք Աստուծոյ ողորմութեանը կ'օգտան և Աստու-  
ած ներող ողորմող է:

216. Քեզի պիտի հարցնեն զինի և խաչի մասին:  
Դու պատասխանէ: «Անոնց մէջ մեծ մեղք կայ և  
մարդոց համար օգուտներ կայ, բայց անոնց մեղքը  
աւելի մեծ է քան օգուտը»: Եւ քեզի՛ կը հարցնեն  
թէ ինչ տան ողորմութիւն:

217. Ըսէ «ստացուածքնուդ աւելորդը»: Աստուած  
ձեզ այսպէս է յայտնէր իր այս պատգամը որ մը-  
տածէք:

218. Այս աշխարհին մէջ և հանդերձեալին քեզ  
պիտի հարցնեն որքերու մասին. դու ըսէ, «անոնց  
բարութիւն ընելը լաւ է»:

219. Եթէ ձեր գոյքերը անոնցինին հետ խառնէք  
այն ժամանակ անոնք ձեր եզրայրներն են: Եւ Աս-  
տուած ալ կը ճանչնայ ու կը գանազանէ պակասողը  
լաւէն: Եւ եթէ Աստուած ուզէ ձեզ կը նեղէ, որով-  
հետեւ նա հզօր և իմաստուն է:

220. Եւ կապաշտ կիները մինչեւ որ հաւատան  
մի ամուսնանաք: Հաւատացեալ ազախին մը լաւ է  
կապաշտ կինէ մը, թէ ասոր գեղեցկութիւնը ձեզ  
հրապուրէ: Կապաշտ մարդոց հետ ալ մի ամուսնա-  
նանք մինչեւ որ հաւատան: Հաւատացեալ ծառայ մը  
լաւ է քան կապաշտ մարդ մը, թէ և ասոր գեղեց-  
կութենէն հրապուրուիք:

221. Անոնք գէպի կրակը կը հրաւիրեն, բայց Աս-  
տուած կը կանչէ գէպի դրախտը և գէպի թողութիւն  
իր հրամանովը և կը յայտնէ իր պատգամները՝ կը  
յայտնէ որ յիշէք:

222. Եւ կանանց ամուսկանի մասին քեզ պիտի  
հարցնեն: Ըսէ, «Այդ նեղութիւն մըն է, և դուք

հետու կեցէք կիներէն անոնց ամսականի ատեն եւ անոնց մի մօտենաք միւշեւ որ մաքրուին եւ անոնց մօտեցէք՝ երբ մաքրուած են, որ տեղէն որ Աստուած պատուիրեր է ձեզ որովհետու Աստուած կը սիրէ զղջացողները եւ մաքուրները:

223. Ձեր կիները ձեզի համար արտ են ուստի մտէք ձեր արտը ինչպէս որ կուղէք. եւ ձեր հոգեոյն համար առաջ լաւ բարիք մ'ըրէք. եւ Աստուծմէ վախցէք եւ հակցէք որ զուս անոր կը հանդիպիք եւ աւետեղէք հաւատացեալներուն:

224. Ձեր երգումներուն Արտուած պատրուակ մի բռնէք, որ արդար երկիւղած եւ բարեգործ ըլլաք մարդոց մէջ, վասն զի Աստուած կը լսէ եւ գիտէ:

225. Ձեր երգումներու սխալին համար Աստուած ձեզ չի պատժեր, այլ կը պատժէ ձեր սրտերուն գործերուն համար եւ Աստուած ներող եւ խոնարհ է:

226. Իրենց կանանց հետ չը զուգաւորելու համար երգում ընողներ չորս ամիս պէտք է սպասեն. եթէ երգումին հետ առնեն, Աստուած ներող եւ ողորմած է:

227. Եւ եթէ ամուսնաառողութիւն ուղեն այն ատեն Աստուած կը լսէ եւ գիտէ:

228. Եւ ամուսնաթողեալ կիները պէտք է իրենց անձին համար երեք մաքրութեան սպասեն եւ անոնց ներելի չէ որ իրենց արդանդին մէջ Աստուծոյ ըստեղծածը գաղտնի պահեն, եթէ կը հաւատան Աստուծոյ եւ վերջին օրուան: Սակայն անոնց այրերը այս պարտաւորին իրաւունք ունին զանոնք հետ առնելու եթէ խաղաղութիւն կուղեն: Կիները օրինաւոր պարտականութիւններ ունենալու պէս ալ իրաւունքներ ունին: Բայց այրերը կիներէն բարձր աստիճանի են: Եւ Աստուած հզօր եւ իմաստուն է:

229. Ապահարզանը երկու անգամ կը լայ. յետոյ

իր կարգին պահել պէտք է կիներ. զանի բարիքներով արձակել: Եւ ձեզի ներե ի չէ ան, բան մը ետ առնել, եթէ չէք վախճար որ անոնք Աստուծոյ սահմանները չպիտի պահեն: Իսկ եթէ երկիւղ ունիք, այն ատեն անոնք յանցանք չունին, եթէ կիներ աստի ինքզինքը ազատէ: Աստուծոյ պատուերն երբ ուրեմն չանոնք զանց մի բնէք. եւ Աստուծոյ սահմաններէն անցին անցնողները անիրաւունք են:

230. Այս պատճառով եթէ այրը զանի արձակէ, նա ա'լ իր իրաւունքէն կը դադրի միւշեւ որ կիներ ուրիշ մարդու մը զացած եւ անկէ եւս արձակուած կը լայ: Ասանց այս պայմանին անոնք երկուքն ալ յանցաւոր կ'ըլլան եթէ կրկին զիրար առնեն: Յանցանք չկայ երկուքին համար ալ զիրար կրկին առնելու մէջ, եթէ կը կարծեն թէ Աստուծոյ սահմանները կը պահեն: Եւ ասոնք են Աստուծոյ սահմանները զորս հասկցող ցեղի մը յայտնած է:

231. Երբ զուք կիները արձակէք, անոնք իրենց պայմանաժամին թող հասնին, եւ թողէք որ օրինաւորապէս մնան կամ ճամբեցէք օրինաւորապէս. եւ զանոնք բոնի մի պահէք որ անիրաւութիւն ըրած կը լայ: Եւ ու'լ որ այդ բնէ ինչոն իր անձին անիրաւութիւն ըրած կը լայ: Եւ Աստուծոյ պատգամները ծաղրելի մի կարծէք, եւ յիշեցէք Աստուծոյ ձեզ ըրած շնորհքը ու ձեզի զրկած գիրքը եւ իմաստութիւնը ձեզ խրատելու համար: Ուրեմն վախցէք Աստուծմէ եւ հասկցէք որ Աստուած ամէնազէտ է:

232. Եւ երբ կիներ կարձակէք եւ անոնց պայմանաժամը կը հասնի, ա'լ անոնց մի արդիւնք իրենց այրերուն հետ ամուսնանալ, քանի որ անոնք իրենց

միջև համաձայնութիւն կը գոյոցնեն օրինաւորապէս: Ասիկա խրատ է ձեռքէ այն անձին որ կը հաւատայ Աստուծոյ եւ վերջին օրուան: Այս ձեզի համար աւելի վարձուցիք եւ սրբութիւն էս եւ Աստուած ալ գիտէ իսկ զուր չէք գիտեր:

233. Եւ մայրը իր զաւակներուն պէտք է տխուր կրկն տարի կաթ ապ կթէ այր ուզէ որ մանկի կին գիեցումը կատարեալ ըլլայ: Այր պէտք է տայ կիններուն ուսեսոր եւ հարուստ օրինաւորապէս: Աչ ոք իր կարգութիւնէն աւելին բնիւ պարտաւոր չէ: Աչ մայր մը իր զաւակին համար եւ ոչ ալ խնամաւ ալը կը բռնադատուի. նայնպէս մասնագործը. եթէ անոնց երկուքն ալ համաձայնելով կաթէն կտրել ուզեն, յանցանք չկու, եւ եթէ ուզէ որ զաւակնուց տրիչը ծիծ տայ եւ վարձր օրինաւորապէս վճարէ. յանցանք չկայ ձեզի: Ուստի վախճէք Աստուծէ եւ գիտէք որ Աստուած կո աննէ ձեր գործերը:

234. Եւ ձեզմէ մեծնողներուն կրները պէտք է չորս ամիս եւ տասր օր սպասեն, եւ երբ անոնց պայմանաժամը այսպէս լրանայ այն ատեն զուր յանցանք չունիք թէ ինչ կրնեն իրենց անձի մասին օրինաւորապէս, եւ Աստուած գիտէ ձեր բարձր:

235. Նայնպէս յանցաւոր չէք եթէ այն կրններուն նշանուիլ առաջարկէք կամ այդ միտքը ձեր սրտին մէջ ծածկ պահէք: Աստուած գիտէ, թէ զուր ինչ կը մտածէք անոնց մասին: Սակայն անոնց հետ զաղտնի մի պայմանաւորուիք, միայն կրնաք անոնց հետ օրինաւոր խօսք խօսիլ:

236. Բայց մի փանաք անոնց հետ ամուսնութեամբ կապուելու քանի որ պայմանաժամը լրացած չէ եւ գիտէք որ Աստուած գիտէ ձեր սրտին մէջ եղածը, ուրեմն զգուշացէք անկէ եւ գիտցէք որ Աստուած ներող եւ խոնարհ է:

237. Ձեր կրնեցուն դեռ չսպած անոնց մասանց գութիւնը չկապկամ եթէ արձակէք, յանցաւոր չէք ըլլաք քաղ պէտք է որ հարուստ իր կարգութեան չափով եւ ազատան ալ իր չափով անոնց ապրուստը տայ օրինաւորապէս, ինչպէս որ կը վայլէ բարեգործներուն:

238. Եթէ զուր անոնց չսպած զանոնք արձակէք, անոնց կատկածնուց կ'ըստ անոնց կը բաւէ, եթէ անոնք վաղ անցնին կամ ամուսնութեան պայմանը թ ձտիս ունեցող անձը վաղ անցնի: Եւ եթէ վաղ անցնիք այդ երկեզածութեան մօտ է: Բայց մի մտնաք ձեր մէջ եղած շնորհքը՝ վասն զի Աստուած ձեր գործածները կը աննէ:

239. Գոյ ստիւրեցէք աշօթքները եւ հրապարակային ազօթքը, եւ Աստուծոյ առջեւ պատկասանօք կայունելք:

240. Բայց եթէ կը վախնաք, այն ատեն գայելով կամ ձիւ վրայ նստած ազօթեցէք: Իսկ եթէ ապահով էք, յիշեցէք զԱստուած որ ձեր չգիտցածը ստիւրեցուցած է:

241. Եւ ձեզմէ մեծնողները իրենց այրի ձգած կրններուն մէկ տարուան ապրուստը կատկելու են զանոնք առանց զուրս բնելու: Իսկ եթէ իրենք գորսուել են, այն ատեն անոնց օրինաւորապէս ըրածի մասին զուր յանցաւոր չէք: Եւ Աստուած հօր եւ իմաստուն է:

242. Եւ արձակուած կրններուն պէտք է երկուգածներու կուճէն արգարութեամբ անոնց ապրուստը արուի օրինաւորապէս:

243. Աստուած իր իր պատգամները այս կը յայտնէ ձեզ որ հասկնաք:

244. Արդեօք չտեսա՞ր անոնք որ հազարաւորներով մահուընէ վախնալով իրենց երկրէն զուրս ե-

լան. Եւ Աստուած անոնց «մեռէք» ըսաւ, յետոյ զանոնք կենդանացուց. վասնզի Աստուած մարդոց չընորէք ընող է. բայց շատ մարդիկ չնորհակալ չեն:

245. Այս պատճառաւ Աստուծոյ ճամբուն մէջ պատերազմ ըրէք. քանզի Աստուած կիմանայ եւ գիտէ:

246. Ո՞ր մարդը որ Աստուծոյ լաւ փոխ մը կուտայ այն ատեն Աստուած ալ անոր բազմապատիկ աւելի կուտայ վասնզի Աստուած ձեռքը կը բռնէ ու կը բանայ եւ դուք անոր պիտի դիմէք:

247. Միթէ ոչազրութիւն չըրի՞ր Իսրայէլի որդիներէն այն ժողովուրդին Մովսէսէն յետոյ, երբ անոնք իրենց մէկ մարգարէին ըսին, «մեզ համար թագաւոր մը կարգէ որ Աստուծոյ ճամբուն մէջ պատերազմինք»: Ան ալ ըսաւ «Թերեւս ձեզ պատերազմ հրամայուի, բայց դուք չը պատերազմիք» Անոնք ըսին, «Ի՞նչու համար մենք Աստուծոյ ճամբուն մէջ չպատերազմինք, մենք եւ մեր որդիները արդէն զուրս հանուած ենք մեր երկրէն»: Սակայն երբ անոնց պատերազմիլ հրամայուեցաւ, անոնցմէ բացի դփիչերէն ուրիշները ետ քաշուեցան: Եւ Աստուած քոնաւորները կը ճանչնայ:

248. Այն ատեն ըսաւ անոնց իրենց մարգարէն, «Աստուած արդէն ձեզի թագաւոր կարգած է Թալութը (Սաուդ)» Անոնք ըսին. «Ան ի՞նչպէս թագաւոր կըլլայ մեզի, երբ մենք անկէ աւելի իրաւունք ունինք թագաւոր ըլլալու եւ ան շատ հարբատութիւն ալ չունի»: Ըսաւ, Աստուած ընտրած է զանի ձեր վրայ եւ աւելցուցած է անոր գիտութիւնը եւ հասակը եւ Աստուած իր ուզածին կուտայ իր սեփականութիւնը. եւ Աստուած հարստութիւն պարգեւող եւ իմաստուն է»:

249. Եւ մարգարէնին ըսաւ անոնց, ա՜հ անոր թագաւորութեան ապացոյցը որ տապանակը ձեր

մօտ կուգայ, որուն մէջ կան՝ ձեր Տիրոջ փառք՝ Մովսէսի եւ Ահարոնի ժողովուրդներէն մնացած բաները զայն կը կրեն հրեշտակները. եթէ հաւատացեալ էք, անոր մէջ ապացոյց կայ ձեզի համար:

250. Եւ երբ Թալութ իր գունդերով ճամբայ ելաւ, ըսաւ. «Աստուած ա՜հա գետով ձեզ կը փորձէ ով որ խմէ անկէ ինձմէ չէ, բայց ով որ չխմէ նա ինձմէ է. բացի իր ափո՛ր ափ մը ջուր անողէն»: Եւ անոնցմէ բացի քիչերէն մնացածները խմեցին անկէ: Բայց երբ անոնք եւ հաւատացեալները անցան անկէ, ինքը եւ իր հետ եղողները ըսին, «այսօր մենք ուժ չունինք ճալութի եւ ձէնատի հետ պատերազմելու: Սակայն Աստուծոյ հանդիպելու կարծիք ունեցողները կըսէին. «քանի՞ անգամներ Աստուծոյ հրամանով փոքրած իւ գունդ մը յաղթած է բազմութիւ գունդի մը, եւ Աստուած համբերողներուն հետ է»:

251. Եւ երբ անոնք ճալութի եւ անոր զօրքերուն դէմ ճակատեցան, ըսին «ո՛վ մեր Տէրը, մեզ համբերութիւն տուր եւ մեր ոտքերը հաստատէ եւ մեզ օգնէ անհաւատներուն ազգին դէմ»:

252. Այն ատեն Աստուծոյ հրամանաւը զանոնք փախցուցին, եւ Դաւիթ սպաննեց ճալութիւն եւ Աստուած անոր տուաւ թագաւորութիւնը եւ իմաստութիւն եւ սովորեցուց անոր ինչ որ կուզէր: Եթէ Աստուած մարդիկը իրարմով չը հեռացնէր երկիրը կապականուէր, սակայն Աստուած աշխարհներու կը գլխայ:

253. Անոնք Աստուծոյ նշաններն են որ քեզի համար կարգացինք ճշգրութեամբ. եւ դու մարգարէներէն ես:

254. Մենք այս մարգարէներէն մէկ քանին միւսներէն բարձր դասեցինք: Անոնցմէ ոմանց հետ Աս-

տուած խօսած է եւ ոմանց աստիճանը քարձրացուցած է եւ մենք տուինք Մարիամի որդի Իսային հրաշքներ եւ զանի սուրբ հոգիով զօրացուցինք եւ եթէ Աստուած ուզէր, անկէ վերջը եկողները չէին կուէր իրարու հետ, քանի որ անոնց հրաշքներ յայտնուած էին, սակայն անոնք վէճ յարուցին իրարու: Անոնցմէ որը կը հաւատայ եւ որը անհաւատ է. եթէ Աստուած կամենար անոնք չէին կուեր. բայց Աստուած իր ուզածը կընէ:

255. Ո՞վ հաւատացեալներ, ձեզ տրուածէն ողորմութիւն տուէք զիս այն օրը չեկած, երբ այլեւ ոչ առևտուր կայ, ոչ բարեկամութիւն եւ ոչ ալ բարեխօսութիւն, եւ անհաւատները չարագործ են:

256. Աստուած կայ. անկէ զատ աստուած մը չըկայ, Ան որ կենդանի է յա իտեան, ան ոչ կը քնանայ եւ ոչ կը ննջէ. անորն է ինչ որ կայ երկիրքներուն մէջ եւ երկրի վրայ: Առանց անոր հրամանին ո՞վ կրնայ բարեխօսութիւն բնի անոր: Անոնցմէ առաջ եւ յետոյ եղածները ան գիտէ. առանց անոր կամքին մարդիկ բան մը չեն ըմբռներ անոր գիտութենէն: Անոր աթորը տարածուած է երկնից եւ երկրի վրայ, եւ անոնց պահպանութիւնը անոր ծանութիւնն է. նա բարձր է եւ մեծ:

257. Կրօնքի բանութիւն չկայ, այժմ շիտայ՝ ճամբան ծուռէն: Որչոյսած յայտնի է, ուստի ո՞վ որ կուրանայ կուսքօրը եւ կը հաւատայ Աստուծոյ, ան հաստատ տառնը բաներ է, որ չի կոտորի եւ Աստուած կը յսէ ու գիտէ:

258. Աստուած հաւատացեալներուն պաշտանն է որ զանոնք մութէն զէպի լոյս կը հանէ:

259. Իսկ որոնք որ անհաւատ են անոնց պաշտպանները կուսքերն են, որոնք լոյսէն զէպի խաւար կը տանին: Անոնք կրակի բնկերներ են որուն մէջ կը մնան յա իտեան:

260. Ի՞նչ ուշադրութիւն չըրի՞ր անոր, որ Աբրահամի հետ կը վիճէր անոր Տիրոջ մասին, որ Աստուած անոր տուեր էր իշխանութիւնը երբ Աբրահամ ըսաւ, «իմ Տէրն այն է որ կը կենդանացնէ ու կը մեռցնէ»: Ան ըսաւ «ես կը կենդանացնեմ եւ կը մեռցնեմ», երբ Աբրահամ ըսաւ թէ Աստուած արեւը արեւելքէն կը բերէ, իսկ դու զայն բե՛ր Արեւմուտքէն» այն ատեն անհաւատը չուարեցաւ: Եւ Աստուած անիբաւներու ազգը չառաջնորդեր:

261. Կամ ինչպէս անիկա, երբ մինչև հիմերը աւերակ զիւղէ մը կանցներ, ըսաւ «Աստուած ասիկա ի՞նչպէս կը կենդանացնէ ասոր մահէն յետոյ»: Այն ատեն Աստուած զանի մեռուց հարիւր տարի, յետոյ զանի յարոյց եւ ըսաւ, «Ո՞րչափ մնացիր», ան «ես մէկ օր կամ օրուան մէկ մասը մնացի» պատասխանեց: Ո՞չ դուն հարիւր տարի մնացիր, արդ ուշադրութիւն ըրէ կերակուրիդ եւ ըմպելիքիդ, որ չվնասուին, եւ նայէ քու էշիդ, մենք մարդկանց համար նշան ըրած ենք, եւ նայէ այն ոսկորներուն թէ ինչպէս զանոսք յարուցանելով միտով կը հագուեցնենք»: Եւ երբ այս յայտնուեցաւ անոր, ըսաւ «գրեմեմ, Աստուած ամենակարող է»:

262. Եւ երբ Աբրահամ ըսաւ, «ով տէր իմ, ցոյց տուր ինձ թէ դուն ինչպէս կը կենդանացնես մեռեալները» Աստուած անոր, արդեօք չն՞ա հաւատար, ըսաւ: Աբրահամ պատասխանեց «այո՛ կը հաւատամ. բայց կուզեմ որ սիրտս համոզուի»: Յայնմամ Աստուած անոր ըսաւ, «Թողուններէն չորսը ա՛ռ կտոր կտոր ըրէ, յետոյ անոնցմէ մէկ մէկ կտոր իւրաքանչիւր յերան վրայ դի՛ր յետոյ զանոնք կանչէ. անոնք անմըջապէս քու քովդ կուգան. ուրեմն հասկցիր որ Աստուած հզօր եւ ամենազէտ է:

263. Իրենց ստացուածքը Աստուծոյ ճամբուն մէջ

զոհողները նման են այն ցորենին որ եօթը հասկ կուտայ իւրաքանչիւրը հարիւր հատիկներով և Աստուած կրկնապատիկ կուտայ որու որ ուզէ: Եւ Աստուած ճոխ և ամենագէտ է:

264. Անոնք որ իրենց ստացուածքները Աստուծոյ ճամբուն մէջ կը զոհեն և յետոյ երախտագիտութիւն չեն պահանջեր իրենց բարերարութեան համար և ուրիշները չեն նկղեր, անոնց վարձքը իրենց Տիրոջը քով է, անոնց համար վախ չկայ և չեն ալ տրամիր:

265. Մէկ մեղմ խօսքը և ներողախոսութիւնը ողորմութիւն տալէն լաւ է որ ետեւէն նեղութիւն կը բերէ եւ Աստուած հարուստ և ամենագէտ է:

268. Ո՛վ հաւատացեալներ, ձեր ողորմութիւնը երախտագիտութիւն պահանջելով և նեղելով մի փրճացնէք, այն մարդուն պէս՝ որ իր ինչքը ողորմութիւն կուտար ի ցոյցս մարդկան և չէր հաւատար Աստուածոյ և վերջին օրուան և այն յղուած քարի մը կը նմանի հողով ծածկուած յետոյ շատ անձրև կուգայ և զայն չոր կը ձգէ: Անոնք իրենց վաստակովը բան մը չեն կրնար ընել և Աստուած անհաւատներու ազգը չառաջնորդեր:

267. Իսկ անոնք որ իրենց ստացուածքը կը զոհեն Աստուծոյ հաճութեան բաղձանքով և իրենց յօժար սրտովը անոնք կը նմանին բլուրի մը վրայ եղող պարտէզի, որուն վրայ առատ անձև կուգայ և իր պտուղները կը կրկնապատիկէ, և եթէ անոր վրայ առատ անձրև ալ չգայ գոնէ ցող կուգայ, և Աստուած կը տեսնէ ինչ որ դուք կը գործէք:

268. Ձեզմէ մէկը կը փափաքի որ պարտէզ մ'ունենայ արմաւենիներով և խաղողի տունկերով որոնց տակէն գետեր կը հոսին, և այդ պարտէզին մէջ ամեն պտուղներէն ունենայ և յետոյ փոթորիկ մը

ելլէ, անոր մէջը կրակ ձգէ և այրէ: Անա Աստուած իր նշանները այս եղանակաւ ցոյց կուտայ, որ մըտածէր:

269. Ո՛վ հաւատացեալներ, ողորմութիւն տուէք ձեր շահածներէն և անոնցմէ զորս մենք երկրէն հանած ենք ձեզի համար, և գէշը մի ընտրէք ողորմութիւն տալու համար:

270. Եւ դուք գիտակցաբար այնպիսին չէք ընդուներ եթէ խարուած չըլլաք. և գիտցէք որ Աստուած հարուստ և օրհնեալ է:

271. Սատանան ձեզի ազքատութիւն կ'սպառնայ և ձեզ չարագործութիւն կը հրամայէ, բայց Աստուած ձեզի կը խոստանայ իր ներողութիւնը և շնորհքը և Աստուած ճոխ և ամենագէտ է:

272. Նա իմաստութիւն կուտայ որու որ կուզէ, և որու որ իմաստութիւն կը տրուի, անոր արդէն շատ բարիքներ տրուած է: Բայց խնկացի եղողներէն զատ ուրիշները այս չեն մտածեր:

273. Եւ ինչ ողորմութիւն որտաք և ինչ որ ուխտէք Աստուած գիտէ աւ, բայց անիրաւները օգնակործիչը չեն ունենար: Եթէ դուք ձեր ողորմութիւնը յայտնէք լաւ է, բայց եթէ ծածուկ ընէք և ազքատներուն տաք աւելի լաւ կ'ըլլայ ձեզ համար և ձեր չարութիւններէն մէկ մասը կը քուէ, Աստուած գիտէ ինչ որ կընէք:

274. Քու պարտքը չէ զանոնք առաջնորդել, բայց Աստուած կ'առաջնորդէ որն որ ուզէ, և ինչ որ ողորմութիւն կուտաք այն ձեր հոգւոյն ի նպաստ է, և ինչ ողորմութիւն կուտաք միայն Աստուծոյ հաճութիւնը շահելու համար է, և ձեր տուած ողորմութեան փոխարէն դուք պիտի վարձատրուիք և չէք զրկուիր: Եւ այն աղքատները՝ որոնք Աստուծոյ ճամբուն մէջ զբաղած են, անոնք երկրի վրայ չեն

կրնար ճամբորդել, անոնց համեստութեան պատճառաւ ազէտները զանոնք հարուստ կը կարծեն: Սակայն դուն զանոնք իրենց երևոյթէն կը դատես անոնք ստիպմամբ չեն ուղեր բան մը: Եւ դուք ինչ բարիք որ ողորմութիւն տաք, Աստուած գիտէ:

275. Անոնք որ իրենց ինչքերէն ողորմութիւն կուտան գիշեր և ցերեկ թէ՛ ծածուկ և թէ՛ յայտնի, անոնց վարձքը իրենց Տիրոջ մօտ է, և անոնց համար վախ չկայ ու չեն տրամիր:

276. Վաշխառուները միայն սարսափեալ դիւանարներու պէս յարութիւն կառնեն: Ասոր համար է որ կը ըսեն, թէ «առեալուրը նման է վաշխառութեան»: Սակայն Աստուած առեալուրին հրաման տուած է, իսկ վաշխառութիւնը արգիլած: Ուստի ով որ Տիրոջմէ խրատուելով վաշխառութենէ դազրի, իր անցեալը կը ներուի և անոր դործը Աստուծոյ յանձնուած է, բայց ով որ դարձեալ ընէ այնպիսիները կը բախի բնկերներ են և յաւիտեան կը մնան կրակին մէջ:

277. Աստուած կը սնանկացնէ վաշխառութիւնը, իսկ ողորմութիւնը կաճեցնէ, և Աստուած ոչ մէկ յանցաւոր կը սիրէ: Բայց որոնք որ կը հաւատան և բարեղործութիւն կընեն և աղօթքը կը կատարեն և մաքրութեան տուրքը կը վճարեն, անոնց վարձքը իրենց Տիրոջ քով է և անոնց համար վախ չկայ և անոնք չեն տրամիր:

278. Ով հաւատացեալներ, վախցէք Աստուծմէ և ձգեցէք վաշխի մնացորդը եթէ կը հաւատաք:

279. Իսկ եթէ չընէք, Աստուծոյ անոր մարգարէին կողմանէ ձեզ դէմ պատերազմ կը հաւատարակուի բայց եթէ ապաշխարէք այն ատեն ձեր դրամագլուխը ձերն է: անիրատութիւն մընէք և ձեր դէմ անիրատութիւն չըլլար:

280. Եթէ մէկը նեղութիւն ունի համբերեցէք մինչև որ կարող ըլլայ պարտքը վճարել բայց եթէ

իրև ողորմութիւն տաք ալդ աւելի լաւ է ձեզ համար, եթէ կը հասկնաք:

281. Եւ վախցէք այն օրէն երբ դուք ետ պիտի երթաք Աստուծոյ մօտ: այն ատեն ամեն մարդու իր վատըկածը իրեն պիտի տրուի և անոնք չեն զրկուիր:

282. Ով հաւատացեալներ, երբ պայմանաժամով փոխ կառնէք կամ կուտաք զայն գրեցէ՛ք և արդարասէր գրագիր մը թող գրէ այդ ձեր մէջը, և գրագիրը որուն Աստուած սովրեցուցած է, թող չըմբռնէ գրել թող ան գրէ և պարտապանը թելադրէ, և նա վախնայ իր Տէր Աստուծմէն և անկէ բան մը չպակսեցնէ, իսկ եթէ պարտապանը ապուշ է կամ տկար և կամ եթէ թելադրելու անկարող է, այն ատեն անոր խնամակալը թո՛ղ թելադրէ արդարութեամբ և երկու մարդ վկայ ըլլան, եւ եթէ երկու մարդ չգտնուին, այն ատեն մէկ մարդ և երկու կին թող վկայ ըլլան, թէ կը հաւանիք որպէսզի այդ երկու կիներէն մէկը եթէ սխալի միւսը յիշեցնէ անոր: Եւ եթէ վկաները կանչուին պէտք չէ մերժեն և արհամարհեն և մեծ ըլլայ կամ պղտիկ ժամանակին գրելը մի ուշացնէք: Սա աւելի ուղիղ է Աստուծոյ առջև և վկայութիւնը կը հաստատէ և յարմար է որ չկասկածիք, բացի այն պարագայէն որ առեալուրը ձեռքէ ձեռք վայրկենական ըլլայ և զայն ձեր մէջ կարգադրէք, այն ատեն դուք յանցաւոր չէք եթէ չէք գիտեր և ոչ ալ վկան պէտք չէ մնաստիւն, եթէ անոնց մնասէք, այդ ձեր չարագործութիւնն է: Ուրեմն վախցէք Աստուծմէ և մատուած ձեզ կը սովորեցընէ և նա ամենագէտ է:

283. Եւ եթէ դուք ճամբորդութեան մէջ ըլլաք և գրագրեր չը գտնէք, այն ատեն գրաւ առնուի: Իսկ եթէ իրարու վստահութիւն ունենաք, այն ատեն վստահելի համարուած անձը իրեն յանձնուածը ետ տայ, և Տէր Աստուծմէ վախնայ: Եւ վկայութիւնը

մի ծածկէք ով որ ծածկէ անոր սիրտը չար է և Աստուած գիտէ թէ դուք ինչ կընէք :

284. Երկինքներու և երկրի մէջ եղածները Աստուծոյն են և ձեր սրտերուն մէջ եղածը ծածկէք թէ յայտնէք Աստուած անոր մասին ձեզմէ հաշիւ կը պահանջէ, և ան իր ուղածին կը ներէ և ուղածն ալ կը պատժէ, և Աստուած ամենակարող է :

285. Մարգարէն Տիրոջ կողմէ իրեն իջածին կը հաւատայ. նոյնպէս ալ հաւատացեալներէն ամէն մէկը կը հաւատայ Աստուծոյ և հրեշտակներուն և անոր գիրքերուն և անոր մարգարէներուն. մենք անոր մարգարէներուն ոչ մէկին մէջ տարբերութիւն չենք դներ, և մենք կը լսենք ու կը հնազանդենք. ներէ՛, ով Տէր, և մենք քեզ պիտի դառնանք,» կրօնն :

286. Աստուած մէկու մը իր կարողութենէն վեր պարտականութիւն չդներ : Անոր ըրած բարիքին վարձքը իրենն է. գործած չարիքի պատիժ է. ով Տէր մեր, մեր կարողութենէն վեր բան մեր վրայ մի բռնցներ և ներէ մեզի և մեզ թողու դու ես մեր պաշտպանը, և օգնէ մեզ անհաւատներու ազգին դէմ :



### Գ. Գ Լ Ո Ի Խ

(ՍՈՒՐԷ ԱԼ ԻՄՐԱՆ)

#### Մէտքնակաւան Եփուհարիւր պատգամ

Յանուն Աստուծոյ գթածի ոգորմածի

1. Ա. Լ. Մ. Աստուածն—Որմէ զատ Աստուած չկայ. կենդանի և յաւիտենական է :

2. Որ ճշմարտութեան գիրքը վարիջացուցած է քեզ նա առաջէն իջեցուցած է Օրէնքը և Աւետարանը մարգող իբրև առաջնորդ և իջեցուցած է Ղուբանը :

3. Աստուծոյ նշաններուն չհաւատացողներուն ծանր պատիժ կայ, և Աստուած հզօր վրէժխնդիր է :

4. Վասն զի Աստուծմէ զաղտնի բան մը չկայ Կրկրի և վրայ երկինքը, ան է որ արգանդներու մէջ ձեզ ստեղծած է ինչպէս որ ուղած է, անկէ զատ Աստուած մը չկայ. նա հզօր և իհաստուն է :

5 Ան է որ գիրքը քու վրայ իջեցուցած է, Անոր մէջ հաստատ պատգամներ կան. անոնք մարգիրքն են և միւսները նմանութիւններ են : Իսկ որոնց որ սրտերուն մէջ կաշկած կան, անոնք նմանութիւններուն կը նետելին խռովելու համար և զայն մեկնելու ուղիով : Եւ անոր մեկնութիւնը Աստուծմէ զատ մէկը չգիտեր և հմուտ գիտունները կրօնն թէ մենք անոր կը հաւատանք բոլորն ալ մեր Տիրոջ կողմէ է, և միայն խելացիները կը յիշեն :

6 Ով մերը Տէրը, մեզ առաջնորդելէ յետոյ սրտերնուս մէջ կասկած մի ձգեր, և քու կողմէդ մագի ոգորմութիւն պարգևէ, վասն զի դուն պարգևիչ ես :

7. Ով Տէր մեր, դուն պիտի ժողովես մարգիկը այն օրը, որուն տարակոյս չկայ, որով նետե Աստուած իր խոստումը չի դրժեր :

8. Անոնք որ չեն հաւատար, անոնց ոչ ինչքը և ոչ զաւակները բանով մը կրնան օգնել իրենց Աստուծոյ դէմ մեղքերուն պատճառաւ, և անոնք հրոյճարակ կըլլան :

9. Անոնք Փարաւոնին ցեղին և անոնցմէ առաջ եղածներուն պէս սուտ համարեցին մեր նշանները, և Աստուած ալ զանոնք պատժեց իրենց մեղքերուն պատճառաւ, և Աստուած խստիւ պատժող է :

10. Անհաւատներուն ըսէ որ դուք անպատճառ պիտի լուջուիք և զժողովրդ նեւաւիք, և այն գէշ վայր մըն է:

11. Այն պատերազմոյ երկու զօրազուններուն մէջ որոնցմէ մին Աստուծոյ ճամբուն մէջ կը պատե-  
րազմէր, և միւսը անհաւատ էր. ձեզի համար նշան կար, և ասոնք իրենց աչքին երևայթով զանոնք ի-  
րենց կրկնը կարծեցին, և Աստուած ուզածը իր օգ-  
նութեամբը կը զօրացնէ: Անա աշախուրջ եղողներուն համար ասոր մէջ խրատ կայ:

12. Մարգոց իբրև վայելք՝ արուստ է զուարճու-  
թեան սէր զէպի կիները և որդիներ և զիզուած ու-  
կի և արծաթ և բնտիր ձեեր և անասուններ և ա-  
գարակներ: Ասոնք այս աշխարհի վայելքներն են,  
բայց յաւագայն տեղը Աստուծոյ քով է:

13. Ըսէ՛ արդևօք ասկէ աւելի յաւ բան ցոյց տամ  
երկիւղածներուն. անոնք իրենց Տրոսջը քով աւնին  
դրախտներ, որոնց տակէն գիտեր կը հասին. անոնք  
յաւխտեան անոնց մէջ կը մնան, և մարտը կիներ և  
Աստուծոյ հաճութիւնը կայ հոն: Եւ Աստուած իր  
ծառաններուն կը նայի:

14. Անոնք կըսեն. ո՛վ մեր Տէրը, մենք կը նա-  
ւատանք, ուստի ներէ մեզ մեզ մեզքերը. և մեզ  
պահէ կրակի տանջանքներէն:

15. Համբերողներ և արդարներ ու հեղեր եւ ու-  
ղորմութիւն տուողներ եւ առաւօտները մեզքի թո-  
ղութիւն խնդրողներ են:

16. Աստուած վկայած է թէ իրմէ զատ Աստուած  
չկայ. նաեւ հրեշտակները ու գիտուններ հաստատե-  
րն իրուացիօրէն թէ անկէ զատ ուրիշ Աստուած չը-  
կայ. որ հզօր եւ իմաստուն է:

17. Աստուծոյ առջև ուղիղ կրօնքը Բարամն է և  
անոնք որոնց գիրք արուած է, անհամաձայնու-

թիւն հանեցին միայն այն ատեն երբ իրենց գիտու-  
թիւն տրուեցաւ: Սակայն ո՛վ որ Աստուծոյ նշան-  
ները ուրանայ, Աստուած շուտ հաշիւ կը տեսնէ:

18. Եւ եթէ անոնք քեզի նեւ վիճարանին, ըսէ-  
«ես իսլամացած եմ և ես ու իմ նեւեղողներս երես-  
ներս Աստուծոյ ուղղած ենք»:

19. Որոնց որ գիրք արուած է և որոնք որ կար-  
գայ չեն գիտեր ըսէ անոնց, «դուք կ'իսլամանա՞ք»  
եթէ իսլամանան այն ատեն ուղիղ կառաջնորդուին.  
Իսկ եթէ մերժեն, քու պարտքը միայն առաջարկել  
է, և Աստուած կը տեսնէ իր ճառանները:

20. Արդարև անոնք՝ որ Աստուծոյ նշաններուն  
չեն հաւատար և անիրաւութեամբ մարգարէները և  
անոնց մարդիկը, կ'սպաննեն ճշմարտութիւն հրա-  
մայելնուն համար, անոնց դատն ամենաճանք գու-  
շակէ:

21. Այդ մարդոց գործքերը այս և միւս աշխարհի  
մէջ կորսուած են, անոնք օգնող չպիտի ունենան:

22. Ուշադրութիւն չըրո՞ր անոնց, որոնց գիրքէն  
մաս մը արուած է, անոնցմէ մաս մը մէջերնին հը-  
րամայող ըլլալու համար Աստուծոյ գիրքին հրաւի-  
րուեցան բայց անոնք կանակնին դարձնելով զացիւն:

23. Անոնց այդպէս ընելուն պատճառը այն էր որ  
կ'ըսէին, «կրակը մեզ միայն քանի մը օր կը դպչի»,  
և իրենց յերուրածը զիրենք մօլորեցուց իրենց կրօն-  
քին մէջ:

24. Ի՞նչպէս կըլլայ ուրեմն, որ մենք զանոնք ան-  
կասկածելի օրն ժողովներ և ամեն մէկ հօգի  
իր վասակածը կ'ստանայ և անոնց անիրաւութիւն  
չըլլար:

25. «Ո՛վ Աստուած, ըսէ, ո՛վ աշխարհի տէրը, դուն  
կուտաս իշխանութիւնը որու որ ուզես, և կ'առնես  
իշխանութիւնը որմէ որ կամենաս, և կը պատուես

որը որ ուզես, և կ'անարգես որը որ կամենաս, բարիքը քու ձեռքդ է և անա դուն ամեն բանի կարող ես:

26. Գուն գիշերը ցերեկին մէջ կը մտցնես և ցերեկը գիշերի մէջ եւ կենդանին մեռեալէն կը հանես և մեռեալը կենդանիէս, և ուզածիդ անհամար ազրուստ կուտաս:

27 Հաւատացեալները անհաւատները իրենց պաշտպան թող չընդունին, բացի հաւատացեալներէն: Եւ ով որ այս ընէ, Նա Աստուծոյ առջև ոչինչ է. իսկ եթէ անոնցմէ կը վախնաք, Աստուած ինքը կը պաշտպանէ ձեզ և դուք Աստուծոյ պիտի դառնաք: Ըսէ՛. «ձեր սիրտին մէջ եղածը ծածկէք ալ յայտնէք ալ Աստուած զայն գիտէ ե գիտէ նաև երկինքներու մէջ և երկրի վրայ եղածը և Աստուած ամենակարող է:

28. Այն օրը ամեն մէկ հողի պատրաստ պիտի տեսնէ իր գործած բարիքը, նաև իր գործած հարութիւնը, եւ պիտի փափաքի որ ասոր եւ իր մէջ տեղը մեծ հեռաւորութիւն ըլլար: Բայց Աստուած կը պաշտպանէ ձեզի եւ Աստուած կը գթայ իր ծառաներուն:

29. Ըսէ, որ եթէ դուք զԱստուած կը սիրէք, ինձ հետեւեցէք: այն ատեն Աստուած ձեզ կը սիրէ եւ ձեր մեղքերը ձեզ կը ներէ. եւ Աստուած ներող ուղորմած է: Ըսէ՛, Աստուծոյ եւ մարգարէին նազանդեցէ՛ք, իսկ եթէ մերժէք, այն յայնժամ Աստուած անհաւատները չի սիրեր:

30. Արդարև Աստուած ընտրեց ընդհանուր աշխարհներէն Ադամը, Նոյն և Աբրահամու գերդաստանը և Իմբանի գերդաստանը անոնք իրարու սերունդէ են: Աստուած լսող իմաստուն է:

31. Իմբանի կինը երբ ըսաւ, «Ո՛վ Տէր, ես իմ

արգանդիս մէջ եղածը քեզի կուխեմ իբր նուէր, ինձմէ ընդունէ, որովհետև դուն կը յսես ու գիտես»: Բայց երբ ծնեցաւ բաւ, «Ո՛վ Տէր, ես աղջիկ մը ծնայ»: Բայց Աստուած գիտէր թէ ինչ է ծներ. արուն աղջկան պէս չէ: Եւ ես զանի Մարիամ անունեցի. և զանի և անոր սերունդը սատանային քարկոծումէն քու պաշտպանութեանդ կը յանձնեմ»:

32. Եւ անոր Տէրը հաճութեամբ զանի ընդունեց և անկէ գեղեցիկ բոյս մը բուսցուց և Չաքարիան անոր խնամատար կարգեց: Եւ Չաքարիան ամէն անգամ որ մտնէր անոր սենեակը, անոր քովը կերակուր կը գտնէր. ըսաւ, «՛վ Մարիամ, այս ուրիշ կը տրուի քեզի»: Ան ալ ըսաւ, «Աստուծո՛ւ է, որովհետև Աստուած իր հաճելին կը կերակրէ անհաշիւ»:

33. Այն տեղը Չաքարիա աղօթք ըրաւ իր Տիրոջը բնելով. «Ո՛վ Տէր իմ, ինձ բարի սերունդ մը տուր քու կողմէն, վասն զի դու աղօթքը ըսող ես»: Այն ատեն հրեշտակը ձայնեց անոր երբ նա աղօթքի կեցած էր սենեակին մէջ:

34. «Անա Աստուած քեզ աւետիս կուտայ ետհեալի մասին, որ Աստուծոյ խօսքը հաստատող և մեծ և ծովապահ և բարոյատէր մարգարէ մը պիտի ըլլայ»:

35. Ան ալ ըսաւ, «Ո՛վ Տէր իմ, ինձ ի՞նչպէս կարելի է որդի ունենալ իմ այս ծերացած հասակիս եւ կինս ալ արդէն ամուլ է»: Պատասխանեց, «Այո՛, այդպէս է, բայց Աստուած ուզածը կ'ընէ»:

36. Այն ատեն Չաքարիա «՛վ Տէր. իմ. ինձ նշան մը տուր» ըսաւ: Պատասխանեց, «քեզի սա նշան ըլլայ, որ երեք օր չկրնաս մարդոց հետ խօսի ալ միայն ձեւերով. ուստի յիշէ՛ ստէպ քու Տէրդ և օրհնէ իրիկուն և առաւօտ»:

37. Եւ երբ հրեշտակը Մարիամին ըսաւ, «ո՛վ Մարիամ, ա՛նա Աստուած քեզ ընտրեց եւ քեզ աշխարհքի կիներէն ընտրեց» :

38. Ո՛ր Մարիամ, Տիրոջդ հնազանդէ՛ եւ երկրպագէ՛ ու խոնարհէ՛ խոնարհութիւն շնորհներուն հետ» :

39. «Այս գաղանիք մըն է որ քեզի իմաց կը տրուի, մենք քեզ յայտնութիւնով յայտնեցինք, եւ վիճակ ձգուած ատենը դուն անոնց քով չկայիր, թէ ով ըլլալու է Մարիամին խնամատարը, եւ դու անոնց քով չէիր երբ անոնք կը վիճէին» :

40. Ան առնն հրեշտակը ըսաւ, «ո՛վ Մարիամ, ա՛նա Աստուած իր խօսքը քեզ կաւեաէ. անոր անունն է Յիսուս Քրիստոս որդի Մարիամու, նշանաւոր այս աշխարհի եւ հանդերձեալի մէջ եւ մերձաւորներէն պիտի ըլլայ» :

41. «Եւ անիկա օրորոցին մէջէն կ'սկսի խօսիլ մարդոց հետ, Նաեւ չափահաս ատենը արդարեւորէն պիտի ըլլայ» :

42. Մարիամ ըսաւ «ո՛վ Տէր իմ, ես ի՞նչպէս զաւակ կուներնամ, քանի որ ինձ մարդ չէ մերձեցեր» : Այդպէս է, բայց Աստուած ուղածը կ'ստեղծէ. երբ բան մը վճռեր է, անոր միայն «եղի՛ր» կ'ըսէ ու կ'ըլլայ» :

43. Եւ անոր պիտի սովորեցնէ զիրքը եւ իմաստութիւնը եւ օրէնքը եւ Աւետարան. եւ անիկա Իսրայէլի որդւոց մարդարէ պիտի ըլլայ. ա՛նա ես ձեր Տիրոջ կողմէ եկած եմ ձեր մօտ նշանով. ես ձեզի համար ցեխէն թռչունի ձեւով բան մը կը շինեմ եւ յետոյ անոր կը փչեմ եւ անի Աստուծոյ հրամանաւ թռչուն կ'ըլլայ, եւ ես կայրերը կառուցանեմ եւ սեռեալները Աստուծոյ հրամանովը կը կենդանացնեմ եւ ձեզ կը տեղեկացնեմ թէ ինչ պէտք է ուտէք եւ ինչ պաշար հաւաքէք տուներնիդ: Եթէ դուք հա-

ւատացեալներ էք, ա՛նա նշան ձեզի համար» :

44. «Եւ կը հաստատեմ ինձմէ առաջ եղած օրէնքները եւ աղաատութիւն կուտամ ձեզի քոնի մը բաներու համար որ ձեզի արգելուած էին, եւ ես ձեր Տիրոջը կողմէ նշանով եկած եմ ձեր քով. Ուրեմն վախցէ՛ք Աստուծմէ եւ ինձ հնազանդեցէք. որովհետեւ Աստուած իմ Տէրն է եւ ձեր Տէրն է. ուստի անոր ծառայեցէք. շիտակ ճամբան այս է» :

45. Բայց երբ Յիսուս հասկցաւ ա՛նոնց անհաւատութիւնը, բաւ, «Ո՛րոնք են ինձ օգնողները պատերազմի մէջ Աստուծոյ սիրոյն համար». առաքեալները բոյն. «մենք Աստուծոյ օգնականներն ենք մէկ Աստուծոյ հուատաւոր կը վկայենք թէ մենք միւսյիմներ ենք» :

46. «Ով Տէր մեր, մենք կը հաւատանք քովար իջնուցածիդ եւ մարգարէիդ կը հպատակինք ուստի մեզ գրէ վկաներու հետ» :

47. Եւ անոնք խորամանկութիւն ըրին, եւ Աստուած ամենէ աւելի խորամանկն է :

48. Այն առնն Աստուած ըսաւ, «Ո՛վ Յիսուս ես քեզ մահ կուտամ եւ իմ քովս կը բարձրացնեմ, եւ ես քեզ անհաւատներէն կ'ազատեմ եւ յու հետեւողները մինչեւ յարութեան օրը անհաւատներէն բարձր կը դնեմ. յետոյ դուք իմ քով պիտի դառնաք. արդ. ես կը վճռեմ ձեր մէջ այն բաները որոնց մասին դուք իրարու հետ անհամաձայն էիք» :

49. «Եւ անոնք որ անհաւատ են, զանոնք սաստիկ կը պատժենք թէ այս աշխարհի եւ թէ հանդերձեալի մէջ. եւ անոնք օգնողներ չպիտի ունենան» :

50. Իսկ անոնք որ կը հաւատան եւ բարեգործութիւն կընեն, անոնց վարձքերը պիտի վճարուին, եւ Աստուած անիրաւները չի սիրեր :

51 «Իբր նշան եւ իմաստուն զգուշացում սա կը կարդանք քեզ» :

52. Արդարեւ Յիսուսի օրինակը Աստուծոյ առջեւ Ադամի օրինակին նման է, զոր ստեղծեց հողէն եւ յետոյ անոր ըսաւ «եզի՛ր» եւ եղաւ :

53. Ճշմարտութիւնը քու Տիրոջմէ է. կասկածողներէ մի ըլլար :

54. Արգ. քեզ գիտութիւն գալէն յետոյ, քեզի հետ վիճողին ըսէ «եկէ՛ք մեր որդիները ու ձեր որդիները եւ մեր կիները ու ձեր կիները եւ մեր մարդիկը ու ձեր մարդիկ ու ձեր մարդիկ կանչենք, յետոյ աղաչենք եւ Աստուծոյ անէծք ստախօսներուն վրայ դնենք» :

55. Ահա այս ճիշդ պատմութիւն սըն է. եւ բացի Աստուծմէ ուրիշ Աստուած չկայ. եւ Աստուած հզօր եւ իմաստուն է :

56. Բայց եթէ կռնակնիդ դարձնէք, Աստուած գիտէ խռովիչները :

57. Ըսէ՛, «ով գիրք ունեցողներ, եկէ՛ք մեր և ձեր միջև հաւասարութեան խօսք ընդունինք որ Աստուծմէ զատ ուրիշ աստուծոյ չծառայենք, և անոր բան մը ընկեր չդնենք և Աստուծմէ զատ գիրար Տէր չընդունինք : Բայց եթէ անոնք մերժեն, ըսէք և վկայեցէք թէ մենք միւսլիմներ ենք» :

58. Ո՛վ գիրք ունեցողներ, ի՞նչու կը վիճարանիք Արրահամի մասին : Օրէնքը և Աւետարանը անկէ վերջը վար իջեցուցած են : Արդեօք չէ՞ք խորհիր :

59. Այո՛, դուք պէտք է գիտցած բաներնուդ վերայ վիճէք : Ուրեմն ի՞նչու չգիտցած բաներնուդ վերայ կը վիճիք : Բայց Աստուած գիտէ, իսկ դուք չէք գիտեր :

60. Արրահամը ոչ հրեայ էր և ոչ քրիստոնեայ. այլ բարեպաշտ միւսլիմ էր. և ան կուպաշտ ալ չէր :

61. Արդարեւ Արրահամի նմանները անոնք են. ուրոնք անոր կը հետեին և նա մարգարէ է և անոնք հաւատացեալներ և Աստուած հաւատացեալներուն պաշտպանն է :

62. Խու՛մը մը գիրք ունեցողներ կաշխատին որ ձեզ մոլորեցնեն, բայց անոն միայն ինքզինքնին կը մոլորեցնեն. բայց չեն հասկնար :

63. Ո՛վ գիրք ունեցողներ, ի՞նչու համար դուք Աստուծոյ նշանները կուբանանք. քանի որ դուք վկաներ էք :

64. Ո՛վ գիրք ունեցողներ, ի՞նչու համար դուք ճշմարտութիւնը ոչնչութեան կը խառնէք և իրողութիւնը կը ծածկէք. քանիոր դուք գիտէք :

65. Գիրք ունեցողներէն մէկ մասը կըսեն, թէ «այն բանին հաւատացէք որ ցերեկ ժամանակ իջեցուցուած է հաւատացեալներուն, իսկ միւսը ուբացէք որպէս զի ետ գան» :

66. Եւ միայն անոր հաւատացէք որ ձեր կրօնքին կը հետեի : Դուն ըսէ՛, արդարեւ շիտակ ճամբան մի միայն Աստուծոյ ճամբան է և ըսէ՛, Աստուծոյ նշանները նշան են. ձեզի տրուածին նման ուրիշին ալ կը տրուին : Կամ երբ ձեր հետ կը վիճին ձեր Տիրոջը առջև. դուն ըսէ՛, «Ամեն բարին Աստուծոյ ձեռքն է նա իր ուղածին կուտայ. և Աստուած մեծ իմաստութեան տէր է» :

67. Իր ոգորմութիւնը կը յատկացնէ որու որ ուզէ, և Աստուած մեծ շնորհքի տէր է :

68. Գիրք ունեցողներէն անանկներ կան որ եթէ տաղանդ յանձնես քեզ ետ կը դարձնեն և անոնց մէջ անանկներ ալ կան որ եթէ մէկ ստակ յանձնես, քեզի ետ չտար, եթէ զինքը չստիպէ :

69. Ասոր պատճառը այն է որ անոնք «մենք տրգէտներուն պարտական չենք» կըսեն, և Աստուծոյ մասին սուտ կը խօսին, թէ և գիտեն իրենք :

70. Սակայն ով որ իր ուխտը կատարէ և երկիր-  
դած է, Աստուած ալ երկիրդածները կը սիրէ:

71. Իսկ անոնք որ քիչ մը դրամով կը ծախեն ի-  
րենց ուխտը և երդումներն, հանգերձեալին մէջ ա-  
նոնց բաժին չկայ: և Աստուած անոնց նետ չխօսիր և  
չարութեան օրս անոնց չնայիր և զանոնք մաքուր  
չճանչնար. և անոնց դառն տանջանք կայ:

72. Եւ անոնցմէ կան ոմանք, որ իրենց լեզուովը  
այնպէս դիրքը կը կարդան որ դուք գիրքէն է կը  
կարծէք. բայց զէրքէն չէ. և անոնք թէև կրսեն թէ  
ան Աստուծոյ կողմէ է, բայց Աստուծոյ կողմէ չէ և  
անոնք Աստուծոյ վասին սուտ կըսեն, թէև իրենք  
գիրեն:

73. Մարդոց չլայեր որ Աստուած իրեն գիրք և  
իմաստութիւն և մարգարեութիւն տալէն յետոյ,  
անիկա մարդոց ըսէ, «դուք ինծի ծառաներ եղէք  
և ոչ Աստուծոյ»: բայց հոգեւորականներ եղէք գիտ-  
ցած գիրքերնուդ և դաս տուած բաներնուդ մասին:

74. Եւ ձեզ չհրամայեր որ հրեշտակները և մար-  
դարէները ձեզի պաշտպան ընդունիք. և երբէք ձեզ  
չհրամայեր որ դուք միւսլիմ ըլլալէ յետոյ անհա-  
ատ ըլլաք:

75. Աստուած Մարգարէներու նետ դաշինք զընե-  
լով, ըսաւ «ձեզի գիրքը և իմաստութիւնը տուի-  
յետոյ ձեզի մարգարէ մը պիտի գայ ձեր ըով եղա-  
ծը հաստատ է անոր հաւատացէք դուք և օգնեցէք  
անոր»: և ան Աստուած ըսաւ անոնց, պատրաստ էք  
և կընդունի՞ք իմ այս դաշինքս», անոնք ալ պատ-  
րաստ ենք ըսին: Աստուած ալ ըսաւ «Աւերին վկայ-  
եղէք և ես ալ ձեզի նետ վկաներէն եմ»:

76. Արդ, ասկէ յետոյ ով որ ետ դառնայ,  
այնպիսիները չարագործներ են:

77. Միթէ անոնք Աստուծոյ կրօնքէն զատ ուրիշ  
կրօնքի մը կը փափաքին: Արդէն երկիրքի և երկրի  
վրայ եղողները անոր անձնատուր եղած են կամայ  
ակամայ, և անոր մօտ պիտի դառնան:

78. Ըսէ՛, «մենք կը հաւատանք Աստուծոյ եւ մե-  
զի համար իջեցուցածին և Արքայամին և Իսմայիլին  
և Իսահակին և Յակոբին ու ցեղերուն իջեցուցուա-  
ծին, և այն ամենին որ տրուած է Մովսէսին և Յի-  
սուսին և մարգարէներուն իրենց Տիրօջ կողմէ: մենք  
անոնց ոչ մէկին տարբերութիւն չենք զնեք, և մենք  
անոր միւսլիմներն ենք»:

79. Եւ ով որ իսլամէն զատ ուրիշ կրօնք մը ուզէ  
այդ անորմէ բնաւ չընդունիր, և նա միւս աշխարհի  
մէջ մեատուղներէն կրլայ:

80. Աստուած ի՞նչպէս տաջնորդելու է ազգի մը  
որ հաւատալէ յետոյ անհաւատութեան կը դառնայ.  
և անոնք վկայած էին որ մարգարէն ճշմարիտ է եւ  
անոնց նշաններ յայտնուած էին, սոնց մասին վը-  
կայելէ յետոյ անհաւատ կ'ըլլան. Աստուած չարա-  
բագործներու ազգին չառաջնորդեր:

81. Անոնց պատիժը այն է որ Աստուծոյ և հրեշ-  
տակներուն և բոլոր մարդոց անէծքը անոնց վրայ է:

82. Անոնք յաւիտեանս յաւիտենից անոր մէջ կը  
մնան եւ տանջանքը չի թեթեւար անոնց և ժամա-  
նակ չի արօր:

83. Բացի այն պարագայէն որ անոնք ասկէ յե-  
տոյ ապաշխարեն և բարեգործութիւն ընեն, որով-  
հետեւ Աստուած ներող ողորմած է:

84. Երբ անոնք հաւատալէ յետոյ անհաւատ կը  
դառնան, և անհաւատութիւնը կ'աւելցնեն, անոնց  
ապաշխարհութիւնը բնաւ չընդունուիր. անոնք կատ-  
ղածներ են:

85. Վասնզի առանց հաւատալու մեռնողներէն ու-

րոնք անհաւատներ էին, և ոչ մէկը չընդունուի բժէ նոյն իսկ երկիրը լեցուն ոսկի տան ազատուելու համար: Անոնց համար դառն տանջանք կայ և անոնց օգնող չըլլար:

86. Դուք արդարութեան չէք հասնիր, մինչև որ ձեր սրբածէն ողորմութիւն չտաք, և ինչ բան որ ողորմութիւն տաք, Աստուած զայն գիտէ:

87. Ահէն կերակուր Իսրայէլի որդիներուն համար Սուրբ է, բացի անոնցմէ որ Իսրայէլ ինքր արգիւտ էր իրեն համար օրէնքը իջնելէն առաջ: Արդ, բռէ՛ «օրէնքը բերէք և կարդացէք եթէ հաւատարիմներ էք»:

88. Ուստի որոնք որ սակէ յետոյ Աստուծոյ մասին սուտ շինեն անք անիրաւներ են:

89. Ըսէ՛, «Աստուած ճշմարիտ է» ուրեմն նեւեւեցէք Արքանամբ կրօնքին բարեպաշտօրէն, և ան կռապաշտ չէր:

90. Աւասիկ մարդոց հմր շինուած առաջին տաճարը Պէքքէի մէջ է. ո՛ր օրնուած է և աշխարհի առաջնորդութիւն է:

91. Անոր մէջ ապացուցանող յայտնի նշաններ կան. Արքանամբ տեղը, և ով որ հոն մտնէ կապահովուի, և մարդիկ պարտական են Աստուծոյ այդ տաճարին ուխտի երթալու համար, եթէ կարողութիւն ունին երթալու:

92. Եւ սակայն ով որ այ անհաւատ ըլլայ, Աստուած առանց այս աշխարհներուն այ հարուստ է:

93. Ըսէ՛, «Ո՛վ գիրք ունեցողներ, ի՛նչու չէք հաւատար Աստուծոյ նշաններուն, և Աստուած ձեր գործած գործերուն վկայ է:

94. Ըսէ՛ դուն, «Ո՛վ գիրք ունեցողներ, ի՛նչու հաւատացողները Աստուծոյ ճամբայէն կը շեղեցնէք, և հակառակութիւն կը փնտռէք, մինչդեռ դուք վը-

կաներ էք. Աստուած անտեղեակ չէ ձեր բրած գործերուն»:

95. Ո՛վ հաւատացեալներ, եթէ դուք գիրք ունեցողներու մէկ մասին համակերպիք, անոնք ձեզի անհաւատութեան կը դարձնեն հաւատալէ յետոյ:

96. Եւ դուք ինչպէս անհաւատութեան կը դառնաք, քանի որ ձեզ կը կարդացուին Աստուծոյ նշանները և անոր մարգարէն ձեր մէջն է, և ով որ Աստուծոյ սերտիւ կապուի, ուղիղ ճամբան կառաջնորդուի:

97. Ո՛վ հաւատացեալներ, վախցէք Աստուծմէ, ինչպէս որ երկիւղածութեան կը պաշաճի, և դուք մեռնելու ատեն միւսլիմի վիճակէն զատ տարբեր վիճակներով չէք մեռնիր:

98. Բոլորդ այ Աստուծոյ չուանէն լաւ բռնեցէք, մի՛ բաժնուիք մասերու և իշեցէք որ Աստուծոյ շնորհը ձեր վրայ էր երբ թշնամիներ էիք և ան ձեր սրտերը հաշտեցուց իրարու նեւեւ և դուք անոր շնորհիւր եղբայրներ եղաք:

99. Եւ Դուք կրակի անդունդին եղրն էիք և Աստուած ձեզ անկէ ետ քաշեց և այս կերպով ցոյց տուաւ ձեզի որ ուղիղ առաջնորդուիք:

100. Եւ ձեզմէ ժողովուրդ մը առաջ գայ որ դէպի բային նրաւիք և օրինաւոր բաներ նրամայէ ու գէշերը արգիւտ. անոնք երջանիւստներ են:

101. Եւ դուք մի նմանիք այսպիսիներուն որոնք բաժան բաժան կըլլան և իրենց յայտնութիւններ ըլլալէ յետոյ այ իրարու նեւ կը վիճին, անոնց համար ծոնր տանջանք կայ:

102. Այն օրը ոմանց երեսներ պիտի ճերմկնան և ոմանցը պիտի սենան, իսկ այս սեղաններուն կրսեն «հաւատալէ յետոյ արդեօք անհաւատ եղա՞ք. ուրեմն ճաշակեցէք ձեր անհաւատութեան տան

Յանքրո: 103. Բայց երեսները ճերմկածները Աստուծոյ ողորմութեան մէջ յաւիտեան պիտի մնան:

104. Անոնք Աստուծոյ պատգամներն են որ չմենք քնզի կը կարդանք ճշդութեամբ և Աստուած աշխարհին տառապանք չուղեր:

105. Եւ երկնից մէջ և երկրի վրայ եղածը Աստուծոյն է և ամեն բաներ Աստուծոյ ետ պիտի դառնան:

106. Դուք ազգերու յաւագոյնն էիք, և մարդոց առջև ցուցադրուեցաք օրինաւ որ բաներ չբամայող ու գէշերը արգելող, և Աստուծոյ հաւատացող: Եւ եթէ գիրք ունեցողներն այ հաւատայն անոնց համար աւելի յաւ կ'ըլլար: Անոնցմէ հաւատացեալներ կան, բայց շատերը չարագործներ են:

107 Անոնք ձեզի չեն փնտսեր, միայն քիչ մը կը նեղացնեն և եթէ ձեզի հետ պատերազմին իսկ կըռնակնին կը դուրձնեն և օգնութիւն չեն գտներ:

108. Անոնք ուր որ այ գտնուին, վրանին նուաստութիւն ինկած է, ի բաց առեալ այն պարագայէն որ Աստուծոյ և մարդկանց հնազանդութիւն յայտնեն, անոնք Աստուծմէ պիտի պատժուին ու թշուառունան: Եւ այս այն պատճառաւ է որ Աստուծոյ նշաններուն չէին հաւատար և անիրաւօրէն կ'սպաննէին մօրգարէները, և որով կ'ապստամբէին և չարիք կը գործէին:

109. Անոնք միեւնոյնը չեն գիրք ունեցողներէն ժողովուրդ մը կայ հաստատուն, որ գիշերուան ժամուն կաղօթէ Աստուծոյ և երկրպագէ անոր:

110. Անոնք կը հաւատան Աստուծոյ և վերջի օրւան և կը չբամայեն օրինաւ որ բաները ու կարգիլն գէշերը և կաշխատին բարիք գործել. անոնք արդարներ են:

111. Եւ դուք ինչ բարիք որ ընէք չէք մոռցուիր:

Աստուած գիտէ երկիւզածները:

112. Ահա անհաւատները Աստուծոյ ձեռքէն բանով մը չեն կրնար ազատիլ, ոչ իրենց ստացուածքով և որ իրենց զաւակներով և անոնք կրակի ընկերներ են և անոր մէջ կը մնան յաւիտեան:

113. Այս աշխարհի կեանքին մէջ անոնց տուած ողորմութիւնը կը նմանի պող հովի մը, որ իրենց հոգւոյն անիրաւութիւն ընողներու արտին վրայ կը փչէ ու կը փճացնէ: Աստուած չէ որ անոնց անիրաւութիւն ըրաւ, այլ անոնք իրենց անիրաւութիւնը ըրին:

114 Ով հաւատացեալներ, ձեզմէ ուրիշներուն հետ բարեկամութիւն մի՛ ընէք, անոնք չեն դադ իր ձեզ փնտսելէ անոնք ձեր կորուստը կը բաղձան. անոնց բերաններէն առելութիւնը յայտնուած է և անոնց սրտերուն մէջ ծածկուածը աւելի մեծ է: Անք արդէն ձեզ իմացուցինք պատգամները, եթէ կը հաւկրնանք:

115. Ահա դուք զանոնք կը սիրէր, բայց անոնք ձեզի չեն սիրեր, և դուք բոլոր գիրքերուն կը հաւատաք, բայց երբ անոնք ձեզի կը հանդիպին կրպեն «մենք կը հաւատանք», սակայն երբ ձեզմէ բաժնուին՝ բարկութեամբ իրենց մատները խածնեն: Ըսէ՛, ստակեցէ՛ք դուք ձեր բարկութեամբը ահա Աստուած գիտէ սրտերու մէջ եղածը»:

116. Եթէ ձեզ յաւութիւն մը պատահի, անոնք կը արտմին, և եթէ ձեզ չարիք պատահի, անով կուրախանան անոնք: Բայց եթէ համբերէք և երկիւզած ըլլաք, անոնց խարդախութիւնը ձեզի ո'ւէ փնտստար, և դուք ինչ գործ-որ գործէք Աստուած զայն կը շրջապատէ:

117. Եւ երբ առաւօտեան քու ընդամիջէն ելար որ հաւատացեալներուն տեղեր պատրաստես պատե-

յրազմի համար և Աստուած յսող և գիտող է :

118. Այն ատեն ձեզմէ երկու խումբ վախնալով փախչելու վրայ էին . բայց Աստուած անոնց պաշտպանն էր : Ուրեմն հաւատացեալները Աստուծոյ թող ապաւինին :

119. Եւ Աստուած Պէտրի մէջ օգնած էր ձեռքանի որ քիչուոր էիք . ուստի Աստուծով վախցէք և գոհացէք :

120. Երբ դու հաւատացեալներուն ըսիր, «արդեօք ձեզի բաւական չէ՞ որ ձեր Տէրը ձեզ օգնէ երբ հազար հրեշտակներ վառ իջեցնելով» :

121. Այո՛ . եթէ համբերէք և երկիւղած ըլլաք . և անոնք յանկարծ ձեր վրայ յարձակին , ձեր Տէրը կ'օգնէ ձեզ հինգ հազար նշանաւոր հրեշտակներով :

122. Եւ Աստուած ասով ձեզ աւետիս կուտայ միայն որ ձեր սրտերը անով քաջայերուին , և չզօրու իմաստուն Աստուծոյ կողմէն եկած օգնութեանէն ուրիշ օգնութիւն չկայ , որ անհաւատները արմատախիլ կընէ , կամ կը նուաճէ և անոնք յուսահատած տակն ու վրայ կրլլան :

123. Այս գործը քեզ չի վերաբերիր . ուղէ Աստուած անոնց կողմէ դառնայ , ուղէ անոնց պատիժ տայ իրենց անիրաւութեան համար :

124. Երկնից ու երկրի մէջ եղողները Աստուծոյն են . նա իր ուղածին կը ներէ և ուղածը կը պատժէ . և Աստուած ներող ողորմող է :

125. Ո՛վ հաւատացեալներ , վաշխերը իրարու վրայ բարդելով մ' . ուտէք և վախցէք Աստուծով որ երջանիկ ըլլաք :

126. Եւ վախցէք անհաւատներու համար պատարաստած կրակէն , և հնազանդեցէք Աստուծոյ և մարդտրեխն սր ողորմութիւն գտնէք :

127. Եւ վազեցէք դէպի մեղաց թողութիւն ձեր

Տիրոջմէ և դէպի արն դրախտը որուն լաչնութիւնը երկինքի և երկրի չափ է՝ երկիւղածներու համար պատրաստուած :

128. Անոնք առատութեան և նեղութեան ատեն ողորմութիւններ կուտան . բարկութեան կը յաղթեն և մարդոց կը ներեն . Աստուած ալ կը սիրէ բարեգործները :

129. Եւ անոնք որ գէշութիւն ըրեր են կամ իրենց հոգիներուն վրասեր են , թող յիշեն զԱստուած և իրենց մեղքերուն թողութիւն խնդրեն : Եւ Աստուծով զատ ո՛վ կը ներէ մեղքը : Արդ , այնպիսիները թող չի յամառին իրենց ըրածին վրայ , քանի որ գիտեն :

130. Անոնց վարձատրութիւնն է թողութիւն իրենց Տիրոջմէ և դրախտներ , որոնց տակէն գետեր կը հոսին և անոնք անոնց մէջ յաւիտեան կը մնան : Ինչ գեղեցիկ վարձք բարեբարներուն :

131. Ձեզմէ առաջ գործեր եղեր անցեր են : Արդ , պտըտեցէ՛ք երկրին երեսը և տեսէք թէ ստողներուն վերջաւորութիւնը ինչպէս եղեր է :

132. Ահա այս մարդոց համար յայտնութիւն մըն է և երկիւղածներու համար առաջնորդութիւն և քարոզ է :

133. Արդ . մի տկարանաք և տրամիք . և դուք անոնցմէ բարձր պիտի ըլլաք եթէ հաւատացեալ էք :

134. Եթէ դուք վիրաւորուիք , արդէն այն ազգն ալ նմանապէս վիրաւորուած է . և մենք այս օրերը կը շրջինք մարդոց մէջ . որպէսզի Աստուած հաւատացեալները ճանչնայ և ձեզմէ վկաներ տանէ , և Աստուած բռնաւորները չսիրեր :

135. Որպէսզի հաւատացեալները փորձէ և անհաւատները ոչնչացնէ :

136. Եւ կա՛մ կը կարծէք որ Աստուած ձեզմէ

կրօնքի համար պատերազմողները և համբերողները անկանին չը ճանցած գրախտ կը մանէք:

137. Եւ դուք մահը կուզէիք անոր տելի մօտեցած ատենը, բայց հիմա զայն տեսաք և տակաւին պիտի տեսնէք:

138. Մուհամէտը միակ զրկուածն է. անկէ առաջ ալ զրկուածներ կային ու անցան: Հիմա եթէ նա մեանի կամ սպանուի, դուք ձեր շաւիղէն ե՞տ պիտի դառնար: Այժմ ով որ իր շաւիղէն ետ գառնայ Աստուծոյ ոչ մէկ միտս կուտայ. բայց Աստուած անտարակոյս պիտի վարձատրէ երախտագէտները:

139. Ոչ մէկ մարդ չմեռնիք առանց Աստուծոյ հրամանին. ըստ եհեղի գիրքին մէջ գրուածին: Ով որ աշխարհիս վարձքը կուզէ, անկէ ա՛նոր կուտանք. և մենք կը վարձատրենք երախտագէտները:

140. Եւ քանի՛ քանի՛ մարգարէներ պատերազմեք են բիւրուօր զհնուորներու հետ, բայց անոնք Աստուծոյ ճամբուն մէջ իբևնց պատահածներէն չյուսահատեցան և չը թուլցան և չընկճուեցան. և Աստուած կը սիրէ համբերողները:

141. Եւ անոնք միայն սակըսէին «ո՛վ մեր Տէրը, ներէ մեր մեղքերը և մեր շապյութիւնները գործի մէջ, և հաստատէ մեր ստրերը եւ օգնէ մեզի անհաւատ ազգին դէմ»: Եւ Աստուած անոնց տուած թէ այս աշխարհի եւ թէ հանդերձեալի դեղեցիկ վարձքը: Աստուած կը սիրէ բարեգործները:

142. Ո՛վ հաւատացեալներ, եթէ դուք անհաւատներուն հնազանդիք, անոնք ձեզ ձեր շաւիղներէն ետ կը զարձեան և դուք դառնալով կը վնասուիք:

143. Սակայն ձեր պաշտպանը Աստուած է եւ նա ամենալաւ օգնութիւնը կ'ընծայէ:

144. Անոնք՝ առանց հրահան տրուելու՝ Աստուծոյ ընկերներ ընդունելուն պատճառաւ, մենք այդ

անհաւատներուն սրտերուն մէջ վախ պիտի ձգենք եւ անոնց բնակավայրը կրակ է. եւ բռնաւորներուն տնդը շատ գէշ է:

145. Եւ Աստուած արդէն իր խօստու՛մը կ'ստած էր երբ դուք անոր հրամանովը զանոնք զարկիք, յետոյ դուք թուլցաք եւ գործին մասին վէճ յարուցիք ձեր սիրածը ձեզ ցոյց տրուելէ վերջ ապաստանեցաք:

146. Չեզմէ մաս մը կայ որ աշխարհը կուզեն և մաս մըն ալ կայ որ հանդերձեալը կուզեն. յետոյ ձեզ անոնցմէ զարձուց որ փորձէ ձեզ. բայց ներած է ձեզ. վասնզի Աստուած հաւատացեալներուն շնորհող է:

147. Երբ դուք վեր կելլէիք ու մէկու մը ուշադրութիւն չէիք բնեք եւ մարգարէն ձեր ետեւէն կը կանչէր. այն ատեն ձեր վրայ վիշտ վշտի վրայ եկաւ. որ շարտիք ձեր կորուստին եւ ձեզ պատահած գեպքի մասին. և Աստուած գիտէ ձեր գործերը:

148. Եւ այն վշտէն յետոյ ձեր վրայ հանգստացուցիչ քուն զրկեց. ձեզմէ մաս մը քնացաւ, իսկ միւս մասը մտառանջութեան մատնուած՝ Աստուծոյ մասին անիրաւ եւ անխելք բաներ խորհելով կըսէր թէ «Արդեօք մեզի այս գործին մէջ բան մը կայ»: Դուն ըսէ՛, «բո՛ւր գործը Աստուծոյ կը պատկանի»: Անոնք իրենց սրտերո ն մէջ բաներ պահած են ու քեզ չեն յայտներ, եւ կըսեն թէ «եթէ այս գործէն մեզի բան մ'ըլլար մենք հոս չէինք սպաննուեր»: Դուն ըսէ՛, «եթէ տուներնիդ ալ ըլլայիք, սպաննուել սահմանուածները պիտի երթային ու սպաննուէին. վրանգի Աստուած ձեր սրտերու մէջ եղածները փորձելով կը քննէ. եւ Աստուած գիտէ սրտերու մէջ եղածը:

149. Չեզմէ որոնք որ փախան օրքերուն իրարու զարնուած օրը, զանոնք անպատճառ սատանան էր թելադրեր ո՛ր եւ է շահու պատճառաւ: Բայց Աստուած

անոնց ներած է վասնզի նա ներող եւ խոնարհ է:

150. Ո՞վ հաւատացեալներ դուք անհաւատներու մի նմանիք, որոնք շահու համար երկրի վրայ չըրջող կամ պատերազմի գացող իրենց եզրայրներուն կրսեն «եթէ մենք տունը մնալինք չէինք ետներ կամ չէինք սպաննուէր». բայց Աստուած դրաւ այս բաղձանքը անոնց սրտին մէջ, եւ Աստուած կ'ողջնցնէ եւ նա կը մեռցնէ: Եւ Աստուած կը տեսնէ ինչ որ կընէք:

151. Եւ եթէ Աստուծոյ ճամբուն մէջ մեռնիք կամ սպաննուիք, այդ ձեզի մեղաց թողութիւն ըլլալով, ձեր հաւաքած բոլոր ինչքերէն լաւ է:

152. Եթէ մեռնիք կամ սպանուիք, դուք անպատճառ Աստուծոյ քով կը ժողվուիք:

153. Դուն Աստուծոյ ողորմութեան մասին անոնց հետ մեղմ վարուած եւ եթէ դու անոնց գէմ անգութ եւ խիստ ըլլայիր, քեզմէ կը հեռանային. բայց գուն անոնց ներող եւ թողութիւն խնդրող եղի՛ր եւ գործի մասին խորհրդակցէ անոնց հետ: Իսկ երբ որոշեցիր, ալ Աստուծոյ ապաւինէ, վասնզի Աստուած իրեն ապաւինողները կը սիրէ:

154. Եթէ Աստուած օգնէ ձեզ, ոչ ոքէ չէք յաղթուիր, իսկ եթէ նա ձեզի լքէ, այ ձեզ ո՞վ կրնայ օգնել: Բայց հաւատացեալները Աստուծոյ կապաւինին:

155. Մարդարէի մը չի վայրեր որ խարէ եւ ով որ խարէ յարութեան օրը նոյն խարէութեան առարկայով պիտի ներկայանայ: Այն ատեն ամէն մէկ անձի կը արուի իր գործին պատիժը եւ անոնց անիրաւութիւն չըլլար:

156. Աստուծոյ հաժութեանը հետեւող միթէ անոր բարկութեանը արժանացողին կը նմանի, որուն տեղը դժողքն է որ գէշ տեղ մըն է:

157. Աստուածոյ կողմանէ աստիճաններ են ասոնք եւ Աստուած կը տեսնէ անոնց գործերը:

158. Աստուած այժմ հաւատացեալներուն շնորհք ցոյց տուաւ եւ անոնց իրենցմէ մարգարէ մը զրկեց որ անոնց կը կարգայ անոր պատգամները, զանոնք կը մարբէ եւ անոնց կը սովորեցնէ գիրքը եւ իմաստութիւնը իսկ անոնք առաջ բաղայայտ մոլորութեան մէջ էին:

159. Եւ երբ ձեզ պատահեցաւ այն դժբախտութիւնը արդէն անոր կրկինը պատահած էք ձեզ ըսիք «այս ո՞ւրկէ է»: Ըսէ «այս ուղակի ձեզմէ է». վասն զի Աստուած ամենակարող է:

160. Պատերազմին օրը ձեզ հանդիպածը Աստուծոյ հրամանովն էր, ան կը ճանչնայ հաւատացեալները եւ կեղծաւորները: Եւ անոնց ըսուեցաւ «եկէ՛ք Աստուծով ճամբուն մէջ պատերազմեցէք եւ թշնամիները հալածեցէք»: Անոնք ըսին «եթէ մենք գիտնայինք պատերազմիլ ձեզի կը հետեւէինք»: Անոնք աւելի անհաւատութեան մօտ էին այն ատեն քան թէ հաւատքի:

161. Անոնք անանկ բաներ կը խօսին որ իրենց սրտերուն մէջ չկայ. Բայց Աստուած գիտէ անոնց ծածկածները:

162. Անոնք որ տունը նստելով կըսեն իրենց եզրայրներուն թէ «եթէ մեզ հետեւէին չէին սպանուեր»: Ըսէ «եթէ արդար էք, մահը ձեզմէ հեռացուցէք»:

163. Եւ Աստուծոյ ճամբուն մէջ սպաննուածները մուտած մի՛ համարէք այլ կընդունի իրենց Տիրօջ քով որմէ կը կերակրուին:

164. Անոնք Աստուծոյ տուած շնորհներէն ուրախ

են, եւ իրար կաւետեն անոնց մասին: Բայց ետե-  
նէն եկողներ կան որոնց վրայ վասի չկայ եւ անոնք  
չեն տրամիր:

165. Անոնք չուր կ'ստանան Աստուծոյ պարգևներե-  
րու եւ շնորհներու մասին թէ Աստուած չհշնացներ  
հաւատացեալներու վարձքը:

166. Իրենց մեծ վէրք պատճառելէ յետոյ անոնք  
հնազանդեցան Աստուծոյ եւ մարգարէին, թէ բարե-  
գործներուն եւ երկիւղածներուն մեծ վարձք կայ:

167. Անոնց ըսին, թէ «մարդիկ հաւաքուեր են  
արդէն ձեզ գէ՛մ, ուրեմն վտիցէք անոնցմէ»: Այս  
աւելցուց անոնց հաւատքը եւ անոնք ըսին «Աստ-  
ուած մեզի բաւական է, նա լաւ պաշտպան է»:

168. Եւ անոնք Աստուծմէ պարգևներ եւ շնոր-  
հներ ստանալէ յետոյ ետ եկան եւ անոնք մըստի մը  
չհանդիպած Աստուծոյ հաճութեանը հետեւնացան: Եւ  
Աստուած մեծ շնորհքի տէր է:

169. Միայն ստանան է որ ձեզ կը վախցնէ իբր  
բարեկամներովը, բայց դուք անոնցմէ մի վախտք  
եւ եթէ հաւատացեալներ էք միայն ինձմէ վախցէք:

170. Դէպի անհաւատութեան փութացողներու մա-  
սին մի ախրիր, անոնք բնաւ չեն կրնար Աստուծոյ  
մըստ մը տալ: Աստուած կուզէ որ հանդերձեային մէջ  
անոնք չօգտուին եւ անոնց ծանր տանջանք կայ:

171. Անոնք որ հաւատքը անհաւատութեան կը  
կը փոխեն բնաւ չեն կրնար մըստել Աստուծոյ, եւ  
անոնց դառն տանջանք կայ:

172. Անհաւատները թող չկարծեն որ մեր առատո-  
րէն անոնց տուածը իրենց բարիք է, մենք անոնց  
առատորէն կուտանք միայն անոր համար որ մեղքը  
չտոցնեն անոնց, խայտառակող տանջանք կայ:

173. Լաւը գէշէն մինչեւ չգատէ Աստուած հաւա-  
տացեալները ձեր գտնուած վիճակին մէջ չթողուք:

174. Աստուած գալտնիքը ձեզ չիմացներ, այլ  
ձերնաթէ իր մարգարէներէն մէկը որն որ ուզէ, ուստի  
հաւատացէք Աստուծոյ եւ անոր մարգարէներուն: Եւ  
եթէ հաւատաք եւ երկիւղածներ ըլլաք ձեզի համաք  
մեծ վարձատրութիւն կայ:

175. Եւ միայն որ թող կարծեն թէ Աստուծոյ ի-  
րենց տուածը շնորհ է իրենց համար, ո՛չ, այն չա-  
րիք է անոնց համար:

176. Յորութեան օրը անոնց զիղէն օղակի պէս  
պիտի կախուի անոնց միատութեամբ հաւաքածը: Եւ  
երկնից ու երկրի ժառանգութիւնը Աստուծոյ է եւ  
Աստուած գիտէ ձեր արարքները:

177. Աստուած արդէն լսած է այն մարդոց սա-  
խոյր թէ «Աստուած ազբատ է, իսկ մենք հարուստ  
ենք» Մենք պիտի գրենք անոնց րսածը եւ անոնց ա-  
նիրաւորն սպաննելին մարգարէները, եւ պիտի ը-  
սենք, «ճաշակեցէք կրակին տանջանքը»:

178. Աս ձեր ձեռքերու գործածին փոխարէնն  
իսկ Աստուած իր ծառաներուն անիրաւութիւնը  
նող չէ:

179. Անոնք կըսեն թէ Աստուած մեզ պայման դը-  
րած է, որ մարգարէի մը չը հաւատանք մինչեւ որ  
նա զո՛ւ մը բերէ ու կրակը զայն լափէ:

180. Գուռ ըսէ՛ «ինձմէ առաջ ալ ձեր քով մար-  
գարէներ եկած են յայանի նշաններով եւ ձեր րսա-  
ծովը, զւրեմն դուք ի՞նչու սպաննեցիք զանոնք, եւ  
թէ արդար էք»:

181. Ուստի եթէ քեզ ստախոս կը համարեն, ար-  
դէն քեզմէ առաջ եկած մարգարէներն ալ՝ որոնք  
յայանութիւններով եւ գրուածներով եւ լուսաւոր գիր-  
քերով եկած էին, ստախոսներ համարեցին:

182. Ամեն մարդ մտը պիտի ճաշակէ եւ դուք յա-  
րութեան օրը պիտի ստանաք ձեր վարձքը: Աւրեմն

տի որ կրակէն դատուելով զրախա կը մտնէ, երջանիկ է ան: Եւ աշխարհի կեանքը միայն խարուսիկ վայելք մըն է:

183. Դուք ձեր պարանքով ու անձովը պիտի փորձուիք, և ձեզմէ առաջ զիրք ստացողներէն և Աստուծոյ ընկերներ զնոզներէն պիտի լսէք շատ անաբազանքսեր: Բայց եթէ համբերէք եւ երկիր զած ըլլաք այդ մեծ գործ է:

184. Եւ երբ Աստուած զիրք արուածներուն հետ պայմանաւորուեցաւ որ մարդոց յայտնեն ու չպահեն, անոնք իրենց ետեւ պահեցին եւ ոչինչ գիտով ծախեցին: Սակայն ի՞նչ գէշ բան է անոնց զրնածը:

185. Մի կարծեր որ անոնք իրենց ստացածովը կուրախանան և իրենց չըրած գործերովը գովարանուի կուզեն. և մի կարծեր որ անոնք տանջանքէ կազատուին. անոնց համար դառն տանջանք կայ:

186. Երկրից ու երկրի իշխանութիւնը Աստուծոյ է. և Աստուած ամենակարող է:

187. Ահա երկրից և երկրի ստեղծման մէջ և գիշեր ու ցերեկի փոփոխման մէջ ապացոյցներ կան խելացիներու համար:

188. Ասանք կանգնած ու նստած եւ ընկալմացած տաններին կը յիշեն զԱստուած և կը խորհին երկնի և երկրի ստեղծագործութեան վրայ, ըսելով, «Ո՛վ Տէր մեր, դուն պարապ տեղը չստեղծեցիր այս ամենը. որհնեալ ես դու. ազատէ՛ մեզ կրակի տանջանքնեմէն»:

189. Ո՛վ մեր Տէրը, դուն ով որ կրակին մէջ կը ձգես զանի կը նուստացնես, և բռնաւորները օգնական չեն ունենար:

190. «Ո՛վ մեր Տէրը, մենք կոչ մը լսեցինք որ հաւատքի կը հրաւիրեր հաւատացէք ձեր Տիրոջը, կըսէք և մենք հաւատացինք»:

191. «Ո՛վ մեր Տէրը, ներէ՛ մեզ մեր մեղքերը և ջնջէ մեր դէշութիւնները և մեզ վարձատրէ սուրբերուն հետ»:

192. Ո՛վ մեր Տէրո՛ւ մարգարէին միջոցաւ խոստացածդ մեզ պարգեւէ և յարութիւն օրը մեզ մի նուստացնէր, վասն զի դու խոստումդ չես դրժեր:

193. Եւ իրենց Տէրը պատասխանէց ըսելով. «Ես չեմ ոչնչացնիր ձեր բարի գործներէն և ոչ մէկը, աբու ըլլաք թէ էգ»:

194. Արդ, անո՛ւք՝ որ զաղթեցին և իրենց երկրէն աքսորուեցան և Աստուծոյ ճամբուն մէջ աառապեցան և պատերազմեցան ու սպանուեցան, մենք անոնց չարութիւնները պիտի քաւենք անոնցմէ անպատճառ և զանոնք դրախտներու մէջ պիտի դնենք որոնց տակէն գետնը կանցնին:

195. Այս վարձատրութիւն պիտի ըլլայ անոնց Աստուծոյ կողմէ. և լաւագոյն վարձատրութիւնը Աստուծոյ քովն է:


196. Անհաւատներուն քաղաքներու մէջ շահագործումը եւ շրջագոյնիլը քեզ թող չշիտեցնէ. այդ փոքր զուարճութիւն մըն է. յետոյ անոնց բնակալոյրը դժոխքն է. և այս ի՞նչ գէշ վայր մըն է:

197. Բայց անոնք որ կը վախնան իրենց Տիրոջմէ անոնց համար դրախտներ կան որոնց տակէն գետեր կը հոսին. անոնք յաւիտեան հոն կը մնան: Անոնք Աստուծմէ եկած ընծաներ են. եւ Աստուծոյ քով եզածը արդարներու համար լաւ է:

198. Եւ գիրք ունեցողներէն կան ո՛ւրեք որ կը հաւատան Աստուծոյ և ձեզի համար իջածին և իրենց իջածին, անոնք կը խոնարձեն Աստուծոյ առջև. Աստուծոյ նշաններս ահա զնով չեն ծախեր:

199. Անոնց վարձքը իրենց Տիրոջ քովն է. որովհետեւ Աստուած չուտով հաշիւ կը տեսնէ:

200. Ո՛վ հաւատացնալնոր, համբերեցէք. եւ ա-  
մուր կեցէք եւ Աստուծմէ վախցէ՛ք որ երջանիկ  
ըլլաք:



Դ. Գ Լ ՈՒ Խ

(ՍՈՒՐՈՒՅԻ ՈՒՆ ՆԻՍՈ)

Մէտնէական, հարիւր եօթանասունհինգ  
պատգամներ

Յանուն Աստուծոյ գթածի. ողորմածի

1. Ով մարդիկ, վախցէք ձեր Տիրոջմէ որ ձեզ ստեղ-  
ծած է մէկ հոգիէ եւ անկէ ստեղծած է անոր կիւնը եւ  
անոնցմէ զտեղծած է շատ մարդեր եւ կիւներ, եւ  
վախցէք այն Աստուծոյ որուն իջոցաւ ինչորքներ  
կրնէք. վասնզի Աստուծ ձեր պաշտպանն է:

2. Եւ որբերուն տուէք անոնց ստացուածքը եւ  
գէշը ազէկին նեա մի փոխէք. անոնց ստացուածքը  
ձերինին մի ուտէք որով նեա եւ այլ մեծ մեղք է:

3. Եւ եթէ կը վախնաք թէ որբերու մասին ա-  
նարդար կը գտնուիք, այն պարագային ձեր ուզած  
կիւները առէք. երկու քական եւ երեքական եւ չորսա-  
կան հատ. եթէ կը վախնաք որ հաւասարութեամբ  
չէք պահեր, այն պարագային անոնցմէ մէկը կամ  
աջ ձեռքով վաստկաձնիդ նիւեան ըրէք: Սա ձեզի  
մօտ է որ չանիրուէք: Եւ կանանց տուէք յօժարա-  
կաս անոնց հարստութեան արժէքը, եւ եթէ անոնք  
ուզեն կամովին ձեզ բան մը թողուլ, կերէք զայն  
ազատօրէն եւ օգտակարար:

4. Եւ ձեր ստացուածքը՝ զոր Աստուած տուած

է ձեզ մ'տաք անմիտներու, այլ անկէ տուէք անոնց  
կերակուր, հագուստ եւ անոնց նեա մեղմ խօսքեր  
ըրէք:

5. Եւ որբերը քննեցէք մինչեւ որ ամուսնութեան  
հասակին գան, Եւ երբ տեսնէք թէ անոնք չափա-  
հաս եղած են, յանձնեցէք անոնց իրենց ստացուածքը՝  
եւ շտալութեամբ մի փճացնէք զայն մինչեւ որ անոնք  
մեծնան:

6. Եւ հարուստ եղողը թող ետ քաշուի. իսկ աղ-  
քատ եղողը թող ուղղութեամբ ուտէ:

7. Երբ անոնց ստացուածքը անոնց տաք, վկաներ  
առէք անոնց. Աստուած յաւ հաշուող է:

8. Արունները իրենց ծնողաց եւ ազգականաց թո-  
ղուցածներէն բաժին ունին, կանանց համար ալ բա-  
ժին կայ իրենց ծնողաց եւ ազգականն երու թողու-  
ցածէն. շատ ըլլայ թէ յիշ որոշ բաժին կայ:

9. Բաժնելու ատեն երբ ներկայ գտնուին ազգա-  
կանները, որբերը եւ աղքատներ, ասոնք կերակրե-  
ցէք անկէ, եւ անոնց նեա մեղմութեամբ խօսեցէք:

10. Իրենցմէ ետքը տկար զաւակներ թողուները  
պէտք է վախնան անոնց մասին: Ինոնք Աստուծմէ  
թող վախնան եւ շիտակ խօսին:

11. Ասոնք որ որբին ստացո ամբը կուտեն իրենց  
փորբերուն մէջ կրակ կը դնեն, եւ անոնք անպատճառ  
գժօխքի կրակին մէջ կը մտնեն:

12. Զեր զաւակներու համար Աստուած այսպէս  
կարգուողրած է. արուին բաժինը էգին երկու պատիկը  
իսկ եթէ միայն էգեր կան եւ երկուքէ աւելի են-  
այն ատեն ժառանգութեան երկու երրորդը անոնց  
կը բաւէ, եթէ մէկ էգ կայ, կէսը անոր ըլլայ եւ ա-  
նոր ծնողքներուն, եւ զաւակ ունենալու պարագային  
այն երկուքէն իւրաքանչիւրին ըլլայ մէկ վեցերորդը  
իսկ եթէ զաւակ չունենայ, անոր ծնողքները ժա-

աանգոտ կ'ըլլան, և մօրը կիյնալ մէկ եորտրք: Եթէ ան եղբայրներ ունենալ, բրած կտակը գործադրելէ և պարտքերը վճարելէ յետոյ մէկ վեցերորդը մօրը կիյնայ: Գուք չէք գիտեր թէ ձեր ծնողներէն և զտակներէն որր աւելի օգտակար է ձեզ: Այդ Աստուծոյ կազադրութիւնն է Աստուած իմաստուն և դատաւոր է:

13. Ձեր կիներուն թողածին կէսը ձերն է, եթէ անոնք զաւակ չունին. իսկ եթէ զաւակ ունին, այդ պարագային, անոնց բրած կտակը գործադրելէ և պարտքը վճարելէ յետոյ, մնացածին մէկ չորրորդը ձերն է:

14. Ձեր թողածին քառորդը անոնցն է եթէ դուք զաւակ չունիք. իսկ եթէ զաւակ ունիք, ձեր կտակը գործադրելէ և պարտքը վճարելէ յետոյ, մնացեալին մէկ ութերորդը անոնցն է:

15. Այր մը կամ կին մը եթէ մէկ նեաւար ազգախանութիւնը ժառանգորդ է, և ան ունենայ եղբայր կամ քոյր, այս երկուքն իւրաքանչիւրին մէկ վեցերորդ իսկ եթէ ասկէ աւելի ըլլան, կտակը գործադրելէ և պարտքը տալէ յետոյ, անոնք մէկ երրորդիս կ'ընկերանան:

16. Աստուծոյ նրամանն է որ կտակի պատճառաւ մնաստեօղ չըլլայ. իսկ Աստուած գիտէ եւ խնայարն է:

17. Ասոնք Աստուծոյ սահմաններն են, եւ ո՛ր որ Աստուծոյ և անոր մարդարէին նազանդի դրօշաւներու մէջ կը գրուի, որոնց տակէն գետեր կը հոսին և անոնք անոնց մէջ կը մնան լաւիտեան: Եւ այս մեծ պարգև մըն է:

18. Բայց ո՛ր որ Աստուծոյ և անոր մարդարէին անհնազանդ գտնուի և անոր սահմաններէն անդին անցնի, կրակի մէջ պիտի ձգուի, ուր պիտի մնա՞ծ

չաւիտեան և անոր համար անարգանք եւ տանջանք կայ:

19. Ձեր կիներէն անբարոյակաւութեան մէջ զըտնուողներուն դէմ չորս վկայ բերէք ձեր կողմէն. անոնք եթէ վկայեն, դուք զանոնք (կիները) ձեր տաներուն մէջ պահեցէք մինչև որ մեռնին կամ մինչև որ Աստուած անոնց ճար մ'ընէ:

20. Եւ եթէ ձեզմէ երկու արուններ իրարու նեա արուագիտութիւն ընեն, զանոնք նեղեցէք. իսկ եթէ ապաշխարեն, անոնցմէ վաղ անցէք վասնզի Աստուած զզջումը ընդունող եւ ողորմած է:

21. Տգիտութեամբ չար գործողները երբ չուտով զզջան այդ չարութեան մասին, Աստուած ալ անոնց զզջումը անպատճառ կ'ընդունի և անոնց կը դառնայ, և Աստուած գիտցող եւ իմաստուն է:

22. Սակայն զզջում չկայ անոնց համար որ չարիք կը գործեն մինչև որ իրենցմէ մէկը մահուան առջև գտնուի ու ըսէ «ես հիմա կը զզջամ». նաև անոնց համար որոնք անհաւատ կը մեռնին: Անոնց պատրաստած ենք դառ տանջանք:

23. Ո՛ր նաւատացեալներ, ձեզ ներելի չէ որ բռնի ժառանգէք կիները և զանոնք մի արգիլէք որ ձեր անոնց տուած մաս մը բանի պատճառաւ մարդու երթան, եթէ յայտնի կերպով անբարոյակաւութեան մէջ չե՛ն. զանուած և անոնց նեա լաւ վարուեցէք: Իսկ եթէ անոնցմէ զգուիք, թերևս բանէ մը զզջուած էք յորում Աստուած շատ բարիք ըրեր է ձեզ համար:

24. Եւ եթէ ուղէք կին մը կնոջ նեա փոխել, եւ անոնցմէ մէկին մէկ կենդիւնար ապրանք տուած ըլլաք, անկէ բան մը կտ մի՛ տանէք: Զրպարտութիւն և յայտնի մեղք մը պիտի ստանձնէք միթէ:

25. Գուք ի՞նչպէս ետ կառնէք, քանի որ արդէն

իրարու հետ կենակցեր էք եւ անոնք ձեզմէ հաս-  
տատ խոստում առնը են:

26. Եւ ձեր հայրերուն ամուսնացած կիներու հետ  
մի' ամուսնանաք, բացի այն պարագայէն որ շատ  
անցած ըլլայ, որովհետեւ այդ անբարոյականութիւն  
է, շնութիւն է եւ գէշ ճամբայ:

27. Զեզ արգիլուած է ամուսնանալ նաև ձեր  
մայրերուն եւ ձեր ազնիկներուն եւ ձեր քոյրերու<sup>ն</sup>  
եւ հորաքոյրերուն եւ ձեր մորաքոյրերուն եւ եղբոր  
ազնիկներուն եւ ձեր քրոջ ազնիկներուն եւ ձեզ ձեծ  
տուօղներուն, եւ պաժնաքոյրերուն եւ ձեր զօքանջ-  
ներուն եւ ձեր խորթ ազնիկներուն՝ որ ձեր սենեակի  
մէջ ըլլալով կը կրթէք եւ որոնց մօրը հետ մերձա-  
ւորութիւն ըրած էք (եթէ չէք որած մերձաւորու-  
թիւն, ձեզ մեղք չկայ) եւ թէ ձեր հարազատ որդ-  
ւոց կիներուն եւ երկու քոյրերու հետ միանգամայն,  
բացի այն պարագայէն որ արդէն եղած անցած է,  
որովհետեւ Աստուած մեղքերը ներու ողորմած է:

28. Եւ այր ունեցող կիներու հետ ամուսնանալն  
այ ձեզ արգիլուած է, ի բաց առեալ այն որ ձեր  
աջ ձեռքը վասակած է: Աստուծոյ պատուէրը ձեզ  
համար այս է: Եւ սակէ զատ եղածը ձեզ թոյլատրե-  
ուած է որ պարկեշտութեամբ ապրելով, յրկուածնե-  
րէ զգուշանաք ձեր ձեռքով ուղելէ, եւ ինչ որ դուք  
անոնցմէ կ'առանար, անոնց վարձքը վճարեցէք իբր  
պարտաւորութիւն: Բայց ձեզ յանցանք չի համար-  
ուիր, եթէ այր եւ կին համաձայնիք առանց օրէնքին  
զիմելու, վասնզի Աստուած գիտէ եւ իմաստուն է:

29. Բայց ով որ ձեզմէ ազատ եւ հաւատացեալ կի-  
ներ առնելու կարողութիւն չունի, թող ամուսնանայ  
հաւատացեալ գերի ազնիկներու որոնք իր աջ ձեռ-  
քովը վասակած է, վասն զի Աստուած գիտէ ձեր  
հաւատքը թէ դուք իրարու հաւասար էք: Ուրեմն

անոնց աէրերուն արտօնութեամբ ամուսնացէք ա-  
նոնց հետ. եւ եթէ անոնք պարկեշտ եւ շնութենէ ըզ-  
գուշացող ու զաղտնի սիրաշարներ չունեցողներ են  
անոնց վարձքը վճարեցէք:

30. Սակայն եթէ ամուսնանալէ յետոյ շնութիւն  
ընեն, անոնց պատիժ կը տրուի ազատ կիներու պա-  
տիժին կէսը, այս ձեզմէ անոնց համար է որոնք փոր-  
ձանքէ կը վախնան. իսկ եթէ համբերէք, ձեզ աւե-  
լի շաւ կ'ըլլայ: Եւ Աստուած ներող եւ ողորմող է:

31. Աստուած կուզէ ձեզ յայանել եւ առաջնորդել  
ձեզմէ առաջ եղողներուն սովորութիւններով եւ դաս-  
նայ զէպի ձեզ: Եւ Աստուած գիտէ եւ իմաստուն է:

32. Աստուած կուզէ ձեզի դստնալ, բայց համբաւ-  
ներու նեղեալները կուզեն որ մեծ հակուծի նեակիք  
իսկ Աստուած կուզէ որ ձեզ համար թեթեւցնէ, վասն  
զի մարդս ակար սակզում ամ է:

33. Ով հաւատացեալներ, ձեր առաջուածքը իզուր  
տեղը մի' մսխէք, բացի առեալուր ընէք: Անձնաս-  
պան մի ըլլաք, վասն զի Աստուած ողորմած է  
ձեզ:

34. Բայց ով որ թշնամո' թեամբ կամ անիրաւու-  
թեամբ ընէ այս անպատճառ մենք կրակը պիտի ձը-  
գենք զանի եւ այս շատ գիւրիս է Աստուծոյ համար:

35. Եթէ մեծ մեղքերէն զգուշանաք, որ ձեզ ար-  
գելուած են, մենք ձեր գէշութիւնները ձեր վրայէն  
ջնջելով, ձեզի փառաւոր մուտքով մը՝ դրախտ կը  
մտցնենք:

36. Մի' ցանկաք այն բանին որ Աստուած ձեզմէ  
մէկին աւելի առեւր է քան միւսին: Այրերու վատ-  
արկածը իրենց բաժինն է եւ կիներուն այ վաստկածը  
երեսնց բաժինը. Գուք Աստուծմէ շնորհ խնդրեցէք,  
որովհետեւ Աստուած ամեն բան գիտէ:

37. Եւ ձեր ծնողաց ու սզգականաց եւ ձեր պալ-

մանաւորուած մարդոցը ձգած ամեն բանին մենք  
ժարանգորդներ որոշած ենք, ուստի անոնց բաժինը  
տուէ՛ք անոնց վասն զի Աստուած ամեն բանի վկայ է:

38. Այրերը գերիշխան են կանանց վրայ. վասնզի  
Աստուած մին միւսին վրայ գերազաս բրած է, և  
թէ անոնք կը կերակրեն կիները իրենց ստացուած-  
քովը: Բարի կաները աղօթք կընեն, գաղանապահ  
կըլլան, բնչպէս որ Աստուած ալ զանոնք կը պահ-  
պանէ, և այն կիները՝ որոնց խռովա ու զուժեկն կը  
վախնաք, խրատեցէք և անոնք զատեցէք ձեր ան-  
անկողինէն և ձեռնեցէք զանոնք, իսկ երբ անոնք  
ձեզ նազանդին ալ պատճառ մի՛ փնտռէք անոնց  
դէմ, քանզի Աստուան բարձր և մեծ է:

39. Եւ եթէ կը վախնաք որ անոնց միջև խռո-  
վութիւն կը ծագի, այդ պարագային դատաւոր մը  
երկանը կողմէ և դատաւոր մըն ալ կնոջ կողմէ զրո-  
կեցէք, եթէ այդ երկուքը խաղաղութիւն ուզեն,  
Աստուած լաջողութիւն կը պարգևէ անոնց, վասնզի  
Աստուած գիտէ և տեղեակ է:

40. Եւ Աստուծոյ ծառայեցէք, և բան մը անոր  
ընկեր մի դնէք, և բարիք բրէք ծնողքներուն և ազ-  
գականերուն և որբերուն և աղքատներուն և մեր-  
ձակայ ու նեաւոր դրացիին և բարեկամներուն և  
ճամբորդներուն և աջ ձեռքով՝ վաստկածնուդ: Ու-  
րովնեակ Աստուած չի սիրեր նպարտ և ինքնահա-  
ւան եղողը:

41. Ժլատներուն և սարդոց ժլատութիւն պատ-  
ուիրողներուն և Աստուծոյ առատ պարգևը պահող-  
ներուն և անհաւատներուն խայտառակող տանջանք  
պատրաստած ենք:

42. Եւ անոնք որ ի զոյգս մարդկան բարիք կընեն  
իրենց ստացուածքէն և Աստուծոյ և վերջին օրուան  
չեն հաւատար, սատանային ընկեր են, ա՛ն ինչ դէշ

ընկեր:

43. Եւ ինչ վնաս կար անոնց եթէ Աստուծոյ և  
վերջին օրուան հաւատային և Աստուծոյ անոնց  
տուածէն ողորմութիւն աային, և Աստուած անոնց  
գործերը գիտէ:

44. Աստուած մըջունի մը ծանրութեամբ իսկ անի-  
րաւութիւն չընէր, և բարեգործութիւնը կրկնապա-  
տիկ կաւելցնէ և իր կողմէ մեծ վարձատրութիւն  
կընէ:

45. Ի՞նչպէս կըլլայ երբ ամեն ազգէ վկայ մը բե-  
րենք և քեզ ալ անոնց դէմ վկայ ընենք: Անոնք  
և անհաւատները և մարգարէին դէմ ապստամբող-  
ները այն օրը պիտի ուզեն որ հողը իրենց վրայ  
ծածկէ սակայն Աստուծմէ խօսք մը չեն կրնար ծածկել:

46. Ո՛վ հաւատացեալներ, գինով վիճակի մէջ ա-  
ղօթք մի՛ ընէք մինչև որ ինչ ըսելիդ հասկնաս, և  
ոչ ալ պղծեալ վիճակի մէջ՝ բացի ճամբորդութեան  
պարագայէն, մինչև որ լուացուիք: Եթէ հիւանդ  
ըլլաք կամ ճամբորդութեամ մէջ, կամ ձեզմէ մէկը  
արտաքնոցէն կը դառնայ և կամ կանանց մերձեւած  
էք և այս պարագաներուն մէջ եթէ ջուր չգտնէք,  
այն ատեն մաքուր հողով ձեր երեսը և ձեռքերը շը-  
փեցէք:

47. Գիրքէն խրատ ստացողներուն չն՝ս նայիր որ  
մօլորութիւններ կ'առնեն և կ'ուզեն որ դուք ալ  
ճամբայէ շեղիք: Բայց Աստուած կը ճանչնայ ձեր  
թշնամիները և Աստուած բաւական է իր վաշտպան  
և իր օգնական:

48. Հրեաներէն ոմանք խօսքերը կը տեղափոխեն  
և «լսած ենք ու կապտամբինք» և «լսէ՛ ով չլսող»  
և «մեր չարը» ըսելով իրենց երկդիմի խօսքով ծրու-  
մըրկած և կրօնքին հայհոյած կըլլան:

49. Եթէ անոնք ըսէին «լսեցինք և կը հնազան-

դինք» և «լուէ» և «մեզ նայէ». անոնց աւելի նպաստաւոր և շիտակ կըլլար: յայց Աստուած զանոնք անխժամ է նայ-նոյութեանը պատճառաւ և անոնցմէ քիչերը միայն կը նաւատան:

50. Ո՛վ գիրք ունեցող մարդիկ, մենք ձեր երեսները այլանդակելէ և ետև պարծնելէ կամ անխժելէ առաջ, ընչպէս որ շարաթակահանները անխժեցնէք, նաւատացէք մեր իջեցուցածին, որ ձեր քով եղածը կը նաւատասէ: Արդ Անուծոյ նրամանը գործադրելու է:

51. Ընդմարիտ է որ Աստուած չներեր իրեն ընկեր դնողներուն և ասկէ զատ ուրիշներուն եթէ ուզէ կը ներէ. և ո՛վ որ Աստուծոյ ընկեր կը դնէ, մեծ մեղք գործած կ'ըլլայ:

52. Դու՛ն չե՛ս տեսներ զանոնք որ ինքզինքնին մաքուր կը նանեն: Բայց Աստուած իր ուղածը մաքուր կը նանէ և անոնց պատրոյզի չափ չարիք չըլլար:

53. Տե՛ս ինչպէս զրպարտութիւն կընեն Աստուծոյ մասին: Այս յայտնի մեղքը անոնց կը բաւէ:

54. Գիրքէն մաս ստացողները չե՛ս տեսներ, որ ձիւպթին և թաղութին կը նաւատան և կ'ըսեն ան-նաւատներուն, թէ ասոնք նաւատացեալներէն աւելի յաւ կառաջնորդուին:

55. Անոնք այն մարդիկն են զորս Աստուած անխժամ է և դուք անոր օգնական մը չես կրնար գտնել:

56. Եւ կամ արգայութենէ բաժին կուեննան մի-թէ անոնք որ արմաւի մը կեղևը իսկ չեն տար մարդու մը:

57. Եւ կամ կը նախանձին այն մարդոց որոնց Աստուած տա եր է իր առատութիւնէն: Ընդմարիտ է որ մենք միայն Աքրա՛նսի ցեղին տուած են գիրքը և իմաստութիւնը եւ անոնց տուած ենք մէկ մեծ թաղաւորութիւն մը:

58. Անոնցմէ ոմանք անոնց կը նաւատան եւ ոմանք անկէ չեղեր են: Դժոխքի կրակո բաւական է իբր պատիժ:

59. Անոնք որ մեր նշանները կուրանան, մենք անպատճառ կրակին մէջ պիտի նետենք: Ամեն անգամին որ անոնց կաշին կայրի ու կը լիննայ մենք անոնց ուրիշ կաշի կուտանք որ տա՛ջանքը ճաշակեն. վասն զի Աստուած նոյր դատաւոր է:

60. Եւ նաւատացեալ բարեգործները պիտի դըզենք դրախտներու մէջ, որոնց տակէն գետեր կանցնին և անոնք չոն կը մնան յաւիտեան ու չոն անոնց նամար մաքուր կրներ կան և մենք զանոնք անանցանելի ստուերի մէջ կը մտցնենք:

61. Աստուած ձեզ կը նրամայէ որ ձեզ յանձնուած աւանդները իրենց տէրերուն դարձնէք, և մարդոց դատաստանը արդարութեամբ վճռէք: Արդարեւ Աստուած ձեզ ի՛նչ գեղեցիկ խրատ կուտայ ասով. որովհետեւ Աստուած լսող և տեսնող է:

63. Չե՛ս տեսներ դու՛ն անոնք, որոնք կը կարծեն թէ քեզ իջուցուածին և քեզմէ առաջ իջուցուածին կը նաւատան: Կուզեն որ գատաստանի թաղութին առջև տանին: Սակայն անոնց նրամայուած է որ զայն ուրանան, և սատանան ալ կուղէ որ ձեզ նուանները մոլորցնէ:

64. Եւ քանի որ անոնց կ'ըսուի է, «Աստուծոյ իջեցուցածին և մարգարէին մօտ եկէք», կը տեսնես որ քեզմէ կը հեռանան կեղծաւորները:

65. Եւ ի՛նչ է ուրեմն որ երբ անոնց փորձանք մը պատահի իրենց ձեռքին առջի գործերուն համար, քու քովդ կուգան Աստուծոյ երգում ընելով թէ «մենք միայն բարիք եւ օգնութիւն կուզէինք»:

66. Անոնք անանկ մարդիկ են որ իրենց սրտերուն մէջ եղածը Աստուած գիտէ: Դու՛ն անոնցմէ ետ

քաշուէ, զանոնք խրատէ և անոնց սրտին ազդող  
խօսքեր ըսէ:

67. Եւ մենք մարգարէ կը զրկենք միմիայն ա-  
նոր համար որ Աստուծոյ հրամանովը անոր հնազան-  
դին եւ եթէ անոնք իրենց հոգիին զէմ մեզանչելէ  
յետոյ քեզի գալով ներողութիւն խնդրեն և մար-  
գարէն ալ անոնց համար ներողութիւն խնդրէ, պի-  
տի գտնեն, վասնզի Աստուած անոնց կը դառնայ և  
ողորմած է:

68. Ո՛ր, Տէրդ վկայ որ, անոր չեն հաւատար ա-  
նոնք, մինչև որ իրենց մէջը եղած վէճերուն համար  
քեզ դատաւոր չընեն, յետոյ քու տուած վճիռէդ ի-  
րենց դժուարութիւն մը շտեմնելով բոլորովին կը  
յանձնուին:

69. Իսկ եթէ անոնց հրամայէինք «դուք ձեզ ըս-  
պաննեցէք կամ ձեր երկրէն դուրս ելէք» անոնցմէ  
քիչերը կը կատարէին զայն, և եթէ անոնք իրենց  
քարոզուածը գործադրէին, այդ իրենց օգտակար և  
խիստ հաստատուն պիտի լինէր:

70. Եւ այն ատեն մենք անոնց մեծ վարձք կու-  
տայինք եւ զանոնք շիտակ ճամբէն կառաջնոր-  
դէինք:

71. Արդ, Աստուծոյ եւ մարգարէին հնազանդող-  
ները պիտի ըլլան անոնց հետ, որոնց Աստուած իր  
չնորհքը ցոյց տուած է, այսինքն մարգարէներու և  
հաւատարիմներու եւ մարտիրոսներու եւ սուբերու  
հետ, եւ անոնք ի՛նչ լաւ բնկերներ են:

72. Այս շնորհը Աստուծմէ է, եւ Աստուծոյ գիտ-  
նայր կը բաւէ:

73. Ո՛վ հաւատացեալներ պատերազմի միջոցին  
զգուշութիւն ըրէք, կամ խուժը խուժը ելէք եւ  
կամ բոլորդ մէկէն ելէք պատերազմի:

74. Եւ եթէ ձեզմէ մէկը ուշանայ և ձեզ փորձանք  
մը պատահի, ան կրսէ, Աստուած իր շնորհը ինձ  
ցուցուց որ ես անոնց հետ չգտնուեցայ:

75. Իսկ եթէ Աստուծոյ կողմէ ձեզ շնորհ մը պա-  
տահի, նա անպատճառ կրսէ իրր թէ ձեր և անոր  
միջև բարեկամութիւն չըլլար, թէ երանի թէ ես ալ  
ունեց հետ ըլլայի, մեծ շնորհ ստացած կըլլայի:

76. Այս աշխարհի կեանքը ծախելով հանդերձեալ  
ըլ անտոյները թող պատրազմին: Աստուծոյ ճամբուն  
մէջ: Ով որ Աստուծոյ ճամբուն մէջ պատերազ-  
մելով կամ կ'սպաննուի և կամ կը յաղթէ մենք ա-  
նոր մեծ վարձք պիտի տանք անպատճառ:

77. Զօղ ի՞նչ եղաւ որ չէք պատերազմիր Աստու-  
ծոյ ճամբուն մէջ և այն տկար մարդոց և կանանց  
և մանուկներուն համար, որոնք կրսեն «ո՛վ Տէր  
մեր այս բռնաւոր ժողովուրդը քաղաքէն հանէ և  
մեզ պաշտպան մը տուր քու կողմէդ, օգնական մը  
տուր մեզ քու կողմէդ»:

78. Հաւատացեալները կը պատերազմին Աստուծոյ  
ճամբուն մէջ. իսկ անհաւատները կը պատերազմին  
Թագութի բամբուն մէջ: Ուրեմն սատանային բարե-  
կամներուն դէմ պատրազմեցէք. քանզի սատանային  
խարդախութիւնը անզօր է:

79. Դուն չե՛ս տեսներ անոնք, որոնց կ'ըսուի  
ձեռքերնիդ քաշեցէք և աղօթք ըրէք և ողորմու-  
թիւն տուէք. բայց երբ անոնց պատրազմել հրահայ-  
ուեցաւ, անոնց մէկ մասը Աստուծմէ վախնալու նը-  
ման վախցաւ մարդոցմէ, կամ աւելի սաստիկ վա-  
խող. և ըսին, ո՛վ Տէր մեր, ի՞նչու պատրազմ հրա-  
մայեցիր մեզ և չպահեցիր մեզ մինչև մեր մերձեկայ  
ժա՛նը: Արդ, անոնց ըսէ՛, «այս աշխարհի վայելքները  
քիչ են երկիւղածին համար, իսկ հանդերձեալը աւել-

լի լաւ է անոր. և եթէ սպաննուիք իսկ ձեզի անի-  
բաւութիւն չըլլար:»

80. Ուր որ ալ ըլլաք մահը ձեզ կը հասնի, եթէ  
ամուր բուրգերու մէջ ալ ըլլաք: Անոնց բարիք մը  
եթէ հասնի «այս Աստուծոյ է» կըսեն. իսկ եթէ ա-  
նոնց չարիք պատահի, սա քու պատճառաւդ է» կը-  
սեն: Գու՛ն ըսէ, բոլորը Աստուծոյ է: Ի՞նչ եղաւ այս  
ժողովուրդին որ խօսք մը հասկնալու ընդունակ չէ:

81. Քնդի ինչ բարիք որ պատուի Աստուծոյ կող-  
մէ է. և ինչ գէշութիւն որ քեզ պատահի այն քեզ-  
մէ է: Եւ մենք քեզ մարգարէ զրկած ենք մարդոց  
և Աստուծոյ վկայութիւնը բաւական է:

82. Ով որ մալգարէին նազանդի Աստուծոյ նա-  
զանդած կ'ըլլայ. բայց ով որ ետ կը դառնայ, մենք  
քեզ անոնց վրայ պահապան չենք զրկեր:

83. Անոնք «նազանդութիւն պէտք է.» կըսեն,  
բայց երբ քեզմէ նեռանան, անոնց մէկ մասը քու  
ըսածէդ ուրիշ բան մը կը մտածէ, Սալայն Աստուած  
անոնց մտածածը կը գրէ: Արդ, դուն նեռացիր ա-  
նոնցմէ, և Աստուծոյ ապաւինէ, և Աստուծոյ պաշտ-  
պանութիւնը բաւական է:

84. Արդեօք անոնք Ղուբանի մասին չե՞ն խորհիր  
որ եթէ Աստուծոյ զատ ուրիշէ մը ըլլար, անոր մէջ  
չատ հակասութիւններ պիտի գտնէին:

85. Եւ երբ անոնց բան մը պատահի ապահովու-  
թենէ կամ վախէ, զայն կը տարածեն, բայց եթէ  
այդ լուրը մարգարէին կամ հրամանատարներուն տա-  
նէին, հարցնողներուն նա կը հասկցնէր զայն: Եւ  
եթէ Աստուծոյ շնորհը և ողորմութիւնը ձեր վրայ  
չըլլար քեզերէն զատ բոլորնիդ սատանային կը հը-  
պատակէիք:

86. Ուստ Աստուծոյ ճամբուն մէջ պատերազմէ՛,  
դուն միայն քու անձդ պարտաւորէ և գրգռէ հա-

ւատացեալները թերևս Աստուած կը վանէ, անհա-  
տանբու մնաս կուտայ և առաւելագէս կը պատմէ:

87. Ով որ լաւ բարեխօսութեամբ միջնորդէ, նա  
ատկէ իր բաժինը կառնէ. բայց ով որ չարախօսու-  
թեամբ կը միջնորդէ, ան ալ անորմէ մաս մը կը  
տանայ, զի Աստուած ամեն բանի նաչուը կառնէ:

88. Եւ երբ ձեզ բարե տան, դուք ալ աւելի լաւ  
բարեկեցէք կամ ետ դարձուցէք, վասն զի Աստուած  
ամեն բանի նաչիւ կը պահանջէ:

89. Աստուած կայ, անկէ զատ Աստուած մը չկայ:  
Յարութեան օրը անիկա ձեզ պիտի ժողովէ. ասոր  
կասկած չկայ. ո՞վ աւելի ճշմարտախօս է քան թէ  
Աստուած:

96. Եւ դուք ի՞նչու համար կեղծաւորներու պատ-  
ճառաւ երկու խումբ եղեր էք. քանի որ Աստուած  
զանոնք մերժեր է իրենց գործերուն համար, միթէ  
կուղէ՛ք որ մոլորեալները ճամբու բերէք: Բայց Աս-  
տուծոյ մոլորեցուցածին դուն բնաւ ճամբայ չես  
գտներ:

94. Անոնք կուղեն որ դուք ալ իրենց պէս ան-  
հաւատ ըլլաք որ անոնց հետ միասին ըլլաք: Ուստի  
անոնց հետ բարեկամութիւն մի՛ ընէք, մինչև որ ա-  
նոնք Աստուծոյ ճամբուն մէջ չգաղթեն: Իսկ եթէ  
դառնան (մերժեն), բռնեցէ՛ք զանոնք և սպաննե-  
ցէ՛ք ուր որ գտնէք: Եւ դուք անոնցմէ ոչ բարեկամ  
և ոչ օգնական մի՛, ընդունէք:

92. Ի բաց առեալ այն պարագան որ անոնք ձեզ  
հետ դաշինք ունեցող ազգի մը հետ կը միանան կամ  
ձեր քով կուգան՝ իրենց սիրտը չուզելով որ ձեր  
հետ կամ իրենց ազգակիցներուն հետ պատերազմիս:  
Եւ եթէ Աստուած ուզէր անոնց ձեր վրայ տրտել  
կուտար կամ անոնք ձեզի հետ կը պատերազմէին:  
Իայց եթէ անոնք ձեզմէ կը հեռանան և ձեր դէմ

չեն պատերազմիր, այլ խաղաղութիւն կառաջարկեն ձեզ, այս պարագային Աստուած անոնց դէմ ձեզի հրաման չտար:

93. Դուք ուրիշներ ալ կը գտնէք ո՞ր ձեզ հետ ալ դաշինք կապել կուզեն իրենց ցեղի հետ ալ դաշնաւորուած են: Ամեն անգամին որ անոնք խաղաղութեան կը դառնան ու կը դաւածանեն, եթէ անկէ ետ քաշուելով ձեզի խաղաղութիւն կառաջարկեն եւ ձեռքերնին ետ չքայեն, բռնեցէք զանոնք ու որ գտնէք եւ սպաննեցէք: Մենք անոնց վրայ ձեզ յատնի ուժ տուեր են:

94. Եւ հաւատացեալի մը ներքի չէ որ սպաննէ ուրիշ հաւատացեալ մը, բացի սխալումէ: Բայց սի որ սխալմամ հաւատացեալ մը սպանէ, պարտի հաւատացեալ գերի մը ազատ արձակել եւ անոր ընտանիքին կատարեալ փոխարժէքը, եթէ ներէ, չտայ Իսկ եթէ այն ձեզ թշնամի ցեղէ մըն էր, բայց ինքը հաւատացեալ էր, այս պարագային պէտք է հաւատացեալ գերի մը ազատել, բայց եթէ ձեզի դաշնակից ցեղէ մըն էր նո, այն ատեն հարկ եղած փոխարժէքը պէտք է տալ անոր ընտանիքին եւ հաւատացեալ գերի մը ազատագրել, իսկ ով որ անկարող է այս ըզել, թող երկու ամիս յաջորդաբար ծով պահէ իրր ազախարհութիւն Աստուծոյ, եւ Աստուած գիտուն եւ իմաստուն է:

95. Եւ ով որ հաւատացեալ մը դիտմամբ սպաննէ, անոր պատիժը դժոխքն է ուր կը մնայ յաւիտեան, եւ Աստուած անոր բարկանալով զայն կանխի՞ք եւ անոր ծանր տանջանք պատրաստած է:

96. Ով հաւատացեալներ, Աստուծոյ ճամբուն մէջ երբ պատերազմի ելլաք, քննեցէ՛ք, եւ ձեզ բարեւ տուողին, աշխարհիս կեանքին բարիքները փնտաւելով, մի՛ ըսէք «դուն հաւատացեալ չես», վասնզի-

Աստուծոյ քով հարստութիւններ չատ կան: Դուք առաջ ալսպէս էիք, բայց Աստուած ձեզ շնորհք ըրաւ: Արդարեւ Աստուած ձեր դորձքերը գիտէ:

97. Հաւատացեալներէն անոնք՝ որ առանց մեատուած ըլլալու արդէն կը նստին, հաւատար չեն անոնց հետ որոնք իրենց անձովը եւ ստացուած քովը Աստուծոյ համար պատերազմի կ'երթան: Աստուած աստիճան մը բարձր կը դասէ իրենց ստացուածքովը եւ անձովը սրբազան պատերազմի (ճէհաւ) գացողները եւ անոնց իւրաքանչիւրին գեղեցիկ բաներ կը խոտանայ, եւ Աստուած մեծ վարձքով գերադաս կ'ընէ պատերազմունները նստողներէն:

98. Եւ իր կողմէ աստիճաններով, թողութիւնով եւ ոչորմութիւնով կը վաշտարէ. եւ Աստուած ներող եւ ողորմող է:

99. Եւ անոնք որ իրենց հոգւոյն չարիք ըրած ըլլալով, հրեշտակները անոնց հոգին առնելու ատեն կ'ըսեն «դուք ի՞նչ բանի մէջ էիք»: անոնք ալ կըսեն «մենք երկրի վրայ տկար էինք»: Հրեշտակները անոնց կըսեն, «մի՞թէ Աստուծոյ երկիրը յայն չէ՞ր որ հոն գաղթէք» անոնց բնակավայրը դժոխքն է. եւ այս գէշ տեղ մըն է:

100. Բայց տկար մարդոց եւ կիներու եւ տղաքներու համար չէ որոնք կարողութիւն չունին եւ միջոց չէին գտած, թերեւ Աստուած անոնց մեղքերը կը ներէ, վասն զԱստուած ներող եւ զթաժ է:

101. Եւ ով որ Աստուծոյ ճամբուն մէջ գաղթէ, քրտինքը երեսին շատ ապաստանարան կը գտնէ. եւ ով որ իր տունը ձգելով գաղթական ըլլայ Աստուծոյ եւ անոր մարգարէին համար եւ յետոյ մահը անոր հասնի, արդէն անոր վարձքը Աստուծոյ անկէ. եւ Աստուած ներող եւ ողորմող է:

102. Եւ երբ երկրի վրայ ճամբորդութիւն կընէք.

եթէ կը վախնաք որ անհաւատներէն փորձանքի կեն-  
դարկուիք, կրնաք աղօթքը կարճ ընել, որ ձեզ յան-  
ցանք չի համարուիր. որովհետեւ անհաւատները յարու-  
նորէն ձեզ թշնամի են:

103. Եւ երբ դուք անոնց մէջն զանուելով անոնց  
հանար աղօթք կընես և անոնցմէ ալ խումբ մը քու  
հետ աղօթքի թող կայնին ու զէնքերնին առնեն,  
և ծնրագրելէ լետոյ թող ձեր հակեր կրնան, և երբ  
ուրիշ խումբ կայ որ աղօթք չէ յերբ, քեզ նետ ա-  
ղօթք թող ընեն և զգուշ ըլլան ու իրենց զէնքերը  
առնեն: Անհաւատները կուզեն որ դուք անհոգ գրա-  
նուիք ձեր գոյքերու և զէնքերու մասին, որպէսզի  
մէկ յարձակումով ձեր վրայ թափին: Եւ երբ անձ-  
րեի կամ նիւանդութեան պատճառաւ ձեր զէնքերը  
վար դնք, ձեզ յանցանք չի համարուիր. բայց զգուշ  
եղէ՛ք, վասնզի Աստուած անհաւատները խայտառա-  
կելու սանջանք պատրաստած է:

104. Երբ աղօթքը լմնցնէք, ձեր կայնած և նրա-  
ած և ընկողմացած պահուն յիշեցէ՛ք զԱստուած:  
Բայց ապահով եղած ատեննիւք աղօթքնիւք կատարե-  
ցէ՛ք, որովհետեւ հաւատացեալներուն նրամայուած է  
աղօթքը իր ժամանակին ընել:

105. Թշնամի աղօթք մը նետապնդելու անհոգ մի՛  
ըլլաք եթէ դժուարութիւն իսկ կրէք: Վասնզի ա-  
նոնք ալ դժուարութիւն կը կրեն, ինչպէս որ դուք  
կը նեղուիք. և դուք Աստուծմէ լնչ որ կը յուսաք  
անոնք չեն յուսար: և Աստուած գիտուն եւ իմաս-  
տուն է:

106. Արդարեւ գիրքը քեզ համար իջեցուցինք.  
որ մարդոց մէջ՝ Աստուծոյ քեզ ցոյց տուածին պէս  
դատաստան ընես: Արդ, դատաստազ մի՛ ըլլար դա-  
ւաճաններուն զէմ և Աստուծմէ թողութիւն խնդրէ.  
որովհետեւ Աստուած ներող և ողորմող է:

107. Եւ մի պաշտպաներ զիրար մատնողները ո-  
րովհետեւ Աստուած չի սիրեր մատնութիւնը իրենց  
սովորութիւն ընող մեղաւորները:

108. Ասոնք ինքզինքնին կը պահեն մարդոցմէ  
բայց չեն կրնար ծածկուիլ Աստուծմէ, գիշերը անոնք  
Աստուծոյ կամաց հակառակ խօսք յերևոյած ասեն  
Աստուած հոն է և տեղեակ է անոնց գործերուն:

109. Այո՛, դուք այժմ այս աշխարհի կեանքին  
մէջ զանոնք կը պաշտպանէք. բայց յարութեան օրը  
ն՛ով պիտի պաշտպանէ զանոնք Աստուծմէ և կամ ով  
պիտի ըլլայ փաստաբանը:

110. Եւ գէշութիւն ընող մը կամ իր հոգւոյ չա-  
րիք ընող մը եթէ Աստուծմէ ներողութիւն խնդրէ,  
նա զԱստուած ներող ողորմած կը գտնէ:

111. Եւ ով որ մեղք գործէ, նա միայն իր հոգ-  
ւոյն դէմ գործած կըլլայ. վասնզի Աստուած գիտէ  
և իմաստուն է:

112. Եւ ով որ սխալ մը կամ մեղք մը գործելով  
զայն որոշ անմեղի մը վրայ նետէ՝ նա զրպարտու-  
թեան մեղքը գործած կըլլայ:

113. Եւ եթէ Աստուծոյ նորնը և ողորմութիւնը  
քու վրադ չըլլար, անոնցմէ խումբ մը քու վրադ  
կը յարձակէր որ մոլորեցնէր. բայց անոնք միայն  
ինքզինքնին կը մոլորեցնեն և ձեզ չեն կրնար վը-  
նասել: Եւ Աստուած քեզ համար իջեցուցած ըլլա-  
լով գիրքը ու իմաստութիւնը, սովորեցուց քեզ չը-  
գիտցած բանդ և Աստուծոյ նորնը մեծ է քու  
վրադ:

114. Անոնց չատ մը գալտնի խորհրդակցութիւն-  
ներն օգուտ չկայ, բացի անկէ որ մէկը ողորմու-  
թիւն կամ օրինաւոր բաներ կամ մարդոց մէջ խա-  
ղալութիւն պատուիրէ: Եւ ով որ Աստուծոյ հաճու-  
թիւնը խնդրելով այդ ընէ, մենք անոր անպատճառ

մեն զտրձք կուտանք :

145. Եւ ով որ իրեն ուղիղ ճամբան յայտնուելէն լետոյ Մարգարէէն բաժնուի ու հաւատացեալներու ճամբէն ասորքեր ճամբու նետելի, մենք անոր ուզած բանը կուտանք, և զանի գժոխքը պիտի նետանք, որ գէշ տեղ մըն է :

116. Արդարեւ Աստուած չներեր որ իրեն ընկեր արալի. ատկէ զատ մնացածը կը ներէ իր ուզածին. և ով որ Աստուծոյ ընկեր կ'ընդունի այ՛ մայրեկայ է :

117. Անոնք Աստուծմէ զատ միայն էգերուն աղօթք կրննն և միմիայն ապստամբ սատանային կաղօթեն :

118. Աստուած զանի անիծած է : Ան ալ ըսած է թէ ես քու ծառաներէդ մաս մը առնելով պիտի մօլորեցնեմ. և անոնց գէշ ցանկութիւններ պիտի տամ և անոնց պիտի նրամայեն որ անասուններու ականջները կարեն և Աստուծոյ արարածներ այլապիտեսն : Եւ ով որ Աստուծմէ զատ սատանան իրեն բարեկամ ընդունի, նա յայտնորէն մնասուած կ'ըլլայ :

119. Աս կը խոստանայ անոնց և ցանկութիւններ կը գրգռէ. բայց սատանային խոստումը միմիայն խարէութիւն է :

120. Անոնց բնակալայրը դժոխքն է. և ատկէ չըպիտի ազատն :

121. Իսկ անոնք որ կը հաւատան ու բարեգործութիւններ կրնն, մենք զանոնք դրախտներու մէջ պիտի զնննք, որոնց սակէն գեաեր կը նօսին : Եւ անոնք յալիական պիտի մնան անոնց մէջ : Աստուծոյ խոստումները ճշմարիտ են : Եւ ով կայ Աստուծմէ աւելի ճշմարտախօս :

122. Ոչ ձեր փափաքները և ոչ ալ գիրք ունեցողներու փափաքը կը կատարուին. Այլ ով որ գե-

շութիւն կը գործէ անով կը պատժուի և Աստուծմէ զատ անոր ոչ բարեկամ և ոչ օգբական կ'ըլլայ :

123. Եւ ով որ բարիք կը գործէ, արու ըլլայ թէ էդ, եթէ հաւատացեալ է. Դրախտ կը մանէ և արմաւի կուտեն կճեպին չափ զրկանք չի կրեր :

124. Մարդ մը որ ինքզինք կատարելագէտ Աստուծոյ յանձնելով՝ բարի գործեր կատարէ և Արքայ համր ազգին պատկանի-այն Արքայամի գոր Աստուծ իրեն բարեկամ ընդունած է — իր կրօնքով անկէ աւելի լաւ ո՛վ կրնայ ըլլայ :

125. Երկնից և երկրի մէջ եղածը Աստուծոյն է, և Աստուած բոլորը պարփակած է :

126. Եւ քեզմէ վճիռ պիտի ուզեն կանանց մասին. զու ըսէ Աստուած կուտայ իր վճիռը անոնց մասին և թէ որք ազլիկներու մասին. որոնց գուք չէք տար նարկ եղածը և զանոնք կնութեան առնել կուզէք, և սկար ալայոց մասին կը կարգացուի ձեզ գիրքին մէջ թէ որքերու մասին արդարութիւնը ի գործ գնէք. և ինչ բարիք որ գործէք Աստուած գիտէ զայն :

127. Եւ եթէ կին մը կը վախնայ իր երկանը խրուովայուզու թենէ կամ զգուանքէն. յանցաւոր չեն ըլլար եթէ իրենց մէջ խաղաղութիւնով վերջացնեն և խաղաղութիւնը լաւագոյն է. Եւ սրտերու մէջ շահամոտութիւն կայ, և եթէ բարիք ընէք և երկրզած ըլլաք լաւ կ'ըլլայ, քանզի Աստուած ձեր ըրած գործերը գիտէ :

128. Եւ զուք, եթէ փափաքիք ալ, կանանց մէջ չէք կրնար արդարութեամբ վարուիլ. ուրեմն բոլորովին մի նակիք կ'նոջ մը և զանի կասկածի մէջ թողուցէք : Եւ եթէ հաշտ ապրիք և երկրզած լինիք լաւ կ'ըլլայ, վասն զի Աստուած ներող և ողորմած է :

129. Եւ եթէ այր ու կին բաժնուին, Աստուած իր պարգևովը անոնց կօգնէ, վասն զի Աստուած հարուստ և յմաստուն է:

130. Եւ ինչ կայ երկնից և երկրի վրայ Աստուածոյն է. մենք ձեզմէ առաջ գիրք արուածներուն և ձեզ հրաման ըրինք որ Աստուածմէ վախնաք, խել եթէ չհաւատաք, ա՛նա երկրնից և երկրի վրայ ինչ որ կայ Աստուածոյ է և Աստուած հարուստ և օրհնալ է:

131. Երկնից ու երկրի մէջ գտնուածները Աստուածայ են, և Աստուածոյ պաշտպանութիւնը բաւական է:

132. Եթէ ուզէ կը ջնջէ ձեզ, ո՞վ մարդիկ, և ուրիշները կը բերէ. վասնզի Աստուած այս բանին կարող է:

133. Ով որ կուզէ այս աշխարհիս վարձքը ստանալ թո՛ղ խնդրէ. բայց Աստուծոյ մօտն է աշխարհիս և հանդերձեալի վարձքը. եւ Աստուած կը լսէ ու կը տեսնէ:

134. Ով հաւատացեալներ, արդարութեան մէջ հաստատ կեցէք Աստուծոյ համար վկաներ էք դուք, եթէ վկայութիւննից ձեր դէմ և կամ ծնողքնուդ և կամ ազգականնուդ դէմ ալ բլլայ, հարուստ ըլլան թէ աղքատ խնդիր չէ. վասնզի Աստուած ալդ երկուսին ալ տէրնէ: Արդ, հաճայքի մի՛ հետեիք որ պէտքի սքշար ըլլաք, և եթէ դառնաք և կամ ետքաչաւիք, Աստուած ձեր ընթացքին տեղեակ է:

135. Ո՞վ հաւատացեալներ, հաւատացէք Աստուծոյ և մարգարէին և թէ ասոր իջած գիրքին և անկէ առաջ գիրքին, և ով որ Աստուծոյ և հրեշտակներուն և մարգարէներուն և վերջին օրուան չհաւատայ, նա շատ հեռացած մոյորեալ է:

135. Ստուգիւ անոնք որ հաւատացեալն և անհաւատ կը դառնան և յետոյ կրկին կը հաւատան գարձեալ անհաւատ կ'ըլլան և անհաւատութիւնը կա-

ւելցնեն, Աստուած անոնց մեղքերը չնրեր և շխտակճամբուն չառաջնորդեր զանոնք:

137. Կեղծաւորներուն կանխաւ ըսէ թէ անոնց համար դառն տանջանք կայ:

138. Անոնք որ հաւատացեալները ձգելով անհաւատները իրենց ընկեր կ'ընդունին, միթէ ասոնցմէ փա՛ռք կսպասեն. ա՛նա բոլոր փառքը (ուժը) Աստուածոյ քով է:

139. Գիրքին մէջ նա ձեզ յայտնութիւն իջեցուցած է. թէ դուք Աստուծոյ պատգամները լսելու աւան, անոնք չեն հաւատար և կը ծաղրեն: Այս պատճառաւ դուք անոց քով մի նստիք, մինչև որ ուրիշ խօսքի սկսին, որովհետև այն պարագային դուք ալ անոնց կը նմանիք: Աստուած կերծաւորներն ալ անհաւատներն ալ գժոխի մէջ պիտի հաւաքէ:

140. Երբ Աստուծոյ կողմէ ձեզ յազմանակ մը արուի, ձեր վրայ աչք անկողները կըսեն «մենք ալ ձեզի նեա չէի՞նք միթէ»: Իսկ եթէ անհաւատներուն բաժին մը ինչայ, կըսեն. «մենք ձեզմէ՛ զօրաւոր չէի՞նք և ձեզ չպաշտպանեցի՞նք հաւատացեալներուն դէմ»: Բայց յարութեան օրը Աստուած ձեր միջև վըճիռ պիտի արձակէ, և Աստուած անհաւատներուն առիթ չտար հաւատացեալներուն դէմ:

141. Արդարեւ անհաւատները կը խարեն զԱստուած, և սա ալ զատոնք կը խարէ: Անոնք երբ ազօթքի կը կայնին մտքերնին չեն ամփոփնր, այլ կուղեն մարդոց երեալ եւ անոնցմէ փրչերը զԱստուած կը յիշեն:

142. Անոնք անորոշութեան մէջ կը տատանին, սչ դէպ այս և ոչ դէպ այն կողմ կերթան: Եւ Աստուած որը որ ճամբէն շեղեցնէ, գուն անոր ճամբայ չես կրնար գտնել:

143. Ո՞վ հաւատացեալներ, ձգելով անհաւատները

ընկեր մի ասնէք: Միթէ կուզէք որ ձեզ դէմ բացորոշ իրաւունք տաք Աստուծոյ:

144. Ըջմարիտ կեղծաւորները գժօխքին խոր տեղն են, և դուն անոնց օգնական չես կրնար ըլլար:

145 Անոնցմէ զատ որոնք որ կը զզջան և Աստուծոյ կապուելինն բարի դործերով և իրենց կրօնքը կը մաքրեն Աստուծոյ հաճոյ կերպով, անոնք հաւատագեայներուն շատ են և Աստուած հաւատագեայներուն մեծ վարձք պիտի տայ:

146 Աստուած ձեզ չպատմեր, եթէ փառք տալով հաւատաք եւ Աստուած երախտիքի տէր և իմաստուն է:

147. Աստուած յայտնապէս դէշ խօսքը չօրբեր, բացի այն պարագայէն որ մէկի մը չարիք եղած ըլլայ վասնզի Աստուած յոռ և գիտցող է:

148. Եթէ մէկ բարի գործ մը լայանէք կամ ծածկէք և կամ գիշութենէ մը ետ կենաք, Աստուած ներող և հգոր է:

149. Անոնք որ չեն հաւատար Աստուծոյ և մարգարէներուն, և Աստուծոյ ու մարգարէներուն մէջ տարբերութիւն դնել կուզեն և «մէկ քանիին կը հաւատանք և մյուսներուն չենք հաւատար» կրսեն և կուզեն ասոնց մէջ տեղ ճամբայ մը գանել:

150. Անա առնք են ճիշդ անհաւատներ, և մենք անհաւատներու համար խալտառակ տանջանք պատրաստած ենք:

151. Բոկ անոնք՝ որ կը հաւատան Աստուծոյ և մարգարէներուն և տարբերութիւն չեն դնել անոնցմէ մէկին մէջ, մենք անպատճառ կուտանք անոնց վարձքը, և Աստուած ներող և ողորմող է:

152. Եւ գիրք ունեցողները քեզի պիտի բռնն որ դուն անոնց երկինքէն գիրք մը իջնցնես: Բայց անոնք Մովսէսին աւելի մեծ բան պահանջեցին, աւանք ըսին թէ «Աստուածը մեզ բացայայտ կերպով

ցոյց տուր», ասոր վրայ երկինքէն կրակ իջալով զանոնք չնջեց, և յետոյ ընդունեցին հորթը, բայց մենք այս ներեցինք և Մովսէսը յայտնի ապացոյց տուինք:

153. Եւ անոնց չետ պայմանաւորուելով լեռը բարձրացուցինք և ըսինք անոնց «աղօթելով զըռնէք մտէք և չարաթը մի պղծէք», և անոնցմէ շատառուն ուխտ առինք:

154. Եւ անոնք իրենց ուխտը գրծեցին և Աստուծոյ նշաններուն հաւատացին և անիրաւաբար կը սպաննէին մարգարէները ու կրակին «մեր սրտերը անթլփատ են»: անոնց այս անհաւատութեան համար Աստուած կնքեց անոնց սրտերը և միայն մէկ քանիները հաւատացին:

155. Նոյնպէս իրենց անհաւատութեան եւ Սարիւածի մասին մեծ զրպարտութիւն ընելուն համար:

156. Եւ այն խօսքերնուն համար որ ըսին «մենք Սարիւածի որդի եւ Աստուծոյ մարգարէ Մեսիա Յիսուսը սպաննեցինք», բայց զանի չեն սպաննած ու չեն խաչած, սակայն անոնց այնպէս երեցաւ: Այդ մասին տարակարծիք եղողները կասկածի մէջ են. անոնք այդ խնդրոյն մէջ տգէտ են, այլ միայն կարծիքի կը հետեւին: Բայց արդարեւ զանի չեն սպաննած իսկ Աստուած զանի իր քովը բարձրացուց, և Աստուած զօրեղ և իմաստուն է:

167. Բայց գիրք ունեցողներէն ոմանք պիտի հաւատան անոր մահէն առաջ, և յաշուութեան օրը նա անոնց դէմ պիտի վկայէ:

158. Եւ երբեմն Հրեաներու անիրաւութեանը համար, մենք անոնց մաքուր բաները իբրեւ պիղծ հոյակեցինք, որովհետեւ անոնք շատ կը շեղին Աստուծոյ ճամբայէն:

159. Եւ անոնց վաշխ առնելուն պատճառաւ, ինչ որ իրենց արգելուած է արդէն, եւ ի զուր կուտեն մարդոց ինչքը: Եւ մենք անոնց մէջ անհաւատ եղներուն համար դառն տանջանք պատրաստած ենք:

160. Սակայն անոնցմէ գիտութեան մէջ հաստատուելով և հաւատացեալները որ կը հաւատան անոր որ քեզ համար իջուցուած է եւ անոր որ քեզմէ առաջ իջեցուցած ենք, նաեւ աղօթք բնողները եւ մաքրութեան հարկը վճարողները եւ Աստուծայ եւ վերջին օրուան հաւատացողները մեծ վարձք պիտի ստանան մեզմէ:

161. Մենք քեզ յայտնութիւն տուինք, ինչպէս յայտնութիւն տուած ենք Նոյին եւ անկէ յետոյ ելող մարգարէին եւ յայտնութիւն տուած ենք Աբրահամին եւ Իսրայէլին եւ Իսահակին եւ Յակոբին եւ ցեղերուն եւ Յիսուսին եւ Յօրին եւ Յովնանին եւ Ահարոնին եւ Սողոմոնին եւ Դաւիթին տուած ենք գիրքս:

162. Եւ մարգարէներէն ոմանց պատմութիւնը ձեզ հասկցուցած ենք եւ ոմանց ալ չենք հասկցուցած եւ Աստուած խօսած է Մովսէսի հետ:

163. Աւետոյ եւ սպառնացող մարգարէներ զրկեցինք որ մարգիկ մարգարէներէն յետոյ Աստուծայ դէմ փաստ մը չունենան: Եւ Աստուած սուրբ եւ իմաստուն է:

164. Աստուած իր գիտութեամբ քեզ իջեցուցածին համար վկայ է. հրեշտակներն ալ կը վկայեն: Եւ Աստուծոյ վկայութիւնը բաւական է:

165. Արդարեւ որոնք որ չեն հաւատար եւ չեղեր են Աստուծոյ ճամբէն, անոնք արդէն հեռացած են սոսորութեամբ:

166. Ուրեմն որոնք որ անհաւատ են եւ անիրաւութիւն կընեն, Աստուած չնեղեր անոնց եւ ուղիղ ճամբէն չառաջնորդեր:

167. Միայն դժոխքի ճամբէն կառաջնորդէ որ անոնք հոն մնան յախտեան, եւ սա Աստուծոյ համար գիրքին է:

168. Ո՛վ մարգիկ, Տիրոջ կողմէ ձեզի եկած է մարգարէն ճշմարտութեամբ, ուստի հաւատացէք անոր որ ձեզ համար բարի բլլայ. իսկ եթէ չհաւատաք ճշմարիտ է որ երկնից եւ երկրի վրայ գանուածը Աստուծոյն է, եւ Աստուած գիտուն եւ իմաստուն է:

169. Ո՛վ գիրք ունեցողներ ձեր կրօնքին մէջ չափազանցութիւն մի՛ բնէք, եւ Աստուծոյ մասին ճշմարտութեանէ զատ բան մի՛ ըսէք: Մարիամի որ Յիսուս Մեսիան իրաւի Աստուծոյ զրկածն է եւ անոր Խօսքն է, զոր Մարիամին ներածեց եւ Հօգի է, Ուրեմն հաւատացէք Աստուծոյ եւ անոր մարգարէին, եւ մի ըսէր «երեք», վերջացուցէք, սա ձեզի օգտակար է: Արդարեւ Աստուած մէկ Աստուած է, օրհնեալ է, երբէք նա որդի ունենայ: Երկնից եւ երկրի մէջ եղածը անորն է եւ Աստուծոյ պաշտպանութիւնը բաւական է:

170. Մեսիան Աստուծոյ ծառայ ըլլալու մածին չի հպարտանար բնաւ, ոչ ալ մերձաւոր հրեշտակները:

171. Ով որ Աստուծոյ ծառայութեան խնջ հպարտանայ եւ ամբարտաւանանց Աստուած անոնց բռնորն ալ իր քով պիտի հաւաքէ:


172. Իսկ անոնք որ հաւատալով բարեգործութիւններ կընեն, անոնց վարձքերը պիտի տայ եւ իր շքանորձքէն պիտի աւելցնէ վրան, իսկ անոնք որ կը հպարտանան եւ կը քոտողանան պիտի ասանջէ դառն տանջանքով:

173. Եւ անոնք Աստուծմէ զտտ իրենց բարեկամ մը ու օգնական մը չպիտի գտնեն:

174. Ո՛վ մարգիկ, ձեր տիրոջ կողմէ ձեզ վկայութիւն եկած է եւ մենք ձեզի յայտնօրէն լայ իջեցուցած ենք: Արդ, որոնք որ Աստուծոյ հաւատալով, անոր հաստատուն կերպով կը փարին, նա գանձք իր չնորհաց եւ ողորմութեան մէջ պիտի մացնէ եւ

ուղիղ ճամբարով զանոնք իր կողմը պիտի առաջ-  
նորդէ:

175. Քեզմէ վճիռ կը հարցնեն: Հետուոր ազգա-  
կաններու մասին Աստուած ձեզ կը պատահանէ, թէ  
երբ մէկը տնդաւակ մեռնի եւ մէկ քայր աւնենայ,  
անոր թողածին կէր քրոջն է, եւ ան անոր ժա-  
ռանգ կրլլայ: Իսկ եթէ ան զաւակ չունենայ եւ եր-  
կու քայր ունենայ, թողածին երկու երրորդ մասը ա-  
նոնց կը բաւէ, եւ եթէ եզրայր եւ քայր ունենայ,  
եզրորը երկու աղջկան բաժին տալու է: Աստուած  
ձեզ կը յայտնէ թէ կը շնորհք: Եւ Աստուած ամե-  
նազէտ է:



Ե. Գ Լ Ո Ի Խ

(ՍՈՒՐԷԹ ՈՒՆ ՆԻՍԱ)

Մէտքեական, հարիւր քան  
պատգամ

Յանուն Աստուծոյ զթածի ոգորձածի

1. Ո՛վ հաւատացեալներ ձեր ուխտերը կտաարե-  
ցէք: Չեզ համար մաքուր են չորքոտանի անասուն-  
ները բացի սրղիլեակէն, եւ ձեր ուխտագնացութեան  
ատեն որք ձեզ ներելի չէ: Աստուած ինչ որ ուզէ  
այն կը վճռէ:

2 Ո՛վ հաւատացեալներ, մի՛ եղծէք Աստուծոյ կա-  
նոնները եւ սուրբ ամիսը եւ մատաղ անանուանները  
եւ անոնց կապերը եւ ոչ ալ սուրբ տունը գացող-  
ները որոնք իրենց Տիրոջմէ չնորհք եւ հաճութիւն  
կը խնդրեն:

3. Եւ ուխտէ ելլելնէդ յետոյ գացէք որսի, եւ ձե-

զի սուրբ տաճարէն արգիլող ցեղին ատելութիւնը  
թող ձեզ չհրապալէ որ պարտագանց գտնուիք. եւ  
բարութեան եւ երկիւզածութեան մասին օգնեցէք  
իրարու, իսկ դէպի մեղք ու գէպի ատելութիւն մի  
օգնէք միեանց, եւ վախցէք Աստուծմէ որովհետեւ  
Աստուած խիստ պատիժ տուող է:

4. Չեզի համար պիզձ են մեռեալը եւ արիւնը եւ  
խողի միսը եւ Աստուածոյ անունէն դատ ուրիշ ա-  
նուն յիշուելով մորթուածը եւ խեղդուածը եւ զար-  
նելով կամ բարձր տեղէ մը ինչալով կամ կտոցով  
զարուներով մեռածը եւ զիշատիչ անասունէ պատառ-  
ուածը, ի բաց ատեալ այն որ դուք մտմանակին  
մորթած ըլլաք եւ թէ արձաններու զոհուածները  
պեղծ են եւ վիճակ ձգելով բան բաժնելը զզուելի է:  
Այսօր անհաւատ եղողները ձեր կրօնքէն զրկուեցան,  
զուք այժմ անոնցմէ մի վախնաք, այլ ինձմէ վախ-  
ցէք:

5. Այսօր ձեր կրօնքը ձեզ կատարելագործելով չը-  
նորհք ձեր վրայ ամրողջացուցի, եւ իսլամը ձեզի  
կրօնք ընարեցի: Երբ մէկը տնօթութենէ մղուելով,  
ակամայ մեղք գործէ, Աստուած կը նորէ եւ կո-  
զորմի:

6. Անոնք ձեզ պիտի հարցնեն թէ ինչ բան սուրբ  
է իրենց համոք: Գուն բռէ, «ձեզի լաւ բաները  
սուրբ հոչակուածեն եւ անոնք որ ձեր որսի շան  
պէս վարժեցուցած գաւանները կորսան ձեզ համար,  
ինչպէս որ Աստուած ձեզ սովորեցուցեր է դուք ալ  
անոնց վարժեցուցէք, ասոնց որսացածը կերէք, եւ  
Աստուծոյ անունը անսր վրայ յիշեցէք եւ Աստուծմէ  
վախցէք, վասնզի Աստուած շուտ հաշիւ կառնէ:

7. Այսօր ձեզ համար սուրբ (հելալ) հոչակուեցան

լաւ բաները եւ գիրք ունեցողներուն կերակուրը ձե-  
զի սուրբ է եւ ձերինք անոնց: Եւ հաւատացեալ ա-  
զատ կիները եւ ձեզմէ առաջ գիրք ունեցողներու  
ազատ կիները ձեզ համար սուրբ են, եթէ անոնց ա-  
մուսնական վարձքը տաք, ու դուք պարկեշտութեամբ  
եւ չնուծեանէ զգուշ եւ դազանի սիրութիւններ չունե-  
նալով ապրիք անոնց հետ բայց ով որ անհաւա-  
տութեան դառնայ, անոր դորձը մնցած է. եւ այն  
մազը հանգրծեալին վիաստիւնըն պիտի ըլլայ:

8. Ով հաւատացեալներ, երբ ազօթքի կայնիք  
լուացէք ձեր երեսները եւ ձեռքերը մինչեւ արմուն  
կները եւ քսեցէք ջուր ձեր գլուխներուն եւ ոտքերուն  
մինչեւ ուրբերը:

9. Եւ եթէ պղծուած էք, մտքուեցէք. եւ եթէ  
հիւանդ էք կամ ճամբորդութեան մէջ եւ կամ եթէ  
ձեզմէ մէկը արաքնոցէն կուգայ եւ կամ կանանց  
զպած էք, եւ եթէ ջուր չգտնէք, մաքուր հողի  
թաթխուեցէք եւ քսեցէք ձեր երեսներուն ու ձեռ-  
քերուն. Աստուած չուզիր ձեզ դժուարութիւն տալ,  
այլ կուզէ որ ձեզ մաքրէ եւ շնորհքը ձեր վրայ ամ-  
բողջացնէ որ շնորհակալութիւն յայտնէք:

10. Աստուծոյ շնորհ առ ձեզ եւ անոր ձեզի հետ  
գրած ուխտը յիշեցէք որ բոքք «լսեցինք եւ հնա-  
զանդ ենք», եւ Աստուծմէ վախցէք, որովհետեւ  
Աստուած սրտերուն մէջինը գիտէ:

11. Ով հաւատացեալներ, ճշմարտութեան վկայ  
ըլլալու ատեննիդ Աստուծոյ համար հաստատ կեցէք,  
եւ ցեղի մը թշնամութիւնը ձեզ արդարութեանէն չը-  
չեզեցնէ, զուք արդարութիւն գործեցէք: Երկիւղա-  
ծութեան մօտ է արդ: եւ վախցէք Ածուծմէ, որով-  
հետեւ Աստուած ձեր գործերուն տեղեակ է:

12. Աստուած հաւատացողներուն եւ բարիք գոր-  
ծողներուն խոտացած է ներողութիւն եւ մեծ  
վարձք:

13. Իսկ անոնք որ անհաւատ են եւ մեր պատ-  
ուերները կը մխտեն, գոխքի ժողովուրդ են:

14. Ով հաւատացեալներ, յիշեցէք Աստուծոյ շը-  
նորհը ձեր վրայ, երբ ցեղ մը ձեռքերը ձեր գէմ եր-  
կնցուցած էր եւ նա անոնց ձեռքերը ձեզմէ ետ քա-  
չեց, եւ վախցէք Աստուծմէ, եւ հաւատացեալները  
Աստուծոյ կապալինին:

15. Եւ Աստուած ուխտած է Իսրայէլի որդւոց մա-  
սին, եւ մենք անոնցմէ տասներկու իշխաններ ընտ-  
րեցինք, եւ Աստուած ըսաւ «ա՜հ ես ձեզի հետ միա-  
սին եմ, եթէ ազօթք ընէք եւ Աստուծայ մաքրող  
տուրքը վճարէք եւ իմ մարգարէներուն հաւատաք  
եւ անոնց օգնէք եւ Աստուծոյ լաւ պարտ տաք, ես  
ալ ձեզի կը ներեմ ձեր չարութիւնները եւ ձեզ զը-  
րախաներու մէջ կը մոցնեմ որոնց տակէն գետեր կը  
հոսին»: Այսուհետեւ ձեզմէ ով որ անհաւատ գառ-  
նայ, ան արդէն կորանցուցած է շիտակ ճամբան:

16. Անոնք իրենց ուխտը աւրած ըլլանուն համար  
մենք զանոնք անիծեցինք եւ սրտերին քարացը-  
ցինք, քանի որ անոնք խօսքերնին տեղափոխելով  
հաճութեամբ յիշուելնին մոռցիր են: Եւ զուն ա-  
նոնցմէ խարդախութիւն տեսնելէ զերծ չես ըլլար,  
անոնցմէ միայն մէկ փոքր մասը խարդախ չէ. արդ,  
զուն անոնցմէ վազ անցիր եւ անոնց հետ լաւ վար-  
ուէ վասնզի Աստուած լաւ վարուողները կը սիրէ:

17. Անոնցմէ «մենք քրիստոնէայ ենք» ըսողներէն  
ուխտ առեր ենք, բայց անոնք իրենց հաճութեամբ  
յիշուելնին մոռցած են. այս պատճառաւ մենք անոնց  
մէջ, մինչեւ յարութեան օրը, թշնամութիւն եւ ա-  
տելութիւն ձգեցինք, բայց յետոյ անոնց պիտի ի-  
մացնէ Աստուած իրենց արարքները:

18. Ով գիրք ունեցողներ, մեր մարգարէն ձեք  
քով եկաւ որ բացատրէ ձեր գիրքէն ծածկած քանե-

բէն շատերը, եւ շատերն ալ զանց ընէ: Աստուծոյ կողմէ ձեզի լոյս եւ բացատրող գիրք եկեր է, այնպէս որ Աստուած անով իր կամքին հետեւողները պահով ճամբան կառուցնորդէ եւ իր արտօնութեամբ զանոնք մտիթէն լոյս հանելով, ողորդ ճամբան կառուցնորդէ:

19 Անոնք անհուատ են որ կրօնն թէ Մարիամի որդի Մեսիան Աստուած ինքն է: Դուն ըսէ «ով կարող է Աստուծոյ բան մը ազատել, եթէ նա ուզէ մեռնել Մարիամի որդի Մեսիան եւ անոր մայրը եւ երկրի վրայ բոլոր եղածները»:

20. Եւ Բողոքներկնից վրայ եւ երկրի երեսը եղած թագաւորութիւնը եւ ինչ որ այդ երկուքի մէջ կան Աստուծոյն է, նա կ'ստեղծէ ինչ որ ուզէ, եւ Աստուած ամենակարող է:

23. Եւ երբ Մովսէս իր ցեղին ըսաւ, «ո՛վ իմ ցեղակիցներս, Աստուծոյ ձեզ պարգեւած շնորհքը յիշեցէ՛ք, երբ ձեր մէջ մարդարէններ կը պատրաստէր, եւ թագաւորներ կը կարգէր եւ ձեզ անանկ բաներ կուտար որ ձեզմէ առաջ ոչ մէկ երկրի չէր տուեր»:

24. «Ո՛վ իմ ցեղակիցներս, սուրբ երկիրը մտէք որ Աստուած որոշած է ձեզ համար եւ ես մի դառնաք, մինչեւ որ վնասուելով չգանաք»:

25. Եւ անոնք ըսեն, «Ո՛ր Մովսէս, ա՛հ հոն էրու կաներու ցեղը կայ. մինչեւ որ անոնք անկէ չկլկն մենք հոն չենք մտներ. իսկ եթէ անոնք ելլեն մենք կը մանենք հոն»:

26. Անոնց մ.ջ երկու երկիւղած և Աստուծոյ շնորհ ստացած մարդիկ ըսին, «Պղտնէն մտէք անոնց քով եւ երբ մանէք դուք պիտի յաղթէք, արդ Աստուծոյ ապաւինեցէ՛ք, եթէ հաւատացեալ էք»:

27. Եւ անոնք ըսին, «ո՛վ Մովսէս, մենք յաւիտեան չենք մտներ հոն, քանի որ անոնք հոն կը գըտ-

նուին. դուն ե քու Տէրդ գացէ՛ք եւ անոնց հետ պատերազմեցէ՛ք, մենք հոս կը նստինք»:

28. Ան ալ ըսաւ, «ո՛վ Տէր իմ, ես միայն իմ անձիս եւ եղբորս Ահարոնին վրայ իշխանութիւն ունիմ. արդ ձեր եւ մեր ցեղի միջև դու գատէ»:

29. Աստուած ըսաւ «այն երկիրը անոնց արգիւտեած է քառասուն տարի, անոնք այն երկրին մէջ թափառիկ պիտի մնան, բայց դուն մի տխրիր այդ անպիտան ժողովուրդին համար»:

30, Դուն անոնց հասկցուր Աղաւթի երկու որդիներուն պատմութիւնը ճշդութեամբ, թէ երբ զոնք մատուցին, մէկին գոյր ընդունուեցաւ եւ միւսինը չ'ընդունուեցաւ: Այս վերջինն ալ ըսաւ թէ ես զանի անպատճառ պիտի մեռցնեմ, միւսն ալ ըսաւ «Աստուած միայն երկիւղածներունը կ'ընդունի»:

31. «Եթէ դուն զիս սպաննելու համար ձեռքդ ինձ երկնցնես, ես ձեռքս քեզի չեմ երկնցներ քեզ սպաննելու, ես աշխարհներու Տէրէն կը վարնամ»:

32. «Ես կուզեմ որ դուն թէ՛ իմ եւ թէ՛ քու մեղքերը վրադ առնես, եւ կրակի ընկերներէն ըլլաս»:  
Չարագործներու պատիժը այդ է:

33. Եւ իր սիրտը հանգստացուց եղբայրը սպաննելու եւ սպաննեց, և վնասուողներէն եղաւ:

34. Եւ Աստուած ազաւ մը զրկեց՝ որ հողը կը փորէր, անոր ցոյց տալու թէ եղբորը դիակը ինչպէս թաղէ: Ան՝ ալ ըսաւ, «վա՛յ ինձ, որ ես ազաւն ալ ապիկար եմ եղեր» եւ եղբորը դիակը թաղելէն յետոյ զղջաց:

35. Այս պատճառաւ մենք Խարայէի որդւոց հրօրման ըրինք թէ ով որ մարդ մը սպաննէ՝ որ ըսպաննալի մը փոխարէնը կամ չարագործ մը չըլլայ, անվկա բոլոր մարդիկը սպաննած կը համարուի եւ ով որ զանի ողջնցնէ բոլոր մարդիկը ողջնցուածի

պէս կը նկատուի :

35. Մեր մարգարէները չատանց եկած էին անոնք որոշ նշաններով . բայց ասկէ յետոյ անոնցով չատերը այլևս չէին վայելի երկրի վրայ :

37. Աստուծոյ եւ մարգարէին զէմ կտուելով երկրի վրայ խօսովութիւն յարուցանողներուն պատիժն է կամ սղաննուի կամ խաչուիլ եւ կամ ձեռքերը եւ սաքերը կտրել եւ կամ երկրէն աքսորուել : Այս անոնց համար աշխարհի պատիժն է . իսկ հանդերձեալի մէջ անոնց մեծ պատիժ կայ :

38. Անոնցմէ զատ ուրիշներ որոնք ձեր ձեռքը անցնելէ առաջ կ'ապաշխարհեն կը Երուիկն . եւ գրառեալ է որ Աստուած ներող ուղործող է :

39. Ո՛վ հաւատացեալներ, Աստուծոյ վախճանէ միտոյ ինդրեցէք եւ անոր ճամբուն մէջ պատերազմեցէք որ երջանիկ ըլլաք :

40. Վասն զի անոնք որ չեն հաւատար, եթէ աշխարհի քոյր ինչքերն ալ անոնցը ըլլան եւ նոյն իսկ անոր կրկնապատիկը ունենան եւ անով փրկուիլ ուզեն յարութեան օրը, չեն ընդունուիր եւ անոնց գառն տանջանք կայ :

41. Անոնք կուզեն կրակէն ելլել . բայց չպիտի կրնան ելլել, եւ անոնց տեւական տանջանք կայ :

42. Թէ՛ արու ե թէ՛ էգ գողին ձեռքերը կտրեցէք իր պատիժ իրենց ըրածին եւ իր խրատ Աստուծոյ կողմէ . եւ Աստուած հզօր եւ իմաստուն է :

43. Իսկ ով որ չարագործութենէ յետոյ ապաշխարհէ եւ բարի գործեր կատարէ Աստուած ալ անոր կը դառնայ, վասն զի Աստուած ներող եւ ողորմող է :

44. Միթէ չե՞ս գիտեր որ երկնից թագաւորութիւնը Աստուծոյն է . նա ուղածին տանջանք կուտայ եւ ուղածին կը ներէ : Գանդի Աստուած ամենակարող է :

45. Ո՛վ մարգարէ, մի արտմիր անոնց մասին, որոնք անհաւատութեան մէջ կը լավապիս անոնք բերանով («հաւատացինք») կըսեն . իսկ սրտերին չի հաւատար : Նաեւ այն Հրեաններու մասին՝ որոնք կը ստեն ե քեզ չզիմոյ ժողովուրդին կը հաւատան . նոյնպէս անոնք խօսքերը կ'աղաւաղեն ըսելով «եթէ սա արուի ձեզ առէք, եթէ սա չի արուի ձեզ ըզգուշցէք» : Եւ Աստուած որու որ փորձանք ուզէ, դուն անոր համար բան մը չես կրնար բնել Աստուծոյ դէմ : Ասոնք այն մարգրիկն են որ Աստուած անոնց սրտերուն մարբոյիը չուզեր . անոնց այս աշխարհի մէջ պատիժ կայ եւ հանդերձեալին մէջ մեծ տանջանք :

46. Անոնք սուտին ակամջ կուտան եւ պիղծը կուտան : Ուսար երբ զանոնք դու քովդ գան, անոնց դատար ելլիր ու վճռէ կամ ես քաշուէ անոնցմէ . եթէ ես քաշուիս քեզ չեն վիշտեր . իսկ եթէ դատար արդարութեամբ դատաստան ըրէ անոնց մէջ : Աստուած արդարութիւն գործողները կը սիրէ :

47. Բայց անոնք ընչպէս քեզմէ դատուին քանի որ Մովսիսական օրէնքն ունին, որուն մէջ կայ Աստուծոյ դատաստանը . յետոյ անոնք կ'անակնին կը դարձնեն, եւ անոնք հաւատացեալներ չեն :

48. Մովսիսական օրէնքը մենք իջեցուցինք, անոր մէջ կայ ուղիղ առաջնորդութիւն եւ լոյս : Ուղիղ հաւատք ունեցող մարգարէները անով կը դատուին հրեանները . բարբիները եւ դպիրները որոնք կը պահպանէին Աստուծոյ գիրքը եւ անոր վկաններն են : Արդ, դուք մարգողմէ մի վախնաք այլ ինձմէ վախցէք, եւ իմ նշաններս աման գնով մի ծախէք . որոնք որ Աստուծոյ իջեցուցածովը չդատեն, անհաւատ են :

49. Եւ մենք անոնց պատուիրած ենք անով . թէ

անձի տեղ անձ, և այլքի փոխարէն այլք և քիթի տեղ քիթ և ականջի տեղ ականջ և ակուսի տեղ ակուսյ իսկ վերքի տեղ վրէժառնութի. բայց ով որ իբր սղորմութիւն ներէ, այդ անոր համար քաւութիւն կրլտջ Եւ որոնք որ Աստուծոյ իջեցուցածովը չը դատեն, անիրօտներ են:

5) Եւ անոնց ետեէն զրկեցինք Մարիամի որդի Յիսուսը որ կը հաստատէր իրմէ առաջ եզոզ Մովսիսական օրէնքը, և անոր տախնք Աւետարանը, որուն մէջ ուղիղ առաջնորդութիւն և յօս ըլլալով, իրմէ առաջ եղած Մովսիսական օրէնքին հաստատութիւնն է և երկիւղածներուն ուղիղ առաջնորդութեան քարոզ է:

31. Արեմին Աւետարան ունեցողները պէտք է դատեն անով որ Աստուած իջեցուցած է անոր մէջ: Եւ սվ որ Աստուծոյ իջեցուցածովը չդատէ, այնպիսիները անհաւատներ են:

32. Եւ մենք քեզ այ իջեցուցինք գիրքը ճշմարտութեամբ, որ իրմէ առաջ եղած գիրքերը կը հաստատէ և անոնց վրայ պահպան է, և Աստուծոյ իջեցուցածովը դատէ, և արդարութեամբ քեզի եկածին յարելով, անոնց հաճոյքին մի՛ հետեիր: Զեզմէ իւրաքանչիւրին համար մէկ օրէնք և մէկ յօս կայ:

33. Եթէ Աստուած ուզէր, ձեզի մէկ կրօնական ազգ մը կ'ընէր. բայց որպէս զի ձեզ արուածով փորձէ ձեզ, բարի գործերու մէջ մեցեցէք Դուք բոլորդ Աստուծոյ պիտի դուռնաք, և նա ձեզի կը բացատրէ այն բաները որոնց մասին անհամաձայն էիք:

34. Արդ. Աստուծոյ իջեցուցածին նման դու դատէ՛ և անոնց հաճոյքներուն մի՛ հետեիր: Եւ ըզգուշացիր անոնք քեզ չչեղեցնեն Աստուծոյ քեզ իջեցուցած երբեմն բաներէն: Եւ եթէ անոնք մերժեն, հասկցիր որ Աստուած պատուհաս պիտի հասցնէ ա-

նոնց մէկ քանի մեղքերուն համար: Արդարեւ մարդոց շատերը չարագործներ են:

35. Արդեօք ազէա ժամանակներու դատավճի՞որ կուզեն: Եւ համոզուած ժողովուրդի ժը համար Աստուծմէ զատ ո՞վ կարող է լաւ դատել:

36. Ո՞վ հաւատացեալներ, դուք հրեաները և քրիստոնեաները պաշտպան մի ընդունիք, անոնք իբարութեամբ բարեկամ են, եւ ձեզմէ ով որ զանոնք բարեկամ բռնէ, ան այ անոնցմէ է. վասնզի Աստուած անիրաւ ազգի չառաջնորդեր:

37. Դու կը տեսնես որ սրտի հիւանդութիւն ունեցողները տէպի անոնց կը վաղեն ըսելով, «կը վախնանք որ մեզ փորձանք մը պատահի»: Բայց կրնայ ըլլալ որ Աստուած դիւրութեամբ յաղթանակ ժը կուտայ, եւ կամ անոր կողմէ բան մը կըլլայ որ անոնք իրենց սրտերու մէջ պահածուն համար կը գղջան:

38. Եւ հաւատացեալները պիտի ոսեն, թէ արդեօք ասոնք այն մարդիկն են որ հաստատ երդմամբ Աստուծոյ երդուրնցան թէ ձեզի հետ պիտի ըլլան: Բայց անոնց գործերը փճացան: Անոնք ինասուողներէն են:

39. Ո՞վ հաւատացեալներ, ձեզմէ ով որ իբ կրօնքէն դառնայ, Աստուած անոնց տեղը ցեղ ժը կը բռնէ որոնք զանի կը սիրեն և ան այ զանոնք կը սերէ, յամօթ հաւատացեալներուն և ի պատիւ անհաւատներուն, որոնք կը պատերազմին Աստուծոյ ճամբուն մէջ և նախատողներու շախախնքէն չեն վախսար: Այս Աստուծոյ պարզեն է, նա իր ուզածին կուտայ: Եւ Աստուած կարող և գործող է:

60. Անա ձեր պաշտպանը միայն Աստուած եւ անոր մարգարէն է, եւ հաւատացեալներէն են որ ալօթք կընեն ու մաքրութեան հարկը կը վճարեն եւ կը ծնրադրեն:

64. Որոնք որ իրենց պաշտպան կընդունին զԱստուած եւ անոր մարգարէն եւ հաւատացեալները, ահա անոնք Աստուծոյ զինուորն են, եւ յազթող կը հանդիսանան :

62. Ո՛վ հաւատացեալներ, ձեզմէ առաջ գիրք ըստացողներէն որոնք որ ձեր կրօնքը կը ծալրեն ու կը ծիծաղին, զանոնք ձեզի պաշտպան մի բռնէք : Եւ վախցէք Աստուծմէ եթէ հաւատացեալ էք :

63. Եւ երբ դուք զանոնք ազօթքի ը կանչէք, անոնք կը ծիծաղին ու կը ծաղրեն որովհետեւ անոնք չհասկցող մարդիկ են :

64. Ըսէ, «ո՛վ գիրք ունեցողներ, դուք մեր վերայ ամօթաբեր ի՞նչ տեսաք, միթէ մէկ Աստուծոյ եւ մեզի համար իջուցուածին եւ անկէ առաջ իջուցուածին հաւատալնու համար մեզմէ կը հրատարիք : Եւ ձեզմէ շատերը շարագործներ են :

65. Դուն ըսէ, «Ձեզի աւելի գէշը իմացեմ, որ Աստուծոյ կողմէ անոնց պատիժը արուած է որ Աստուած զանոնք անիծեց եւ պատահասեցով անոնցմէ որք կասկիներ եւ որք խոզեր բրտու, նոյնպէս այթաղուիք պաշտողները : Անոնց տեղը գէշ է եւ ուզիլ ճամբէն եղած են» :

66. Եւ երբ ձեր քով գան, կըսեն «մենք զը հաւատաւնք», բայց անոնք անհաւատութեամբ կը մըտնեն եւ անհաւատութեամբ դուրս կելլեն : Աստուած գիտէ անոնց գաղանիքը :

67. Եւ դուն անոնցմէ շատեր կը տեսնես որ կուտարեն մեղքի եւ գէշութեան եւ պիղծը կուտեն, սակայն անոնց այդ գործքը գէշ է :

68. Անոնց բարբիները եւ դպիրները անոնց արգիլելու էին մեղք խօսք եւ թշնամութիւն ընելը եւ պիղծ բան ուտելը : Սակայն անոնց գործքը գէշ է :

69. Հրեաները կըսեն թէ Աստուծոյ ձեռքը կա :

պուած է : Իրենց ձեռքերն են կապուած եւ անիծուած են իրենց խօսքին համար, իսկ անոր ձեռքերը ազատ ըլլալով, կը շնորհէ ըստ իւր կամաց, եւ Տիրոջ կողմէ քեզ իջուցուած, անոնցմէ շատերուն ըմբօթութիւնը եւ անհաւատութիւնը պիտի աւելցնէ, եւ մենք անոնց մէջմինչև յարութեան օրը ասելու թիւն ու թշնամութիւն կը ձգենք : Եւ ամեն անգամ որ անոնք պատերազմի կրակը կը վառեն, Աստուած կը մարէ զայն, եւ անոնք կաշխատին երկրի վրայ խառվածութեան համար, բայց Աստուած խռովարարները չէ սիրելի :

70. Եթէ գիրք ունեցողներ հաւատալով երկրագամ ըլլան, մենք անոնց շարութիւնները կը ներնք եւ շնորհալի դրաստներու մէջ կը ասնինք զանոնք, եւ եթէ անոնք կատարէին օրէնքը եւ Աւետարանը եւ ինչ որ իրենց Տիրոջ կողմէ իջուցուած է իրենց այն ատեն անոնք պիտի գրանալին վերէն եւ օտքերուն տակը եղած շնորհները : Ասոնց մէջ ուզվածիս մարդիկ կան, բայց անոնց շատերուն գործերը գէշ են :

71. Ո՛վ մարգարէ, Տիրոջ կողմէ քեզ իջուցուածը հազորդէ, իսկ եթէ չհալորդես, մարգարէական պաշտօնը կատարած չես ըլլար, եւ Աստուած կը պաշտպանէ ձեզ մարգոցմէ վասն զի Աստուած անհաւատներու ցեղը չառաջնորդեր :

72. Դուն ըսէ, «ո՛վ գիրք ունեցողներ, դուք մինչև որ թէվրաթը չի կատարան կամ Մովսիսա կան գիրքը) եւ Աւետարանը եւ ձեր Տիրոջ ձեզ համար իջուցուածը չկատարէք, դուք բանի մը չէք ծառայեր» : Եւ քու տիրոջ կողմէ քեզ իջածը անոնցմէ շատին ըմբօստութիւնը եւ անհաւատութիւնը պիտի աւելցնէ, եւ դուն մի արտօմիր անհաւատներու ազգին համար :

73. Ատուգիւ, հաւատացողները, հրեաները, եւ

աարէացիները և քրիստոնեաները և որոնք որ կը հաւատան Աստուծոյ և վերջին օրուան ու յարիք կը գործեն, անոնց համար երկիրը չկայ և անոնք չեն տիրիր:

74. Արդէն մենք ուխտ առած ենք Իսրայելի որդւոցմէ և անոնց համար մարգարէներ զրկած ենք երբ որ անոնց մաշգարէ մը կուգար իրենց հաճելի չեղած բանով մը, անոնցմէ որը ստախօս կանուանէին և որն ալ կ'սպաննէին:

75. Անոնք կարծեցին որ պատիմ չկայ, բայց կոյր և խուլ եղան. յետոյ երբ Աստուած անոնց դարձաւ անոնցմէ շատը կրկին կոյր և խուլ մնացին: Բայց Աստուած անոնց գործքերը կը տեսնէ:

76. Անշուշտ ասոնք անհաւատ են որ կըսեն թէ Մարիամի որդի Մեսիան Աստուած է: Մինչդեռ Մեսիան ըսած է Իսրայէլին, «Իմ Տիրոջս և ձեր տիրոջը պաշտամունք կատարեցէք»: որովհետեւ Աստուծոյ ընկեր զնորն զէմ Աստուած արգելած է դրախտը և անոր բնակավայրը կրակն է, և բանաւորներուն օգնականներ չկան:

77. Արգ. անհաւատ են անոնք որ կըսեն թէ Աստուած երեքէն երրորդն է. բայց Աստուած մէկ է և ուրիշ չկայ, ուստի եթէ անոնք իրենց այդ խօսքը չձգեն, անոնց մէջ անհաւատ եղողներուն դառն տանջանք կայ:

78. Արդեօք Աստուծոյ զառնալով ներողութիւն չպիտի խնդրեն. և Աստուած ներող է և ողորմած է:

79. Մարիամի որդի Մեսիան միայն մարգարէ է: Անկէ առաջ ալ մարգարէներ եկան անցան, և անոր մայրը հաւատարիմ կին մըն է. երկուքն ալ կերակուր կուտէին: Տես թէ մենք անոնց ինչպէս նշաններ յայտնեցինք և անոնք կրկին ինչպէս մոլորեցան:

80. Գուն ըսէ՛, «Արդեօք դուք Աստուծմէ զատ բան մը կը պաշտէ՞ք որ ոչ միաս կուտայ և ոչ օգուտ. և Աստուած կը լսէ ու գիտէ»:

81. Ըսէ՛, «ով զիրք ունեցողներ, կրօնքնուդ մէջ ճշմարտութենէ դուրս չափազանցութիւն մի ընէք և մի նեաւիք ձեզմէ առաջ մոլորուած ազգին հաճոյքներուն. անոնք ուզիլ ճամբէն չեղած ըլլալով, շատերն ալ կը մոլորեցնեն»:

82. Իսրայէլի որդիներէն անհաւատները անիծուած են Գաւթէի և Մարիամի որդի Յիսուսէն, վասնզի ապստամբեցան և պատուէրները չի յարգեցին ու արգիլուածները իրարու չարգիլեցին: Եւ գործերնին նողկալի էր:

83. Անոնցմէ շատերը կը տեսնես որ անհաւատները բարեկամ կ'ընդունին: Անոնք ինչ որ կանխաւ գործեր են, գէշ է. Աստուած բարկացած է անոնց դէմ, և անոնք յաւիտեանս տանջանքի մէջ պիտի մնան:

84. Եւ եթէ անոնք հաւատային Աստուծոյ և մարգարէին և ստոր իջածին, զանոնք իրենց բարեկամ չէին ընդուներ. սակայն ասոնցմէ շատերը չարագործներ են:

85. Հաւատացեալներուն ամենէ աւելի թշնամի եղողները պիտի տեսնես թէ հրեաները եւ կոտպաշտներն են. և հաւատացեալներուն սիրով աւելի մօտ պիտի գտնես «մենք քրիստոնեայ ենք» ըսողները. վասնզի ասոնց մէջ քահանաներ եւ վարդապետներ կան և անոնք հպարտ չեն:

86. Անոնք երբ կրկին այն բանը, որ մարգարէէն իջուցուած է, կը տեսնես որ աչքերնէն արտասուք կը հոսի. վասնզի հասկցած են ճշմարտութիւնը ու կ'ըսեն, «Ո՛վ մեր Տէրը, կը հաւատանք մենք. մեզ ալ վկաներուն հետ գրէ»:

87. «Եւ մենք ի՞նչ պատճառ ունինք որ Աստուծոյ»

և մեզի եկած ճշմարտութեանը. մենք որ կուզենք որ բարեգործ ժողովուրդի հետ միասին մեզի ալ դրախաղը ընդունին» :

88. Եւ Աստուած ալ անոնց ըսածին իրր վարձք պիտի տայ դրախտներ, որոնց տակէն դեռեր կը հոսին, և անոնք յաւիտեան կը մնան անոնց մէջ. եւ անա ա,ս է բարեգործին վարձատրութիւնը: Իսկ անհաւատ, ըլլալով մեր նշանները հերքողները դըժոխքի ընկերներ են:

89. Ո՛վ հաւատացեալներ, Աստուծոյ ձեզ համար սուրբ հռչակած բաները պիզծ մի՛նկատէք և պատուիրազանց մի՛ ըլլաք. զի Աստուած չտիրեր պատուիրանազանցները:

90. Եւ Աստուծոյ ձեզ տուած սուրբ և լաւ բաներէն կերէք, և վախցէք Աստուծմէ որուն կը հաւատաք:

91. Զեր երդումներուն մէջ եղած սխալին համար Աստուած ձեզ չպատկեր, բայց երդամբ ըրած ձեր ուխտին համար ձեզ կը պատժէ, այս պարագային իրր քառութիւն պէտք է որ տասր աղքատ կերակրէք ձեր ընտանիքը կերակրելու միջին կերպովը. կամ անոնց հագուստ հագցնէք և կամ գերի մը ազատ արձակէք. բայց այս ընել չկրցողը թող ծոծ պահէ երեք օր: Այս է ձեր երդումներուն քառութիւնը երբ կերպնուք. Ուստի ձեր երդումները պահեցէք: Աստուած այսպէս կը յայտնէ ձեզ իր պատգամները որ շնորհակալ ըլլաք:

92. Ո՛վ հաւատացեալներ, անա գինին և բազախաղը և արձանները և վիճակախաղը պիզծ ու սատանայի գործ ըլլալով զարշէի են. ուրեմն զգուշացէք անոնցմէ որ երջանիկ ըլլաք:

93. Վասն զի սատանան գուղէ որ գինիը և բազախաղի պատճառաւ. ձեր մէջ հակառակութիւն և

թշնամութիւն ձգելով, ձեզ մոռցնել տայ Աստուծոյ յիշատակութիւնը և աղօթքը: Արգ, չէ՞ք ձգեր այս բաները: Ուրեմն Աստուծոյ և ժարգորէին հնազանդեցէ՛ք և զգուշացէք, իսկ եթէ մերժէք, զիտցէք որ մեր ժարգարէին պարտքը միայն որոշակի իմացընել է:

94. Անոնք որ կը հաւատան և բարեգործութիւններ կընեն, կերածնուն համար յանցաւոր չեն, քանի որ երկիւզած են և կը հաւատան և բարիքներ կընեն՝ յետոյ կրկոյն երկիւզածութեամբ կը հաւատան, յետոյ դարձեալ երկիւզածութեամբ բարեգործութիւն կընեն: Աստուած ալ բարեգործները կը սիրէ:

95. Ո՛վ հաւատացեալներ, ձեր ձեռքով և ձեր նետերով որսացած որսերնուդ մէջ Աստուած ձեզ կը փորձէ անպատճառ բանով մը, որ Աստուած հասկընայ թէ անյայտ տեղի մէջ անկէ ով կը վախնայ: Ուստի ասկէ յետոյ ով որ պատուիրանազանց գանուխ անոր ծանր տանջանք կայ:

96. Ո՛վ հաւատացեալներ, երբ ուխտի մէջ էք որս մի՛ սպաննէք, և ձեզմէ ով որ դիտմամբ սպաննէ, ձեզմէ երկու արդարադատ անձերու վճռով իրր պատիժ պէտք է սպաննածին նման չորքոտանի անասուն մը զոհ տանի Քէապէիի համար, կամ իրր քառութիւն աղքատներ կերակրէ կամ ասոր հաւասար ծոծ պահէ որ իր գործած մեղքին համը ըզգայ: Աստուած կը ներէ անցեալը, բայց ով որ կրկին գործէ, Աստուած անկէ վրէժ կառնէ: Աստուծո՞ծ հզօր և վրէժխնդիր է:

97. Զեզի և ճանապարհորդներուն ներեալ է ծովին մէջէն որսալ և անկէ ուտել, բայց արգիւտած է ձեզ ցամաքի որսը ցորչափ ուխտագնացութեան մէջ էք: Ուստի վախցէք Աստուծմէ որուն քով պիտի խմբուիք:

98. Քէապէն, այն սրբավայրը՝ Աստուած մարդոց ժողովատեղի բրած է, այսպէս ալ ուխտի ամիրսը եւ մտտաղը իր զարգերովը: Եւ այս ալսպէս բրած է որպէսզի հասկնաք թէ Աստուած երկնից և երկրի մէջ եղածները գիտէ, և ա՛նա Աստուած ամենագէտ է: Հասկցէք որ Աստուած իրօտ պատիժ կուտայ եւ Աստուած ներող և ողորմած է:

99. Մարգարէին պարտքը միայն խրատել է, և և Աստուած գիտէ ձեր յայտնածն է ալ, գաղանի պահածն ալ:

100. Ըսէ՛, «գէշը և լաւը հաւատար չեն, որչափ որ ալ գէշէն բազմանայ» քեզ հաճելի ըլլայ: Արդ, ո՛վ խելօքներ, Աստուածմէ վախցէք որ երջանիկ ըլլաք:

101. Ո՛վ հաւատացեալներ, մի՛ հարցնէք այն բաներու մասին որոնց յայտնուելը ձեզ կը տիրեցնէ, բայց եթէ Ղուրանին իջնելու ատեն հարցնէք, ձեզ կը յայտնուի: Աստուած ներքեր է այն, և Աստուած ներող ու հեղ է: Զեզմէ առաջ ալ ցեղ մը հարցուց զայն, բայց անոր չը հաւատացին:

102. Աստուած ոչ Պահիրէ, ոչ Սաիպէ յետոյ ոչ Վասիլէ և ոչ Համ չէ բրած, բայց տնհաւասները Աստուծոյ մասին սուտեր կը շինեն, սակայն անոնցմէ շատը չմտածեր:

103. Եւ երբ անոնց կրսուի «Աստուծոյ իջեցուցածին և մարգարէին լօտ եկէք»՝ անոնք կըսեն «մեզիկը բաւեն մեր հայրերուն քով տեսածները»: Բայց եթէ անոնց հայրերը բան չէին հասկնա՞ր և շիտակ ճամբու մէջ չէին:

104. Ով հաւատացեալներ, հոգինուդ հաճար ըզգուշացէ՛ք, եթէ դուք ուղիղ առաջնորդուած էք մոլորեցուցիչը ձեզ չվնասեր: Դուք բոլորդ Աստուծոյ պիտի դառնաք, և նա ձեզ կը յայտնէ ձեր գոր-

ծերը: 105. Ո՛վ հաւատացեալներ, եթէ ձեզմէ մէկը մահուան մօտ է, կտակ ընելու ատեն ձեզմէ երկու արդարաւէր անձեր վկայ թող ըլլան: Կամ ուրիշ երկու անձեր՝ եթէ ցամաքի վրայ ճամբորդելու ատեն ձեզի մահ պատահի: Դուք այդ երկուքը ստիպեցէք որ ալօթելէ յետոյ Աստուծոյ երզում ընեն թէ «վկայութիւննիս զբամով չենք ծախեր, նոյն խկ ազգականի համար ալ ըլլայ Աստուծոյ վկայութիւնը չենք ծածկեր, վասն զի այն պարագային մենք մեղապարտ կըլլանք»:

106. Եւ եթէ հաստատուի իրական յանցանք մը այդ երկու վկաներուն վրայ, ալդ պարագային անոնց տեղ ուրիշ երկու վկայ տրուի ազգականներէն որոնք հաստատեն անոնց յանցանքը. և ասոնք թող երգնուն Աստուծոյ թէ «մեր վկայութիւնը անոնց վկայութեանէն շիտակ է եւ մենք արդարութեանէն չենք անդին անցնիր. եթէ ոչ չարագործներ կ'ըլլայինք»:

107. Այս ալ աւելի դիւրին կըլլայ, որ իրենց վկայութիւնը անոնց ներկայութեանը ընեն կամ իրենց երզումէն յետոյ հակառակ երզում մըն ալ ըլլալէ վախնան: Ուրեմն Աստուծմէ վախցէ՛ք, եւ լըսեցէք որ Աստուած չարագործներու ցեղին շարաջնորդեր:

108. Օր մը Աստուած մարգարէները ժողովելով պիտի ըսէ թէ ձեզի ի՞նչ պատասխան տուին. անոնք ալ կ'ըսեն, «մենք չենք գիտեր, զազանիքներք դիտցողը դու էս»:

109. Այն ստեն Աստուած կ'ըսէ, «Ո՛վ Մարիամի սուգի Յիսուս, յիշէ՛ քեզ եւ քու մօրդ իմ բրած չնորհարար, որով քեզ զօրացուցի Սուրբ Հոգիով որ օրոր-

ոցէն չափահասի նման մարդոց հետ խօսեցար:

110. Եւ երբ եւս քիզի ուսուցի գիրքը եւ իմաստութիւնը եւ հին կտակարանը եւ Աւետարանը, եւ դու իմ հրամանովս ցեխէն թոչունի ձեռով բաներ շինեցիր եւ անոնց մէջ շունչ փչեցիր եւ անոնք իմ հրամանովս թոչուն եղան, եւ երբ դուն իմ հրամանովս մեռեալները կենդանացուիր, եւ երբ դուն նշաններով Իօրայէի որդւոց յայտնուեցար եւ զանոնք քեզմէ եւ մղեցի երբ անոնց մէջ անհաւատները կ'ըսին, «ասիկա բացարձակ կախարհութիւն է:»

111. Եւ երբ առաքեալներուն ըսինք, «հաւատացէք ինձ եւ մարդարէին»: անոնք ալ ըսին. «մենք հաւատացինք, եւ դուն վրայ եղիր որ մենք հնազանդներ ենք»:

112. Եւ երբ առաքեալները ըսին, «Ո՛վ Մարիամի որդի Յիսուս, արդեօք քու Տէրդ կարօղ է երկինքէն մեզ կերակուր իջեցնել» նա ալ ըսաւ, վախցէ՛ք Աստուծմէ եթէ հաւատացեալներ էք:

113. Անոնք եւս ըսին, «մենք անկէ ուտել կուզենք որ մեր սրտերը համոզուին ու գիտնանք թէ դուն ճշմարիտս են եւ մենք վկաներ ըլլանք»:

114. Մարիամի որդի Յիսուսն ալ ըսաւ, «Ո՛վ Տէրն մեր Աստուած, երկինքէն մեզ համար սեղան մը իջեցուր, որ մեզ համար, այսինքն մեր առաջիններու եւ վերջիններու տօն եւ քեզմէ նշան մ'ըլլայ, եւ կերակրէ մեզ, վասն զի դուն լաւագոյն կերակրողն ես»:

115. Աստուած ալ ըսաւ, «անա եւ զայն կիջեցնեմ ձեզ, բայց ձեզմէ ով որ յետոյ չհաւատայ, կը պատժեմ զանի այն տեսակ պատիժով մը, որով ուրիշ մէկը չեմ պատժած աշխարհի մէջ»:

116. Եւ երբ Աստուած ըսաւ, «ո՛վ Մարիամի որ-


դի Յիսուս, դո՛ւն ըսիր մարդոց որ Աստուծմէ զատ զիս եւս մայրս իբր երկու Աստուած ընդունեցէք», նա եւ ըսաւ, «երբէ՛ք, ի՞նչ պատճառ ունիմ որ քրաւունք չունեցած բանս խօսիմ որ ճշմարիտ չէ: Եթէ ես խօսած ըլլայի, դուն զայն պիտի գիտնայիր՝ դուն իմ սրտիս մէջ եղածը գիտես եւ ես չեմ գիտեր թէ քու սրտից մէջ ինչ կայ: Վասն զի զաղտնիքները գիտցողը դուն ես»:

117. «Ես անոնց ըսած եմ միայն քու ինձ հրաման ըրածներդ, թէ իմ Տէրը եւ ձեր Տէրը եղող Աստուածը պաշտեցէ՛ք. եւ քանի որ ես անոնց մէջն էի, անոնց վկան էի, եւ երբ դուն ինձ մահ կուտաս, դուն կ'ըլլաս անոնց վերհսկողը, եւ դուն ամեն բանի վկայ ես»:

118. «Եթէ դու զանոնք պատժես, անոնք արդէն քու ծառաներդ են. իսկ եթէ անոնց ներես, անա դուն հզօր եւ իմաստուն ես»:

119. Այն ատեն Աստուած ըսաւ, «այն օրն որ արդարներուն արդարութիւնը անոնց օգուտ կը բերէ, անոնք դրախտներ կուենան որոնց տակէն գետեր կը հոսին եւ անոնք յաւիտեան հոն կը մնան.» Աստուած անոնցմէ գոհ կըլլայ եւ անոնք Աստուծմէ Այս մեծ շնորհք մըն է:

120. Երկինքներու եւ երկրի թագաւորութիւնը եւ ինչ որ անոնց մէջ կայ Աստուծոյն է, եւ նա է ամենակարողը:



2. Գ Լ ՈՒ Խ

(ՍՈՒՐԷ ԷՆ ԱՄ)

Մէքէական, հարիւր վարսուն եւ հինգ պասգամ

Յանուն Աստուծոյ զթաճի ողորմածի

1. Երկիրն քնեբբ և երկիրը ստեղծող և լոյսը ու խաւարը կարգադրող Աստուծոյն փառքը լայն թէև իրենց Տիրոջ չհաւատացողները անոր հաւատարներ կը դնեն :

2. Նա է որ ձեզ ցեխէն ստեղծեց, և յետոյ վախճանը որոշեց, և որոշեալ վախճանը անոր քովն է, բայց դուք կը կասկածիք :

3. Երգնից մէջ և երկրի երեսը ան է Աստուած, ան գրեթէ ձեր գաղանի և յայտնի բաները ու ձեր վաստակը :

4. Եւ Տիրոջ նշաններէն ինչ նշան որ եկաւ անոնց անոնք մերժեցին :

5. Անոնք իրենց եկած ճշմարտութեան ալ «սուտ է ըսին» բայց քիչ ատենէ անոնք կը տեղեկանան իրենց ծաղրածի մասին :

6. Միթէ անոնք չեն տեսներ որ մենք անոնցմէ առաջ որչափ ազգերու երկրիս վրայ տեղեր տուած էինք, որ ձեզ չէ արուած, փճացուցինք և մենք անոնց առատ անձրևներ տեղացուցինք երկիրքէն եւ այն տեղերու տակէն գետեր հոսեցուցինք, սակայն անոնց մեղքին պատճառաւ զանոնք ոչնչացուցինք և յետոյ ուրիշ ազգեր կանգնեցուցինք :

7. Եթէ քեզի թուղթի վրայ գրուած գիրք իջեցուցուի իսկ, կրկին այն անհաւատները զայն ձեռքերովն շօշափելէ յետոյ ալ կըսէին, «այս պարզ խաբարաւթիւն մըն է միայն» :

8. Եւ անոնք կըսեն որ եթէ անոր համար հրեշտակ մը չիջնէ չենք հաւատար. Սակայն եթէ հրեշտակ ալ իջեցնէինք, արդէն գործը լինցած է. այլևս անոնց չնայուիր :

9. Եւ եթէ մենք զանի հրեշտակ ալ չինէինք, կըրկին զանի մարդ պիտի չինէինք, և անոնց կը հագուեցնէինք իրենց հագածին նման :

10. Բայց անոնք քեզմէ առաջ մարգարէներն ալ ծաղրած են, և պատժուեցան ծաղրողները, որ զանի կարհամարէին :

11. Դուք ըսէ՛ «Ծրջեցէք երկրի վրայ և տեսէք թէ «սուտ է» ըսողներու վերջը ինչ եղած է» :

12. Դուք ըսէ՛, «Երկիրքին և երկրի վրայ եղածները որո՞ւնն են». ըսէ, թէ Աստուծոյն է, որ ողորմածութիւնը իր վրայ ստանձներ է, նա ձեզ պիտի հաւաքէ յարութեան օրը, ասոր տարակոյս չկայ : Իրենց հոգիներուն վնաս ընողներն են որ չեն հաւատար :

13. Թէ՛ գիշերուան և թէ ցերեկուան ընակութիւնն ալ անորն է, և ան կը լսէ ու գիտէ :

14. Ըսէ՛ անոնց, «արդեօք երկիրքը ու երկիրը ըստեղծող Աստուծոյն ուրիշը կընդունիրք. Այն Աստուածը որ արարածները կը կերակրէ և ինք չկերակրուիր» : Ըսէ՛, «ինձ հրաման ունիմ որ առաջին միւսչիմը ես ըլլամ» : Եւ հրամայուեցաւ որ կռապաշտներէն չըլլամ :

15. Ըսէ՛, թէ եթէ Տիրոջօ գեմ ապստամբիմ կը վախճամ մեծ օրուան պատիժէն :

16. Այն օրը ով որ անկէ հեռացուի, անոր ողորմած է արդէն, և այս ալ մեծ շնորհ մըն է :

17. Եթէ Աստուծոյն վնաս մը հասնի քեզ, միայն այն կրնայ քեզ ազատել և եթէ քեզ բարիք մը հասնի, նա ինքն է արդէն ամենակարողը :

18. Նա կ'իջնէ իր ծառաներուն վրայ, և թէ իմ մաստուն և գիտուն է :

19. Ըսէ՛, «վկայութեան տեսակետով որ բանը մեծ է»։ Ըսէ՛, «Աստուած վկայ է իմ և ձեր միջև. և այս Դուրբանը ինձ իջեցուցած է որ անսով խոստովանեմ քեզ և որու որ հասնի։ Արդեօք կը վկայե՞ք որ Աստուծոյ հետ ուրիշ աստուած մըն ալ կայ։ Դուն բռէ «ես չեմ վկայեր»։ Ըսէ՛, «արդարև Աստուած մէկ է. և ա՛նա ես ձեր ընդունած ընկերներէն մըն եմ»։

20. Գիրքը տուած ենք անոնց որոնք որ զայն կը ճանչնան իրենց գաւակները ճանչցածի պէս, անհաւատները՝ անոնք են որոնք իրենց հոգիներուն կը վնասեն։

21. Ո՞վ աւելի անիրաւ է քան այն որ Աստուծոյ մասին սուտ կը յերիւրէ և անոր նշաններուն համար «սուտ են» կ'ըսէ։ Արդարև անիրաւները երջանակ չեն ըլլար։

22. Եւ որ մը մենք ամենն ալ պիտի հաւաքենք և այն ատեն պիտի հարցուի Աստուծոյ ընկերները ընդունողներու թէ ո՞ր են ձեր կարծած ընկերները։

23. Անոնք ալ ուրիշ պատասխան չպիտի ունենան ու պիտի բռնեն, «Ո՞վ Տէր մեր, Աստուած վկայ որ մենք ընկերներ չէինք դներ»։

24. Տես ի՞նչպէս կը ստեն իրենք իրենց դէմ, և իրենց զրպարտութիւնը կը նեղանայ իրենցմէ։

25. Եւ անոնցմէ ոմանք քեզ կ'ուսկնդրեն, բայց մենք անոնց սիրտերը դոցեր ենք որ զայն չհասկնանք և անոնց սկանջները խցեր ենք որ ինչ նշան որ տեսնեն չհաւատան։ մինչև որ քու քովդ գան ու քեզի հետ վիճին։ Չհաւատացողները «այդ նրներու առասպելներն են,» կըսէին։

26. Եւ անոնք զայն արգիլելով կը հեռանան անկէ, բայց իրենց հոգիները միայն կը կորսնցնեն ու չեն հասկնար։

27. Եւ դուն անոնց կրակի մէջ ինկած ատենք

տեսնէիր, երբ կըսեն. «Ո՛հ, երանի թէ ետ դարձուէինք, ալ մեր Տիրոջ նշաններուն «սուտ է» չէինք բռնար, և հաւատացեալներ կ'ըլլայինք։

28. Արդարև. անոնց կը յայտնուի ինչ որ առաջ ծածկուած էր, և եթէ ետ ալ դարձուէին, կրկին նոյն արգիլուած բանը կընէին. վասն զի անոնք սրտախօսներ են։

29. Անոնք կըսեն, թէ մերը միմիայն այս աշխարհի կեանքն է, և մենք յարութիւն չենք առնար։

30. Դուն տեսնու ես անոնց իրենց Տիրոջ առջև տարուած ատեն», երբ Տէրը անոնց կը հարցնէ, թէ այս ճշմարտութիւն չէ՞. անոնք ալ, «այո՛, մեր Տէրը վ'իայ է» կը պատասխանեն։ Եւ Աստուած կըսէ անոնց «ուրեմն ձեր անհաւատութեան պատիժը կրեցէք»։

31. Աստուծոյ առջև ելելը ուրացողները կը վրեժախառն միջնակ որ յանկարծ ժաւը հասնի. այն ատեն անոնք կըսեն «աւա՛ղ, մե՛ղք մեզի ի զուր կորսնցողներնք»։ և անոնք իրենց բեռները կը շաղկեն։ Ի՞նչ գէշ է անոնց բեռը։

32. Եւ աշխարհիս կեանքը խաղալիք և պարապ ձանձրոյթ է. իսկ հանդերձեալ աշխարհինը երկիւղածներուն աւելի լաւ է։ Արդեօք չե՞ն հասկնար։

33. Արդարև մենք գիտենք թէ անոնց ըսածները քեզ կը տրտմեցնեն. սակայն անոնք քեզ չեն կրնար ուրանայ, բայց չարագործները Աստուծոյ նշանները կորսնան յամառաբար։

34. Եւ քեզմէ առաջ եկող մարգարէներն ալ ուրացուած են. բայց անոնք իրենց ուրացման մասին համբերեցին և նեղութիւն կրեցին, մինչև որ մեր օգնութիւնը հասաւ իրենց։ Եւ Աստուծոյ խօսքերը փոխող չկայ։ Արդէն դուն տեղեկութիւն ստացար մարգարէներու մասին։

35. Եւ եթէ անոնց մերժումը քեզ ծանր կուգայ, դուն կրնայիր երկրի վրայ ճեղք մը կամ գէպի երկինքը սանդուղ մը խնդրել և անոնց հրաշք մը ցոյց տալ. բայց Աստուած եթէ ուզէր զանոնք կը ժողվէր ուղիղ ճամբուն մէջ: Աւրեմն դուն տգէտներէն մի բլար:

36. Նա միայն մտիկ ընողներուն կը պատասխանէ, և Աստուած մեռելները պիտի յարուցանէ, և յետոյ անոր յովը կը դառնան:

37. Եւ անոնք կրսեն, «եթէ քու Տիրոջ կողմէ քեզի հրաշք մը չտրուի չենք հաւատար»: Ըսէ՛ դուն, «Աստուած կարող է հրաշք մը իջեցնել»: բայց անոնց շատերը չեն հասկնար:

38. Եւ երկրի վրայ անասուն մը և իր թեւերովը թռչող թռչուն մը չկայ, որ ձեզի նման ժողովուրդներ չըլլան: Գիրքին մէջ մենք պակաս բան մը չենք թողած: Անոնք վերջը կը հաւաքուին իրենց Տիրոջ քով:

39. Եւ մեր նշանները սուտ նանուկները խուլ են, համր են խաւարի մէջ են: Աստուած ուզածը կը մուրեցնէ, և ուզածը ուղիղ ճամբան կառահնորդէ:

40. Ըսէ՛, «ձեր մասին ի՞նչ գաղափարի կը ծառայէք, եթէ Աստուծոյ պատիժն ձեզի հասնի կամ հանդերձեայի ժամը նշէ ձեզ, միթէ Աստուծմէ զատ ուրիշին պիտի աղօթէք եթէ հաւատարիմներ էք»:»

41. Ո՛չ, այլ կալօթէք անոր որ, եթէ կամի, կը հեռացնէ ձեզմէ այն բանը որուն համար աղօթեցիք, և դուք կը մոռնաք ձեր ընդունած ընկերները:

42. Եւ մենք քեզմէ առաջ մարգարէները զրկած ենք աղբերու և զանոնք փորձանքներով և վնասներով պատժեցինք որպէս զի խոսարհին:

43. Բայց անոնք մեր փորձանքներուն հանդիպած առեմն փոխանակ խոսարհելու՝ որ իրենց համար լա-

պիտի ըլլար՝ սրտերնին պնդացան և անոնց գործերը սատանան պատրաստեց:

44. Եւ երբ անոնք մոռցան իրենց յիշեցուցուած բանը, մենք անոնց բացինք ամէն բանի դռները, և երբ որ անոնք իրենց տրուած բաներով կուրախանային, մենք յանկարծ զանոնք ճղմեցինք և անոնք յուսահատեցան:

45. Եւ չարագործ ազգին արմատը կտրուեցաւ քիւսք աշխարհներու Տէր Աստուծոյս:

46. Դուն ըսէ՛, ի՞նչ կը կարծէք, եթէ Աստուած ձեր լսողութիւնը և տեսչութիւնը առնէ և ձեռք սրտերուն կնիք զարնէ, Աստուծմէ զատ ո՞վ է այն աստուածը որ զանոնք ձեզ տալ: Նայէ՛, մենք որչափ այլազան նշաններ կաւելցնենք, և անոնք դարձեալ ետ կը կենան:

47. Դուն ըսէ՛, «եթէ Աստուծոյ պատուհասը յանկարծ կամ յայտնի ձեր վրայ գայ, կը կարծէք որ չարագործներու ազգէն զատ ուրիշ մէկը կորսուի:

48. Եւ մենք առաքեալները զրկեցինք միայն խոստումներ և սպասնայիքներ ընելու համար, ուրեմն որոնք որ կը հաւատան և բարի գործեր կը կատարեն անոնց համար վախ չկայ և չեն տնորիր:

49. Բայց որոնք որ մեր նշաններուն «սուտ է» կրտսեն, անոնք տանջանք կը կրեն իրենց գործած չարութեան համար:

50. Ըսէ՛ թէ ես ձեզ չեմ բեր որ Աստուծոյ գանձերը իմ քովս են, և ոչ ալ գաղտնիքը զիտեմ և ոչ ալ ձեզ կրտսեմ թէ ես հրեշտակ եմ. ես միայն կը հետեւիմ յայտնութեամբ ինձ տրուածին: Ըսէ՛, «Միթէ կոյրը և աչք ունեցողը հաւասար են»: Ի՞նչու չէք մտածեր:

51. Արդ, անոնք որ կը վախնան թէ իրենց Տիրոջ քով պիտի ժողովուրին, խրատէ որ անոնց համար

անկէ դատ ուրիշ պաշտպան չկայ և ոչ ալ բարեխօսող, մինչև որ երկիւղած ըլլան:

52. Իրիկուս առաօտ իրենց Տիրոջը ազօթելով անոր երեսը տեսնել ու գոգնելը մի արհամարհութիւնք մասին զուն պատասխանատու չես, ոչ ալ անոնք քու մասիդ բաւով մը պատասխանատու են: Բայց եթէ զանոնք մերժես անիրաւենրէն կ'ըլլաս:

53. Եւ այսպէս մենք փորձած ենք զանոնք իրար մով որ ըսեն «արդեօք մեր մէջէն ասոնց համար է որ Աստուած իր շնորհը պարգևած է: Մի՞թէ Աստուած չգիտէր իր երախտագէտները:

54. Մեր նշաններուն հաւատագողները երբ քու քովդ գան բէ «ձեզի խաղաղութիւն ըլլայ՝ ձեր Տէրը ողորմութիւնը իրեն պարտակաւութիւն ստանձներ է: Արդ, ձեզմէ մէկը տգիտութեամբ գիշուցիւն ընելէ յետոյ եթէ զղջայ եւ բարեգործութիւններ ըէէ այդ պարագային նա ներող ողորմած է:

55. Եւ նշանները մենք այսպէս բացատրեցինք որ մեղաւորներու ճամբան յայտնի ըլլայ:

56. Դուն ըսէ՛ «ինձ արգիլուած է Աստուծմէ զատ ձեր ազօթաններն պաշտել»: Ըսէ՛ «ես ձեր հաճոյքներուն չեմ համակերպիր, որպէսզի չմոլորուիմ եւ չիտակ ճամբէն չշեղիմ»:

57. Ըսէ՛, թէ ես Տիրոջս կողմէ նշաններ ունիմ, և դուք անոր համար «սուտ է» կրակք. և դուք անոր չուտ գալը կուղէք որ իմ ձեռնհասութեանէս վեր է և այդ իրաւունքը միայն Աստուծոյ կը պատկանի: Նա է արդարութեամբ վճարը:

58. Դուն ըսէ՛, «ձեր չուտ գալը ուղաճնիդ եթէ իմ ձեռնհասութեանս տակ ըլլար, հիմակ գործը իմ և ձեր մինչև վճուած կըլլար: Բայց Աստուած լաւ կը ճանչնայ անիրաւենրը:

59. Գաղանիքին բանալիները անոր քով են անկէ:

զատ մէկը չգիտեր, և գիտէ նա ցամաքի և ծովի մէջ եղածները, և առանց անոր գիտութեան տերև մը չ'յնար: Եւ երկրի խաւար տեղերուն մէջ չկայ ոչ չոր և ոչ ալ թաց բան մը որ գիրքին մէջ անոր ծանօթ չըլլայ:

60. Այն է գիշերը ձեզ մեռելի պէս ընողը և թէ ցերեկը ձեր գործածը գիտէ. յետոյ նա ձեզ յարութիւն առնել պիտի տայ որ սրտչեայ նպատակը կատարուի. յետոյ դուք անոր քով պիտի երթաք, յետոյ ձեր ըրածները նա ձեզ կ'իմացնէ:

61. Եւ նա իր ծառաներուն իշխողն է. և նա ձեր վրայ պահապաններ կը դրկէ որ երբ ձեզմէ մէկին մահը հասնի, մեր դրկածները մեռցնեն զանի և անոնք չեն դանդաղիր:

62. Յետոյ անոնք իրենց ճշմարիտ պաշտպանը եղող Աստուծոյ կը գանան: Արդ, զատուը նա է, և ան չուտ հաշիւ տեսնող է:

63. Դուն ըսէ՛. «ձեզ ս'վ կազատէ ցամաքի և ծովի խաւարէն, որուն դուք կազօթէք գաղանի ըսելով, «մեզ ազատէ ասկէ որ երախտագէտ ըլլանք»:

64. Ըսէ՛, «Աստուած է որ ձեզ անկէ և ամեն փորձանք՝ երէ կազատէ որ շնորհակալ ըլլաք»:

65. Ըսէ՛, «ան կրնայ ձեր վրայ տանջանք դրկել ձեր վերի կողմէն կամ ոտքի տակէն կամ ձեզն կուսակցութիւններու բամնել որ իրարու գէշութիւն ընէք»: Տես՛, մենք ինչպէս զանազան նշաններ կուտանք որհասկնան:

66. Բայց քու ցեղդ զայն սուտ կը համարէ. մինչդեռ ճշմարտութիւն է այն: Դուն ըսէ՛ թէ «ես ձեր պաշտպանը չեմ. ամեն մէկ լուրի համար ստնան մը կայ. և դուք ասիկա քիչ ատենէ կ'իմանաք:

67. Եւ երբ կը տեսնես թէ անոնք մեր նշաններու մասին կը վիճին, անոնցմէ ետ քաշուէ՛, մինչև

ար անոնք ուրիշ խօսքի մը սկսին: Բայց եթէ սատանան այս քեզ մոռցնէ. ու երբ յիշես, ալ մի նստիր չարագործներու ցեղին հետ:

68. Դատաստանէ վախճողներուն համար բան մը չկայ. այլ սա զեկոյց մըն է որ զգոյշ ըլլան:

69. Եւ Իրենց կրօնքը խաղալիք ընող և պարապ բան համարողները ձգէ. և աշխարհի կեանքով ճշգրտաբարտադրողներուն յիշեցուր որ անձ մը եթէ իր գործածածովը վտանգուի, անոր համար Աստուծմէ զատ պաշտպան և բարեխօս չկայ. և ինչ փրկանք որ ալ բերէ չընդունուիր: Ասոնք իրենց գործով ինքզինքնին վտանգողներ են: Անոնց խմելիքը տաք է. և ծանր ասնջանք կայ անոնց անհաւատութեանը համար:

70. Դուն Ըսէ՛, «Միթէ Աստուծմէ ուրիշի՞ աղօթք ընենք, որմէ ոչ օգուտ կայ և ոչ վնաս. և Աստուած սեղ առաջնորդելէ յետոյ ետ դառնանք ան մարդուն պէս զոր սատանաներն ճամբէն շեղեցուցած են որ երկրի վրայ ի զուր թափառի և որուն բարեկամները զանի ուղիղ ճամբուն կը հրաւիրեն «մեր քովը եկուր ըսելով» Դուն ըսէ՛, «ուղիղ առաջնորդութիւնը Աստուծոյ առաջնորդութիւնն է. և մեզի հրաման կայ որ մենք միւսիմ ըլլանք»:

71. Եւ եթէ աղօթքը կատարէք եւ երկրւզած ըլլաք, դուք անոր քովը պիտի ժողովուրիք:

72. Երկնքները և երկիրը ճշմարիտ ստեղծողը ան է. և երբ որ «եղի՛ր» ըսէ, կրլլայ:

73. Անոր խօսքը ճշմարիտ է. փողը փչած օրը թագաւորութիւնը անորն է. նա է գաղտնիքը և յայտնին գիտցողը, և նա է իմաստունը ու գիտունը:

74. Յիշէ այն ատենը որ Աբրահամ ըսաւ իր հօրը՝ Ազարին, « դուն կուռքերը Աստուած կընդունիս. և կը տեսնեմ որ դուն և քու ցեղդ բացայայտ մօլորութեան մէջ էք»:

75. Եւ այսպէս մենք ցոյց տուինք Աբրահամի երկնից և երկրի թագաւորութիւնը որ հաստատ հաւատացեալ ըլլայ:

76. Երբ գրչերը հասաւ և աստղ մը տեսաւ, ըսաւ թէ այս իմ Տէրս է. բայց երբ կորսուեցաւ աստղը, ան ըսաւ ևս կորսուողները չեմ սիրեր:

77. Եւ երբ յուսինը տեսաւ որ ծագեցաւ, ըսաւ. «սա իմ Տէրս է» բայց երբ մարդ մտաւ ըսաւ «եթէ իմ Տէրս զիս չառաջնորդէր, ևս մօլորեալ ժողովուրդէն կ'ըլլամ»:

78. Երբ արեւին ծագիլը տեսաւ, «այս իմ Տէրս է աս աւելի մեծ է» ըսաւ. բայց երբ որ այն ալ մարը մտաւ ըսաւ, «Ո՛վ իմ ազգս, ևս ձեր չաստուածնեքէն ազատ եմ»:

79. «Ես երեսու բարեպաշտօրէն կուղղեմ անոր որ երկինքները ու երկիրը ստեղծած է. և ևս կուպաշտաներէն չեմ»:

80. Բայց անոր ցեղը իրեն հետ վէճի սկսաւ. ան ալ ըսաւ, «Աստուծոյ մասին ինձ հետ կը վիճիք. ան զիս առաջնորդեց. ևս ձեր դրած չաստուածնեքէն չեմ վախնար բացի իմ Տիրոջ հրամանէն. իմ Տէ՛րս գիտութեամբ ամենակարող է. դուք չէ՞ք խորհեր այսբանի մասին»:

81. «Ես ի՞նչու վախնամ ձեր դրած կուռքերէն երբ դուք Աստուծոյ ընկերներ դնելէ չէք վախնար որուն համար ձեզի արտօնութիւն մը չէ տրուած»: Այժմ այդ երկու հաստուածներէն ո՞րը աւելի ճշմարիտ է, գիտցէք եթէ կրօնքնիդ գիտէք:

82. Անոնք որ հաւատալով, իրենց հաւատքին աւերաւութիւն չեն խառներ, անոնք ապահով են, և ուղիղ առաջնորդուած են:

83. Աբրահամին մեր տուած փաստերը՝ անոր ցեղին ղէմ ասոնք են: Մենք ուղածնուս աստիճանը կը բարձ-

բացնենք որովհետև քու Տէրդ իմաստուն և գիտուն է :

84. Եւ անոր տուինք Իսահակը և Յակոբը և երկուքն ալ առաջնորդեցինք . և անկէ առաջ ալ առաջնորդեցինք Նոյն և անոր սերունդէն Դաւիթը և Սողոմոնը և Յովսէփը և Մովսէսը և Ահարոնը և այսպէս կը վարձաարենք բարիք գործողները :

85. Եւ Չաքարիան և Յովհաննէսը և Յիսուսը և Եղիան որոնց ամենն ալ արդարենք են :

86. Եւ Իսմայիլը և Եղիսէն և Յովնանը և Ղովտը . որոնց ամենն ալ աշխարհներու վրայ գերազանց բերինք :

87. Եւ անոնց հայրերը և սերունդները եւ եղբայրները զատելով ուղիղ ճամբուն մէջ առաջնորդեցինք :

88. Այս Աստուծոյ առաջնորդութիւնն է . Աստուած անով կառաջնորդէ իր ծառաներէն որր որ կամի բայց իժէ կուռքեր պաշտէին , անոնց գործերը , պարագը կերթային :

89. Ասոնք այն անձերն են , որոնց մենք տուած ենք գիրքը և իմաստութիւն և մարգարէութիւնը Արդ . եթէ անոնք ասոր չհաւատան , մենք ուրիշ ժողովուրդ մը փոխանորդ կարգեր ենք որ անոր մասին անհաւատ չեն :

90. Ասոնք այն անձերն են որ Աստուած կ'առաջնորդէ զիրենք . ուրեմն դուն հետեւէ անոնց առաջնորդութեանը : Դուք ըսէ՛ , «ես անոր համար ձեզմէ վարձ չեմ պահանջեր . սա խրատ մըն է միայն բոլոր աշխարհի համար :

91. Եւ անոնք Աստուծոյ արժանիքը պէտք եղածին պէս չեն գիտեր , քանի որ կ'ըսեն թէ Աստուած ոչ ոքի բան մը չէ ղրկած , Ըսէ՛ , «Ո՞վ իջեցուցած է այն գիրքը զոր Մովսէս բերաւ ի լոյս և յառաջնորդ

դութիւն մարդկանց և զոր դուք մաքազաթի վրայ գրելով կը յայտնէք և շատը կը ծածկէք , և անկէ սովորեցաք ձեր հայրերուն չգիտցած բաները » : Դուք ըսէ՛ , « Աստուած . ձգէ զանոնք որ իրենց մաքերուե մէջ եղածներովը խաղան :

92. Եւ մեզ այս իջեցուցած գիրքը օրհնուած է . իրմէ առաջ եղածը կը հաստատէ և դուն պէտք է խրատես մայրաքաղաքին և անոր շուրջը գտնուողները , և հանդերձեալին հաւատացողները անոր ալ թող հաւատան և աղօթքնին գոց սովրելով թող կուտարեն :

93. Աստուծոյ մասին սուտեր յերևորողէն աւելի չարագործ ո՞վ կայ , կամ այն մարդէն աւելի որ կըսէ թէ «ինձ յայնութիւն չեղած է» , մինչդեռ անոր բան մը յայտնուած չէ . և այն մարդէն աւելի որ կըսէ , «ես յայտնութիւն կ'իջեցնեմ Աստուծոյ իջեցուցածին նման» . բայց դուն այդ չարագործները տեսնելու ես մահուան տագնապներուն մէջ , յորում հրեշտակները ձեռքերնին երկնցուցած , կըսեն «դուք հանեցէք այսօր ձեր հողիները , դուք Աստուծոյ մասին անիրաւ խօսքեր կ'ընէք և անոր նշաններուէ դէմ հպարտացած ըլլալնուդ համար խայտառակօրէն պիտի պատժուիք » :

94. «Եւ հիմա մէկիկ մէկէկ մեր քով կուգաք ինչպէս որ մենք առաջին անգամ ձեզ ստեղծեցինք . և մեր ձեզ տուածը ետեւիդ ձգեր էք , և ձեր բարեխօսները ձեզի հետ չենք տեսներ որոնք կը կարծէիք թէ Աստուծոյ ընկերներ են ձեզի համար . բայց հիմա բաժնուած էք դուք իրարմէ և ձեզմէ հեռացած են ձեր երեակայածները » :

95. Աստուած կը բուսցնէ հացահատիկը և արմաւի կուտը , նա կը հանէ կենդանին մեռեալէն և մեռեալը կենդանիէն : Ահա այս է Աստուածը , դուք ի՞նչպէս կը մերժէք :

96. Նա կը ծագեցնէ առաւօտը եւ գիշերը հանգըստութեան համար եւ արեւը ու լուսինը հաշիւներու համար կարգաւորած է: Այս հղօրին եւ իմաստունին որոշածն է:

97. Ան է որ ձեզ համար աստղերը կարգադրեր է որպէսզի ցամաքի եւ ծովու մէջ մութին անոնցմով ճամբան գտնէք: Ան մենք աս նշանները պատրաստած ենք հասկցող ժողովուրդի համար:

98. Դարձեալ ան է որ ձեզ մէկ հատիկ հողիէ մը ստեղծելով, ձեզի հաստատ եւ հանդիստ սեղ որոշած է. մենք հասկցող ժողովուրդի համար արգէն մեր նշանները գրկեր ենք:

99. Եւ զարձնալ ան է որ երկինքէն ջուր կիջեցնէ եւ մենք անով կը հանենք ամեն տեսակ բոյսերը եւ կանանջիղեաները. կարգաւ շարուած հատիկներ եւ արմախնիի ճիւղերէն խիտ խիտ արմաւներ, խաղողի ողկոյզներ եւ ձիթենիներ եւ իրարու նըմանող ու չնմանող նուոք կը հանենք: Դիտեցէք անոնց պտուղներուն բուսնելու եւ մեծնալու ատենը. արդարեւ անոնց մէջ նշաններ կան հաւատացող ժողովուրդի համար:

100. Բայց անոնք զեւերը Աստուծոյ ընկեր ըրին, մինչդեռ ան ստեղծած է զանոնք, եւ տգիտութեամբ անոր որդիներ եւ աղջիկներ յարմարցուցած են: Աստուած մաքուր ու բարձր է իբեւ յատկացուցուած բաներէն:

101. Նա է երկինքները ու երկիրը ստեղծողը. ինչպէս նա զաւակ կունենայ. մինչդեռ ան տիրուհի ալ չունի եւ բոլոր բաները ինք ստեղծեց:

102. Նա է ձեր Տէր Աստուածը. անկէ զատ ուրիշ Աստուած չկայ. ամեն բանի ստեղծիչը ան է. ուստի զանի պաշտեցէ՛ք, եւ ան է ամենին խնամատարը:

103. Աչքերը զանի չեն ըմբռներ, բայց ան բոլոր

աչքերը կ'ըմբռնէ. ան չնորհող է եւ սեղեակ է:

104. Ձեր տիրոջմէ ձեզ յայտնի ապացոյցներ եկած են: Արդ, ով որ կը տեսնէ ինք կօզաութի, ով որ չտեսներ ինք կը մնասութի. եւ ես ձեր վրայ պահուպան չեմ:

105. Այսպէս մենք նշանները կը բերենք, թէ եւ անոնք «զուն զատ կաննես կոր» բսեն. մենք գիտցող ժողովուրդին կը յայտնենք:

106. Քու Տիրոջդ կողմէ քեզ յայտնուածին հետեւէ՛ դու. անկէ զատ Աստուած չկայ. եւ կռապաշաներէն ետ քաշուէ:

107. Բայց եթէ Աստուած ուղեր անոնք կռապաշտ չէին ըլլար, մենք քեզ անոնց վրայ հովիւ չկարգեցինք, եւ դու անոնց պաշտպանը չես:

108. Եւ մի հայոյէք անոնց որոնք Աստուծմէ զատ ուրիշի կաղօթեն. վասնզի անոնք ալ թշնամութեամբ ամբ եւ տգիտութեամբ Աստուծոյ կը հայնոյն: Այսպէս մենք ամեն մէկ ժողովուրդի համար գործեր պատրաստած ենք. անոնք յետոյ իրենց Տիրոջը պիտի դառնան. եւ նա կիմացնէ անոնց գործածները:

109. Եւ անոնք մեծ երգում ըրին Աստուծոյ թէ, եթէ հրաշք մը յայտնութի անոնց համար, անպատճառ պիտի հաւատան: Դուն ըսէ, «հրաշքները մի միայն Աստուծոյ քով են, եւ զուք չէք գիտեր»: Վասն զի եթէ յայտնութի իսկ, չեն հաւատար,

110. Եւ մենք զարձուցինք անոնց սրտերը եւ աչքերը, ինչպէս որ առաջին անգամ չը հաւատացին, եւ մենք զանոնք ձգեցինք որ իրենց մտութեան մէջ աստանին:

111. Մենք եթէ անոնց հրեշտակներ ալ զրկենք, ու մեռեալները անոնց հետ խօսին եւ ամեն բան

անոնց առջեւը հաւաքենք իրի, անոնք չեն հաւատար ի բաց առեալ Աստուծոյ կաճենալու պարագան. բայց անոնց շատը ազէտ է:

112. Եւ այսպէս մենք ամեն մէկ մարդարէի համար թշնամի ըրած ենք մարդոց և դեւերու սատանաները. որ զիրար խարոզ զարդարուն խօսքեր խօսին: Եթէ քու Տէրդ ուզէր, անոնք անանկ չէին ընէր. Ուրեմըն ձգէ զանոնք և անոնց զրպարտութիւնները:

113. Հանգերձեալին չնուատացողներուն սիրտերը անոնց կը յարին եւ զանոնք կը հաւնին եւ անոնց վախճանները կը վայելեն:

114. Աստուծմէ գատ ուրիշ դաաաւոր միթէ ուղեմ: Եւ է որ իջեցուցած է ձեզ բացատրող գիրքը. նաեւ անոնք՝ որոնց մենք գիրք տուած ենք գիտեն որ քու Տիրոջ կողմէ իջցաւ է ստուգիւ: Արդ, կասկածողներէն մի՛ ըլլար:

115. Եւ քու Տիրոջ ճշմարիտ եւ արդար խօսքերը կատարուեցան. անոր խօսքերը փոխող չկայ. նա կը լսէ ու գիտէ:

116. Եւ եթէ դուն երկրի վրայ եկող շատերուն հնազանդիս, անոնք քեզ կը չեղեցնեն Աստուծոյ ճամբայէն. անոնք միայն կարծիքի կը հետեւին եւ միմիայն ստախօսներ են:

117. Ըջմարիտ որ քու Տէրդ գիտէ թէ ով է անոր ճամբէն չեղողը. եւ ան գիտէ ուղիղ առաջնորդեալները:

118. Ուստի կերէ՛ք Աստուծոյ անունը վրան յիշուած բանը, եթէ կը հաւատաք անոր նշաններուն:

119. Եւ ի՞նչու համար չուտէք Աստուծոյ անունը վրան յիշուածը: Եւ արդէն ձեզ բացատրած է, թէ ստիպեալ ըլլալու պարագայէն դուրս, ինչ բան արդիւրած է ձեզ: Ծատերը իրենց ցանկութեանց հետեւանօք տգիտարար ճամբէն կը չեղին կոր: Բայց

քու Տէրդ լաւ գիտէ չափազանցողները:

120. Մեղքին արտաքինը ու ներքինը ձգեցէք. վասն զի անոնք որ մեղք կը գործեն, իրենց մեղքին համար պատիժնին պիտի կրեն:

121. Եւ մի ուտէք Աստուծոյ անունը վրան չիյնչուած բանը. վասն զի այն պիղծ է: Ահա սատանաները պիտի թելագրեն իրենց բարեկամները որ ձեք հետ վիճարանին. այդ, եթէ դուք անոնց համակերպիք, կոպտաշունք էք:

122. Եւ միթէ խաւարի մէջ ըլլալով հոնկէ դուրս կլլել չկրցող անձին կը նմանի՞ այն, զոր մենք կենդանացուցինք իր մեռեալ վիճակէն եւ լուս տուինք անոր որ մարդոց մէջ չի՛ր: Մենք այսպէս պատրաստած ենք անհաւատներու ընկիւքները:

123. Եւ այսպէս ամեն քաղաքի մէջ մեծամեծ շարագործներ զրեր ենք որ հոն խարդաւանք գործեն. բայց անոնք միայն իրենց անձի գէժ կը խարդաւանեն ու չեն գիտեր:

124. Եւ երբ անոնց նշաններ եկան անոնք բախէ թէ մենք չենք հաւատար, մինչեւ որ Աստուծոյ մարգարէներուն տրուածը մեզ ալ չտրուի: Բայց Աստուած գիտէ թէ ո՞ւր պէտք է ցոյց տայ իր մարգարէները: Յանցաւորները իրենց գործած խարդաւանքին համար չուտով պիտի պատժուին Աստուծմէ խիտտանջանքով:

125. Ուստի, Աստուած իր առաջնորդել ուզած անձին սիրտը կը բանայ գէպի իսլամը. իսկ որը որ մտորեցնել ուզէ, անոր սիրտը խիտ եւ նեղ կընէ, իբրեք թէ երկինք ելլելու: Աստուած այսպէս դժուարութիւն կուտայ անհաւատներուն:

126. Եւ անա այս է քու Տիրոջդ ուղիղ ճամբան եւ մենք արդէն բացատրած ենք նշանները հասկցող ցնղին:

127. Անոնց համար իրենց Տիրոջ քով հանգստա-  
բան կայ: և նա անոնց պաշտպանն է անոնց գոր-  
ծերուն համար:

128. Եւ որ մը անոնց բոլորը հաւաքելով պիտի  
ըտէ. «Ո՛վ դեւերու ցեղ, դուք մարդոցմէ աւելի էք  
եղեր»։ Բայց մարդոցմէ անոնց բարեկամ եղողներ  
կըսեն, «Ո՛վ Տէր մեր մենք իրարմէ օգտուեցանք, և  
հասանք քու մեզ համար որոշած պայմանամբից»։  
Նա ալ կըսէ, «ձեր բնակավայրը կրակն է» և անոնք  
յաւիտեանս հոն կը մնան, Բայց ոչ Աստուծոյ կամե-  
ցածները: Ահա քու Տէրդ իմաստուն և գիտուն է:

129. Եւ այսպէս անիրաււերէն մէկ քանին միւս-  
ներուն բարեկամ պիտի ընենք իրենց գործերուն  
համար:

130. Ո՛վ դեւերու և մարդոց ցեղ, միթէ ձեզի  
ձեր ինններէն մարգարէներ չեկ՞ան, որ պատկեցին ձեզ  
իմ նշաններս և սպառնացան ձեզ թէ այս օրուան  
պիտի հանդիպիք: Անոնք ալ ըսին, «մենք մեզ  
դէմ վկաններ ենք»։ Եւ աշխարհի կեանքը դանոնք  
խաբած է. և անոնք իրենց դէմ կը վկային թէ ան-  
հաւատ էին:

131. Այս պատճառաւ է որ քու Տէրդ անիրաւու-  
թեամբ քաղաք մը չլնջեր, երբ անոր ժողովուրդը  
անհոգ կը գտնուի:

132. Իւրաքանչիւրի համար իրենց արարքին հա-  
մեմատ աւտիճաններ կան և քու Տէրդ անոնց ըրա-  
ծին անտեղեակ չէ:

133. Եւ քու Տէրդ մեծահարուստ ողորմած է. եթէ  
կամի ձեզ կ'ոչնչացնէ և ձեզմէ յետոյ իր ուզածը կը  
բերէ, ինչպէս որ ձեզ ուրիշ ցեղի մը սերունդէն  
ստեղծեց:

134. Ահա ձեզի կանխաւ եղած սպառնալիքը պիտի  
իրականանայ անպատճառ և դուք զայն չէք կրնաք  
յաղթել:

135. Ըսէ՛, ո՛վ իմ ժողովուրդս, գործեցէք ձեր  
կարողութեան շահով: ինչպէս ևս ալ կը գործեմ.  
դուք քիչ յետոյ կը հասկնաք,

136. Թէ՛ հանդերձեալ աշխարհին վերջը որունը  
կրլլայ: Ի հարկէ չարագործները երջանկութիւն չեն  
գտներ:

137. Աստուծոյ ստեղծած բերքէն և անասուննե-  
րէն անոնք Աստուծոյ բաժին որոշեր էին, և իրենց  
գաղափարով ըսած էին, թէ սա Աստուծոյ է և սա  
ալ մեր աստուածընկերներունն է: Բայց անոնց աս-  
տուածընկերներուն բաժինը Աստուծոյ չհասաւ, և Աս-  
տուծոյնը հասաւ անոնց աստուածընկերներուն: Ա-  
նոնց որոշուող ի՛նչ զէջ է:

138. Եւ այսպէս անոնց ընկերները որոշած են կը-  
ռապաշաներէ շատերուն համար, որ իրենց զաւակ-  
ները սպաննեն, որպէսզի զանոնք ոչնչացնեն և ա-  
նոնց կրօնքը աւերեն: Բայց եթէ Աստուած կամենար  
չէին ըներ, ուստի ձգէ զանոնք և իրենց բրօժ զըր-  
պարտութիւնները:

139. Անոնք իրենց կարծիքով կըսեն, թէ «այս ա-  
նասունները ու բուսքերը զո՞ն են, և մեր ուզածէն  
քիտ ոչ ոք չկրնար ուտել»: Բայց անասուններ կան  
ուսնց կանակը բնօրնելու չէ և անասուններ ալ  
կան որոնց վրայ Աստուծոյ անունը չի յիշուի: Ա-  
նոր զրպարտութիւն ընելը արգելուած է, կրօնն,  
անոնց զրպարտութեանը համար պիտի պատժէ  
զանոնք:

140. Եւ դարձեալ կըսեն, թէ այս անասուններու  
փորը եղածը արունհրուս համար ներեալ է, իսկ  
մեր կանանց համար արգելեալ է. Բայց եթէ մեռած  
վիժէ, անոնք մեղսալից են և անոնց պատիժը պի-  
տի տայ, վասն զի նա իմաստուն ու գիտուն է:

141. Արդ, անոնք որ տգիտութեամբ և չիմարա-

քար իրենց զաւակները կ'սպաննեն և անոնք որ Աստուծոյ պարգեւածը արգիւրեալ կը հռչակեն ստու-  
թեալք, պիտի մնասուն. անոնք մայրեալներ են :

142. Եւ նա է որ պարգեւած է մշակուած ու ան-  
մշակ այգիները, արմաւենիները և ուտուելիք այ-  
լազան բուսքերը և ձիթենին և իրարու նմանոյ ու  
աննման նուար : Կերէ՛ք անոնց պտուղէն և քաղելու  
ատեն տուէք անոր տուրքը և մի շոյալէք. որովհե-  
տե նա չսիրեր շոյալները :

143. Եւ անասուններու մէջ թէ՛ բնօ կրօններ և  
թէ՛ մորթուելիքներ կան. դուք կերէք Աստուծոյ ձեզ  
իբր սնունդ պարգեւածը և սատանայի հետքերուն  
մի հետեիք, վասնզի նա ձեր ծանօթ թշնամին է :

144. Ու թը զոյց է. ոչխարներէն երկերկու և այ-  
րեծէն երկերկու : Ըսէ՛ «արգեօք նա արուններէն եր-  
կուքը թէ էգերէն երկուքը արգ. յաճ է իբր պղծ,  
կամ էգերու արգանդը գտնուածնէրք» : Արգ գիտու-  
կանօրէն ինձ իմացուցէք եթէ նաւատարիմներ էք :

145. Եւ ուղտերէն երկուքական և արջառներէն  
երկուքական : Ըսէ՛. «նա արգեօք արուններէն եր-  
կուքը թէ էգերէն երկուքը, կամ էգերու արգանդը  
գտնուածնէրք արգիւած է իբր պղծ : կամ դուք  
ներկայ էիք երբ որ Աստուած այգ հրամայեց ձեզ :  
Բայց Աստուծոյ դէմ սուտեր յերբողէն աւելի չարա-  
գործ ո՛վ կայ, որ ագիտութեամբ կը մոլորեցնէ քար-  
գիկը : Աստուած չարագործները չառաջնորդեր :

146. Ըսէ՛, «ինձ եղած յայտնութեան մէջ բացի  
սատկածէն կամ արիւնը թափածէն կամ խող : մի-  
սէն՝ որ պղծ է կամ Աստուծոյ անունը չյիշուած մոր-  
թուածէն զատ ուրիշ բան մը չեմ գտներ որուն ու-  
տուիլը արգիւած ըլլայ :» Բայց եթէ անձ մը՝ առանց  
ապստամբ կամ ըմբոստ ըլլալու՝ ստիպուած ըլլալ  
աւտու, անոջ կը ներէ քու Տէրդ որ ողորմած է :

147. Եւ մենք հրէից իբր պղծ արգիւցցինք բոլոր  
սմբակաւորները, և արջառներէն ու ոչխարներէն և  
լած երւզերը, միայն ասոնց մէջ ըին և աղիքներուն  
վրայի և ոսկորներուն երւզերը չենք արգիւած : Ա-  
նոնց ապստամբութեանը համար այս պատիժը տու-  
ինք անոնց : Բայց մենք արգար ենք :

148. Արգ, եթէ անոնք քեզ ստախօս համարեն,  
դու բտէ՛, «ձեր Տէրը հարուստ է և ողորմած է. նա  
իր պատուհասը ետ չառներ յանցաւորներու ազգէն :»

149. Աստուծոյ բնկեր տուողները պիտի բռն. թէ  
եթէ Աստուած կամենար, ոչ մենք և ոչ այ մեր  
հայրերը ընկեր շէինք տար և բան մը ալ պեղծ չէ-  
ինք համարերք : Բայց անոնցմէ առաջ եղողներն ալ  
այսպէս ներքեցին, մինչև որ մեր պատուհասը կը-  
րեցին : Ըսէ՛, «եթէ ձեր մէջ գիտութիւն ունիք, շե-  
զի պարզեցէք. դուք միայն կարծիքի կը հետեիք և  
միայն սուտ կը խօսիք» :

150. Ըսէ՛, ամենակատարեալ փաստը Աստուծոյ  
քովն է. ուստի եթէ նա ուզէր, ձեր բոլորն ալ կա-  
ռաջնորդէրք :

151. Ըսէ՛, «ձեր սա վկաները բերէք որ վկայեն  
թէ Աստուած այսինչ բանը արգելած է» : Եւ, եթէ  
անոնք վկայեն, դուն անոնց հետ մի վկայեր, և  
մեր յայտնութիւնները ներքողներու հաճուքին մի  
հետեիք, անոնք հանգերծեալին չեն նաւատար և ի-  
րենց Տիրօջը նմաններ կը դնեն :

152. Գուէ՛ք, «եկէք, ես ձեզի կարգամ թէ  
Աստուած ձեզի ինչ արգիւրեալ է. սա է որ անոր բան  
մը ընկեր չդնէք, և ծնողքնուդ բարիք ընէք. և զա-  
ւակնիդ չսպաննէք աղքատութեան վախով. մենք  
ձեր և անոնց սնունդը կուտանք, և յայտնի ու-  
գաղա՛նի մեղքեր չգործէք, և ինքնասպանութիւն մի  
ընէք զոր Աստուած արգելած է, բացի արդարացի

ըլլալու պարագայէն: Անոր պատուիրածները անասոնք են. հասկցէ՛ք»

153. Որքերու ինչքին մի միայն ազնուօրէն մօտեցէք մինչև որ անոնք չափանաս ըլլան. և չափու կշիռ քը ճշգուծեամք վճարեցէք. մենք մարդու մը իր կարողութենէն վեր պատուէր չենք տար. և ձեր խօսածը կատարեցէք նոյնիսկ ազգականի հանդէպ. և Աստուծոյ ուխտը յարգեցէք. նա այս հրատարած է ձեզ որ յիշէք:

154. Այս է իմ ուղիղ ճամբաս, ասոր հետեցէք, և ուրիշ ճամբու մի՛ հետեիք, որովհետև բաժան բաժան կըլլաք անոր մէջ: Նա կը պատուիրէ ձեզ որ երկիւզած ըլլաք:

155. Յետոյ Մովսէսին գիրքը տունք բոյս բարի բաներու համար, իբր բացատրութիւն ամեն բանի և ոգորմութիւն, որպէսզի հաւատան թէ իրենց Տիրոջը պիտի հանդիպին:

156. Եւ այս մեր իջեցուցած գիրքը օրհնուած է. հետեցէք անոր և երկիւզած եղէք որ ոգորմութիւն գանէք:

157. Դուք չըսէք որ մեզմէ առաջ միայն երկու ազգերու գիրք իջեցուցուած և մենք զանոնք չէինք կրնար հասկնալ:

158. Եւ կամ չըսէք որ եթէ գիրքը մեզի իջեցուցուած ըլլար, մենք անոնցմէ աւելի շիտակ առաջնորդուածներ կ'ըլլայինք»: Այժմ ձեր Տիրոջ կողմէ ձեզի համար յայտնութիւն և առաջնորդութիւն և ոգորմութիւն եկած է: Եւ Աստուծոյ նշաններուն «սուտ է» ըսելով ետ քաշուողէն աւելի անիրաւը ո՞վ է: Մեր նշաններէն ետ քաշուողները մենք պիտի պատժենք ծանր պատժով:

159. Արդեօք անոնք Աստուծոյ հրեշտակին անոնց քով գալէն, կամ քու Տիրոջ գալէն կամ Տիրոջը եր-

բեմն նշաններու գալէն գատ ուրիշ բանի կ'սպասեն: Քու Տիրոջը մէկ քանի նշանները գալու օրը անոր հաւատար ժարգու օգուտ չունի եթէ առաջուց չէր հաւատար և կամ իր հաւատքին մէջ բարիք չէ գործեր: Ըսէ՛ք. «կ'սպասէ՞ք, մենք ալ կ'սպասենք»:

160. Ահա իրենց կրօնքը բաժան բաժան ընելով հերձուած յարուցանողներուն հետ դուն գործ չունես. անոնց գործը Աստուծոյ մնացած է. նա յետոյ անոնց պիտի յայտնէ թէ ինչ էին րրած:

161. Ով որ բարիք մը գործէ, անոր տասնապատիկը կ'ստանայ. և ով որ չարիք գործէ, այն միայն նոյն չափով կը պատժուի. և անոնց անիրաւութիւն չըլլար:

162. Ըսէ՛, «իմ Տէրս զիս առաջնորդած է հաւատա կրօնքով ուղիղ ճամբայէն՝ Աբրահամի բարեպաշտ ազգին նման, որ բազմաստուածեաններէն չէր»:

163. Դու քսէ՛, «Ահա իմ աղօթքս, և իմ պաշտամունքս և կեանքս ու մահս անէակից և աշխարհաց Տէր Աստուծոյն է, և ես միւսոյիմներու առաջըինն եմ»:

164. Դու քսէ՛, «կարելի՞ է որ ես Աստուծմէ դատուրիշ Տէր ուզեմ. քանի որ նա է ամեն բանի Տէրը»: Անձ մը ինչ որ ընէ իրեն կրնէ, և ոչ ոք ուրիշին բնոր չի բնոցաորիւր: Ի վերջոյ դուք ձեր Տիրոջ պիտի գտնաւք. և նա ձեզ պիտի հասկցնէ ձեր անհամաձայնութիւնը:

165. Նա է որ ձեզ յաջորդները բրած է երկրի վերայէ անցած ազգերուն. և ձեզմէ մէկ քանիները միւսներուն վրայ բարձրացուցած է աստիճաններով, որպէսզի ձեզի փորձէ իր ձեզ տուածներով: Որովհետև քու Տէրդ շուտով պատժող է նաև ուրմտը և ներող է:

## Զ. Գ Լ ՈՒ Խ

(ՄԱՌԻԷ ԷԼ ԱՐԱՎ)

Մէքէական, երկու հարիւր հիւնգ պասգամ

Յանուն Աստուծոյ գթածի ողորձի

1. Ա. Լ. Մ. Ս. Քեզի գիրք մը իջուցուեցաւ : Անոր համար քու սիրտդ չի տագնապի, անով խըրատես, այն զեկուցում է հաստացեալներուն :

2. Ձեր Տիրոջմէ ձեզ իջուցուածին հետեցէ՛ք, և անկէ զատ ուրիշ պաշտպաններու հետեոյ մի ըլլալք : Ասիկա խորհոյները քիչ են :

3. Քանի քաղաքներ մենք աւերած ենք, անոնց վրայ մեր պատուհասը հասաւ երբ անոնք կը գիշերէին և կէսօրուան հանգիստ կառնէին :

4. Եւ երբ մեր պատուհասը անոնց վրայ եկաւ, անոնք միայն սապէս կը գոչէին «իրաւի մենք անիրաւներ ենք եղեր» :

5. Մենք պիտի հարցաքննենք զանոնք որոնց մարգարէներ զրկուած են, և թէ մարգարէներէն պիտի հայցնենք :

6. Եւ զիտութեամբ անոնց պիտի պատմենք, որ մենք բացակայ չէինք :

7. Եւ այն օրը կշիռը արդար պէտք է ըլլայ : Ուստի որոնց որ կշիռը ծանր գայ անոնք երջանիկ կըլլան :

8. Իսկ որոնց որ կշիռը թեթեւ գայ անոնք մեր յայանտութիւններուն զէմ անիրաւութիւն բրած ըլլալով, իրենց հոգիներուն վնասողներ են :

9. Սակայն մենք ձեզի երկրի վրայ տեղ տուինք և հոն ձեզ ապրեցուցինք, բայց շնորհակալ եղողներդ քիչ էք :

10. Մենք ձեզ ստեղծեցինք, յետոյ կազմեցինք և

յետոյ հրեշտակներուն «Աղամին երկրպագութիւն ըրէք» ըսինք : Եւ սատանայէն զատ միւսները երկրպագեցին, և ան չերկրպագեց :

11. Ըսաւ, «ի՞նչ արգիւնց քեզ որ չերկրպագեցիր երբ քեզ հրաման ըրի» : Ան ալ ըսաւ, «Թէ ես անկէ յաւ եմ, դուն զիս կրակէն ստեղծեցիր, իսկ զանի ստեղծեցիր ցեխէն» :

12. Ըսաւ, «Վար րնկի՛ր այս տեղէն, դուն իրաւունք չունիս հոս հպարտանալու, դու՛րս կորսուէ, դուն արհամարհեալ ես» :

13. Եւ ան ըսաւ, «յնձ ժամանակ տուր մինչև յաբութեան օրը» :

14. Ըսաւ, «այն դուն ալ ժամանակ տրուածնեւբէն ես» :

15. Ան ալ ըսաւ, «Քանի որ դուն զիս վնասեցիր, ես ալ զանոնք քու շիտակ ճամբէդ չեղեցնելու հետեւիմ» :

16. «Եւ ես անոնց վրայ պիտի յարձակիմ անոնց հետէն, առջևէն, աջ կողմէն ու ձախ կողմէն, և եւ դու անոնց շատերուն շնորհակալ ըլլալը չես տեսնիր» :

17. Ըսաւ, «դու՛րս կորսուէ հոսկէ, անարգ ու խայտառակ : Անոնցմէ մէկը եթէ քեզի հետեւի, այն տեսնեմ ես ձեր բոլորդ միասին դժոխքը կը լեցնեմ» :

18. Եւ դու, ով Աղամ, դու և քու կինդ բնակեցէք Էրախտին մէջ, և կերէք ձեր ուղածէն, բայց մի մտեանաք այս ծառին, եթէ ոչ դուք անիրաւներէն կըլլաք :

19. Բայց սատանան փսփսաց անոնց, թէ ցոյց պիտի տայ անոնց ինչ որ ծածուկ է, և ըսաւ, «Ձեր Տէրը այս ծառէն ուտել արգիւնց ձեզ, որպէսզի երկուքդ ալ հրեշտակներ չըլլաք կամ յախտեան չապրիք» :

20. Եւ երբում ըրաւ, թէ ինք անոնց բարի խորհրդատու է :

21. Եւ զանոնք խարելոյ շեղեցուց. այնպէս որ անոնք այն ծառէն ուտելուն վրայ ամօթնին բացուած տեսնելով, գրախտէն տերեւներ հիւսեցին զիրենք ծածկելու համար: Այն առան անոնց Տէրը կանչեց զանոնք. «ես ձեզի այս ծառէն չարգիլեցի՞ միթէ և ձեր երկու քին չըսի՞, թէ սատանան ձեր յայտնի թշնամին է:»

22. Անոնք ալ ըսին. «մ'ի Տէր մեր, մենք անիրաւութիւն ըրինք մեր հոգիներուն դէմ, արդ, եթէ դու մեզի չգթաս ու չներես, մենք անպատճառ կը կորսուինք»:

23. Ան ալ ըսաւ, «ինկէք վա՛ր, դուք իրարութշնամիներ էք, և երկրի վրայ ժամանակ մը կը՝ բնակիք և կը կերակրուիք»:

24. Նաև ըսաւ, «դուք հոն կապրիք և հոն կը մեռնիք, և անկէ կը հանուիք»:

25. Ո՛վ Աղամի օրդիներ, մենք ձեզի հազուստ իջեցուցնէք, ձեր ամօթը ծածկելու համար, և ճոխ հազուստ բարեպաշտութեամբ, այս աւելի լաւ է Աստուծոյ նշաններէն, որպէսզի յիշէք:

26. Ո՛վ Աղամի օրդիներ, սատանան ձեզ թող չխաբէ, ինչպէս որ ձեր ծնոջները գրախտէն հանեց և անոնց հազուստները վրանուն տաւ. որ ամօթնին անոնց ցուցնէ: Իրաւ է որ ինք և իր ցեղը ձեզ կը տեսնեն հոնկէ և դուք զանոնք չէք տեսներ: Մենք անհաստաներուն իշխան ըրինք սատանան:

27. Եւ անոնք մեծ մտղք գործելու առաննին կ'ըսեն «մենք մեր հայրերն ալ սատան գտանք, և Աստուած այսպէս յրամայած է մեզ»: Դու ըսէ, «Աստուած չարագործութիւն չհրամայեր: Աստուծոյ ժաշին ձեր չգիտցա՞ծը կը խօսիք»:

28. Ըսէ՛, «իմ տէրս արդարութիւն հրամայած է, ուրեմն ձեր երեսը դարձուցէք անոր անկեղծ հաւատ-

քով: Ինչպէս որ նա ստեղծած է ձեզ, դուք անոր պիտի դառնաք, անիկա մէկ մասը առաջնորդած է և մէկ մասն ալ արժանի դատած է մօլորութեան, վասն զի անոնք Աստուած ձգելով սատանաները իրենց բարեկամ ընդունած են և կը կարծեն թէ առաջնորդուած են:

29. Ո՛վ Աղամի օրդիներ, ամեն աղօթարանի առջև ձեր զարգերը վրանիք ատէք, և կերէ՛ք ու խմեցէք. բայց չառայութիւն մի՛ ընէք, որովհետև անրկա չառայները չօրհեր:

30. Ըսէ՛, «Աստուծոյ զարգարանքը՝ զոր նա սրւած է իր ծառաներուն և լաւ ուտելիքները ո՞վ արգիլիք է իբրև պիղծ»: Դու ըսէ՛, «ան այն մարդոց համար է որոնք աշխարհի մէջ ապրելու առեն կը հաւատան և անկեղծ հաւատք ունին յարութեան օրւան: Հասկցող ազգին մենք այսպէս կը բացատրենք նշանները:

31. Ըսէ՛, «իմ Տէրս միայն մեծ մեղքերը արգիլած է յայտնի ըլլան թէ զաղանի: Մեզք է նաև անիրաւ ազատամբութիւնը, նոյնպէս պէտք չէ որ Աստուծոյ ընկերներ դնէք, որուն համար հրաման չէ իջած, և թէ յանցանք է այն որ չգիտցածնիդ կը խօսիք Աստուծոյ դէմ»:

32. Եւ ամեն մէկ ազգի համար որոշեալ վերջ մը կայ. երբ անոնց վերջը հասնի, անոնք ոչ ժամ մը ետ կը մնան և ոչ ալ առաջ կանցնին:

33. Ո՛վ Աղամի օրդիներ, ձեզմէ՛ մարգարէներ պիտի գան ձեզի և իմ նշանները ձեզի պիտի պատմեն. որոնք որ երկիւզածութեամբ ուղղուին անոնց համար վախ չկայ և անոնք չեն տխրիր:

34. Բայց անոնք որ նշանները սուտ համարելով անոնց դէմ կ'ըմբոստանան, այնպիսիները կրակի ընկերներ են և անոր մէջ կը մնան յաւէտ:

33. Աստուծոյ նշանները սուտ համարողէն և զանոնք չեք բռնաբերէն աւելի անիրաւ ո՞վ կայ: Եյնպիսիներուն բաժինը իրենց կը հասնի գիրքէն՝ մինչև որ զրկուածները անոնց քով գան ու զանոնք մեռցընեն և ըսեն, «ո՛ւր են անոնք որոնց դուք կաղօթէիք Աստուծմէ զառ»: Անոնք ալ պիտի ըսեն, «մեզմէ հեռացած են», և պիտի վկայեն իրենք իրենց դէմ, թէ իրենք անհաւատներ են:

36. Անիկա կրտէ՛, «ձեզմէ առաջ եկող և անցնող դեերուն ու մարդոց հետ մտէ՛ք կրակին մէջ»: Երբ ժողովուրդ մը կրակին մէկ կը մտնէ, իր կրօնակից ազգը կանիծէ, մինչև որ ամենն ալ հոն զիրար զրտնեն. այն ատեն վերջինները կըսեն առաջիններուն համար, «Ով Տէր մեր ասոնք մեզ ժողորհուցին, ուստի ասոնք պատժէ կրկնապատիկ կրակով»: Ան ալ կըսէ «ամենին ալ կրկնապատիկ», սակայն դուք չէք հասկնար:

37. Եւ առաջինները վերջիններո՛ւն կ'ըսեն, թէ դուք մեզմէ լաւ չէիք, ուստի կրեցէք ձեզ արժանի պատիժը:

38. Արդարեւ անոնք որ մեր նշանները կը չեք բերն եւ կը հպարտանան, անոնց առջեւ երկնից դռները չեն բացուիր և անոնք արքայութիւն չեն մտնէր մինչև որ ուղտը ասեղին ծակէն անցնի: Ահա մենք այսպէս կը պատժենք մեղաւորները:

39. Անոնց պառկելիք տեղը դժոխքն է եւ անոնց վրայ կրակէ ծածկոց կայ: Մենք չարագործները այսպէս կը պատժենք:

40. Իսկ որոնք որ հաւատալով բարի գործեր կը կատարեն—մենք մարդու մը իր կարողութենէն վեր պարտականութիւն չենք զներ—այնպիսիները արքայութիւն կերթան եւ հոն կը մնան յաւիտեան:

41. Եւ մենք անոնց սրտերէն կը հանենք տառա-

թիւնը և անոնք կ'ըսեն. «իհաւք Աստուծոյ որ մեզ այստեղ առաջնորդեց որուն տակէն զետեր կը հոսին և մենք ուղիղ ճամբուն մէջ չէինք ըլլար եթէ Աստուած չարաջնորդէր մեզ»:

42. Եւ դրախտի մարդիկը դժոխքի մարդոց կազաղակն. թէ «մենք այլևս գտանք մեր Տիրոջ մեզ խոստացածը»: Անոնք ալ կըսեն «այո՛»: Այն ատեն մուսնեակի մը կը պոսայ անոնց մէջ, թէ «Աստուծոյ անէծքը չարագործներուն վրայ ըլլայ»:

43. «Որոնք Աստուծոյ ճամբէն կը շեղեցնեն, ծուռ մրջնոցներ կը փնտռեն և չեն հաւատար հանդերձեալին»:

44. Եւ անոնց միջև վարագոյր կայ և քաւարանին մէջ մարդիկներ կան որ կը ճանչնան ամենը իրենց դէմքերէն և դրախտի մարդոցը կը պոսան «խաղաղութիւն ձեզ», բայց անոր մէջ չեն մտնէր թէ և կը փախաքին մտնել:

45. Եւ երբ անոնց աչքերը կը դառնան կրակի մարդոց կողմը, կ'ըսեն «Ով Տէր մեր մեզ միատեղ մի գներ չարագործ ժողովուրդի հետ»:

46. Եւ քաւարանի մարդիկը այն մարդոց դէմքերէն ճանչնալով կըսեն, «ինչ օգուտ ըրաւ ձեզ ձեր հաւաքածը և ձեր հպարտանալը»:

47. «Արդեօք ասոնք են, որոնց մասին դուք երդում բրիք, թէ Աստուած անոնց ոգործութեամբ չը մերձենար, դրախտ մտէ՛ք, ձեզի համար վախ չ'լսայ և դուք չէք տրտմիր»:

48. Եւ կրակի մարդիկը կը դռնէն դրախտի մարդոց, «մեր վրայ ջուր թափեցէք կամ Աստուծոյ ձեզ տուած պարգևէն մեզի ալ տուէք»: Անոնք ևս կը պատասխանեն, թէ Աստուած ասոնք արդիւած է անհաւատներուն:

49. Որոնք որ իրենց կրօնքը խաղալիք և զուար-  
ճալիք էին ըրեր և այս աշխարհւոյ կեանքէն խաբուե-  
րէին. մենք այսօր կը մոռնանք զիրենք, ինչպէս որ  
անոնք մոռցան այս հանդիսման օրը, և մեր նշան-  
ներու դէմ կը վիճէին:

50. Արդէն մենք անոնց զիրք մը տուեր ենք, որ  
հաւատացող ազգի համար ուղեցոյց և ողորմութիւն  
ըլլալով գրտականապէս բացատրեցինք:

51. Անոր մեկնութենէն զուրս անոնք բան մը  
կօպասեն արդեօք: Անոր մեկնութիւնը եկած օրը  
տուաջ զանի մոռցողները պիտի բռն թէ «ճիշդ է ե-  
ղեր որ մեր Տիրոջ մարգարէները սեղի եկեր են ար-  
դեօք չիմակ բարեխօսներ կը գտնուին որ մեզ հա-  
մար բարեխօսեն, և կամ մենք ետ դարձուինք,  
որ մեր ցարդ ըրածէն տարբեր գործեր ընենք»:  
Սակայն անոնք արդէն իրենց հոգիներուն վնասեր-  
են և անոնցմէ նեոու պիտի մնայ իրենց զրպար-  
տածը:

52. Ահա ձեր Տէրը Աստուած է որ ստեղծած է եր-  
կինքը և երկիրը վեց օրուան մէջ. և յետոյ օթոսի-  
վրայ բազմած է որ գիշերով ցերեկը ծածկէ որ ա-  
ճապարանօք անոր կը վափաքի. և թէ արեւը և լու-  
սինը և աստղերը ստեղծեց որոնք անոր հրամանին  
հնազանդ են: Ահա արարչութիւնը և անորն է հրա-  
մանը: Օրհնեալ ըլլայ աշխարհաց Տէր Աստուածը:

53. Ազազագին և լսելիան ազօթեցէք ձեր Տիրոջը  
որովհետեւ անրկտ չափազանցողները չսիրեր:

54. Եւ երկիրը մաքրելէ յետոյ մի՛ ապականէք, և  
ազօթեցէք անոր երկիրը և ըղձանօք. վասնզի  
Աստուծոյ ողորմութիւնը բարեգործներուն մօտ է:

55. Եւ անձրեան առջեւէն ան կը զրկէ հովերը ա-  
ւետելու իր ողորմութիւնը մինչև որ ծանրապէս  
բռնաւորուած ամպերը դան և անոնցմով ջրենք  
չորցած տեղերը և բուսցնենք ամեն տեսակ պատու-

ները: Այսպէս ալ մեռելները կը հանենք որ յիշէք:

56. Եւ լա. հողը Տիրոջը հրամանով կը հանէ  
իր բոյսը, իոկ պէշ հողը միտն քիչ մը կը հանէ:  
Այսպէս ալ երախտագէտ ժողովուրդի համար մենք  
այլ եւ ալ նշաններ կը բերենք:

57. Արդէն նոյն մենք զրկեցինք իր ցեղին. եւ  
նա ըսաւ. «Ո՛վ ժողովուրդս, Աստուած պաշտեցէք.  
անկէ զտտ ուրիշ Աստուած չունինք դուք. ես կը  
վախնամ թէ մեծ օրուան մը պատիժը կը հասնի  
ձեզի»:

58. Անոր ցեղին մեծերը ըսին «մենք կը տես-  
նենք որ դուն բացարձակ մոլորեալ ես»:

59. Ան ալ ըսաւ. «ով իմ ժողովուրդս ես մո-  
լորեալ չեմ, այլ ես աշխարհներու Տիրոջ կողմէ զըր-  
կուած մարգարէ եմ»:

60. «Ես իմ Տիրոջս պատուէրները ձե ի կը հա-  
զորդեմ, և խրատելով ձեր չգիտցածը կիմացնեմ  
Աստուծոյ կողմէ»:

61. Կը դարմանաք որ ձեզի՛ մարդու մը ձեր Տի-  
րոջ կողմանէ զեկուցուած է որ ձեզ խրատէ որ եր-  
կիրգած դառնաք որպէսզի ողորմութիւն գտնէք:

62. Բայց անոնք զանի ստախոս համարեցին. իսկ  
մենք զանի եւ անոր հետ եղողները տապանին մի-  
ջոցաւ փրկեցինք, եւ մեր նշանները սուտ համարող-  
ները կոյր ցիղ մը ըլլալուն համար ընկղմեցինք:

63. Նոյնպէս Աստուծոյ զրկեցինք իրենց եղբայր  
Հուտը: Նա ալ ըսաւ. «Ո՛վ իմ ժողովուրդս, պաշ-  
տեցէք զԱստուած. դուք անկէ զատ ուրիշ Աստուած  
չունիք. միթէ չէ՞ք վախնար»:

64. Անոր ցեղէն անհաւատ մեծերը ըսին. «մենք  
կը տեսնենք որ դուն յիմարացեր ես եւ կը կարծենք

թէ ստախօսներէն ես» :

65. Ան ալ ըսաւ, «ո՛վ իմ ժողովուրդս, ես յիմարութիւն չունիմ, ալի ես մարգարէ եմ աշխարհներու Տիրոջ կողմանէ» :

66. «Տիրոջս պատուէրները ձեզի կ'իմացնուի. եւ ես վատահելի խրատիչ մըն եմ ձեզի» :

67. «Կամ կը զարմանա՞ք կոր որ ձեզմէ եզոզ մարդու մը յուշարարութիւն եղեր է ձեզ խրատելու ուրիմն յիշեցէք որ Նոյին զեզլն յետոյ յաժորդներ կարգեց եւ ձեզի ածեցուց. արդ, Աստուծոյ շնորհերը յիշեցէք որ երջանիկ ըլլաք» :

68. Անոնք ալ ըսին, «Դուն անո՞ր համար եկար որ միայն Աստուած պաշտենք, եւ մեր հայրերու պաշտածները ձգենք: Ուրիմն սպառնալիք գործադրութ' մեր վրայ, եթէ ճշմարտախոս ես» :

69. Ան ալ ըսաւ, «արզէն ձեր Տիրոջ կողմանէ ձեք վրայ պատուհաս եւ բարկութիւն եկած է: Արդեօք ձեր եւ հայրերնուդ դրած անուններուն համար ինձ հետ կը վիճարանիք մինչ անոնց նկատմամբ Աստուած ձեզի հրաման մը չէ իջեցուցած: Ուրիմն սպասեցէ՛ք, ահա ես ալ ձեզի հետ կ'սպասեմ» :

70. Մենք զանի եւ անոր հետ եզոզները ազատեցինք ողորմութիւնով, իսկ մեր նշանները սուտ համարոցները եւ անհաւատները արմատախիլ ըրինք:

71. Եւ Սամուտ ցեղին ալ եղբայրը Սալիհը զրկեցինք որ ըսաւ, «ո՛վ իմ ցեղս Աստուած պաշտեցէք, դուք ա՛նկէ զատ Աստուած չունիք ահա ձեր Տիրոջ կողմէ նշան եկած է Աստուծոյ այս ուղտը. Ուրիմն ձգեցէք որ Աստուծոյ երկրին վրայ անիկա արածուի եւ անոր գիշութեամբ մի՛ դպչիք վասնզի ձեզ դառն տանջանք կուգայ» :

72. «Եւ յիշեցէք որ Ատէն յետոյ ձեզի յաժորդներ կարգեց եւ երկրի վրայ բնակեցոյց ձեզ եւ դուք գաշտերու մէջ ապարանքներ կանգնեցիք եւ լեռներու

մէջ տուներ փորեցիք: Արդ, Աստուծոյ շնորհները յիշեցէ՛ք, եւ երբի վրայ մի չըլիք ապականելով» :

73. Անոր զեզլն հպարտ մեծերու խումբ մը ըսին տկար նկատուածներուն, որոնք կը հաւատային, թէ «Դուք կը հաւատաք որ Սալիհը Տիրոջ կողմէ զրկուած է»: Անոնք ալ ըսին, «Մենք կը հաւատանք այն բանին որով նա զրկուած է» :

74. Իսկ հպարտներն ալ ըսին, «Մենք չենք հաւատար ձեր հաւատացածին» :

75. Ուստի ուղտին ոտքերը կտրելով, իրենց Տիրոջ հրամանը դրժեցին, եւ ըսին, «Ո՛վ Սալիհ, բեր մեր վրայ մեզ ըրած սպառնալիքդ, եթէ մարգարէներէն ես» :

76. Այն ատեն սոսկայի փոթորիկ մը բռնեց, եւ անոնք իրենց տուներուն մէջ երեսի վրայ փուռած գանուեղան:

77. Ան ալ անոնցմէ ետ քաշուելով, ըսաւ, «ո՛վ իմ ցեղակիցներս, ես ձեզի Տիրոջ հրաձանը հաղորդեցի եւ ձեզի խրատ տուի, բայց խրատատուները չէք սիրեր» :

78. Եւ Ղովար զրկեցինք, որ իր ժողովուրդին ըսաւ, «արդեօք մեծ մեղք մը կը գործէք որ աշխարհներու մարդոց ոչ մէկը գործեր է ձեզմէ առաջ» :

79. Դուք կ'ինքըր ձգելով արուններուն կը մօտենաք ցանկութեամբ, այո՛ դուք անառակ սող մըն էք» :

80. Սակայն ժողովուրդը անոր միայն սա պատասխանը տուաւ «զանոնք ձեր քաղաքէն հանեցէ՛ք, որովհետեւ անոնք ինքզինքնին մաքուր համաբող մաքրիկ են» :

81. Եւ մենք զանի եւ իր ընտանիքը ազատեցինք, միայն անոր կ'ինը ետ մնաց:

82. Եւ մենք անոնց վրայ անձրեւ տեղացուցինք, տես ի՞նչպէս եղաւ յանցաւորներուն վերջը:

83. Եւ Մատիան զրկեցինք անենց Շուշեպ եղբայրը, որ ըսաւ. «Ո՛վ ժողովարդս, պաշտեցէք զԱստուած. դուք անկէ զաս ուրիշ Աստուած չունիք. արգէն ձեր Տէրոջ կուսէ ձեզի համար յայսնութիւն եղած է: Ուստի չափերնից եւ կշիռնից շիտակ բռնեցէք, եւ մարդոց իրաւունքը մի պակսեցնէք. եւ երկիրը մաքրուելէ վերջ մի ապականէք. այս լաւ է ձեզ համար եթէ հաւատացեալներ էք»:

84. «Եւամեն ճամբաներու վրայ մինստիք, ըսպտոնալիքով հեռացնելու համար Աստուծոյ ճամբանն անոր հաւատացողը եւ անկէ շեղու՛մ պահանջելու. եւ յիշեցէք թէ գուք քիչնոր էիք եւ նա ձեզ շատցուց: Արդ տեսէք թէ ապականիչներուն վերջը ինչպէս եղաւ»:

85. Եթէ ձեր մէջ մաս մը մարդիկ կան որ կը հաւատան իմ զրկուած ըլլալուս. եւ մաս մը մարդիկ ալ եթէ չեն հաւատար, ապասեցէք մինչեւ որ Աստուած մեզ գտէ. եւ նա է ամենալաւ պատարորը:

86. Անոր ցեղին հպարտները ըսին, «Ո՛վ Շուշեպ, քեզ եւ քեզի հետ հաւատացողները անպատճառ մեր քաղաքէն դուրս հանինք եւ կամ մեր ցեղին դռնալու էք»: Ան ալ ըսաւ, Բայց եթէ չենք ուզե՞ր»:

87. «Ո՛րք Աստուծոյ զէ՛մ ստութիւն ըրած կ'ըլլանք, եթէ կրկին ձեր ցեղին դառնանք, քանի որ Աստուած մեզ ազատած է անկէ. եւ մենք անոր մէջ չենք դառնար, եթէ մեր Տէր Աստուածը չարտօնէ: Մեր Տէրը ամեն ինչ դիտութեամբ կը պարիտակէ. մենք Աստուծոյ կապաւենիք: Ո՛վ մեր Տէրը, արդարութեամբ պատէ՛ մեզ եւ մեր ժողովուրդը. վասնզի դուն պատարներուն ամենալաւն ես»:

88. Եւ անոր ցեղին հպարտները ըսին, «Ե՛թէ դուք Շուշեպին հետեւիք, պիտի վնասուիք»:

89. Այն ատեն սոսկալի չարժ մը եղաւ, եւ անոնք

իրենց տուներուն մէջ երեսի վրայ խնալով ոչընչացան:

90. Շուշեպին չհաւատացողները կարծես թէ ալ հոն գոյութիւն չունէին. Շուշեպը ժխտողները իրենք վնասուեցան:

91. Եւ նա անոնցմէ ետ դառնալով ըսաւ. «Ո՛վ իմ ցեղակիցներս, ես Տիրոջս հրամանը հազորեցի եւ ձեզ խրատեցի. հիմա ես ի՞նչպէս ցաւիմ անհաւատ ցեղին վրայ»:

92. Մենք ոչ մէկ քաղաքի մայգարէ չզրկեցինք, որ անոր բնակիչները մենք պատժած ըլլաւնք փորձանքներով ու վնասներով, որպէսզի խոնարհին:

93. Յետոյ փորձանքի տեղ բարութիւն զրկեցինք մինչև որ բազմացան եւ ըսին թէ մեր հայրերուս ալ վնասներ եւ տկարութիւններ կը պատահէին»: Եւ մենք զանոնք յանկարծ ճնշեցինք եւ անոնք չէին գիտեր:

94. Եթէ այն քաղաքներու բնակիչներ հաւատային, մենք անոնց երկինքէն աւ երկրէն առատութիւններ կուտայինք. բայց անոնք սուտ համարեցին եւ մենք զանոնք պատժեցինք զօրժերնուն համեմատ:

95. Այն քաղաքներու բնակիչները արդեօք կը հաւատային թէ գիշերը անոնց քնացած ատեն կը շասնի մեր չարիքը:

96. Եւ կամ այդ քաղաքներու բնակիչները կը հաւատային որ ցորեկը անոնց զուարթութեան ատեն չգօր մեր չարիքը:

97. Արդեօք անոնք ապահով են Աստուծոյ նենգութենէն. միմիայն վնաս կրող ժողովուրդը ապահով կ'ըլլայ Աստուծոյ նենգութենէն:

98. Երկրի մը բնիկներէն յետոյ այն երկիրը ժառանգողները արդեօք չեն հասկցեր, որ, եթէ ուզենք զիրենք կը պատժեք իրենց մեղքերուն համար եւ

իրենց սրտերը կը կնքենք ու անոնք չեն իմանար :

99. Այսպէս քեզ կը պատմենք այն քաղաքներու պատմութիւնը, թէ անոնց մարդարէներ կիան յալա- նութիւններով. բայց անոնք՝ ատաջուց սուտ հա- մարած քլլալնուն համար՝ չէին հաւատար, ա-ա Աւ- արուած անհաւատներու սրտերը այսպէս կը կնքէ :

100. Եւ մենք անոնց շատերը ուխտակ չգտանք. այլ շատերը չարագործներ գտանք :

101. Յետոյ անոնց ետեւէն մենք Մովսէսը դրկե- ցինք Փարաւոնին և անոր ցեղի մեծերուն. բայց ա- նոնք չարիք գործեցին : Արդ, սեւ թէ չարագործ- ներուն յերջը ինչպէս եղաւ :

102. Եւ Մովսէս ըսաւ, «Ո՛վ Փարաւոն, ես աշ- խարհներու Տիրոջը մէկ մարդարէն եմ :

103. «Ես ճշմարտախօս եմ, ես Աստուծոյ մասին ճշմարտութենէ զատ ուրիշ բան չեմ խօսար : Ձեր Տիրոջ կողմէն ես հրաշքով եկած եմ ձեր քով : Արդ, Ըսարայէնի որդիները ձգէ ինձ հեռ երթալու» : Ան ալ ըսաւ, եթէ հրաշքով եկած ես, ցոյց տար եթէ ար- դարներէն ես» :

104. Եւ ան նետեց իր գաւազանը և օձ եղաւ :

105. Եւ ձեռքը հանեց, որ զխողներուն ճերմակ- երեցաւ :

106. Փարաւոնի ազգին մեծերը ըսին թէ այս վար- պետ կախարդ մըն է :

107. Ան կուգէ որ ձեզ ձեր երկրէն հանէ. արդ ինչ հրաման կընէք :

108. Անոնք ըսին, «պահեցէք զանի և իր եղ- բայրը :

109. «Եւ քաղաքները մարդիկ դրկէ որ բոլոր- վարպետ կախարդները ժողովեն քեզի բերն» :

110. Եւ կախարդները Փարաւոնի առջև եկան ու ըսին, «մեզի վարձ պիտի տաք անշուշտ եթէ մենք յաղթենք» :

111. Ան ալ լսաւ, «այո՛, դուք իմ մտերիմներս կըլլաք» :

112. Անոնք ալ ըսին, որ «Ո՛վ Մովսէս կա՛մ դուն գաւազանդ չետէ կամ մենք նետենք» :

113. Ան ալ ըսաւ, «դուք նետեցէք» : Եւ երբ նե- տեցին մարդոց աչքերը կախարդեցին և զանոնք ա- հարեկելով մեծ կախարդութիւն մը ցոյց տուին :

114. Այն ատեն մենք Մովսէսին թելագրեցինք որ գաւազանը նետէ, և ա՛հ սա կլլնց անոնց կեղծերը :

115. Անով ճշմարտութիւնը յայտնուելով, անոնց ըրածը ոչնչացաւ :

116. Եւ անոնք յաղթուեցան և ետ դացին ամօ- թհար :

117. Եւ կախարդները երկիրպագեցին :

118. Եւ ըսին, «մենք կը հաւատանք աշխարհնե- րու Տիրոջը» :

119. «Մովսէսին և Ահարոնին Տիրոջը» :

120. Այն ատեն Փարաւոն ըսաւ, «իմ հրաման տալէս ատաջ դուք անոր կը հաւատա՞ք : Այս խար- գախութիւն մըն է որ կընէք, որ այս քաղաքին բնակիչները դուրս հանէք. իսկ քիչ յետոյ կը հաս- կընաք» :

121. «Ես պիտի կտրիմ անպատճառ ձեր և ստքերը դէմ դիմաց. յետոյ պիտի խաչեմ ձեր բոլորը :

122. Անոնք ըսին, «մենք մեր Տիրոջը դարձանք» :

123. «Եւ դուն մեզմէ վրէժ կառնես այն պատ- ճառաւ որ մենք կը հաւատանք մեր Տիրոջ նշաննե- րուն որ զրկուեր են մեզ համար : Ո՛վ մեր Տէրը, մեզ համբերութիւն չնորձէ որ իբրև միւսլիմներ մեռ- նինք» :

124. Եւ Փարաւոնի ցեղին մեծերը ըսին, «Մով- սէսը և իր ցեղը կը ձգեն որ երկիրը խռովեն և ձե- զի ու քու Աստուածդ թողուն : Ան ալ ըսաւ, «մենք

անոնց ժանչերը սպանենք և աղջիկները ողջ ձգենք ու անոնց վրայ իշխենք»։

125. Մովսէս իր ցեղին ըսաւ, «Աստուծմէ օգնութիւն խնդրեցէք և համբերեցէք, վասն զի երկիրը Աստուծոյ է և նա իր ուզած ծառային ժառանգութիւն կուտայ զայն։ Եւ վերջը երկիւզածներուն է»։

126. Անոնք ըսին թէ մենք քու գալէդ առաջ ալ կը տատայէինք, չիմակ քու գալէդ յետոյ ալ կը տառազինք կոր։ Մովսէս ալ ըսաւ անոնց «Կարելի է որ ձեր Տէրը կը ջնջէ ձեր թշնամիները և ձեզ անոնց կը յաջորդեցնէ երկրի վրայ, ալժամ նա կը նայի թէ զուք ինչ գործեր կընէք»։

127. Արդէն մենք Փարաւօնի ցեղը պատժած էինք տարիներ տևող սովով և պառզներու նուազութեամբ, որպէսզի խելքերնին գլուխնին գայ։

128. Բայց երբ բարիք եկաւ, ըսին, «այս մերն է»։ Իսկ երբ անոնց վաքք ինչ չարիք պատահէր, անոնք զայն Մովսէսին և անոր ձեռ եղբայրներու գուշակութեան կը վերադրէին։ Թէև անոնց գուշակութիւնը Աստուծոյ կողմէ էր, սակայն անոնցմէ շատերը չէին գիտեր։

129. Եւ անոնք ըսին, թէ զուն ինչ հրաշք ալ գործես մեզ կախարդելու համար, մենք քեզի չենք հաւատար։

130. Եւ մենք անոնց վրայ թափեցինք, իբր քացատրող նշաններ, ճեղեղ և մորեխ և օջիւր և գորտ և արիւն, բայց անոնք ուրացան և մեղաւոր ազգ մեղան։

131. Եւ երբ անոնց պատուհաս մը պատահէր, կըսէին, «Ո՛վ Մովսէս, ազօթէ քու Տիրո՞յդ քու այն ուխտովդ, որ եթէ մեզմէ այս պատուհասը անցնի, մենք քեզ կը հաւատանք անպատճառ և Իսրայէլի որդիքը քեզի ձեռ կը դրկենք»։ Մենք պատուհասը

վերցուցինք անոնց որոշած ժամանակին, բայց անոնք կրկին դրժեցին իրենց ուխտը։

132. Սակայն մենք վրէժ լուծեցինք զանոնք ծովուն մէջ ընկղմելով վասնզի անոնք մեր նշանները կընքքէին և կը դրժէին։

133. Եւ անոնց ախար համարած ցեղը մենք ժառանգորդ բրինք այն երկրին արևելեան և արևմտեան կողմերուն զոր օրհնած էինք, և Իսրայէլի որդիքը համբերելուն համար, Աստուծոյ գեղեցիկ խօսքը կատարուեցաւ անոնց վրայ, Փարաւօնին ու իր ազգին բրածները ու կատուցածները ոչնչացուցինք։

134. Եւ մենք Իսրայէլի որդիները ծովէն անցուցինք, և անոնք ազգի մը բով եկան որ իրենց կառքերով կը զբաղէին, և ըսին, «Ո՛վ Մովսէս, անոնց Աստուծոյն պէս մեզի ալ աստուած մը չինէ»։ Ան ալ ըսաւ, թէ «իրօք զուք ազէտ ցեղ մըն էք»։

135. Որովհետև ասոնց ունեցածը պէտք ոչնչացնէ զիրենք և անոնց գործերը անտի են։

136. Եւ աւելցուց, «միթէ ձեզի համար Աստուծմէ գառ ուրիշ աստուած ինտոեմ. բայց չէ՞ որ նա ձեզ գերազանց բրած է բոլոր աշխարհաց վրայ»։

137. Եւ երբ ձեզ ազատեցինք Փարաւօնի գեղէն, որ ձեզի չարաչար կը տանջէին և ձեր որդիները կը սպաննէին և աղջիկները ողջ կը թողուին և այդ մեծ փորձանք մըն էր ձեր Տիրոջ կողմանէ։

138. Եւ մենք Մովսէսին երեսուն գիշեր որոշեցինք, բայց տասնով լինցուցինք և իր Տիրոջ որոշած պայմանաժամը քառասուն գիշերէ լրացաւ, և Մովսէս իր եղբոր Ահարոնին ըսաւ, թէ իմ փոխանորդս եզիր ժողովուրդիս մէջ և բարիք գործ է և, խոսվարարներուն ճամբուն մի հետեւիր։

139. Եւ երբ Մովսէս եկաւ մեր որոշած ժամանակին, Տէրը անոր ձեռ հօսեցաւ ու նա ըսաւ, «Ո՛վ

Տէր իմ, քեզ ինձ ցոյց տուր, որ քեզ տեսնեմ նա ալ ըսաւ. «Գուն չես երբէք զիս տեսներ, բայց յետան նայէ, եթէ այն իր տեղը կենայ, այն ատեն դուն զիս կը տեսնես. բայց երբ Տէրր փառաւորուէ, ցաւ յետան վրայ, զայն կտոր կտոր ըրաւ և Մովսէս մարելով ինկաւ:

140. Եւ երբ ուշաբերուեցաւ ըսաւ. «Փառք քեզ, ես քեզ կը վերադառնամ, և հաւատացողներէն առաջինն եմ»:

141. Նա ալ ըսաւ. «Ո՛վ Մովսէս, ես քեզ ընտրեցի մարդոց մէջ իբր իմ մարգարէս և պատգամարարս. ուստի ինչ որ քեզ կուտամ ա՛ռ և երախտա գէտ եղի՛ր:

142. Եւ մենք անոր համար տախտակներու վրայ գրեցինք ամեն բան՝ մասին խրատ, ուստի զանոսք սերտիւ ընդունէ՛ և պատուիրէ՛ քու ժողովուրդիդ, որ զայն լաւագոյն կերպով ընդունին. ես ալ այն ատեն ձեզի ցոյց կուտամ չարագործներու տուները:

143. Իմ նշաններէս կը զրկեմ երկրի՛ վրայ անիրաւարար նպարտացողները, վասն զի անոնք ինչ տեսակ նրաչք ալ տեսնեն չեն հաւատար անոր և եթէ ուզիլ ճամբան տեսնեն կրկին չեն ընդունիր իբր ճամբայ. իսկ երբ տեսնեն ըմբոստութեան ճամբան, զայն կ'ընդունին իբր ճամբայ:

144. Վասն զի մեր նշանները սուտ համարեցին և անոնց մասին անփութ գանուեցան:

145. Որոնք որ մեր նշանները և հանգեւրձեայի հանդիպումը սուտ համարեցին, անոնց գործերը ունայն են, անոնք միայն իրենց գործերուն պատիժը կը կրեն:

146. Անկէ յետոյ Մովսէսին ցեղակիցները իրենց զարդերէն մեծ հորթ մը շինեցին, որ մայնց Միթէ տեսան թէ այն իրենց նեո չէր խօսեր և ճամբայ ցոյց չէր տար:

147. Բայց անոնք զայն ընդունելով, չարագործներ եղան:

148. Սակայն քիչ յետոյ անոնք զղջացին և տեսան որ մոյրուած են. և ըսին, «եթէ մեր Տէրր մեզի դժարով չներէ, մենք վնասուողներէն պիտի ըլլանք:

149. Եւ Երբ Մովսէս վշտահար և սրամտած դարձաւ իր ժողովուրդին քով, ըսաւ. «Գուք ինձմէ յետոյ գէշ գործ ըրիք. ձեր Տիրոջ հրամանը փութացուցիք սիթէ»։ Եւ տախտակները մէկ կողմ նետեց ու եղօրը գլուխէն բռնելով իր կողմը քաշեց. ան ալ ըսաւ. «Ո՛վ իմ մօրս սրբին, ժողովուրդը զիս ստիպեց և քիչ մնաց որ զիս սպաննէին. սրբ, թրչնամբները մի ուրախացներ և զիս չարագործներու ցեղին նեո հաւասար մի բռներ:

150. Այն ատեն Մովսէս ըսաւ. «Ո՛վ Տէր իմ, ինձ և եղբորս ներէ, և մեզ քու ոգորմութեանդ մէջ ընդունէ, վասնզի դու ոգորմած ես»:

151. Եւ հորթը ընդունողներուն հասաւ իրենց Տիրոջ բարկութիւնը և թշուառութիւն այս աշխարհ մէջ, և մենք այսպէս կը պատժենք զրգարախնները:

152. Եւ գէշ գործեր ընելէ յետոյ զղջալով հաւատացողներուն քու Տէրդ կը ներէ և կողորմի:

153. Եւ երբ Մովսէս բարկութեանէն հանդարտեցաւ առաւ տախտակները, և անոնց գրուածներուն մէջ իրենց Տիրոջմէ վախցողներուն համար՝ առաջնորդութիւն և ոգորմութիւն գար:

154. Եւ Մովսէս իր ժողովուրդէն՝ մեր որոշեալ ժամանակին համար՝ եթանասուն անձ ընտրեց, և սոսկայի փոթորիկ մը զանոնք բռնելուն վրայ ըսաւ. «Ո՛վ Տէր իմ, եթէ ուզէիր զանոնք և զիս չատոնց կոչնչացնէիր, մեր յիմարտներուն ըրածին պատճառաւ հիմա մեզ պիտի կորսնցնէս միթէ. այս միայն քու

մէկ փորձի է որով քու ուզածդ պիտի առաջնորդես  
և չուզածդ պիտի մոլորեցնես: Դուն մեր Աստուածն  
ես: քաւէ մեզ և ոչորմէ. վասն զի դուն քաւիչնե-  
րու ամենամեծն ես:

155. Այս աշխարհի և հանդերձեայի մէջ մեզի բա-  
րոք անօրինէ՛, ահա մենք դէպ՛ի քեզ առաջնորդը-  
ւած եսք: Ան ալ ըսաւ, «իմ պատուհաս կը հասնի  
որու որ ուզեմ, և ոչորմութիւնս ամեն բան կը պա-  
րունակէ իր մէջ, և ես կը սահմանեմ ոչորմութիւնս  
երկիրը ամենբուն և բարեգործութիւնն ընողներուն  
որոնք իմ նշաններուս կը հուստանս:

156. Երջանիկ են անոնք որ կը նետեին անգրա-  
գէտ մարդարէին զոր գրուած կը գտնեն իրենց քովը  
կզած հին կտակարանին և Աւետարանին մէջ որ ա-  
նոնց կը հրամայէ օրինաօրը և կարգիլէ ապօրինա-  
ւորը և լաւ բաները ուտել անոնց կը թոյլատրէ և  
գէշ բաները պիզմ կը հոչակէ, և անոնց բեռը կը  
թեթեւցնէ և շղթաները կը հանէ: Աստի երջանիկնե-  
րը անոնք են որ կը հուստան անոր և կը յարգեն  
զանի ու կօզնեն անոր և կը նետեին այն լոյսին որ  
իջած է անոր նեա:

157. Ըսէ՛, «Ո՛վ մարդիկ, ես ձեր բոլորին համար  
Աստուծոյ Լարգարէն եմ»:

158. Երկրի և երկնից թագաւորութիւնը անորնէ՛,  
որմէ գատ ուրիշ Աստուած չկայ. նա կը կենդանա-  
ցնէ ու կը մեռցնէ, արդ հատատագէք Աստուծոյ և  
անոր զրկած անգրագէտ մարգարէին որ կը հաւա-  
տայ Աստուծոյ և անոր խօսքերուն, և հաւատացէք  
անոր որ ուզիզ առաջնորդուիք:

159. Եւ Մովսէսի ազգէն ժողովուրդ մը կայ որ  
կառ սջնորդէ ճշմարտութեալք և արդարութեամբ կը  
վարուի ինքն ալ:

160. Եւ մենք զանոնք տասնեւերկու տոնմերու

այսինքն ցելբերու բաժնած ենք: և երբ Մովսէսի  
ժողովուրդը անկէ ջուր կուզէր խմելու համար, ա-  
նոր յայտնութիւն տուինք թէ «գաւազանդ քարին-  
զա՛րկ» և տասներու ազօրեւորներ բղխեցան, այնպէս  
որ ամեն անձ իր խմելու տեղը գիտէր: Եւ անոնց  
վրայ ամպով հովանաւորեցինք և անոնց մանանա և  
և լորամարդիներ իջեցնելով ըսինք, «ձեզ իբր կե-  
րակուր տրուած այս լաւ բաներէն կերէ՛ք, և չա-  
րագործութիւն մի ընէք. սակայն անոնք իրենց ան-  
ձերուն չարիք կընէին:

161. Այն տանն անոնց լսուեցաւ թէ սա քալաքին  
մէջ բնակեցէք և կերէք աւել տւ որ որ ուզէք» և ը-  
սէք «նիթթաթուն» ու մաէք դունէն երկրպագելով:  
և մենք ալ ձեր մտքերը ներելով բարեգործները կը  
բազմացնենք»:

162. Եւ երբ անոնցմէ չարագործ եղողները փո-  
խեցին իրենց ըսուած խօսքը և մենք անոնց չարա-  
գործութեանը համար՝ երկինքէն պատուհաս զրկե-  
ցինք:

163. Եւ հարցուր անոնց այն քաղաքի մասին որ  
ծովին մօտն էր. երբ անոնք չարաթր պահեցին նե-  
տեալ օրը ձուկերը յայտնապէս երեցան. իսկ երբ  
չարաթր պղծեցին չերեցան: Մենք զանոնք փորձե-  
ցինք այսպէս անոնց ըրած չարութեան համար:

164. Եւ անոնց մէկ խումբը ըսաւ, «դուք ի՞նչու  
կը խրատէք ժողովուրդ մը զոր Աստուած կ'ոչնչացնէ:  
Անոնք ալ «ձեր Տիրոջմէ խնդրուածին համաձայն իբր  
չքմեղանք և երկիրը զառնալսին յուսալով ըրինք»  
ըսին:

165. Երբ մոռցան անոնք իրենց տրուած խրատ-  
ները, զանոնք գէշութենէ արդիւողները մենք ազա-  
տեցինք. իսկ չարիք ընողները իրենց չարագործու-  
թեանց համար պատժեցինք չարաչար:

166. Եւ երբ անոնք մեր արգժամ բաներէն ետ չկեցան լամառորար, բսինք անոնց. «մերժուածն՝ երկայիկներ եղէք»: Եւ այն ատեն, քու Տէրդ յայտարակեց որ անոնց վրայ պիտի զրկէ այնպիսի մարդիկ որ մինչև յարութեան օրը չարաչար տանչն զանոնք: Վասն զի քու տէրդ շուտով կը պատժէ նաև ներսդ և ողորձող է:

167. Եւ մենք զանոնք մաս մաս բաժնեցինք իբրև զատ ցեղեր երկրի վրայ, անոնց մէջ բարեգործներ կան, նաև բարեգործ չեղողներ՝ և մենք զանոնք փորձեցինք բարեքներով ու փորձանքներով, որպէսզի գիշան:

168. Եւ անոնց յաջորդեց սերունդ մը որ գիրքը ժառանգեց և որ այս աշխարհի ինչքերուն տիրանալով կըսէ թէ «այս մեզ կը ներուի»: Բայց եթէ այն ինչքերուն նման ուրիշ ինչքեր զան անոնց ալ կը տիրանան: Գիրքով պայման չէ՞ դրուած անոնց որ Աստուծոյ մասին ճշմարտութիւնը միայն խօսին: Եւ անոր մէջ եղածը կը քննեն: Հանդերձեալ աշխարհը աւելի լաւ է երկիւղածներուն Չե՞ն հասկնար անոնք:

169. Եւ անոնք որ գիրքի պատուէրները կը պահեն և աղօթք կընեն բարեգործներ են, որոնց վարձքը չենք կորսնցներ:

170. Եւ երբ լեռը անոնց վրայ բարձրացուցինք իբրև ստուերարկու, անոնք կը կարծէին թէ իրենց վրայ պիտի իյնայ. բսինք անոնց, սա ձեզի տրուածը ամուր բռնեցէք և հոն եղածը յիշեցէք որ երկիւղած ըլլաք:

171. Երբ որ քու Տէրդ Աշամի որդիներէն անոնց սերունդը հանեց և վկայեւ տուաւ իրենց անձերու մասին թէ «ես ձեր Տէրը չե՞մ». անոնց ալ բսին. «այո՛, մենք կը վկայենք». «յ» ըրա՞նք որ յարութեան օրը խստաովանիք թէ «մենք այս մասին անհոգ քանուած էինք»:

172. Եւ կամ բսէք, «արդարև մեր հայրերը կը ռապաշտ էին և մենք անոնց սերունդէն ծագեր ենք բայց մի՞թէ դուն մեզ պիտի ոչնչացնես զատարկ գործեր ընողներուն պատճառաւ»:

173. Ահա մենք այսպէս կը բացատրենք Նշանները որ դարձի գաք:

174. Եւ դուն կարգա՛ անոնց անոր պատմութիւնը թէ ինչպէս մենք անոր նշաններ տուինք, բայց նա ետ քաշուեցաւ և սատանան զանի իրեն յարմարցող որով նա խարուեցաւ:

175. Եթէ ուզէինք զանի կը բարձրացնէինք անով, բայց նա աշխարհի յարեցաւ ու ին հաճոյքին հեռուեցաւ: Այժմ նա կը նմանի այն շունին որ լե գուն դուրս կը հանէ եթէ յարձակիս և կրկին լեգուն դուրս կը հանէ եթէ զայն ձգես: Մեր նշանները հերքող ժողովուրդը ահա ասոր կը նմանի. անոնց պատմէ՛ այս պատմութիւնը, որպէսզի մտածեն:

176. Մեր նշանները սուտ համարող ազգի համաք այս օրինակը տգեղ է և անոնք իրենց անձին կը փնասեն:

177. Աստուած որը որ առաջնորդէ այն է առաջնորդուածը. իսկ որոնք որ Աստուած կը մոլորեցնէ անոնք փնասուածներ են:

178. Մենք դեկորուն և մարդոց շատերը դժօխքին համար ստեղծած ենք, անոնք սրտեր ունին ու չեն զգար և աչքեր ունին ու չեն տեսներ և ա կանջներ ունին ու չեն լսեր, անոնք անասուններու նման և թերեւս ալ աւելի մոլորեալներ են, անոնք անհոգներ են:

179. Աստուած գեղեցիկ անուններ ունի, անոնցմով աղօթեցէք անոր, եւ անոր անուններու մասին հերձուածողները թողուցէք. անոնք իրենց գործածին պատիժը կը գտնեն:

180. Եւ մեր ստեղծածներէն ազգ մը կայ որ արարդարութեամբ կառաջնորդէ և անով ուղիղ կը գործէ:

181. Եւ մեր նշանները սուտ համարողները կամաց կամաց պիտի պատժենք, որովհետև չեն գիտեր:

182. Ես անոնց առատութիւն կուտամ, վասնզի չնորձ հաստատ է:

183. Արդեօք չե՞ն խորհիւր թէ իրենց տիրոջ մէջ զեւ չկայ, վասնզի նա լաւ խրատատու է:

184. Միթէ չեն նայիր երկինքի եւ երկրի թագաւորութեանը և Աստուծոյ ստեղծած իրերուն և իրենց վախճանը թերևս մտնեցած է: Այլ ասկէ վերջի՞նչ խօսքի կը հաւատան:

185. Աստուծոյ մոլորեցուցածին ալիս առաջնորդող չգտնուիր, և նա կը թողու որ իրենց բնականութեան մէջ ապշահար ըլլան:

186. Քեզ կը հարցնեն թէ ե՞րբ է անոր որոշուած ժամը: Դուն ըսէ՛, ան միմիայն իմ Տէրը գիտէ: Նա է որ գայն կ'իմացնէ ժամանակին, միայն նա է այն ժամուն երկնից և երկրի վիճակը ծանրացած կ'ըլլայ, նա ձեզի յանկարծ կուգայ:

187. Անոնք քեզի կը հարցնեն կարծելով թէ դուն գիտես: Ըսէ՛ թէ «անոր գիտութիւնը միայն Աստուծոյ քով է» բայց մարդոցմէ շատերը չեն հասկնար այս:

188. Ըսէ Աստուծոյ կամքէն դուրս ես իմ կողմէ բան մը չեմ կրնար ընել, ոչ օգուտ և ոչ վնաս, և եթէ ես գիտնայի գաղանի բաները, կայուածներս կաւելցնելի և ինձ չարիք էր հասներ: Բայց ես միմիայն խրատատու և աւետող եմ հաւատացեալ ժողովուրդինս:

189. Ես ձեզ մէկ անձէ մը ստեղծած է, և անկէ շինած է անոր կիւր որ անոր քով բնակի, եւ երբ

անոր մերձեցաւ, կիւր թիթեւ կերպով յղացաւ եւ անոր հետ կը շրջէր: Բայց երբ ծանրացաւ, աղաչեցին իրենց Տէր Աստուծոյն, թէ «եթէ դուն մեզի բարեպաշտ մը տաս, մենք չնորձակալ կրլլանք»:

190. Երբ որ անոնց բարեպաշտ մը տուաւ, անոնք անոր աստուածընկերներ զրին իրենց սրուածին համար: Բայց Աստուած անոնց տուած ընկերներէն բարձր է:

191. Անոր ընկեր կը արուի՞ն այնպիսիները որոնք բան մը չեն ստեղծած, եւ չեն ալ կրնար ոչ անոր էւ ոչ ալ իրենց անձին օգնութիւն բնել:

192. Եւ եթէ դուք զանոնք ուղիղ ճամբան հրաւիրէք, անոնք ձեզի չեն հետեւիր, ձեզի համար նոյնն հրաւիրէք կամ լռէք:

193. Աստուծմէ գատ որոնց որ դուք կազմէք, անոնք ալ ձեզի պէս ծառաներ են, արդ, զանոնք կանչեցէք, եւ ձգեցէք որ ձեզի պատասխանեն, եթէ հաւատարիմներ կ'ը:

194. Միթէ անոնք ռաբբօր ունին որ պարսին կամ ձեռքեր ունին որ բռնեն կամ աչքեր ունին որ տեսնեն կամ ազանչներ ունին որ լսեն: Ըսէ՛ «կոչեցէք ձեր աստուածընկերները եւ յետոյ գաւազրեցէք ինձ զէ՛մ առանց ժամանակ տալու»:

195. Անա Աստուած է իմ պաշտպանս, որ զիրքը իջեցուցած է եւ նա կը պաշտպանէ բարեգործները:

196. Եւ անոնք որոնց դուք կազմէք Աստուծմէ գատ չեն կրնար օգնել ոչ ձեզ եւ ոչ ալ իրենց:

197. Եւ եթէ դուք զանոնք առաջնորդութեան կոչէք չեն լսեր, եւ կը տեսնես որ անոնք քեզ չխտակ կը նային, բայց չեն տեսներ:

198. Երբող եզիր, բարութիւն հրամայէ, ու արգէտնութեն քաշուէ:

199. Եւ եթէ սատանան փորձանքով մը քեզ փորձէ, դուն Աստուծոյ ապաւինէ, վասնզի Աստուած կը լսէ ու գիտէ:

200. Երկիւղած եղողները երբ սատանայէն իրենց փորձանք մը պատահի, կը յիշեն, եւ այն ատեն կը տեսնեն:

201. Եւ անոնց եզրայրները զանոնք կը մոլորեցնեն, եւ յետոյ անոնք չեն թերանար:

202. Եւ երբ անոնց հրաչք սը չբերես, անոնք պիտի ըսեն «քու ըսածներդ հաւաքուած բաներ են»: Ըսէ՛ դու, «ահա ես իմ Տիրոջ կողմէ ինձ յայտնուածին կը հետեւիմ»: Այս ձեռք Տիրոջ կողմէ տեսողութիւն է եւ ուղեցոյց եւ ողորմութիւն հաւատացեալ ժողովուրդին համար:

203. Եւ Գուրանը կարգացուած ատեն, ականջ գրէք եւ լսեցէք, որպէսզի ողորմութիւն զանէք:

204. Եւ թախանձագին եւ երկիւղիւ յիշէ քու Տէրդ սրտիդ մէջ, առանց բարձր ձայնով աղօթելու առաւօտները եւ իրիկունները եւ անհոգ մի ըլլար:

205. Վասնզի քու Տիրոջ քով եղողները անոր ծառայելով չեն հպարտանար եւ անոր փառք տալով կ'երկրպագեն:



Ը. Գ Լ Ո Ի Խ

(ՍՈՒՐԷ ԷՆՔԱԼ)

Մէտնէական, Եօթանասուն եւ վեց պատգամ

Յանուն Աստուծոյ զթաճի ողորմածի.

1. Բեզի կը հարցնեն աւարի մասին: Ըսէ՛ թէ աւարը Աստուծոյ և անոր մարգարէինն է: Ուստի Աս-

տուծմէ վահնալով ձեր մէջ խաղաղութիւն հաստատեցէք և հնազանդեցէք Աստուծոյ և անոր մարգարէին, եթէ հաւատացեալներ էք:

2. Ճշմարիտ հաւատացեալները անոնք են որոնց սրտերը կը սուկան Աստուած յիշելով, եւ երբ անոր պատգամները կը կարգացունին անոնց հաւատքը կաւելնայ եւ կապաւինին իրենց Տիրոջը.

3. Որոնք որ աղօթքը կը կատարեն, եւ մեր տրուած պարգևներէն ողորմութիւն կուտան:

4. Անոնք են ճշմարիտ հաւատացեալները: Տիրոջ կողմէ անոնց համար կան աստիճաններ ներողութիւն եւ ընտիր պարգև:

5. Ինչպէս որ Տէրդ քեզի տուելդ զուրա հանեց ճշմարտութեամբ, հաւատացեալներէն մաս մը կը դժգոհանային:

6. Անոնք քեզ հետ կը վիճէին ճշմարտութեան մասին, մինչդեռ յայտնուած էր իրր թէ գէպի մահ կը քշուին, եւ անոնք կը տեսնէին:

7. Եւ երբ Աստուած ձեզ խոստացաւ այն երկու գունդներէն մէկը, զուք կը փոփոքէիք որ անգլանները ձեզր բլլան, բայց Աստուած կուզէր որ սագարութիւնը իր խօսքերով յայտնուի եւ անհաւատներու սրմատը կտրուի:

8. Որպէս զի արգարութիւնը յայտնուի եւ ունայնութիւնը սշնչանայ թիւ անհաւատներուն անհաճոյ թուի:

9. Երբ ձեր Տիրոջմէ թախանձեցիք, անիկա ձեզի պատասխանեց թէ «ահա ես ձեզ հազար հրեշտակներով պիտի օգնեմ որոնք իրարու հետեւ շարուած են»:

10. Եւ Աստուած այս բրաւ ձեզ աւետելու համար միայն, որով ձեր սրտերը հանգստանան, եւ օգնութիւնը միայն Աստուծոյ կողմէ է, վասն զի Աստուած հզօր եւ իմաստուն է:

11. Անոր կողմէ իբր ապահովութիւն ձեր վրայ թեթեւ քուն եկաւ, եւ անիկա երկիրքէն ջուր տեղացուց ձեզ համար որ մաքրուիք ու սատանայի պղծութենէն սրբուիք. եւ ձեր սիրտերը իրեն կապէ ու ձեր սաքերը ամրացնէ անով:

12. Քասի որ քու Տէրդ յայտնեց հրեշտակներուն թէ ես ձեզի հետ եմ, ուրեմն հաւատացողները ուրացուցէ՛ք. իսկ ես անհաւատներու սրտերուն մէջ վախ պիտի ձգեմ, ուստի անոնց վիզերը զարկէք եւ բոլոր մատերն ին կտրեցէք:

13. Վասն զի անոնք հակառակեցան Աստուծոյ եւ անոր մարգարէին, եւ ով որ հակառակի Աստուծոյ եւ անոր մարգարէին, Աստուած խտիր կը պատէ:

14. Այս հիմա ձերն է, ճաշակեցէ՛ք զայն, ահա թէ ինչպէս անհաւատներու համար կրակի տանջանք կայ:

15. Ո՛վ հաւատացեալներ, երբ դուք անհաւատներու դէմ խմբովին ճակատ ճակատի գաք, արտօնք շատու որ ալ ըլլան, դուք կ'անակնիդ մի գարձնէք անոնց:

16. Եւ այն օրը ով որ կ'անակը գարձնէ բացի անկէ որ պատերազմելու կամ խումբի մը կցուելու հաճար գարձած է—Աստուծոյ բարկութեանը կ'ենթարկուի եւ անոր բնակավայրը զժոխքն է որ դէշ տեղ մըն է:

17. Արդ՝ զանոնք դուք չսպաննեցիք, այլ Աստուած սպաննեց, եւ նետածդ դուն չէ որ նետեցիր, այլ Աստուած նետեց, որպէս զի հաւատացեալները գեղեցիկ փորձութիւնով մը փորձէ. որովհետեւ Աստուած կը լսէ ու զիտէ:

18. Եւ ահա այսպէս Աստուած անհաւատներու խորդախտութիւնը ոչնչացնող է:

19. Եթէ յաղթութիւն կուզէք, արդէն ձեզ եկած

է յաղթութիւնը եւ եթէ գողերեցնէք, այդ ձեր աւելի լաւ է. բայց եթէ դուք ետ դառնաք մենք ալ կը դառնանք եւ ձեր գունդերը շատ ալ ըլլայ անօգուտ կ'ըլլան, վասն զի Աստուած հաւատացեալներուն հետ է:

20. Ո՛վ հաւատացեալներ, Աստուծոյ եւ մարգարէին հնազանդեցէք եւ անկէ ետ մի դառնաք քանի որ դուք կը լսէք:

21. Եւ դուք մի նմանիք անոնց որոնք «լսեցինք» կրօնն բայց չեն լսեր:

22. Ահա Աստուծոյ առջև անասուններուն ամենադէշը համբները ու խաւերն են որ չեն հասկնար:

23. Եթէ Աստուած բարութիւն մը գիտնար անոնց մէջ, լսողութիւն կուտար անոնց. բայց եթէ անոնց լսողութիւն ալ տար, անոնք ետ կը քաշուէին:

24. Ո՛վ հաւատացեալներ, պատասխանեցէ՛ք Աստուծոյ եւ անոր մարգարէին երբ ձեզ կը կոչէ որ ողջնցունէ, եւ գիտցէք որ Աստուած մարդուս եւ անոր սրտին մէջտեղն է, եւ դուք անոր քով պիտի հաւաքուիք:

25. Եւ խռովութենէն վախցէք որ ձեր մէջ եղած անիրաւնորոն մանաւանդ չբալչի եւ գիտցէք որ Աստուած խտիր պատժող է:

26. Եւ յիշեցէք որ դուք քիչոր եւ երկրի վրայ տկար համարուելով, կը վախնայիք թէ մարդիկ ձեզ պիտի կլլեն. սակայն Աստուած ձեզ առաւ ապաստանարան եւ իր օգնութեամբը ձեզ զօրացուց եւ բնութեանէն ձեզ կերակուր տուաւ, որ չնորհակալ ըլլաք:

27. Ո՛վ հաւատացեալներ, Աստուած եւ մարգարէն մի խորէք. եւ գիտնալով մի մեղանչենք ձեր աւանդին դէմ:

28. Գիտցէք որ ձեր ապրանքները եւ ձեր դաւակ-

ները փորձանք են, բայց վարձքին մեծը Աստուծոյ քովն է:

29. Ո՛վ հաւատացեալներ, եթէ դուք Աստուծմէ վախնաք նա ձեզ կը փրկէ և ձեր շարութիւնները կը ջնջէ և ձեզ կը ներէ Աստուած մեծ շնորհքի տէր է:

30. Եւ երբ անհաւատները քեզի դէմ դաւեր յարեցին որ քեզ բռնեն կամ սպաննեն և կամ աքսորեն. Աստուած այ դաւադիր եղաւ և Աստուած ամենալու դաւադիրն է:

31. Եւ երբ մեր պատգամները անոնց կը կարդացուին, անոնք կըսեն, «յսեցինք, եթէ մենք ալ ուղենք, անոր նմանը կըսենք. այդ ուրիշ բան չէ բայց եթէ ՚իներու առաւպելները»:

32. Եւ այն ատեն անոնք ըսին, «ո՛վ Աստուած, եթէ այս քու կողմէդ եկած ճշմարտութիւն է, երկինքէն մեր վրայ քարեր տեղացուր և կամ մեզի դառն տանջանք զրկէ»:

33. Բայց Աստուած զանոնք չպատժեց. որովհետեւ դուն անոնց մէջն էիր. և Աստուած զանոնք չպատժեց որովհետեւ զղջացին:

34. Հարկաւ Աստուած պիտի պատժէր զանոնք քանի որ անոնք կարգիլէին սուրբ տաճարէն, մինչդեռ իրենք անոր վերակացուն չէին. այլ անոր ՚րակիչները միմիայն երկիւղածներէն են. բայց անոնց շատերը չեն գիտեր:

35. Անոնց աղօթքը տաճարին մօտ միայն սուրբ ու ծափել էր. ՚իմա ձեր անհաւատութեան համար կրեցէք տանջանքը:

36. Անա չհաւատացողները իրենց ինչքը կը վատնեն որ Աստուծոյ ճամբաէն արգիլեն: Զգէ թող վատնեն ՚իմա. հանդերձեալին պիտի զղջան երբ յաւթուած կըլլան:

37. Եւ չհաւատացողները դէպի դժոխք պիտի հաւաքուին:

38. Որ Աստուած չարը բարիէն զատէ. և չարերը իրարու քով պիտի բերէ, ամենն հաւաքելով դժոխք նետելու համար: Անոնք կորսուածներ են:

39. Զհաւատացողներուն ըսէ. թէ՛ եթէ անհաւատութենէ դադրին, կը ներուի իրենց անցեալը. բայց եթէ կրկին գործեն նախորդներուն եղածին նման պիտի ըլլայ:

40. Եւ կռուեցէք ու կոտորեցէք մինչև որ խռովութիւն չմտալով բոլոր կրօնքը Աստուծոյնը ըլլայ. եթէ դադրին, Աստուած անոնց գործածը կը տեսնէ:

41. Իսկ եթէ անոնք ետ դառնան, հասկցէք որ Աստուած ձեր պաշտպանն է: Եւ նա ՚ինչ լաւ օգնական է:

42. Արդ. գիտցէք որ ինչ որ աւար առնէք ՚ինգերորդը Աստուծոյ և մարգարէին և ազգականներուն և որբերուն և աղքատներուն և ճամբորդներուն է, եթէ դուք կը հաւատաք Աստուծոյ և փրկուցեան օրուան՝ որ ընդհարման օրն է—մեր ծառային իջուցուած բանին: Եւ Աստուած ամենակարող է:

43. Երբ դուք մօտ կողմն էիք և անոնք հեռուն և նեծեալները ձեր վարի կողմն էին, թէև ժամադրութիւն ալ ընէիք, չպիտի կրնայիք պայմանաժամուն համաձայնիլ. բայց Աստուած գործը լմացուցու կատարուեցաւ իսկ:

44. Որ կորսուողը յայտնօրէն կորսուէր և ողջ մընացողը յայտնապէս տպրէր, վասն զի Աստուած կը լսէ ու գիտէ:

45. Այն ատեն Աստուած զանոնք քու երազիդ մէջ քիչ ցոյց տուաւ. եթէ զանոնք քեզ շատ ցոյց տուած ըլլար. պիտի վախնայիք և այդ մասին պի-

տի կուսէիք իրարու չեա. բայց փրկեց, որովհետեւ  
սրտերու մէջինը գիտէ:

45. Եւ երբ դուք իրարու հանդիպեցաք, ձեր աչ-  
քերուն զանոնք քիչուոր երեցուց և այնպէս ալ ա-  
նոնց աչքերուն ձեզի քիչ ցոյց տուաւ: Գործը Աս-  
տուած կորոչէ ու կը կատարէ. և ամեն բան Աս-  
տուծոյ կը վերաբերի:

47. Ո՛վ հաւատացեալներ, երբ գունդի մը դէմ  
ճակատիք, հաստա կեցէ՛ք և շատ յիշեցէք Աստու-  
ած որ յաջողիք:

48. Եւ Աստուծոյ ու մարգարէին նազանդ եղէք  
և մ.՝ վիճարանիք, եթէ ոչ վախկոտ կըլլաք և կո-  
րոյնիւր կը կորսուի. սւտի համբերեցէք, որովհետեւ  
Աստուած համբերողներուն չեա է:

49. Եւ մի նմանիք անոնց, որոնք անամօթարար  
և մարգոց երեւալու համար տուներնէն դուրս ելան  
և Աստուծոյ ճամբէն շեղեցան, բայց Աստուած վե-  
րահասու է անոնց բոլոր գործերուն:

50. Եւ այն ատեն սատանան պատրաստեր էր ա-  
նոնց ընելիբը ու ըսեր էր, թէ մէկը ձեզ չլաղթեր  
այսօր քանի որ ես ձեր քովն եմ: Բայց երբ որ եր-  
կու գորագունդերը սրեցան, անիկա ետ քաշուեցաւ  
ու քսաւ. «ես ձեզմէ ետ կը քաշուիմ, կոր. իմ աե-  
սածս դուր չէք տեսներ կոր, ես Աստուծմէ կը վառ-  
նամ»: և Աստուած խիստ պատժող է:

51. Այն ատեն սրտով տկար եղող կեղծաւորները  
կըտէին «ասոնք խարեց իրենց կրօնքը»: Սակայն ով  
որ Աստուծոյ ապարինի չհաւորէր. վասն զի Աստուած  
հզօր և իմաստուն է:

52. Եւ դուն տեսնելու էիր երբ նրեշտակները կը  
մեռցնէին անհաւատները և անոնց երեսին ու կոնա-  
կին կը զարնէին ըսելով, կրակին տանջանքը կրե-  
ցէ՛ք:

51  
52

53. Այս ձեր ձեռքերուն առաջ գործածին հաւար  
է. վասնզի Աստուած իր ծառաներուն անիրաւութիւն  
չ'ընէր:

54. Փարաւօնի ցեղին և անոնցմէ առաջ եղողնե-  
րուն նման չհաւատացին Աստուծոյ նշաններուն, և  
Աստուած ալ զանոնք պատժեց իրենց մեղքերուն  
համար. վասնզի Աստուած հզօր և խստիւ պատ-  
ժող է:

55. Այս այն պատճառաւ է որ Աստուած ազգի մը  
ըրած իր շնորհը չփոխեր մինչև որ անոնք իրենց սր-  
տերուն մէջ եղածը չփոխեն որովհետեւ Աստուած կը  
չսէ ու գիտէ:

56. Փարաւօնի ցեղին և անոնցմէ առաջ եղողնե-  
րուն նման՝ ասոնք ալ ներքեցին իրենց Տիրաջ նը-  
շանները, այս պատճառաւ մենք ալ զանոնք ոչնչա-  
ցուցինք իրենց մեղքերուն համար և Փարաւօնի ցե-  
ղը ամբողջովին բռնաւոր ըլլալուն համար ընկը-  
մեցինք:

57. Արդարև զազաններէ աւելի չար են Աստու-  
ծոյ առջև անոնք որ անհաւատ են ու չեն հաւատար:

58. Անոնցմէ ոմանց չեա դաշնաւորուեցար. բայց  
ամեն անգամին քնոնք իրենց ուկար զրժեցին վա-  
սընդի երկիւղած չեն:

59. Պատերազմը մըջոցին եթէ դու անոնց հանդի-  
պիս, ցիր ու ցան ըրէ զանոնք իրենց ետեւէն  
որ յիշեն:

60. Բայց եթէ ժողովուրդի մը նենգութենէն կը  
վախնաս, հաւասար կերպով վճարէ անոնց, վասնզի  
Աստուած նենգաւորները չսիրեր:

61. Եւ անհաւատները թող չկարծեն թէ յառաջա-  
գիմեր են. անոնք յաղթական չեն ըլլար:

62. Եւ ձեր կարողութեան չափով անոնց դէմ ոյժ  
և նեճեալ զօրք պատրաստեցէք, որ անով Աստուծոյ

53  
54  
55  
56  
57  
58  
59  
60  
61  
62

Թշնամին և ձեր թշնամին և դեռ ուրիշները դորա  
չէք ճանչնար, այլ Աստուած կը ճանչնայ վախցնէք :  
Եւ դուք ինչ որ կուտաք Աստուծոյ ճամբուն համար  
ձեզ կը վճարուի և չէք զրկուիր :

63. Եւ եթէ անոնք խաղաղութեան միտին դուն  
ալ համակերպէ և Աստուած պաշտպան կարգէ որ  
լսող ու գիտցող է :

64. Եւ եթէ անոնք քեզ խարել ուզեն, Աստուած  
բաւական է քեզ, որ իր օգնութեամբ և հաւատաց-  
եալներովը քեզ կը զօրացնէ և անոնց սրտերը կա-  
պած : Եթէ դուն աշխարհի վրայ բոլոր եղածը ծախ-  
սէիր, չէիր կրնար անոնց սրտերը կապել՝ բայց Աս-  
տուած անոնք իրարու կապեց. վասն զի նա հզօր  
ու իմաստուն է :

65. Ո՛վ մարգարէ, Աստուած և հաւատացեալնե-  
րէն քեզ նետևողները բաւական է քեզ :

66. Ո՛վ մարգարէ, հաւատացեալները պատերազմի  
գրգռէ՛ : Եթէ ձեզմէ տասը համբերողներ ըլլան եր-  
կուհարիւրին կը յաղթեն. և եթէ ձեզմէ հարիւր ըլ-  
լան անհաւատներուն հազարը կը յաղթեն. վասն զի  
անոնք չհասկցող ազգ են :

67. Աստուած ձեր վրայէն թեթևաց, քանզի գի-  
տէ թէ ձեր մէջ տկարներ կան : Ուստի եթէ ձեզմէ  
հարիւր համբերողներ ըլլան, անոնք երկու հարիւրը  
կը յաղթեն. եւ եթէ ձեզմէ հազար ըլլան, երկու  
հազարը կը յաղթեն Աստուծոյ հրամանով. և Աստու-  
ած համբերողներուն նետ է :

68. Մարգարէի մը հրաման չկայ որ գերիներ  
ունենայ, մինչև որ երկրի վրայ շատ արիւն չթափէ :  
Գուք այս աշխարհի ինչքը կը փնտռէք, բայց Աս-  
տուած հանդերձեալ աշխարհը կուզէ՝ և Աստուած  
հզօր և իմաստուն է :

69. Եթէ Աստուծմէ գիրք չգար, ձեր ըրածին

համար անպատճառ մեծ պատիժ կը հասնէր ձեզի :

70. Արդ, ձեր առած աւարէն կերէ՛ք իբր մա-  
քուր ու բարի (նեւլ — խոշ), և Աստուծմէ վախցէք :  
որովնետե Աստուած ներող ուղորմող է :

71. Ո՛վ մարգարէ, ձեռքերնիդ գտնուած գերի-  
ներուն ըսէ՛, «եթէ Աստուած ձեր սրտերուն մէջ բա-  
րիք մը տեսնէ, ձեզմէ առնուածէն աւելի յաւը կու-  
տայ և ձեզ կը ներէ», և Աստուած ներող և ողոր-  
մած է :

72. Եթէ անոնք քեզ խարել ուզեն, արգէն անոնք  
Աստուած խսրած են առաջ և նա զանոնք զսպից :  
Եւ Աստուած գիտուն և իմաստուն է :

73. Ան անոնք որ կը հաւատան և գաղթեր ու  
պատերազմեր են իրենց ինչքերովը ու անձերովը Աս-  
տուծոյ ճամբուն մէջ, և անոնք որ ապաստանարան  
տուած և օգնած են, իրարու պաշտպան են. իսկ  
անոնք որ հաւատալով չեն գաղթեր, անոնց նետ-  
դուք ո՛րէէ բարեկամութիւն չէք ունենար մինչև որ  
չգաղթեն : Եւ եթէ անոնք կրօնքի համար ձեզմէ  
օգնութիւն ուզեն, անոնց օգնել ձեր պարտքն է,  
եթէ ձեզի դաշնակից ազգի մը դէմ չէ : Աստուած ալ  
կը տեսնէ ձեր գործածը :

74. Անհաւատներն ալ իրարու դաշնակից են : Եւ  
թէ այսպէս չընէիք, երկրի վրայ խռովութիւն և մեծ  
խառնակութիւն կը ըլլար :

75. Եւ անոնք որ գաղթելով Աստուծոյ ճամբուն  
մէջ պատերազմեր են, և անոնք ևս որ ապաստա-  
րան տուեր և օգներ են, ճշմարիտ հաւատացեալներ  
են. անոնց ներում և լաւ ապրուստ կայ :

76. Եւ անոնք՝ որ ասկէ լետոյ կը հաւատան և  
կը գաղթեն և ձեր նետ միացած կը պատերազմին,  
ձեզմէ են՝ և ազգակիցները իրարու դաշնակից են :

բայ Սատուծոյ գիրքին. որովհետև Աստուած ամեն  
նազէտ է:



Թ. Գ Լ ՈՒ Խ

(ՍՈՒՐԷ ԹՎՊԷ)

### Մէտքնական, հարիւր երեսուն պատգամ

1. Աստուծով և անոր մարգարէէն ազատութիւն  
անոնց համար որոնց նեա դուք կապաշաներէն դաշ-  
շինք կապեր էք:

2. Արդ, երկրի վրայ չորս ամիս պատեցէ՛ք և  
հանկցէ՛ք որ դուք չէք կորոզ տկարացնել զԱստուած  
բայց Աստուած անհաւատները խայտառակող է:

3. Մեծ ուխտագնացութեան օրը Աստուծոյ և մար-  
գարէին կողմէ մու՛նեօրկը կը յայտարարէ Աստուած  
և անոր մարգարէն կապաշաներէն նեախ են:  
Արդ եթէ զղջաք, ձեզի լաւ կ'ըլլայ, իսկ եթէ ետ  
դանաք, գիտցէ՛ք որ դուք չէք կրնար զԱստուած  
տկարացնել: Եւ անհաւատներուն դառն տանջանքի  
լուրը սուր:

4. Բացի այն կապաշաներէն, որոնց նեա դուք  
դաշինք դրած էք և անոնք չեն դրժեթ քան՝ մը ձեզ  
դէմ և մէկու մը չեն օգներ ձեզի հակառակ, ուստի  
անոնց համար դորժադրեցէ՛ք ձեր դաշինքը մինչև  
պայմանաժամուն լրանալը. որովհետև Աստուած կը  
սիրէ երկիւղածները:

5. Իսկ սուրբ ավիաները երբ լրանան ա՛յ սպան-  
նեցէ՛ք կապաշաները ուր որ գտնէք և զանոնք բռ-  
նեցէ՛ք և բանտարկեցէ՛ք և անոնց բոլոր անցնելու  
տեղերը դարան կեցէ՛ք: Եւ եթէ զղջան և աղօթքը

կատարեն և սղորմութիւն տան անոնց ճամբան բա-  
ցէ՛ք, քանզի Աստուած ներող և սղորմած է:

6. Եւ եթէ կապաշաներէն մէկը վարձքով քովդ  
մանել ուղէ՛, վարձէ՛ դանի. որ Աստուծոյ խօսքը  
լսէ. և յետոյ զանի իր ապահով տեղը հասցուր,  
քանի որ անոնք տգէտ ժողովուրդ մըն են:

7. Ի՛նչպէս կաշելի է որ կապաշաները Աստուծոյ  
և անոր մարգարէին նեա դաշինք ունենան, բացի  
անոնցմէ որոնց նեա սուրբ սաճարին մէջ դաշինք  
կապած էք, և որչափ ատեն որ անոնք ձեզի հաւու-  
տարիմ մնան, դուք ալ անոնց հաւատարիմ եղէ՛ք,  
վասն զի Աստուած երկիւղածները կը սիրէ:

8. Եթէ անոնք ձեզ յաղթեն, ոչ ազգակիանութիւնը  
և ոչ ալ պարտակիանութիւնը բանի տեղ կը դնեն,  
ինչպէս անոնք բերանով ձեզ հաճելի կ'երևան բայց  
սրտովին կը հակառակին. և անոնցմէ շատերը ա-  
նըզգամներ են:

9. Անոնք Աստուծոյ նշանները աման գնով  
ծախելով անոր ճամբէն կը շեղին, անոնց բրածը  
սրչափ գէշ է:

10. Անոնք հաւատացեալի մը հանդէպ ոչ ազգա-  
կանութիւն և ոչ պարտակիանութիւն կը յարգեն, և  
անոնք պարտազանցներ են:

11. Իսկ եթէ զղջալով աղօթքը կատարեն և ու-  
ղորմութիւն տան, այդ պարագային կրօնքով ձեր  
եղբայրներն են և մենք կը բացատրենք մեր նշան-  
ները զիտցող ժողովուրդին:

12. Բայց անոնք իրենց ուխտէն յետոյ եթէ եր-  
զումնին աւրեն և ձեր կրօնքին հայհոյեն, այն ատեն  
պատերազմեցէ՛ք անհաւատ ժողովուրդին դէմ որով-  
հետև անոնք երդում չունին որ դրժեն:

13. Երդումը արող և մարգարէն արտաքսել աշ-  
խատող ժողովուրդի մը դէմ միթէ չէ՛ք պատերազ-

միւր, երբ առաջ անոնք կոխ են: Կը վախնա՞ք անոնցմէ . երբ կը վայլէ որ ալ աւելի Աստուծմէ վախնաք եթէ երկրւղածներ էք:

14. Արդ, պատերազմեցէք անոնց դէմ, և Աստուած ալ զանոնք ձեր ձեռքովը պիտի պատժէ և զանոնք պիտի ամչցնէ և ձեզի պիտի օգնէ անոնց յաղթելու համար, և հաւատացեալ ժողովուրդին սրտերը պիտի ապաքինէ:

15. Եւ անոնց սրտի յուզումը պիտի փարատէ, վասն զի Աստուած ուղածին կողմէ կը դառնայ, և Աստուած իմաստուն ու գիտուն է:

16. Կը կարծէ՞ք որ դուք լքուած էք, և Աստուած իբր թէ չճանչնար ձեզմէ պատերազմողները և Աստուծմէ և անոր մարգարէէն ու հաւատացեալներէն զատ բարեկամ չընդունողները, բայց Աստուած գիտէ ձեր գործերը:

17. Կոսպաշտները պէտք չէ որ Աստուծոյ աղօթատեղիները մտնեն, անոնք իրենց անհաւատութեան մասին իրենք կը վկայեն, անոնց գործերը ի զուր են, և անոնք յաւիտեան կրակին մէջ պիտի մնան:

18. Աստուծոյ աշօթատեղին միայն անոնք այցելեն որոնք կը հաւատան Աստուծոյ ու վերջի օրուան և աղօթը կը կատարեն և ողորմութիւն կուտան և Աստուծմէ զատ ոչօրէ չեն վախնար, ասոնք գուցէ առաջնորդուածներէն ըլլան:

19. Բնատուրներուն ջուր տալը և սուրբ տաճարի այցելութիւնը միթէ հաւատա՞ք կը նկատէք անոր որ Աստուծոյ և վերջին օրուան կը հաւատայ ու կը պատրազմի Աստուծոյ ճամբուն մէջ: Աստուծոյ առջև ասոնք հաւասար չեն, և Աստուած անիրաւ ցեղը չարաջնորդեր:

20. Որոնք որ հաւատալով դադրէր ու ինչքով ու հոգիով միասին Աստուծոյ ճամբուն մէջ պատե-

րազմած են, անոնց աստիճանը աւելի մեծ է Աստուծոյ առջև և անոնք փրկեալներ են:

21. Անոնց Տէրը կը խոստանայ ողորմութիւն և հաճութիւն ու դրախտներ, ուր անոնց համար յարսեալ բարիքներ կան:

22. Անոնք յաւիտեան անոնց մէջ կը մնան, վասն զի Աստուծոյ քով մեծ վարձք կայ:

23. Ո՛վ հաւատացեալներ, ձեր հայրերը և եղբայրները պաշտպան մի ընդունիք, եթէ անոնք անհաւատութիւնը հաւատքէն աւելի կը սիրեն, ձեզմէ որոնք որ զանոնք պաշտպան ընդունին, չարագործներ են:

24. Գու ըսէ, «ձեր հայրերը, ձեր որդիները, ձեր եղբայրները, ձեր կիները ձեր ցեղը և ձեր վաստկած ստացուածքը և ձեր առեւտուրը՝ որուն պակսելէն կը վախնաք և ձեր հաւնած ընտելարանը եթէ Աստուծմէ և անոր մարգարէէն և անոր ճամբուն մէջ պատերազմելէն աւելի սիրելի են ձեզ համար, այդ պատգալին սպասեցէք մինչև որ Աստուած իր իրամանը բերէ, վասն զի Աստուած մեղապարտ մարդոց չարաջնորդեր:

25. Աստուած արդէն շատ տեղեր ձեզ օգնած է, և Հօնէյնի օրը երբ ձեր շատութեան կը հիանայիք անկէ օգուտ մը չեղաւ ձեզի և այն լայն տեղը ձեզի նեղ եկաւ և դուք ետ դարձաք ետեւի կողմէն:

26. Յետոյ Աստուած իր իովանին իջեցուց իր մարգարէին եւ հաւատացեալներուն վրայ եւ քու չառնած գունդերը իջեցուց ու պատժեց անհաւատները: Ան այս է անհաւատներու պատիժը:

27. Բայց յետոյ Աստուած դէպի իր ուղածը կը դառնայ վասն զի Աստուած ներող և ողորմող է:

28. Ո՛վ հաւատացեալներ, կոսպաշտները իրաւի պիղծ են, ուստի անոնք այս տարիէն յետոյ սուրբ

տաճարին մօտենալու չեն. իսկ եթէ աղքատութենէ կը վասնաք, Աստուած, եթէ կամի, ձեզ իր շնորհով կը հարստացնէ. վասնզի Աստուած գիտուն եւ իմաստուն է:

29. Գորք տրուածներէն որոնք որ Աստուծոյ եւ վերջին օրուան չեն հաւատար եւ Աստուծոյ ու անոր մարգարէին պիղծ հոչակածը պիղծ չեն համարեր եւ ճշմարիտ կրօնքը կրօնք չեն սեպեր, պատրազմեցէ՛ք անոնց դէմ, մինչեւ որ անոնք նուաստանալով հարկերնին վճարեն:

30. Եւ Հրեաները կրօնն, թէ եզրասը Աստուծոյ որդի է. եւ քրիստոնեաները կրօնն թէ Մեսիան Աստուծոյ որդի է: Այս միայն իրենց բերնին խօսքն է, որ իրենցմէ առաջ եզոզ կապաշտներու խօսքին կը նմանի: Աստուած զանոնք պիտի պատժէ իրենց զըրպարաութեան համար:

31. Անոնք Աստուծմէ եւ Մարիամի օրդի Մեսիաէն զատ իրենց վարդապետները եւ բարբնները եւստէր կընդունին. բայց անոնց պատուիրուած է որ միմիայն միակ Աստուածը պաշտեն, որմէ զատ ուրիշ Աստուած չկայ. անիկա սուրբ է այն բանէն որ իրեն ընկերներ կուտան:

32. Անոնք իրենց բերանով կուզեն Աստուծոյ յոյսը մարել. սակայն Աստուած կարգիլէ մինչեւ որ իր յոյսը կատարեալ ընէ, թէև անհաւատներուն անհաճոյ ըլլալ այդ:

33. Նա իր մարդարէն զըկած է ուղիւ առաջնորդութեամբ եւ ճշմարիտ կրօնքով, որ յաղթէ ամեն կրօնքներուն, թէև անհաւատներուն անհաճոյ ըլլայ:

34. Ո՛վ հաւատացեալներ, անա վարդապետներէն եւ բարբններէն շատերը կուտեն ի դուր մարդոց ինչքերը եւ կը մոլորեցնեն Աստուծոյ ճամբաէն: Ոսկին եւ արծաթը հաւաքելով զայնս Աստուծոյ ճամբուն

չձախողներուն զառն տանջանք կարողէ՛:

35. Այն օրը անոնք զժոխքի կրակին մէջ պիտի կարմրնան եւ անոնց ճակատները եւ կողերը ու կրօնակները պիտի խարանուին. Այս այն պատճառաւ է որ զուք ձեր հոգիներուն համար զանձ զիլած էիք, ուրինն ճաշակեցէ՛ք ձեր գիղածը:

36. Անա ամիսներուն հաշիւը. Աստուած երկինքները եւ երկիրը ստեղծեց ու Աստուծոյ գիրքին մէջ ամիսները տասնեղկու են, որոնց չորսը սուրբ է: Այս է հաստատ կրօնքը: Ուստի այդ ամիսներուն մէջ ձեր հոգիներուն անիրաւութիւն մի ընէ՛ք. բայց Աստուծոյ ընկես զնողներուն դէմ միշտ պատերազմեցէ՛ք. ինչպէս որ անոնք ձեր դէմ միշտ կը պատերազմին, եւ գիտցէ՛ք որ Աստուած երկիւղածներուն հետ է:

37. Մէկ ամիսին արգիլածը միւս ամիսին դարձնելը աւելորդ անհաւատութիւն է. անհաւատները անով մոլորուելով, զայն տարի մը սուրբ եւ միւս տարին պիղծ կը հոչակնն, Աստուծոյ պիղծ հոչակած թիւը լրացնելու համար. այսպէս անոնք մաքուր կը համարեն Աստուծոյ պիղծ հոչակածը: Անոնց գէշ գործերը պատրաստ է իրենց, եւ Աստուած անհաւատներու ցեղը չարաջնորդեր:

38. Ո՛վ հաւատացեալներ, ինչ եղաւ ձեզ որ երբ բտուեցաւ ձեզի թէ Աստուծոյ ճամբուն մէջ պատերազմեցէ՛ք, զուք գէպի հողը ծոցեցաք. այս աշխարհի կեանքը հանդերձեալէն նախամեծաօր համամարեցէ՛ք մի մէ: Այս աշխարհի կեանքին վայելքը հանդերձեալիս հետ բաղդատելով չնչին բան մըն է:

39. Եւ եթէ պատրազմի չերթաք, ձեզի զառն տանջանքով պիտի պատժէ եւ ձեր տեղը ուրիշ ազգ

մը պիտի բերէ իսկ դուք անոր ոչ մէկ վնաս չէք կրնար հասցնել: Վասն զի Աստուած ամենակարող է:

40. Եթէ դուք անոր չօգնէք, Աստուած արդէն անոր օգնած է, երբ անհաւատները զանի դուրս բրին, անիկա երկուքէն երկրորդն էր եւ քարայրին մէջն էին: Այն ատեն նա կրտէր իր ընկերին «մի տխրիր, Աստուած մեզի հետ է»: Եւ Աստուած իր հովանին իջեցուց անոր վրայ եւ քեզ չերեցող զօրագունքերով զօրացուց զանի եւ անհաւատներուն խօսքը ստորնացուց. մինչդեռ Աստուծոյ խօսքը քարձք է եւ Աստուած հզօր եւ իմաստուն է:

41. Պատերազմի գաղէք թեթեւ թէ ծանր, եւ պատերազմեցէք ձեր ինչքերով եւ ձեր անձերով Աստուծոյ ճամբուն մէջ. այս է ձեզի համար լաւը, եթէ կը հասկնար:

42. Եթէ հաւանական չա՛ն մը եւ ճամբան կարճ ըլլար, անոնք կը հետեւէին քեզ, բայց ճամբան անոնց երկար երեւցաւ եւ Աստուծոյ երզում ըրին թէ «եթէ կարենայինք ձեզի հետ կուգայինք»: Բայց անոնք իրենց հոգիները կը կորսնցնեն. եւ Աստուած զիտէ թէ անոնք ստախօս են:

43. Աստուած թող ներողութիւն չնորհէ քեզ: Դուն ի՞նչու անոնց հրաման տուիր եւ չսպասեցիր որ հաւատարիմ եղողները յայտնուին քեզ որ ստախօսները գիտնայիր:

44. Ինչքով եւ անձով սուրբ պատերազմ մղելու համար Աստուծոյ եւ վերջին օրուան հաւատացողները քեզմէ հրաման չեն ուղեր, եւ Աստուած զիտէ երկիւղածները:

45. Միայն անոնք հրաման պիտի ուզեն որոնք որ չեն հաւատար Աստուծոյ եւ վերջին օրուան եւ արտերնուն մէջ կասկած ունին:

46. Անոնք եթէ երթալ ուզէին, պատրաստուած

վրայային անոր, բայց Աստուած հաճած չէր անոնց երթալուն ու գանոնք թուլացուց եւ ըսաւ «նստողներուն հետ նստեցէ՛ք»:

47. Եթէ անոնք ձեզի հետ երթային, ձեզի ծանրութիւն միայն կրլային եւ ձեր մէջ խռովութիւն չարուցանելով բմբոստութիւն պիտի հանէին, եւ ձեք մէջ կան անոնց յողներ: Բայց Աստուած կը ճանչնայ չարագործները:

48. Անոնք առաջ ալ խռովութիւն ուզած եւ քողործերդ խառնակած են, մինչեւ որ արդարութիւնը եկաւ եւ յայտնուեցաւ Աստուծոյ հրամանը. սակայն անոնք դժկամակեցան:

49. Անոնցմէ ոչ ոնք կրսեն քեզի «ինձ հրաման տուր եւ զիս փորձանքի մի տանիր»: Անոնք արդէն փորձութեան մէջ ինկած են որովհետեւ զժոխքը անհաւատները պարփակած է:

50. Քեզի քարիք մը հանդիպելուն վրայ անոնք կը տրտմին եւ եթէ քեզ չարիք պատահի անոնք կը ըսեն, «մենք մեր դրժը արդէն առաջուց տեսած ենք», եւ ուրախանալով ետ կը քաշուին:

51. Դուն ըսէ, «Աստուծոյ մեզ համար գրածէն զատ մեզի բան չպատահիր. մեր պաշտպանը տն է»: Եւ հաւատացեալները Աստուծոյ թող ապաւինին:

52. Դուն ըսէ՛, «արգեօք կ'սպասէ՞ք որ երկու քարիքներէ մին մեզ կը պատահի». իսկ մենք կրու պատնք որ Աստուծոյ կողմէ կամ ձեր ձեռքով ձեզի պատիժ մը հասնի. ուստի սպասեցէք, անա մենք ալ կ'սպասենք ձեզի հետ:

53. Դուն ըսէ, «կամաւ կամ ակամայ ընծայ տուէք. բայց ձեզմէ չընդունուիր. վասնզի դուք անպիտան ցեղ մըն էք»:

54. Եւ անոնց ընծաներուն չընդունուելուն միակ պատճառն էր անոնց Աստուծոյ եւ անոր մարգարէին

չհաւատալը եւ աղօթքը անհոգութեամբ կատարելին եւ ընծաները ակամայ տալերնին:

55. Դուռն մի զարմանար անոնց ստացուածքին ու զաւակներու մասին. Աստուած, եթէ ուզէ, անոնց այս աշխարհի կեանքին մէջ պատիժ կուտայ, եւ անոնց հոգիները կոչնչացնէ, վասն զի անոնք անհաւատ են:

56. Եւ անոնք կ'երգնուն Աստուծոյ թէ ձեզմէ ենք այց տնոնք ձեզմէ չեն անոնք ձեզմէ կը վախնան:

57. Եթէ անոնք ապաստանելու տեղ մը, կամ քարայր մը կամ նկուզ մը գտնեն հոն կը դիման փոթանակի:

58. Եւ անոնցմէ ոմանք քեզ կը մեղադրեն ողորմութեան մասին. եթէ անկէ անոնց տաս դո՛ւ կը ըլլան, իսկ եթէ չտաս կը անոնք վշտանան:

59. Աստուծոյ եւ մարգարէին անոնց տուածէն եթէ դո՛ւ ըլլային ու ըսէին, «Աստուած մեզի բաւական է, եւ ինչ որ Աստուած իր առատութենէն եւ իր մարգարէն կուտան եւ մեր ուզածը Աստուած է»:

60. Սակայն ողորմութիւնները Աստուծմէ սահմանուած են միմիայն աղքատներուն եւ թշուառներուն եւ անոր գործաւորներուն եւ սրտերը ուղղուածներուն եւ գերութեան մէջ զանուղներուն եւ պարտականներուն եւ Աստուծոյ ճամբուն եւ ճանապարհորդաց համար. եւ Աստուած զիտուն եւ իմաստուն է:

61. Եւ անոնցմէ կան որ կը նեղացնեն մարգարէն ու կ'ըսեն, «անիկա ականջ է»: Դուռն ըսէ, «ձեզի համար բարիքի ականջ է. նա Աստուծոյ եւ հաւատացեալներուն կը հաւատայ»:

62. Եւ ձեզմէ հաւատացողներուն համար անիկա ողորմութիւն է: Իսկ Աստուծոյ մարգարէն նեղացը նողներուն համար դառն տանջանք կայ:

63. Անոնք կ'երգնուն թէ ձեզի հաճելի ըլլալ կու-

զեն. բայց ալ աւելի պէտք է որ անոնք Աստուծոյ եւ անոր մարգարէին հաճելի ըլլան, եթէ հաւատացեալ են:

64. Չե՞ն գիտեր որ մէկը եթէ հակառակի Աստուծոյ եւ անոր մարգարէին, անոր համար դժոխքի կը բաղը կայ, որուն մէջ կը մնայ յաւիտեան եւ այս մեծ անպատուութիւն է:

65. Կեղծաւորները կը վախնան թէ իրենց դէժ սուրէ մը կ'իջուցուի, որ կը յայտնէ իրենց սրտերուն մէջ եղածը: Ըսէ՛, «ծաղրեցէք դուք. Աստուած անտարակոյս պիտի բերէ ձեր վախցածը»:

66. Եթէ անոնց հարցնես, անոնք պիտի ըսեն թէ մենք խօսքով կատակ կընէինք: Դուռն ըսէ՛, «դուք միթէ Աստուած եւ անոր պատգամները ու անոր մարգարէն կը ծագրէ՞ք»:

67. Մի պատրուակէք, դուք հաւատայէ յետոյ այլեւ անհաւատ եղբեր էք, եթէ ձեր մէկ մասին ներկնք, միւս մասը կը պատժենք, վասնզի անոնք յանցաւորներ են:

68. Արու եւ էգ կեղծաւորները իրարու յար եւ նրման են, կը պատուիրեն ընել գէշ բաները եւ չընել լաւ բաները. եւ ձեռքերնին կը գոցեն. անոնք մոռցած են զԱ. տուած, եւ Աստուած ալ զանոնք կը մոռնայ, որովհետեւ կեղծաւորները մեղապարտներ են:

69. Արու եւ էգ կեղծաւորներուն Աստուած դժոխքի կրակը խոստացածէ, որուն մէջ յաւիտեան կը մնան: Անոնց բաւական է այն եւ Աստուած անիծած է զանոնք, եւ անոնց յաւիտեանական տանջանք կայ:

70. Դուք կը նմանիք ձեզմէ սուղ եղողներուն որոնք ձեզմէ զօրաւոր ըլլալով, աւելի շատ ինչք եւ զաւակներ ունէին, անոնք իրենց բաժինէն օգուեցան. դուք ալ ձեր բաժինէն կօգտուիք. եւ դուք պարսպ խօսքերով կ'զգաղիք, ինչպէս անոնք կը

ազրադէին. անոնց գործերը աշխարհի և հանդերձ-  
եայի մէջ ոչնչացան, և անոնք կորսուած են:

71. Արդեօք անոնք չեն իմացած պատմութիւնը,  
իրենցմէ առաջ եղողներուն, Նոյի ցեղին և Ասր և  
Սամուաի և Արրահամի ժողովրդին և Մատրիի մար-  
դոց և կործանած քաղաքներու պատմութիւնը. Ա-  
նոնց մարգարէներ եկան յայանութիւններով, և Աս-  
տուած անոնց չարիք չհասցուց, այլ անոնք իրենց  
հոգիներուն չարիք հասցուցին:

72. Բայց արու և էգ հաւատացեալները իրարու  
պաշտպան են, կը պատուիրեն օրինաւոր բաները բ-  
նել և գէշերը չընել, և աղօթքնին կը կատարեն և  
աղորմութիւնը կուտան և Աստուծոյ ու մարգարէիւ-  
կը հնազանդին: Հարկաւ Աստուած այ անոնց պիտի  
աղորմի վասնզի Աստուած հզօր և իմաստուն է:

73. Արու և էգ հաւատացեալներուն Աստուած  
խոստացած է դրախտներ սրոնց տակէն գետեր կը  
հոսին և անոնք ինն կը մնան լաւիտեան: Եղեմի  
դրախտներուն մէջ ընտիր բնակավայրեր կան, բայց Աս-  
տուծոյ հաճութիւնը ասկէ աւելի մեծ է. սա մեծ-  
շնորհք մըն է:

74. Ս'վ մարգարէ, պատերազմէ անհաւատներու  
և կեղծաւորներու դէմ և անոնց հանդէպ հակառա-  
կորդ եղիր. և անոնց մնալու տելը դժոխքն է և  
ինչ գարշելի տեղ է այն:

75. Անոնք կ'երգնուն թէ չեն ըսած. բայց ճիշդ  
է որ անոնք ըսած են անհաւատութեան խօսքը և  
խալամութիւնը ընդունելէ յետոյ անհաւատութեան  
դարձան. և ջանացին բանի մը, որուն մէջ չյաջո-  
ղեցան, և անոր համար ձեռնթափ եղան որ Աստ-  
ուած և անոր մարգարէն իր ողորմութեամբը զանոնք  
հարստացուց: Արդ եթէ անոնք զղջան լաւ. կըլլայ  
իրենց համար. իսկ եթէ ետ դառնան, Աստուած

թէ այս աշխարհի մէջ և թէ հանդերձեային  
դառն տանջանքով կը պատժէ զանոնք. և երկրի-  
վրայ անոնց ոչ պաշտպան և ոչ օգնական կայ:

76. Եւ անոնցմէ ոմանք ուխտ ըրած են Աստուծոյ  
որ «եթէ իր առատութենէն մեզի սայ, մենք ան-  
պատճառ կը հաստատենք և բարեպաշտներէն կը  
ըլլանք»:

77. Բայց երբ իր աստութենէն տուաւ անոնց  
անոնք ազահացան և մերժելով ետ դարձան:

78. Անոնք իրենց ուխտին հակառակ վարուելով  
ստախոսութիւն ըրած ըլլալուն համար Աստուած  
իրը հետեանք անոնց սրտերուն մէջ կեղծաւորու-  
թիւնը դրաւ մինչև հանդիպման օրը:

79. Արդեօք չե՞ն գիտեր որ Աստուած անոնց  
գազանիքները և ծածկախոսութիւնները գիտէ: Եւ  
ստուգիւ Աստուած գաղտնիքները գիտցող է:

80. Հաւատացեալներուն սիրով սղորմութիւն տը-  
ւողները և կարողութենէն աւելի սալ չկրցողները  
անոնք կը ծաղրեն. Աստուած այ զանոնք պիտի ծա-  
ղրէ, և անոնց դառն տանջանք կայ:

81. Անոնց համար ներողութիւն խնդրէ կամ մի  
խնդրեր միեւնոյն է. եթէ անոնց համար եօթանասուն  
անգամ այ ներողութիւն խնդրես, Աստուած չներեր  
անոնց, որովհետև անոնք Աստուծոյ և անոր մար-  
գարէին չեն հաւատար և Աստուած անզգամներու  
ցեղը չառաջնորդեր,

82. Յաղթանակէն ետ մնալով, Աստուծոյ մարգա-  
րէին դէմ գտնուողները ուրախացան և Աստուծոյ  
ճամբուն մէջ իրենց ստացուածքովը և անձովը պա-  
տերազմելէ ետ կեցան ու կրտէին «այս տաքութեան  
մէջ պատրազմի մի ելլէք»: Դուն ըսէ, «դժոխքի  
կրակին տաքութիւնը աւելի սաստիկ է եթէ  
գիտէք.

83. Հիմա անոնք թող քիչ մը խնդան, յետոյ շատ պիտի լան. իրենց գործքերուն ի պատիժ:

84. Եթէ Աստուած քեզ անոնց մէկ խումբին մօտ դարձնէ և անոնք ձեզի հետ միացած կառուի ելլելու նրաման ուզեն, դուն ըսէ անոնց դուք երբէք ինձ հետ կառուի չէք երթար և ինձ հետ թշնամիք մը դէմ չէք պատրազմիր. վասն զի դուք առաջին անգամ նստիլ ուզեցէք, ուստի նստեղիք ետ մնացողներուն հետ»:

85. Եւ դուն երբէք մի ալօթեք անոնցմէ մէկին համար երբ մեռնի և գերեզմանին մօտ մի կենար վասնզի անոնք Աստուծոյ և մարգարէին չը հաւատացին և մեղապարտ մեռան:

86. Եւ դուն չհրապարուիս անոնց ինչքերուն և գաւակներուն, որովհետեւ Աստուած այս աշխարհի մէջ զանոնք պատժել կուզէ անոնցմով, որպէսզի հոգիներն կորսուի, քանի որ անհաւատ են:

87. Եւ երբ սուրէ մը կիջնէ Աստուծոյ հաւատալու և անոր մարգարէին հետ միտակ պատերազմելու համար, այն ատեն անոնցմէ ինչքի տէր եղողները քեզի կըսեն. «մեզ թոյլատրէ որ նստողներուն հետ մնանք»:

88. Անոնք կուզէին ետ մնացողներուն հետ ըլլալ և անոնց սրտերը կնքուեցան և չէին հասկնար:

89. Սակայն մարգարէն և հաւատագետները իրենց ինչքով ու անձով պատերազմեցան, և անոնց համար բարիքներ կան և անոնք երջանիկ կըլլան:

90. Աստուած անոնց զրախտներ պատրաստած է, որոնց տակէն գետեր կը չոսին և որոնց մէջ յաւիտեան պիտի մնան. այս մեծ շնորհ մըն է:

91. Արարներէն ոմանք եկան և պատճառներ ցոյց տալով խնրդեցին որ իրենք կառուի չերթան, և անոնք որ Աստուծոյ և մարգարէին սուտ խօսեցան, մնա-

ցին. արդ, անոնցմէ անհաւատներուն անպատճառ գառն տանջանք տրուի:

92. Տկարներուն, հիւանդներուն և նուէր տալու անկարողներուն պատրազմի չմասնակցիր յանցանք չհամարուիր. եթէ Աստուծոյ և անոր մարգարէին հաւատարիմ են. բարեգործներու դէմ դժգոհութեան տեղի չկայ, և Աստուած ներող և ողորմած է,

93. Եւ անոնց համար ալ դժգոհութեան պատճառ չկայ՝ որոնք քեզ եկան հեծնալու անասուն ուզելու համար և դուն ըսիր թէ ձեզի տալիք գրաստ չունիմ, և անոնք արտասուելով ետ դարձան ու արքած էին նպաստելու բան մը չունենալուն համար:

94. Սակայն կշտամբելի են անոնք որոնք հարուստ ըլլալով հանգերձ՝ քեզմէ հրաման ուզեցին մնալու. անոնք ուզեցին նստողներուն հետ մնալ, և Աստուած անոնց սրտերը կնքեց. բայց անոնք չեն հասկնար:

95. Երբ որ դուք անոնց քով դառնաք, անոնք ինչոզինքնին արդարացնել կուզեն: Դուն ըսէ՛, «մի պատրուակէ՛ք, մենք ձեզ չենք հաւատար. Աստուած մեզ իմացուցած է ձեր վիճակը. և Աստուած և մարգարէն հարկաւ գիտեն ձեր գործերը. յետոյ դուք ետ պիտի դարձուիք զաղանիքը ու յայտնին գիտցողին քով և այն կիմացնէ ձեզ թէ ինչ ըրած էք:

96. Երբ դուք անոնց քով դառնաք, անոնք ձեզ Աստուծոյ անունով երգում պիտի տան որ դուք երեսնիդ դարձնէք անոնցմէ: Ուրեմն երեսնիդ դարձուցէ՛ք անոնցմէ. վասն զի անոնք պիղծ են, և անոնց բնակալայրը դժոխքն է որ փոխարէնն է իրենց արարքին:

97. Անոնք ձեզ երգում պիտի տան որ անոնցմէ գո՛ ըլլաք. արդ, եթէ դուք անոնցմէ գո՛ ըլլաք, Աստուած մեղապարտ ժողովուրդէն գո՛ չըլլար:

98. Անհաւատութեան և կեղծաւորութեան մասին Արարները աւելի սոսկալի են, և շատ բնական է որ անոնք Աստուծոյ իր մարգարէին իջեցուցած ին՝ սահմանները չգիտնան. և Աստուած գիտուն ու իմաստուն է:

99. Եւ Արարներէն կան որ տուած նուէրնին փոխ կը համարեն, և զ'սպասեն ձեզ' համար փորձանքի մը: Գէշ փորձանքներ իրենց թող պատահին: Եւ Աստուած լսող և դիտող է:

100. Եւ Արարներէն մաս մը կան որ կը հաւատան Աստուծոյ և վերջին օրուան, և իրենց տուած նուէրները Աստուծոյ բնծայ և մարգարէին ալօթքներուն մերձերցման առիթ է: Հարկաւ Աստուած զանոնք իր ողորմութեան մէջ պիտի տանի վասնզի Աստուած ներող և ողորմող է:

101. Գաղթողներու և օգնողներու կանուխ հասնողներէն և առաջիններէն և բարեգործութեամբ աւնոնց ճեղակողներէն Աստուած գո՛հ է, և նա անոնց պատրաստած է տակէն գետեր հոսող զրահտներ, որոնց մէջ յաւիտեան կը մնան:

102. Եւ ձեր շուրջը գտնուող արարներէն և Մէտինէի բնակիչներէն ալ կեղծաւորներ կան որ կը յամառին կեղծաւորութեան մէջ. դուն զանոնք չեմ գիտեր: Մենք անոնց երկու անգամ տանջանք պիտի տանք, և յետոյ մեծ տանջանքին պիտի դառնան:

103. Եւ ուրիշներ կան որ կը խոստովանին և իրենց մեղքերու ճեղ բարի գործեր կը խառնեն. Գուցէ Աստուած անոնց դառնայ, վասն զի Աստուած ներող և ողորմող է:

104. Դու անոնց ինչքերէն ողորմութիւն ա՛ռ զանոնք մաքրէ ու սրբէ՛ անով և ա՛ոնց համար ալօթք ըրէ: վասն զի քու ալօթքներդ անոնց հանգստութիւն է և Աստուած կը լսէ ու գիտէ:

105. Անոնք չեն գիտեր միթէ, որ Աստուած կը բնդունի իր ծառաներէն զոչուծը և կստանայ ողորմութիւնները, վասնզի Աստուած դարձող և ողորմող է:

106. Դու ըսէ՛. «դուք գործեր կատարեցէք, Աստուած կը տեսնէ ձեր գործերը, նաև անոր մարգարէն և հաւատացեալները. և դուք քիչ յետոյ գաղտնին ու յայտնին գիտցողին պիտի վերադարձուիք. և նա ձեզի կիմացնէ թէ ինչ կընէիք:

107. Ուրիշներ ալ Աստուծոյ գործին հ'սպասեն, թէ զիրենք պիտի պտտով՞, թէ ղէպի իրենց պիտի դառնայ: Աստուած գիտուն և իմաստուն է:

108. Եւ անոնք որ մնաս տալու մտքով և անհաւատութեան և հաւատացեալներու մէջ բաժանում ձգելու համար և աւելի առաջ Աստուծոյ և անոր մարգարէին դէմ պատերազմողներուն պատրուակ բլլալու նպատակով ալօթատելի մը շնած են երրում կընեն թէ մենք միայն բարիք հուզենք. բայց Աստուած կը տեսնէ որ սուտ կը խօսին:

109. Դուն երբէք չուն չկենաս: Աղօթատելին այն որ առջի օրէն երկիւղածութեան վրայ հիմնուած է հարկ է որ ասոր մէջ կայնիս. ասոր մէջ աղօթես, ասոր մէջ մաքրուիլ փափաքող մարդիկ կան, և Աստուած ալ մաքրուածները կը սիրէ:

110. Արգ. իր տունը երկիւղածութեան և Աստուծոյ հաճութեան վրայ հիմնողը լաւ է. թէ՛ իր շէնքը հեղեղէ փորուած գետերին վրայ հիմնողը, որ տնոր ճեղ միասին գժոխքին կրակին մէջ կիցնայ և Աստուած չարագործներուն ցեղը չառաջնորդեր:

111. Անոնց շինած շէնքը իրենց սրտերուն մէջ կասկած ձգելէ ազատ չպիտի ըլլայ, մինչև որ անոնց սրտերը կտոր կտոր ըլլան, և Աստուած գիտուն և իմաստուն է:

112. Ահա Աստուած հաւատացեալներուն անձերը և ստացուածքը ծախու առած է որ փոխարէն դըրախտը անոնցը ըլլալ: Անոնք Աստուծոյ ճամբուն մէջ կը պատերազմին և կ'սպաննեն ու կ'սպաննուին հաւատալով. այս մասին Օրինագրքին և Աւետարանին և Գուրանին մէջ եղած խոստումը ճշմարիտ է: Ո՞վ կայ Աստուծմէ աւելի հաւատարիմ իր խոստումին: Ուստի ձեր այս առևտուրի մասին ուրախ եղէ՞ք: Եւ այս շնորհ է:

113. Զգլացողները, ծառայողները, փառարանողները, ծոռապանները, ծնրադրողները, երկրպագողները, չարագործութիւնը արգիւզողները և Աստուծոյ սահմանները պահողները հաւատացեալներ են, որոնց աւերիս տուր:

114. Մարգարէն և հաւատացեալները իրաւունք չունին կռակաշունչութեան մեղքին թողութիւն խնդրելու եթէ ազգական ալ ըլլան քանի որ անոնց լատնուած է: Վասնզի անոնք զժողովի ժողովուրդ են:

115. Աստուծոյ խոստմանը վրայ հիմնուելով էր որ Արրահամ իր չոր մեղքին թողութեան համար ազութեց. բայց երբ իմացաւ որ ան Աստուծոյ թշնամի է, անկէ ինք ետ քաշուեցաւ. վասնզի Արրահամ զթասիր և խոնարհ էր:

116. Եւ Աստուած ազգ մը ուղիղ առաջնորդելէ յետոյ շմոլորեցներ. մինչև որ անոնց չչայտնէ թէ ինչ բաներէ զգուշանալու են. քանզի Աստուած ամենագէտ է:

117. Ահա երկինքի և երկրի արքայութիւնը Աստուծոյ է նա կ'ողջնացունէ ու կը մեռցնէ և դուք Աստուծմէ զատ ոչ բարեկամ և ոչ օգնական ունիք:

118. Աստուած դարձած է արդէն մարգարէին, գաղթողներուն և օգնողներուն կողմը, անոնք նեղութեան պատուէն, երբ քիչ մնացեր էր որ լրենցմէ

մէկ մասին սրտերը բաժնուէին. անոր հեռեկան, Աստուած զէպի անոնց դարձաւ. վասնզի անոնց մտերիմ և զթացող էր:

119. Նաև դարձաւ զէպի այն երկրին, որ ետ մնացած էին. և որոնք լայն երկիրը իրենց նեղ գալով, կը տառապէին ի սրտէ և կը կարծէին թէ իրենց համար Աստուծոյ քով ապաստանելէն զատ ուրիշ ապաստանարան չկայ, Աստուած անոնց դարձաւ որ ապաշխարէին վասնզի Աստուած դարձող և ողորմող է:

120. Ո՞վ հաւատացեալներ, վախցէք Աստուծմէ և հաւատարմներուն հետ եղէք:

121. Մէտինէի բնակիչներուն և չրջակայի արարներու և իււաւունք չէր արուած որ Աստուծոյ մարգարէին ետ մնալին ու բաժնուէին իրենց անձին համար: Անոնք այդ բանը ըրին որ Աստուծոյ ճամբուն մէջ չյոգնին և անօթի չմնան, և անոնք անհաւատները զրդուող քայլ մը չփոխեցին և թշնամիէն վրասի մը շնանդիպեցան, որով անոնց բոքի գործ մը վերաւ գրուէր. վասն զի Աստուած բարեգործներուն վարձքը չկորսնցներ:

122. Եւ անոնք մեծ կամ փոքր նուէր մը չեն տար, և ձօրէ մը չեն անձնիր առանց իրենց վարձք մը գրուելու: Աստուած անոնց գործներուն փոխարէն բարիք կը հատուցանէ:

123. Եւ հաւատացեալներուն բոլորն ալ պէտք չէ պատերազմի երթան անոնց իւրաքանչիւր հատուա. ձէն մէյ մէկ մաս թող երթան պատերազմի որ կրօնքը սովորին և վերադարձին ժողովուրդը խրատեն որպէսզի զգուշանան:

124. Ո՞վ հաւատացեալներ, ձեզի պրացի եղող անհաւատներու զէմ կռուեցէք, որ անոնք ձեր խոստութիւնը տեսնեն, և հասկցէք թէ Աստուած եր-

կիւղածներուն հետ է :

125. Եւ միշտ Սուրէ մը իջուցուելուն, անոնցմէ  
ոմանք կըսեն, «սա ձեզմէ որուն հաւատաքը աւել-  
ցուց». բայց հաւատացողներուն հաւատաքը կաւելցը-  
նէ, և անոնց աւետիս կը տրուի :

126. Իսկ սրտերնուն մէջ հրեանդութիւն ունե-  
ցողներուն գարշութիւն գարշութեան վրայ կաւել-  
ցորի և անոնք անհաւատութեան մէջ կը մեռնին :

127. Չե՞ն տեսներ անոնք միթէ որ ամեն տարի  
մէկ կամ երկու անգամ փորձանքի կը հանդիպին,  
սակայն ոչ կը զլջան և ոչ ալ կը խորհին :

128. Եւ ամեն անգամ որ սուրէ մը կ'իջնէ, ա-  
նոնք իրարու նայելով կըսեն, «արդեօք մէկը ձեզ  
տեսա՞ւ» ու կանցնին կերթան : Աստուած դարձնէ  
անոնց սրտերը, տնոնք չհասկցող ժողովուրդ մըն են :

129. Այ ձեր մէջէն ձեզի մարգարէ մը եկած է,  
որ սուրբ է. դուք անոր զէմ կը մեղանչէք. նա ձեզ  
կը ցանկայ և հաւատացեալներուն կը զթայ և կո-  
ղորմի :

130. Արդ, եթէ ետ դառնան ըսէ՛, «Աստուած  
ինձբաւական է. անկէ զատ Աստուած չկայ. ես դա-  
նի պաշտպան եմ ընտրած. և նաէ տէրը մեծ գահին» :



### Ժ. Գ Լ Ո Ի Խ

(ՍՈՒՐԷ ԵՌԻՆԸՍ)

Խաղաղութիւն անոր: Մէքէական, հարիւր  
ինը պատգամ

Յանուն Աստուծոյ զթածի ողորմածի

1. Ա. Լ. Ր. Իմաստուն գիրքին նշանները ասոնք են:

2. Չարմանալի լո՞նջ կայ մարդոց համար, իրենցմէ  
մարդու մը յայտնութիւն աուած ըլլալնուս մասին,  
որ մարդոց խրատ և հաւատացեալներուն աւետիս  
տայ՝ թէ արդարութիւնը իրեն Տէրը կը հատուցանէ :  
Քայց անհաւատները կըսեն, թէ այս յայտնի կախարդ  
մ'ըլլալու է անպատճառ :

3. Ահա Աստուած է ձեր Տէրը, որ ստեղծած է եր-  
կինքը ու երկիրը վեց օրուան մէջ և յետոյ նստած  
է գահին վրայ. նա կը կարգադրէ ամեն բան, ա-  
ռանց անոր հրամանին բարեխօս չկայ : Այս է ձեր  
Տէր Աստուածը, ուստի զանի պաշտեցէ՛ք : Միթէ  
չէ՞ք մտածեր :

4. Դուք բոլորդ ալ անոր պիտի դառնաք : Աս-  
տուծոյ խոստումը ճշմարիտ է : Նա արարած մը կը-  
ստեղծէ, յետոյ ետ կը պարձնէ, որ վարձատրէ զա-  
նոնք եթէ հաւատացեր և ուղիղ բարեգործութիւն  
ունեցեր են. Իսկ չհաւատացողներուն՝ իրենց ան-  
հաւատութեանը համար եռացող ըմպելիք և գառն  
տանջանք կայ :

5. Ճառագայթաւոր արեգակը և լուսատու լուսինը  
անիկա շինած է, և անոնց շրջանները ինք որոշած  
է որ տարիներուն թիւըր և հաշիւը զիտնաք : Աս-  
տուած ասոնք ստեղծած է արդարութեամբ և հաս-  
կցող ժողովուրդէն կը բացատրէ իր նշանները :

6. Արդարեւ գիշերի և ցերեկի փոփոխուելուն և  
երկնի ու երկրի վրայի Աստուծոյ ստեղծածներուն  
մէջ նշաններ կան երկիւղած ժողովուրդի համար :

7. Անոնք որ յոյս չունին մեզ հանդիպելու և աշ-  
խարհի կեանքէն գո՞ն են և ապահով նաեւ անոնք որ  
մեր նշաններու մասին անփոյթ են :

8. Անոնց կենալու տեղը կրակն է իրենց գործե-  
րուն պատճառաւ :

9. Արդարեւ անոնք որ հաւատալով բարի գործեր

դատարեր են, իրենց Տէրը անոնց հուատքին համար զանոնք պիտի առաջնորդէ զբախտներ որոնց տակէն զեաներ կը հոսին:

10. Հոն անոնց ազօթքն է «փառք քեզ ո՛վ Աստուած» եւ անոնց բարեւր «խաղաղութիւն»:

11. Եւ ազօթքին վերջաւորութիւնը «փառք աշխարհներու Տիրոջ» ազօթքն է:

12. Աստուած եթէ չարիքը փութացնէր՝ ինչպէ՞ր բարիքը կը փութացնէ, անոնց վախճանը արդէն վրձուած կ'ըլլար՝ եւ մեզ հանդիպել շյուսացողները կը թողունք մենք իրենց ըմբոստութեան մէջ չուարած:

13. Եւ մարդուն փորձանք մը պատահելուն, նա նստած կամ պառկած եւ կամ կանգնած տեղը մեզ կաղաչէ իսկ երբ փորձանքէն ազատենք նա կանցնի կերթայ, իբր թէ մեզ չէ աղաչեր իրեն պատահած փորձանքին համար: Մենք այս կերպով պատրաստեր ենք անկարգներուն գործերը:

14. Մենք ձեզմէ առաջ եղող աղգերը ջնջեցինք, իրենց բռնութեանց համար եւ հրաշքներով իրենց եկող մարդարէներուն հաւատալնուն պատճառաւ: Չարագործ ժողովուրդը մենք այսպէս կը պատցենք:

15. Անոնցմէ յետոյ երկրի վրայ մենք ձեզ անոնց յաջորդներ ըրինք, որ տեսնենք թէ դուք ինչպէ՞ս պիտի վարուիք:

16. Եւ մեր յայտնի նշանները կարգացուելուն, մեր հոնդիպումը շյուսացողները կրան, «ասկէ դատուրիչ Գուրան մը բեր կամ առիկա փոխէ» Դունքս «ես իրաւունք չունիմ զայն փոխելու ըստ իմ կամաց, ես միայն ինձ եղած յայտնութեան կը հետեւիմ. եթէ ես ըմբոստանամ Տիրոջս դէմ, կը վախնամ մեծ օրուան ամոլանքէն»:

17. Ըսէ՛, «եթէ Աստուած ուզէր, ես չէի կարգար

զայն ձեղի եւ չէի համոզեր ձեզ. ես ձեզի հետ առաջ ապրած եմ՝ չէ՞ք մտածեր»:

18. Աստուծոյ մասին սուտեր չինողէն եւ անոր նշանները հերքողէն աւելի անիրաւ ս՛ով կայ: Իրօք յանցաւորները երանութիւն չեն զաներ:

19. Եւ անոնք Աստուծմէ զատ ուրիշ բաներ կը պաշտեն, որոնք անոնց ոչ օգտաւ եւ ոչ վնաս կը բերեն, եւ կրան. թէ անոնք մեր բարեխոսներն են Աստուծոյ մօտ Դունքս, «երկնից եւ երկրի վրայ ձեռք չգիտցածները դո՞ւք պիտի խմացնէք Աստուծոյ: Ան սուրբ ու բարձր է ձեր անոր բնկեր աւաճանքէն»:

20. Մարդիկ մէկ կրօնքէ (ազգէ) էին, բայց անհամաձայն գոնուեցան. եւ եթէ Տիրոջ կողմէ կօնխաւթսք չըլլար, անհամաձայնութեան առարկան իրենց մէջ վճռուած կըլլար:

21. Եւ կրան, «եթէ անոր Տիրոջ կողմէ անոր հրաշք մը չիջնէ, չենք հուատար»: Դունքս ըսէ՛ «պաղտնիքը Աստուծոյ յատուկէ՛ ուստի դուք սպասեցէ՛ք. ես ալ ձեր հետ կ'սպասեմ»:

22. Եւ երբ մենք վնաս հասցինք մարդոց անոնց սղոթութիւն ճաշարեւ ապէ յետոյ, այն առան անոնք խարդախութիւն ըրին մեր նշաններուն դէմ: Դունքս, «նենգութեան մատին Աստուած աւելի արագ է անձեր բրած խարդախութիւնները կը գրին մեր առաքեալները»:

23. Յամաքի եւ ծովի վրայ ձեր գործերը դիւրացնողը նա է. երբ դուք նախ մէջ էիք եւ նստերը նպատաւոր հովով մը անոնց հետ միասին կերթային եւ անոնք անով ուրախացած առան, նստերուն խիստ հով մը զարնելով, ամեն կողմէ ալիքներ եկան, եւ անոնք ամեն կողմէ պաշարուած կարծելով, ճշմարիտ հաւատարով մը Աստուծոյ ազօթեցին, որ «եթէ դունքս ասկէ ազատեւ մեզ, մենք փառաբանողներէն կ'ըլլանք»:

24. Եւ երբ ազատեց' անոնք երկրի վրայ ապրտատարեցան: Ո՛վ մարդիկ, ձեր ապտատարութիւնը ձեր անձերուն գէժ միայն այս աշխարհին շահն է. յետոյ դուք մեր քով պիտի գտնաք եւ մենք ձեր գործերը ձեզի պիտի իմացնենք:

25. Այս աշխարհի կեանքը կը նմանի միմիայն մեր երկինքէն իջեցուցած ջուրին, որով երկրի բոսորը խառն կը բուսնին ու մարդիկ եւ անասուններ անոնցմէ կուտեն: Երկիրն ալ անոնցմով կը պծնուի եւ անոր բնակիչները կը կարծեն թէ հզօրներ են: Իսկ մեր հրամանը գիշեր կամ ցերեկ հասնելուն, զանոնք հնձուած ցանքի պէս կընենք. իբր թէ երէկ չէին բուսած: Մտածող ժողովուրդի մը համար մենք նշանները այսպէս կը բացատրենք:

26. Եւ Աստուած կը հրաւիրէ խաղաղութեան տունը եւ ուղիղ ճամբան կառաջնորդէ:

27. Բարիք գործողներուն բարիք կայ եւ աւելին. եւ անոնց երեսը չձածկուիր սելութեամբ ու ամօթով. անոնք գրախտի ընկերներ են եւ հոն կը մընան յաւիտեան:

28. Իսկ գէշ գործողներուն ի փոխարէն գէշ պատիժ կայ եւ ամօթով կը պատուօրին անոնք. Աստուծոյ ձեռքէն զանոնք ազատող չըլլար. անոնց երեսը կարծես ծածկուած է գիշերուան խաւարի կտորով: Անոնք կրակին ընկերներն են, հոն կը մնան յաւիտեան:

29. Եւ այն օրը որ մենք ամենը կը ժողլինք, կ'ըսենք Աստուծոյ ընկերներ դնողներուն, «գացէ՛ք ձեր տեղը դուք եւ ձեր ընկերները»: Եւ զանոնք կը բաժնենք իրարմէ. եւ անոնց ընկերները կըսեն, «դուք մեզ չէիք պաշտեր»:

30. «Աստուծոյ վկայութիւնը կը հաստատէ թէ մենք ձեր պաշտումէն անտեղեակ եղած ենք»:

31. Հոս տեղ ալէն մէկ հոգի կը հասկնայ թէ անաջ ինչ գործեր է. եւ անոնք Աստուծոյ քով կը դարձուին. որ իրենց ճշմարիտ պաշտպանն է եւ անոնց հնարածները կ'անհետանան:

32. Դուն ըսէ, «ձեզի երկինքէն ու երկրէն ո՞վ կը կերակրէ եւ ականջը ու աչքը ո՞վ կը պանպանէ եւ ողջը մեռեալէն եւ մեռեալը ողջէն ո՞վ կը հանէ եւ բոլոր գործերը ո՞վ կը կաշկաղրէ»: Անոնք «Աստուած» պիտի բռնն. ուստի ըսէ, թէ ի՞նչու չէք վախնար Աստուծմէ:

33. Արգ ձեր ճշմարիտ Տէր Աստուածը սա է. եւ ճշարտութենէն յետոյ մոլորութենէ՛ գատ բան մը չկայ: Ուրեմն ի՞նչու կը խտարիք:

34. Այս կերպով ճիշտ ելաւ քու Տիրոջդ խօսքը թէ անդգամները չեն հաւատար:

35. Ըսէ՛ «ձեր աստուածներէն կա՞յ մէկը որ ըստեղծելէ յետոյ ետ դարձնէ». Դուն ըսէ՛. Աստուած է որ արարածները կ'ստեղծէ եւ յետոյ ետ կը դարձնէ»: ուրեմն դուք ի՞նչու կը զրպարտէք»:

36. Դուն ըսէ «ձեր աստուածներէն ո՞րը կայ որ դուք ճշմարտութիւն առաջնորդէ»: Ինչ ըսէ՛. «Աստուած կառաջնորդէ գէզի ճշմարտութիւնը»: Արգ. «ճշմարտութեան առաջնորդողի՞», պէտք է հետեւիլ, թէ ան՞որ որ շտաջնորդեր. այլ ինք կ'առաջնորդուի: Հիմակ դուք ի՞նչպէս կը դատէք:

37. Անոցմէ շատը միայն կարծիքի կը հետեւի. բայց ճշմարտութեան մասին կարծիքը անբաւական է. վանդի Աստուած անոնց գործածները գիտէ:

38. Եւ կարելի չէ որ այս Գուրանը Աստուծմէ գատ ուրիշ մը շարադրուած ըլլայ. բայց իբրմէ անաջ եղածը կը հաստատէ եւ կը բացատրէ աշխարհ-

ներու Տիրոջ կողմէ եղած անկասկածելի զիրքը:

39. Եւ կամ կրօնն, թէ զայն ինչը շարադրեց: Դուն ըսէ, «եթէ այգպէս է, դուք ալ ստոր նման սուրէ մը բերէք. և Աստուծոյ զատ ով որ կանչէք անոր ազօթեցէք եթէ հաւատարիմ էք»:

40. Եւ երբ անոր մեկնութիւնը եկաւ անոնց համար, անոնք սուտ համարեցին, որովհետեւ անոնց խելքը չէր հասներ: Այսպէս ալ իրենցմէ առաջ եղողները սուտ համարած են: Արդ տես թէ անիրաւունքուն վերջը ինչպէս կըլլայ:

41. Անոնցմէ անոր թէ՛ հաւատացողներ կան և թէ՛ չհաւատացողներ, և քու Տէրդ աւելի լաւ կը ճանչնայ ապականիչները:

42. Եւ եթէ անոնք քեզ սուտ հանեն, դուն ըսէ՛, «իմ գործս ինձ յատուկ է. ձերինը ձեզ, դուք իմ ըրածիս պատասխանատու չէք. ես ալ ձեր բրածին»:

43. Եւ անոնցմէ ոմանք քեզ մտիկ կրնեն. բայց կրնա՞ս խօսիչուն լսել սալ. երբ չեն իմանար:

44. Եւ անոնցմէ ոմանք քեզ կը նային, բայց դուն կրնա՞ս կոչրերուն տեսողութիւն սալ, երբ, չեն տեսներ:

45. Անա Աստուած մարդու ոչ մի շարիք չըներ, բայց մարդիկ են որ իրենց հոգիներուն շարիք կընեն:

46. Եւ այն օրը յորում պիտի ժողվէ դանոնք, այնպէս կըլլայ որ իբր թէ մէկ ժամ մնացած են հոս. անոնք զիրար կը ճանչնան, բայց Աստուծոյ հանգիպումը սուտ համարողները մեատուած ըլլալով աւղիղ առաջնորդուածներ չեն:

47. Եւ եթէ անոնց խոստացածնուս մէկ մասը քեզի ցոյց տանք կամ քեզ մեռցնենք, անոնք մեր քով կը դառնան. այն ատեն Աստուած վկայ է անոնց քրածներուն:

48. Եւ ամեն մէկ ազգի համար մարգարէ մը կայ. և երբ անոնց մարգարէն գայ, անոնց մէջ արդար դատաստան կըլլայ, և անոնք չեն անիրաւուիր:

49. Եւ անոնք կրսեն, «այս խոստումը ե՞րբ կը կատարուի, եթէ ճշմարիտ էք»:

50. Դուն ըսէ, «ես Աստուծոյ կամքէն դուրս իմ անձիս ոչ միտս կարող իմ բերել և ոչ օգուտ: Մէն մի ազգի համար որոշուած վախճան մը կայ. երբ անոնց ժամանակը հասնի, չեն կրնար ոչ ժամ մը ուշանայ և ոչ ժամ մը առաջ անցնիլ»:

51. Դուն ըսէ՛, «եթէ անոնց պատիժը պառկած ատեննին և կամ ցերեկը գայ, կը կարծէ՞ք որ յանցաւորները անկէ բան մը փութացնելու կարող ըլլան»:

52. Երբ այն տեղի ունենայ, կը հաւատա՞ք դուք անոր, որուն շուտով գայը կուզէիք:

53. Այն ատեն անիրաւողներուն պիտի ըսուի, յաւիտեանական պատիժը կրեցէ՞ք. միթէ ձեր գործածէն տարբեր հատուցում կ'ըլլայ ձեզ»:

54. Եւ անոնք ձեզմէ տեղեկութիւն կուզեն, թէ սա ճշմարիտ է: Ըսէ, Տէրս վկայ որ ճշմարիտ է, և դուք չէք կրնար անկարողութեան մատնել»:

55. Եւ եթէ ամեն մէկ հոգի իր ձեռքը ունենար աշխարհի ինչքը, զայն փրկանք կուտար անպատճառ ազատելու համար, բայց պատիժ տեսնելուն զղջումնին կը ծածկեն, և արդարութեամբ դատաստան կըլլայ անոնց մէջ. և չեն անիրաւուիր:

56. Վերահասու եղէք որ երկնից ու երկրի մէջ ինչ որ կայ բոլորը Աստուծոյն է. և Աստուծոյ խոստումը ճշմարիտ է. բայց անոնցմէ շատերը չեն գիտեր:

57. Նա կը կենդանացնէ ու կը մեռցնէ, և դուք

անոր քով պիտի դառնաք:

58. Ո՛վ մարդիկ, ձեր Տիրոջ կողմէ ձեզի քարոզ  
և ձեր սրտերուն մէջ եղածին համար առողջութիւն  
և առաջնորդութիւն եկած է, իսկ հաւատացեալն  
բուն ողորմութիւն:

59. Ըսէ՛ Աստուծոյ շնորհքովը և ողորմութիւնովը  
ուրախացէք. ան աւելի լաւ է ձեր հաւաքած-  
ներէն:

60. Ըսէ. «Արդեօք տեսա՞ք որ Աստուած ձեզ  
ինչեր իջեցուցած է ուսելու համար. իսկ դուք ա-  
նոնցմէ մաքուր և անմաքուր (հէտլ հէրսմ) ըրիք»:  
Ըսէ՛, «Աստուած ձեզ հրամայեց թէ դուք Աստու-  
ծոյ զրպարտութիւն կընէք»:

61. Եւ Աստուծոյ մասին զրպարտութիւն բնողները  
ինչ պիտի մտածեն յարութեան օրը: Արդարև Աստու-  
ած մարդոց հանդէպ շնորհատու է. բայց անոնց շա-  
տերը շնորհապէտ չեն.

62. Եւ դու գործի մը մէջ չես գտնուիր. և Գու-  
րանէն քան ի չես կարդար և գործ մը չէք կատա-  
րեր որ ես ձեր մասին չվկայեմ: Եւ երկինքի ու  
երկրի մէջ մըջիւնի ծանրութեամբ և կամ սուի-  
փօքը բան մը գաղտնի չկայ որ գիրքին մէջ յայտ-  
նուած չըլլայ:

63. Աստուծոյ ուխտեալներուն համար ոչ վախ  
կայ և ոչ անոնք կը տխրին:

64. Արոնք որ հաւատացած են և երկիւղածներ  
են, անոնց համար երկրալին կեանքին և հանդեր-  
ձեալին մէջ աւետիս կայ:

65. Աստուծոյ խօսքերուն փոփոխութիւն չկայ.  
այս մեծ փրկութիւն մըն է:

66. Անոնց խօսքը քեզ թող չտարեցնէ, վասնզի  
ամբողջ զօրութիւնը Աստուծոյն է: Ան կը լսէ ու  
կ'իմանայ:

67. Ահա երկինքի մէջ ով որ կայ և աշխարհի վրայ  
ով որ կայ Աստուծոյն է: Աստուծոմէ զատ ընկերնե-  
րու աղօթելով անոնց հետեողները կարծիքի կը  
հետեին և անոնք միայն սուտ կը խօսին:

68. Ես է որ ձեզ համար գիշերը պատրաստած է  
որ հանգիստ ընէք. և ցերեկը լոյս բրած է Արդարև:  
ասոր լէջ նշաններ կան լսող մարդոց համար:

69. Անոնք կըսեն թէ Աստուած որդի՞ւնի: Հեռի  
անկէ՛ նա հարուստ է. երկնից եւ երկրի վրայ և  
զածն անորն է. անոր մասին ապացոյց չունիք  
ձեր քով. կամ Աստուծոյ մասին ձեր չգիտ-  
ցածը կ'ըսէք:

70. Ըսէ՛. «անոնք որ Աստուծոյ սուտեր կը չինեն  
եղջանկութիւն չեն գտնիր»:

71. Աշխարհի մէջ վայելք կայ. բայց յետոյ մեր  
քով պիտի դառնան՝ անոնց անհաւատութեան հա-  
մար ծանր պատիժ կրել պիտի տաք:

72. Եւ անոնց կարդա՛ նոյին պատմութիւնը. նա  
իր ցեղին ըսաւ. «ով իմ ցեղակիցներս, եթէ իմ կա-  
ցութիւնս և Աստուծոյ պատգամները ձեզի ծանր  
կ'երևան, այդ պարագային ես Աստուծոյ կապաւի-  
նիմ: Արդ, ժողովեցէք ձեր գործերը և ընկերները.  
յետոյ ձեր գործը ձեզ համար մութ թող չըլլայ.  
յետոյ առանց սպասելու ինձ յայտարարեցէք»:

73. «Իսկ եթէ երես դայ ձնէք. ես ձեզմէ վարձք  
չեմ պահանջեր. իմ վարձքս Աստուծոյ քով է. և  
ինձ հրաման տրուեցաւ որ ես միւսիմներէն  
ըլլամ»:

74. Այն ատեն զանի սուտ համարեցին, և մենք  
զանի ու տապանին մէջ գտնուող մարդերը ազատե-  
ցինք և զանոնք յաջորդներ բրինք՝ և մերնշանները  
սուտ համարողները ընկզմեցինք: Արդ, տես թէ  
ինչպէս եղաւ խրատուածներու վերջը:

75. Եւ անկէ յետոյ իրենց ցեղերուն մարգարէներ զրկեցինք, որոնք անոնց իրաքններով եկան թէ և բայց անոնք կանխաւ իրենց սուտ համարածնուն չէին հաւատար, այլպէս մենք կնքեցինք պատուիրան ազանցներուն սրտերը :

76. Անկէ յետոյ Մովսէսը և Ահարոնը զրկեցինք մեր նշաններով Փարաւօնին և անոր ցեղին. բայց անոնք չպարտացան և մեղաւոր ազգ եղան :

77. Իսկ երբ մեզմէ անոնց ճշմարտութիւնը եկաւ, ըսին թէ սա որոշապէս կախարդութիւն է :

78. Մովսէս ըսաւ, «ձեզ համար եկած ճշմարտութեան մասին դուք կ'ընէք արդեօք թէ սա կախարդութիւն է : Բայց կախարդները երջանիկ չեն ըլլար :

79. Անոնք այ ըսին, «դուք մի գուցէ եկած ըլլաք անջատելու մեզ այն բաներէն որոնց վրայ տեսած ենք մեր հայրերը, որպէսզի ձեր երկուքին ըլլայ երկրի մսծութիւնը. մենք ձեզի չենք հաւատար» :

33. Եւ Փառաւօն ըսաւ, «բոյր գիտուն կախարդները ինձ բերէ՛ք :» Եւ երբ կախարդները եկան, Մովսէս անոնց ըսաւ «ինչ որ պիտի նետէք, նետեցէք :

81. Երբ անոնք նետեցին, Մովսէս ըսաւ, «ձեր ըրածը կախարդութիւն է, Աստուած պիտի ոչնչացնէ զայն անպատճառ. վասնզի Աստուած չարագործներուն արարքը չյաջողցներ :

82. Եւ Աստուած ճշմարտութիւնը իր խօսքերով կապացուցանէ՝ եթէ մեղաւորներուն անհաճոյ խեղձութիւնը :

83. Եւ Մովսէսին հաւատաց միմիայն իր ազգէն սերած ցեղ մը, ուրիշներ Փարաւօնէն և անոր ցեղէն կը վախնային թէ իրենց փորձանք մը կը բերէ որովհետեւ Փարաւօն երկրի վրայ մեծամիտ և ամբարիշտ էր :

84. Մովսէս ըսաւ, «ո՛վ իմ ցեղս', եթէ կը հաւատասք Աստուծոյ, անոր ապաւինեցէք եթէ միւս լիմներ էք» :

85. Անոնք այ ըսին, «մենք Աստուծոյ ապաւինած ենք. ո՛վ մեր Տէրը, այս բռնակալ ազգին մ'ի թողուր որ մեզի փորձանքի ենթարկէ» :

86. «Եւ քու ողորձութեամբդ ազատէ մեզ անհաւատներու ազգէն» :

87. Եւ մենք յայտնութիւն տուինք Մովսէսին և իր եղբորը, «թէ ձեր ազգին համար եզրպատար մէջ տուներ շինեցէք, և ձեր տուները ալօթարան ընելով ազօթեցէք. արդ, աւետէ՛ հաւատացեալներուն» :

88. Մովսէս այ ըսաւ, «ո՛վ մեր Տէրը՝ Փարաւօնին և անոր ցեղին դարդեղէն և ստացուածք տուած ես այս աշխարհի կեանքին մէջ. ո՛վ Տէր, ոչնչացուր անոնց հարստութիւնը մինչև որ քու ճամբէդ շեղին և ո՛վ տէր կարծրացուր անոնց սրտերը որ չհաւատան մինչև որ դառն պատիժը տեսնեն» :

89. Իս ըսաւ, «երկուքիդ խնդրանքը ընդունուեցաւ, արդ, հաստատ կեցէք և չգիտցողներուն ճամբուն մի նետելք» :

90. «Եւ Իսրայէլի որդիները ծովէն անցուցինք. այն ատեն Փարաւօն և սնոր գունդերը հաւածեցին զանոնք չարութեամբ և թշնամութեամբ, մինչև խեղդուելու աստիճան, ուր նա ըսաւ, ես կը հաւատամ որ ուրիշ Աստուած չկայ բացի Իսրայէլի որդեաց հաւատացածէն և ես միւս լիմներէն չմ» :

91. Հիմա՞կ, մինչդեռ դուն ասկէ առաջ ապստամբ ըլլալով, ապականիչներէն էիր :

92. Բայց մենք քեզ կաղատենք այսօր, որ քեզմէ յետոյ եկողներուն նշան ըլլաս. վասնզի մարդոցմէ շատերը մեր նշաններուն մասին անհոգ են :

93. Եւ մենք Իսրայէլի որդեաց համար լաւ բնա-

կալայր մը և համեզ բաներէն կերակուր տուած ենք, և անոնք իրենց մէջ անհամաձայնութիւն չունէին մինչև որ գիտութիւնը անոնց եկաւ: Արդարև յարութեան օրը Աստուած դատաստան պատի ընէ անոնց իրարու հետ ունեցած անհամաձայնութեան մասին:

94. Արդ, եթէ մեր քեզի իջեցուցած բանի մասին կասկած ունիս, քեզէ առաջ գիրքը կարդացողներուն հարցուր: Արդարև քու Տիրոջմէ քեզի ճշմարտութիւն եկած է. ուստի կասկածողներէն մի՛ ըլլար:

95. Եւ նոյնպէս Աստուծոյ նշանները սուտ հաւատողներէն մի ըլլար որ կորստեան չ՛բանուիս:

96. Այն մարդիկը՝ որոնց վրայ Տիրոջը խօսքը հաստատուեցաւ, չեն հաւատար:

97. Եթէ անոնց նոյն իսկ ամեն հրաշք գայ չեն հաւատար, մինչև որ դառն պատիժն ալ տեսնեն:

98. Եւ քաղաք մըն ալ չէ գտնուած որ հաւատար և որուն հաւատոյը իրեն օգնէր, բացի Յովնանի ժողովուրդէն, որոնց հաւատալնուն վրայ պատիժնին վերցուցինք այս աշխարհի մէջ և զանոնք ապրեցուցինք ժամանակ մը:

99. Եւ եթէ քու Տերդ ուզէր, աշխարհի վրայ բոլոր գտնուողները կը հաւատային: Դուն կատիպե՞ս մարդիկը որ հաւատացեալներ ըլլան:

100. Ոչ ոք կարող չէ հաւատալ առանց Աստուծոյ հրամանին, և չհասկցողներուն վրայ պատուհաս պիտի բերուի:

101. Նայեցէք երկնից և երկրի վրայ եղողներուն, բայց չհաւատացող ազգ մը նշաններով վախցնել օգուտ չընէր:

102. Արդեօք ասոնք իրենց ժամանակէն առաջ եղած անցած ազգերու ատենուան նման բաներու

կ'սպասե՞ն: Ըօէ՛, «սպասեցէ՛ք, ես ալ ձեզի հետ միասին կ'սպասեմ»:

103. Յետոյ մեր մարգարէները և հաւատացեալները ազատեցինք. ինչպէս որ մեր պարտքն է հաւատացեալները փրկել:

104. Դուն ըսէ, «ո՛վ մարդիկ, դուք եթէ իմ կրօնքիս մասին կը կասկածիք, ես բացի Աստուծմէ, ձեր պաշտածները չեմ պաշտեր. այլ կը պաշտեմ ձեզ մեռցնող Աստուածը: Եւ ինձ հրամայուեցաւ որ հաւատացեալներէն ըլլամ»:

105. «Եւ թէ երեսդ դէպի իմ կրօնքը դարձուր իբր երկեւղած, և կռապաշտներէն մի՛ ըլլար»:

106. «Եւ Աստուծմէ զատ բանի մը մի ազօթներ որ ոչ օգուտ և ոչ վնաս ունի քեզ, եթէ ազօթեան իրաւունքէն կըլլաս»:

107. Եւ եթէ Աստուած քեզ վնաս մը հասցնէ՛ անկէ զատ չըլլար քեզ ազատող, և եթէ նա քեզ բարիք մը տայ, անոր շնորհը մերժող չըլլար: Իր ծառաներէն որու որ ուզէ կուտայ, վասնզի ներող և ողորձած է:

108. Դուն ըսէ՛, «ո՛վ մարդիկ, ձեր Տիրոջմէ ձեզ համար ճշմարտութիւն եկած է. ուստի ով որ ուզիդ ճամբէն կ'երթայ, իր հողոյն համար առաջնորդուած կըլլայ, և ով որ կը չեզի, նա ի՛ վնաս իրեն չեղած կըլլայ: Իսկ ես ձեր փոխանորդը չեմ»:

109. Եւ դուն քեզ եղած յայտնութեան հետեւ և համբրէ մինչև որ Աստուած դատէ. վասն զի նա դատաւորներուն ամենալաւն է:



ԺԱ. Գ Լ Ո Ի Խ

(ՍՈՒՐԷ ՀՈՒՏ)

Մէֆֆէական, հարիւր քանիցք պայտաւ

Յանուն Աստուծոյ գթածի ողորմածի

1. Ա. Լ. Ր. Գիրք մը որուն նշանները հաստատուած են, յետոյ բացատրուած իմաստուն գիտունի մը կողմէ:

2. Թէ Աստուծոյ գառ ուրիշը մի պաշտէք: Անա ես անոր կողմէ ձեզի զգուշացնող և աւետող եմ:

3. Եւ թէ մեզաց թողութիւն խնդրեցէք ձեր Տիրոջմէ և անոր դարձէ՛ք որ ձեզի որոշեալ ժամանակ մը գեղեցիկ բարիք վայելել տայ, և շնորհի արժանացողներուն իր շնորհքը պիտի տայ: Բայց եթէ մերժէք կը վախնամ որ մեծ օրի մը պատիժը կրէք:

4. Դուք Աստուծոյ պիտի դառնաք, և անիկա ամենակարող է:

5. Անոնք կուրծքերնին կը ծռեն որ պանուխ անկէ:

6. Անա ինքզինքնին զգեստովնին ծածկած ատեն անիկա գիտէ անոնց ծածկածը և յայտնածը:

7. Վասնզի նա գիտէ թէ ստերու մէջ ինչ կայ:

8. Եւ երկրի վրայ կենդանի մը չկայ որուն սրունդը Աստուծոյ չօգայ: Նա գիտէ անոր հանգրստավայրը և բնակավայրը. բոլորն ալ ծանօթ գիրքին մէջ են:

9. Եւ երկինքը ու երկիրը նա ստեղծած է վեց օրուն մէջ, և անոր ամուր ջուրերու վրայ էր, որ ձեզի փորձէ, թէ ձեզմէ որը գործով լաւագոյն է:

10. Եւ եթէ ըսես, թէ դուք մեռնելէ յետոյ յաբութիւն պիտի առնէք, անհաւատները կըսեն, «այդ

կախարհու թիւն է»:

11. Եւ եթէ մենք անոնց պատիժը յետաձգենք քանի մը սերունդ, անոնք պիտի ըսեն թէ զանի օ՞վ արգիլեց: Անա այն օրը որ անիկա պիտի գայ անոնց, անոնցմէ մէկը չպիտի դարձնէ զանի և այն ատեն անոնց ծաղրածը կը պաշարէ զանոնք:

12. Եւ եթէ մարդու մը մեր կողմէ ողորմութիւն չընորձենք ու յետոյ զայն ետ առնենք, այս պարագային անիկա կը յուսահատի և անհաւատ կը դառնայ:

13. Եւ եթէ վիսամներ տայէ յետոյ ողորմութիւններ շնորհենք անոր, պիտի բռէ որ փորձանքները անցան ինձմէ, և պիտի ուրախանայ ու պարծենայ:

14. Անոնցմէ զատ որոնք կը հասերեն ու բարիք կը գործեն, անոնց ներում և մեծ վարձք կայ:

15. Արգ, եթէ քեզ յայտնուածին մէկ մասը ձեռքես, սիրտք կը նեղուի, կըսեն թէ եթէ անոր համար գանձ մը իջուցուէր կամ անոր նեա հրեշտակ մը գար կը հաւատայիք, բայց դուն միայն խրատատու ես և Աստուծոյ է ամեն բանի զեկավարը:

16. Եւ կատ կըսեն, թէ ինքը հնարեց զայն: Դուն ըսէ, «եթէ այդպէս է. դուք ալ ասոր նման ձեր կողմէ հնարուած տասը սուրէ բերէք, և Աստուծոյ գառ ձեր կրցածը կանչեցէք եթէ հաւատարիմ էք»:

17. Եւ եթէ անոնք քեզ պատասխան չտան, հասկցէք որ Աստուծոյ գիտութեամբն է որ իջուցուած է, և թէ անկէ զատ ուրիշ Աստուծոյ չկայ: Արգ, դուք միւրախմենք էք:

18. Այս աշխարհի կեանքը և անոր զարդերը ու զօղներուն մենք կը փոխարինենք ինչ իրենց գործերուն համեմատ և անոնք պակաս չեն ստանար հոս:

19. Անոնք այն մարդիկն են, որոնց համար հանդերձեալին մէջ միայն կրակ կայ, և անոնց հոս

գործածներն կորսուած է և բրածնին ընդ ունայն:

20. Արդ, այն մարդը՝ որ իր տիրոջ վկայութեան վրայ է եւ կը նեակի անոր վկայ մը անոր կողմէ և անկէ առաջ ալ Մովսէսի գիրքը կայ իբրև առաջնորդ և ողորմութիւն, կը հաւատայ անոր ինչպէս նմանները, բայց գունդերէն ով որ չհաւատայ, անոր համար կրակը պատրաստուած է: Ուստի անոր մասին մի կասկածիր. վասն զի այն ճշմարտութիւն է քու Տիրոջդ կողմանէ, թէ և մարդոց շատերը չեն հաւատար:

21. Եւ Աստուծոյ մասին սուտեր շինողներէն աւելի անիրաւ ո՞վ կայ: Անոնք իրենց Տիրոջ պիտի ներկայացուին և վկաները պիտի ըսեն թէ ասոնք իբնեց Տիրոջ պէմ սուտ խօսողներ են: Ահա Աստուծոյ անկէ՞քը անիրաւներուն վրայ է:

22. Որոնք որ Աստուծոյ ճամբէն կը հանեն և կը ջանան զայն ծռել հանդերձեալի մասին անհաւատ են, անոնք աշխարհի վրայ նուաճողներ էին և Աստուծմէ զատ անոնք պաշտպան չեն ունենար. անոնց պատիժը կրկին պիտի ըլլայ, վասնզի անոնք չէին կրնար լսել և չէին համբերեր:

23. Անոնք իրենց հոգիներուն կը վնասեն, և իրենց նարածները կը հեռանան իրենցմէ:

24. Ստուգիւ. անոնք հանդերձեալին մէջ ամենէ աւելի վնասուողներն են:

25. Մինչդեռ անոնք որ կը հաւատան ու բարի գործեր կը կատարեն և իրենց Տերոջ առջև կը խօնարին անոնք դրախտի արժանի են և հոն կը մնան յաւիտեան:

26. Այն երկու խումբերը կը նմանին կոյրի և խուլի և տեսնողի ու լսողի. արդ անոնք նմանութեամբ միթէ իրարու հաւասար են. արդեօք չէ՞ք մը-

տածեր:

27. Առաջ մենք զրկած ենք իր ցեղին Նոյն. որ ըսաւ թէ «ես ձեզի համար որոշ խրատատու եմ».

28. «Որ միայն Աստուած պաշտէք. ես կը վախնամ անուելի օրուան մը ձեզ գալիք պատիժէն»:

29. Իսկ անոր ցեղին անհաւատներէն մաս մը ըսին, «մենք կը տեսնենք որ դուն մեզի նման մարդ մըն ես և կը տեսնենք որ միայն մեր ստորագաս պարզամիտները քեզի կը նեակին. և չենք տեսներ որ դուք մեզ վրայ առաւելութիւն մ'ունենաք, այլ կը կարծենք թէ դուք ստախոսներ էք»:

30. Նա ալ ըսաւ, «ով իմ ժողովուրդս, հասկցէք որ ես իմ տիրոջս վկայութիւնն ունիմ և նա իր կողմէ ինձ ողորմութիւն չնորձած է, որուն մասին դուք կոյր էք. միթէ ասոր համար ես ձեզի կ'ստիպեմ քանի որ դուք կը մերժէք»:

31. «Ո՞վ ժողովուրդս, ես ձեզմէ դրամ չեմ ուզեր, իմ վարձքս միայն Աստուծմէ է, և ես չեմ մերժեր հաւատացողները. վասն զի անոնք իրենց Տիրոջ նեա պիտի հանդիպին. բայց ես կը տեսնեմ որ դուք ազէս ժողովուրդ էք»:

32. «Ո՞վ իմ ժողովուրդս, Աստուծոյ դէմ ինձ ո՞վ կրնայ օգնել, եթէ զանոնք մերժեմ. արդեօք չէ՞ք հասկնար»:

33. «Եւ ես ձեզի չէմ ըսեր թէ Աստուծոյ գանձերը իմ քովս են. և ես գաղտնիքը չեմ հասկնար և չեմ ալ ըսեր թէ ես հրեշտակ եմ, եւ ոչ ալ ձեր աչքին արհամարհուածներուն համար կըսեմ թէ Աստուած անոնց բարիք չտար, միայն Աստուած գիտէ անոնց սրտին մէջ եղածը. եթէ ոչ ես անիրաւներէն կը ըլլայի»:

34. Անոնք ալ ըսին, «ո՞վ Նոյ, դուն մեզի նեա վիճեցար և վէճը աւելցուցիր. արդ, բեր մեզի քո սպառնացածդ. եթէ հաւատարիմներէն ես»:

35. Ան ալ ըսաւ, «միայն Աստուած կը բերէ զայն եթէ ուզէ, եւ դուք զանի չէք կրնար նուաճիլ»:

36. «Եւ իմ խրատներս ձեզի անօգուտ են. եթէ ես ուզեմ ձեզ խրատել, եթէ Աստուած ուզէ ձեզ մտորեցնել, նա ձեր Տէրն է նւ. դուք անոր պիտի գտնաք»:

37. Եւ կամ անոնք կըսեն թէ ինքը հնարած է զայն. եթէ ես հնարած ըլլամ, յանցանքը իմ վրաս կը ծանրանայ. բայց ես ձեր գործած մեղքերէն անպարտ եմ:

38. Եւ Նոյին յայտնութիւն եղաւ, թէ ձեր մօզ վարդէն միայն անոնք պիտի հաւատան որոնք արդէն հաւատացած են, ուստի դուն անոնց բրածին համար մի տրամիր:

39. «Եւ տապանը շինէ մեր աչքին առջեւ ըստ մեր յայտնութեան, եւ անիրաւնեբու մասին ինձ խօսք մի խօսիր, վասն զի անոնք պիտի ընկզմին»:

40. Եւ նա կը շինէր տապանը եւ իր, ցեղակիցներէն խուժր մը միշտ որ անոր քովէն անցնէր կը ծաղկէր զանի: Ան ալ կըսէր, «դուք մեզ կը ծաղկէք, բայց մենք ալ ձեզ պիտի ծաղրենք, ձեր ծաղրածին նման: Դուք քիչ ատենէ սա պիտի հասկընաք»:

41. Պատիժը որու որ հասնի զայն կը խայտառակէ եւ անոր վրայ կը մնայ տանջանքը:

42. Մեր հրամանը հասնելուն, փութը վառեց եւ մենք ըսինք, «աւմենէն երկու քական գոյգ ա՛, որոնց մէջ նաեւ քու ընտանիքդ եւ բացի անկէ՛ որուն մասին խօսուած է, ով որ հււատայ», բայց քիչեր կը հաւատային անոր հետ միասին:

43. Եւ ըսաւ «եյէ՛ք անոր մէջը Աստուծոյ անունովը. երթայ թէ կենայ, վասնզի Տէրս ներող եւ ողորմած է»:

44. Եւ տապանը լեռան պէս ալիքներու մէջէն կերթար: Եւ Նոյ կանչեց իր աղան որ զատուած էր, «Ո՛վ որդիս, մեր հետ նստ՛ր եւ անհաւատնեբուն հետ մի՛ ըլլար»:

45. Ան ալ ըսաւ, «Ես չուտով իրան մը վրայ կապատանիմ որ դիս ջուրերէն կ'ազատէ»: Նա եւս ըսաւ «այսօր ոչ մէկը կրնայ ազատիլ Աստուծոյ հրամանէն, բացի անկէ որուն Աստուած կողորմի»: Եւ ալիքը երկու քին մէջ մտաւ եւ ան խեղդուեցաւ:

46. Եւ ըսուեցաւ, «Ո՛վ երկիր, կլլէ ջուրդ եւ ո՛վ երկինք, բռնէ՛ անձրեւդ», մեւ ջուրը քաշուեցաւ, եւ հրամանը կատարուեցաւ: Եւ Տապանը կեցաւ ճուտի վրայ: Եւ չարագործ մարդոց ըսուեցաւ «Չնուեցէք»:

47. Նոյ ազաղակեց իր Տիրոջ ու ըսաւ, «Ո՛վ Տէր իմ, իմ որդիս իմ ընտանիքէս էր. եւ քու խոստումդ ճշմարիտ է, եւ դուն զատուորներու զատաւորն ես»:

48. Ան ալ ըսաւ: «Ո՛վ Նոյ, անիկայ քու ընտանիքէդ չէ, վասնզի այն լաւ գործ չէ. ուստի դու չգիտցածդ ինձմէ մի՛ ուզեր, ահա ես քեզ կը խրատեմ որ սզէսներէն չըլլաս»:

49. Նա եւս ըսաւ, «ներողութիւն կը խնդրեմ որ քեզմէ չգիտցածս ուզեցի. եւ եթէ դուն ինձ չներես ու չողորմիս, ես կորսուածներէն կըլլամ»:

50. Ըսուեցաւ, «Ո՛վ Նոյ, վար իջի՛ր մեր քովէն խաղաղութիւն եւ օրհնութիւններ ըլլան քու վրայդ եւ քեզի հետ եղողներուն քանի մը խուժրի վրայ, եւ անոնցմէ ոմանց հաճելի վիճակ պիտի տանք. յետոյ մեզմէ անոնց զատն տանջանք պիտի հասնի»:

51. Այս գազտնի պատմութիւններէն է զոր մենք քեզ յայտնեցինք. ասիկա ոչ դուն գիտէիր եւ ոչ ալ

քու ցեղդ քեզմէ առաջ: Ուստի համբերէ՛. վասնզի վերջը երկիւզածներուն է:

52. Եւ Ատի համար զրկեցինք իրենց Հուտ եղբայրը որ ըսաւ, «ով իմ ցեղս, Աստուած պաշտեցէք, դուք անկէ զատ ուրիշ Աստուած չունիք, դուք միայն զրպարտողներ էք»:

53. Ո՛վ ցեղակիցներս, ասոր համար ես ձեզմէ վարձք չեմ պահանջեր. իմ վարձքս միայն զիս ստեղծողին վրայ է միմէ չէ՛ք հասկնար:

54. Ո՛վ իմ ժողովուրդս, ձեր Տիրոջմէ թողու՛ թիւն խնդրեցէք ու անոր դարձէք, նա ձեզի անձրեւ կը զրկէ երկիրքէն:

55. «Եւ նա ձեր ուժին վրայ ուժ կաւելցնէ եւ մեղաւորներու վիճակով երես մի դարձնէք»:

56. Անոնք ալ ըսին, «Ո՛վ Հուտ, դուն յայտնի վկայութեամբ մը չեկար մեզի. և մենք մեր աստուածները քու խօսքովդ չենք ձգեր և մենք քեզ չենք հաւատար»:

57. «Մենք սա կըսենք որ մեր աստուածներէն մէկը քեզ հարուածած է չարիքով». Ան ալ ըսաւ, «ես Աստուած վկայ կը կոչեմ եւ կը վկայեմ թէ ձեր ուրիշները անոր ընկեր տալուն մէջ ես անպարտ եմ»:

58. «Արդ, բոլորդ ալ ինձ գէ՛մ դաւադրեցէք եւ մի սպասցնէք յետոյ զիս»:

59. Իսկ ես էմ Տիրոջս եւ ձեր Տիրոջը ապաւինեցայ մէկ կենդանի չկայ որ անիկա անոր ճակատի մագէն չբռնէ. վասնզի իմ Տէրս ուղիղ ճամբուն վրայ է:

60. Ես ձեզ արդէն յայտնեցի թէ ինչ բանով զըրկուած եմ ես ձեզի. արդ, եթէ դուք ես քաշուիք, իմ Տէրս ձեր տեղը իրեն համար ուրիշ ազգ մը կը դնէ. եւ դուք անոր սեւէ փնաս չէք կրնար հասցընել, վասնզի իմ Տէրս ամեն բանի վրայ հակող է:

61. Եւ երբ մեր հրամանը հասաւ, մեր ողորմութեամբը ապատեցինք Հուտը եւ անոր հետ միասին հաւատադրեցինք ալ, եւ զանոնք ծանր տանջանքէ ազատեցինք:

62. Այս Աս ազգն էր որ իրենց Տիրոջ նշանները մերմելով անոր մարգարէներուն գէ՛մ ըմբօստացան եւ հնազանդեցան ամեն մէկ բռնաւորի հրամաններուն:

63. Եւ այս աշխարհի մէջ եւ թէ յարութեան օր ան անկէ՛ք արժանացան: Անա Ատցիները իրենց Տիրով գէ՛մ անհաւատ եղան. թող կորսուի՛ն Հուտի ցեղը եղող Ատցիները:

64. Եւ Սաժտա ազգին զրկեցինք անոնց եղբայր Ասլիքը: Նա ըսաւ, «ով իմ ցեղակիցներս, Աստուած պաշտեցէ՛ք. դուք անկէ զատ ուրիշ Աստուած չունիք. անիկա ձեզ գետնէն ստեղծեց եւ ձեզ կապրեցրնէ հոն. ուրեմն անկէ թողո՛ թիւն խնդրեցէք ու անոր դարձէք վասնզի իմ Տէրս մօտ է եւ պատասխանող է:

65. Անոնք ալ ըսին, «Ո՛վ Ասլիք ասկէ սօսող մենք քու վրագ յոյսեր ունէինք, դուն մեզ կարգի՛ յե՞ս որ մեր հարիբու պաշտածը չպաշտենք. այժմ մենք կասկած ունինք այն բանի մասին որուն դու մեզ կը հրաւիրես զա կասկածելի է:

66. Եւ անիկա ըսաւ, «ով իմ ժողովուրդս, ինչ կուզէք, երբ իմ Տիրոջս վկայութիւնը ունիմ եւ անիկա ինձ ողորմութիւն պարգեւած է. արդ, եթէ ես Աստուծոյ գէ՛մ ապրտամբիմ, ո՞վ կրնայ ինձ օգնել ատոր հակառակ, ուրեմն դուք միայն իմ փնասս կաւելցնէք»:

67. «Ո՛վ իմ ժողովուրդս, անա Աստուծոյ ասուողար ձեզի նշան մըն է. ձեզեցէք որ Աստուծոյ երկրին վրայ արածի եւ անոր չարութեամբ մի գողչե՞ք ան ձեզ կը պատժէ շուտով»:

68. Այն ատեն անոնք անոր ջիղերը կտրեցին։ Ան ալ ըսաւ, երեք օր ձեր փոռներուն մէջ լաւ ապրեցէք, սա ճշմարիտ խոստում մըն է ձեզի համար»։

69. Եւ մեր հրամանը երբ եկաւ, այն օրուան նախատինքէն ազատեցինք Սալիհը եւ անոր հետ եղող հաւատացեալները, վասն զի քու Տէրդ գորաւոր ու հոգի է։

70. Եւ փոթորիկը բռնեց անիրաւեւերը, որոնք իրենց տուներուն մէջ երեսիւ վրայ փռուեցան մնացին։

71. Իբր թէ հոն բնակած չէին։ Այսպէս անհաւատ էք Սամուտ ցեղը. թող կորսուի Սամուտը։

72. Եւ մեր աւետարտը առաքեալները Աբրահամին ալ գալով «խաղաղութիւն» ըսին նա ալ «խաղաղութիւն» պատասխանեց եւ անյայտը անոնց առջեւ բերաւ եփուած հորթ մը։

73. Բայց տեսաւ թէ անոնք ձեռք չեն երկնցներ անոր, սկսաւ գէշ կասկածով մը վախնալ անոնցմէ։ Անոնք ըսին, «մի վախնար, մենք Ղովտի ցեղին համար զրկուած ենք»։

74. Եւ անոր կիրճ կեցած տեղը խնդաց եւ անոր աւետեցինք Իսահակը եւ Իսահակէն յետոյ Յակոբը։

75. Ան ալ ըսաւ, «վա՛յ ինձ, կարելի՞ է որ ես ծնիմ ես որ պատաւ մըն եմ եւ սա իմ ամուսինս ալ ծեր է. այս տարօրինակ բան է»։

76. Անոնք ալ ըսին, «դուն Աստուծոյ գործին կը զարմանա՞ս. Աստուծոյ ողորմութիւնը եւ օրհնութիւնները ձեր վրայ է, ո՛վ ընտանիք, վասնզի նա օրհնեալ եւ փառաբանեալ է»։

77. Երբ Աբրահամի վախը փարատեցու եւ աւետարտը եկաւ, Ղովտի ցեղին մասին մեր հետ վիճարանեցաւ, վասն զի Աբրահամ հեղ եւ կարեկցող եւ երկիւղած էր։

78. «Ո՛վ Աբրահամ, ասկէ վաղ անցիր, որովհետեւ

Տիրոջը հրամանը արդէն եկած է, եւ անոնց պատիժ մը հասած է որ ետ չգործուիր»։

79. Երբ մեր առաքեալները Ղովտին քով եկան, նա վիշտ զգաց անոնց մասին եւ խիստ նեղուեցաւ անոնց պատճառաւ, եւ ըսաւ, «այսօր փորձանաւոր օր մըն է»։

80. Առաջէն չարութեան վարժուած անոր ցեղը շարձակեցաւ անոր վրայ։ Ան ալ ըսաւ, «ո՛վ իմ ցեղակիցներս, ա՛նա ձեզի ըլլան իմ երկու աղջիկներս որոնք ձեզի համար մաքուր են, ուստի Աստուծմէ վախցէք եւ զիս ամօթահար մի բնէք իմ հիւրերուս առջև, ազնիւ մարդ մը չկա՞յ ձեր մէջ»։

81. Անոնք ալ ըսին, թէ դուն զիտես որ մենք իրաւունք չունինք քու աղջիկներուդ վրայ, նաև զիտես թէ ինչ կուղենք։

82. Եւ նա ըսաւ, «ա՛ն, եթէ ձեր դէմ ոյժ մը ունենալի կամ հասարատեն ապաստան էք ապաւինէր»։

83. Առաքեալներն ալ ըսին, «ո՛վ Ղովտ, մենք Տիրոջը կողմէ զրկուած ենք, անոնք քեզի չեն հասնիր, ուստի գիշերի մէկ պահուն ընտանիքովդ միասին գնա՛ւ եւ ձեզմէ մէկը ետեւը չնայի, բայց կինդ միասին մ'առնէր, վասն զի անոնց պատահելիքը անոր պիտի պատահի։ Անոնց համար պիտի կատարուի այս խոստումը այս առաւօտ. ա՛նա աստուօրը մօտ է»։

84. Երբ մեր հրամանը եկաւ, մենք անոր վերը վար բերինք եւ Տիրոջը կողմէ որոշեալ չորցած ցեխէ քարեր տեղացուցինք անոնց վրայ։ Նա չարագործներէն հեռու չգտնուիր։

85. Եւ Սեթեան ցեղին զրկեցինք Շուէյպը. սա ըսաւ, «ո՛վ իմ ցեղակիցներս, զԱստուած պաշտեցէք, դուք անկէ դատ Աստուած չունիք, եւ չափը

ու կշիւր պակաս չգործածէք: Ես ձեզի կը տեսնեմ՝  
բարիքներու մէջ, բայց պաշարող օրուան մը պա-  
տիժէն կը վահնամ ձեզ համար»:

86. «Եւ Ո՛վ իմ ցեղս չափը ու կշիւր արդարու-  
թեամբ վճարեցէ՛ք և մարդոց ինչքը պակաս մի-  
տաք, և Էրկրի վրայ ապականութիւններ ընելով  
մի պորտիք:»

87. «Աստուծոյ պահպանածը աւելի լաւ է եթէ  
հաւատացեալներ էք:»

88. «Ես ձեր պահպանը չեմ:»

89. Անոնք բարն. «ով Շուէյպ, ազօթփղ քեզ կը-  
հրամայէ՞ որ մենք ձգենք մեր հայրերուն պաշտածը  
և կամ մեր ինչքերովը ուղածնիս չընենք, արդարեւ  
դու խոնարհ եւ ուզիլդ ես:»

90. Ան ալ ըսաւ. «ով ցեղակիցներս, չէ՛ք կար-  
ծեր որ ես Տիրոջս կողմէ որոշ վկայութիւն տնիս՝  
և նա ինձ լաւ սնուցեր է, և չեմ ուզեր որ ձեզ նե-  
տեխմ այն բաներու մէջ, որոնցմէ ես ձեզ պիտի  
չացնեմ. իմ ոյժիս չափովը ձեր բարեխուման կը թող-  
ձամ, ուրիշ բան չեմ ուզեր, և Աստուծմէ գաս յա-  
ջողութեան միջոց չունիմ. իմ յոյսս ան է եւ ես ա-  
նոր կը դառնամ»:

91. «Ո՛վ իմ ցեղակիցներս, զգուշացէ՛ք որ ձեր իմ-  
դէմ ունեցած հակառակութիւնը ձեզ չհանդիպցնէ ա-  
նանկ պատուհասի, որուն հանդիպեցան Նոյի կամ  
Հուտի կամ Սայի՛ի և կամ Ղովտի ժողովուրդները,  
որ ձեզմէ հեռու չէ:»

92. «Ձեր Տիրոջմէ թողութիւն խնդրեցէ՛ք և անոր  
գառ ձէք, որովհետեւ Տէրս ողորմող և սիրող է:»

93. Անոնք բարն, «ո՛վ Շուէյպ, քո: բաժնեկէն-  
մենք շատը չհասկցանք և մեր մէջ քեզ տկար կը-  
տեսնենք, եթէ քո: գերդաստանդ չըլլար, քեզ կը-  
քարկոծէինք և դուն մեզմէ գորաւոր չես:»

94. Ան ալ ըսաւ, ով ցեղակիցներս, իմ գէրբաս-  
տանս միջէ Աստուծմէ աւելի՞ գորաւորէ. և դուք  
զանի արհամարհելով իրր ոչինչ ձեր ետեւ կը նե-  
տէք: Իմ Տէրս գիտէ ձեր բոլոր գործերը:»

95. «Ո՛վ ցեղակիցներս, դուք ձեր տեղերը գոր-  
ծեցէ՛ք ես ալ կը գործեմ, չուտով պիտի հաս-  
կնաք:»

96. Պատժոյ ենթարկուողը կը խայտառակուի,  
նաև ստախօսը: Արդ. սպասեցէ՛ք, ես ալ ձեզ հետ  
կ'սպասեմ:»

97. Եւ երբ որ մեր հրամանը հասաւ, մենք ա-  
զատեցինք մեր ողորմութեամբը Շուէյպը և անոր  
հաւատացողները, և փոթորկը բոնեց չարագործ-  
ները, որոնք երեսի վրայ ինկած էին իրենց առնե-  
րուն մէջ, ուր կարծես չէին բնակած:

98. Թո՛ղ կարտի Մատեանը, ինչպէս կորսուեցաւ  
Սամուտ:

99. Մոխէն ալ զրկեցինք Փարաօնի ու իր ցե-  
ղին մեր հրաշքներով և յայտնի ապացոյցներով, ա-  
նոնք Փարաօնի հրամանին կը հպատակէին բայց  
Փարաօնի հրամանը ուզիլ չէր:

100. Յարութեան օրը անիկա իր ցեղին առջևէն  
պիտի երթայ և զանոնք կրակին մէջ պիտի տանի,  
և հասնելու տեղերնին ինչ գէշ տեղ է:

101. Եւ անոնք իստ անէձքի ենթարկուեցան և  
չարութեան օրը անոնց ընծայ մը պիտի արուի, ինչ  
գէշ բնծայ:

102. Սա այն քաղաքներու պատմութենէն է,  
չոր մէնք պատմեցինք. անոնցմէ մնացածներ ալ կան  
աւերուածներ ալ կան:

103. Եւ մենք անոնց չարիք չըրինք, այլ անոնք  
չարիք ըրին իրենց հոգիներուն. և բացի Աստուծմէ  
անոնց աշօթած աստուածները չօգնեցին անոնց երբ

Տիրոջը որոշումը հասաւ և ոչինչ չաւելցուցին կո-  
րուստէ զառ:

104. Եւ Տիրոջդ պատիժը այսպէս է անիրաւ քա-  
ղաքները պատժելու պարագային. արգարև անոր  
պատիժը խիստ է:

105. Անա ասոր մէջ նշան կայ միւս աշխարհի  
պատիժէն վախցողներուն համար. այս այն օրն է  
յորում մարդիկ անոր քով պիտի ժողվուին, և վկա-  
յութեան օրն է այն:

106. Եւ որոշեալ ժամանակէն մենք չենք ուշա-  
ցընէր զայն:

107. Այն օրը հասնելուն առանց անոր հրամա-  
նին մէկը չիսուր. և անոնց մէջ անպիտաններ կան և  
երջանիկներ կան:

108. Արդ, որոնք որ կրակին մէջ են, պիտի պո-  
ռան և լան:

109. Տուրչափ երկինք ու երկիր կան անոնք ալ  
նոր մէջ պիտի մնան յաւիտեան, բացի այն պարա-  
գաէն որ Տէրդ ուղէ բացառութիւն մ'ընել, վասնզի  
քու Տէրդ ուղածը գրնայ ընել:

110. Իսկ երջանիկները զբախտին մէջ ը լալով հոն  
կը մնան միշտ ցորչափ երկինքը ու երկիրը կայ-  
բացի այն պարագայէն որ Տէրդ կամենալ պարգև մը:

111. Ուստի դու անոնց պաշտածի մասին կասկա-  
ծոս մի ըլլար. անոնք իրենց հայրերուն առաջուց  
պաշտածը կը պաշտեն. և մենք ալ անոնց բաժինը  
չպակոսեցնելով պիտի հատուցանենք:

112. Մենք գիտքը Մովսէսին տուինք, բայց ա-  
նոնք չհամաձայնեցան իրարու հետ անոր մասին. և  
եթէ Տիրոջդ կողմէ առաջուց որոշուած չըլլար.  
հարկաւ անոնց միջև վէճը կը վճռուէր. իմա ա-  
նոնք անոր մասին ծանր կասկածի մէջ են:

113. Արդարև քու Տէրդ անոնց ամեն. մէկին պի-

տի հատուցանէ իրենց գործերուն համեմատ, վասն-  
զի անոնց ըրած գործերը գիտէ:

114. Արդ, դու հաստատ կեցիր քեզի հրամայուա-  
ծին պէս. և քեզի հետ միասին զղջացողներն ալ  
հաստատ թող կենան, և ապստամբ մի ըլլաք, վա-  
սընզի նա կը տեսնէ ձեր ըրած գործերը:

115. Եւ բանաւորներու վրայ յոյս մի գ'էք. կը-  
րակը ձեզի կը գպչի. դուք Աստուծմէ զուտ օգնա-  
կաններ չունիք յետոյ ձեզ օգնութիւն չըլլար:

116. Ազօթք ըրէ օրուան երկու ծայրերուն և գի-  
շերուան մութին: Արդարև լարի գործերը չարու-  
թիւնը կը յաւեն. այս խրատ է ընդունողներուն  
համար:

117. Եւ դու համբերէ, վասնզի Աստուած բարի-  
գործողներուն վարձը չիորսնցուներ:

118. Չեզմէ առաջ եկած ազգերուն մէջ քիչ խե-  
լացիներ կային, որ երկրի վրայ ազականութիւնը  
արգիլէին. անոնք քիչ էին. մենք անոնցմէ մէկ  
քանիները ազատեցինք. իսկ չարագործները իրենց  
հաճոյքին նեղեցան և մեղաւորներ եղան:


119. Եւ Տէրդ պատուհասելով չէր աւերեր այն  
քաղաքները եթէ անոնց բնակիչները բարեգործներ  
ըլլային:

120. Եթէ Տէրդ ուղէր մարդիկը մէկ կ'օրնքէ կը-  
նէր. բայց անոնք անհամաձայն զանուելու են բացի  
անոնցմէ որոնց կողորմի Տէրդ: Եւ ասոր համար է  
որ զանոնք ստեղծած է որ Տիրոջդ խօսքը կատար-  
ուի, թէ «զժոխքը բոյոր զեւերով և մարդիկներով  
պիտի լեցնեմ անպատճառ»:

121. Եւ Մարգարէներու բոյոր պատմութիւնները  
քեզ կը պատմեն որ քու սիրտդ ամբաստանքն է. և  
ասով ճշմարտութիւնը քեզ կը յայտնուի որ նաև  
խրատ ու քարոզ է հաւատացեալներուն:

122. Անհաւատներուն ըսէ. «գործեցէք ձեր ան-  
ղերուն մէջ. մենք ալ կը գործենք և սպասեցէք-  
մենք ալ կ'սպասենք»:

123. Եւ երկիրքի ու երկրի գաղանիքները Աս-  
տուծոյն են. և ամեն բան անոր պիտի զառնայ:  
Սէրեմն զանի պաշտէ և անոր ապաւինէ, և քու Տէրդ  
ձեր բրածներուն անտեղեակ չէ:



ԺԲ. Գ Լ Ո Ւ Խ

(ՍՈՒՐԷ ԵՌՍՈՒԹ)

Մէքէական, հարիւր տասն եւ մէկ պատգամ

Յանուն Աստուծոյ գթածի ողորմածի

- 1 Ա. Լ. Բ. այս ծանօթ գրքի նշաններն են:
- 2. Մենք անոր արարերէն Քուրան իջեցուցինք-  
որ հասկնաք:
- 3. Պատմութեանց ամենագեղեցիկը մենք չեզ կը  
պատմենք, որով կը յայտնենք այս Քուրանը և ար-  
դարեւ անկէ առաջ դու անհամբեր էիր:
- 4. Յովսէփ ըրաւ իր հօրը. «ով հայր, ես տեսայ  
տասն և մէկ աստղներ և արեգակը ու յուսինք. տե-  
սայ նաև թէ անոնք ինձ երկրպագութիւն կրնէին»:
- 5 Ան ալ ըսաւ, «որդի՛ս, երազդ չպատմես եղ-  
բայրներուդ. գուցէ անոնք քեզ զէմ գաւ յարեն.  
վասնզի սատանան մարդոց բազայալտ թշնամի է»:
- 6. «Տէրդ այսպէս ընտրեր է քեզ և երազներու  
մեկնութիւնը սովբեցուցեր և իր շնորհը պարպեւր է-  
քեզ և Յակոբի սերունդին վրայ. ինչպէս որ աւելի-  
տառաջ Աբրահամ և Իսահակ հայրերուդ վրայ կատա-

րած է՝ վասն զի քու Տէրդ գիտուն և իմաստուն է:

7. Արդէն Յովսէփի և եղբայրներուն միջև նշան-  
ներ կան հարցնողներու համար:

8. Այն ատեն անոնք ըսին, « ա՛նա Յովսէփը և իր  
եղբայրը մեզմէ աւելի սիրելի են մեր հօրը, թէ և  
մենք մէկ սերունդ ենք. իբօք որ մեր հօյրը,  
իբօք որ մեր հայրը սխալ կը վարուի»:

9. «Յովսէփը սպաննօցէք կամ հողին տակ նետե-  
ցէք. այն ատեն հայրերնիդ երեսը դէպի ձեզ կը  
դարձնէ և անկէ յետոյ դուք բարեպաշտ մարդիկ  
կըլլաք»:

10 Անոնցէ մէկը ըսաւ, «Յովսէփը մի՛ սպաննէք,  
այլ զանի խոր հորի մը մէջ նետեցէք. եթէ այ-  
պէս ընէք, ճամբորդներէ մէկը զանի կառնէ կը  
տանի»:

11. Անոնք ըսին, «ով մեր հայրը, ի՞նչու մեզ չես  
վտանջիր Յովսէփը, մինչդեռ մենք անոր բարիք կը  
ցանկանք»:

12 «Անիկա վաղը մեր նետ թող գայ, թող բղ-  
քօնու ու խաղայ. մենք անոր վրայ կը հսկենք»:

13. Ան ալ ըսաւ, «եթէ զանի ձեր նետ տանիք,  
ես կը արամիմ ու կը վախնամ որ դայրը ուտէ զանի  
ձեր անուշաղիբ գանուած պահուն»:

14. Անոնք ալ ըսին, «մեր այսչափ բաղմութեան  
մէջ եթէ գայրը ուտէ զանի մենք կորսուելու ենք»:

15. Բայց երբ զանի իրենց նետ տարին, համա-  
ձայնեցան խոր հորի մը մէջ ձգելու. և մենք  
անոր յայտնեցինք, որ անոնց այս բանը իմացնես.  
Թէ և անոնք չհասկնան»:

16. Եւ իրեկունը անոնք լալով իրենց հօրը քով  
եկան:

17. Ու ըսին, «ով հայր, երբ մենք վաղելու մըր  
ցում կընէինք, Յովսէփը մեր գոքերուն քով ձգե-

ցինք և զայր կերաւ զանի՛ բայց դուն մեզի չես հաւատար եթէ ճշմարիտ ալ խօսինք»:

18. Եւ շապկը բերին ու բիշ արիւնով ներկուած: Նա ալ ըսաւ. «Դուք ձեզմէ յօրիներ էք այս բանը. բայց համբերելը լաւ է. Աստուած կ'օգնէ անոր. ուրուն մասին դուք կր խօսիք»:

19. Այն ատեն կարաւան մը եկաւ. ջրկիրները դրկուեցան որ երբ վար կախեց իր դոյլը. ըսաւ. «ա՛հ, կաւեռեմ որ հոս պատանի մը կայ»: Եւ զանի գաղանի պահեցին իբր վաճառելի ապրանք մը. բայց Աստուած գիտէր թէ անոնք ինչ կրնէին:

20. Եւ չնչին գնով մը. քանի մը դրամը փոխարէն զանի ծախեցին. վասնզի անոր մասին կզգուչանային:

21. Եւ զանի ծախու առնող Եգիպտացին իր կընտըր ըսաւ «անոր բնակարան պատաստէ՛. թերեւ անկէ մեզ օգուտ մը կ'ելլէ և կամ զանի կորդեգրենք»: Եւ այս կերպով մենք այդ երկիրը բնակեցուցինք Յովսէփը որպէսզի անոր սովրեցունենք դժուար խօսքերու մեկնութիւնը ընել. վասն զի Աստուած իր գործերուն համար հզօր է, բայց մարգոցմէ շատերը չեն հասկնար:

22. Եւ չափահաս ըլլալուն. մենք անոր իմաստութիւն և գիտութիւն տուինք. քանզի բարեգործները մենք այսպէս կր վարձատրենք:

23. Եւ անոր բնակած տանը կինը սիրահարեցաւ անոր. և դռները գոցեց ու ըսաւ. «հոս եկո՛ւր». ան ալ ըսաւ. «Աստուած չընէ՛. անիկա իմ տէրս է. որ ինձ գեղեցիկ բնակարան տուաւ. անիրաւները բարիք չեն գտներ»:

24. Կինը անոր սիրահարած էր. ան ալ կնոջը պիտի սիրահարէր. եթէ Տիրոջ ապացոյցը տեսած չըլլար: Այսպէս գէշութիւնը ու խայտառակութիւնը մենք

անկէ հեռացուցինք. վասնզի անիկա մեր մտերիմ ծառաներէն էր:

25. Եւ անոնք երկուրը մէկէն դուռը վազեցին և անոր շապկը կրնր ետեէն պատռեց. և դրանը քով ամուսինին հանդիպեցան և կրնր երկանը ըսաւ. «կնոջդ գէշութիւն ընել ուզողին պատիժը միմիայն բանտն է. կամ պէտք է ծանր պատիժ մը կրէ»:

26. Նա ալ ըսաւ. «կրնր ինք ցանկութիւն յայտնեց ինձ»: Անոր մարդոցմէ մէկը վկայեց. թէ եթէ, շապկը առչեի կողմէն պատռուած ըլլար. կրնր ճշմարիտ կըլլար. և նա ստախօս է»:

27. «Բայց եթէ շապկը ետեէն պատռուած է, կրնր ստախօս է, և նա ճշմարիտ կը խօսի»:

28. Երբ անոր շապկը ետեէն պատռուած տեսաւ ըսաւ «ո՛վ կրներ, այս ձեր խարդախութիւնն է, և ձեր խարդախութիւնները մեծ են»:

29. «Ո՛վ Յովսէփ, դուն քաջուէ՛ ասկէ. և դու, ո՛վ կին, յանցանքիդ համար ներողութիւն խնդրէ՛, վասնզի դուն յանցաւոր ես»:

30. Եւ այն քաղաքի կրները կ'ըսէին. «այն երեւելի մարդուն կրնր իր ծառային սիրահարեր է և ծառան ալ անոր սիրահարեր է, մենք կը տեսնենք որ այն կրնր յայտնապէս յանցապարտ է»:

31. Երբ կրնր լսեց անոնց բամբասանքը. զանոնք հրաւիրեց ու անոնց խնճոյք մը տուաւ և անոնց իւրաքանչիւրին մէյ մէկ զանակ լանձնեց, ու ըսաւ. «Դուրս եկուր ասոնց քով»: Երբ կրները զանի տեսան, զանի մեծարեցին և իրենց ձեռքերը կտրելով ըսին, «մեզայ Աստուծոյ, այս մարդ չէ, այս պատուական հրեշտակ մըն է»:

32. Կրնն ալ ըսաւ. «այս ան է որուն մասին դուք զիս կը մեղադրէիք: Արդարեւ ես անոր սիրահարեցայ, բայց նա ինքզինք սուրբ բռնեց. խկ

եթէ իմ հրամանս չկատարէ, անպատճառ պիտի բան-  
տարկուի ու կը նուաստանայ»:

33. Նա ևս ըսաւ, «Ո՛վ Տէրդ իմ, բանտը ինձ  
նախամեծար է քան այն բանը որուն զիս հրաւիրեն  
և եթէ անոնց խարդաւանքը ինձմէ չհեռացնեն, ևս  
անոնց յարելով տգէտներէն կ'ըլլամ»:

34. Եւ անոր Տէր ընդունելով անոր խնդրանքը,  
կանանց խարդաւանանքէն հեռացուց զանի, վասն  
զի նա լսող ու գիտցող է:

35. Ապացոյցները տեսնելէ յետոյ ալ անոնք յար-  
մար դատեցին որ զանի բանտարկէին ժամանակ մը:

36. Եւ անոր հետ լաւօրէն պաշտօնեաներէն եր-  
կուքը բանտն էին: Անոնցմէ մէկը ըսաւ. «Ես քու-  
նիս մէջ տեսայ թէ գինի կը ձմէս»: Միւսը ըսաւ,  
«Ես ալ տեսայ որ գլխուս վրայ հաց կը տանէի և  
թռչունները անկէ կուտէին»: Միւր ըսէ, ըսին, ա-  
սոնց մեկնութիւնը մենք քեզ բարեգործներէն կը  
նկատենք:

37. «Ձեր կերակուրը գարէն առաջ, ըսաւ նա, ևս  
ձեր երազներուն մեկնութիւնը ձեզի իմացնեմ, ան  
ձեզ գարէն առաջ սա ձեր երկուքին եղածը Տէրս ինձ  
իմացուց, վասնզի ևս այս ազգին կրօնքը ձգած եմ,  
անոնք Աստուծոյ չեն հաւատար և հանդերձեալը  
կուրանան»:

38. «Եւ կը հետեւիմ իմ հայրերուս, Արրահամի և  
Իսահակի և Յակոբի կրօնքին, մենք իրաւունք չու-  
նինք Աստուծոյ ընկեր տալու բան մը: Այս Աստու-  
ծոյ շնորհն է մեր ու մարդոց վրայ, բայց մարդոց  
չատերը շնորհակալ չեն»:

39. «Ո՛վ բանտացիներս, այլևայլ տէրերը լաւ  
են, թէ մէկ հատ հզօր Աստուածը»:

40. «Անկէ զատ ձեր պաշտածները միայն անուն-  
ներ են, զորս դուք անուանեցիք նաև ձեր հայրերը»:

Աստուած այդ մասին ապացոյց չէ իջեցուցած, վրձ-  
ուելը միայն Աստուծոյ կը պատկանի. նա հրամայեց  
որ անկէ զատ ուրիշը չպաշտէք: Ուղիղ կրօնքը այս  
է. բայց մարդոցմէ շատերը չեն գիտեր»:

41. «Ո՛վ բանտակիցիներս, ձեզմէ մէկը իր տիրոջ  
գինի պիտի խմցնէ, եւ միւսը պիտի կախուի ու  
թռչունները զլուխէն պիտի ուտեն: Այդ բանը վրձ-  
ուուած է. ասոր համար ինձմէ տեղեկութիւն կու-  
ղէիք»:

42. Եւ այն երկուքէն մէկին՝ որ կը կարծէր թէ  
պիտի ազատուէր, ըսաւ, «զիս քու Տիրոջդ առջևը  
յիշէ», բայց սատանան մոռցուց անոր իր տիրոջը  
առջևը, և անիկա քանի մը տարի բանտը մնաց:

43. Թագաւորը ըսաւ, «Ես եօթը գէր կովեր տե-  
սայ և եօթը նիհար կովեր կերան զանոնք, և եօթը  
կանայ հասկեր և եօթը չոր հասկեր տեսայ: Ո՛վ ցե-  
ղակիցիներս, մեկնեցէք իմ այս երազս, եթէ անսխիբ  
մեկնողներ էք»:

44. Անոնք ըսին, «ատոնք խառն ի խուռն երազ-  
ներ են, և մենք այդ երազներուն մեկնութիւնը  
չենք գիտեր»:

45. Եւ այն երկու բանտարկեալներէն ազատուած  
որ մոռցած էր երկար ատեն, յիշեց Յովսէփը և ըսաւ.  
«Ես անոր մեկնութիւնը ձեզ կ'իմացնեմ, միայն ինձ  
թողուցէք»:

46. «Ո՛վ Յովսէփ բարեկամ, եօթը գէր կովերու  
մասին զորս կերան եօթը նիհար կովեր, և եօթը  
կանայ և եօթը չոր հասկերու մասին մեզ բացարու-  
թիւն տուր, որ ետ դառնամ այն մարդոց ու իմա-  
ցնեմ անոնց»:

47. Նա ալ ըսաւ, «ըստ ձեր սովորութեան եօթը  
տարի կը ցահէք, և հնձած հունձքերնէդ քիչ մը,  
ձեր ուտելիքը առնելով, միւսները ձգեցէք»:

48. «Անկէ յետոյ եօթը խիստ տարիներ կուգան որոնք ձեր պահեստները կուտեն, բացի ձեզ համար քիչ մը պահելիքնէդ»:

49. «Անկէ յետոյ ալ տարի մը կուգայ, յորում շատ անձրև կունենան և շատ գինի կը լեցնեն»:

50. Եւ թագաւորը ըսաւ «զանի իմ օռջևս բերէք» : Երբ զրկուած մարդը անոր եկաւ, ըսաւ, «ես զնա քու տիրոջ և անոր հարցուր թէ ձեռքերնին կտրող կիներուն գործը ի՞նչ եղաւ վասնզի իմ Տէրս անոնց խարդաւանքը գիտէ»:

51. Եւ թագաւորը կրներուն ըսաւ, «ի՞նչ գիտաւորութիւն ունէիք որ սիրահարեցաք Յովսէփին» : Անոնք ալ ըսին, «մենք անոր մասին գէշ բան մը չենք գիտեր» : Այն երևելի մարդուն կիսն ըսաւ, «հիմա ճշմարտութիւնը յայտնուած է, ես անոր սիրահարած էի, բայց նա անմեղ է»:

52. «Այս անոր համար էր, որ այլ՝ գիտնայ թէ ես անոր անհաւատարիմ չեմ եղած իր բացակայութեանը և թէ Աստուած անհաւատարիմներուն խարդաւանքը չառաջնորդեր»:

53. «Եւ ես ինձ չեմ արդարացներ, վասնզի մարգուս զգացուէր չարութեան թելադրող է, եթէ Տէրս չողորմի անոր արգարեւ իմ Տէրս ներող եւ ողորմող է»:

54. Եւ թագաւորը ըսաւ, զանի ինձ բերէ՛ք որ իմ մտերիմս ընեմ զինքը» : Եւ անոր հետ խօսակցած ատենը ըսաւ թէ դուն այսօրէ մեր քով մնալով մեր հաւատարիմս ես :

55. Նա եւս ըսաւ, «զիս երկրին չտեմարաննեալուն վերակացու ըրէ, վասնզի ես կը պահպանեմ եւ գիտեմ»:

56. Այսպէս մենք Յովսէփին միջոց ընծայեցինք որ այդ երկրի մէջ ուր որ ուզէ չոն բնակի, մենք մեր ուզածին կը հասցնենք մեր ողորմութիւնը ե

բարեգործին վարձքը չենք կորսնցնէր :

57. Եւ ճիշդ է որ հանգերձեալին վարձքը լաւագոյն է հաւատացեալ երկրագործներուն :

58. Եւ Յովսէփի եղբայրները եկան և անոր քով մտան, եւ նա զանոնք ճանչցաւ, բայց անոնք զանի չճանչցան :

59. Երբ արուելիքները տուաւ անոնց, ըսաւ, թէ «ձեր հօրը քով գտնուող ձեր եղբայրը ինձ բերէք, կը տեսնէք կո՞ր որ ես լման չափով կուտամ, եւ հիւր ընդունողներուն ամենալաւն եմ»:

60. «Եւ եթէ զանի չբերէք ինձ, դուք ինձմէ մէկ չափ իսկ չէք ստանար և իմ քով չէք գար»:

61. Անոնք ըսին, «մենք զանի հօրէն կուզենք, եւ ճշմարիտ որ կընենք»:

62. Ան ալ ըսաւ իր ծառաներուն, անոնց վճարածը իրենց բեռներուն մէջ գրէ՛ք, որ գիտնան երբ որ իրենց ընտանիքնուն զառնան, որպէսզի կըրկին զան :

63. Եշտ անոնք իրենց հօրը քով գացին, ըսին, «ո՛վ հայր, մեզ ցորեն չպիտի տան, ուստի մեր եղբայրը մեզ հետ զրկէ որ ցորեն առնենք, ահա մենք անոր կ'սպասենք»:

64. Ան ալ ըսաւ, «ես անոր մասին ալ ձեզ այնպէս վստահի՞մ, ինչպէս առաջ վստահեցայ անոր եղբոր մասին. Աստուած ամենալաւ պաշտպանն է եւ նա ողորմածներուն ամենաողորմածն է»:

65. Երբ որ բեռերնին բացին, գտան որ իրենց վճարածը իրենց ևս տրուած է, եւ ըսին, «ո՛վ մեր հայրը, ալ ի՞նչ կուզենք, ահա մեր վճարածը մեզ ևս տրուած է, եւ մենք անով հաց կը բերենք մեր ընտանիքի համար եւ մեր եղբայրը կը պահպանենք, եւ

ուղտի մը բեռ ալ աւելի կ'առնենք, այս ցորենը քիչ էք»:

66. Նա եւս ըսաւ, «ես դանի ձեր հետ չեմ դըրկեր, մինչեւ որ դուք ինձ Աստուծոյ առջեւ հաստատ խօսք տաք թէ դանի ինձ կը վերագործնէք, եթէ ձեզ չարգիլուի: Աւստի անոնք անոր հաստատ խօսք տուին. ան ալ ըսաւ, «Աստուած վկայ թող ըլլայ ձեր խօսքերուն»:

67. Եւ ըսաւ, «զուակներս. ամենքդ մէկ դռնէ մի մտնէք. տարբեր դռներէ ներս մտէք. եւ Աստուծմէ զատ բան մը ձեզ չպաշտպաներ. անա վճիռը միայն Աստուծոյն է. ես անոր ապաւինած եմ, եւ ապաւինողները անոր թող ապաւինին»:

68. Երբ հայրերնուն հրամայած տեղէն ներս մը տան, ոչ մէկ բան չպաշտպանեց զանոնք բացի Աստուծմէ, որով Յակոբի յաղձանքը կատարուեցաւ: Եւ նա մեր իրեն սովրեցուցած գիտութեան տէրն է. սակայն մարդոց շատերը չեն գիտեր:

69. Երբ որ անոնք Յովսէփին ներկայացան՝ անիկա եղբայրը իր քովը առաւ եւ ըսաւ. «ես քու եղբայրդ եմ. արդ, անոնց ըրածնուն մասին մի տըրտմիր»:

70. Եւ տրուելիքները անոնց տալէ յետոյ, իր դաւաթը եղբորը բեռան մէջ դրաւ. վերջը մուսնետիկ մը կանչեց թէ «ճամբորդներ դուք գողեր էք»:

71. Անոնք դառնալով ըսին թէ ի՞նչ կորսնցուցած էք:

72. Անոնք ըսին. «Թագաւրին գաւաթը. կորսընցուցած ենք եւ ով որ զայն բերէ անոր ուղտի մը բեռ պիտի տրուի. եւ ես կապահովեմ զայդ»:

73. Անոնք եւս ըսին «կերդնունք Աստուծոյ եւ դուք գիտէք թէ մենք այս երկիրը շարագործութեան համար չենք եկած եւ մենք գողեր չենք»:

74. Անոնք ալ ըսին, «ինչ ըլլայ անոր հատուցումը ձեր դուք ստախօսներէք»:

75. Անոնք ըսին. «որուն բեռնէն որ գանուի, նա իր անձովը կը հատուցանէ: Մենք չարագործները այսպէս կը պատժենք»:

76. Յովսէփ իր եղբոր պարկերէն առաջ անոնց պարկերը խուզարկեց. յետոյ իր եղբորը պարկէն հանեց: Մենք այս խարդախութիւնը Յովսէփին սովրեցուցինք. վասնզի Թագաւորին կանոնին համեմատ իրաւունք չունէր իր եղբայրը վար դնելու, եթէ ոչ Աստուծոյ կամքովը, մենք մեր ուղածը աստիճաններու կը բարձրացնենք, և իւրաքանչիւր գիտունի վրայ գիտուն մը կայ:

77. Անոնք ըսին, «եթէ ան գողեր է, անոր եղբայրը անկէ առաջ գողեր է»: Բայց Յովսէփ զայն գաղտնի պահեց անոնցմէ և ըսաւ, «դուք ձեր տեղւոյն մէջ աւելի չար էք և Աստուած գիտէ թէ դուք ինչ կընէք»:

78. Անոնք ալ ըսին, «Ով իշխան, անիկա շատ ձեր հայր մ'ունի. մեղմէ մէկը վար դիր անոր փոխարէն. կը տեսնենք որ դու բարի ես»:

79. Ան ալ ըսաւ, «Աստուած չընէ որ մենք մեր ապրանքը առնողէն տարբեր մէկը վար դնենք. ապա թէ ոչ մենք անիրաւունքէն կըլլանք»:

80. Երբ ալ յոյսերնին կարեցին անկէ, մէկ կողմ քաշուելով խորհրդակցեցան. անոնց մեծը ըսաւ, «չէ՞ք գիտեր որ ձեր հայրը յանուն Աստուծոյ ձեզմէ երզուս առաւ և ասկէ առաջ ալ դուք Յոսէփի մասին յանցաւոր էք. հետեւաբար ես այս երկրէն չեմ երթար մինչև որ հայրս ինձ հրաման տայ, եւ կամ Աստուած իմ դատաստանս տեսնէ. վասնզի ան է ամենալաւ դատաւորը»:

81. «Դուք գացէք ձեր հօրը քով և ըսէք, «՛՛

հայր մեր. ահա որդիդ գողցաւ և մեր գիտցածը մի-  
այն կը վկայենք եւ մեզմէ գաղտնի գործուածին  
պատասխանատու չենք»:

82. «Դուն հարցուր մեր գտնուած գիւղին և մեր-  
հետ եկող կարաւանին թէ մենք ճիշդ կը խօսինք»:

83. Ան ըսաւ. ոչ այս բանը դուք հնարեր էք.  
բայց համբերել լաւ է. թերևս Աստուած անոնց ա-  
մենն ինձ կը դարձնէ. վասնզի նա գիտէ և իմաս-  
տուն է:

84. Եւ անոնցմէ երես դարձնելով ըսաւ աւաղ իմ  
Յովսէփին: Եւ անոր աչքերը վիշտէն ճերմկցան և  
ինք տանջուեցաւ:

95. Անոնք ըսին, Աստուած գիտէ որ դուն միշտ  
Յովսէփը կը յիշես. այնպէս որ կամ հիւանդ պիտի  
ըլլաս եւ կամ պիտի մեռնիս:

86. Ան ալ ըսաւ թէ ես իմ ցաւս և կսկիծս միայն  
Աստուծոյ կը գանգատիմ և Աստուծոյ մասին իմ  
գիտցածս դուք չէք գիտեր:

87. «Ո՛վ գաւակներս, դացէք Յովսէփի և եղբօրը  
մասին հարցուփորձ ըրէ՛ք, և Աստուծոյ շնորհէն մի  
յուստնատիք, վասն զի անհաւատներու ցեղէն գատ-  
ուրիշները չեն յուստնատիր»:

88. Եւ երբ անոր քովը գացին, ըսին. «Ո՛վ իշ-  
խան, մենք մեր ընտանիքը փորձանքի մատնուած-  
ենք, և մենք քիչ մը դրամով եկանք. մեզի ցորեն-  
տուր և մեզ ողորմութիւն տուր, վասնզի Աստուած  
ողորմողները կը վարձատրէ»:

89. Ան ալ ըսաւ, գիտէ՛ք, թէ դուք ի՞նչ ըրած-  
էիք Յովսէփին և իր եղբօրը երբ ազէտ էիք»:

90. Անոնք ալ ըսին, «Արդեօք դու Յովսէփին ես»:  
Նա ըսաւ թէ ես եմ Յովսէփը և սա իմ եղբայրս է.  
Աստուած մեզ գթացած է. վասն զի երկիւղածին  
ու համբերողին վարձքը Աստուած չկորսնցուներ»:

91. Անոնք ըսին. «Աստուած վկայ, որ նա քեզ  
մեր վրայ բարեբար ըրեր է. իսկ մենք յանցաւոր-  
ներ ենք»:

92. Նա ևս ըսաւ. «դուք այսօր մի տրամիք. Աս-  
տուած ձեզ կը ներէ, վասն զի ողորմածներուն ա-  
մենաողորմածն է»:

93. «Սա իմ շապիկս տարէք հօրս, անոր երեսին  
վրայ ձգեցէք, և նա կը տեսնէ. և ձեր բոլոր ընտա-  
նիքովը միասին իմ քովս եկէք»:

94. Եւ երբ կարաւանը եկաւ. անոնց հայրը ըսաւ.  
«Ես Յովսէփին հօտը կառնեմ կոր. թէև դուք զիս  
գառանցող կը կարծէք»:

95. Անոնք ալ ըսին. «Աստուած վկայ, որ դուն  
տակաւին առջի սխալին մէջն ես»:

96. Բայց աւետաբերը երբ եկաւ. Յովսէփի լաթը  
անոր ետեւը ձգեց և նա կրկին կը տեսնէր:

97. Նա ալ ըսաւ, «Ես ձեզ չըսի՞ թէ Աստուծոյ  
մասին իմ գիտցածս դուք չէք գիտեր»:

98. Անոնք ըսին, «ո՛վ հայր մեր, մեր յանցանք-  
ներուն համար դու թողութիւն ինքրէ՛. մենք յան-  
ցաւորներ ենք»:

99. Նա ըսաւ, «Ես չուտով թողութիւն պիտի  
ինդրեմ ձեզ համար իմ Տիրոջմէ. վասն զի նա նե-  
րող և ողորմող է»:

100. Երբ Յովսէփին քովն եկան. նա հայրը ու  
մայրը իր քովը առաւ և ըսաւ, «Եթէ Աստուած  
կամենայ, եկէք Եգիպտոս ապահով եղէք»:

101. Եւ հայր ու մայրը գահի վրայ բարձրացուց.  
և անոնք Կրեսի վրայ խնայով անոր երկրպագեցին.  
և նա ըսաւ, «ո՛վ հայր իմ, այս իմ կանխաւ տեսան-  
երազիս մեկնութիւնն է. այլևս իմ Տէրս զայն իրա-  
կանացուց: Նա ինձ բարիք ըրած է, զիս բանտէն  
հանեց, և ձեզ անապատէն հոս բերաւ, մինչդեռ սա-

տանան իմ և եղբայրներուս միջև խառնութիւն ձեռքած էր: Արդարև իմ Տէրս բարի է և գիտուն ու զթած է»:

102. «Ո՛վ Տէր իմ, դուն ինձ իշխանութիւն տուիր և տեսիլքներու մեկնութիւնը ինձ սովբեցուցիր: Ի՞նչ երկնից ու երկրի արարիչը, դուն իմ պաշտպանս ես երկրիս և հանդերձեալին մէջ, ինձ միւստիմ մեռցուր և զիս արդարներուն միացուր»:

103. Այս գաղտնիքներու յայտնութենէն է որ քեզ պատմելով յայտնեցինք, և դուն անոնց քովը չէիր երբ անոնք իրենց գործը որոշեցին և խարդախութիւն մը սարքեցին, և մարդոց շատերը եթէ ուզես այ չեն հաւատար:

104. Եւ դու անոր համար անոնցմէ վարձ մի պահանջեր. վասնզի գիտցողներու համար սա խրատ մըն է միայն:

105. Եւ երկնից ու երկրի վրայ ո՛րքան նշաններ կան. սահայն անոնք անոնց քովէն անցնելով կը հեռանան անոնցմէ:

106. Եւ անոնցմէ շատը Աստուծոյ չհաւատար, անոնք բազմաստուածեաններ են:

107. Աստուծոյ պատուհասէն պատիժ մը չգալուն և կամ ժամը յանկարծ չհասնելուն ապահո՞վ են անոնք, բայց անոնք չեն խորհիր:


108. Դու բռէ, «սա իմ ճամբաս է, ես և ինձ նեւ տեղողները համոզուած, դէպի Աստուած կը հրաւիրենք: Փառք Աստուծոյ, վասնզի ես բազմաստուածեաններէն չեմ»:

109. Եւ մենք քեզմէ առաջ այ միայն քաղաքացի մարդիկ զրկեցին և անոնց յայտնութիւն տուինք: Արդեօք երկրի վրայ պատելով չտեսան, թէ իրենցմէ առաջ եղածներուն վիճակը ինչպէս եղած է: Եւ հանդերձեալ աշխարհը աւելի լաւ է երկուզածնեւ

բուն հաճար: Արդեօք չ'են հասկնար:

110. Եւ երբ որ մարդարէները կը շուսահատէին և կը կարծէին թէ ստախոսներ պիտի համարուին, այն ատեն մեր օգնութիւնը անոնց հասնելով, ուղածնիս կ'աղատէինք և մեր չարիքը յանցաւոր ցեղէ մը ետ չդառնար:

111. Ստուգիւ անոնց պատմութենէն խելօքներուն համար խրատ կա: Ասիկա շինծու պատմութիւն մը չէ, այլ իրմէ առաջ եղածը կը հաստատէ, և ամեն բան կը բացատրէ և հաւատացող ժողովուրդի համար ուղիղ ճամբան ցոյց տուող և ուղորմութիւն է:



ԺԳ. Գ Լ Ո Ի Խ

(ՍՈՒՐԵԹԻՒՂ, ԲԱՍ)

Մէքէական, իսլամաւուն երեմ պատգամ

Յանուն Աստուծոյ գթածի ողորմածի

1. Ա. Լ. Մ. Բ.: Ասոնք գիրքերու նշաններէն են և քու Տիրոջդ կողմէ քեզ համար իջուաւածը ճշմարիտ է, բայց մարդոց շատը չհաւատար:

2. Դու տեսած երկինքդ առանց սիւնի բարձրացնողը Աստուած է, Յետոյ գահին վրայ բազմեցաւ և հնազանդեցուց արեւը ու լուսինը. որոնց իւրաքանչիւրը կը քալէ որոշ ժամանակով: Ես կը կոռովարէ ամեն բան, կը յայտնէ նշանները որ ձեր Տիրոջ հանդիպումին համոզութիւն:

3. Ես երկիրը տարածեցի ասոր մէջը յեռներ ու գետեր հաստատեց և ամեն պտուղէ երկուքական զոյգ շինեց. նա է որ գիշերը ցերեկով կը ծածկէ:

անա խորհող ժողովուրդի համար ասոր մէջ նշաններ կան :

4. Եւ երկրի վրայ իրարու մօտ երկրմասեր կան . նաև կան այգիներ, ցանքեր և մէկ արմատէ բուսած կամ զատ բուսած արմաւենիներ կան , որոնք նոյն ջուրով կը ջրուին, և անոնցմէ ոմանք միւսնեւրէն յարգի ըրած ենք ուտելու մասին . ա՛յա հասկըցող ժողովուրդի համար ասոր մէջ ալ նշաններ կան :

5. Եւ եթէ դուն կը զարմանաս , զարմանալին անոնց խօսքն է . « քէրէն » , « երբ մենք հող կը դառնանք , անգամ մըն ալ միթէ կ'ստեղծուինք » :

6. Անոնք իրենց Տիրոջ չհաւատացողներն են . և անոնց վիզերէն չզմաներ պիտի ըլլան , և անոնք կրակի ընկերներն են , որուն մէջ կը մնան յաւիտեան :

7. Անոնք բարիքէն առաջ սպառնացած չորիքք բերել կը պահանջեն քեզմէ , թէև որինակներ եղած են իրենցմէ առաջ : Միայն քու Տէրդ չարագործ մարդոց ալ թողութիւն կուտայ , և քու Տէրդ խըստիւ պատժող է :

8. Եւ անհաւատները կըսեն , թէ « եթէ իր Տիրոջմէ հրաշք մը չիջեցնէ չենք հաւատար . » դու միայն երկիւզ տուող ես և ամեն մէկ ազգ առաջնորդող մ'ունի :

9. Աստուած գիտէ թէ մէն մի կնոջ արգանդին մէջ ինչ կայ , և թէ արգանդներուն նեղնալ ու լայնանալը գիտէ , և ամեն ինչ անոր քով չափուած է :

10. Պաղանի և յայտնի բաները գիտէ նա , որ Մեծ և ամենաբարձր է .

11. Մէկը իր խօսքը պահէ կամ յայտնէ և կամ մէկը գիշերը ինքզինք պահէ ու ցերեկը յայտնէ միևնորին է .

12. Ամեն մարդու առջևէն և ետևէն կարգաւ դացող հրեշտակներ կան , որոնք բոտ Աստուծոյ հրամանին զանի կը պահպանեն : Եւ Աստուած չփոխեր ազգի մը պարգևածը մինչև որ նախ անոնք չփոխեն իրենց սրտերուն մէջ եղածը . բարի կամ չար և եթէ Աստուած ազգ մը պատժել ուզէ , ոչ մի բան զանի արգելիւր . և անկէ զատ պաշտպան չունին մարդիկ :

13. Այն է որ ձեզ փայլակը ցոյց կուտայ երկիւղ և յոյս ներշնչելու համար : Նա է սր ծանր ամպեր կարտագրէ :

14. Եւ երկնից կայծակը անոր փառքը կարտայայտէ և հրեշտակները սարսափահար կ'օրհնեցեն զանի , ե նա իր կարծակները կը զրկէ ու կը շանթահարէ իր կամեցածները , որոնք կը վիճին անոր մասին . որովհետև նա իր կարոյութեամբը անունն է :

15. Նա միայն ազօթքի արժանի է . և որոնք որ ուրիշ աստուածներու կազօթեն ոչինչ չեն ստանար . նման այն մարդուն , որ երկու ձեռքերը դէպի ջուրը կերկնցնէ որ իր բերանին բերէ , բայց չկրնար անոր հասնիլ երբէք : Անհաւատներուն ազօթքները կը մուրին իրենց ճամբուն մէջ (Աստուծոյ շէն հասնէր) :

16. Երկնից մէջ և երկրի վրայ բոլոր եզոյնները Աստուծոյ կերկրպագեն կամայ և ակամայ , նոյնպէս բոլոր էակներու ստուերները կը խոնարհին անոր առջև առաւօտ և երեկոյ :

17. Ըսէ . « ո՞վ է երկնքի ու երկրի տէրը » : Պատասխանէ , « Աստուած » : Ըսէ անոնց « ուրեմն զանի պիտի մոռնո՞ք ուրիշ պաշտպաններ փնտաւելու համար , որոնք իրենց համար իսկ ոչ օգուտ ոչ փրատ կրնան բերել » : Ըսէ՛ անոնց , « միթէ կոյրը և տեսնողը հաւասար են , և լոյսը ու խաւարը միևնորին բաննէ : Անոնք Աստուծոյ ընկերներն պիտի տան .

որոնք ստեղծած ըլլան Աստուծոյ ստեղծածին պէս որ երկու ստեղծումներն նմանին» : Ըսէ՛ , «Աստուած ամեն բանի ստեղծողն է , նա միակ է և յազմական :

18. Նա կը զրկէ երկինքէն ջուրը . որ կը հոսի իր որոշեալ տեղէն . հոսանքը կը տանի երեսը լողացող փրփուրը , և մետաղները՝ զորս մարդիկ կրակի մէջ կը հալեցնեն զարդեր և անօթներ շինելու նոյնպէս փրփուր կարտադրեն : Աստուած այսպէս օրինակ կուտայ ճշմարիտը և սուտը : Փրփուրը կանցնի կերթայ արագ կերպով , բայց ինչ որ օգտակար է մարդոց կը մնայ երկրի վրայ : Աստուած այսպէս օրինակներ կը բերէ : Որոնք որ Աստուծոյ հնազանդ են լուս վարձրատութիւն կընդունին , բայց որոնք որ անհնազանդ են , եթէ երկրիս մէջ բոլոր եղածները իրենց ըլլայ և նոյնչափ ալ աւելի , չեն կրնար փրկուիլ անոնցմով : Անոնց դատաստանը սոսկալի պիտի ըլլայ , անոնց բնակարանը գեհնն է , ինչ սոսկալի բնակարան :

19. Ան՝ որ գիտէ թէ Աստուած երկնից ճշմարտութիւնը քեզ զրկած է , կոյրի նման կը մնայ : Իմաստունները զայն պիտի խորհրդածեն :

20. Անոնք որ Աստուծոյ ուխտածնին կը կատարեն և անոր պայմանը չեն դրժեր ,

21. Անոնք որ միանալ հրամայուած կը միացնեն և կը վախնան իրենց Տիրոջմէ և երկիւղ ունին իրենց դատաստանի դժնդակութենէն ,

22. Եւ անոնք որ Աստուծոյ երեսը տեսնելու բողձանքով կը համբերեն և աղօթքը խնամքով կը կատարեն և գաղտնի կամ լայտնի ողորմութիւն կուտան մեր իրենց շնորհածէն , և իրենց չարազործութիւնները կը քաւեն բարեգործութիւններով , անանոնցն է յաւիտենական բնակարանը ,

23. Այլնէն , Եղեմի գրախոնքերը , որոնց բոլոր դռներէն ներս մտնեն անոնք , նաև իրենց հայրերէն իրենց կիներէն և զաւակներէն ալնպիսիները որոնք արգար եղած են , և նոյնպէս հրեշտակները :

24. Անոնց պիտի ըսեն , «խաղաղութիւն ըլլայ ձեզ ձեր համբերութեան համար» . սրբան քաղցր է սահանդերձեալ աշխարհը :

25. Իսկ անոնք որ Աստուծոյ ուխտը կը զրժեն ընդունած ըլլալէ յետոյ , և Աստուծոյ միացնել հրամայածը կը զատեն և չարութիւն կը գործեն աշխարհի վրայ , անոնք անիծեալ են և սոսկալի վայր մը պիտի ունենան իրենց բնակարան :

26. Աստուած իր ուղածին կուտայ իր բարիքները առատօրէն կամ կը պակսեցնէ : Անոնք կը վախւին այս աշխարհի բարիքները . բայց այս աշխարհի կեանքը հանդերձեալ կեանքին հետ բաղգատելով , ինչ է , եթէ ոչ անցաւոր վայելք մը :

27. Անհաւատները կըսեն , «անոր համար եթէ հըրաշք մը չիջուցուի իր Տիրոջմէ , չենք հաւատար» : Ըսէ՛ անոնց , «Աստուած ուղածը կը մոլորեցնէ , և իրեն դարձողը ուշիղ ճամբան կառաջնորդէ :

28. Որոնք որ կը հաւատան , անոնց սրտերն ալ հանգստութիւն կը գտնեն Աստուած լիշեւով : Ահա մարդոց սրտերը Աստուած յիշելով է որ հանգստութիւն կ'ստանան : Որոնք որ կը հաւատան և բարիք կը գործեն , անոնցն է երանութիւնը և գեղեցիկ ապաստանարանը :

29. Մենք քեզ զրկեցին ժողովուրդի մը , որմէ առաջ ժողովուրդներ եկեր անցեր են , որ դուս աւանոնց պատմես մեր յայտնութիւնները : Անոնք Ողորմածին չեն հաւատար բնաւ : Ըսէ՛ անոնց , «Անիմ Տէրս է , որմէ զատ Աստուած չկայ . ես անոր եմ ապաւինած , եւ բոլորը անոր պիտի գառնան» :

30. Եթէ Գուրանը չեաները շարժէր. եթէ երկիրը կտոր կտոր ընէր և մեռեալներուն խօսիլ տար. չպիտի հաւատային. բայց Աստուած է բոլորին վրայ իշխողը: Հաւատացեալները կասկած ունին, թէ Աստուած կրնայ ուզիլ ճամբան առաջնորդել բոլոր մարդիկը եթէ ուզէ:

31. Անհաւատներու անպակաս պիտի ըլլան պատուհասները փոխարէնը իրենց գործերուն. կամ իրենց բնակարանին առջևը պիտի հարուածուին, մինչև որ Աստուծոյ սպառնալիքը լրանայ. և ստուգուի Աստուած իր խօսքը կը կատարէ:

32. Քեզմէ առաջ ալ իմ մարգարէներս ծաղրած են, ևս անհաւատներուն միջոց տուի. յետոյ զանոնք պատեցի. և ինչեր եղան իմ պատիժներս:

33. Եւ ո՞վ է որ կը հսկէ ամեն անձի ըրած գործերուն վրայ. բայց անոնք Յաւիտենականին ընկերներ տուին: Ըսէ՛ անոնց, «Անուանեցէք ձեր աստուածները, կամ Անոր կրօնացիք երկրի վրայ չգիտցածները կամ թէ աստուածները փուճ բան չեն: Սակայն կանխաւ պատրաստուած է անհաւատներու խորամանկութիւնը և անոնք ուզիլ ճամբէս խոտորեցան, և Աստուած որն որ մոլորեցնէ, այլևս անիկա չառաջնորդուիր:

34. Անոնց համար պատիժ կայ այս աշխարհի մէջ. և հանդերձակալի մէջ պատիժը աւելի սաստիկ է. անոնք բնաւ պաշտպան չպիտի ունենան Աստուծոյ դէմ:

35. Ահա թէ ինչ պիտի ըլլայ այն դրախտը որ խոտացուած է երկիւղածներուն. դրախտը կ'ոռոգուի հոսուն ջուրով, ուտելիքը անսպառելի է, և իր շուքը տեական: Այսպէս պիտի ըլլայ հաւատացեալներու վախճանը, և անհաւատներունը կրակն է:

36. Որոնք որ գիրքը ընդունեցին կուրախանան որ քեզ եղած է յայտնութիւնը: Արբէնեբո՛ կուսակ-

ցութեանց մէջ ուրիշներ ալ կան որ զայն մասամբ կը մերժեն: Ըսէ անոնց, «Աստուած ինձ հրամայած է զանի պաշտել և անոր ոչ մի բան ընկեր չտալ: Ես մարդիկ կը հրաւիրեմ իրեն կրօնքին, և ևս անոր պիտի վերադառնամ»:

37. Մենք քեզ յայտնեցին այս Գուրանը որ արաբ լեզուաւ օրէնք մ'ըլլայ. եթէ դուն անոնց հաճոյքին հետեւէիր, գիտութիւնը ստանալէ յետոյ, դուն ոչ բարեկամ կուրենաս, ոչ պաշտպան Աստուծոյ կողմանէ:

38. Մենք քեզմէ առաջ ուրիշ մարգարէներ զըրկած ենք և անոնց կիներ և զուակիներ տուած ենք: Եւ անոնցմէ ոչ մէկը հրաշք չէ գործած առանց Աստուծոյ արտօնութեանը: Ամեն որոշ ժամանակի համար իր գրուածքը կայ:

39. Աստուած իր ուզածը կաւրէ կամ կը հաստատէ: Եւ մալր Գիրքը անոր քովն է:

40. Թերևս քեզ տեսնել տանք մեր սպառնացածներէն մաս մը և թերևս քեզի մահ տանք, աւելի առաջ. քու պաշտօնդ է քարոզել, և մեզի կը պատկանի խտալ հաշուառութիւնը:

41. Չեն տեսներ որ մենք նկեր ենք անոնց երկիրը և մենք պաշարեր ենք անոր չուրջը: Աստուած կը դատէ, և անոր վճիռները ոչ ոք չվերաքրններ: Ես իր հաշիւները արագօրէն կը կարգադրէ:

42. Անոնց հայրերը խորամանկութեամբ վարուեցան, բայց բոլոր խորամանկութեանց տէրը Աստուած է, նա գիտէ իւրաքանչիւրին գործերը, և անհաւատները որ մը պիտի հասկնան թէ որուն համար է յաւիտենական աշխարհը:

43. Անհաւատները քեզի պիտի ըսեն. «Դու՛ երբէք Աստուծմէ զրկուած չես»: Պատասխանէ անոնց, «Ինձ կը բաւէ որ Աստուած և Գիրքին իմաստութիւնը ունեցողը իմ վկաներս ըլլան ձեր եւ իմ միջեւ:

ԺԴ. Գ Լ Ո Ի Խ

(ՍՈՐԷՆ ԻՊՐԱՀԻՄ)

Մէքէական, յիսուներկու պատգամ

Յանուն Աստուծոյ գթածի եւ ողորմածի

1. Ա. Լ. Ր. Այս գիրք մըն է զոր մենք քնդ զըրկած ենք, որ դուն մարդիկը խաւարէն հանես դէպի լոյս Հզօրին եւ փառաւորեալին ճամբան առաջնորդես:

2. Երկնից ու երկրի մէջ ինչ որ կայ Աստուծոյ կը պատկանի եւ վայ անհաւատներուն դառն տանջանքներու մասին, որոնց պէտէ եմբարձուի:

3. Անոնք որ այս աշխարհի կեանքը հանդերձեալէն աւելի կը սիրեն եւ որոնք մարդիկ կը մօլորեցնեն Աստուծոյ ճամբայէն ու շփոթել կը ջանան, խիստ հեռացած են մօլորութեան մէջ:

4. Մենք մարգարէ մը չենք զրկած որ չիօսի իր ցեղին լեզուով անոնց յատակ բացատրելու համար Աստուած որը որ ուղէ կը մօլորեցնէ եւ ուզածը կառաջնորդէ: Եւ նա հզօր եւ իմաստուն է:

5. Մենք Մովսէսը զրկեցինք մեր հրաշքներով: Եւ անոր ըսինք. թէ քու ժողովուրդ հանէ խաւարէն լոյսին, եւ յիշեցուր անոնց Տիրոջը օրերը: Արդարեւ ասոր մէջ ազդարտը նշաններ կան բոլոր մարդոց համար որ գիտեն համբերել եւ բարիք ընել:

6. Մովսէս ըսաւ իր ժողովուրդին, «յիշեցէ՛ք Աստուծոյ շնորհները երբ նա ձեզ ազատեց Փարաօնի ցեղէն, որ ձեզ կը տանջէր անգթօրէն կը խողխողէր ձեր որդիները եւ միայն ձեր աղջիկները ող կը ձգէր: Այս ծանր փորձանք մըն էր ձեր Տիրոջ կողմէ:

7. Յիշեցէ՛ք թէ ձեր Տէրը այսպէս պատուիրեց.

«Երախտագէտ եղէք, ես ձեզ պիտի աճեցնեմ. բայց եթէ անհաւատ ըլլաք, պատիժներս սոսկալի կ'ըլլան»:

8. Եթէ դուք եւ բոլոր աշխարհ անհաւատ ըլլաք, Աստուած որչեւ չհարուստ է եւ փառքով լեցուն:

9. Չլսեցի՞ք պատմութիւնը ձեզմէ առաջ եկած ժողովուրդներուն, նոյի, Ատի եւ Սամուաի ցեղերուն:

10. Եւ անոնցմէ յետոյ եկողներու սերունդն Աստուած միայն գիտէ: Այդ ժողովուրդները ունեցան մարգարէներ, որոնք իրենց մարգարէութեան հրաշքները ցոյց տուին անոնց. բայց իրենց ձեռքերը անոնց բերանը գրին ու ըսին, «մենք չենք հաւատար այն բանին որով դուք զրկուած էք՝ մենք մեծ կասկած ունինք ձեր հրաւիրած կրօնի մասին»:

11. Իսկ մարգարէները անոնց կը պատասխանէին. «Ի՞նչ կասկած կայ երկիրքը ու երկիրը ստեղծող Աստուծոյ մասին, որ ձեզ առ ինքն կը կոչէ ձեր մեղքերը ջնջելու համար, եւ ձեզ պայմանաժամ կուտայ մինչև որոշեալ վայրկեանը:

12. Անոնք ըսին. «դուք մեզի պէս մարդիկ էք. դուք կուզէք որ մենք հեռանանք այն աստուածներէն զորս մեր հայրերը կը պաշտէին: Մեզի անհրաժեշտ ոյժ մը ցոյց տուէք հրաշքործութեան»:

13. Մարգարէները անոնց կ'ըսէին. «արդարեւ մենք ալ ձեզի պէս մարդիկ ենք. բայց Աստուած իր շնորհը կուտայ իր ծառաններուն որու որ ուղէ. եւ մենք չենք կրնար ձեզ ո՛ր եւ է ոյժ ապացուցանել»:

14. «Եթէ ոչ Աստուծոյ հրամանովը: Հաւատացեալները միայն Աստուծոյ ապաւինելու են»:

15. «Եւ ի՞նչու համար Աստուծոյ չապաւինինք: Նա մեզ կառաջնորդէ մեր ճամբուն մէջ, եւ մենք համբերութեամբ կը տանինք ձեր մեզի առած նե-

դու թիւնները: Ապաւինողները միայն Աստուծոյ թող ապաւինին»:

16. Կոտպաշտները կրսէին, «մենք ձեզ պիտի արտաքօնք մեր երկրէն, եթէ դուք մեր կրօնքը չընդունիր»: Եւ այն ատեն Աստուած սա յայտնութիւնը բբաւ մարգարէներուն, «անպատճառ պիտի ջընջենք» ամպարիչները»:

17. «Անոնցմէ յետոյ դուք պիտի բնակիք անոնց երկրին մէջ: Այս վարձատրութիւն է Վճռէս եւ իմ սպանալիքէս պիտի սխտողներուն»:

18. Այն ատեն մարգարէները Աստուծոյ օգնութիւնը խնդրեցին, եւ ամեն յամառ բռնաւոր ջընջուցան:

19. Անկէ անդին դժուրը կայ, եւ անոր գարշահոտ ջուր պիտի խմցնեն:

20. Նա խեղդուելով կը խմէ զայն եւ դժուարաւ կը կլլէ: Ամեն կողմէ մահը անոր կը հասնի, բայց նա չմեռնիր, եւ ասոր կը յաջորդէ դառն տանջանք:

21. Անհաւատներու դործերը փոշիի կը նմանին՝ զոր փոթորկալից օր մը հովը կաննէ կը տանի: Անոնք իրենց ստացուածքով բան մը չեն կրնար ընել, եւ իրօք այս մեծ մոլորութիւն մըն է:

22. Չե՞ս տեսներ որ Աստուած ճշմարտապէս ստեղծած է՝ երկիրքը ու երկիրը: Նա եթէ ուզէ, կրնայ քեզ բնաջնջել եւ նոր արարած մը բերել:

23. Եւ Աստուծոյ համար այս դժուար բան մը չէ:

24. Ամեն մարդիկ պիտի երեւան Վաստուծոյ առջեւ, այն ատեն տկարները պիտի ըսեն ուժեղներուն «մենք ձեզի կը հետեւէինք, դուք հիմա չէ՞ք կրնար Աստուծոյ պատիժը մեզմէ քիչ մը վերցնել»:

25. Անոնք պիտի պատասխանեն. «եթէ Աստու-

ած մեզ առաջնորդէր, մենք ալ ձեզ կառայնորդէինք: Մեզի համար միեւնոյնն է թէ՛ մեր տանջանքին համար թախանձենք թէ լուսեամբ տանինք մեր տառապանքը. երբէք մեզ համար փրկութիւն չկայ»:

26. Եւ երբ այս բոլորը պիտի կատարուի, Աստուած անոնց պիտի ըսէ, «Աստուած ձեզ ճշմարիտ խոստում մ'ըրած էր, բայց ես ալ ձեզ խոստումներ քրած էի ու խարած էի. ես ձեր վրայ ո'նէ ոյժ չունէի»:

27. Միայն ես ձեզ կանչեցի, եւ դուք ինձ պատասխանեցիք. ուստի ինձ մի մեղադրէք, դուք ձեզ մեղադրեցէք. ես ձեզի ոչ կրնամ օգնել եւ ոչ ձեզմէ օգնութիւն ընդունիլ: Երբ դուք ինձ Աստուծոյ քովը կը դասէիք, ես զիս անոր հաստար չէի նկատեր»:

Անիրաւներուն համար դառն տանջանք կայ:

28. Որոնք որ հաւատացեալ են եւ բարեգործ, պիտի մտցուն զբախտներու մէջ որոնցմէ: գետեր կը հոսին. անոնք յաւիտեան հոն կը մնան Աստուծոյ հրամանովը. եւ անոնք կողովունուին «խաղաղութիւն» բառով:

29. Չե՞ս գիտեր որ Աստուած ինչպէս քաղցր խօսքը ընտիր ծառի մը նմանցուց, որուն արմատը երկրին մէջ հաստատուած է եւ ճիւղերը երկիրքը բարձրացած են,

30. Որ ամեն եղանակի մէջ պտուղներ կուտայ Տիրովը հրամանաւ Աստուած առաջներով կը խօսի մարդոց օր խորհրդածեն:

31. Գէշ խօսքը գէշ ծառի մը կը նմանի, որ երկրէն հեռուած ըլլալով, երբէք հաստատուն չէ:

32. Աստուած հաւատացեալները անփոփոխելի խօս-

քովը կը հաստատէ. թէ՛ այս աշխարհի կեանքին մէջ  
և եթէ հանդերձեային մէջ իսկ շարեւր կը մոլորե-  
ցնէ, վասն զի կընէ ինչ որ ուզէ:

33. Չնո տեսներ այն մարդիկը, որոնք Աստուծոյ  
շնորհը անհաւատութեան փոխած են եւ իրենց ազգը  
կը տանին գէպի կորստեան վայրը:

34. Այսինքն դժոխքը, ուր պիտի ալրին: Ինչ  
սոսկալի տեղ:

35. Անոնք Աստուծոյ նմաններ յորինեցին. որ-  
պէսզի մարդիկը հետացնեն Տիրոջ ճամբայէն: Ըսէ՛  
անոնց. «զուարճացէ՛ք, բայց ձեր երթալիքը կը-  
րակն է:

36. Ըսէ իմ հաւատացեալ ծառաննրու որ ազօթքը  
կատարին եւ մեր անոնց տուած ինչքեւէն ողորմու-  
թիւն տան յայտնի կամ ծածուկ, նախ քան այն  
օրին հասնիլը, որում ոչ առեւտուր կայ եւ ոչ բա-  
րեկամութիւն:

37. Աստուած է որ ստեղծած է երկինքը եւ երկի-  
ւրը. նա կ'իջեցունէ ջուրը երկինքէն. որով պտուղ-  
ներ կը բուսցնէ ձեզ սնուցանելու համար. նա նաւը  
ձեզ կը հպատակեցնէ որ ծովը ձեզքէ իր հրամանու-  
նա գետերը ձեզի տրամադրեց, նա ձեզի համար հը-  
նազանդեցուց արնւը եւ լուսինը իրենց սովորական  
շրջանովը. նա ձեր պէտքին կը ծառայեցնէ ցերեկը  
եւ գիշերը եւ նա կուտայ ձեզ ամեն բան որ անկէ  
կը խնդրէք: Աստուծոյ բարիքները եթէ կրնաք հաշ-  
ւել, հաշուեցէք: Բայց մարդիկ անիրաւ եւ անպե-  
րախտ են:

38. Աբրահամ սա ազօթքը ըրաւ Աստուծոյ, «Տէ՛ր  
իմ, այս երկրին ապահովութիւն վայելել տուր, եւ  
հետու պահէ զիս եւ որդիներս կուռքեր պաշտելէ»:

39. «Ո՛վ Տէր, անոնք արդէն շատեր մոլորեցուցեր  
են: Ինձ հետեւողը ինձմէ է, բայց այն որ ինձ չը-

նազանդիր . . . Տէ՛ր, գու ներող եւ ողորմած ես»:

40. «Ո՛վ Տէր, իմ գերդաստանիս մէկ մասը լնա-  
կեցուցի անմշակ հովտի մը մէջ, սուրբ տուննն ժող-  
որ անոնք ազօթքը կատարեն: Արդ, մարդոց սրտե-  
րը անոնց համակրեցուր զանոնք կերակրէ պտուղ-  
ներով. անոնք քեզ շնորհագէտ պիտի ըլլան.»

41. «Տէ՛ր մեր, զո պիտե մեր ծածկածը ու յայտ-  
նածը: Աստուծոյ ապիւն զաղանի բան մը չկայ երկ-  
նից մէջ ու երկրի վրայ: Փա՛ռք Աստուծոյ որ ինձ  
տուաւ, հակառակ իմ ձերտութեանս, Իմայիլը եւ ի-  
սահակը. նա կը լսէ մեր խնդրանքը:

42. «Ո՛վ Տէր իմ, զիս ազօթող, նաեւ սերունդս  
եւ բնգունէ իմ ապիւթս: Ենթէ ինձ եւ իմ ծնողացս  
եւ հաւատացեալներուն դատաստանի օրը»:

43. Մի կարծիք թէ Աստուած անտեղեակ է շա-  
րերու գործածներուն. նա անոնց միջոց կուտայ  
մինչեւ այն օրը յորում լուրերն աչքերը գէպի եր-  
կինք պիտի յասին:

44. Փութկոտ վազքով, զլուխնին վեր առած, ան-  
թարթ աչքերով ու պարագ սրտերով: Արդ, սպաս-  
նացիր մարդոց տանջանքի օրուան մասին:

45. Իսկ անիրաւողները պիտի գոչեն, «Տէ՛ր, մե-  
զի քիչ մը եւս ժամանակամիջոց տուր»:

46. «Մենք քու կոչը պիտի լսենք եւ մարտաբե-  
նորուդ պիտի հնազանդինք»: Անոնց պիտի պատաս-  
խանուի. «զուք աւելի առաջ չէի՞ք երգնուր թէ ձե-  
զի միաս չգար»:

47. «Գուք կը բնակէիք այն անիրաւ մարդոց տե-  
ղը որոնք իրենց անձերուն միասեցին, եւ ձեզ յայտ-  
նի էր թէ ինչպէս վարուեցանք անոնց հետ: Մենք  
ձեզի առականք ալ ըսինք: Անոնք իրենց իննգու-  
թիւնները ի գործ գրին: Աստուած անոնց խորաման-  
կութեանը հմուտ է, թէեւ անոնք լինեցողը շարժե-

ը ու չափ ոյժ ունեցած ըլլային :

48. Եւ մի երևակայեր որ Աստուած իր մարգարէներուն տուած խոստումը փոխէ. վասն զի Աստուած հզօր վրէժխնդիր է :

49. Այն օրը պիտի հասնի, յորում երկինքը ու երկիրը պիտի փոխուին, և մարգիկ պիտի ներկայանան միակ հզօր Աստուծոյ :

50. Եւ այն ատեն կը տեսնես որ մեղաւորները շղթաներով կապուած են իրարու :

51. Անոնց լաթերը կուսրէ պիտի ըլլան, և կրակը անոնց երեսը պիտի ծածկէ, որ Աստուած ամեն մէկ անձի գործին համեմատ հատուցանէ : Աստուած շուտ հաշիւ տեսնող է :

52 Սա զեկոյց է մարդոց, որ խրատուին և զիտնան թէ Աստուած մի է. և թէ խելօք եղողները մտածեն :



### ԺԵ. Գ Լ Ո Ի Խ

(ՍԻՐԷԹԻԻԼ ՀԷՃԲ)

Մէֆէական, իննըսուն ինը պատգամ

Յանուն Աստուծոյ գթածի և ողորմածի

1. Ա. Լ. Ր. Աւասիկ գիրքին և բացայայտ Գուրանին նշանները :

2. Շատ անգամ պիտի փափաքին անհաւատները որ Մանկտական եղած ըլլային :

3. Թող որ անոնք ուտեն ու վայելեն և լոյսով զրօսնուն. բայց շուտով պիտի հասկնան ճշմարտութիւնը :

4. Մենք ոչ մէկ քաղաք չենք բնաջնջած որ յայտնի գրուածք մը չէ ունեցած :

5. Ոչ մէկ ժողովուրդ իր որոշեալ վախճանէն ոչ առաջ կանցնի և ոչ ետ կը մնայ :

6. Անոնք ըսին Մահաճեթին, «Ով մարդ, քեզ ո՞ր Գուրան իջած է բարձրէն ! դուն զիւհար ես» :

7. «Եթէ քու բաժնի ճշմարտ ըլլար, ի՞նչու քու հետդ հրեշտակներ չըլլային» :

8. Մենք միայն ճշմարտութեան համար հրեշտակ կ'իջեցնենք (ոչ թէ մարդոց հետաքրքրութեան համար) : Եթէ ոչ անհաւատները ալ չպիտի սպասէին :

9. Մենք Յայանութիւնը իջեցուցինք, և մենք ենք անոր պահապանը :

10. Եւ քեզմէ առաջ մարգարէներ զրկած ենք հին ցեղերուն :

11. Եւ անոնց մարգարէ մը չեկաւ որ ծաղրած չըլլան :

12. Նոյն զգացումները կը դնենք յանցաւորներու արտերուն մէջ :

13. Անոնք չպիտի հաւատան, թէ և հիներուն օրինակը մէջ տեղ է :

14. Եթէ անոնց բանայինք երկինքի դռները և անոնք վերելէին հօն,

15. Անպատճառ պիտի ըսէին, «մեր աչքերը զի՞նովութենէ մթազնամ են, այո՛, մենք կախարդուած ենք» :

16. Մենք արդէն երկինքը համաստեղութիւններ շինած և կարգաւորած ենք զիտողներու համար :

17. Մենք գանսնք պահպանեցինք բոլոր քարկոծուած սատանաներէն :

18. Բացի անկէ, որ չը սահիր անցնիր գաղտնօրէն լսելու համար, և կը հարուածուի ասուպէ մը բոլորին տեսանելի :

19. Մենք տարածած ենք երկիրը և հոն հաստատած ենք լեռները, և հոն գոյացուցած ենք ամենբան որոշ քանակութեամբ մը:

20. Մենք ինչ սնունդ գոյացուցած ենք թէ՛ ձեռք համար և թէ՛ այն արարածներու համար զորս դուք չէք սնուցաներ:

21. Չկայ բան մը որուն դանձերը մեր քով չըլլան և մենք ամեն բան որոշ չափով մը կրճեցնենք:

22. Մենք կը զրկենք արգասաբեր հովերը, երկիրնքէն կրճեցնենք ջուրը, որմէ ձեզ կը խմցունենք և զոր պահողը դուք չէք:

23. Եւ մենք կը կենդանացնենք ու մենք կը մեացնենք. միայն մենք ենք բոլորի ժառանգորդը:

24. Մենք ձեզմէ առաջ եղողներն ու գիտենք ձեզմէ վերջիներն ալ:

25. Ձեր Տէրը որ մը ձեզ պիտի ժողվէ, նա իմաստուն և զիտուն է:

26. Մենք մարդը ստեղծած ենք ցեխէ և կաւէ:

27. Անկէ առաջ մենք ստեղծած էինք դեւերը զորաւոր կրակէ մը:

28. Յիշէ որ Աստուած ըսաւ հրեշտակներուն «կ'ըստեղծեմ մարդը ցեխէ և կաւէ:

29. Երբ ես զանի կը կազմեմ և իմ հոգիէս անոր մէջ կը փչեմ, դուք երեսի վրայ, ինչալով երկրպագեցէք:

30. Եւ հրեշտակները բոլորն ալ անոր երկրպագութիւն ըրին:

31. Բացի Էպիխսէն որ մերժեց երկրպագողներուն հետ գտնուիլ:

32 Այն ատեն Աստուած անոր ըսաւ, «ո՛վ Էպիխսէն՝ համար երկրպագողներուն հետ չես:

33. Ան ալ ըսաւ, «ես չեմ երկրպագեր առջևը մարդուն զոր դու ստեղծեցիր ցեխէ և սա կաւէն»:

34. Աստուած անոր ըսաւ, «ուրեմն դուրս ե՛լ ասկէ. դուն քարկոծեալ ես:

35. Եւ դու անիծուած ըլլաս մինչև դատաստանի օրը:

36. Նա պատասխանեց, «ո՛վ Տէր, ինձ միջոց տուր մինչև մարդոց յարութիւն առնելու օրը»:

37. Աստուած անոր ըսաւ, «պայմանաժամը տըրուած է քեզ»:

38. «մինչև որոշեալ օրը:

39. «Ո՛վ Տէր, ըսաւ Էպիխսէն քանի որ դուն զիս փորձիչ ըրիր, ես երկրի վրայ անոնց դէմ դաւադրութիւն պիտի սարքեմ և պիտի ջանամ ամեննալ թակարդը ձգել:

40. «Ի՞նչ քան առեալ անկեղծ ծառանդները»:

41 Աստուած պատասխանեց, «Այս ինձ համար ուղիղ ճամբայ է»:

42 «Վասնզի դուն ո՛ր և է այժ չունիս իմ ծառաներուս վրայ. դուն միայն խաբուածները քեզի հետևող կ'ունենաս»:

43. «Եւ անոնց բոլորին խոստացուած տեղը դժոխքն է»:

44. Այն եօթը դուռ ունի. և անոնցմէ մաս մը կայ ամեն մէկ դրան:

45. Իսկ որոնք որ գրախաներու և աղբիւրներու մէջ պիտ' ըլլան:

46. Անոնց պէտէ ըսուի, «անոր մէջ մտէք խաղաղութեամբ և ապահովեալ ամեն երկիւղէ:»

47. Անոնց սրտերէն կը հանենք ատելութիւնը. անոնք եղբոր պէս ապրելով, հանգիստ պիտի ընեն բազմոցներու վրայ և դէմ դիմաց նստած զիրար պիտի դիտեն:

48. Անոնք հոն յոգնութիւն չպիտի զգան, և երբէք չպիտի վաճառուին այն տեղէն:

49. Իմ ծառաներուս յայտնէ՛ թէ ես ներող և ոգորմուզ եմ:
50. Եւ թէ իմ պատիժս դառն պատիժ է:
51. Պատմէ անոնց Արքայամբն հիւրերու պատմութիւնը:
52. Երբ անոնք անոր բնակարանը մտան և բարեւեցին, նա ըսաւ, «դուք մեզ վախցուցիք»:
53. Անոնք ալ ըսին «մի վախնար, մենք քեզի իմաստուն աղու մը աւետարտ ապ եկանք»:
54. Նա անոնց պատասխանեց, դուք ինձ կ'աւետէք այդ երբ արդէն ծերացեր եմ. և ինչով դուք ինձ կ'աւետէք»:
55. Անոնք ալ ըսին, «մենք քեզ կաւեանք ամենայն ճշմարտութեամբ, բնաւ մի յուսահատի»:
56. Եւ ո՛վ կը յուսահատի, ըսաւ նա, իբր Աստուծոյ ողորմութիւններէն, եթէ մոլորեալներէն չէ:
57. Եւ ինչ է ձեր պաշտօնը նպատակը, ըսաւ, ո՛վ աւետարներ:
58. Անոնք պատասխանեցին, «մենք զրկուած ենք մեղապարտ ժողովուրդի մը, զայն ֆրիկու»:
59. «Բացի Ղովտի ընտանիքէն, զոր պիտի ազատենք»:
60. «Բացի անոր կնոջմէ, զոր մենք ետեւ ձրելու ուղեցինք»:
61. Երբ զրկուածները Ղովտի ընտանիքին քով եկան,
62. Սա անոնց ըսաւ, «դուք ինձ անձանթ էք»:
63. Այո՛, պատասխանեցին անոնք, և մենք կուգանք քու քովդ սա պարտաւորուն մասին կը կասկածին ու ուղեւորները:
64. Մենք ճշմարտութեամբ քու քովդ եկանք. մենք արդարներ ենք:

65. «Այս գիշերը քու ընտանիքովդ ել գնա, և դուրս ետեւէն քայլէ. և ձեզմէ մէկը ետեւը չը նստի: Քացէք ուր որ ձեզ հրամայուի»:
66. Եւ մենք այս հրամանը տուինք անոր, վասն զի այս ժողովուրդը պիտի բնաջնջուէր առաօտուն:
67. Քաղաքին ժողովուրդը ուրախացած եկան Ղովտին:
68. Նա անոնց ըսաւ, «ասոնք իմ հիւրերս են, զիս մի անպատուէք»:
69. «Վախցէք Աստուծմէ և ինձ մի ամչցնէք»:
70. Անոնք պատասխանեցին. «Ձե՛ որ մենք քեզ արգիլած ենք որ ոչ ոք չընդունիս»:
71. Ահա ասիկ իմ աղջիկներս, ըսաւ Ղովտ, եթէ պղծութիւն գործել կուզէք:
72. Քու կեանքովդ կերպնում որ անոնք իրենց մոլութեան մէջ յիմարացած էին:
73. Արևածագին փոթորիկը զանոնք յափըշտակեց:
74. Մենք այս քաղաքները հիմէն կործանեցինք և անոնց վրայ տեղացուցինք այրած աղիւմներ:
75. Ահա ասոր մէջ մարդոց համար նշաններ կան. զորս ուշադրութեամբ քննեն:
76. Այդ քաղաքները ճակատ վրայ են:
77. Ասոր մէջ նշան կայ հաւատացեալներուն համար:
78. Նաև էլքէլի բնակիչները չարեր էին:
79. Մենք անոնցմէ վրէժ լուծեցինք: Եւ ֆրիկեցինք այս երկու քաղաքները. ասոնք մարդոց աչքի զարնող օրինակներ են:
80. Եւ Հէճրի բնակիչներն ալ իրենց զրկուած մարգարէները խարերալ համարեցին:
81. Մենք անոնց ցոյց տուած էին քմեր նշանները քայց անոնք ետ կը քաշուէին անկէ:

82. Անոնք ապառաժներու մէջ տուներ կը փորէին, և հոն ապահով կը կարծէին:

83. Փոթորիկ մը զանոնք յանկարծակիի բերաւ առաւօտուն:

84. Անոնց աշխատութիւնը բանի մը չծառայեց:

85. Մենք ստեղծեցինք երկինքը ու երկիրը և անոնց մէջ եղածները միայն ճշմարտութեան համար ժամը պիտի հասնի: Գուն, ո՛վ Մահաէր, քալցրութեամբ ներէ:

86. Վասնզի քու Տէրդ է Արարիչը և Իմաստունը:

87. Մենք արդէն քեզ տուած ենք եօթը պատգամները. որոնք կրկնուելու են, նաև մեծ Գուրանը:

88. Գուն աչք մի անկեր այս ինչքերուն վրայ զորս վայելի կուտանք շատ մը անհաւատներու. և աստուծոյ մասին մի արամիր. և թեքող տարած է հաւատացեալներուն վրայ:

89. Եւ ըսէ անոնց, «ես աներկաբայելի խրատիչըն եմ»:

90. Հերձուածողները պիտի պատժենք,

91. Նոյնպէս ալ զանոնք որոնք Գուրանը մատմաս կը բաժեն:

92. Գու Տիրոջմով կ'երդնում որ զանոնք բոլորը պիտի հարցաքննենք,

93. Իրենց բոլոր գործերու մասին:

94. Անոնց ճանչցուր ինչ որ քեզ հրամայուած է. և հետո կեցիր կուպաշտներէն:

95. Մենք քեզ կը պաշտպանենք ծաղրողներէն:

96. Որոնք Աստուծոյ քով ուրիշ աստուածներ կը դնեն: Անոնք ճշմարտութիւնը պիտի հասկնան:

97. Գիտենք որ քու սիրտդ կը նեղուի երբ կը լսես անոնց ըսածները:

98. Բայց դու գովարանութեամբ որնէ քու Տէրդ և երկրպագողներուն նետ եղիր:

99. Պաշտէ Տէրը որոշեալ պարտէ՞ր, Գասնելէ առաջ:



ՉԶ. Գ Լ Ո Ի Խ

(ՍՈՒՐԷ ՆԱՀԼ)

Մէքէական, հարիւր քան և ուրը պատգամ

Յանուն Աստուծոյ գթածի ողորմածի

1. Աստուծոյ վճիռները պիտի կատարուին. դուք զանոնք սի փութացնէք: Փառաւորեալ է նա և շատ բարձր այն շատուածներէն զորս անոր կ'ընկերացրեն:

2. Իր հաճութեամբը կիջեցնէ հրեշտակները Ս. Հոգիին նետ իր ծառաներէն ու զածին վրայ: Նա անոնց կըսէ. «զեկուցէ՛ք մարդոց թէ ինձմէ զուտ ուրիշ Աստուած չկայ. վախցէ՛ք ինձմէ»:

3. Նա ստեղծած է երկինքը ու երկիրը ճշմարտութեան համար. նա շատ բարձր է աստուածներէն, զորս իրեն կ'ընկերացնեն:

4. Նա ստեղծած է մարդը կաթիլ մը սերմէ. և ահա մարդը կը հակառակի յայտնօրէն:

5. Նա երկրի վրայ կենդանիներ ստեղծած է. դուք անոնցմէ ձեզի հազուատ և ուրիշ օգուտներ ունիք. նաև հուտէք անոնցմէ,

6. Երբ զանոնք իրիկունը տուն կը բերէք և աստուն դուրս կը քշէք արածելու համար, հաճոյք մըն է ձեզ.

7. Անոնք ձեր բեռերը կը կրեն զէպի հեռու երկիրներ ուր դուք գտուարաւ պիտի հասնէիք առանց անոնց: Արդարեւ ձեր Տէրը բարեգութեամբ և ողորմած է:

8. Նա ձեզ տուած է ձիեր, ջորիներ և էշեր հեծնելու և զարդի համար: Եւ բաներ ստեղծած է որ դուք չէք գիտեր:

9. Ըամբուն ուղղութիւնը նա կուտայ, կան որ անկէ կը հեռանան: Եթէ նա ուզէ՞ ձեզ բոլորդ ինք կառայնորդէր,

10. Նա է որ երկիրքէն կ'իջեցնէ ջուր որ ձեր պէտքին կը ծառայէ, և կ'աճեցնէ տունկերը որոնցմով կը սնուցանէք ձեր հօտերը:

11. Նա ջուրերու միջոցաւ կը բուսցնէ ցորենը, ձիթենին, արծաւենին, այգին և ամեն տեսակ սրբաբույսեր: Անա առանց մէջ նշաններ կան խորհրդածողներու համար:

12. Նա ձեզ նազանդեցուց գիշերը ու ցերեկը, արեւ ու լուսինը և աստղերը որոնք անոր հրամանովը հպատակած են: Անա ասոր մէջ նշաններ կայ իմաստուններուն համար:

13. Նա ամեն բան երկրի վրայ ստեղծեր է այլևայլ գոյներով ձեզ համար: Ասոր մէջ նշաններ կան խորհողներուն համար:

14. Նա է որ ձեզ արամազրելի ըրաւ ծովը դուք անկէ թարմ միս կուտէք, անկէ զարդեր կը հանէք ձեզի: Դուք կը տեսնէք նաւուն ալիքները ձեզ գլխի: Ինդրելու համար Աստուծոյ իր բարութեան գանձերը: Կարելի է երսիտագէտ ըլլաք:

15. Նա երկրի վրայ բարձր լեռներ հաստատեց. որ ձեր հետ հաստատ ըլլայ. նա գծեց դետերը և ճամբաները, որ առաջնորդուիք յէր քնացին մէջ:

16. Նա նշաններ գրած է ճամբաներուն. եւ մարգիկ աստղերն ալ կառայնորդուին:

17. Միթէ ստեղծողը՝ ոչինչ չստեղծողին կը նմանի: Զէք խորհիր:

18. Եւ եթէ ուզէք Աստուծոյ բարեքները հաշուել ըսէ՛, միթէ կարող էք զանոնք համբել: Աստուած ներող և ողորմած է:

19. Աստուած գիտէ թէ՛ ձեր ծածկածը և թէ յայտնածը՝

20. Այն աստուածները որոնց կաղօթեն անոնք, չեն կարող ոչինչ ստեղծել. այլ իրենք ստեղծուած են:

21. Մեռածներ են, կեանքէ զուրկ, և չեն իմանար երբէք,

22. Թէ ինչպէս յարութիւն պիտի առնեն:

23. Ձեր Աստուածը միակ Աստուածն է. անոնք որ չեն նաւատար ապագայ կեանքին, ուրացող սրբաւեր ունին և ամբարտաւաններ են:

24. Անշուշտ գետէ Աստուած թէ անոնք ինչ կը ծածկեն և ինչ կը յայտնեն:

25. Նա չսիրեր հպարտնորդ:

26. Երբ անոնց կը հարցուի թէ Աստուած ձեզ ի՞նչ գրկած է բարձրէն. կ'ըսեն, Հիներուն պատմութիւնները»:

27. Անոնք պիտի կրեն յարութեան օրը թէ՛ իրենց գործերուն բեռները և թէ տգիտութեամբ իրենց մոլորեցուցածներուն բեռները: Ի՞րքան անտանելի է անոնց բեռը:

88. Անոնց նախորդներն ալ նենգութիւն գործեցին: Աստուած քանզեց հիմէն անոնց չէնքը, և տանիքը անոնց գլուխներուն վրայ ինկաւ, և պատիժը վրայ հասաւ անոնց չսպասած կողմէն:

29. Յարութեան օրը զանոնք ամօթահար պիտի ընէ, և անոնց պիտի հարցնէ, յ՞ուր են ուրեմն իմ այն ընկերները որոնց համար դուք կը կուտէիք: Եւ

Քրիստոթիւնը ընդունողները պիտի ազազակեն. Այսօր ամօթը և պատուհասը կը հասնին անհաւատներուն վրայ»

30. Որոնք որ իրենց անձերուն զէմ անիրաւութիւն կընէին ու շրեշտակներէն մեռցուեցան, անոնք հպատակելով պիտի ըսեն. «մենք գէշ բան մը չենք ըրած»: Այո՛, Աստուած լաւ զրաէ թէ դուք ինչ էք ըրած», պէտէ ըսեն հրեշտակները.

31. «Մտէք Քեհէնի գոտերէն ներս, ուր պիտի մընաք յաւիտեան»: Ինչ գէշ է ամբարտաւաններու կաշարանը:

32. Երբ երկիւղածներուն հարցուի թէ ի՞նչ իջեցուցած է ձեր Տէրը, պիտի ըսեն, «նա իջեցուցած է ամեն տեսակ բարիք այս աշխարհի մէջ անոնց որոնք բարեգործութիւն ըրած են, բայց հանդերձեալ կեանքի մէջ անկէ ալ աւելին կայ: Ինչ գեղեցիկ է բարեպաշտներուն տեղը.

33. Եղեմի դրախտները պիտի մտնեն անոնք ուր գիտակներ կը հոսին, և անոնք ինչ որ փափաքին հոն պիտի գտնեն: Անա այսպէս կը վարձատրէ Աստուած իրմէ վախցողները:

34. Անոնց՝ զորս հրեշտակները մեռուցած են իրրեբարիներ, պիտի ըսեն, «խաղաղութիւն ըլլայ ձեր վրայ, մտէ՛ք դրախտին մէջ ի վարձ ձեր զործերուն»:

35. Անհաւատները միթէ կ'սպասե՞ն որ հրեշտակները դան կամ Աստուծոյ վճիռները կատարուին: Այսպէս վարուած են անոնց նախորդները: Անոնք ոչ թէ Աստուծոյ չարիք ըրած են, այլ իրենց անձերուն:

36. Եւ իրենց գործած չարիքը իրենց վրայ ինկաւ և իրենց ծաղրանքին առարկայ եղող պատուաւ պաշարեց զիրենք ամեն կողմէ:

37. Աստուծոյ ընկեր առողները կըսեն «եթէ Աստուած ուզէր, մենք և մեր հայրերը անկէ զատ բան մը չէինք պաշտեր և առանց անոր բան մը չէինք արգիլեր: Անոնցմէ առաջ եղողներն «լ այնպէս ըրին: Մարգարէներուն պարտքը միայն խրատել է:

38. Մենք իւրաքանչիւր ազգի համար մէկ մարգարէ զրկած ենք, ըսելով, թէ զԱստուած պաշտեցէք և Թաղութէն (Արաբներուն մէկ կոտորել) զգուշացէք: Անոնցմէ ոմանք Աստուած առաջնորդեց, ոմանք ալ մոլորեցան: Ատեցէ՛ք աշխարհը և տեսէք թէ ինչպէս եղած է վախճանը անոնց որոնք մարգարէները խարհերանք համարեցին:

39. Եթէ զու անոնց առաջնորդուիլն ալ փափաքիս, գիտցիր որ Աստուած մոլորեալը չառաջնորդեք: Անոնք ոչ մէկ պաշտպան չեն ունենար:

40. Անոնք լանտն Աստուծոյ հանդիսաւորապէս կերդնուն, թէ անգամ մը մեռնողին Աստուած յարութիւն առնելի չտար: Այո՛, Աստուած իր ճշմարիտ խոստումը պիտի կատարէ. բայց մարդոց չատերը չեն գիտեր:

41. Նա զայն պիտի կատարէ, յստակօրէն անոնց ցոյց տալու համար իրենց վէճի առարկան, և որպէսզի անհաւատները հասկնան թէ կը ստէին:

42. Երբ մենք բան մը ուզենք որ ըլլայ, կ'ըսենք «եզիր» և այն կ'ըլլայ:

43. Մենք լաւ բնակարան պիտի տանք անոնց որոնք Աստուծոյ համար գաղթեցին իրենց երկրէն հարստանարուելով: Իսկ անոնց հանդերձեալ կեանքի վարձատրութիւնը ալ աւելի փառաւոր է: Ո՛հ եթէ գիտնային.

44. Նաև անոնց՝ որոնք համբերութեամբ կրեցին լաւութիւն և Աստուծոյ ապաւինեցան:

45. Մենք քեզմէ առաջ միայն մարդիկ զրկած է-

ինք և զանոնք ներշնչած էինք: Եթէ չէք գիտեր, հարցուցէք Գիրքի մարդոց:

46. Մենք զանոնք հրաշքներով և գիրքերով զըրկեցինք: Քեզ ալ զըրք մը սուրնք, որպէս զի բացարեւս մարդոց ինչ որ իրենց զրկուած է, որ խորհրդածեն:

47. Անոնք որ չարութիւն կը նիւթեն, միթէ ապահով են որ Աստուած զիրենք երկրին տակը չըպիտի անցսէ և կամ պատուհաս մը չպիտի բերէ իրենց վրայ չսպասուած տեղէն:

48. Կամ զիրենք յանկարծակիի չբերէ իրենց գաղտնի և եկած պահուն, յորում անոնք չկրնան զայն տկարացնել:

49. Կամ զանոնք չպատուհասէ աստիճանական աւերումով: Բայց Աստուած լի է բարութեամբ ողորմութեամբ:

50. Չն տեսներ Աստուծոյ ստեղծածներէն այնք ուր որ իր շուքը աջ ու ձախ կը խոնարհեցնէ, զայն պաշտելու և անոր առջև երկրպագելու համար:

51. Աստուծոյ առջև կերկրպագեն երկիրքի մէջ և երկրի վրայ բոլոր գանուղները կենդանիները ինչպէս հրեշտակները առանց հպարտութեան:

52. Ամենը կը վախնան իրենց բարձրագոյն արքայէ և կը կատարեն այն բոլոր որ նա իրենց կը հրամայէ:

53. Աստուած ըսած է, «երկու Աստուած մի պաշտէ՛ք», վասն զի նա է միայն միակ Աստուածը: Ուրեմն ինձմէ վախցէ՛ք:

54. Անոր կը պատկանին ինչ որ կը գտնուին երկրի մէջ և երկրի վրայ, և անորն է մշտական կրօնքը: Աստուծմէ զատ ուրիշէ մը կը վախնա՞ք:

55. Չեր վայելած բոլոր բարիքները Աստուծմէ կուգան: Երբ ձեզ չարիք մը պատահի, անոր է որ կուղղէք ձեր ապականքը:

56. Բայց ձեզ չարիքէն ազատածին պէս, ձեր մէկ մասը անմիջապէս իրենց Տիրոջ ընկերներ կուտան:

57. Որ ուրանան մեր իրենց ըրած բարիքը՝ վայելեցէ՛ք: Բայց շուտով պիտի հասկնաք ճշմարտութիւնը:

58. Եւ մեր իրենց տուած ին մէկ մասը կուտան անոնց որ բան չեն գիտեր: Կ'երգնում յանուն Աստուծոյ թէ ձեր յերիբած զըրպարտութեանց համար հաշիւ պիտի պահանջուի ձեզմէ:

59. Եւ Աստուծոյ աղջիկներ կը վերագրեն (\*): Քաւ լիցի, բայց ուզածնին իրենց կը վերապահեն:

60. Իսկ եթէ իրենցմէ մէկին աղջիկան մը ծնիլը իմացնեն, երեսը կը սեւնայ եւ ինքը կը արամի:

61. Այս գէշ լուրին համար իր երեսը կը պահէ իրեններէն, թէ արդեօք զայն պահէ՞, կամ թողնէ՞ հողին մէջ: Ո՛րքան անիրաւ է իրենց դատողութիւնը:

62. Հանդերձեալ կեանքին չհաւատացողներուն օրինակը անտանելի է. իսկ Աստուծոյ օրինակը բարձր է: Նա իմաստուն եւ հզօր է:

63. Եթէ Աստուած մարդիկը իրենց անիրաւութեանցը համեմատ պատժել ուզէ, երկրի վրայ կ'ինչանան արարած մը չէր ձգեր. բայց անոնց պայմանաժամ կուտայ որոշ ատեն մը: Երբ պայմանաժամը հասնի, չեն կրնար ոչ յապաղեցնել եւ ոչ փութացնել վայրկեան մը իսկ:

64. Իրենց զգուած բանը Աստուծոյ կուտան. իրենց յեղունակը սուտ կը խօսին, երբ ըսեն թէ լատ

(\*) Կուտալար Արքայէրը Աստուծոյ աղջիկները կը համարէին հրեշտակները:

վարձատրութիւն մը իրենց վերապահուած է: Ճշմարտութիւնը սա է որ իրենց վերապահուածը կըրակն է: Առաջին հոն նետուողները անոնք պիտի ըլլան:

65. Վկայ Աստուած, որ մենք քեզմէ առաջ մարգարէներ զրկեցինք զանազան ժողովուրդներու: Բայց սատանան պատրաստեր էր անոնց գործերը. և նա է այսօր անոնց պաշտպանը. բայց դառն տանջանք մը կ'սպասէ անոնց:

66. Մենք գիրքը քեզ իյեցուցինք, միայն անոր համար որ բացատրես անոնց վիճաբանութեանց առարկան. որպէսզի հաւատացեալներուն առաջնորդութիւն եւ ողորմութիւն ըլլայ այն:

67. Աստուած երկինքէն ջուր կը զրկէ. որով կը վերակենդանացնէ երկիրը երբ սա մեռած է: Լսողներուն համար ասոր մէջ նշան կայ:

68. Կենդանիներու մէջ ալ ձեզի համար կրթիչ նշաններ պիտի գտնէք: Մենք քեզ կը խմցնենք այն որ ազիքներու մէջ սնունդի եւ արեան միջեւ պատրաստուած է. այն զուտ կաթն մաքուր եւ այնչափ քաղցր ըմպելու համար:

69. Պտուղներու մէջէն ունիք արմաւենին եւ այգին. որոնցմէ ոգիլից ըմպելի եւ հաճելի սնունդ մը կ'առնէք: Ասոր մէջ ալ նշաններ կան հասկցողներուն:

70. Քու Տէրդ յայտնութիւն տուաւ մեզուին, թէ լեռներուն, ծառերուն եւ մարդոց շէնքերուն մէջ տուն չինէ:

71. Սնունդ առ ամէն պտուղներէ եւ ճամբորդէքու Տիրոջ ճամբաներէն: Անոնց փորերէն այլազան ըմպելիներ դուրս կելլեն. որոնք օգտակար են մարդոց: Ահա ասոր մէջ նշաններ կան խորհողներու համար:

72. Աստուած ձեզ ստեղծած է եւ իրեն կը տանի. ձեզմէ որը խոր ծերութեան զը հասցնէ, իր զիտցածները յիշելու: Աստուած իմաստուն եւ հզօր է:

73. Աստուած իր պարզեւններ բաժնելուն մէջ ումանք ոմանցմէ աւելի նպաստուորած է: Բայց նրպաստաւորեալները բաժին չեն հաներ այն բարիքներէն իրենց գերիներուն, այնպէս որ ամենը անկէ հաւասար բաժին ունենան: Կուրանա՞ն Աստուծոյ բարիքները:

74. Աստուած ձեզ կիներ է ընտրեր ձեր ցեղէն: Ձեր կիներէն նա ձեզ կուտայ որդիներ եւ թոսներ եւ ձեզ կը կիրակրէ բարիքներով: Արդ, անոնք սուսաստուածներօ՞ւ պիտի հաւատան եւ ապերա՞խտ պիտի գտնուին Աստուծոյ բարիքներուն հանդէպ:

75. Անոնք Աստուծմէ զատ ուրիշներ պիտի պաշտեն. որոնք չեն կրնար ոչ երկինքէն եւ ոչ երկրէն սնունդ հայթայթել եւ ոչինչ ընել:

76. Ձեր բաղգատութեանց ատարկայ մի ընէք զԱստուած: Աստուած ամենը գիտէ. դուք ոչինք գիտէք:

77. Աստուած ձեզ օրինակ կուտայ գերի մարդ մը որ ոչինչ չունի. եւ ուրիշ մարդ մը՝ զօր ամեն տեսակ ազրուստով հարստացուցած ենք: Եւ որ անոր մէկ մասը ողորմութիւն կուտայ յայտնապէս ու ծածուկ. այս երկու մարդիկը հաւասար են: Ոչ վկայ Աստուած, բայց շատերը չեն գիտեր:

78. Աստուած ձեզի երկու մարդ եւս օրինակ կը բերէ, որոնցմէ մին համար է իծնէ, ու չլսե՞ր ոչինչ. եւ ո՞ր թն մըն է իր տիրոջը, զանի երբ տեղ մը զրկէ բարիք չ'երկր, Միթէ ասանկ մարդ մը հաւասար է այն մարդուն որ արդարութիւն կը հրամայէ եւ ուղիղ ճամբէն կընթանայ:

79. Երկնից եւ երկրի զազանիքը Աստուծոյ կը

պատկանի և ժամի գործը ակնթարթ մըն է, կամ աւելի մօտ է. վասնզի Աստուած ամենակարող է:

80. Աստուած ձեզ կը հանէ ձեր մայրերու արգանդներէն, զուրկ ամեն գիտելիքէ. յետոյ ձեզ կուտայ լսողութիւն, տեսողութիւն մտայնութիւն, որպէսզի երախտագէտ ըլլաք:

81. Չէ՞ք նայիր թոչուեններուն, որ ազատ կը թռչին երկնից անջրպետին մէջ: Ո՞վ է անոնց վըրայ հսկողը, եթէ ոչ Աստուած: Արդարեւ ասոր մէջ նշաններ կան հասկնալ գիտցողներուն համար:

82. Աստուած ձեզ վրաններ կուտայ բնակութեան համար. կենդանիներու կաշիներէն ձեզի վրաններ է շինած, որ գիւրութիւն ունենաք, երբ կը չուէք կամ երբ կ'իջեանիք, եւ թէ անոնց բուրբէն եւ մազերէն հաղուստներ եւ սիտոցներ՝ առժամանակ գործածութեան համար:

83. Եւ Աստուած իր ստեղծած առարկաներէն ձեզ պատրաստած է հովանիներ, նա լիտները ձեզ տուած է ապաստանութեան համար եւ հագուստներ սրունց մով տաքին դէմ կը պաշտպանուիք, ինչպէս նաեւ կռուի հարուածներուն զէմ: Ահա այսպէս նա ձեզ լիցուցուցեր է բարիքով որպէսզի իր կամքին հպատակիք:

84. Եթէ Արարնները երես դարձնեն, քու պարտքը միայն որոշապէս առաջարկել է անոնց:

85. Անոնք կը ճանչնան Աստուծոյ բարիքները եւ յետոյ կուբանան: Անոնցմէ շատերը անհատաւ են:

86. Սը մը մենք ամեն մէկ ազգի համար վկայ մը պիտի յարուցանենք. այն ատեն անհաւատներուն միջոց չպիտի տրուի ինքնարգարացումի. եւ անոնք երբէք չպիտի ընդունուին:

87. Այն ատեն շարերը իրենց աչքերով պիտի տեսնեն պատիժը որ չպիտի մեղմանայ: Աստուած չը-

պիտի հաճի ակնարկ մը իսկ նետել անոնց վրայ:

88. Կապաշտները պիտի նշմարեն իրենց շինած շատուածները ու պիտի ըսեն, «Ո՞վ Տէր, ահա ասոնք մեր աստուածներն էին, զորս կը պաշտէինք, ինչպէս Քեզ»: Իսկ անոնք անոնց պիտի ըսեն. «Դուք միայն խաբեբաներ էք»:

89. Այդ օրը կապաշտները Աստուծոյ պիտի հըպատակին, և իրենց շինած աստուածները պիտի անհետանան:

90. Մենք պատիժ պատժի վրայ պիտի տանք անոնց իփոխարէն իրենց չարութեան և անոնց որոնք բնաւ չեն հաւատացած և որոնք ուրիշները դարձուցած են ուղիւ ճամբէն:

91. Սը մը պիտի յարուցանենք իւրաքանչիւր ժողովուրդի ծոցէն իր դէմ վկայ մը. և քեզ ալ, «ՎՄահա՛ւէր, ասոնց (Աբաբելերուն) դէմ վկայ պիտի բերենք. վասնզի քեզի տունք գիրք մը որ կը պարունակէ ամեն բանի բացատրութիւնը և որ մեր ողորմածութեան ապացոյցն է և առաջնորդութիւն և աւետիս միւսյիմներուն (Աստուծոյ) հանդէն հպարտիւն»:

92. Աստուած կը հրամայէ արգարութիւն և բարեգործութիւն և տալ ազգականներուն, և կ'արգիլէ պղծութիւնը, ապականութիւնը և անարդարութիւնը. նա ձեզ զեկոյց որպէսզի մտածէք:

93. Հաւատարիմ եղէք ձեր Աստուծոյ ըրած ուխտին. դուք մի գրժէք ձեր հանդիսաւոր երգումը. վասն զի Աստուած ձեզ երախտաւոր էք տուեր, և նա գիտէ թէ դուք ինչ կ'ընէք:

94. Մի նմանի՛ք այն կնոջը՝ որ լաւ մանած թելը կ'աւրէ. և դուք խաբելու միջոց մի ընէք ձեր երգումները՝ երբ կը տեսնէք որ ձեր միջեւ մէկ ցեղը միւսէն աւելի բազմաթիւ է: Աստուած ասով

կը փորձէ ձեզ . բայց յարութեան օրը նա ձեզ պիտի բացատրէ վէճին առարկան :

95. Եթէ Աստուած կամենար . ձեզ մէկ ժողովուրդ կրնէր բայց նա իր ուղածը կը մօլորեցսէ և ուզածը կառաջնորդէ օր մը նա պիտի պահանջէ ձեր գործերուն հաշիւը .

96. Գուք երգումը զիրար խաբելու միջոց մ'ընէք որ հաստատ ոտքը սահի և դուք պատժուիք Աստուծոյ ճամբէն շեղելուդ համար : Մեծ պատիժ մը կը վերապահուի ձեզ :

97. Առարկայ մը Աստուծոյ ուխտովը գինէն աժան մը գնէ՛ք : Աստուծոյ վերապահածը ձեզ աւելի օգտակար պիտի ըլլայ . եթէ խելացի էք :

98. Ձեր ունեցածը կը կորսուի . և Աստուծոյ քով եղածը կմ ֆնայ : Մենք վարձքը պիտի տանք համբերողներուն ըստ իրենց գործերուն :

99. Ով որ բարի գործ մ'ընէ . այր ըլլալ թէ կին . և հաւատացեալ ըլլայ . անոր երջանիկ կեանք մը պիտի շնորհենք և իր գործերուն արժանի լուսագոյն վաճառութիւնը պիտի ընենք :

100. Երբ Գուրանը կը կարգաս . ապաստան խընքէ Աստուծմէ անիծեալ սատանային դէմ :

101. Սատանան բնաւ իշխանութիւն չունի անոնց վրայ որոնք կը հաւատան ու կապուինին Աստուծոյ :

102. Անոր իշխանութիւնը անոնց վրայ է որոնք կը հեռանան Աստուծմէ և անոր ընկերներ կուտան :

103. Երբ մենք Գուրանին մէջ պատգամ մը կը փոխենք ուրիշով մը (Աստուած լաւ գիտէ թէ ինչ է իջեցուցած) . կրտսն . թէ դուն քեզմէ կը յօրինես Բայց անոնցմէ շատերը ոչինչ չեն գիտեր :

104. Ըսէ՛ անոնց . «քու Տիրոջմէդ Սուրբ Հոգին ճշմարտապէս քեզ բերուած է հաւատացեալները .

հաստատելու համար . և զանոնք առաջնորդելու և միւսիւլումաները աւետելու համար :

105. Մենք լաւ գիտենք . որ կրտսն . «մարդ մը անոր կը սօվրեցնէր» : Այն մարդը՝ զոր կ'ակնարկեն օտարացեղ է . մինչդեռ Գուրանը զօտ արարեբէն է :

106. Արդարեւ Աստուած չարաջնորդեր բնաւ իր նշաններուն չհաւատացողները . անոնց սատարիկ պատիժ մը վերապահուած է :

107. Որոնք՝ որ չեն հաւատար Աստուծոյ նշաններուն . սուտեր կը հնարեն . անոնք խաբերաներ են :

108. Ով որ հաւատալէ յետոյ անհաւատ կը դառնայ . եթէ ստիպման տակ է . և եթէ իր սիրտը հաստատ է հաւատքին մէջ . քնն յանցաւոր չէ . բայց Աստուծոյ բարկութիւնը պիտի ծանրանայ անոր վրայ որ սրտով անհաւատ կը դառնայ . և ստակալի պատիժ մը անոր կ'սպասէ :

109. Եւ այս անոր համար որ անհաւատները նախաձեռն համարած են այս աշխարհի կեանքը հանդերձեալինէն : Աստուած բնաւ չառաջնորդեր անհաւատները :

110. Աստուած կնիք դրած է անոնց սրտին . անոնց աչքերուն և ականջներուն վրայ : Եւ անոնք ազգէտներն . և անոնք անպատճառ թշուառները պիտի ըլլան միւս աշխարհին :

111. Բայց Աստուած ներող և ողորմած է անոնց համար . որոնք հալածանքներ կրելէ յետոյ գաղթած են իրենց երկրէն . որոնք յետոյ պատերազմեր են Աստուծոյ համար և համբերեր են :

112. Օր մը պետի գայ ուր ամեն հօգի ինք իրմէ պիտի գանգատի և յորում իւրաքանչիւրը իր գործերուն հատուցումը պիտի ստանայ . առանց անիրաւութեան :

113. Աստուած ձեզ օրինակ կուտայ քայաք մը

որ ապահովութիւն և անդորրութիւն կը վայելէր։ Աստուած անոր տուած էր առատ անունդ, բայց այն ապերախտ զտնուեցաւ Աստուծոյ բարիքներուն չանդէպ, և Նա զայն մատնեց սովի և սարսափի ի փոխարէն անոր բնակիչներու գործերուն։

114. Մարգարէ մը ելաւ անոնց մէջէն, և անոնք զանի ստախօս համարեցին, և պատիժը հասաւ անոնց որովհետեւ անիրաւներ էին։

115. Աստուծոյ պարգեւած անունները կերէք, իբրև մաքուր ու ընտիր, և երախտագէտ եղէք Աստուծոյ բարիքներուն համար, եթէ զԱնի կը պաշտէք։

116. Նա ձեզ արգելած է ուտել մեռեալ կենդանիներու միսը, արիւնը և խոզի միսը, ինչպէս նաև ամեն անունդ որուն վրայ Աստուծմէ զատ ուրիշի անունը յիշուած է բայց եթէ մէկը ստիպեալ ուտէ և ակամայ, Աստուած ներող ողորմած է։

117. Ըստ ձեր լեզուի սուտերուն երբէք մի՛ ըսէք թէ «սա մաքուր է և սա անմաքուր է», որով Աստուած զրպարտած պիտի ըլլայիք. վասնզի որոնք որ Աստուծոյ սուտ մը կը վերապրեն երբէք երջանիկ չեն ըլլար։

118. Սա կարճ վայելք մըն է, մինչդեռ անոնց պատիժը դառն պիտի ըլլայ։

119. Հրեաներուն արգելած էինք այն կերակուրները՝ որոնք մասին քեզ կանխու պատմած ենք, մենք անոնց նեո բնաւ անիրաւօրէն չենք վարուած անոնք են որ անիրաւաբար շարժած են իրենց անձին չանդէպ։

120. Անոնց համար՝ որոնք տգիտութեամբ շարութիւն մ'ըրած են և լիտոյ ապաշխարած և ուղղուած են, Աստուած ներող և ողորմած է։

121. Արբանամ Աստուծոյ ննազանդ և ճշմարիտ

հաւատացեալ մարդ մըն էր. ան կոտապաշտներէն չէր բնաւ։

122. Նա երախտագէտ էր իրեն ելած բարիքներու համար, Աստուած զանի ընտրած և առաջնորդած էր ուղիղ ճամբուն մէջ։

123. Մենք անոր շնորհեցինք զեղեցիկ վարձք մը այս աշխարհի մէջ, և միւս աշխարհի մէջ ալ արդարներէն պիտի ըլլայ։

124. Մենք քեզ յայտնութիւն տուինք որ Արբանամի կրօնքին հետեւիս, որ ճշմարիտ հաւատացեալ էր, և երբէք կռապաշտներէն չէր։

125. Շարաթը անոնց պատուիրուեցաւ որոնք անոր մասին անհամաձայն էին։ Արդարև Աստուած լաութեան օրը պիտի զատէ անոնց միջև եղած վէճը։

126. Հրաւիրէ զանոնք Աստուծոյ ճամբուն իմաստութեամբ և քաղցր խրատներով եթէ անոնց նեո վիճարանութեան բռնուիս. ամենապարկեշտ կերպով վիճէ, վասն զի Աստուած լաւազոյնսգիտէ թէ որոնք իր ճամբէն կը մոլորին և որոնք կը հեռին ուղիղ ճամբուն։

127. Եթէ վրէժ կը լուծէք, ձեր կրած վնասին չափ ճնշեցէք. իսկ եթէ համբերէք, աւելի լաւ համբերողին։

128. Ուրեմն համբերէ՛, բայց քու համբերութիւնդ միայն Աստուծով կըլլայ։ Դու մի տրտմիր անոնց մասին. քու սիրտդ թող չի նեղուի անոնց մեքենայութեանց պատճառաւ, վասն զի Աստուած երկիւղածներուն և բարեգործներուն նեո է։



ժէ. Գ Լ Ո Ւ Խ

(ՍՈՒՐԵԹ-ԻՒԼ-ԱՍՐԱ) (\*)

Մէֆֆէական, հարիւր տասն եւ մէկ սլաւագամ

Յանուն Աստուծոյ գթածի եւ ողորմածի

1. Փառք անոր, որ զիչեր ատեն իր ծառան փոխադրեց Մէքքէի նուիրական տաճարէն Երուսաղէմայ հեռաւոր տաճարը, որուն չուրջը օրհնեցինք, անոր ցոյց տալու համար մեր հրաշքները Աստուած կը լսէ ու կը տեսնէ բոլորը:

2. Մենք Մովսէսին տունք Սրինագիբքը, և զայն ուղեցոյց մ'ըրինք Իսրայէլի որդւոց համար, թէ ինչձմէ զատ ուրիշ պաշտպան մը ընդունիք:

3. Ո՛վ նոյի հետ տապանին մէջ մեր ընդունած անձերուն սերունդը, նա ետախտագէտ ծառայ մըն էր:

4. Այս վճիռը Իսրայէլի որդւոց մենք իմացուցած էինք գիրքին միջոցաւ, թէ դուք երկու անգամ անիրաւութիւն պիտի գործէք երկրի վրայ, և չափազանց պիտի հպարտանաք:

5. Բայց երբ այն երկու սպառնալիքներէն առաջինին ժամը հասաւ, մենք ձեզի զրկեցինք մեր ծառաներէն, որոնք խիստ վարուեցան և խուզարկեցին ձեր տուներուն մէջը, և սպառնալիքը կատարուեցաւ:

6. Յետոյ ձեզի յազմել տունք անոնց և անցուցինք ձեր հարստութւնը և որդիները, և ձեզի բազմաթիւ ժողովուրդ մ'ըրինք:

7. Եւ թէ բարիք ընէք, ձեր անձին ըրած կըլլաք:

(\*) Գիւլեւայն համբարդութիւն

եթէ չարիք գործէք, նոյնպէս ձեր անձին վնասած կըլլաք: Երբ երկրորդ սպառնալիքին ժամանակը եկաւ, զրկեցինք Եւսաֆէնը որ ձեզ չարիք ընեն և տաճարը ժանկն, ինչպէս առաջին անգամը մտան, և քանդեն ամենը:

8. Թերեւ Աստուած ձեզ գթայ, եթէ դուք մեղքէն ետ դառնաք, մենք ալ պարճելէ ետ կը կենանք: Մենք զժոխքը անհաւատներու բանտ ըրած ենք:

9. Արդարեւ այս Գուբանը ամենաուղիղ ճամբայ կառաջնորդէ, և աւետիս կուտայ հաւատացեալներուն:

10. Որոնք որ բարի գործեր կընեն, անոնք փառաւոր վարձք պիտի ընդունին:

11. Եւ որոնք որ չեն հաւատար հանդերձեալ կրեանքին, մենք անոնց համար սոսկալի տանջանք պատրաստած ենք:

12. Մարդս կազմէ ինչպէս բարիք ստանալու համար. այնպէս ալ չարիքի համար, մարդիկ ի բնէ աճապարող են:

13. Մենք զիչերը ու ցերեկը երկու նշաններ ըրինք: Ձեզեցինք գեշերուան նշանը և տուինք գերեզմանը յայտնի, որ ձեր Տիրոջմէ բարիք խնդրէք որպէսզի հասկնաք տարիներու թիւը և համբանքը և ամեն բանի մէջ մենք կատարեալ բաժանում ըրած ենք:

14. Եւ ամեն մարդու վզին վրայ իր թուշուկ կցած ենք, յարութեան օրը անոր գիրք մը ցոյց պիտի տանք բացուած:

15. «Կարդա այս գիրքը, պէտէ լսես անոր. կը բաւէ որ դուն այսօր ինքզ ընես քու հաշիւդ»:

16. Ով որ ուղիղ ճամբուն մէջն է, իրեն հոգիին համար է. ով որ ալ մոյորած է, ի վնաս իրեն մուրումն է: Ծանր բեռնով բեռնաւորուած մը ուրիշի

բեռնովը չբեռնաւ որուիր: Մենք պատիժ տուած չենք առանց կանխաւ մարգարէ զրկած ըլլալու և զիստութի մը:

17. Երբ ուղեցինք քաղաք մը կործանել, նախ զրկեցինք մեր հրամանները քաղաքի մեծերուն, բայց անոնք չարագործութիւն ըրին: Վճիռը հուշակուեցաւ և մենք բնաջնջեցինք զայն:

18. Նոյէն յետոյ որչափ ողբեր բնաջնջ ըրեր ենք: Կը բաւէ որ քու Տէրդ կը տեսնէ ու զիտէ իր ծառաներուն մեղքերը:

19. Ով որ այս շուտով անցնող աշխարհը ցանկացած, է մենք անոր շուտով տուած ենք ինչ որ ուզած ենք, յետոյ պատրաստած ենք գեհներ, ուր նա պիտի այրի ամօթահար և զրկեալ:

20. Իսկ ով որ հանդերձեայ կեանքը կը ցանկայ, և որ կը ջանայ զայն ստանալ և որ նաև հաւատացեայ է, անոր ջանքերը հաճելի պիտի ըլլան Աստուծոյ:

21. Քու Տիրոջ պարգևէն ամենուն կուտանք թէ՛ ասոնց և թէ՛ անոնց, և քու Տիրոջ պարգևները չը պիտի խնայուին մէկու մը:

22. Տես ինչպէս մէկը միւսէն բարձր ըրած ենք: Քիչ ապագայ կեանքը աւելի բարձր աստիճաններ և աւելի գերազանցութիւն ունի:

23. Աստուծոյ քով ուրիշ աստուածներ մի գնէք. վասնզի ամօթահար և նուաստ կըլլաք:

24. Աստուած հրամայած է իրմէ զատ մէկը չպաշտել, հօր և մօր բարիք ընել, եթէ անոնցմէ մին կամ երկուքն ալ ծերանան ձեր քովը, զգուշացիր անոնց «ախ» ըսել տայէ զանոնք պարսաւելէ. անոնց հետ յարգանքով խօսէ՛:

25. Անոնց հանդէպ խոնարհ և գորովայից եղիր, և սա աղօթքը ուղղէ Աստուծոյ. «Տէ՛ք, գի՛տ՛ ասոնց ինչպէս անոնք իմ պզտիկ ատենս զիս սնուցած են»:

26. Աստուած ամենէ լաւ գիտէ ձեր սրտերու խորը նա գիտէ եթէ դուք արդար էք:

27. Նա ներող է անոնց որոնք անոր կը վերադառնան:

28. Աղգականիդ և աղքատին ու ճանապարհորդին իրաւունքը վճարէ, և երբէք չուայլ մի՛ ըլլար:

29. Շուայիները սատանային եզրայրներն են: Սատանան ապերախ գտնուեցաւ իւր Տիրոջ:

30. Եթէ դու անոնցմէ երես կը դարձնես, քու Տիրոջմէ ողորմութիւն խնդրելով ու յուսալով, գէթ անոնց հետ քաղցրութեամբ խօսէ:

31. Ոչ ձեռքդ վզիդ կապէ և ոչ ալ զայն բոլորովին բաց (ոչ հօտէ և ոչ չուայլ), վասնալով որ չը պտրսաւուրիս կամ չաղքատանաս:

32. Աստուած երբեմն ատատածեռնութեամբ կուտայ իր պարգևները ուզածին և երբեմն կը նուազեցընէ: Նա տեղեակ է իր ծառաներու վիճակին և կը տեսնէ զանոնք:

33. Աղքատութեան վախով մի սպաննէք երբէք ձեր զաւակները, մենք անոնց սնունդը պիտի տանք ինչպէս և ձերը, որովհետև զանոնք սպաննելը ծանր մեղք է:

34. Զգուշացէ՛ք շնութեանէ. վասնզի ալդ խայտառակութիւն և գէշ ճամբայ մըն է:

35. Եւ ոչ մէկ մարդ մի սպաննէք, վասնզի Աստուած զայն արդիւամ է ձեզ, ի բաց առեալ արդարացի պատճառ մը, իսկ երբ մէկը անարդարութեամբ սպանուի, մենք անոր ազգականին իրաւունք կուտանք վրիժառութեան՝ բայց սա չափազանցութիւն չընէ յայնմ. վասնզի անոր օգնութիւն եւ զած է:

36. Մի դպչիք որբի ինչքին, եթէ ոչ օրինաւոր կերպով, մինչև որ ան որոշեալ տարիքին հասնի:

Ձեր պայմանները կատարեցէք, վասզի պայմանա-  
դրութեան հաշիւը պիտի պահանջուի:

37. Երբ չափէք, յիշան չափեցէք: Ուղիղ կշիռով  
կշռեցէք: Այս աւելի կարժէ, և վերջի արդիւնքովը  
աւելի լաւ է:

38. Չգիտցածիդ մասին մի պնդեր: Վասնզի ա-  
կանջ, աչք և սիրտ, ասոնց բոլորէն ալ հաշիւ պիտի  
ուզուի:

39. Երկրի վրայ հպարտութեամբ մի պտտիր դու  
չես կրնար ոչ երկիրը ճեղքել և ոչ ալ լեռներուն  
բարձրութեանը հաւասարիլ:

40. Այս բոլորը Աստուծոյ առջև գէշ և զգուե-  
լի են:

41. Ահա ինչ որ Աստուած քեզ յայտնած է իմաս-  
տութեամբ: Եւ դու Աստուծոյ հետ ուրիշ աստուած-  
ներ մի գնիր, վասնզի նախատուած ու անարգուած  
դժոխք կը նետուիս:

42. Միթէ ի Տէրը ձեզի իրեն որդիներ ընտրած  
և հրեշտակներն ալ իբրև աղջիկներ առած է, Գուք  
այդ ըսելով զարհուրելի խօսք մը կընէք:

43. Մենք այս Գուրանով դասեր տուինք, որպէս-  
զի մարդիկ մտածեն, բայց սա ձեզ աւելի հեռա-  
ցուց:

44. Ըսէ՛ անոնց, «եթէ Աստուծոյ հետ ուրիշ աս-  
տուածները ըլլայ, ինչպէս կըսէք, այդ Աստուածները  
պիտի ջանային գահը բարձրանալու ճամբայ գտնել:

45. Փառք Աստուծոյ, նա բարձրացեալ է անուն  
բարձրութիւնով, վեր հայնուցութենէ:

46. Եթէր երկինքները և անոնց մէջ բոլոր եղած-  
ները, նաև երկիրը իր գովասանքը կը հռչակեն:  
Ինչ մը չկայ որ անոր գովասանքը չընէ, բայց  
դուք չէք հասկնար անոնց օրհներգութիւնները: Աս-  
տուած հեզ և շերտ է:

47. Երբ դու Գուրանը կը կարդաս, մենք վարա-  
գոյր կը քաշենք քու և հանդերձեալ կեանքին չը-  
հաւատացնողներուն միջև:

48. Մենք անոնց սրտերուն վրայ կափարիչ գրինք  
որ չհասկնան, և ծանրութիւն գրինք անոնց ականջ-  
ներուն մէջ:

49. Երբ դու Գուրանին մէջ Աստուծոյ անունը կը  
յիշես, անոնք կանակնին կը դարձնեն զգուանքով:

50. Մենք յաւ գիտենք որ անհաւատները ինչ նը-  
պատակաւ քեզ կը յսեն, երբ իրարու ականջէ կը  
խօսին չարերը կըսեն, «դուք կախարդուած մարդու-  
մը կը հետևիք:

51. Տես թէ քեզ ինչու կը նմանցնեն, բայց ա-  
նոնք մոլորութեան մէջ են, և չպիտի կրնան ճամ-  
բան գտնել:

52. Անոնք կը հարցնեն, «երբ մենք ոսկոր և հող  
դառնանք, նոր կազմով մը յարութիւն պիտի ա-  
նենք»:

53. Անոնց ըսէ՛, «նոյն իսկ եթէ քար կամ երկաթ  
ալ ըլլաք կամ ուրիշ բան մը որ աւելի պինդ կը  
կարծէք»: Անոնք պիտի ըսեն, «ո՛վ մեզ պիտի ողջն-  
ցունէ»: Ըսէ՛, «այն որ ձեզ ստեղծած է առաջին  
անգամ»: Այն ատեն անոնք գլուխնին շարժելով,  
պիտի հարցնեն թէ ե՞րբ պիտի ըլլայ այդ: Ըսէ՛,  
«կարելի է որ շուտով ըլլայ»:

54. Այն օրը Աստուած ձեզ կը կոչէ և դուք անոր  
կը պատասխանէք օրհներգութեամբ: ձեզ կը թուի  
թէ քիչ մը ժամանակ միայն մնացած էք հոն:

55. Եւ ըսէ իմ ծառաներուս որ քաղցրութեամբ  
խօսին. Սատանան անոնց մէջ անհամաձայնութիւն  
կրնայ սերմանել: Սատանան յայտնի թշնամին է  
մարդուն:

56. Ձեր Տէրը ձեզ կը ճանչնայ, եթէ կամր, ձեզ

կողորմի- եթէ ուզէ քեզ կը պատժէ: Մենք քեզի՞ չզրկեցինք անոնց պաշտպանութեան համար»

57. Քու Տէրդ լաւ գիտէ երկինքը ու երկրի վըրայ եղողները: Մենք մարգարէները իրարմէ գերադասած ենք, և Դաւիթին տունք Մաղձոսը:

58. Ըսէ՛, ձեզ օգնութեան կանչեցէք զանոնք, որոնք կ'երեւակայէք թէ աստուածներ են Անկէ զատ, անոնք չեն կրնար ձեզ չարիքէ մը ազատել ոչ ալ զայն փոխել:»

59. Ձեր աղօթածները կը բուրձան հասնի՞ մինչև իրենց Տիրոջ թէ որը աւելի մօտ է, և կ'սպասեն անոր ողորմութեանը և կը վախնան անոր պատիժէն, վասն զի քու Տիրոջդ պատիժը սոսկալի է:

60. Քաղաք մը չկայ որ յարութեան օ էն առաջ ընաչինջ չընենք կամ սոստկապէս չպատժենք: Այս գրուած է արդէն գիրքին մէջ:

61. Բան մը մեզ չէր արգիլեր որ քեզ հրաշքներով զրկենք, եթէ ժողովուրդները սուտ հարձարած չըլլային նախորդները: Սակայն մենք Սամուտցիներուն տունք յայտնօրէն այն ուղարկ. բայց անոնք անիրաւութիւն ըրին անոր: Մենք հրաշքով մարգարէներ չենք զրկեր, բայց միայն վախցնելու համար:

62. Յիշէ որ մենք ըսած ենք. «Աստուած կը շրջապատէ մարդիկը»: Մենք քեզ ցոյց տունք այն տեսիլքը և Գուրանին մէջ այն անիծեալ ծառը, միայն մարդոց մէջ պառակտումի առարկայ մը ձգելու համար: Մենք զանոնք կը վախցնենք և սա անոնց մէջ միայն ապստամբութիւնը պիտի աւելցնէ:

63. Մենք հրեշտակներուն ըսինք. «Երկրպագեցէք Ազամի առջև, և անոնք երկրպագեցին բացի Սատանաէն, որ ըսաւ «ես երկրպագութիւն ընելու եմ անոր զսր ցեխէն ստեղծեցիր:»

64. «Դու ինձմէ աւելի պատուեցիր զանի, եթէ ինձ միջոց տաս մինչև յարութեան օրը. անոր չորր անբունդը կը բնաջնջեմ փոքր մասէ մը զատ:»

65. Նա ըսաւ, «կորսուէ՛ ատիկ, որոնք որ քեզի հետեին, անոնց նւ քու վարձքը դժոխքը պիտի ըլլայ»: անա առատ հատուցում:

66. Անոնցմէ որը որ կրնաս հրապուրէ քու ձայնովդ, յարձակէ անոնց վրայ քու հեծեայնեքովդ եւ հետիոտիներովդ եւ անոնց հարստութեան եւ զաւակներուն ընկերացիր եւ խոստումներ ըրէ անոնց: Բայց Աստանային խոստումները միմիայն խաբէութիւն է:

67. Բայց զալով իմ ծառաներուս, դուն անոնց վրայ իշխանութիւն չունիս եւ անոնք իրենց Տէրը իրենց պաշտպան պիտի օնենան:

68. Ձեր Տէրն է որ ծովերուն մէջ կը քալեցնէ նաւերը ձեզ համար, որ անկէ պարզեւ սպասէք: Արդարեւ նա ողորմած է ձեզ հանդէպ:

69. Երբ ծովի վրայ ձեզ մլտս մը պատահի, ձեր միւս աղօթածները կը կորսուին, միայն Աստուած հոն է: Բայց երբ ան ձեզ ազատէ եւ ցումաք հանէ, դուք կը հեռանաք անկէ: Արդարեւ մարդս ապերախտ է:

70. Ապահով է՞ք որ նա ձեզ կլլել չպիտի տայ երկրին մէկ մասը ձեր ոտքին տակ բահալով կամ փոթորիկ մը չզրկէ ձեր դէմ ու ձեզ թաղէ աւազին տակ եւ դուք չկրնաք պաշտպան մը գտնել:

71. Վստահ է՞ք որ ձեզ ծովին վրայ անգամ մըն ալ չպիտի տանի, եւ ձեզ դէմ սոսկալի հով մը չպիտի զրկէ, որ ձեզ ընկղմէ ձեր անհաւատութեան համար: Այնտեան դուք պաշտպան չպիտի օնենաք:

72. Մենք Արամի որդիները պատուեցինք, զանոնք ցամաքի և ծովի վրայ տարինք անոնց, համեղ սնունդներ տուինք և զանոնք աւելի գերազանց ըրինք մեր բազմաթիւ արարածներուն վրայ:

73. Օր մը մենք պիտի կանչենք բոլոր ժողովուրդները իրենց պետերուն հետ, որոնց որ ձեռքը կը տրուի գիրքը, անոնք պիտի կարգան գիրքը և մտղի մը չափ անիրատութիւն չպիտի ըլլայ անոնց:

74. Ով որ այս աշխարհը մէջ կոյր է, հանդերձեալին մէջ ալ կոյր պիտի ըլլայ և ճամբէն մտորեալ պիտի լինի:

75. Քիչ մնացեր էր որ անհաւատները քեզ հեռացնէին իրենց փորձութիւններով այն բանէն զոր մենք քեզ յայտնած ենք և քեզ դրպատել տային մեզ դէմ: Այն ատեն անոնք քեզի իրենց բարեկամ պիտի նկատէին:

76. Եթէ մենք քեզ չզօրացնէինք հասարակ մէջ, դու արդէն քիչ մը հակած էին անոնց:

77. Այն ատեն մենք քեզ կրել կուտայինք կեանքի և մահուան տկարութիւնները, և մեզ դէմ չէիր գտներ քեզի օգնող մը:

78. Եւ քիչ մնացած էր որ անհաւատները քեզ համոզէին որ այս երկրէն ելլես: Ո՛հ, այն ատեն անոնք կարճ ժամանակ մը միայն հոն կը մնային քու հեռանալէդ յետոյ:

79. Այս այն ճամբան որուն կը հետեւէին մեր մարգարէները քեզմէ առաջ: Եւ մեր սովորութեան մէջ դու փոփոխութիւն չես գտներ:

80. Աղօթքը կատարէ արեւը մարը մտնելու միջոցին, մինչեւ գիշերուան մութը կտիւէ: Արշալոյսին ալ ընթերցուածք մ'ըրէ, արշալոյսին կարգացուելիքը յայտնի է:

81. Եւ գիշերուան մէկ մասն ալ աղօթքի յատկա-

ցուր: Այս քեզ պարտէր աւելի գործ մը կ'ըլլայր: Կրնայ ըլլալ որ Աստուած քեզ փասաւոր տեղ մը բարձրացնէ այդ հսկումով:

82. Ըսէ՛. «Ո՛վ Տէր իմ, ինձ նպաստաւոր մտաքէ մը մտցուր, և նպաստաւոր մտաքէ մը զուրս հանէ, և ինձ շնորհէ պաշտպանութեան ոյժ մը »:

83. Ըսէ՛ նաև, «Ճշմարտութիւնը երեւցու և սրտութիւնը անհետացաւ, սուտը անհետանալու սահմանուած է »:

84. Գուրանին միջոցաւ մենք կը զրկենք հաւատացեալներուն բժշկութիւն և օգուտութիւն: Իսկ անիրաւներուն մեօտ, զատ բան մը չաւելցնենք:

85. Երբ մարդուն ինչ ինչ բարիք շնորհենք, անետ կը քաշուի մեզմէ, և կը մէկուսանայ և եբք անոր փորձանք մը զայ կը յուսահատի:

86. Ըսէ՛, «ամէն ոք թող իր կերպովը շարժի, բայց Աստուած գիտէ թէ ուղիղ ճամբուն հետեւողը ով է »:

87. Քեզ պիտի հարցնեն հոգիի մասին: Ըսէ՛ անոնց «հոգին ստեղծուած է Տիրոջը հրամանաւ, բայց ձեր մէջ քիչեր կան գիտութիւնը ստացած»:

88. Եթէ մենք ուզէինք, մեր քեզ յայտնածները քեզմէ ետ կտոնէինք, և քեզի պաշտպան մը չէիր կրնար գտնել մեր առջեւ:

89. Եթէ Տիրոջը կողմէ քեզ շնորհ չգար, Արդարեւ Տիրոջը շնորհ քեզ հանդէպ անհուն է:

90. Ըսէ՛, «Եթէ մարդիկ և զեւերը միանային այս Գուրանին նման բան մը մէջ տեղ բերելու համար, չէին բերեր նման բան մը, եթէ իրարու օգնէին իսկ »:

91. Մենք այս Գուրանով ամեն տեսակ առակներ տարածեցինք մարդոց հասկնելու համար, բայց մարդոց շատերը մերժեցին անհաւատութեամբ:

92. Անոնք կրսեն, «մենք քեզ չենք հաւատարմինչեւ որ երկրէն հասուն ջուր չբղխեցնես:»

93. «Կամ գէթ արմախնիք եւ խաղողի պարտէզ մը չունենաս, եւ այդ պարտէզին մէջէն գետեր չըհասեցնես:»

94. «Կամ, քու խօսքերուդ իրր ազատոյց երկրէն մաս մը չիյնայ մեր վրայ, կամ գէթ Աստուած եւ հրէշտակները քեզ հեա չըերես:»

95. «Կամ գոնէ ոսկեզօծեալ տուն մը չունենաս, կամ երկինք չբարձրանաս, քեզ չպիտի հաւատանք նոյն իսկ եթէ հոն ալ ելլես, մինչեւ որ դուն մեզ գիրք մը իջեցնես զոր մենք կարենանք կարգալ:» Անոնց պատասխանէ. «Փառք Տիրոջս, միթէ ես զըրկուած սոսի մարդ մը չեմ:»

96. Ի՞նչ բան է որ կարգիլէ մարդիկ հաւատալու իրենց եկած առաջնորդութեան: Անոնք սա կրսեն. «Աստուած միթէ մա՞րդ մը զրկած ըլլալու էր իր մարգարէն ըլլալու համար:»

97. Անոնց ըսէ՛, «Եթէ հրեշտակները երկրի վրայ քալէին ու հոն ապրէին ապահովապէս, մենք ալ երկինքէն անոնց համար հրեշտակ մը կը զրկէինք իրր մարգարէ:»

98. Ըսէ՛. «Իմ ու ձեր միջեւ Աստուած իրր վկայ կը բաւէ, վասնզի նա հրահանգած է իր ծառաներուն գործերը եւ կը տեսնէ զանոնք:»

99. Աստուծոյ առաջնորդածը մէջն լաւ առաջնորդուած է. եւ որը որ Աստուած կը մոլորեցնէ, նա պաշտպան չպիտի գոնէ անկէ գատ: Յարութեան օրը պիտի հաւաքենք զանոնք բոլորը իրր երեսանկեալ կոյր, համը եւ խուլ: Գեհներ անոնց բնակարանը պիտի ըլլայ. մենք պիտի բորբոքենք անոր կրակը ամեն անգամուն որ մարիլ սկսի:

100. Մեր իշաններուն չհաւատացողներուն հատու-

ցուածը այս է, և անոնցը որոնք ասվոր էին ըսել. «Մենք ոսկոր և փոշի ըլլալ լետոյ միթէ յարութիւն պիտի առնենք նոր կազմով մը:»

101. Չե՞ն տեսներ թէ Աստուած՝ որ երկինքները ու երկրը ստեղծած է, կրնայ ստեղծել անոնց նման մարմիններ: Նա անոնց համար վախճան մը որոշած է. անոր մասին կասկած չկայ. բայց անիրաւները կը մերժեն այդ ամենը անհաւատութեան պատճառաւ:

102. Ըսէ՛ անոնց. «Եթէ դուք Տիրոջս ողորմութեան գանձին տիրէիք, չէիք ծախսէր սպառելու վախով: Ստուգիւ մարդս ազա՛ն է:»

103. Մենք Մովսէսին ինը յայտնի հրաշքներ տուած ենք. հարցու՛ր Իսրայէլի որդւոցը: Երբ Մովսէս Փարաւօնի ներկայացաւ, սա ըսաւ անոր. «Ես կը կարծեմ որ, Մովսէս, դուն կախարդուած ես:»

104. Գու գիտես որ, ըսաւ Մովսէս, Աստուած երկնից ու երկրի Տէրը, կը զրկէ այս յայտնի նշանները. և ես կը կարծեմ որ, ո՛վ Փարաւօն, դու կորսուած ես:

105. Փարաւօն ուղեց զանոնք երկրէն վաճակել, բայց մենք զանի և բոլոր հետեղները ընկղմեցինք:

106. Եւ լետոյ րօինք Իսրայէլի որդւոց. «բնակեցէ՛ք այս երկրին մէջ, և երբ գայ հանդերձեայ աշխարհի ժամանակը մենք ձեզ ամենքդ կը համախաբենք: Եւ մենք Գուբանը ճշմարտութեամբ զրկած ենք և նա ճշմարտութեամբ իջած է: Եւ մենք քեզ զրկած ենք աւետելու և խրատելու համար միայն:»

107. Գուբանը մասերու բաժնած ենք, որպէսզր դու զայն քիչ քիչ կարդաս մարդոց: Մենք զայն կտոր կտոր իջեցուցած ենք,

108. Ըսէ՛ անոնց. «Նաւատացէ՛ք անոր կամ մի հաւատաք»: Որոնց որ կանխաւ գիտութիւն տրուած է, կը խօնարին և երեսնուն վրայ կիյնան երբ է-

րենց կը կարդացուին անոր պատգամները, «Փառք Աստուծոյ» կաղաղակեն անոնք: Աստուծոյ խոստումները կատարուած են:

109. Անոնք իրենց երևաներուն վրայ կիյնան կ'ողորան և անոնց երկիւղածութիւնը կաւելնայ:

110. Ըսէ՛ «Զայն Աստուած անուանեցէք կամ Ուղորժած. ինչ անունով որ ալ կանչէք ամենագեղեցիկ անունները անոր կը պատկանին: Ոչ շատ բարձր և ոչ ալ շատ ցած ձայնով աղօթեցէք. այս երկուքին մէջտեղը բռնէ:

111 Ըսէ՛, «Փառք Աստուծոյ, որ որդի չունի բնաւ, որ իր իշխանութեանը ընկեր չէ ունեցած. և պաշտպանի պէտք չունի, զԱստուած Փառաբանէ հռչակելովանոր մեծութիւնը:



ԺԸ. Գ Լ Ո Ի Ի

(ՍՈՒՐԵԹ-ԻՒԼ ՔԷԱ.ԷԲ)

Մէֆէաիան, հարիւր ասը պատգամ

Յանուն Աստուծոյ գթածի և ողորժածի

1. Գովութիւն Աստուծոյ, որ զրկած է գիրքը իր ծառային:

2 Ուղիղ գիրք մը, որ մարդոց ծանր պատիժ կը սպառնայ Աստուծոյ կողմէ, և կաւեաէ բարեգործ հաւատացեալներուն գեղեցիկ վարձք զոր պիտի վայելն լաւիտենապէս:

3. Եւ կ սպառնայ անոնց որոնք կրսն թէ Աստուած որդի ունի:

4. Անոնք ոչ ալ իրենց հայրերը այս մասին ո՛ր և է

տեղեկութիւն չունին: Անոնց բերնէն ելած այդ խօսքը մեծ մեղք մ'է: Այն սուտ մըն է:

5. Անոնց այս գիրքին չհաւատալէն վշտացած գուցէ դուն քեզ ոչնչացնես անոնց պատճառաւ:

6. Ինչ որ կայ երկրի վրայ մենք անոնցմով զարդարած ենք երկիրը. մարդիկը փորձելու համար, գիտնալու թէ անոնցմէ որը լաւ կ'ընթանայ:

7. Բայց բոլոր այդ շարքերը հողի պիտի վերածենք:

8. Ուշադրութիւն ըրի՛ր որ քարայրի և Ալ-Րահիմի մարդոց պատմութիւնը մեր նշաններէն մին է և արտակարգ բան մը:

9. Երբ երիտասարդները քարայրը քաշուեցան աղաղակեցին, «Տէր, մեզ շնորհէ քու ողորմութիւնդ և մեզ ապահովէ ուղիղ ըսթացքի մէջ:

110. Մենք անոնց ախանջները խալցուցինք քարայրին մէջ բաւական տարրեր:

11. Յետոյ զանոնք արթնցուցինք հակնալու համար թէ անոնցմէ որը պիտի կրնար լաւ հաշուել ժամանակը յորում հոն մնացած էին:

12. Մենք քեզ կը պատմենք անոնց պատմութիւնը ամենայն ճշտութեամբ: Անոնք Աստուծոյ հաւատացող երիտասարդներ էին, և մենք անոնց ուղիղ ճամբուն հետեւելու միջոցներ սուկցուցած էինք:

13. Զօրացուցինք անոնց սրտերը, Էբբ քերտեցան էլեւնին աւլէ, կայնեցան ու ըսին, «Մեր Տէրը տէրն է երկնից ու երկրի. մենք անկէ զատ ուրիշ աստուած չենք կանչեր, եթէ ոչ մենք ոճիր մը գործած կ'ըլայինք»:

14. «Անր ազգակիցները Աստուծմէ զատ ուրիշներ կը պաշտեն. կրնա՞ն մեզ որոշ փաստ մը ցոյց տալ ինպատ իրենց կրօնքին: Եւ ո՞վ աւելի յանցաւոր է քան այն որ Աստուծոյ մասին սուտ մը յերիւրէ»:

15. Այն ատեն իրարու ըսին, թէ, քանի որ ան-

անցմէ զատուեցաք, նաև Աստուծմէ զատ անոնց պաշտած կուռքերն ալ չէք պաշտեր, և եթէ դուք քարայրի մը մէջ քաշուիք Աստուած ձեզ իր շնորհքը կը պարգևէ և ձեր գործերը լաւագոյնս կը կարգադրէ:

15. Արեր ծագելուն կը տեսնէիր որ կանցնէր անոնց քարայրի մուտքին աջէն և մարը մտնելու ատեն ձախէն կը քաշուէր, և անոնք քարայրին մէկ գեղեցիկ կողմը կը գտնուէին: Սա Աստուծոյ նշաններէս մէկն է: Աստուծոյ առաջնորդածը լաւ առաջնորդուած է, բայց Աստուծոյ մոլորեցուցածին չէ կարելի ոչ պաշտպան գտնել և ալ ուղեցոյց:

17. Դու զանոնք արթուն պիտի կարծէիր, բայց կը քնանային. մենք զանոնք կը զարձնէինք երբեմն աջ երբեմն ձախ, և անոնց շունը քարայրին մուտքին առջև թափերը տարածած կը քնանար: Եթէ անոնց պատահէր պիտի փախչէիր վախնալով:

18. Երբ զանոնք արթնացուցինք. անոնք իրարու կը նարցնէին. անոնցմէ մէկը նարցուց. «Դուք որքան ատեն նոս մնացիք». — Մէկ որ կամ որուան մէկ մասը, պատասխանեց միւսը: Աստուած ամենէն լաւ գիտէ, ըսին միւսները, թէ որքան ատեն նոս անցուցիք: Հիմա քաղաք զրկեցէք այս ստակով ձեզմէ մէկը, որ դիմէ լաւ կերակուր ունեցողին ու բերէ ձեզ անկէ օտակու նամար. բայց նա թող ըզգուշանայ և չիմացնէ մէկու մը ձեր բնակավայրը»:

19. Վասնզի բնակիչները եթէ իմանան, ձեզ կը քարկոծեն կամ կատուներ իրենց կրօնքը բնգունել, և դուք այլևս երջանիկ չէք ըլլար երբէք»:

20. Մենք անոնց արկածը իմացուցինք իրենց ազգակիցներուն, որպէսզի նասկնան թէ Աստուծոյ խոստումները անփոփոխելի են, և բնաւ կասկած չկայ ժամը նասնելուն: Անոնց ազգակիցները կը վիճէին

անոնց մասին եւ ըսին, «Կարցիւն վրայ չէնք մը շինենք. Աստուած ամենէն լաւ գիտէ զանոնք»: Որոնց որ գաղափարը այս մասին յաղթանակեց ըսին. «մենք նոն աղօթարան մը շինենք»:

21. Պիտի վիճաբանուի անոնց թիւի մասին. այսպէս պիտի ըսուի, «անոնք երեք էին. շունը չորրորդն էր»: Ուրիշներ պիտի ըսեն. «անոնք նինգ էին աւուս շունը վեցերորդն էր: Գաղանիքը պիտի հետազօտուի. պիտի ըսուի. «եօթը էին և անոնց շունը օթերորդն էր.» Դու ըսէ՛, «Տէրս լաւ գիտէ անոնց թիւը. միայն քիչերը գիտեն զայն»:

22. Աստի այս մասին մի վիճիր, եթէ կազմին համար չէ, և մի նարցներ երբէք քրիստոնէսէ մը գաղափարը այս մասին:

23. Մի բեր երբէք, թէ «այնինչ բանը ես վաղը պիտի բնամ»: Աստուած յիշէ՛ եթէ մտնաս և ըսէ՛, «կարելի է Աստուած զիս պիտի առաջնորդէ զէպի՛ ճշմարիտ ծանօթութիւնը այս դէպքին»:

24. Այն երիտասարդները քարայրին մէջ մնացին 309 տարի:

25. Ըսէ՛, «Աստուած ամենէն լաւ գիտէ թէ անոնք որչափ ատեն մնացին. երկնից և երկրի գաղանիքները անորն են. նա լաւ կը տեսնէ ու լաւ կիմանայ: Մարդիկ անկէ ուրիշ պաշտպան չունին: Աստուած իր վճիռներուն մէջ մէկը իրեն չընկերացներ»:

26. Աստուծոյ զիրքէն ծանօթացուր քեզ եզած յայտնութիւնը. մէկը չկայ որ կարող ըլլայ փոխել անոր խօսքերը. դու անկէ զատ ապաստանարան մը չես գտներ:

27. Դու նամբերէ անոնց մասին որոնք առաւօտ երեկոյ Տիրօջը կազօթեն, անոր երեսը տեսնելու իրձով: Դու այս աշխարհի զարդը բազմալով աչքերդ

մի դարձներ անոնցմէ. և մի հնազանգիր անոր, որուն սիրաբ անտարբեր բրած ենք մեզ յիշելու մասին, անոր որ իր ցանկութիւններուն կը հետևի, և որուն բոյոր գործերը անառակութիւն են:

28. Հսէ, «ճշմարտութիւնը Աստուծմէ կուգայ, ով որ կուզէ թող հաւատայ, և ով որ անհաւատ լայ կուզէ, թող ըլլայ: Իսկ մենք անիրաւններուն համար կրակ պատրաստած ենք որ իր ծուխովը զանոնք պիտի պաշարէ: Երբ օգնութիւն ինչդրեն, անոնց պիտի տրուի հալած մետաղի պէս եռացած ջուրէն, որ անոնց դէմքը պիտի այրէ: Ի՛նչ զգուցի ըմպելի, և ի՛նչ նողկայի հանգստանոց:

29. Արոնք որ կը հաւատան և բարիք կընեն արդաբև մենք անոնց գործին վարձքը չենք կորսընցներ:

30. Անոնց զեմ, դրախտներ, կանոտքերնուն ասկ պիտի հօսին ջուրեր, անոնք հօն ոսկի ապարանջոն. ներ պիտի կրեն և կանաչ հագուստներ պիտի հագնին լաւ մետաքսէ և սնդուսէ կախած նստարաններու վրայ: Ի՛նչ զեղեցիկ վարձատրութիւն, ի՛նչ ըսքանչելի հանգստավայր:

31. Պատմէ անոնց սա երկու մարդոց սուակր. անոնցմէ մէկին տուինք խաղողի երկու այգի, այս այգիները արմաւենիներով չըջապատեցինք, և երկուքին միջև ցանուած արտ մը: Երկու այգիները պտուղներ տուին եւ բնաւ անպտուղ չեղան:

32. Այս այգիներու ծոցէն առու մը շոսեցողցինք: Այն մարդը առատ պտուղ քաղեց, և ըստ խօսակցութեան մէջ իր դրացիին «ես քեզմէ աւելի հարուստ եմ և բազմանգամ ընտանիք մ՞ունիմ:

33. Մտաւ իր այգիին մէջ, անիրաւ ինք իրեն դէմ, և աղազակեց, «չեմ կարծեր որ այս այգին երբէք փճանայ»:

34. «Եւ չեմ կարծեր որ վերջէ՞ քամը հասնի, և եթէ Աստուծոյ ներկայացում, ասկէ աւելի լաւ այգի մը պիտի ունենամ ի փոխարէն»:

35. Իր բարեկամը բտաւ անոր խօսակցութեան պատուն, «Ձե՞ս հաւատար քեզ չողէն, յետոյ սերմէն ստեղծողին և յետոյ քեզ կատարեալ մարդ ընողին»:

36. Իմ մասիս, Աստուած իմ Տէրս է, և ես անոր չեմ բնկերացներ ոչ մէկը:

37. «Դու այգիդ մանկու առեն, չե՞ս ըսեր, «Աստուած ինչ որ ուզէ այն կրլլայ, Աստուծոյ զօրութենէն զատ զօրութիւն չկայ: Դուն կը տեսնես որ ես քեզմէ աղքատ եմ ստացուած քով ու զաւակներով»:

38. Կրնայ ըլլայ որ Աստուած ինձ բան մը պարգևէ որ աւելի արժէքու այգիդ, և նա երկնից պատուհասներ զրկէ և զու չոր փոչիք վերածուիս օրին մէկը:

39. «Ձայն ոռոգող ջուրերը կրնան անյայտանալ երկրին տակը, ուր անգամ մըն ալ զանոնք չըգտնես»:

40. Թերահաւատին ստացուածքները բոյոր պտուղներովը ծածկուեցան աւերամբը: Նա իր ձեռքերը ծրարած կողբար իր ծախքերը, վասնզի որթերը աւերուած էին նեցուկներուն վրայ, մերկացած պտուղներէն, և նա կ'աղազակէր, «երանի թէ Աստուծոյ ուրիշ աստուած ընկերացուցած չըլլայի»:

41. Եւ ժողովուրդը անոր չէր օգներ բացի Աստուծմէ. նա ոչ մէկ օգնութիւն չգտներ:

42. Պաշտպանութիւնը միայն Աստուծոյ, ճշմարիտ Աստուծոյ կը պատկանի: Նա գիտէ լաւագոյնս վարձատրել և երջանկագոյն վախճանը տայ:

43. Այս աշխարհի կեանքի սուակր պատմէ անոնց: Նա կը նմանի ջուրին զոր երկինքէն կ'իջեցնենք, ու

կը խառնուի երկրի տունկերուն. վաղը անոնք չոր են. հովը զանոնք կը ցրուէ, վասնզի Աստուած ամենակարող է:

44. Հարստութիւնները և զաւակները զարդերն են այս աշխարհի կեանքին. բայց մնայուն բարեգործութիւնները Տիրոջ առջև աւելի արդիւնաւոր են վարձքի և յոյսի տեսակէտով:

45. Այն օրը երբ մենք լեռները պիտի քայեցնենք. դուն պիտի տեսնես երկիրը դաշտի մը պէս հարթուած. մենք պիտի համայնաբանք բոլոր մարդիկը առանց մէկը մոռնալու:

46. Անոնք քու Տիրոջ պիտի ներկայացունեն կարգաւ: Աստուած անոնց պիտի ըսէ. «անա դուք առջևս եկաք, ինչպէս որ ձեզի ստեղծած էի առաջին անգամ, և կը խորհէիք թէ խոստումներս չը պիտի կատարեմ»:

47. Իւրաքանչիւրին գործերը արձանագրուած գիրքը պիտի տրուի անոր ձեռքերուն մէջ. պիտի տեսնես յանցաւորները որ հոն գրուածներէն սարսափած, կըսեն, «Վայ մեզ. այս գիրքը ուրեմն ինչ կուզէ ըսել: Չմնար ոչ մեծ, ոչ պզտիկ գործ նա ամենն ալ կը հաշուէ. մարդիկ գործածին ներկայ կը կը գտնեն աշխարհի առջև: Եւ Տէրդ ոչ սքի անբարութիւն չրներ»:

48. Երբ իրեշտակներուն ըսինք. «Աղամին երկրպագեցէք», բոլորն ալ երկրպագեցին բացի Էպիլսէն, որ դեւերէն մին էր և ըմբոստացած էր Տիրոջ հրամանին դէմ: Աւրիմ, Էպիսը և իր ցեղը ձեզ պաշտպան կընդունի՞ք իմ տելս: Անոնք ձեր թշնամիներն են: Ինչ զգուելի փոխանակութիւն է այս չարերուն համար:

49. Ես զանոնք վկայ չեմ ըրած երբեք ինքքը և երկիրը կ'ստեղծէի և ոչ զանոնք ստեղծելուս. և ինձ

օգնական չեմ ընդուներ մոլորեցնողները:

50. Օր մը Աստուած պիտի ըսէ անհաւատներուն, «կանչեցէ՛ք ինձ ընկեր կարծած և ձեր հաւատացած աստուածները»: Անոնք պիտի կանչեն զանոնք. բայց ասոնք պատասխան չպիտի տան. վասնզի մենք անդունդ մը պիտի բանանք անոնց միջև:

51. Յանցաւորները պիտի տեսնեն դժոխքին կըրակը, և պիտի հասկնան որ հոն պիտի նետուին. անկէ ազտակալ ո՛ր և է միջոց չպիտի գտնեն:

52. Ամեն տեսակ առակներ բերինք այս Գուրանին մէջ մարդոց համար. բայց մարդս շատ ատեն վէճի հակամէտ է:

53. Ի՛նչ բան կարգիլէ մարդոց հաւատալ, քանի որ ուղիղ ճամբան իրենց արուած է ո՞ր բանը կարգիլէ զանոնք Աստուծմէ ներողութիւն խնդրելէ: Մի գուցէ սպասն նախկին մարդոց վրձակին, կամ հանդերձակի պատիժին:

54. Մարգարէներ կը զրկենք զեկուցանելու և աւետելու պաշտօնով: Անհաւատները ի զուր կը ջանան ճշմարտութիւնը ջնջելու, և կը ծաղրեն մեր նշանները և սպառնացուած պատիժները:

55. Ո՞վ աւելի յանցաւոր է քան նա որ կը մերժէ մեր նշանները երբ իրեն կը պատմուին, որ կը մոռնայ իր ըրած գործերը: Մենք անոնց սրտերը զոցած ենք պնդօրէն, որ չհասկնան բնաւ Գուրանը, և ալ կանջնուն մէջ ծանրութիւն դրած ենք:

56. Երբ դու զանոնք ուղիղ ճամբան հրաւիրես, չպիտի հետևին բնաւ:

57. Քու Տէրդ ներող և ողորմած է. եթէ ուզէր զանոնք պատժել, կը փութացնէր պատժոյ ժամը: Բայց անոնց որոշեալ ժամանակ մը կայ սպառնալիքներու դործադրութեան համար, և անոնք ոչ մէկ սպաստան պիտի գտնեն անոր վրէժխնդրութեան

դէմ:

58. Կործանեցինք այս հին քաղաքները իրենց անիրաւութեան պատճառաւ. արդէն անոնց կործանման մասին կանխաւ զեկուցած էինք:

59. Սր մը Մովսէս իր ծառային բաւ. «Ես չըպիտի դադարիմ քայելէ մինչև որ հասնիմ երկու ծովերու միացած տեղը, կամ ութսուն տարիէ աւելի պիտի քայես»:

60. Երբ երկու ծովերու միացման տեղը հասան, տեսան թէ կորուսած են իրենց ձուկը որ ուղղակի ծովին ճամբան բռնեց:

61. Երբ հոնկէ առաջ անցան Մովսէս բաւ իր ծառային, մեր ճաշը բեր, այս ճամբորդութեան մէջ շատ յողմեցանք»:

62. Ան ըսաւ, «Երբ մենք սա ժայռին քով կեցած էինք, ուշադրութիւն չեմ բրած ձուկին: Մատանան է միայն որ ինձ մտնուցաւ տուաւ որ քու առջևդ չբերեմ դայն. ձուկը դէպի ծով գնաց, որ զարմանալի է»:

63. Ես ալ այս կուղէի, ըսաւ Մովսէս. և երկուքը միասին ետ դարձան:

64. Հոն հանդիպեցան մեր ծառաներէն մէկին, որուն մենք մեր շնորքը պարգևած և մեր գիտութեամբը յուսաւորած ենք:

65. Մովսէս անոր ըսաւ «կրնամ քու ետեկդ գալ. որ ինձ սովորեցնես մաս մը ուղիղ ճամբուն միջոցաւ քու սովորածէդ»:

66. Անձանօրէն պատասխանեց, «գու բաւական համբերութիւն չպիտի ունենաինձ հետ մնալու»:

67. «Եւ ի՞նչպէս պիտի դիմանաս այն բաներուն, որոնց իհաստը չպիտի հասկնաս»:

68. Եթէ Աստուած հաճի, ըսաւ Մովսէս՝ զիս համբերատար պիտի գտնես և երբէք անհնազանդ չեմ ըլլար քու հրամաններուդ:

69. Ան ալ ըսաւ, «Եթէ ինձ կը հետեւիս. ինձ բան մը չես հարցնէր մինչև որ քեզ զայն բացատրեմ»:

70. Ուստի երկուքը միասին ճամբայ ինկան և նաւ մը մտան. անձանօրէն զայն ծակեց մէջը եղողները ընկղմելու համար: Նա ըսաւ «գուն ասորի նալ գործ մ'ըրիր»:

71.—Չ'ըսի՞ քեզ որ գուն բաւական չպիտի համբերես ինձ հետ մնալու համար:

72. Մովսէս ըսաւ. «Մի մեղադրեր զիս հրամաններդ մոռնալուս և ինձ դժուար պարտականութեանց մի հարկադրեր»:

73. Անոնք գացին և քայեցին մինչև որ երիտասարդի մը հանգրիպեցան: Անձանօրէն զանի սպաննեց: Ի՞նչու սպաննեցիր անմեղ մարդ մը որ մէկը չէ սպաննած. դու անիրաւ գործ մ'ըրիր, ըսաւ Մովսէս:

74.—Քեզ չըսի՞ որ գուն իմ քով կենալու չափ չպիտի համբերես:

75.—Եթէ անգամ մըն ալ քեզ հարցնեմ, զիս մի ընկերացիներ քեզ. այժմ ներէ՛ ինձ:

76. Գացին անոնք և քայեցին մինչև որ քաղաքի մը դուռները հասան: Ասպնջականութիւն խնդրեցին բնակիչներէն. ասոնք չընդունեցին զանոնք: Երկու ճամբորդները տեսան թէ քաղաքին պատը փչելու վրայ է: Անձանօրէն (\*) զայն վերականգնեց «Եթէ ուզէիր, ատոր համար վարձք կ'ստանայիր» ըսաւ Մովսէս:

77. Ալ իրարմէ պիտի բաժնուինք ըսաւ անձանօրէն:

(\*) Անձանօրէն Մահմետականաց Խըրըր կուսն է, զոր մարտրէ մը կը համարեն. իբր զիոսած խաչակրացիներուն և Արաբիոց խողովորոց, խորհրդաւոր անջ մըն է անմահացած որուն հոգին շար մը մարտրէներու փոխանցուելով եկած Եւլայ մինչև Ս. Գեորգիին:

Ես քեզ սովրեցնեմ միայն նշանակութիւնը այն բաներուն զորս գիտնալու անհամբերութիւնը ու, նեցար:

78. Նաւը կը պատկանէր ծովի վրայ աշխատող աղքատ մարդոց. ես ուզեցի անոր վնասել, վասնզի անոր ետեւէն թագաւոր մը կար որ կը գրաւէր բոլոր նաւերը:

79. Գալով երիտասարդին իր ծնողքը հուսաացեալ էին, և մենք վախցանք որ զանաւոր չվարակէ իր չարութեամբը և իր անհաւատութեամբ:

80. Ուզեցինք որ Աստուած անոնց տայ փոխարէնը աւելի առաքինի և գորովալի որդի մը:

81. Այն պարիսպը քաղաքին մէջ երկու որս աղու ժառանգութիւն էր: Այդ պատին տակ դանձ մը կար անոնց պատկանող: Հայրերնին բարեպաշտ մարդ մըն էր: Տէրը կամեցաւ որ անոնք չափահաս ըլլան ու դանձը իրենք ստանան: Այս բոլորը ես իմ կողմէ չըրի: Ահա բացատրութիւնը այն բաներուն որոնց սպասելու համբերութիւնը չունեցար:

82. Քեզի պիտի հարցնեն Գայնէյնի մասին: Ըսէ՛, «Ես անոր պատմութիւնը ձեզ պատմեմ»:

83. Մենք անոր իշխանութիւնը Կրկրի վրայ հաստատեցինք և անոր միջոցներ տունք իր բոլոր ուղածը ընելու, և նա ճամբու մը հետեւեցաւ:

84. Նա գնաց մինչև արևին մարը մտած տեղը և տեսաւ որ արևը կը մտնէր ցեխոտ հորի մը մէջ, և անոր մօտ հաստատուած ժողովուրդը մը գտաւ:

85. Մենք ըսինք անոր. «ո՛վ Զուլ-Գարնէյն (\*). կամ պատժէ այս ժողովուրդը և կամ լաւ վարուէ անոր հետ»:

(\*) Երկու եղջիւր ունեցող Զուլ-Գարնէյն անունով էր հասկնալ մահմեդականները Մեծն Աղէտանդըրը որ որիւրեց Արեւելին եւ Արեւմուտին:

86. Պիտի պատժենք. ըսաւ նա. ո՛վ որ ամբարշտ է. յետոյ ես կը գառնայ իր Տիրոջ, որ աւելի խիստ կը պատժէ զանի:

87. Բայց ո՛վ որ կը հաւատայ և բարիք կընէ, լաւ վարձք կ'ստանայ. և մենք անոր գիտին գործողութիւնք հրամաններ միայն պիտի տանք:

88. Զուլ-Գարնէյն կրկին ճամբայ ելաւ:

89. Եւ հասաւ մինչև հոն ուրկէ արևը կ'ելլէ. տեսաւ որ արևը կը բարձրանար ազգի մը վրայ. որուն բան մը չէինք տուած որ ծածկուին անոր տարութիւնը:

90. Այո՛, այսպէս էր. անոր հետ եղածները մենք գիտութեամբ պաշարած ենք: 91. Նա նոր ճամբու մը հետեւեցաւ:

92. Մինչև որ հասաւ երկու պարիսպներու մէջ տեղը որոնց ստորտը կը բռնակէր այն երկուքէն զատ, ազգ մը, որ հազիւ կրնար քանի մը խօսք հասկնալ:

93. Այս ազգը անոր ըսաւ, «ո՛վ Զուլ-Գարնէյն, աւաթիկ Եաճուճը եւ Մաճուճը (\*) երկիրը կաւրչակեն: Արդեօք քեզ հարկ վճարե՞նք, անոնց եւ մեզ միջեւ պարիսպ մը բարձրացնելու համար»:

94. Նա պատասխանեց այն զօրութիւնը զոր իմ Տէրս ինձ շնորհած է, աւելի մեծ վարձատրութիւն է ինձ համար: Ինձ օգնեցէք ետանդագին եւ ես պիտի բարձրացնեմ պարիսպ մը անոնց եւ ձեր միջեւ:

95. Ինձ բերէք երկաթի մեծ կտորներ, պէտք եղածին չափ լեցնելու համար երկու լեռներու միջեւ միջոցը: Փչեցէք, բաւ, կրակը մինչև որ կրկաթը կարմրի կրակի պէս: Յետոյ ըսաւ, բերէք ինձ հալած պղինձ որ վրան թափեմ»:

(\*) Աստուածաշունչի Գոգ Մոգոգ պէք ըսաւ էր լեռնէ-Տեւ Եղէկէկէ 38 եւ 39 էլ:

96. Այլևս Կաճուճ և Մաճուճը չկրցին ոչ պատին վրայ ելլել և ոչ գայն ծակել :

97. Զուլ-Գարնէյն ըսաւ, այս գործը ողորմութիւն մըն է ողորմած Աստուծոյ կողմէ :

98. Երբ Տիրոջ խոստումը հասնի, գայն կը փչրէ. և Աստուծոյ խոստումները ճշմարիտ են :

99. Եւ այն օրը որ պայ մենք պիտի թողունք որ ալիքներու նման իրարու վրայ իյնան, և փողը պիտի հնչէ, և մենք պիտի համախմբենք բոլոր մարդիկը :»

100. Այն օրը գոթիքը անհաւատներուն պիտի յատկացնենք :

101. Անոնց՝ որոնց աչքերը վարդայրով մը ծածկուած էին մեր զեկոյցին դէմ և որոնք մեզ չսեցին :

102. Յանհաւատները կը խորհէին որ իրենց պաշտպան առնեն մեր ծառաները : Մենք գոթիքը անհաւատներուն բնակավայր պատրաստեցինք :

103. Ընկնողներէ մեզ գանոնք որոնք ամենէ շատ վնասուած են իրենց գործերով :

104. Որոնց ջանքերը այս աշխարհի մէջ կատարեալ կորսուած են և անոնք որոնք կը կարծեն թէ բարիք գործած են :

105. Ասոնք այն մարդիկն են որոնք բնաւ չհաւատացին մեր նշաններուն. ոչ ալ իրենց Տիրոջ առջև և կլկնուին. անոնց գործերը ունայն են, և մենք անոնց ոչ մէկ կշիռ չենք տար յարութեան օրը :

106. Անոնց վարձքը գոթիքը պիտի ըլլայ, վարձը պիտի իմ նշանները և իմ մտրդարէները ծաղրած են :

107. Անոնք որ կը հաւատան և բարիք կը գործեն, անոնց բնակարանը պիտի ըլլայ գրախտի պարտէզը :

108. Անոնք հոն պիտի բնակին յաւիտեան, չը պիտի ցանկան անկէ տեղափոխուիլ :

109. Ըսէ՛, «Եթէ ծովը մեզան գառնար գրեյու Աստուծոյ խօսքերը, ծովը կը դաժքէր Տիրոջ խօսքերը լիննալէ առաջ, և թէ նոյնիսկ ուրիշ ծով մըն ալ անոր գործածէինք» :

110. Ըսէ՛, «Ես ձեզի պէս մարդ մըն եմ, բայց ես յայտնութիւն ընդունեցի թէ միայն մէկ Աստուած կայ : Ո՛վ որ իր յուսաց օր մը իր տիրոջ ներկայանալ, նո թարիք թող գործէ և Տիրոջ պաշտամունքին մէջ ուրիշ արարած մը թող չընկերացնէ անոր» :



ԺԹ. Գ Լ Ո Ի Խ

(ՍՈՒԲԵԹԻԻԼ ՄԱՐԻԱՄ)

Մեքէական, իննուսուն և ութը պատգամ

Յանուն Աստուծոյ գթածի ողորմածի

1. Կ. Զ. Ե. Ա. Ս. Անա յիշատակը քու Տիրոջ ողորմութեան հարգէպ իր Զարբիա ծառային :

2. Երբ գաղանի ազօթքով մը իր Տէրը կանչեց :

3. Եւ ըսաւ. «Տէր իմ, սոկորներս տկարացան, և զլիսուս մտկերը ճերմկեցած են տարիքէս :

4. «Իմ քեզ ուղղած իր ձեռքուս մէջ դժբախտ չեմ եղած :

5. «Կը վախնամ թէ իմ յաջորդներս հոսանան Աստուծոյ կրօնքէն : Կինս ամուլ է, ինձ ժառանգորդ մը տուր քու կողմէդ» :

6. «Որ ինձ և Յակոբի տան ժառանգորդ ըլլայ, և զանի, Տէր իմ, քեզ հաճելի ըրէ :

7 - Ո՛վ Զարբիա, քեզ որդւոյ մը աւետարտ կուտարք : Անիկա պիտի կոչուի Յովհաննէս (Եանես)

8. Անկէ առաջ մէկը չկրեց այս անուրը,

9. Չաքարիա ըսաւ, Տէ՛ր, ի՞նչպէս զաւակ՝ պլտի-  
ուեննամ, կի՞նս ամուլ է, և ես խոր ծերութեան տա-  
քիքը հասեր եմ:

10. Նա ըսաւ, «այս այսպէս պիտի ըլլայ. քու  
Տէրդ ըսաւ, «ինձ համար դիւրին է, ես քեզ ստեղ-  
ծած եմ ոչինչէ»:

11. Նա աչ ըսաւ, Տէ՛ր իմ, ինձ նշան մը տուր.  
Ան ըսաւ, «քեզ սա ըլլայ նշան որ երեք գիշեր չը-  
խօսիս մարդոց հետ»:

12. Չաքարիա աղօթարանէն դուրս ելաւ ժողով-  
ուերդին առջեւ, և նշան կընէր անոնց գովաբանելու  
գլխատուած առաւօտ եւ երեկոյ:

13. «Ո՛վ Յովհաննէս, ա՛ն այս գիրքը հզօրապէս»:  
Մենք Յովհաննէսին տուինք իմաստութիւն իրման-  
կութենէն.

14. Նաեւ ողորմութիւն եւ մաքրութիւն. նա եր-  
կիւղած էր եւ դորովալի գէպի իր ծնողքը եւ քոտող  
ու ըմբոստ չէր բնաւ:

15. Աղաղութիւն անոր վրայ ըլլայ ծնած օրը  
եւ մեռնելու օրը եւ յորութիւն աննելու օրը:

16. Եւ Գուբանի մէջ Մարիամն ալ յիշէ՛. երբ ա-  
նիկա ընտանիքէն զատուելով գնաց արեւելեան  
երկիր մը:

17. Եւ միւսներուն տեսութենէն ինքզինք ծած-  
կեց վարագուրով մը: Մենք անոր զրկեցինք մեր  
հոգին. եւ ան գեղեցիկ մարդու մը կազմով երեւցաւ  
անոր:

18. Մարիամ ըսաւ, «ես քեզմէ վախցած ապաս-  
տան կը փնտռեմ ողորմածէն, եթէ կը վախնաս  
անկէ...»:

19. Նս պատասխանեց, «ես քու Տիրովմէ զրկուած  
եմ, քեզ սուրբ ոլդի մը տալու պաշտօնով»:

20. Ի՞նչպէս կրնամ զաւակ ունենալ՝ ըսաւ. ոչ  
—ոք ինձ մերձեցած չէ բնաւ, և ես անպատիւ կին  
մը չեմ:

21.—Այսպէս պիտի ըլլայ, պատասխանեց նա.  
Քու Տէրդ ըսած է, «այն ինձ համար դիւրին է: Ան  
մեր նշանը պիտի ըլլայ մարդոց առջև, և ապացոյցը  
մեր ողորմութեան: Վճիռը արձակուած է»:

22. Ան յղացաւ զաւակով, և քաշուեցաւ հեռու  
տեղ մը:

23. Ծնանելու երկուեքէն ընտուեցաւ արմաւենիի  
մը սակը: Նա աղաղակեց Աստուծոյ, «երոնի թէ ա-  
ւելի առաջ մեռած ու մոռցուած ըլլայի»:

24. Մէկը պոռաց անոր տակէն, «Մի՛ տրամիր.  
Տէրդ տակէդ աղբիւր մը հոսեցուց»:

25. «Թօթիկէ՛ արմաւենիին ճիւղը. քու վրադ պի-  
տի հիշան հասուն արմաւենի».

26. «Կեր ու խմէ և աչքդ լոյս ըլլայ, և եթէ  
մարդ մը տեսնես,

27. Է՛տէ՛ անոր. «ես ծոմապահութիւն ուխտած  
եմ Ողորմածին, այսօր մարդու հետ չեմ խօսիր»:

28. Նա իր ընտանիքին քով գնաց մանկիկը գրկած  
Անոր րօին. «ո՛վ Մարիամ, դու տարօրինակ բան  
մ՛ըրեր ես»:

29. «Ո՛վ Անարոնին քոյրը, քու հայրդ գէշ մէկը  
չէր, ոչ ալ մայրդ անպատիւ կին մըն էր»:

30. Մարիամ մատովը անոնց ցոյց տուաւ մանկիկը  
որ անոր հարցնեն: Ի՞նչպէս կրնանք խօսիլ, ըսին,  
—օրօրոցի մանկան մը չեա:

31.—Ես Աստուծոյ ծառան եմ, ըսաւ անոնց Յէսուս,  
նա ինձ տուաւ գիրքը և զիս մարդարէ հաստատեց:

32. «Եւ ուղեց որ ես օրհնուած ըլլամ որ տեղ որ  
գտնուիմ, ինձ պատուիրեց աղօթել և ողորմիլ որ-  
չափ որ ապրիմ»:

33. Եւ գորովայի ըլլալ մօրս : Եւ չպիտի թոյլաթէ որ ես ըմբօստ եւ չար ըլլամ» :

34. «Սաղազութիւն պիտի ըլլայ իմ ծնած օրս, մեռած օրս, մեռած օրս եւ յարութիւն առած օրս» :

35. Սա է Մ սրիամի որդին Յրատար, ճշմարտութեան խօսքը խօսելու համար էլ՝, որուն ժասին կը կասկածին :

36. Աստուած դաւակ չկրնար ունենալ : Հեռու այս հայնոյթ թիւնը իր փառքէն : Երբ բան մը որոշէ կրտէ «եզի՛ր» եւ կըլլայ :

37. Աստուած իմ Տէրս է նաև ձեր : Պաշտեցէ՛ք զայն : Այս է ուզիլ ճամբան :

38. Կուսակցութիւնները կարծիքով կը զանազանին իրարմէ : Վայ անոնց որոնք չեն հաւատար մեծ օրուան գայտեանը :

39. Անոնց իմացու՛ր, անոնց ցոյց տո՛ւր օրը, յորում մեր առջև պիտի գան : Այսօր չարերը յայտնի մոյորութեան մէջ են :

40. Անոնց ազգարարէ զՂու՛մ, օրի մասին այն օրի մասին յորում գործը պիտի վճառի, երբ իրենք անհոգ կը գտնուին ու չեն հաւատար :

41. Մենք պիտի ժառանգենք երկիրը եւ բոյոր անոր վրայ գտնուածները, անոնք մեզ պիտի վերագառեն :

42. Գիրքին մէջ լիչէ՛ Աբրահամը, որ արդար եւ մարգարէ էր :

43. Եւ օր մը իր հօրը ըսաւ. «Տայր իմ, ի՛նչու կը պաշտես այն որ ոչ կը լսէ, ոչ կը տեսնէ եւ ոչ ալ բանի մը կրնայ ծածայել» :

44. «Հայր իմ, մաս մը գիտութիւն ինձ յայտնուած է, զոր դու չես գիտեր : Ինձ հեռակէ՛, ես քեզ ազգիդ ճամբու մը պիտի առաջնորդեմ» :

45. «Հայր իմ, սատանային մի ծառայեր, վասնզի՛

անիկա Ողորմածին դէմ ապստամբած է» :

46. «Հայր իմ, կը վախնամ որ Ողորմածին պատիժը քեզ հասնի, եւ դու Սատանային ծուխը ըլլաս» :

47. Հայրը պատախանսց անոր. «Ուրեմն դուն կը հակառակիս իմ աստուածներուն, ո՛ր Աբրահամ, եթէ ասկէ չդադրիս, քեզ կը քարկոծեմ : Հեռացի՛ր ինձմէ երկար տարիներ» :

48. — Սաղազութիւն ըլլայ քեզ բաւ Աբրահամ ներողութիւն պիտի խնդրեմ իմ Տիրոջմէ քեզ համար, վասնզի նա ինձ բարեազակամ է :

49. «Կը հեռանամ քեզմէ եւ այն աստուածներէն որոնց դու կաղթես Աստուծմէ դատ : Ես իմ Տիրոջս պիտի աղօթեմ թերեւ թշուառ չըլլամ Տիրոջս աղօթելով» :

50. Եւ երբ նա անոնցմէ եւ աստուածներէն բաժնուեցաւ, որոնց կալօթէին, մենք անոր տուինք Իսահակը եւ Յակոբը, եւ զանոնք, երկուքն ալ մարգարէներ ըրինք :

51. Մենք անոնց շնորհեցանք մեր ողորմութեանէն եւ անոնց տուինք բարձր ճշմարտախօս լեզու :

52. Գիրքին մէջ յիչէ՛ նաև Մովսէսը : Սա մաքուր էր, զրկուած մարգարէ էր :

53. Մենք զանի կանչեցինք Մինա լեռան աջ կողմէն, եւ զանի մեզ մօտեցողցինք իրեն հետ գազանի տեսակցելու համար :

54. Մեր ողորմութեամբը անոր տուինք իր եղբայրը, Ահարոնը :

55. Գիրքին մէջ խօսէ նաև Իսմայիլի մասին : Եւ հաւատարիմ էր իր խոստումներուն եւ զրկուած մարգարէ էր :

56. Եւ կը հրամայէր իր ժողովուրդին աղօթք եւ ողորմութիւն : Եւ հաճելի էր իր Տիրոջ առջև :

57. Եւ յիչէ գիրքին մէջ Իսիրիսը, որ արդար մարգարէ էր :

58. Մենք զանի բարձր տեղ մը հանեցինք.

59. Ահա անոնք զորս բարիքով լեցուցած է Աստուած. ասոնք Աղամի սերունդէն մարդարէներ են, ասոնք էին որ մենք Նոյին ճեա տապանը զրինք և որոնք Արրատի և Իսրայէլի սերունդէն են. զորս առաջնորդած և ընտրած ենք. Երբ անոնց կը պատմուէր Ոլորմածի նշանները, անոնք կը խոնարհուին լալազին երկրպագելով:

60. Անոնցմէ յետոյ սերունդ մ'եկաւ, որոնք ձրգեցին աղօթքը ու ճեակեցան իրենց ախորժածին: Անոնք չարքի պիտի հասցիւրին:

61. Բայց որոնք որ Աստուծոյ կը վերադառնան, կը հուստան ու բարիք կրնեն, զրախա պիտի մըտնեն և անոնք բնաւ չպիտի անխառնին:

62. Անոնք Եղեմի զրախաը պիտի մտնեն, զոր Ոլորմածը խոստացած է իր ծառաներուն: Անոր խոստումը պիտի կատարուի:

63. Հոն անոնք փուճ խօսք մ' չպիտի լսեն, ալ Խաղաղութիւն բառը: Աստուած և իրիկուն կերակուր պիտի ստանան:

64. Այսպէս են այն դրախտները որ մենք պիտի տանք իբր ժառանգութիւն մեր ծառաներէն անոնց որոնք մեզմէ կը վախնան:

65. Մենք միայն քու Տիրոջ նրամանովը վառ կը իջեցնենք: Միայն անորն են մեր և տեր առջեր կզածները և այս երկուքին մէջ տեղիները: Եւ քու Տէրըդ բնաւ մտաւցիտ չէ:

66. Նա է Տէրը երկնից և երկրի և անոնց մէջ գտնուածներուն: Պաշտէ՛ զանի և հաստատ եզիր պաշտումըդ մէջ: Գրտե՛ս մէկը նոյն Ալլահ անունը ունեցող:

67. Մարդս կըսէ, «Երբ որ մեռնիմ, կրկին ո՞ղջ պիտի ելլեմ»:

68. Ուրեմն մարդս չիչե՞ր, որ զինքը ոչինչէ ստեղծած ենք:

69. Կ'երդնում քու Տիրոջմով, որ պիտի համախմբենք բոլոր մարդիկը և դեերը, յետոյ զանոնք պիտի դնենք դժոխքին շուրջը ծնրադրեալ:

70. Յետոյ ամեն մէկ խումբէ պիտի զատենք այնպիսիները որոնք աւելի ապստամբներ եղած են դէպի Ոլորմածը:

71. Եւ մենք աւելի լաւ կը ճանչնանք այրելու արժանի եղողները:

72. Չեղմէ մէկը չկայ որ հոն չնետուի. այն քու Տիրոջ կողմէ որոշեալ վճիռ մըն է:

73. Յետոյ պիտի ազատենք երկիւզածները և պիտի թողունք հոն չարերը ծնրադրեալ:

74. Երբ մեր լստակ յայտնութիւնները կը կարդացուին անհաւատներուն, անոնք կըսեն հաստացեալներուն. «Մեր երկու խումբէն ո՞րը քա՛ծրագոյն տեղը գրաւած է, և լաւ վիճակ ունի»:

75. Ահ, անոնցմէ առաջ քանի՞ ցեղեր բնաջնջած ենք, որոնք հարստութեամբ և փառքով գերազանց էին:

76. Ըսէ անոնց «Աստուած պիտի երկարէ կեանքը մոլորութեան մէջ եղողներուն»:

77. Մինչև այն վայրկեանը, յորում իրենց աչքեռովը պիտի տեսնեն այս աշխարհի մէջ կամ վերջին դատաստանին իրենց սպառնացուած պատիժը: Այն ատեն պիտի հասկնան թէ ով պիտի գրաւէ աւելի գէշ տեղը և ով է տկար ժողովուրդով:

78. Աստուած պիտի աւելցնէ լաւ առաջնորդութիւնը անոնց որոնք ուղիղ առաջնորդուած են:

79. Տեսական բարի գործերը աւելի արժէք ունին Տիրոջ առջև, լաւ վարձք և հատուցում ստանալու համար:

80. Տեսա՞ր դու զայն որ չէր հաւատար մեր նը-  
շաններուն և կրօէր «ես հարստութիւն և զաւակներ  
պիտի ունենամ» :

81. Եւ գիտե՞ գաղտնիքները . կամ Աստուծոյ հետ  
պայմանաւորուած է որ իր ըսածին պէս ըլլայ :

82. Անպատճառ մենք կը դրենք անոր խօսքերը  
և կաւելցնէնք անոր պատիժը :

83. Մենք պիտի ժողանգենք անոր բոյոր ինչքը .  
և ինք չքաւոր պիտի գայ մեր առջևը :

84. Անոնք Աստուծմէ զատ ուրիշ աստուածներ  
առին որ իրենց նեցուկ ըլլայ :

85. Այդ աստուածները պիտի ուրանան իրենց  
եղած պաշտամունքը . և անոնց հակառակորդ պիտի  
ըլլան :

86. Չտեսա՞ր որ մենք զրկած ենք սատանաները  
դէպի անհաւատներու զանոնք չարութեան գրգռե-  
լու համար :

87. Ուստի դու մի աճապարեր անոնց մասին .  
անոնց օրը մենք կը հաշուենք :

88. Այն օրը մենք պիտի համախմբենք բարեպաշտ  
մարդիկը Ողորմածին առջև ամենայն պատուաւոր-  
ութեամբ :

89. Եւ այն օրը յանցաւորները զժողովք պիտի  
քչենք :

90. Ողորմածին հետ դաշնագրութիւն մը ունե-  
ցողներէն զատ և ոչ մէկը չպիտի կրնայ բարեխոս-  
ութիւն գանել :

91. Կ'ըսես թէ «Ողորմածը զաւակներ սւնի» :-  
Դուք այլանդակութիւն կը խօսիք :

92. Քիչ կը մնայ որ երկինքը պատուի այդ խօս-  
քերէն և երկիրը ճեղքուի և լեռները կտրծանին :

93. Անոն համար որ Ողորմածին սրբի մը կը վե-  
րագրեն : Բայց նա պէտք չունի որդի ունենայու :

94. Երկնից մէջ և երկրի վրայ բոյոր գտնուածնե-  
րը Ողորմածին ծառաներն են : Եւ զանոնք բոյորը  
հաշուած ու համբած է :

95. Ամենն այ անոր առջև պիտի ներկայանան յա-  
րութեան օրը առանձին :

96. Որոնք որ հաւատացած և բարիք գործած են,  
նա պիտի սրբէ զանոնք :

97. Գուրանը քու լեզուով տայով դիւրացուցինք  
որ դուն անով աւետիս երկիւղածներուն գեղեցիկ  
խոստումներ և սպառնաս կոռարար ժողովուրդ-  
ներուն :

98. Ո՛րքան սերունները մենք բնաջնջած ենք :  
Կրնա՞ն անոնցմէ փնացած մարդ մը գտնել : Լսեցի՞ր  
անոնցմէ մէկին ամենաթեթև մրմունջ մը արտասա-  
նելը :



Ի Գ Լ Ո Ի Խ

(ՍՈՒՐԷԹԻԻԼ ԹԱՀԱ)

Մէքէալյան, հարիւր երեսուն հինգ պատգամ

Յանուն Աստուծոյ գթածի եւ ողորմածի

1. Թ . Հ . Մենք Գուրանը թեզ չզրկեցինք քեզ  
դժբաղդ ընելու համար .

2. Այլ իբր խրատ վախցողներու համար .

3. Այն զրկուեցաւ աշխարհը և բարձր երկինքը  
ստեղծողէն :

4. Այն Ողորմածէն որ կը բազ'ի գահին վրայ .

5. Անոր զը պատիանին երկնից մէջ և երկրի վը-  
րայ գտնուածը, եր'ուքըն մէջ տելը եւ իւր  
նին տակինը :

- 6. Եթէ ձայնդ բարձրացնես, անբռնար է. Աստուած գիտէ թէ յայտնին և թէ գաղանին:
- 7. Աստուած, անկէ զատ ուրիշ աստուած չկայ քնաւ: Ան ունի ամենէ գեղեցիկ անուանները:
- 8. Դու լսեցիր Մովսէսի պատմութիւնը:
- 9. Երբ կրակ մը տեսաւ, ըսաւ իր ընտանիքին. «Կեցէք հոս, ես կրակը տեսայ»:
- 10. «Կարելի է անկէ ձեզ կր բերեմ խանձած կօշիկներ կամ կրնամ կրակին օգնութեամբը ճամբուն մէջ առաջնորդուիլ:
- 11. Եւ երբ անոր մօտեցաւ, ձայն մը կոչեց զայն, «Ո՛վ Մովսէս»:
- 12. Ըշմարիտ որ ես քու Տէրդ եմ հանէ կօշիկներդ, դու թօղայի սուրբ հովիտին մէջն ես:
- 13. «Ես քեզ ընտրեցի: Ուշադրութեամբ մտիկ ըրէ ինչ որ քեզ պիտի յայտնուի:
- 14. Ես Աստուածն եմ. ինձմէ զատ աստուած չըկայ: Ուրեմն զիս պաշտէ՛ և աղօթքը ըրէ իմ յիշատակիս»:
- 15. Վասնզի վերջին ժամը պիտի գայ (պէտք է որ զայն քեզ յայտնեմ):
- 16. Որպէս զի ամէն անձ իր գործքին չափով վարձաբուրի:
- 17. «Այն որ չ'աւատար վերջին ժամուն հասնելուն և իր կիրքերուն կը հետևի, չկրնար քեզ ճշմարտեմն չեղեցնել եթէ ոչ կը կորսուի»:
- 18. «Ո՛վ Մովսէս, ինչ ունիս աջ ձեռքիդ մէջ.
- 19. Այս իմ գաւազանս է, ըսաւ, որուն վրայ կը կռթնիմ և անով ժառերու ճիւղերը կը քաշեմ հօտիս համար և այն ուրիշ ծարպութիւններ ալ կընէ ինձ:
- 20. Աստուած ըսաւ, «Մէկսէ՛ս, նետէ՛ զայն».
- 21. Եւ Մովսէս նետեց, և ա՛ն այն օձ մեղաւ սկիւտ վազել:

- 22. Աստուած ըսաւ, բռնէ՛ զայն և մի վախնար, մենք զայն հին վիճակին կը վերածենք:
- 23. Զեռքդ ծոցդ դի՛ր, ան ճերմակ պիտի ելլէ անկէ, առանց մեասուելու: Այս քեզի երկրորդ նըշան ըլլայ:
- 24. Յետոյ աւելի մեծ հրաշքներ քեզ ցոյց պիտի տանք:
- 25. Գնա Փարաոնը գտիր նա ըմբոստացեալ է:
- 26. Տէ՛ր իմ ըսաւ Մովսէս, սիրտիս յուզումը հանդամեցուր.
- 27. Եւ իմ, գործս դիւրացուր.
- 28. Եւ լեզուիս կապը քակէ.
- 29. Որպէսզի իմ խօսքս հասկնայ.
- 30. Ինձ խորհրդական մը տուր իմ ընտանիքէս»:
- 31. Որ Ահարոն եղբայրս ըլլայ.
- 32. Զիս անով զօրացուր.
- 33. Եւ զանի ինձ ընկերացուր գործիս մէջ.
- 34. Որպէսզի մենք անգաղար դովաբաններ քեզ և քեզ իշխնք միշտ.
- 35. Վասն զի դու կը տեսնեն մեզ:
- 36. Աստուած պատասխանեց «Ո՛վ Մովսէս, խընդիրքդ կը կատարեմ,
- 37. Արդէն, ուրիշ տնգամ, բարեացակամ գտնուած ենք քեզ հանդէպ.
- 38. «Երբ մօրդ լսելի ըրինք սա խօսքերը.
- 39. «Տղադ սնտուկի մը մէջ դիր և զայն ծովին երեսը ձգէ, ծովը զայն ափը պիտի բերէ: Իմ և քու թշնամիդ զայն պիտի առնէ. վասն զի քեզ համար ոէր դրած եմ սրտերու մէջ:
- 40. Եւ կուզեմ որ դու կրթուիս իմ աչքիս առջեւը:
- 41. Օր մը քոյրդ կը պոտէր ըսելով, «Կուզէ՞ք որ ձեզ ցոյց տամ մէկը որ զանի խնամէ». Այն ատեն

մենք քեզ յանձնեցինք քու Խորհ. որ քեզմով մը-  
խիթարուի ու շարամի: Յետոյ դուն մարդ մը ըս-  
պանեցիր. քեզ ազատեցինք դժբաղդութենէ և քեզ  
փորձեցինք շատ մը փորձութիւններով:

42. Գուն շատ տարիներ մնացեր Մատիանցիներու  
մէջ յետոյ հոս եկար հրամանով մը. ո՛վ Մովսէս

43. Ես քեզ ինձ համար բնորեցի.

44. Գնա՛, գու և եղբայրդ իմ հրաշքներովս. և  
երբէք անհող չըլլաս զիս յիշելու:

45. Գացէ՛ք դէպի Փարաօնը, որ ըմբոսս է.

46. Անոր քաղցր լեցումով մը խօսէ.

47. Անոնք պատասխանեցին. «Ո՛վ Տէր, մենք կը  
վախնանք ոտ մեր բարկանայ կամ չարիք բնէ:

48. Մի վաննաք. ըսաւ, ես ձեր հետն եմ, կը լը-  
սեմ ու կը տեսնեմ:

49. Գացէ՛ք ու բսէ՛ք «Մենք քու Տիրոջմէջ զըր-  
կուած ենք. Իսրայէլի որդիքը մեզ հետ զրկէ, և զա-  
նոնք մի տանջեր: Մենք քեզ կազանք քու Տ՛րո.  
Չրդ կողմէ նշանով մը: Խաղաղութիւն անոր վրայ,  
որ ուղիղ ճամբուն կը հետեի»

50. Արդէն մեզ յայտնութիւն եղած է թէ տան-  
ջանք վերապահուած է անոնց որոնք մեզ ստող կը  
համարեն և մեզմէ երես կը դարձնեն.

51. «Ուրեմն ո՛վ է Տէրդ» հարցուց Փարաւոն Մով-  
սէսին:

52.—Մեր Տէրն այն է, որ ամեն ինչ ստեղծ է և  
առաջնորդած:

53. Նա ալ ըսաւ, «ուրեմն ի՞նչ կուզէին առջի  
սերունդները»:

54. Ըսաւ, անոր գիտութիւնը Աստուծոյ քով է  
և Գիրքին (\*) մէջ փակուած:

55. Այն է Տէր Տէրը, որ երկիրը ձեզ տուաւ իբր

(\*) Յաւանական գիրքէ մասին է, որ երկնքը էր հայ.

օրորոց և որ ճամբաներ գծեց ձեզ համար, որ ջուրը  
կիջեցնէ: Այս ջուրով մենք կը բուսցնենք զանազան  
բոյսեր:

56. Մնանեցէ՛ք և սնուցէ՛ք ձեր հօտերը. Ասոր մէջ  
նշտններ կան իմաստու՛մարդոց համար:

57. Մենք ձեզ հողէն ստեղծած ենք և ձեզ հոն  
պիտի վերադարձնենք, և երկրորդ անգամ ձեզ անկէ  
զուրս պիտի հանենք:

58. Անոր ցոյց տուինք մեր հրաշքները, բայց նա  
զանոնք սուտ համարեց և չհաւատաց:

59. Փարաւոն ըսաւ, «Ո՛վ Մովսէս, քու կախար-  
դութիւններովդ եկար որ մեզ մեր երկրէն զո՛ւրս  
հանես»:

60. «Մենք ալ քու դէմդ կախարդութիւն կրնենք:  
Ժամադրութիւն մը տուր մեզի. մենք անկէ չպիտի  
քաշուինք, ոչ ալ դու, որ երկու կողմէ հաւասար  
բաւ»:

61. Մովսէս պատասխանեց. «Տօնի օրը կ'որոշեմ  
ձեզ, որ ժողովորդը հաւաքուած ըլլայ լոյս օրով.

62. Փարաւոն ետ քաշուեցաւ. պատրաստեց իր  
վարպետութիւնները և եկաւ որոշու շրջ:

63. Այն ատեն Մովսէս ըսաւ անոնց «վա՛յ ձեզի.  
Աստուծոյ մասին սուտեր յերուրեղէ զգուշացէ՛ք»:

64. Քանզի նա ձեզ կը պատժէ Որոնք որ սու-  
տեր շինեցին կորուեցուն:

65. Կախարդները խորհրդակցեցան զազանօրէն:

66. Այս երկու մարդերը կախարդներ են. ըսին,  
կուզեն ձեզ վանել ձեր երկրէն կախարդութեամբ և  
ոչնչացնել ձեր վսեմ կրօնքը»:

67. Ուրեմն, ըսաւ Մովսէս, ժողովեցէ՛ք ձեր վար-  
պետութիւնները և եկէ՛ք շարուեցէ՛ք կարգաւ. ով որ  
այսօր յաղթէ երջանիկ է:

68.—Ո՛վ Մովսէս, ըսին անոնք, առաջին անգամ

գաւազանդ դ՞ու կը նեւես, թէ մենք նեւենք:

69. Ըսաւ, դուք առաջ նեւեցէք: Եւ անա այնպէս երեւցաւ որ անոնց գաւազանները ու չուանները կը վազեն անոնց կախարդութեանը ազդեցութեամբ:

70. Մովսէս այն պահուն վախ զգաց ներքուստ:

71. Մենք անոր ըսինք. մի վախնար, վասնզի դուն յաղթող ես:

72. Նեւէ աջ ձեռքդ գանուածք, այն պիտի կլլէ անոնց չինածները. անոնց բրածները միայն մոգական արնետներ են, և կախարհը ուր որ ալ ելթայ չյաջողիր:

73. Եւ մոգերը խոնարհելով ըսին. «մենք հաւատացինք Ահարոնի և Մովսէսի Տիրոջը»:

74. — Ինչպէս դուք անոր հաւատացիք, ըսաւ Փառաւոն, առանց սպասելու իմ թոյլտուութիւնս: Այս ձեր պետը ըլլալու է սր մոգութիւնը ձեզ սովորեցուցերէ: Ես ձեր ձեռքերը և ոտքերը դէմ դիմաց կըտարել պիտի տամ և ձեզ կախել պիտի տամ արծաւենիի ցիւղերէն, որ իմանաք թէ մաղմէ ո՞րը սոսկալի և չտեւական է իր պատիմներով:

75. Մոգերը պատասխանեցին. «մենք յեզ բարձր չենք նկատեր այն հրաշքներէն եւ ոչ ալ մեզ ստեղծողէն, կատարէ ինչ որ որոշած ես դուն միայն այս աշխարհի բաները կրնաս որոշել: Իսկ մենք կը հաւատանք մեր Տիրոջ. որ մեզ ներէ մեր յանցանքները և կախարդութիւնը, որուն դուն ալ մեղսակից ես»: Վասնզի Աստուած յոյժ բարի է և մեայուն:

76. Ով որ յանցանքներով բեռնաւորուած Աստուծոյ առջեւ կը ներկայանայ, դժոխքը պիտի ունենիրեն վարձք: Նո հոն չպիտի մեռնի և չպիտի ապրի:

77. Բայց բոլոր անոնք՝ որ Անոր առջև պիտի ելեն հաւատքով և բարի գործերով, բարձր աստիճան

ներ պիտի գրաւեն:

78. Անոնք դրախտներու միջ պիտի բնակին ուրպէ կառուներ կանցնին. հոն պիտի մնան յաւիտեան: Այս է արդարներուն վարձքը:

79. Մենք Մովսէսին սա յայտնեցինք. «զիչերը ճամբայ ե՛լ մեր ծառաներուն հետ և ծովին մէջէն անոնց չոր ճամբայ՝ ըր բաց»:

80. Մի վախնար յարձակում կրելէ, եւ երկիւղ մի ունենար:

81. Փարաօն զանոնք հետապնդեց իր բանակով, եւ ծովին ջուրերը զանոնք ծածկեցին: Փարաօն իր ժողովուրդը մոլորեցուցած էր, եւ չէր առաջնորդած զայն ուղիղ ճամբուն մէջ:

82. Ո՛վ Իսրայէլի որդիք, մենք ձեզ աղատեցինք ձեր թշնամիէն եւ ձեզ հասցուցինք բերինք Սինայ լեռան աջ կողմը. եւ ձեզ իջեցուցինք մանանան եւ լորամարդին:

83. «Վայելիցէք այն ընտիր բարիքները զորս մենք ձեզ կուտանք, եւ զգուշացէք ծայրայեղութենէ որ իմ բարկութիւնս չթափի ձեր վրայ վասնզի մեր բարձութիւնը որու վրայ որ ինչայ, նա կը կորստի»:

84. «Ես ներող եմ անոր որ կապաշխարհէ, որ բարիք կը գործէ եւ կը հետեւի ուղիղ ճամբուն»:

85. Աստուած ըսաւ Մովսէսին «Ով ձգել տուա՛յսչափ շուտ քու ժողովուրդդ»:

86. — Անոնք (ժողովուրդէս պետերը) իմ քայլերուս կը հետեւին եւ ես կաճապարեմ դէպի քեզ գայ քեզ հաճելի ըլլալու համար:

87. — Մենք փորձեցինք քու ժողովուրդ, Ո՛վ Մովսէս: Մեկնելէդ ի վեր Սամարացիներ զանոնք մոլորեցուցած է:

88. Եւ Մովսէս վերադարձաւ իր ժողովուրդին մէջ քարկայած եւ զղջացած :

89. Եւ ըսաւ. «Ո՛վ ցեղակիցներս, չ'է որ Աստուած ձեզ լաւ խոստում մ'ըրաւ. պայծառը ձեզ երկար թուեցաւ. կամ փափաքեցաք որ ձեր Տիրոջ բարեկութիւնդ վրանի՞ց իյնայ. ասո՞ր համար է որ դուք հակառակ վարուեցաք ինձ եղած խոստումներուն :

90. Անոնք ալ ըսին, «մենք մեղմով չգրժեցինք մեր խոստումները. այլ մեզ յանձնարարուեցաւ բերել շատ մը բաներ մեր զորդերէն. մենք զանոնք մէկտեղ հաւաքեցինք. Սամարացիին, զանոնք կրակը ձգեց եւ անկէ մամնեղ հորթ մը հանեց՝ որ կր բառչէր. եւ ըսին. «սա ձեր Աստուածն է եւ Մովսէսի Աստուածը. Մովսէս զայն մոռցեր է» :

91. Չտեսան որ այն հորթը իրենց չէր պատասխանէր եւ օգտակար չէր կրնար ըլլալ, ոչ ալ կրնար չլուսել :

92. Ահարօն անոնց լաւ կըսէր. «Ո՛վ ցեղակիցներս, ձեզ կը փորձեն այս հորթով. ձեր Տէրը ողորմած է. ինձ հետեւեցէք, եւ իմ հրամաններուս հնազանդեցէք. »

93. — Մենք զայն պաշտելէ չենք գաղբիւր, կը պատասխանէին, մինչեւ որ Մովսէսը մեր քով զանայն :

94. Մովսէս ըսաւ Ահարօնին, ի՞նչ բան արդիւնց քեզ որ ինձ չհետեւեցար. երբ տեսար անոնց մոլորութիւնը Դո՞ւ եւս ինձ անհնազանդ ըլլալ կուղէիր :

95. «Ո՛վ մօրս որդին, ըսաւ Ահարօն, դադրէ մօրուքս եւ մազս քաշելէ. վախցայ որ կըսես» ի՞նչու Իսրայէլի որդիքը ինձմէ բամնեցիր եւ հրամաններս չյարգեցիր» :

96. — Եւ դու, ո՛ր Սամարացի, ի՞նչ մտքի կը ծառայես : Ես պատասխանեց, «ես բան մը տեսայ, զոր անոնք չտեսան. ափ մը փոշի առի առաքեալին» :

(Գաբրիէլ հրէշտակին) ոտքին սակէն, եւ նետեցի հալոցին մէջ. իմ բնական հակումս այդպէս ինձ թեւադրեց :

97. — Հետացի՛ր սակէ, բաւ Մովսէս, ահա սա պատիժը կրես կեանքիդ մէջ. որ բես քեզ հանդիպողին «Մի՛ գպչիր ինձ» : Ես եւ քեզ վերապահուած է զատատան մը որ էէ չես կարող խաւափիլ. Ես չեմ քու չատուածիդ դոր պաշտեցիր մենք զայն պիտի այրենք. փոշի վեղածենք աւ ծօր պիտի նետենք :

98. Չնր Աստուածը միտի Աստուածն է. անկէ դաս աստուած չկայ. իր գիտութեամբ ամենուն կը թափանձէ :

99. Անցածներուն պատմութիւնը այսպէս ըրինք քեզ. եւ մեր կողմէ քեզ զգուշացուցինք :

100. Ո՛վ որ զայն մերժէ յարութեանօրը ծանր յետ մը պիտի կրէ :

101. Յաւիտեան պիտի կրէ զայն Ի՞նչ անտանելի բնօ պիտի ըլլայ այդ յարութեան օրը :

102. Այն օրը երբ փոշը կը հնչէ յանցաւորները պիտի համախմբենք արքային կարգած :

103. Իրարու պիտի փոխան, թէ միայն տասր օր մնացիք աշխարհէ իջալ :

104. Լաւ պիտենք անոնց բաժնը, անոնց պետերը կրուն թէ գուք միայն մէկ օր մնացիք :

105. Կեանքու մասին պիտի հարցնեն քեզ. Ըսէ անոնց. «Տէրս զանոնք պիտի անյայտացէ փոշի պէս» :

106. Չանոնք տախարազ գաշտերու պիտի վերստնէ. ալ չպիտի տեսնան հօն ծուռու մաւս եւ խորատօբորդ տեղեր :

107. Յետոյ պիտի հետեւին զատատանի կոչող ձայնին, եւ որ ծուռութիւն չունի. ձայները պիտի ցածնան Ողորմածին առջեւ. եւ սոքերնուն խշրտոցը միայն պիտի լսես :

108. Այն օրը եւ ոչ մէկուն բարեխօսութիւնը կըն-

դունուի, բացի անոր բարեխօսութենէն որուն Ողոր-  
մածը պիտի թոյլատրէ ընել եւ որուն պիտի թողու-  
թօսիլ:

109. Նա գիտէ անոնց առջեւը եւ ետեւը եղած-  
ները: Մարդիկ իրենց գիտութեամբ դայս չեն բմ-  
բըռներ:

110. Ճակատները պիտի խոնարհին այն ատեն-  
կենդանիին և ինքնագոյին առջեւ: Թշուառ է այն  
սր անիրաւութեան բերը կը գրէ:

111. Ով որ բարեք գործած է եւ հաւատադատ է,  
չվախնար ոչ անիրաւութենէ եւ ոչ վարձքի կորուստէ:

112. Այսպէս մենք արարելէն գիրք մը իջեցու-  
ցինք եւ անով սպառնալիքներ տարածեցինք, որ  
երկիւղած ըլլան, եւ այս Գուրանը անոնց խորհր-  
դածել տայ:

113. Եւ ճշմարտութեան թագաւոր Աստուածը բար-  
ձրացեալ է: Տորչափ յայտնութիւնը կատարեալ չըլ-  
լայ, մի աճապարի կրկնելու Գուրանին պատգամնե-  
րը, եւ բռէ՛, «Տէրը կաւելցնէ իմ գիտութիւնս»:

114. Արդէն մենք Ազամին հետ պայման մ'ունինք  
բայց նա մոռցաւ դայն. մենք զանի հաստատամիտ  
չգտանք:

115. Եւ երբ հրեշտակներուն ըսինք. «երկրպա-  
գեցէ՛ք Ազամին առջեւ» անոնք երկրպագեցին բացի  
հպլիսէն որ մեժեց: Ըսին Ազամինք «սա քու եւ  
կնոյդ թշնամին՝ է. զգուշացէք որ ձեզ դրախտէն  
չվանէ եւ դուք դժբախտ չըլլաք:

116. Դուն հոն ոչ կանօթենաս եւ ոչ մերկ կը-  
մնաս:

117. Չա ծառանար հոն բնաւ, ոչ ալ տարու-  
ի ենէ կը նեղուիս:

118. Բայց սատանան զանի հրապուրեց ու ըսաւ,  
«ե՛ր Ազամ, կուղե՞ս որ քեզ ցոյց տամ ծառն յաւի-

տենականութեան և անսպառ զօրութեան»:

119. Անոնք ծառէն կերան, և իրենց մերկու-  
թիւնը երեւան եկաւ, և սկսան դրախտին տերեւնե-  
րէն հագուստներ կարել: Ազամ իր Տիրոջ անհա-  
ղանդ եղաւ, ու մոլորեցաւ:

120. Յետոյ Տէրը զանի բնտրեց, անոր դարձաւ և  
զանի առաջնորդեց ուղիղ ճամբուն:

121. Նա ըսաւ, «վար բնկէ՛ք դրախտէն բոլորդ,  
որ իրարու թշնամի էք: Օր մը ձեզ ուղիղ ճամբան  
պիտի առաջնորդեմ»:

122. «Ով որ անոր հետեւի, երբէք չպիտի մոլորի  
և չպիտի թշուս աւանայ:

123. «Բայց ով որ իմ խրատներս չցարգեր թշուառ  
կեանք մը պիտի ապրի»:

124. Դատաստանի օրը մենք զանի ատեան պիտի  
բերենք կոյր:

125. Ան պիտի ըսէ, «Տէ՛ր, ի՞նչու զիս կոյր կը  
բերես տառան, ես որ առաջ կը սեննէի»:

126. Նա ալ պիտի ըսէ. «այսպէս պիտի ըլլայ.  
մեր նշաննելը ե յոն քեզ և դեւ զանոնք մոռցար  
այսօր դուն ալ պիտի մոռցուիս»:

127. Մենք այսպէս հատուցում պիտի ընենք այն  
ամեն մարդոց որ կը չափազանցեն, որ չեն հաւա-  
տար Տիրոջը նշաններուն: Միւս աշխարհի պատիժը  
սոսկալի պիտի ըլլայ և մշտական:

128. Անհաւատները չեն գետեր թէ մենք որչափ  
տերունդներ իրենցմէ առաջ բնաջնջած ենք Ասոր մէջ  
նշաններ կան խելացի մարդոց համար:

129. Եթէ Տիրոջ մէկ խօսքը կանխաւ արտասա-  
նուած չըլլար. պատիժը անոնց կը հասնէր և որոշ-  
եալ ժամը եկած կ'ըլլար:

130. Համբերէ անոնց խօսքերուն, և քու Տիրոջ  
փառաբանութիւն ըրէ արեւը ծագելէ և մարը մանել:

առաջ և գիշերուան մէկ պահուն և գովարանէ՛ զանի օրուան ծայրերուն անոր հաճե՛ի ըլլալու համար:

131. Աղք մը գննք այն զանազան ինչքերուն գործ վայելել կուտանք ոմանց այս աշխարհի վրայ զանոնք փորձելու համար: Գու Տիրոջ քեզ տուած չսփր յաւագոյն է և տեսկան:

132. Այո՞ւմք պատուիրէ քու բնատնիքիդ և դուն այ ըրէ: Մենք քեզմէ կերակուր չենք ուզեր. մենք քեզ պիտի կերակրենք: Եւ երկիւզած ութեան վերջը բարի է:

133. Անոնք կրտեն. «Ի՞նչու իր Տիրոջ կողմէ չըբոջ մը մեզ ցոյց չտար: Բայց անոնք յարանը չըբոջ չտեսան ինչ գիրքերուն սէջ»:

134. Եթէ զանոնք պատեկով ընաջնջած ըլլայինք Մուհամմէտէն առաջ, պիտի ըսէին, «Ի՞նչու մեզի մարգարէ մը չըրկեցիր: Եթէ զըրկէիրք, պիտի չեւեւինք յու իրաաներուդ նուաստանայէ և ածօթանար ըլլայէ առաջ»:

135. Ըսէ՛, «Մենք ամենքս վե՛ջինք կոպատենք, զուք ալ սպասեցէք. և պիտի յասկտար թէ մեզմէ որք ուզիդ ճամբուն կը չետեր և որք է առաջնորդուած»:



### ԻԱ. Գ Լ Ո Ի Խ

(ՍՈՒՐԵԹԻՆԷ — ԷՆՊԻԱ)

Մէքէալիան, հարիւր ասնեւելու պասգամ

Յանուն Աստուծոյ զթածի ողորմածի

1. Մարդոց հաշու տալու ժամանակը կը ժօտենայք բայց անոնք անհազու՞թեամբ երես կը զարձնեն:

2. Իրենց Տիրոջ կողմէ չէ եկած նոր խրատ մը որ անոնք չլսեն Տիմիայն ծաղրելու համար:

3. Անոնց սրտերը անով ժամանց կընեն: Չարերը իրարու կը փսփսան. «Սա Մուհամմէդը միթէ մեզի պէս մարդ մը չէ՞. անոր կախարչութիւններուն հան. գիտատե՛ս պիտի ըլլաք. կը տեսնէք սակայն թէ ինչ է այն»:

4. Նա բաւ. «Իմ Տէրս գիտէ երկնքի ու երկրի վրայ եղած խօսքերը. նա զը լսէ և զրտէ բոլորը»:

5. Աւելի ևս կըսեն անոնք, «Գու՛րանը ցնորքներու հաւաքածոյ մըն է զոր ինք կը նստէ. քայք բռնաստեղծ մըն է. եթէ ոչ թալ նրաչք մը ցոյց տայ ինչպէս որ ինչ մարգարէները կուտային»:

6. Մեր բնաջրնջ ըրած քաղաքները չեն հաւատաջած և չպիտի ալ հաւատան:

7. Ինչպէ՞ առաջ մենք միայն մարդիկ զրկած ենք որոնք յայտնութիւններ ընդունած են: Եթէ դուք չէք գիտեր, հարցուցէք Գուրք ունեցող մարդոց:

8. Մենք անոնց չտուրնք անունի մարմին մը որ կերակուր չուտէ. անոնք անմահ չէին բնաւ:

9. Մեր անոնց ըրած խոստումները կատարեցինք. և զանոնք ազատեցանք, նաև որք որ ուզեցինք, և բնաջնջեցինք օրինազանցները:

10. Չեզ զրկեցինք գիրք մը որ ձեզ համար յիշատակներ կը պարունակէ. չէ՞ք գիտեր:

11. Որչա՛փ չարագործ քաղաքներ մենք կործանած ենք և ուրիշ ժողովուրդներ տեղը բերած ենք:

12. Երբ որ անոնք մեր հարուածներու ծանրութիւնը զգացին, փախան իրենց քաղաքներէն:

13. Ե՛ր փախչի՛ք, վերադարձէք ձեր զուարճութիւններուն և ձեր բնակարանները: Գուք պիտի հարցաքննուիք:

14. Անոնք կը պատասխանէին, «Վա՛յ մեզ, մենք չարեր էինք»:

45. Եւ անոնց այս թախանձ սնքը չդադրեցաւ մինչև որ մենք զանոնք հնձուած ու չորցած հասկի պէս տարածեցինք :

46. Ընկերք երկիրքը ու երկիրը և անոնց մէջ եղաւ ծնեւոր չենք ստեղծեր մեր զուարճութեան համար :

47. Եթէ մենք զուարճանալ ու զէկնք, կրնայինք մեր մէջ գտնել զուարճութիւնը, եթէ այդպէս բնել ու զիկնք :

48. Բայց մենք ճշմարտութիւնով ստուծիւնք կը ջրենք և այն անմիջապէս կոչնչանալ. և վայ ձեզ այն բանի համար որ Աստուծոյ կը վերագրէք :

49. Անոր կը պատկանի ամեն էակ երկնից մէջ և երկրի վրայ : Անոր քով գտնուողները զանի պաշտելով չեն հպարտանար և չեն ձանձրանար :

20. Անոնք զիչեր և ցերեկ զանի կը փառաբանեն, և ոչինչ չեն նարեր ի հաչիւ անոր :

21. Անոնք երկրէն առեր չեն իրենց աստուածները. աստուածներ մտեալներ յարուցանուլ :

22. Եթէ երկնից և երկրի միջև Աստուծոմէ զատ ուրիշ աստուած մ'ըլլար, անոնք կորսուած կըլլային : Գառն ախրոջ փառքը բարձ է քան ինչ որ անոր կը վերագրեն :

23. Անոր չպիտի հարցուի իր գործերուն հաչիւր. իսկ նա պիտի հարցնէ անոնց հաչիւր :

24. Աստուծոմէ զատ ուրիշ աստուածներ կը պաշտեն : Ըսէ՛ անոնց «ձեր ապացոյցները բերէք : Սա ինձ հետ և ինձմէ առաջ ապրողներուն ուզուած յայտնութիւնն է. բայց անոնցմէ շատերը չեն ճանչնար բնաւ ճշմարտութիւնը և կը մերժեն :

25. Եւ մենք քեզմէ առաջ ուրիշ մարգարէ չենք զրկեր, որուն յայտնուած չըլլայ թէ ինձմէ զատ ուրիշ Աստուած չկայ : Ուրեմն զիս պաշտեցէք :

26. Անոնք (անհասարկները, արիւստեաները) կը բեն :

«Ողորձածը զաւակներ ունի» : Բաւ՛ լիցի. անոնք անոր պատուաւոր ծառաներն են :

27. Անոնք խօսքով անկէ առաջ չեն անցնիր և կը գործադրեն իր հրամանները :

28. Նա զիտէ անոնց անցեալը և ապագան, և անոնք չեն բարեխօսեր :

29. Բացի անկէ որուն նա հաճի, և անոնք կը զողան անոր վայտէն :

30. Եւ ով որ ըսէր, «ես աստուած մը եմ Աստուծոյ քով» մենք անոր դժօխքը կուտայինք իրը հասուցում : Այսպէս կը պատժենք մենք չարերը :

31. Անհաւատները չեն տեսներ որ երկիրքը ու երկիրը մէկ գունդ էր և մենք զանոնք զատեցինք. և Զուրի մըջոցաւ կեանք կուտանք ամեն բանի : Անոնք չեն հաւատար :

32. Երկրի վրայ լեռներ հաստատեցինք. որպէսզի չշարժի մարդոց հետ : Անոր մէջ ուղիներ չինեցինք անոնց ճամբորդութեան համար, որ կարենան առաջնորդուիլ :

33. Երկիրքին կամալը չինեցինք հաստատօրէն և սակայն անոնք երես կը զարձեն այդ նշաններէն :

34. Նա է որ ստեղծած է զիչերը և ցերեկը արեւը և յուսիքը. սա աստղերն իւրաքանչիւրը իր յատուկ շրջանին մէջ կրնաինալ :

35. Բեզմէ առաջ ոչ մէկ մարդու չենք շնորհած յախանական կեանք : Եթէ դու մեռնիս, անոնք կը կարծեն թէ անմահ պիտի ըլլան :

36. Ամէն հօգի մարդ պիտի ճաշակէ, և մենք ձեզ կը փորձենք չարքով և բարեքով. և դուք մեր քով պիտի վերադառնաք :

37. Երբ անհաւատները քեզ տեսնեն, պիտի ծաղրեն ըսելով, «Այս մարդն է որ կանարգէ ձեր աստ-

տուածնեքր» : Եւ անոնք չեն հաւատար Ողորմածի  
մասին ըսուածին :

38. Մարդս աճապարանօք ստեղծուած է. բայց  
ձեզ ցոյց պիտի տամ նշաններս : Ուրեմն դուք մի  
աճապարէք :

39. Անոնք կ'ըսեն « Երբ պիտի կատարուի այդ  
խոստումը . ըսէք , եթէ անկեղծ էք » :

40. Մի եթէ անհաւատները գիտնային ժամը յու  
րում չպիտի կրնան կրակը իրենց դէմ քերէն ու կրու  
նակէն հեռացնել , և օգնող չպիտի ունենան :

41. Պատիժը յոնկործակը պիտի գայ անոնց և  
բնաջինջ պիտի ընէ անոնք չպիտի կրնան զայն հե  
ռացնել , ոչ ալ պայմանաժամ առնել :

42. Քեզմէ առաջ ալ մարգարէները ծաղրուած  
են , բայց ծաղիկն հեռանալը եղող պատիժը պաշարած  
է ծաղրողները :

43. Ըսէ անոնց , « ո՞վ կրնայ ձեզ պաշտպանել գի  
չերը կամ ցերեկը Ողորմածին հարուածներէն » : Բայց  
անոնք կը սերժեն Տրոս խրատները :

44. Անոնք ունին զիդներք մեզ դէմ պաշտպանե  
լու կարող աստուածներ : Անոնք իրենց չեն կրնար  
օգնել , և ոչ ալ բնկերներ գտնել մեզ պէմ :

45. Այո՛ , սենք այդ մարդոց և իրենց հայրերուն  
վայելի տուած ենք աշխարհի ինչքեր որչափ որ  
տեէ իրենց կեանքը : Չեն անանք որ մենք անհա  
ւատներու երկիրը կուզանք և անոր ստամանները կը  
սեզ ենք ամեն կողմէ : Ուրեմն անոնք են աւելի զօ  
րաւորները :

46. Ըսէ անոնց . ես ձեզ կը քարոզեմ ինչ որ ինձ  
խայտնուած է . բայց խալիբը չեն լսեր բնու երբ կը  
քարոզուի :

47. Երբ Աստուծոյ պատիժին միայն մէկ չունչը  
զանոնք զարնէ . պիտի աղաղակեն : « աւա՛ղ մեզի :

մենք չարագործներ էինք » :

48. Յարութեան օրը արդարութեան կշիռներ պի  
տի գնենք , ոչ մէկ հողիլ անիրաւութիւն չըլլար :  
Եթէ մանանկիս հատի մը ծանրութեամբ եսկ ըլլայ :  
մենք զայն կը բերենք . բուական է որ մենք հաս  
տատած ըլլաւք այդ հաշիւը :

49. Արդէն մենք Մովսէօին և Աւարոնին տուած  
ենք սարբերութիւնը և լոյսը և խրատ մը երկր  
պաշտներուն համար :

50. Որոնք կը վախնան իրենց Տիրոջմէ ի սրտէ և  
կը գողան վերջին ժամէն :

51. Եւ այս գիրքը օրհնեալ խրատ մըն է . զոր  
մենք բջեցուցած ենք : Դուք կուրանա՞ք զայն :

52. Աւելի առաջ Արքայամին տուած էինք ուզե  
ցոյց և զանի կը ճանչնայինք :

53. Երբ նա ըսաւ իր հօրը և իր ժողովուրդին ,  
թէ ինչ կը նշանակէ այս արձանները զորս կը պաշ  
տէք այնքան եւսանդով :

54. Անոնք ըսին , « Տեսած ենք որ մեր հայրերն  
ալ զանոնք կը պաշտէին » :

55. Դուք և ձեր հայրերը , ըսաւ Արքայամ , մու  
լորութեան սէջ էք :

56. Եւ անոնք ըսին . « ճշմարտութեամբ եկած ես ,  
թէ կատակ կընես » :

57. - Այո՛ , ձեր Տէրը երկնից և երկրի Տէրն է ,  
որ զանոնք ստեղծած է , և ես ալ կը վկայեմ առ  
այդ :

58. « Եւ Աստուած վկայ , որ ձեր կուռքերուն խաղ  
մը կրնամ երբ երեսնիդ ուրիշ կողմ դարձնէք :

59. Եւ զանոնք կտոր կտոր ըրաւ . բաց՛ մեծէն  
որ անոր գօռուան .

60. Անոնք ըսին . « Սա որ մեր աստուածներուն  
հետ այսպէս վարուեցաւ անիրաւ է » :

61. «Լսեցինք որ Արքայամ անունով երթասարք մը մեր աստուածները կանարգէ»:

62. Միւսներն ալ ըսին. «Գանի ժողովուրդին առջև բերէք որ բոլորը վկայ ըլլան»:

63. Եւ ըսին «Արքայամը դու ես, որ մեր աստուածներուն հետ այդ գէտ վարուեր ես»:

64. Եւ ալ ըսաւ, ա՛նա ձեր աստուածներէն մեծագոյնը, անոնց հարցուցէք ու տեսէք թէ պիտի խօսին»:

65. Եւ անոնք իրարու խօսեցան բսելով, «արդարեւ դուք անիրաւներ էք»:

66. Յետոյ դառնալով իրենց հին սնտին, ըսին Արքայամին, «Դու լաւ գիտես որ կուսքերը չեն խօսիր»:

67. Եւ ըսաւ, «Դուք Աստուծմէ զատ ուրիշներ պիտի պաշտէ՞ք, սրոնք ձեզ օշտակար չեն ըլլար բանով մը, ոչ ալ կը յիստեն: Ամօթ ձեզի և ձեր պաշտածներուն: Չէ՞ք հասկնար»:

68. — Սյրեցէք զանի, աղա՛սկեցին. և օգնեցէք մեր աստուածներուն, եթէ գործ տեսնել կուզէք»:

69. Եւ մենք ըսինք, «Ո՛ր կրակ, զով բրէ՛ անոր, որ Արքայամ հանգարտ մնայ»:

70. Անոնք անոր որոգայթ մը լարելի սեղեցին, բայց մենք զանոնք ամօթանար ըրինք:

71. Զանի ազատեցինք, ինչպէս Ղովար, և տեղափոխեցինք երկիր մը, որուն բոլոր մարդիկը օրհնած էինք:

72. Անոր տունք Իսահակը և Յակոբը, իբր ընծայ, և զանոնք արդար մարդիկ ըրինք:

73. Զանոնք պետեր ըրինք՝ մարդիկը ըստ մեր հրամանին առաջնորդելու կոչուածով, և անոնց ներչնչեցինք բարիք գործել, աղօթք ընել՝ ողորմութիւն տալ և մեզ պաշտել:

74. Ղովարն տունք ուժ և իմաստութիւն. զանի ազատեցինք չարագործութեանց քաղաքէն: Արդարեւ այն չարագործ և գէշ ժողովուրդ մըն էր:

75. Զանի մեր սղորմութեան մէջ առինք, վասնզի արդարներէն էր:

76. Յիշէ՛ նոյն, երբ նա մեզ կանչեց, անոր պատասխանեցինք և ազատեցինք զինքը ու իր ընտանիքը մեծ գժքաղչութենէ:

77. Անոր օգնեցինք իր ժողովուրդին դէմ, որ մեր նշանները սուտ կը համարէր. անոնք չարեր էին և բոլորը խեղդեցինք:

78. Յիշէ՛ նաև Դաւիթը ու Սողոմոնը, երբ դատաստան կընէին արտի մը համար, յորում ցեղի մը հօտերը իջասներ տուած էին: Մենք ներկայ էինք անոնց դատաստանին:

79. Սողոմոնին իմաստութիւնը տուն այս գործին, և երկուքին ալ իշխանութիւն ու զիտութիւն՝ տունք և ստիպեցինք լեռները ու թռչունները երդելու Դաւիթին հետ մեր գովարանութիւնը: Մենք գործեցինք:

80. Դանիթին սովրեցուցինք զբաներ շինելու արհեստը ձեզ համար. ձեզ պաշտօնակներ համար ձեր իրարու ըրած չարիքներէն: Երախտագէտ չէ՞ք:

81. Բուռն հովը հնազանդեցուցինք Սողոմոնին, որուն հրամանովը կը հոսէր գէպի՝ մեր օրհնած երկիրը, Մենք գիտէինք ամէնը:

82. Եւ սատանաներէն ոմանք անոր հնազանդեցուցինք որ ծովին մէջ խորասուզէին անոր համար մարգարիտ որսալու և կը կատորէին նաև սերիչ հրամանները: Մենք զը հսկէինք անոնց վրայ:

83. Յիշէ՛ Յոբը, երբ ազալակեց իր Տիրոջ, «անա ինձ թշուառութիւն եկաւ, բայց դու սղորմածներուն ամենաողորմածն ես»:

84. Մենք անոր պատասխանեցինք և ազատեցինք զինքը ընկճող ցաւէն. անոր տաւինք իր բնամանիքը և նոյնչափ այ տաւինք մեր ողորմութեանէն որ մեզ պաշտօններուն խրատ ըլլայ :

85. Յէլէ Իսրայէլը, Բարբար և Չարէֆը (նշան է՝ Եսայէն), երբ ազազակեցին իրենց Տիրոջ, անոնք բոլորը նամբերոցներ էին :

86. Չանոնք մեր սլորմութեան մէջ առինք, վասընզի բոլորը արդատ էին :

87. Նաև Յովնանը, որ բարկացած գնաց, և կը կարծէր թէ մենք այլևս ըշխանութիւն չունինք իր վրայ : Բայց յետոյ ազազակեց մեզ խաւարէ ձուկին ծոցէն) «Քեզմէ զատ ուրիշ ստուած չկայ. Փառք քեզ, ես յանցաւորներէն եմ» :

88. Լսեցինք և զան, ազատեցինք զտանգէն : Այսպէս կազատենք հաւատացողները :

89. Յըշէ Չաքարիան, երբ ազազակեց իր Տիրոջ «Տէր, զիս առանձինն մի ձգեր բայց զու առնանլու ժառանգն ես» :

90. Լսեցինք, և տնոր տաւինք Եանան (Յովնան նէս) և իր կինը կարօզ ըրինք ծննդաբերութեան : Անոնք բարիք գործել կը ջանային, մեզ կազօթէին արօզ ու երկիւզով և կը խոնարհէին մեր առջև :

91. Յէլէ նաև նէ որ իր կուսութիւնը կը պահէր, և մենք անոր մէջ փշեցինք մեր հօգիէն մաս մը, և զանի ու իր որդին արեղերքի նամար հրաշք մը ըրինք :

92. Այս կրօնքը ձերն է և միակ ու միենոյն կրօնքն է հարգարէնբուն : Ես ձեր Տէրն եմ, զիս պաշտեցէք :

93. Բայց անոնք իրենց մէջ բաժանումներ ըրին սակայն անոնք մեզ պիտի վերադառնան :

94. Ով որ բարի գործեր ընէ և հաւատայ միեւնոյն

առնն, իր ջանքերը չեն մոռցուիր բնաւ, այլ կը գրենք իր գործերը :

95. Նզովք պիտի ծանրանայ այն քաղաքին վրայ զոր բնակեցինք, անոր ժողովուրդը չվերադառնար :

96. Մինչև որ Եաճուճ և Մաճուճը յազթուին այն ասան չուտով կիջնեն լեռներէն :

97. Այն ասան մօտեցած պիտի ըլլայ ճշմարիտ խոստումին գործադրութիւնը և անհաւատները աչքերնին ապշութեամբ յառած պիտի ըսեն, «վայ մեզ մենք անհոգ էինք ժամանակին և յանցաւոր էինք» :

98. Արդարև, դուք և Աստուծմէ զատ ձեր պաշտած կուսքերը գեղնին ճարակ պիտի ըլլաք կամ նոն պիտի նետուիք :

99. Սա կուսքերը եթէ աստուածներ ըլլային, նոն չէին նետուեր : Բոլորը նոն պիտի մնան յաւիտենապէս :

100. Անոնք նոն պիտի նեճեճեն, բայց բնաւ չըպիտի լսեն բան մը :

101. Որոնց որ մենք լաւ վարձք խոստացած ենք, անոնք անկէ հետու պիտի պահուին :

102. Չպիտի լսեն ոչ մէկ ազմուկ, և պիտի վայելեն յաւիտենապէս ուղած բաներնին :

103. Մեծ սարսափը անոնց չպիտի ազդէ հրեշտակները սա խօսքերով զանոնք պիտի դիմաորեն «անաճեր օրը որ ձեզ խոստացուած է» :

104. Այն օրը երկիրքը մագազաթի պէս կ'որորենք առաջի ստեղծածնուս նման կը դարձնենք : Խոստումնիս կատարել մեր պարտքը ըլլալով անպատճառ կը կատարենք :

105. Սաղմոսին մէջ գրած ենք արդէն, Մովսէսէ օրէնքը դրուէն յետոյ, թէ երկիրը ժառանգութիւնը պիտի ըլլայ մեր արդար ծառաներուն :

106. Այս գիրքին մէջ խրատ մը կայ մեզ պաշտողներուն համար :

107. Մենք քեզի զրկեցինք, Ո՛ր Մահաճեալ, իբր ոգորմութիւն աշխարհներու համար:


108. Ըսէ՛ անոնց, «ինչ լատնութիւն եղած է թէ ձեր Աստուածը միակ Աստուածն է: Աստուծոյ կամքին հպատակած է՞ք (Ֆրսիլման Է+):»

109. Բայց եթէ ետ դառնան, ըսէ՛ անոնց, «եա ձեզի քարոզեցի հաւատարմացես. չեմ գիտեր թէ ձեզ համար գուշակուածը ի՞նչ է թէ հեռու»:

110. Արդարեւ նա գիտէ ձեր բարձրաձայն խօսածը և ծածկածը:

111. «Ես չեմ գիտեր. բայց այս պայմանաբար կա. քեզի է ձեզ համար փորձանքէ նստ՝ ձեզ վայելել տալու համար այս աշխարհը ժամանակ մը»:

112. «Ով Տէր իմ, ըսաւ նա, արդարութեամբ դառէ»: Մեր Տէրը ողորմածն է, պէտք է օգնութեանուն կոչուի ձեր հոտատածներունըէմ:



ԻՖ. Գ Լ Ո Ի Խ

(ՍՈՒՐԵԹԻԻԼ-ՀԱՃՃ)

Մէֆֆէական, Եօթանասուն ուրը պատգամ

Յանուն Աստուծոյ գթածի եւ ողորմածի

1. Ով մարդիկ, վախեցէք ձեր Տիրոջմէ, վասնզի քարոսարանէ ժամուն երկրաշարժը սոսկալի բան է:

2. Այն օրը պիտի տեսնենք, որ սանտուն պիտի ձգէ թիեցուցած աղան, և բոլոր լշի կիները պիտի վիժեն, և պիտի տեսնես մարդիկ հարբած: Ոչ, անոնք, հարբած չեն, այլ Աստուծոյ պատիժն է այն:

3. Կան մարդիկ, որոնք կը վիճարանին Աստուծոյ

մասին առանց գիտութեան, եւ կը հեռելին ըմբոստ սատանային:

4. Որոշուած է թէ ով որ գայն բարեկամ ընդունի նա զանի պիտի մոլորեցնէ, եւ գէպի կրակի տանջանքը պիտի առաջնորդէ:

5. Ով մարդիկ, եթէ կը կասկածիք յարութեան մասին, նկատեցէք որ ձեզ վրոշիէ ստեղծած ենք. յետոյ սերմի կաթիլէ մը որ արեան գնդակէ մը կըլլայ յետոյ միտի կտորէ մը հաշիւ կերպարանք ստացած կամ չստացած, այս ձեզ բացատրելու համար է զի «Երբ Երբ» կը թողունք բնակիլ արգանդներուն մէջ ըստ մեր կամաց մինչեւ որոշեալ ժամանակ մը, եւ յետոյ գուրս հանել կուտանք ձեզ իբր վափուկ երախաներ: Յետոյ կը հասնիք չափահասութեան տարիքին, ու մանք կը մեռնին, ուրիշները կը հասնին կեանքի խեղճութեան մինչեւ գիտցածնին մոռնալու աստիճան: Դու տեսար երկիրը չորցած. բայց մենք անոր վրայ ջուր կ'իջեցունենք, ա՛նա այն կը շարժի, կ'ուռի, եւ կը բուսցնէ ամէն տեսակ թարմ բոյսեր:

6. Անոր համար որ Աստուած ինքն է ճշմարտութիւնը եւ նա կողջնցնէ մեռեալները եւ նա ամենապարտը է:

7. Վերջին ժամը պէտք է գայ, որ անկասկածելի է, եւ Աստուած պիտի կենդանացնէ գերեզմաններու մէջ զանուողները:

8. Մարդիկ կան որ կը վիճին Աստուծոյ մասին առանց օեւէ գիտութեան, առանց առաջնորդութեան, առանց գիրքի մը լուսաւորութեան:

9. Անոնք կը դառնան ուրիշները մոլորեցնելու համար Աստուծոյ ճամբէն: Այդ մարդոց այս աշխարհի մէջ նախատինք կայ. հանդերձեալին անոնց ճաշակել պիտի տանք կրակի տանջանքը:

10. Այս պիտի ըլլայ իրենց գործքերուն պատճառաւ, լատնդի Աստուած անիրաւոյ չէ իր ծառաներուն:

11. Կան մարդիկ որ թերահաւատութեամբ Աստուած կը պաշտեն. եթէ այնպիսիին բարիք մը պատահի, կը հաստատուի. իսկ եթէ զժրագլուխ թիւն մը պատահի, անհաւատ կը դառնայ: Չիտեսցի որ թէ՛ այս աշխարհի եւ թէ՛ հանդերձալի մէջ: Այս յայտնի կորուստ մըն է:

12. Ան կը կանչէ Աստուծոյ զատ այնպիսիներ, որոնք ոչ կրնան զիտանել եւ ոչ ալ օգտակար ըլլալ: Այս մեծ մոլորութիւն մըն է:

13. Ան կը կանչէ այնպիսի որ աւելի զիտասեր է քան թէ օգտակար: Զգուելի պաշտպան եւ զրկելի յաճախորդ:

14. Բարեգործ հաւատացեալները Աստուած պիտի մտցնէ ջուրի շոտանքներէ ստուգող դրախտներու մէջ Աստուած կրնէ ինչ որ իրեն հաճոյ է:

15. Ով որ կը կարծէ թէ Աստուած անոր (Մահաբն) չպիտի օգնէ թէ՛ այս եւ թէ՛ միւս աշխարհի մէջ: Թող չուան մը երկնցնէ մինչեւ երկինք եւ յետո՛ք զայն կտրէ. պիտի տեսնէ թէ իր վարկատութիւնները ոչինչ են, որով զանի կը բարկացնէ:

16. Այսպէս մենք Գուրանով քեզ յայտնեցինք յայտնի պատգամներ: Աստուած իրեն հաճելիները կառաջնորդէ:

17. Յարութեան օրը Աստուած գտաստան պիտի ընէ հաւատացեալներուն, հրեաներուն, Սապտրացիներուն, քրիստոնեաներուն, մոզներուն եւ Աստուծոյ ընկեր ընդունողներուն միջեւ. վասն զի Աստուած ամեն բանի վկայ է:

18. Զե՛ս տեսներ որ Աստուած կը պաշտեն երկնից մէջ եւ երկրի վրայ բոլոր գտնուողները, արեւը

լուսինը, աստղերը, լիսնիքը, ծառերը, անասունները եւ մարդոց մէկ մեծ մասը: Եւ չատերուն ալ տանջանք որոշուած է:

19. Եւ Աստուծոյ անարգածը ոչ սքէ չի յարգուի: Աստուած իրեն հաճոյ եղածը կրնէ:

20. Աստուծոյ մտին իրարու զէ՛մ վիճարանողները երկու հակասակորդ խումբեր են (հասարակութիւնը եւ անհասարակութիւնը). բայց անհաւատներու հազուատները կրակէ է եւ կոտցած ջուր պիտի թափուի գլուխուն վրայ:

21. Անո՛ց աղիքները եւ կաշին անո՛վ պիտի հալին եւ անոնք պիտի ձեծուին երկաթեայ գաւազաններով:

22. Ամեն անգամ որ յաւեն նեղուած անգէ գորս ելլել ուզեն, կրկին նորա պիտի մտցուն՝ սա աղաքակով, «կրեցէ՛ք կրայի տանջանքը»:

23. Հաւատացեալները՝ որոնք բարիք գործած են Աստուած պիտի մտցնէ դրախտներու մէջ որոնց տակէն գետեր կը հոսին. անոնք հոն պիտի կրեն ոսկիէ եւ մարգարտաւոր ապարանջաններ եւ մետաքսէ հազուատներ:

24. Անոնք կառաջնորդուին քաղցր խօսքեր յետուի եւ փառաւոր ճամբուն մէջ պտոյտ ընելու համար:

25. Անհաւատները անոնք են որոնք ուրիշները կը հեռացնեն Աստուծոյ ճամբէն եւ սուրբ տաճարէն դուրս մենք հաստատած ենք բոլոր մարդոց համար. որոնք որ հոն կը բնակին իրր օտարական հաւատար իրաւունք տնին:

26. Եւ որոնք որ զայն պղծել ուզեն չարութեամբ, դատն պատիժի կենթարկենք:

27. Յիշէ՛ որ մենք Արքահամին յատկացուցինք Սուրբ տունին տեղը անոր ըսելով, քու պաշտումիդ մէջ մեզ չընկերացնես ուրիշ աստուած, այս տունը

մաքուր պահէ անոնց համար որ հոն ուխտի պիտի գան, որոնք հոն բարեպաշտութեան գործեր պիտի կատարեն յոտնիայս, ծնրադրեալ կամ երկրպագեալ:

28. Ժողովուրդոց ուխտագնացութիւն պատուիրէ որ ստքով կամ արագընթաց ուղտի վրայ նստած հեռաւոր Կրկիրներէ հոս հասնին:

29. Մեր իրենք իսկ վկային իրենց ձեռք բերած օգուտներուն համար, եւ Աստուծոյ անունը յիշեն որովհալ օրերու մէջ իրենց հօտերուն միջոցաւ անոր պարգեւած սնունդին վրայ թէ կերէք անոնցմէ եւ սնուցէք անով թշուառը եւ աղքատը:

30. Յետոյ մարմինն ազտերը մաքրեցէք, ձեր ըրած ուխտերը կատարեցէք եւ շուրջը դարձէք հին տաճարին (Քէսպէ):

31. Այսպէս ըրէ՛ք: Ով որ Աստուծոյ այս յարգելի պատուէրները յարգէ վարձատրութիւն պիտի գտնէ Աստուծմէ: Զեզ թոյլատրուած է անասնոց միտով սրնանիլ, բացի անոնցմէ որոնց մասին արդէլք կարգացուած է ձեզ Գուրանով: Կուռքերու պղծութենէն խուսափեցէք եւ ամեն սուտ խօսքերէ զգուշացէք:

32. Հաւատարիմ եղէ՛ք Աստուծոյ եւ անոր ընկեր մի տաք ուրիշ մը, Աստուծոյ ընկեր ընդունողը կը նմանի բարձրէն վար իյնողի, զոր Ժպտենները կը դիշատեն կամ հովը հեռուն կը տանի:

33. Այո՛, ով որ Աստուծոյ հաստատութիւնները յարգէ, երկիւզած սիրտ կը կրէ:

34. Որոշ ժամանակի մը համար ձեզի անոնցմէ օգուտներ կան, զոնքը հին տաճարին մօտ պիտի մօրթուին:

35. Իրաքանչիւր ազգի մէնք ձէսեր հաստատած ենք, որպէսզի Աստուծոյ անունը յիշեն ապրուստի համար անոնց արուած անասուններուն վրայ: Զեր Աստուածը միակ Աստուածն է. Անոր յանձնուեցէք:

բոյորովին: Եւ դու, աւետիս տուր խոնարհներուն.

36. Որոնց սրտերը երկիւզով բռնուած են Աստուծոյ անունը յիշելու ատեն, եւ որոնք համբերութեամբ կը տասնն իրենց պատահած չարիքը եւ որոնք աղօթքը կրննեն եւ սղորմութիւն կուտան մեր իրենց պարգեւածներէն,

37. Մենք ուզտերը յատկացուցած ենք զո՛ւրբութեան ձէսերուն ծառայելու համար. դուք անոնցմէ ուրիշ օգուտներ ալ կուենեաք: Ուրեմն Աստուծոյ անունը յիշեցէք անոնց վրայ երբ որ կը դահէք: Անոնք պէտք է երեք ստրի վրայ կենան, մէկ ստքը կապուած: Երբ դո՛ւր իյնայ, կերէք անկէ եւ տուէք անկէ իրեն արուածէն զո՛ն եղողին եւ ուղողին: Մենք զանոնք ձեզ ենթարկեցինք որ շնորհագէտ ըլլաք:

38. Անոնց միտը եւ արիւնը Աստուծոյ չեն հասնիր այլ ձեր երկիւզածութիւնը կը հասնի անոր, որ ձեզ ենթարկած է այս անասունները որ զինքը փառաբանէք ձեզ ուղիղ ճամբան առաջնորդելու մասին: Աւետիս տուր բարեգործներուն,

39. Թէ Աստուած պիտի պաշտպանէ հաւատագողները (անաստիճան մեռնողներէնց դէմ), վասնզի նա շտիրեր բնաւ խարդախը եւ սնահաւար:

40. Զրկանք կրողներուն ներեալ է պատերազմել թշնամիներուն դէմ. Աստուած կարող է զանոնք պաշտպանել:

41. Զ անոնք՝ որ անիրաւաբար դուրս հանուած են իրենց երկիրներէն միայն այն պատճառաւ որ ըսած են «մեր Տէրը միակ Աստուածն է»: Եթէ Աստուած մարդոց մէկ մասը միտէն հեռացուցած չըլլար, վանքերը, եկեղեցիները, սինակոկները եւ մանձետակաւնաց աղօթատեղիները՝ ուր Աստուծոյ անունը կը յիշուի անդադար, աւերուած պիտի ըլլային: Աս-

տուած պիտի օգնէ անոր որ Աստուծոյ կօզնէ անհա-  
սարկերան դէ՛մ էր կուոյն յէջ: Աստուած հզօր և զօ-  
րաւոր է:

42. Երբ զանոնք հաստատենք հրկրին մէջ, անոնք  
կը կատարեն աղօթքը, կուտան ողորմութիւն և լաւ-  
իք հրամայեն և գէշը կարգիյեն: Ամեն բանի վախ-  
ճանք Աստուծոյ կը պատկանի:

43. Եթէ քեզ ստախօս կը համարեն, յիշէ որ ան-  
ոնցսէ առաջ<sup>8</sup> եղող նոյի, Ատի, Սէմուտի, Արրահա-  
մի, Ղովտի և Մատիանի ժողովուրդներն այ իրենց  
մարգամէները ստախօս կը համարէին: Մովսէսն ալ  
խարեբայ համարուեցաւ: Ես երկար ժամանակ տուի  
անհաւատներուն, յետոյ պատժեցի զանոնք: Ինչ սոս-  
կայի՛ եղաւ:

44. Ո՛րչափ քաղաքներ բնաջնջած ենք երբ չա-  
քագործներ էին. անոնց աւերակները կը մնան, լե-  
ցուած հորեր և քանդուած զզեակներ:

45. Անոնք երկիրը չեն պտըտած: Անոնց սրտերը  
անկարճօղ են զայն հասկնալու. ականջ չունին լսելու  
Անոնց աչքերը կոյր չեն. բայց սրտերնին կոյր-  
են զուրծքերնուն տակ:

46. Անոնք քեզ կ'ստիպեն որ պատիժը փութա-  
ցնես: Աստուած իր խոստումներէն չթերանար: Մէկ  
օրը Աստուծոյ առջև քու հաշուովդ հազար տարիի-  
չափ է:

47. Ո՛րչափ չարագործ քաղաքներու որոշ ժամա-  
նակ տուինք, յետոյ զանոնք պատժեցինք: Բոլորը  
մեզ կը դառնան:

48. Ըսէ՛. ո՛վ մարդիկ, ես առաքեալ մըն եմ ձեզ  
խրատելու պաշտօնով:

49. Որոնք որ հաւատացին և բարիք գործեցին-  
պիտի ստանան ներում իրենց մեղքին և լաւ-  
ուպրուստ:

50. Իսկ որոնք որ մեր նշանները տկարացնել կը  
ջանան դժոխքը պիտի բնակին:

51. Բեզմէ առաջ զրիած չենք մարդարէ մը կամ  
առաքեալ մը որ սատանան իր բաղձանքներուն մէջ  
ինչինչ յանցաւոր իղձ խառնած չըլլայ. բայց Աստուած  
կ'ոչնչացնէ սատանային խառնածը, և կը վերահաս-  
տատէ իր պատգամները:

52. Աստուած կը թոյլազրէ զայն բնել, որպէսզի  
Սատանային թելադրութիւնները փորձ մ'ըլլան ան-  
ոնց համար, որոնց սիրտը հեռացած է ժողովեամբ:

53. Եւ որպէսզի գիտութիւն բնդուեցողները գիտ-  
նան թէ Գուրանը ճշմարտութիւն մըն է Երբոջմէ ե-  
կած, և հաւատան թէ իրենց սրտերը կը խոնարհին  
Աստուծոյ առջև, որովհետեւ նա կառաջնորդէ հաւա-  
տացողները զէպ: ո՛վիդ ճամբան:

54. Անհաւատները չպիտի դադրին կասկածելէ մըն-  
չև որ յանկարծ հասնի վերջին ժամը՝ կամ բնաջնջող  
պատժոյ օրը:

55. Այն օրը իշխանութիւնը Աստուծոյ պիտի պատ-  
կանի, նա պիտի դատէ մարդիկը, այն ատեն որոնք  
որ հաւատացած և բարի գործեր կատարած են պիտի  
երթան հեշտութեանց դրախտներուն մէջ բնակելու:

56. Մ'ինչդեռ անհաւատները՝ որոնք մեր նշանները  
սուտ համարեցին, ամօթալի տանջանքներու պիտի  
ենթարկուին:

57. Աստուած ընտիր պարգեւներ պիտի չնորհէ  
անոնց որոնք Աստուծոյ խնդրով գաղթած են և պա-  
տերազօր մէջ սպաննուած են կամ օտարութեան մէջ  
մեռած: Աստուած գիտէ լաւագոյնս վարձատրել:

58. Նա զանոնք Դրախտ պիտի մտցնէ իրենց հա-  
ճելի եղանակաւ: Աստուած գիտուն և հեղ է:

59. Այսպէս պիտի ըլլայ: Ո՛վ որ իրեն եղած անի-  
բաւութեան չափ վրէժտ առնէ, յետոյ կրկին յարձա-

կուժ կրէ. Աստուած անոր պիտի օգնէ: Աստուած կը բիրէ ներել և ներող է:

60. Վասն զի Աստուած գիշերը ցերեկին մէջ կը մտցնէ և ցերեկը գիշերին մէջ: Նա կը լսէ ու կը տեսնէ:

61. Վասն զի Աստուած նոյն ինքն ճշմարտութիւնն է և ինչ որ դուք անոր նետ կը կանչէք ազօթքով, ոչինչ է, և Աստուած է բարձր և մեծը:

62. Չե՞ս տեսնար որ Աստուած կիջեցնէ ջուրը երկինքէն, և երկիրը կանաչութեամբ կը ծածկէ: Աստուած լի է բարութեամբ և տեղեակ է ամենի:

63. Անոր կը պատկանին երկնից մէջ և երկրի վրայ եղածները. նա է հարուստը և Փառաւորը:

64. Չէ՞ք տեսներ որ երկրի վրայ բոլոր եղածները ձեզ նազանդեցուցած է. նաւը ծովին մէջէն կ'երթայ անոր նրամանով, և նա կը բռնէ երկինքը որ երկրի վրայ չ'յնայ. մրնչեւ որ ինք թոյլաբէ: Աստուած լի է բարութեամբ և ողորմութեամբ մարդոց համար:

65. Նա է որ ձեզ կ'ապրեցնէ և որ ձեզ պիտի մեռցնէ, յետոյ ձեզ պիտի կենդանացնէ: Երգարեւ մարդս ապրեալս է:

66. Իւրաքանչիւր ազգի համար նուիրական ձեւեր հաստատեր ենք որ անոնց կը նետեին. Անոնք այս նիւթի մասին քեզ' նետ թող չ'փծին: Դու գանոնք Տիրոջը նրաւորէ, վասնզի դու ուղիղ ճամբուն մէջ ես:

67. Եթէ քեզի նետ վիճարանին, ըսէ՛ անոնց. «Աստուած գիտէ ձեր գործերը»:

68. Յարութեան օրը Աստուած պիտի վճռէ ձեր անհամաձայնութեան առարկայի մասին:

69. Չե՞ս գիտեր որ Աստուած գիտէ երկնից մէջ և երկրի վրայ բոլոր եղածը: Բոլորը գրուած է Գիրքին մէջ. և այս դիւրին է Աստուծոյ:

70. Անոնք Աստուծոյ նետ ուրիշներ ալ կը պաշտեն որոնց մասին Աստուած ոչ մէկ նշան չէ դրկած և անոնց մասին ոչինչ չեն գիտեր: Բայց անիրաւունքը պաշտպան չպիտի ունենան:

71. Երբ մեր նշանները կարգացուն աննուատներուն, տեսլութիւն պիտի տեսնես անոնց ճակատներուն վրայ. անոնք պատրաստ են մեր նշանները պատմողներուն վրայ յարձակելու: Ըսէ՛ անոնց, «ես ձեզ բնձ աւելի սոսկային. Աստուած կրակ խոտացած է չնաւատացողներուն: Եւ ի՞նչ զէջ ճամբայ է այն»:

72. Ո՛վ մարդիկ ձեզի առակ մը կ'ըսուի. մտիկ ըրէք. Աստուծմէ դատ ձեր ազօթածները ճանճ մը անգամ չեն կարող ստեղծել, եթէ բոլորը մէկ տեղ իսկ գան, և եթէ ճանճ մը անոնցմէ բան մը խլէ, անոնք չեն կրնար զայն անկէ ետ խլել: Ազօթուածն և ազօթուն հաւասարապէս անկարող են:

73. Մարդիկ, չեն գիտեր զԱստուած քննատել իւր ճիշտ արժէքով. նա հզօր և զօրաւոր է:

74. Աստուած իւր առաքեալները մարդոցմէ և նրեշտակներէն կ'ընտրէ՛ նա կը լսէ և կը տեսնէ բոլորը:

75. Նա կը ճանչնայ անոնց առջևը և ետեւը եղողները. նա ամեն բանի վախճանն է:

76. Ո՛վ հաւատացեալներ, ծնրաբեցէ՛ք, երկրպագեցէք և պաշտեցէ՛ք ձեր Տէրը և բարիք ըսէք ու դուք երջանիկ պիտի ըլլաք:

77. Պատերազմեցէ՛ք Աստուծոյ համար ինչպէս որ պաշտած է պատրազմիլ (Յէնաթ). նա ձեզ բնտրած է: Ես չէ նրամայած դժուար բան մը ձեր կրօնքին մէջ ձեր նօրը Արրանամի կրօնքին մէջ. նա ձեզ միւսիւրման (Աստուծոյ յանձնարար) կոչած է:

78. Մեզմէ առաջ և այս գիրքին մէջ չե՞ս այսպէս

էր է. որպէսզի ձեր մարգարէն վկայ ըլլայ ձեզ  
դէմ և դուք մնացեալ մարդոց դէմ վկայ ըլլաք: Ա-  
զօթքը կատարեցէ՛ք. ոչորմութիւն տուէք և սեր-  
տօրէն յարեցէք Աստուծոյ. նա ձեր պաշտպանն է և  
ինչ պաշտպան և ինչ լաւ օգնական,



Ի Գ. Գ Լ Ո Ի Խ

(ՍՈՒԲԵՌԻԻԼ ՄՈՒՄԻՆԻՆ)

Մէքէական, հարիւր ասն եւ ուրը պասգամ

Յանուն Աստուծոյ գթածի ողորմածի

1. Հաստացեալները երջանիկ են,
2. Որոնք խոնարութեամբ կաղօթեն,
3. Որոնք անպարկեշտ խօսքերէ կ'ըզուշանան,
4. Որոնք ոչորմութիւն կուտան,
5. Որոնք իրենց մարմնական ցանկութիւննին գի-  
տեն կառավարել,
6. Եւ որոնք իրենց վայելումները կը սահմանա-  
ւորեն իրենց կանանց և գերիներուն զորս հայթայ-  
թած է իրենց աջ ձեռքը (\*). այս պարագային ա-  
նոնք մեղազրելի չեն:
7. Բայց նա որ իր ցանկութիւնները ատիէ առաջ  
կանցնէ, պատուիրականց է:
8. Որոնք որ աւանդ տրուածները և ուխտերնին  
կը պահեն:
9. Եւ որոնք որ ազօթքի ժամերուն կը հսկեն:
10. Անոնք ճշմարիտ ժառանգորդներ պիտի ըլլան:
11. Որոնք պիտի ժառանգեն դրաստները հոն յա-  
ւիտեանս բնակելու համար:

(\* ) Կռնով յազդրակած կամ քնած

12. Մենք մարդը ստեղծած ենք մաքուր կաւէ.
13. Յետոյ զայն կաթիլ մօ սերմ շինած ենք որոշ  
տեղ մը:
14. Յետոյ կաթիլ էր սերմէն վերածած ենք ար-  
եան լեարդի մը, յետոյ արեան լեարդէն միտի կտու-  
րի մը, յետոյ այս միտի կտորէն շինած ենք սկիօր,  
և սկիօրները միտով հագուեցուցած ենք, և յետոյ  
զայն լայն աչիւն բերինք ուրիշ արարածի նման:  
Օրհնեալ լինի Աստուած, արարիչներու ամենաճար-  
տարը:
15. Ստեղծուելէ յետոյ պիտի մեռնիք:
16. Եւ յետոյ յարութիւն պիտի առնէք յարութեան  
օրը:
17. Ձեզմէ վեր եօթը յարկ երկիւքներ ստեղծե-  
ցինք, և մենք անհօգ չենք մեր ստեղծածի մասին:
18. Երկինքէն ջուր կիջնենք որոշ չափով երկրի  
վրայ. զայն կը թողունք, և կրնանք նաև անհետա-  
ցնել զայն:
19. Այս ջուրին միջոցաւ արմատի և խաղողի այ-  
գիներ հասցուցինք:
20. Ստեղծեցինք նաև Սինայ լեռան վրայ այն ծա-  
ւոր, որ իւր և լաւ հիւթ կուտայ ուտելու:
21. Անասուններու մէջ ալ խրատի առարկայ մը  
ուներք: Անոնց արգանդէն ձեզ կաթ կուտանք խմե-  
լու, և անոնցմէ շատ օգուտներ կը քաղէք և ան-  
նօցմով կը սնանիք:
22. Մերթ անոնց վրայ և մերթ նաւերու վրայ  
նստած կը ճամբորդէք:
23. Նոյն զրկեցինք իր ժողովուրդին. նա անոնց  
քաւ, «ով ժողովուրդս, պաշտեցէ՛ք զԱստուած.  
ձեր լինչուն կը ծառայեն ուրիշ աստուածները. չէ՛ք  
վախնար Անկէ»:
24. Բայց անոնց պետերը՝ որոնք չէին հաւատար

ըսին. «նա մեզի պէս մարդ մըն է, բայց կուզէ մեզմէ գերազանցուիլ, եթէ Աստուած ուզէր մէկը զրկել, նրեշտակներ զրկած պիտի ըլլար. մեր մեծ հայրերէն այդ մասին ոչինչ չենք լսեր»:

25. «Այս մարդուն մէջ դե կայ. բայց զանի նաւ-գիսս ձգեցէր ժամանակ մը»:

26. —Տէ՛ր, աղաղակեց նա, ինձ օգնութեան հա-սիր այս զրպարտութեան դէմ:

27. Այն ատեն մենք յայտնութիւն մը տուինք նոյին, ըսելով, «նա մը չիմէ՛ մեր աչքին առջև և ըստ մեր յայտնութեան, և երբ մեր վճիռը արտա-անուի և թոնիրը վառուի»:

28. Մտիր այդ նախնի մէջ, և ա՛ն մէկ մէկ զոյգ ամէն տեսակէն և քու ընտանիքդ, բացի անկէ ուրուն մասին քեզ ըսուած է արդէն. և այլևս ինձ մի խօսին չարերու մասի՛, վասն զի անոնք պիտի խեղ-դուին ջուրէն:

29. Երբ դուն նախնի մէջ նստիս, նաև քեզ ըն-կերացողները, ըսէ այնպէս, «Փառք Աստուծոյ որ մեզ ազատեց ամբ, թեշտներէն»:

30. Ըսէ նաև, «Տէ՛ր, զ՛նս իջեցուր քեզմէ օրո՛ւ նուած տեղ մը. վասնզի դու բոլոր իջեան հայթա-թողներէն յուսագոյնը գիտես»:

31. Այս դէպքին մէջ ճշմարիտ նշաններ կան, և մենք մարդիկը փորձեցինք:

32. Անկէ յետոյ ուրիշ սերունդներ առաջ բերինք:

33. Եւ անոնց մէջ մարգարէներ զրկեցինք. որոնք անոնց կրօնէին, «Աստուած պաշտեցէր, ձեր ի՞նչուն կը ծառային ուրիշ աստուածները. չէ՞ք վախճար անկէ»:

34. Բայց անհաւատ ժողովրդոց պետերը որոնք Աստուծոյ վերջին դատաստանը սուտ կը համարէին, այն ժողովրդոց օրոնց մենք աշխարհի բարիքները:

վայելել տուած էինք, կրօնէին, «սա ձեզի պէս մարդ մըն է ինչ որ դուք կուտէք, նա ալ կուտէ»:

35. «Եւ կը խմէ ինչ որ դուք կը խմէք»:

36. «Եթէ դուք ննազանդիք ձեզ նաւասար մար-դու մը, անպատճառ պիտի վնասուիք»:

37. «Նա պիտի խոստանայ ձեզ որ ոսկոր և փոշի ըլլայէ, յետոյ կրկին կենդանանաք»:

38. «Հեռու՛ հեռու անոր խոստումներէն»:

39. «Մեր սա աշխարհի մէջ վայելած կեանքէն զատ ուրիշ կեանք չկայ. մենք պիտի մեռնինք ու պիտի ապրինք և յարութիւն չպիտի առնենք բնաւ»:

40. «Սա սոսկ մարդ մըն է, որ Աստուծոյ մասին սուտ կը ննարէ. մենք չենք հաւատար անոր»:

41. —Տէ՛ր, աղաղակեց նա, ինձ օգնութեան հա-սիր այս սուտ ամբաստանութեան դէմ:

42. —Ի՞նչ մը ևս, ա՛ն անոնք պիտի զլջան, ը-սաւ Տէրը՛

43. Փոթորիկ մը յափշտակեց զանոնք, և հեղեղէն քշուած կտորուանքներու պէս ըրինք զանոնք: Ուրեմն հեռու՛ անբարիչներէն:

44. Անոնց տեղը ուրիշ սերունդներ առաջ բե-րինք:

45. Իւրաքանչիւրի գոյութիւնը իր որոշեալ վախ-ճանէն ոչ առաջ կանցնենք և ոչ ետ կը ձգենք:

46. Մենք յաջորդաբար մարգարէներ զրկեցինք: Ամեն անգամին որ զրկուածը ներկայացաւ իր ժողո-վուրդին առջև, սա զանի ստախօս համարեց. մենք իրարու ետեւէ զրկեցինք, և զանոնք աղքերու պատ մութիւն ըրինք:

47. Յետոյ զրկեցինք Մովսէսը և Լւր հեբայքը՝ Ահարոն մեր նշաններսլ և յայտնի զօրութեամբ,

48. Գէպի Փարաոն և իր մեծամեծներուն. բայց անոնք հպարտացան, սա ամբարտաւան ժողովուրդ մըն էր:

49. «Հաւատանք, բարիք, մեզ նման երկու մարդոց, մինչ անոնց ազգը մեզ գերի է»:

50. Համարեցին զանոնք երկու ստախոսներ: բայց իրենք ալ բնաջինջ սղան:

51. Մտկայն մենք մոլեւէսին տուինք գիրքը, որ պէսզի Խորայեւացիք ուղիղ ճամբէն առաջնորդուին:

52. Մենք Մարիամի որդին, նաև իւր մայրը մարդոց համար նշան ըրինք: Մենք այն երկուքին ալ բնակարան տուինք բարձր տեղ մը, անդորր և առատ ջուրի ախրով:

53. Ո՛վ մարգարէներ, կերէք համեղ բարիքներէն բարի գործեր կատարեցէք. ես գիտեմ ձեր գործերը:

54. Չեր կրօսքը մէկ է. ես ձեր Տէրն եմ, ինձմէ վախցէք:

55. Ժողովուրդները զանազան հերձուածներու բաժնուեցան. և իւրաքանչիւրը իր ունեցած հասարակութիւնը կ'ուրախանայ:

56. Դու ձգէ զանոնք իրենց մոլորութեան մէջ ժամանակ մը:

57. Անոնք կ'երեւակայն, թէ երկար տարիներ պիտի շնորհնք անոնց ինչքեր և որդիներ ապով:

58. Թէ մենք պիտի փութանք անոնց ամէն կերպը բարիք ընել:

59. Անոնք իրենց Տիրոջ վախէն կը դողան:

60. Որոնք որ իրենց Տիրոջ զրկած նշաններուն կը հաւատան:

61. Որոնք որ Աստուծոյ չեն ընկերացներ ուրիշներ:

62. Որոնք որ ողորմութիւն կուտան, եւ երկիւղը թափանցած է սրտերնուն մէջ, թէ որ մը Աստուծոյ առջև պիտի վերադառնան:

63. Անոնք բարի գործերու մասին իրարու հետ կը մրցին և կը շահին բարիքները:

64. Մենք ոչ մէկ անձի իր կարողութենէն վեր

բնու չենք դներ: Մեր քովն է ճշմարտութիւնը խօսող գիրքը. և մարդոց անիրաւութիւն չըլլար բնու:

65. Բայց անոնց սրտերը սխալման մէջ են կրօնքի մասին. անոնց գործերը բոլորս ին տարբեր են և այնպէս ալ պիտի գործեն:

66. Մինչև որ անոնց մեծաւորները պատժենք մեր պատրժով: Այն ատեն անոնք պիտի ազալակեն յալազին:

67. Անոնց պիտի ըսուի, «Մո՛ւ պոռաք, դուք մեզմէ օգնութիւն չպիտի ստանաք:

68. Մեր նշանները ձեզ կը կարդացուէին. բայց դուք երես կը դարձնէիք անկէ:

69. Եւ հպարտանալով, գիշերները գէշ խօսքեր կը զրուցէիք այդ մասին:

70. Անոնք չպիտի՞ մտածեն իրենց ըսուածի մասին. կամ միթէ անոնց հայրերուն անձանօթ յայտնութիւնն մը արուած է:

71. Չեն ճանչնար իրենց մարգարէն որ կուրանան:

72. Կամ կըսեն թէ անոր մէջ դեւեր կան: Բայց նա անոնց ճշմարտութիւնը կը հաղորդէ: Իսկ անոնցմէ շատերը կը խորշին ճշմարտութենէն:

73. Եթէ ճշմարտութիւնը անոնց հաճայքներուն հետեւի, երկինքը ու երկիրը և ասոնց մէջ գտնուածները տակնուվրայութեան կը մատնուէին: Մենք անոնց իրատ տուած ենք, բայց անոնք հեռացած են անկէ:

74. Անոնցմէ վտրձատրութիւն պիտի պահանջես: Գու Տիրոջ վարձատրութիւնը աւելի լաւ է, վասն զի նա ամենալաւ բարիք բաշխողն է:

75. Դու կը հրաւիրես զանոնք գէպի ուղիղ ճամբան:

76. Բայց որոնք որ ապագայ կեանքին չեն հաւատար, անկէ կը հեռանան:

77. Եթէ անոնց գթայինք ու զանոնք ազատէինք վտանգէն՝ որուն ենթարկուած էին, անոնք իրենց սփրայպարտ կուրու թեան մէջ պիտի յարատեւէին:

78 Մեր մէկ պատժովը պատժեցինք զանոնք. բայց անոնք չխոնարհեցան ու չզիմեցին իրենց Տէր՝ չազօթքով:

79. Այսպէս ելաւ մինչև որ մենք անոնց բացինք սոսկալի պատիժին դուռը. այն ատեն յուսաւտեցան:

80. Աստուած է որ տուած է ձեզ լսողութիւն եւ տեսողութիւն ու սիրտ մը: Բայց երախտագէտներու թիւը ո՛րչափ քիչ է:

81. Նա է որ ձեզ գոյացուցած է այս աշխարհի վրայ, և դուք անոր պիտի վերագառնաք:

82 Նա է որ կապրեցնէ ու կը մեռցնէ. անորմէ կախեալ է զիչերուան ու ցորեկուան յաջորդական փոփոխումը: Զէ՞ք հասկնար:

83 Բայց անոնք կըսեն նախնիքներու ըսածին նման:

84. Կըսեն՝ «Երբ մեռնինք ու միայն մեր փոշին եւ ոսկորը մնան, միթէ պիտի վերակենդանանանք»:

85. «Արդէն ուրիշ անգամ ալ մեզ եւ մեր հայրերուն ըսուած էր այս, որ հին ժամանակներու առասպել է»:

86. Հարցու՛ր անոնց «ո՞րու կը պատկանին երկինքը ու երկիրը եւ բոլոր գտնուածները: Ըսէ՛ք եթէ գիտէք»:

87. Անոնք պիտի պատասխանեն. «Այդ բոլորը Աստուծոյ կը պատկանի»: Այն ատեն ըսէ՛ անոնց. «չէ՞ք մտածեր ուրեմն»:

88. Հարցու՛ր անոնց. «Ո՞չ է Տէրը եթէր երկինքին եւ բարձրագոյն գահին»:

89. Անոնք պիտի պատասխանեն. «Աստուած է»: Ըսէ՛ անոնց. «Ուրեմն անկէ չէ՞ք վախնար»:

90. Հարցուր անոնց, «ամեն բանի իշխանութիւնը ո՞րու ձեռքի մէջ է, ո՞վ է որ կը պաշտպանէ և ո՞վ է որ ոչ ոքի պաշտպանութեան պէտք չունի. ըսէ՛ք եթէ գիտէք»:

91. Անոնք պիտի պատասխանեն, «Աստուած է»: Ըսէ՛ անոնց, «Ուրեմն ի՞նչու կը կախարդուիք «սքէրէ»:

92. Այս՛, Մենք անոնց զրկեցինք ճշմարտութիւնը. բայց անոնք ստախոսներ են:

93. Աստուած երբէք որչի չունի և ուրիշ աստուած չկայ անոր հետ. եթէ ոչ իր բաքանչիւր աստուած իր սանգձածը կառնէր կերթար և մին մըսունք բարձր կրլլար: Հեռու Աստուծոյ փառքէն անոնց ցերիւրած սուտերն:

94. Աստուած՝ զիտէ գազանիները ու յայտնիները. նա խիստ բարձր է այն բաներէն զորս անոր ընկեր կուտան:

95. Ըսէ՛, «Տէ՛ր, ցոյց տուր ինձ այն պատիժները որ անոնց կանխաւ ըսուած է»:

96. «Եւ Ո՛վ Տէր, զիս մեղաւորներու մէջ մի գասեր»:

97. Մենք կըճանք քեզ ցոյց տալ ինչ որ անոնց սպանացուած է:

98. Անոնց բարի հատուցումը չարին համար, մենք ամենէն լաւ գիտեսք թէ անոնք ինչ կըսեն:

99. Ըսէ՛, «Տէր, ես քեզ կապաստանիմ սատանաներու փորձութիւններէն»:

100. «Ո՛վ Տէր, ես քեզ կապաստանիմ, որ զիս վտանգի մը չենթարկեն»:

101. Երբ անոնցմէ մէկին մահը հասնի, կըսէ, «Տէ՛ր, զիս աշխարհ վերադարձուր,

102. «Որպէս օր բարիք գործեմ, որուն անհոգ գտնուած էն: Երբէք». ա՛յա այս խօսքը պիտի արտասանէ Աստուած, և անոնց ետևը պիտի բարձրանայ պատնէշ մը մինչևե այն վարկեանը յորում յարութիւն պիտի առնեն:

103. Երբ փողը ննչէ այլևս ազգականութեան կապեր չպիտի ըլլան անոնց միջև: Այլ զիրար չպիտի հարցնեն փոխադարձ:

104. Որոնց որ կշիռը ծանրանայ, երջանիկ պիտի ըլլան:

105. Իսկ որոնց որ կշիռը թեթև ըլլայ, անոնք իրենց հոգիին մնասողներն են, դատապարտուած գեհննին մէջ մնալու յաւիտենապէս:

106. Կրակը պիտի լափէ անոնց դէմքը և անոնք պիտի պոկեն շուրթներնին:

107. Զեզ չկարգացուեցան մեր պատգամները՝ դուք զանոնք սուտ համարեցիք:

108. Անոնք պիտի ըսեն. «Տէ՛ր, մեր զժխեմ բաղտը մեզ պարտասեց, և մենք մոլորութեան մէջ էինք»:

109. «Տէ՛ր, մեզ հանէ ասկէ. եթէ կրկնենք մեր սփրնները, ամբարիշտներ ըլլանք»:

110. Տէրը պէտք է. «Կորսուեցէ՛ք հոգ տեղ, և ինձ մի խօսիք»:

111. Երբ իմ ծառաներէս խումբ մը կ'աղաղակէր, «Տէ՛ր, կը հաւատանք, ջնջէ մեր յանցանքը ու գթա մեզ, դու ես ամենաողորմածը»:

112. Բայց դուք զանոնք ծաղրի առարկայ ըրիք որով դուք իմ անունս ժողգար: Ի՞՞մ ծառաներս ձեր ծաղրանքին առարկայ եղան:

113. Այսօր զանոնք կը վարձատրեմ իրենց համբերութեան համար, և շատ երջանիկ պիտի ըլլան:


114. Աստուած անոնց պիտի հարցնէ. «քանի՞ տամնացիք աշխարհի վրայ»:

115. Պիտի պատասխանեն. «Միայն մէկ օր մնացինք ինչ որ կամ օրուան մէկ մասը. հարցուցէք հաշիւ ընողներուն»:

116. Դուք քիչ ժամանակ միայն մնացիք, բայց չէք գիտեր:

117. Կը կարծէիք ոս ձեզ պարագ տեղը ստեղծած ըլլանք, և թէ դուք մեզ չպիտի ներկայանաք վերստին: Սակայն բարձր է Աստուած, ճշմարիտ թագաւորը, անկէ դատ ուրիշ աստուած չկայ: Եւ եւ տէրը փաստօր գահին: Ով որ Աստուածէ գատ ուրիշ աստուածներու այ աղօթէ, առանց փաստ մը բերելու ատոնց մասին, նա հաշիւ պիտի տայ Աստուծոյ ուղև. և Աստուած բնաւ չպիտի երջանկացնէ անհաւատները:

118. Ըսէ՛, «Տէ՛ր ներէ իմ մեղքերս ու գթա՛ ինձ՝ դու ամենողորմածն ես»:



ԻԴ. Գ Լ Ո Ի Խ

(ՍՈՒԻԲԵԹ ԻԻԼ, ՆՈՒԲ)

Մեհեհական, վարսուն չորս պատգամ

Յանուն Աստուծոյ գթածի ողորմածի

1. Աւարկ Սուրբ մը (Գուրանի Գուրան) զոր իջեցուցած և պարտաւորիչ բրած ենք. այս Սուրբիին մէջ զրինք յստակ պատգամներ, որ խորհրդածէք:

2. Ծնացող մարդուն ու կնկան հարիւրական գաւազան զարկէք. ձեր կարեկցութիւնը թող ձեզ չարգիլէ Աստուծոյ այս պատուէրը գործադրելէ, եթէ կը հաւատաք Աստուծոյ և վերջին օրուան: Եւ մաս մը

հաւատացեալներու ներկայութեան տեղի ունենայ, այդ պատիժը:

3. Շնացող մարդ մը պէտք է միայն շնացող կամ կռապաշտ կնոջ մը հետ ամուսնանայ, և շնացող կին մը միայն շնացող կամ կռապաշտ մարդու մը հետ ամուսնանայ, հաւատացեալներուն արգելուած է այս:

4. Պարկեշտ կիները ամբաստանողները եթէ չկրօնան չորս վկաներով ապացուցանել, դաւաղանիութեան հարուածով պատժուին, ալ անկէ յետոյ անոնց վկայութիւնը բնաւ մի բեղունիք, վասն զի անոնք չարեր են:

5. Մինչև որ անոնք ապաշխարեն և ուղղուին օրինակելիօրէն, վասն զի Աստուած գթած և ողորմած է:

6. Անոնք որ կ'ամբաստանեն իրենց կիները և իրենցմէ դատ վկայ չունին հաստատող, չորս անգամ պիտի երզնուն Աստուծոյ առջև թէ ճշմարտութիւնը կրան:

7. Եւ հինգերորդ անգամուն Աստուծոյ անէծքը անոնց վրայ գայ, եթէ ստած են:

8. Եթէ կինը չորս անգամ երդում ընէ Աստուծոյ առջև թէ ամուսինը սուտ խօսած է, ինք ո և է պատիժէ կազատի:

9. Եւ հինգերորդ անգամին Աստուծոյ բարկութիւնը ըլլայ այն կնոջ վրայ, եթէ անոր երկկինը քսածը ճիշդ է:

10. Եթէ Աստուծոյ անսպառ շնորհը և իր ողորմութիւնը չըլլար, նա ձեզ կը պատժէր անմիջապէս, բայց նա կը սիրէ ներել և ողորմած է:

11. Զրպարտողները ձեր մէջ բազմութիւն են, բայց զանոնք ինտասար մը համարէք, ալ օգտակար են ձեզ: Անոնցմէ որը որ այդ յանցանքը գործած է պիտի պատժուի, և ով որ սուրբ մեծցուցեր է քան-

պատիժ մը պիտի կրէ: (\*)

12. Երբ որ լսեցիք ամբաստանութիւնը, երկուսեւ հաւատացեալները չխորհեցան այս գործի մասին, սր բնն թէ այս յայտնի սուտ մըն է:

13. Ինչու համար չորս վկայ չըրինք քանի որ վկաներ չըրին, անոնք ստախոս են Աստուծոյ առջև:

14. Եթէ չըլլար Աստուծոյ անսպառ շնորհը և իր ողորմութիւնը այս աշխարհի և հանդեցեայն մէջ, սսկալի պատիժ մը պիտի կրէիք ձեր ըրած զրպարտութեան փոխարէն, զոր դուք բերնէ բերան տարածեցիք և ձեր շրթունքովը արտասանեցիք աւանգ գիտնալու բան մը, ինչ որ թեթեւ բանի մը տեղ դըրիք, բայց Աստուծոյ առջև մեծ է:

15. Երբ դուք այդ խօսքերը լսեցիք, չըսիք թէ «մեր ինչուն պէտք որ խօսինք այդ մասին»: Փառք քեզ, «! Աստուծոյ, այս մեծ զրպարտութիւն մըն է:

16. Աստուած ձեզ կ'զգուշացնէ որ սասնկ մեղադրանք մը չընէք յառաջիկային, եթէ հաւատացեալներ էք:

17. Աստուած ձեզ կը յայտնէ իր նշանները, նա իմաստուն և գիտուն է:

18. Որոնք որ կ'ախորժին հաւատացեալներու մասին զրպարտութիւններ տարածել ծանր պատիժ պիտի կրեն:

19. Այս և մուս աշխարհի մէջ: Աստուած ամենը գիտէ, և դուք բան մը չէք գիտեր:

20. Եթէ Աստուծոյ անսպառ շնորհը չըլլար յետէ պիտի զոհուէր, բայց նա գթած ողորմած է:

21. Ով հաւատացեալներ, մի հետեւիք սատանայի հետքերուն, վասնզի ով որ անոր հետքերուն հետեւի անոր սատանան կը հրամայէ

(\*) Մահաբեհի Այիշի կնոջ քեւ էղած ամբաստանութեան մասին է ինտասարայեւ այս գրքի:

գարչելի և զէջ գործեր: Եւ եթէ Աստուծոյ շնորհք չըլլար և անոր ոչորմութիւնը, ձեզմէ չմէկը արգար չէր ըլլար բնաւ: Բայց Աստուծոյ իր ուղածը արգար կընէ. նա կը լսէ ու կը տեսնէ բոլորը:

22. Զեր մէջ հարուստ և կարողութեան տէր և զօրները թող չերդնուն ալլեւ շնչաստելու համար իրենց ազգականներուն, աղքատներուն և Աստուծոյ համար գաղթածներուն, ալլ թող ներեն անոնց և բարեկամութիւն ցոյց տան: Գուք ալ չէք ուզեր որ Աստուծոյ ձեզ ներէ: Նա ներող և ոչորմած է:

23. Որոնք որ պարկեշտ և հաւատացեալ կրնանքուն զրպարտութիւն կրնան, անոնք այս և հանգեր ձեալ աշխարհին մէջ անիծեալ պիտը ըլլան և ծանր պատիժ պիտը կրեն:

24. Օր մը անոնց լեզուները ձեռքերը և ոտքերը իրենց գէմ պիտը վկայեն:

25. Այդ օրը Աստուծոյ արգարութեամբ պիտը հատուցանէ անոնց պարտքերը. այն ատեն պիտը ձանձան թէ Աստուծոյ նոյնինքն ճշմարտութիւնն է:

26. Լիտի կրնիր լիտի մարդոց համար եղած են, լիտի մարդիկ ալ լիտի կանանց համար եղած են. բարի կրնիր բարի մարդոց համար, և բարի մարդիկը բարի կանանց համար: Անոնք պիտը մաքրութիւն զրպարտութիւններէն. Աստուծոյ անոնց ներում և փառաւոր պարգև կայ:

27. Ո՛վ հաւատացեալներ, մի մտնէք օտար տուն մը առանց խնդրելու թոյլտուութիւն և առանց բարեկու ինն ընակողները: Սա ձեզ համար լաւ է մտածեցէք:

28. Եթէ հոն մէկը չգտնէք մի մտնէք, մընչեւ որ ձեզ չթոյլատրուի: Եթէ ձեզ ըստի սետ քաշուեցէք, քաշուեցէք անսիջապէս: Սա ձեզ աւելի մաքրութիւն է. Աստուծոյ գիտէ ձեր գործերը:

29. Անբնակ տուն մտնելը ձեզի յանցանք չէ:

կրնաք անկէ օգտուի: Աստուծոյ գիտէ ձեր արտարամք ու ծածկածը:

30. Հաւատացեալներուն պատուիրէ որ աչքերնին վար իջեցնեն և սեռակաւ ուղամնին գոցեն:

31. Պատուիրէ հաւատացեալ կրնան որ աչքերնին վար իջեցնեն և անդամնին պանն և զարդերնին չցուցադրեն. բացի ատտաքինէն. և լաշակով ծածկեն կուրծքերնին. զարդերնին ցուցնեն բացի իրենց ամուսինէն, կամ հայրերէն, կամ իրենց որդիներէն կամ իրենց ամուսիններու զաւակներէն, իրենց եղբայրներէն կամ իրենց եղբորորդիներէն, իրենց քեռորդներէն, կամ առանց կրնան կամ անոնց դերուհիներէն կամ ծառաներէն որոնք կ'ոջ պէտք չունին, կամ տղայներէն որոնք չեն զանազաներ տակաւին կ'ոջ մը սեռակաւ մասերը. և կրնիր թաքնին այն տեսակ չը շարժեն որ ցոյց տան իրենց ծածկուած զարդերը: Սրանք իր Պատուծոյ գալձուցէք որ երջանիկ ըլլաք:

32. Ամուսնացող գէք ամուսինները, ձեր ծառաները և աղախիները, եթէ անոնք աղքատ են, Աստուծոյ կը հարստացնէ զանոնք իր պարգեւովը. վասն զի Աստուծոյ անհուն է. գիտէ բոլորը:

33. Որոնք որ անկարող են ամուսնանալու, թող ժուժկալ ըլլան մինչև որ Աստուծոյ հարստացնէ զիրենք իր ատտութեամբը: Եթէ ձեր գերիներէն մէկը գրաւորապէս իր ազատութիւնը խնդրէ, տուէք անոր եթէ արժանի կը գտնէք: Եթէ անոնց մաս մը այն ինչքերէն զորս Աստուծոյ պարգեւած է ձեզ: Մի ստիպէք ձեր աղախիները պոռնիկութեան ձեզ ընծայելու համար այս աշխարհի անցաւոր վայելքը եթէ անոնք կուզեն պանն իրենց պարկեշտութիւնը: Եթէ մէկը զանոնք ստիպէ, Աստուծոյ անոնց կը ներէ ընտելութեամբ ըլլալուն համար. նա ներող և արգահատող է:

34. Մենք ձեզ պատգամներ յայտնեցինք որոնք յստակ օրինակներով կը բացատրեն ձեզմէ առաջ եղածները, և որոնք իրատես երկիւղածներուն:

35. Աստուած երկնից և երկրի յոյսն է: Այս լոյսը կը նմանի վառարանի մը որուն մէջ կայ ճրագ մը, ճրագ մը բիւրիցի մէջ և բիւրեղը աստղիման փայլուն է, այդ ճրագը կը վառի օրհնեայ ձիթենիի մը իւրով, որ ոչ Արևելքէն է և ոչ Արևմտքէն է, և ձէկը կը վառի առանց կրակ դպրեկու: Սա յոյսին յոյսն է: Աստուած դէպի իր լոյսը կառայնորդէ որք որ ուզէ, և օրինակներ կը բերէ մարդոց զի գիտէ ամէնը:

36. Այն տուներուն մէջ՝ զորս Աստուած հրահայեց բարձրացնել որպէսզի յիշուի իր անունը ամեն օր աստուտ և իրեկուն:

37. Իր փառաբանութիւնը կրնեն մարդիկ, զորս ոչ վաճառականութիւն ոչ և պայմադրութիւններ կարգիլն Աստուած յիշելէ, ազօթքը ճշդիւ կատարելէ և ողորմութիւն ստիլէ: Անոնք այն օրէն կը վախնան յորում մարդոց սրտերը և այրերը պիտի խտնաչիտթուին:

38. Այդ օրը Աստուած պիտի վարձաբեր ամենը իրենց յաւագոյն գործերուն համեմատ և իր շնորհները պիտի աւելցնէ: Աստուած անունդ կուտայ իր ուզածին և առանց հաշուի:

39. Անհաւատներու գործերը անապատի երկնաբեայթին պէս են, զոր ծարաւած մարդոց ջուր կը կարծէ մինչև որ չուն հասնի, և ոչ ինչ չգտնէր, բայց պիտի գտնէ իր առջևը զԱստուած, որ պիտի կարգադրէ անոր հաշիւը: Աստուած իր հաշիւները շուտ կը տեսնէ:

40. Անոնց գործերը կը նմանին նաև խոր և այլ յոյզ ծովի մը վրայ տարածուած խաւարին, այլք

աքիլի վրայ կը բարձրանան և յետոյ ամպ մի, ու խաւար խաւարին վրայ կը կտոցուի, մարդ ձեռքը կերկնցնէ ու զայն շտեմներ: Եթէ Աստուած լոյսը չըտայ մարդուն, ո՞ւր պիտի գտնէ զայն:

41. Ձեռն նկատած որ ինչ որ կայ՝ երկնից մէջ և երկրի վրայ բոլորը Աստուծոյ փառաբանութիւնը կը հաշակեն, թռչուններն ալ իրենց թևերը տարածելով: Ամէն էակ գիտէ իր ազօթքը և իր գովաբանութիւնը, Աստուած ալ գիտէ թէ անոնք ինչ կընեն:

42. Աստուծոյ կը պատկանի թագաւորութիւնը երկնից ու երկրի, նա այն կէտն է ուր կը վերջանայ ամէն բնութացր:

43. Ձեռն նկատած որ Աստուած ինչպէս գիւրիւն կը քշէ ամպերը և կը մրացնէ և յետոյ իրարու վրայ կը դիզէ, յետոյ կը տեսնես որ անոնց ծոցէն առատ անձրև մը կ'ելլէ, և իբր թէ երկնից լեռներէն կ'իջնցնէ կարկուտներ, որոնք ուզածին կը դպրնէ և ուզածները անկէ կը խուսափեցնէ: Բայ կը մեայ օր կայմակին փայլատակումը կուրացնէ մարդոց աչքերը:

44. Աստուած իրարու կը յարգեցնէ ցօրեկը ու գիշերը, ասոր մէջ արդարև օրինակ մը կայ մտացի մարդոց համար: Աստուած բոլոր անասունները բուտեղծած է ջուրէն, անոնցմէ սմանք փորեհնուն վրատ կը քայն, ոմանք երկու ոտքերնուն վրայ, ուրիշները չորս ոտքերու վրայ: Աստուած կ'ստեղծէ իր ուզածը քանզի նա ամենակարող է:

45. Մենք ձեզ պատգամներ յայտնեցինք, որոնք ձեզ ամենը կը բացատրեն յստակօրէն: Աստուած իր ուզածը կառայնորդէ ուղիղ ճամբան:

46. Կեռնուրէն կըսեն «մենք կը շաւատանք Աստուծոյ և մարգարէին, և նազանդ պիտի ըլլանք»:

Յետոյ անոնց մէկ մասը ետ կը դառնայ և հաստացեալները չեն բնաւ:

47. Երբ անոնք կը կանչուին դէպի Աստուած և դէպի անոր մարգարէն որ գատէ անոնց միջեւ, ա՛նա անոնցմէ մաս մը կը չեւանան և ետ կը դառնան:

48. Եթէ ճշմարտութիւնը իրենց կողմը ըլլար, պիտի հնազանդէին և անոր դառնային:

49. Անոնք սրտի հիւանդութիւն ունին, կամ կը կասկածի՞ն կամ կը վախնա՞ն թէ Աստուած և իր մարգարէն խարեն զիրենք: Ո՛չ այլ իրենք անխառններ են:

50. Հաւատացեալներու խօսքը ի՞նչ պիտի ըլլայ երբ կանչուին Աստուծոյ և իր մարգարէին առջեւ դատուելու համար: Անոնք կըսեն, «մենք յսեցինք և կը հնազանդինք»: Եւ անոնք երջանիկ պիտի ըլլան:

51. Ով որ հնազանդ է Աստուծոյ և անոր մարգարէին, ով որ կը վախնայ Աստուծմէ, երկրկամ է, ասենսերջանիկներէ՛ պիտի ըլլայ:

52. Անոնք երգումնցան Աստուծոյ անունով հանդիսաւորապէս, թէ եթէ դու հրամայես անոնց կըռւտոյ երթալ, անոնք պիտի երթան: Ըսէ՛ անոնց, «մի՛ երգնուք հնազանդութիւնն է սր արժէք ունի, Աստուած գիտէ ձեր գործերը:

53. Ըսէ՛ անոնց, «հնազանդեցէք Աստուծոյ եւ հնազանդեցէք մարգարէին: Եթէ ետ քաշուիք, այն ատեն նա իր գործերը ունի, ինչպէս դուք ձեր գործերը: Իսկ եթէ հնազանդիք, պիտի առաջնորդուիք: Մարգարէին պարտքը միայն բացորոշ քարոզութիւնն է:

54. Հաւատացեալներուն և բարեգործներուն խոստացած է Աստուած ժառանգորդներ ընել այս երկ-

րին, ինչպէս ձեր նախնիքները նախկին անհաւատներուն լաջորդեցուցած է: Ես անոնց խոստացած է հաստատել այս կրօնքին մէջ զոր հաճած է անոնց տալ և անոնց անհանգստութիւնը ապահովութեան փոխել: Անոնք զիս պիտի պաշտեն, և ինձ չպիտի բնկերացնեն ուրիշ էակ մը իրենց կրօնքին մէջ: Անոնք որ այս զեկուցումէն յետոյ անհաւատ ըլլան, ամբարիշտներ պիտի լինին:

55. Աւրեմն ազօթքը անթերի կատարեցէք, ողորմութիւն տուէք, մարգարէին հնազանդեցէք, որ Աստուծոյ ողորմութիւնը վախէք:

56. Մի հաւատաք որ անհաւատները երկրի վրայ կարենան Աստուծոյ կարողութեան յազմել, անոնք որ կ'ակին մէջ պիտի բնակին: Եւ ինչ սակալի ընդհակառակը:

57. Ով հաւատացեալներ, ձեր գերիները նաև անչափահաս տղաքները ձեր մօտ մտնելէ առաջ թող թողտուութիւն ուղեն որը երեք անգամ — արշալոյսի ազօթքէն առաջ, յետոյ կէսօրին երբ հազուտնիդ կը հանէք, և իրիկուան ազօթքէն յետոյ — այս երեք ժամանակները պատշաճօրէն յարգուելու են: Ուրիշ ժամանակներ եթէ առանց արտօնութեան ներս մտնես, ոչ ձեզ և ոչ անոնց յանցանք չէ՛ երբ իրարու տեսութեան կ'երթար: Այսպէս Աստուած ձեզ կը բացատրէ իր նշանները: Եւ Աստուած գիտուն եւ իմաստուն է:

58. Երբ ձեր զուակները չափահասութեան տարիքին հասնին պարտին միշտ թոյլտուութիւն խնդրել ներս մտնելու ինչպէս միսնները կը խնդրէին որ անոնցմէ առաջ էին: Այսպէս Աստուած ձեզ կը յայտնէ իւր պատգամները, նա գիտուն եւ իմաստուն է:

59. Այլեւս չծնանող եւ ամուսնանալու յոյս չունեցող կիները կրնան, առանց անպատշաճութեան, հազուստնին հանել, սակայն զարգերնին առանց ցոյց

տալու, բայց եթէ զգուշանան աւելի լաւ է իրենց: Աստուած կը լսէ ու գիտէ բոլորը:

60. Յոնցանք չհամարուիր կոյրի մը, ոչ ալ կազի մը, եւ ոչ ալ հիւանդ մարդու մը ձեր սեղանէն ուտելը. նաեւ ձեզ յանցանք չէ եթէ ձեր ճաշը բնէք ձեր տան մէջ, ձեր հայրերուն կամ ձեր մայրերուն, կամ ձեր եղբայրներու, կամ հօրեղբայրներուն եւ հօրաքոյրերուն, կամ մօրեղբայրներուն եւ մօրաքոյրերուն տուներուն մէջ, եւ բանալիները ձեր վրայ եղած տուներուն մէջ, ու ձեր բարեկամներու տուներուն մէջ: Անպատշաճութիւն չկայ բնաւ միասին կամ առանձինն ուտելու մէջ:


61. Երբ տան մը մէջ մանէք, զիրար ողջունեցէք. Աստուծոյ բարիք եւ երջանիկ առողջութիւն մաղթելով: Այսպէս աճա Աստուած ձեզ կը բացատրէ իր նշանները որ հասկնաք:

62. Ծշմարիտ հուատացեալները անոնք են որոնք կը հուատան Աստուծոյ եւ իր մարգարէին, եւ գործի մը համար երբ քու քովդ հաւաքուածն, չեն երթար առանց արածնութեան: Անոնք որ քեզմէ արածնութիւն կուզեն, անոնք են Աստուծոյ եւ մարգարէին հաւատացողները: Եթէ քեզմէ արածնութիւն ուզեն ուրիշ գործով մը զբաղելու, զու արածնէ որը որ ուզես: Անոնց համար Աստուծոյ ներողութիւն խնդրէ, չգանդի նա ներող եւ ողորւած է:

63. Մարգարէն այնպէս մի կանչէք, ինչպէս դուք զիրար կը կանչէք: Աստուած կը ճանչնայ զանոնք որոնք ետ քաշուելով ուրիշներու ետն կը պահուին: Իւր հրամաններուն չհնազանդողները թող վախճան թշուառութենէ մը կամ դառն պատիժէ:

64. Երկնից մէջ եւ երկրի վրայ բոլոր եզածր միթէ Աստուծոյ չպատկանօր: Նա գիտէ ձեր վիճակը: Օր մը մարդիկ անոր առջեւ պիտի ապրուին, եւ նա

անոնց պիտի յայտնէ ձեր գործերը՝ վասնզի նա գիտէ ամէնը:



Ի Ե Գ Լ Ո Ի Խ

(ՍՈՒՐԵԹ ԷԼ, -ՅՈՐԳԱՆ)

Մէքէալան, Եօթանասուն Եօրը պատգամ

Յանուն Աստուծոյ գեթածի եւ ողորմածի

1. Օրհնեալ բլրայ նա որ երկինքէն օրջեցուցած է Ֆօրգանը (\*) իր ծառային, որպէսզի մարդոց քարոզէ:
2. Թէ երկնից եւ երկրի յազաւարութիւնը անորն է. նա որդի չունի, եւ ընկեր չունի իր թագաւորութեան, նա է ստեղծած ամէն ինչ եւ յաւիտենական վճռով որոշած է անոնց ճակատագիրը (բարեք):
3. Կոսպաչաները անկէ զատ ուրիշ աստուածներ ընդունած են, աստուածներ որոնք բան մը չեն ըստեղծած այլ իրենք ալ ստեղծուած են.
4. Որոնք ոչ բարիք մը կրնան ընել եւ ոչ չարիք որոնք ոչ կհանք ունին ոչ մահ եւ ոչ ալ յարութիւն:
5. Անհաւատները կըսեն, «այս գիրքը ստութիւն մըն է միայն զօր ինք հնարած է եւ ուրիշներ ալ իրեն օգնած են այդ գործին մէջ»: Անա թէ ինչ է անոնց չարութիւնը եւ անիրաւութիւնը:
6. Կ'ըսեն նաեւ թէ հիներու առասպելներն են որ գրի առնել կուտայ. զանոնք իրեկուն առաւօտ իրեն կը կարդան»:
7. Ըսէ՛ «Այս գիրքը իջեցնողը նա է որ գիտէ երկինքի ու երկրի գազանիքը. նա ներող եւ ողորմող է:
8. Անոնք կըսեն, «Ի՞նչպէս մարգարէ է սա որ կը

(\*) Մերքան կամ Բաբանոս Գորանին անանկերէն մէկնէ.

ճաշէ եւ մէջ պէ՛ս շուկաները կը չըջնի: Գոնէ հրեշտակ մը չիջնէր որ անոր հետ քարոզէ»:

9. «Գիթ անոր գանձ մը չէ գրուած, կամ նա պարտէզ մը չունի որ իրեն սնունդ հասցնէ»: Չարեւը կրօնէ, «գոյք կախարդուած մարդու մը կը հետնուի իր կորստէ»:

10. Ահա տես թէ քու մասից ինչեր կը պատմեն: Անոնք մոլորած են, եւ չեն կրնար ելք գտնել:

11. Օրհնեալ ըլլայ նա, որ, եթէ ուզէ անկէ աւելի թանկագինը կուտայ քեզ. «չնայելի» գրախտներ՝ ուրկէ ջուրի կը հոսին, եւ պայատներ:

12. Բայց անոնք սուտ կը համարեն վերջին մամբ: Մենք սաստիկ կրակ մը պատրաստած ենք այն մամբ սուտ համարողներուն համար:

13. Երբ գանոնք հետուէն տեսնեն, պիտի լսեն անոնց գոռում գոչումը:

14. Եւ երբ անոնք նեղ տեղ մը նետուին, իրարու վրայ դիզուած, մահը պիտի կանչեն:

15. «Դուք այսօր մէկ մահ մի կանչէք, այլ շատ տեսակ մահեր»: պէտէ ըստէ իրենց:

16. Ըսէ անոնց, «ո՞րք աւելի լաւ է, սա՞ թէ յաւելտեանական գրախտը որ խոստացուած եւ երկիր դածնեբուն. ետր անոնց իրր վարձք եւ բնակավայր պիտի ըլլայ»:

17. Անոնք հոն պիտի գտնեն այն բոլորը որ կըրնան ցանկալ յաւելտեանական կեանքին մէջ: Այս խոստում մըն է, զոր անոնք Աստուծմէ պահանջելու իրաւունք պիտի ունենան:

18. Այն օրը, յորում պիտի հասքէ բոլորը, նաեւ այն աստուածները զորս կը պաշտէին Աստուծոյ հետ. նա պիտի հարցնէ ասոնց, «զո՞ք էք որ իմ ծառաներս մոլորեցուցիք, կամ անոնք մոլորեր էին ճամբէն»:

19. Անոնք պիտի պատասխանեն, «Անունդ փառա-

ւորեալ ըլլայ, մենք քեզմէ զատ պաշտպան չենք կրնար գտնել: Բայց զու անոնց եւ իրենց հայրերուն վայելել տուիր աշխարհի բարիքները, եւ անոնք մոռցան քու յիշատակդ. սա կորսուած ժողովուրդ մըն է»:

20. Նա պիտի ըսէ կոապաշտներուն «ահա ձեր աստուածները որոնք սուտ կը հանեն ձեր խօսքերը: Դուք չէք կրնար ոչ ետ գտնալ եւ ոչ օգնուի թիւն ստանալ:

21. Չեզմէ ով որ անիրաւ թիւն ընէ, անոր գառն պատիժ կայ:

22. Քեզմէ առաջ մարգարէներ զրկած ենք, որոնք կուտէին եւ փողոցը կը պտրտէին: Մենք ձեզ իրարմով կը փորձենք, աւսնելու համար թէ պիտի համբերէք: Եւ Աստուած կը տեսնէ յոլորը:

23. Որոնք որ յոյս չունին մէջ աշխարհի մէջ մեզ հանդիպելու կրօնն, «Չենք հաւատար միջնչեւ որ երկինքէն հրեշտակներ չիջնեն, կամ միջնչեւ որ շտեսնենք մեր աչքերովը Աստուածը»: Անոնք հպարտացած են, եւ ծանր յանցանք կը գործեն:

24. Յանցաւորներուն համար լաւ լուր չպիտի ըլլայ այն օրը, յորում պիտի տեսնեն հրեշտակներուն գալը. անոնք պիտի աղաղակեն. «հեռացէ՛ք, հեռացէ՛ք»:

25. Այն տեսն մէջ տեղ պիտի բերենք իւրարանչիւրին գործերը, եւ փոշիի պիտի վրածենք զանոնք ցիրուցան ամեն կողմ:

26. Այն օրը գրախտի հիւրերը լաւ հանգստավայր մը պիտի ունենան եւ հեշտալի տեղ մը՝ ցերեկուան քունի համար:

27. Այն օրը երկինքը պիտի ճեղքուի անպերով եւ հրեշտակները պիտի իջնեն խումբերով:

28. Այն օրը ճշմարիտ կայսրութիւնը Ողորմածիւ-

նրն է: Այդ օրը անհաւատներուն համար տաժանելի օր մըն է:

29. Այն օրը չարը իր ձեռքին երեսը պիտի խածնէ աւ պիտի ըսէ: «Երանի թէ մարգարէին ճամբէն զացած ըլլաի»:

30. «Վա՛յ ինձ, երանի թէ այնինչ մարգը ինձ բարեկամ չընէի»:

31. «Նա ինձ մոռցնել տուաւ ինձ ցոյց տրուած Քիրքը: Սատանան մամղիկը գաւաճանող է»:

32. Մարգարէն կրսէ «Տէր իմ, ժողովուրդս կարհամարհէ ա ս Գուրանը»:

33 Անա այսպէս ամեն մարգարէի համար լանցաւորներէն թշնամիներ տուած ենք: Բայց Աստուած քեզ ուզեցոյց եւ օգնական պիտի ըլլայ:

34. Անհաւատները կ'ըսեն «Ի՞նչու համար Գուրանը մէկ անգամէն չէ իջած անոր»:- Մենք այսպէս կ'ընենք ձեր սիրտը զօրացնելու համար, զայն կը կըրկենք մաս մաս:

35. Ամեն անգամ որ անոնք քեզ օրինակներ պիտի բերեն, մենք քեզ պիտի տանք ճշմարտութիւնը առնականատարեալ բացատրութիւնս:

36. Անոնք որ հաւաքուած պիտի ըլլան եւ զժոխքին մէջ նետուած, անոնց, տեղը ամենագէշն է, անոնք ճշմարիտ ճամբէն խիստ հեռու պիտի գտնուին:

37. Մենք զիրքը Մովսէսին տուինք եւ անոր տեղակալ առինք իր եղբայրը Ահարոնը:

38. Եւ ըսինք անոնց, Գաղէք այն ժողովուրդին որ սուտ կը հաճրէ մեր նշանները: Մենք կործանեցին բոլորովին այդ ժողովուրդը:

39. Մենք ջուրի մէջ խեղդեցինք Նոյի ժողովուրդը, որ մարգարէները սուտ կը համարէր, եւ անո՛ղ բոլոր ժողովուրդներուն իրատիչ նշան մը տուինք: Չարերուն համար պատրաստեցինք զառն տանջանք:

40. Ջնջեցինք Ասը եւ Թէմուարը, եւ Ռասի մարգիկը, եւ ասոնց մէջ տեղ ուրիշ այնչափ սերունդներ:

41. Այս ժողովուրդներու իւրաքանչիւրին խաւտիչ առակներ, բերինք, եւ զանոնք ամբողջովին բռնաջնջեցինք:

42. Անհաւատները լաճախ անցած են այն քաղաքին (Սէֆեօ) մօտէն, որուն վրայ ազէտաւոր անձրեւ մը տեղագցուցինք:

43. Երբ անոնք քեզ կը տեսնեն, քեզ կը ծաղրեն, ու կրսեն. «այս մարդն է զոր Աստուած իբր մարգարէ մէջ տեղ հաներ է»:

44. «Ի՞նչ էր մնացեր որ մեզ մեր աստուածներէն ձեռնթափ ընէր, եթէ հաստատամտութեամբ չլարուէինք»:- Երբ որ անոնք պատիժին մօտենալը տեսնեն, հարկաւ պիտի հասկնան թէ ո՞րոնք են ուղիղ ճամբէն աւելի հեռացածները:

45. Քեզ ի՞նչ կը թուի: Դու պաշտպանը պիտի ըլլաս անոնց որոնք իրենց հաճոյքը իրենց աստուած են ըրած:

46. Կը կարծե՞ս թէ անոնցմէ շատերը կը լսեն ու կը հասկնան: Անոնք անասուններու կը նմանին, եւ աւելի քան անասուններ հեռացած ուղիղ ճամբէն:

47. Ուշագրութիւն չըրի՞ր թէ քու Տէրը ինչպէս կերկնցնէ շուքը: Եթէ ուղէր, զայն տեսական կընէր: Մենք արեւը անոր ուղեցոյց ըրած ենք:

48. Եւ յետոյ զայն կը պակսեցնենք զիւրուութեամբ:

49. Նա է որ ձեզ կուտայ զիչերը հազուստի համար եւ քունը հանգիստի համար, եւ ցերեկը շարժուածի համար:

50. Նա կը զրկէ հովերը իբր աւետաւոր իր շնորհքներուն, մենք երկինքէն մաքուր ջուր կ'եջեջենք:

31. Մեռնող երկիր մը վերակենդանացնելու համար և անով ծարուր կանցնենք մեր արարածներուն, անհամար անասուններուն ու մարդոց :

32. Մենք զայն կը արարածենք ամեն կողմ անոնց մէջ որ մեզ յիշեն, բայց մարդոցմէ շատերը մերժեցին ապերախտութեամբ :

33. Եթէ ուզէինք ամեն մէկ քաղաքի քարոզիչ մը կը զրկէինք :

34. Մի հնազանդիր անհաւատներուն, և եռանդազին պատերազմէ անոնց դէմ այս գիրքով :

35. Աստուած է որ երկու ծովերը մօտ ըրած է, մին քաղցր և զովացուցիչ՝ միւսը աղի և դառն, և անոնց մէջ դրած է միջոց մը և պարիսպ մը աննշանակի :

36. Նա է որ ջուրէ ստեղծած է մարդիկը և նա հաստատած է անոնց մէջ ազգականական կապեր և խնամաւթիւն : Բու Տէրդ զօրաւոր է :

37. Աստուծմէ զատ կը պաշտեն անոնք այնպէս բաներ որոնք իրենց ոչ օգուտ կրնան բերել և ոչ փնտա : Անհաւատը Սորանային օգնողն է իր Տիրոջ հակառակ :

38. Մենք քեզ զրկեցինք միայն աւետիս տալու և սպառնալիք ընելու համար :

39. Ըսէ՛ անոնց, «ես ձեզմէ ուրիշ թոշակ չեմ ուզեր, բայց միայն ձեզ տեսնել որ դէպի Աստուած առաջնորդող ճամբան բռնէք» :

60. Ապաւինէ՛ այն կենդանիին որ անմահ է. անոր գովիտը հաշակէ : Նա լաւ գիտէ իր ծառաներուն մեղքերը : Նա ստեղծած է երկինքը և երկիրը և անոնց մէջ բոլոր եղածները, վեց օրուան մէջ, յետոյ գնաց նստաւ գահին վրայ : Նա է Ողորմածը. անոր մասին հարցուր գիտուն մարդոց :

61. Երբ անհաւատներուն ըսուեցաւ, «երկրպա-

պեցէ՛ք Ողորմածին առջև» անոնք հարցուցին թէ «ո՞վ է Ողորմածը, մենք քու ըսածի՞դ առջև երկրպագենք : Եւ անոնց հեռացումը անով աւելցաւ :

62. Օրհնեալ ըլլայ այն որ երկինքի զողիակոսին նշանները դրած է, որ հոն առկախեր է լուսաառն և լուսինը որոնք կը լուսաւորեն :

63. Նա հաստատած է գիշերը և ցերեկը իրարու յաջորդող, լուսաւորելու համար Աստուած յիշելու ու զողները կամ անոր շնորհակալութեան գործեր ընելու գողները :

64. Ողորմածին ծառաները անոնք են, որոնք այս երկրի վրայ հասնաւթեամբ կ'ընժանան, և կ'ըսեն «խալազութիւն ձեզ» (Մէլած ալէ+է-ժ) երբ տգէտները անոնց խօսք կ'ուզուին :

65. Որոնք գիշերները Աստուծոյ ազօթելով կ'սեցնեն երկրպագութեամբ կամ յօանկայս :

66. Որոնք կրսեն, «Տէ՛ր, մեզմէ հեռացուր գեհննին ասնջանքը, վասնզի անոր տագնազները մշտնջենաւոր են, վասնզի այն գէշ վայր մը ու բնակարան մըն է :

67. Որոնք իրենց առատաձեռնութեան մէջ ոչ ծրլատ են ոչ ազան, այլ միջակ են :

68. Որոնք Աստուծմէ զատ աստուածներ չեն կանչեր, որոնք Աստուծոյ արգիլած անձր չեն սպաններ, արդար պատճառէ մը դուրս, և որոնք շնութիւն չեն ըներ, և սվ որ այս բնէ կ'ընդունի անոր պատիժը :

69. Յարութեան օրը անոր պատիժը կը կրկնապատկուի. նոյ զայն կը կրէ մշտնջենաւորագէտ խայտառակուած :

70. Բայց անոնք որ պիտի ապաշխարեն պիտի հաւատան ու բարիք պիտի գործեն, Աստուած անոնց շար գործերը բարի պիտի փոխէ. վասնզի Աստուած ներող և ողորմած է :

71. Ով որ կ'ապաշխարէ եւ կը հաւատայ նա Աստուծոյ կը վերադառնայ եւ կ'ընդունուի :

72. Որոնք որ սուտ վկայութիւն չեն ընել, զէջխօսակցութեանց մէջէն ազնուութեամբ կանցնին :

73. Որոնք Աստուծոյ նշանները պատմուած առեւտրչեն իյնար քնանար խօսերու եւ կոյրերու պէս :

74. Որոնք կ'ըսեն, «ո՛վ Տէր, մեր կրնեքէն եւ մեր զաւակներէն ուրախացուր մեզ, երկիր զածնեալուն առաջնորդը ըրէ մեզ :

5. Անա անոնք վարձք պիտի ընդունին դրախտին քարձք տեղերը, վասնզի համբերեցին, եւ հոն պիտի գտնեն ողջօրն եւ խաղաղութիւն :

76. Անոնք հոն պիտի բնակին յաւիտեանապա : Ինչ զեղեցիկ բնակավայր. ինչ զեղեցիկ կացարան :

77. Ըսէ. «Աստուած անհոգ է ձեր աղօթքի մասին. դուք որ մարգարէները խաբերայ համարած էք՝ բայց մշտական պատիժը ձեզ պիտի հասնի» :



ԻՉ. Գ Լ Ո Ի Ի

(ՍՈՒՐԷԹ ԷԼ ՇՈՒԱՐԱ)

Մէքէաղան, երկու հարիւր բոցն ուրը պաս.

Յանուն Աստուծոյ գթածի ողորմածի

1. Թ. Ս. Մ. Ասոնք ծանօթ գիրքին նշաններն են :

2. Դուն քեզ կ'ապառես վշտով թէ անոնք չեն ուզեր հաւատալ :

3. Եթէ ուղէինք երկիրքէն հրաշք մը կը զրկէինք՝ քուն առջև գլուխնին պիտի խոնարհեցնէին :

4 Ողորմածէն նոր զեկոյց մը չիջաւ որ անոնք չհետանային զայն չլսելու համար :

5. Անոնք զայն սուտ կը համարեն, բայց ծաղրելնուն համար շուտով պիտի իմանան պատիժին լուրերը :

6 Այքերնին երկրի վրայ չեն դարձուցած : Անոնք չեն տեսած թէ ինչպէս մենք հոն ամեն բանէ թանկագին զոյգ մը արտադրած ենք :

7. Ասոր մէջ նշաններ կան, բայց մարդոց շատերը չեն հաւատար :

8. Արդարեւ քու Տէրդ հզօր եւ իմաստուն է :

9. Կը յէջէ՞ թէ որ մը Աստուած կանչեց Մովսէսը եւ ըսաւ անոր, «Գնա՛ սա անպիտան ժողովուրդին քով» :

10 Այնինքն Փարաւոնի ժողովուրդին քով : Ինձ մէջ պիտի՞ վախնան» :

11. Եւ ըսաւ, «Տէր, կը վախնամ որ ինձ խաբեւայ համարեն» :

12. Իմ սիրտս նեղ է եւ յեզուս կակազող է. իմ եղբարս Ահարոնը զրկէ փնտռելու :

13. Մարդասպանութեան ոճիր մը ինձ վերագրած են. կը վախնամ որ զիս սպաննեն :

14. «Ամենին, ըսաւ Աստուած, երկուքդ այ գացէք իմ նշաններով. մենք ձեր հետ պիտի ըլլանք եւ պիտի լսենք» :

15. Գաղէք ուրեմն երկուքդ այ Փարաւոնին քով, եւ ըսէք անոր, «ես Մովսէսն եմ՝ զրկուած տիեզերքի Տերը կողմէ» :

16. «Զգէ որ Իսրայէի որդիները մեր հետ մեկնին :

17. Փարաւոն ըսաւ Մովսէսին. «չէ՞ որ քու ժանկութեանդ մէջ մենք մեծցուցինք քեզ մեր մէջ. քու կեանքին շատ մը տարիները մեր մէջ անցուցիր» :

18. «Դու ըրիր այն գործը զոր գիտես. դու ապե-

բախտ մըն ես» :

19. - Այո՛ , ըսաւ Մովսէս , ես բրած եմ այդ գործը , բայց այն ատեն ես սխալած եմ :

20. - Ես փախայ ձեր մէջէն՝ վախէս , յետոյ Աստուած ինձ իմաստութիւն տուաւ և զիս իր մարգարէն բրաւ :

21. - Այն բարիքը զոր իմ երեսս կուտաս , Իսրայէլի զաւակներուն գերութեան ենթարկուած ըլլալը չէ՞ :

22. - Ուրեմն ո՞վ է տիեզերքի տէրը , ըսաւ Փարաւոն :

23. - Եւ Տէրն է երկնից և երկրի և բոլոր անոնց մէջ եղածին , եթէ կը հաւատասք :

24. - Կը լսէ՞ք , ըսաւ Փարաւոն իր շուրջը եղող ներուն :

25. - Մովսէս շարունակեց , Ձեր տէրը տէրն է ձեր նախահայրերուն :

26. - Ձեր մարգարէն , ըսաւ Փարաւոն , որ ձեզ զրկուած է , զիւսձար մըն է :

27. - Եւ տէրն է Արևելքի և Արևմուտքի և անոնց միջև բոլոր եղածին , եթէ կը հասկնասք , յարեց Մովսէս :

28. - Եթէ դու ինձմէ զատ ուրիշ մը աստուած բնութենիս , ըսաւ Փարաւոն , քեզ բանտ նետել կուտամ :

29. - Բայց եթէ քեզ յայտնի ապացոյց մը բերեմ . . . ըսաւ Մովսէս :

30. - Բե՛ր տեսնեմ , ըսաւ փարաւոն , եթէ ճշմարտախօս ես :

31. - Մովսէս նետեց իր գաւազանը , որ ճիւղ ոձի մը փոխուեցաւ :

32. Յետոյ ձանեց ձեռքը , որ ճերմակ երեւցաւ բոլոր ձանդիսատեսներուն :

33. Փարաւոն ըսաւ զինք շիջապատող մեծերուն , «Որաւի . սա վարպետ կախարդ մըն է» :

34. «Իր կախարդութիւններով կ'ուզէ ձեր երկրէն

հանել ձեզ , ձեր կարծիքը ի՞նչ է :

35. Մեծամեծները ըսին , «զանի եւ և լրայրը դուրսըրէ , և յետոյ մարդիկ զրկէ քաղաքները որ հաւաքեն ու . . .

36. Բեզ բերեն բոլոր վարպետ կախարդները ,

37 Բոլոր կախարդները հրաւիրուեցան որոշ օրուան մը ժամադրութեամբ :

38 Ժոշոխուրդին շարքուեցաւ , «Նոն ներկայ պիտի գտնուիք» :

39 Այո՛ , մենք այ պիտի նետելնք կախարդներուն եթէ զանի յաղթես , կըսէին Ժոշոխուրդին մէջէն :

40. Երբ կախարդները հաւաքուեցան , Փարաւոնին ըսին , «Վարձատրութիւն մը պիտի ստանանք եթէ յաղթեսք» :

41 , - Անտարախոյս , ըսաւ , Փարաւոն , այն ատեն դուք իմ մօտ եղողներէն կըլլասք :

42. Յայնժամ Մովսէս ըսաւ անոնց , «նետեցէք ինչ որ պիտի նետէք» :

43. Անոնք նետեցին իրենց շուանները և գաւազանները այսպէս ըսելով , «Փարաւոնի զօրութեամբ մենք յաղթուց ենք» :

44. Մովսէս այ նետեց իր գաւազանը , և ա՛ն ան կլլեց անոնց ստութեամբ շինածները :

45. Եւ կախարդները ինչան պաշտումի երկրպագեցին :

46. Եւ աղաղակեցին , «Կը հաւատանք տիեզերքի Տիրոջը» :

47. «Մովսէսի եւ Ահարոնի Աստուծոյն» :

48. Ուրեմն դուք անոր հաւատացի՛ք , ըսաւ Փարաւոն , առանց իմ արտօնութեանս : Ուրեմն նա ձեր պէ՛տն է : Ան սովրեցուցած է ձեզ կախարդութիւնը : Բայց դուք շուտով կը հասկնասք ի՛նչ էինք որ է երբեք յեբ Բեբել :

49. «Պիտի կտրել տամ ձեր ձեռքերը և ոտքերը զէմ գիմաց, և բոլորդ խաչել տամ:

50. - Մեր հոգը չէ, վասն զի մենք մեր Տիրոջ պիտի վեճադառնանք:

51. Մենք կը բաղձանք որ Աստուած ներէ մեր մեղքը, քանի որ առաջին հաւատացեալները եղանք:

52. Մենք սա հրամանը յայտնեցինք Մովսէսին «Գու իմ ծառաներուն նեա ճամբայ ել գիշեր ասեն վաս զի պիտի հալածուիք:

53. Փարաւոն մարգիկ զրկեց քաղաքները զօրժողօրս:

54. Իւր-յէլ-ույի՜ փոքրաթիւ խումբ մըն են միայն, էլ-էնէն:

55. Եւ անոնք մեղ զէմ բարկացած են:

56. Մենք, ընդհակառակը, բազմաթիւ ենք և զգուշաւոր:

57. Այսպէս մեք եգիպտացիները հանած ենք իրենց պարտէզներէն և ազրի բներէն:

58. Իրենց գանձերէն և փառաւոր բնակարաններէն:

59. Այո՛, այսպէս եղաւ, և մենք զանոնք ժառանգութիւն տուինք Իսրայէլի որդւոց:

60. Արեւը ծագելուն, եգիպտացիք զանոնք նեապնդեցին:

61. Եւ երբ երկու բանակները նեռուէն զիրար տեսան, Մովսէսի ընկերները ըսին, ա՛յա պիտի բռնուինք:

62. Երբէ՛ք, բսաւ Մովսէս. Աստուած իմ նեա է. նա զիս պիտի առաջնորդէ:

63. Մովսէսին սա հրամանը յայտնեցինք «Գաւազանդ ծովին զարի»: Մովը երկու ճեղքուեցաւ, իւրաքանչիւր մասը մեծ լեռան պէս կանգնած:

64. Յետոյ միւսները (եգիպտացի՜) մօտեցուցինք:

65. Ազատեցինք Մովսէսը և բոլոր իրեն նեաեռողները:

66. Եւ միւսները ջուրին մէջ խեղդեցինք:

67. Այս գէպքին մէջ նշաններ կան. բայց ճարգոցմէ շատեցր չեն հաւատար:

68. Եւ սակայն քու Տէրդ հզօր և ողորմած է:

69. Կարգա՛ անոնց Աբրահամի պատմութիւնը:

70. Որ օր մը բսաւ իր հօրը և իր ընտանիքին «Բ՛նչ կո պոշտէք դուք»:

71. Անոնք բսին, «Մենք կուռքեր կը պաշտենք, և յարատեւութեամբ մեր ժամանակը կանցնենք աւանց մեծաններուն մէջ»:

72. - Չեղ կը լսե՞ն, հարցուց Աբրահամ, երբ զանոնք կը կանչէք:

73. Անոնք ձեզ բանի մը կը ծառայեն. կրնա՞ն ձեզ չարիք մ՛ընել:

74. - Ո՛, ըսին անոնք, այլ այսպէս տեսանք մենք մեր հայրերէն:

75. - Ստածեցի՞ք թէ, բսաւ Աբրահամ, ինչ կը պաշտէք:

76. «Թէ ձեր և թէ ձեր նախահայրերու պաշտածները»:

77. Ինձ թշնամիներ սն: Տիեզերաց աէր միայն մէկ Աստուած կայ:

78. Որ զիս ստեղծած է, որ զիս կառաջնորդէ ուղրդ ճամբուն մէջ,

79. Որ զիս կո անուցանէ և ինձ խմելիք կուտայ:

80. Որ զիս կը բժշկէ երբ հիւանդանամ:

81. Որ զիս պիտի մեռցնէ և ինձ յարութիւն առնել պիտի տայ:

82. Որ, կը յուսամ թէ իմ մեղքերս պիտի ներէ դատաստանի օրը:

83. Տէ՛ք, զիս զօրացուր, և արդարներուն կարգը դասէ զիս:

- 84. Ենորէ՛ն՝ ինձ ճշմարտութեան լեզուն որ մինչև վերջիններուն ժամանակը չէշրէն ի՞մ խոսեալս :
- 85. Եւ զիս ողորմութեան դրախտին ժառանգորդներէն ըրէ .
- 86. Ներէ իմ հօրս , որ՛ մոլորեալ է :
- 87. Զիս մի ամչցներ այն օր . յորում մարդիկ յարութիւն պիտի առնեն ,
- 88. Այն օրը ստացուածքները ու զաւակները անօգուտ պիտի ըլլան .
- 89. Եթէ այն մաքուր սրտով մը Աստուծոյ չը մօտենայ .
- 90. Եւ դրախտը պիտի մօտենայ երկիւղածներու համար ,
- 91. Եւ դժոխքը պիտի ներխայտցուի ըմբոսաները Կէլէւս :
- 92. Այն ատեն անոնց կրտուի . «Ո՛ր են ձեր պսաշտածները .
- 93. Աստուծոյ հետ . անոնք պիտի օգնեն ձեզ , պիտի օգնեն իրենք իրենց :
- 94. Անոնք բոլորը դժոխք պիտի նետուին , նաև մոլորեցուցիչները .
- 95. Եւ Էլզրսի բոլոր գունտերը :
- 96. Անոնք հոն պիտի վրձին ու ըսեն .
- 97. «Աստուած վկայ , որ մենք մոլորութեան մէջ էինք» :
- 98. «Երբ մենք ձեզ միևնոյն կարգը կը դասէինք ատիկերքի Տիրոջ հետ» :
- 99. Յանցաւորները միայն մեզ մոլորեցուցին :
- 100. «Մենք բարեխօսներ չունինք» :
- 101. «Ոչ այ մտերիմ բարեկամ» :
- 102. «Ո՛հ , եթէ անգամ մըն ալ աշխարհ վերադարձունէինք , հաւատացեալներ պիտի ըլլայինք» :
- 103. Ասոր մէջ նշաններ կան , բայց մարդոց շատերը չեն հաւատար :

- 104. Քու Տէրդ հզօր եւ իմաստուն է :
- 105. Նոյի ժողովուրդն ալ խաբերայ համարեց մարդարէները .
- 106. Իրենց հայրենակից Նոյն երբ ըսաւ անոնց թէ «չէ՞ք վախնար Աստուծով :
- 107. «Ձեզ համար ես վստահիլի մարդարէ եմ :
- 108. «Ուստի վախցէք Աստուծմէ եւ հնազանդեցէք ինձ» :
- 109. Ես ձեզմէ վարձք չեմ ուզեր , վասն զի իմ վարձքս ատիկերքի Տէրն եղող Աստուծմէ է :
- 110. «Ուստի վախցէք Աստուծմէ եւ հնազանդեցէք ինձ .
- 111. Անոնք պատասխանեցին «հաւատա՞նք քեզ , քեզ միայն ստահակները կը հաւատան :
- 112. — Ես անոնց գործերը բնաւ չեմ գետեր ըսաւ Նոյ .
- 113. Անոնք միայն Աստուծոյ հաշիւ պիտի տան , եթէ կը հասկնաք :
- 114. «Հաւատացողները չպիտի մերժեմ .
- 115. «Ես միայն բացայայտ քարոզող մըն եմ :
- 116. Անոնք ալ ըսին «ով Նոյ , եթէ ընթացքէդ չգաղթես , պիտի քարկոծուես» :
- 117. Նոյ աղաղակեց Աստուծոյ Ո՛վ Տէր . ահա իմ ժողովուրդս զիս ստախօս կը համարէ :
- 118. «Դու դատէ անոնց եւ ի՛մ միջեւ եւ վերկէզիս եւ ինձ հետեւող հաւատացեալները» :
- 119. Մենք զանի եւ անոր հետ եղողները ազատեցինք , բոլորը նաևի մը մէջ լեցուած .
- 120. Յետոյ մնաղածները ջուրին մէջ խեղդեցինք :
- 121. Արդարեւ ասոր մէջ խրատիչ նշան կայ , բայց մարդոց շատերը չեն հաւատար :
- 122. Ստուգիւ քու Տէրդ հզօր եւ ողորմած է :
- 123. Ատցիները խաբերայ կը համարէին իրենց մարդարէները :

- 124. Անոնց հայրենակից Հուար ըսաւ անոնց. «գուք Աստուծմէ չէ՞ք վախնար»:
- 125. «Ես ձեզ եկայ իբր վստահելի մարդարէ մը»:
- 126. «Վախցէք Աստուծմէ եւ հնազանդեցէք ինձ»:
- 127. Ես ասոր համար ձեզմէ վարձք չեմ պահանջեր. չհանդի իմ վարձքս տիեզիրքի աւր Աստուծմէ է:
- 128. Միթէ իւրաքանչիւր բլուրի վրայ չէ՞նք պիտի կառուցանէք ձեր սնտաի ժամանցին համար:
- 129. «Շէնքեր ալ կը կառուցանէ՞ք. յախտեան հոն ապրելու համար»:
- 130. «Երբ քաջութիւն կը գործէք. բոնութեամբ կը գործէք»:
- 131. «Ուրեմն վախցէք Աստուծմէ եւ հնազանդեցէք ինձ»:
- 132. «Վախցէք անկէ որ ձեզ առատութեամբ տուած է ահն ինչ որ զիտէք»:
- 133. Որ ձեզ տուած է առատօրէն անասուններ ու զաւակներ:
- 134. Տուած է օյրիներ եւ աղբիւրներ:
- 135. «Անոնց օրուան ձեր կրելիք պատիժէն կը վախնամ»:
- 136. Անոնք պատասխանեցին, «ձեզ համար նոյնն է յարողես ալ. չգարողես ալ»:
- 137. Քու քարոզներդ հիներու ծթոած խօսքերն են»:
- 138. «Մենք բնաւ չպիտի պատժուինք»:
- 139. Անոնք ստախօս ամբաստանեցին Հուար. եւ մենք զանոնք բնաջնջեցինք: Այս զէպքին մէջ նըշան մը կայ. բայց շատերը չեն հաւատար»:
- 140. Եւ ճշմարտ, ձեր Տէրը հզօր ողորմած է:
- 141. Սամուսցիւրերն ալ ստախօս համարեցին իրենց մարդարէները:
- 142. Անոնց հայրենակիցը Սալիճ անոնց ըսաւ. «Աստուծմէ չէ՞ք վախնար»:

- 143. «Ես ձեզ կուզամ իբր վստահելի մարդարէ մը»:
- 144. «Ուրեմն հաւատացէք Աստուծոյ եւ հնազանդեցէք ինձ»:
- 145. «Ես ասոր համար վարձք չեմ ուզեր ձեզմէ. վասնզի իմ վարձքս տիեզիրքի տիրոջ, Աստուծոյ վրայ է»:
- 146. «Կը կարծէք որ գուք սպանով պիտի մնա՞ք յախտեան, հոս գանուածներուն մէջ»:
- 147. Պարտէզներուն եւ աղբիւրներուն մէջ»:
- 148. Յանուած գաշտերուն եւ արմաւենիներու թանձրախիտ ճիւղերուն մէջ»:
- 149. Եւ միշտ հպարտութեամբ ապառաժներուն մէջ տունե՞ր պիտի կերտէք»:
- 150. «Ուրեմն վախցէ՞ք Աստուծմէ եւ հնազանդեցէք ինձ»:
- 151. «Մի հնազանդիք բնաւ հրամաններուն անոնց որոնք չափազանցութիւն կընեն»:
- 152. «Որոնք կ'ապականեն երկիրը եւ կ'աւերեն»:
- 153 Անոնք պատասխանեցին անոր, «գու կախարդուածներէն նս»:
- 154. «Դու մեզի պէս մարդ մըն ես. հրաշք մը ցոյց տուր մեզ, եթէ ճշմարիտ է քու ըսածդ»:
- 155. Նա ըսաւ, «Ահա այս ուղար նշան ըլլայ. առնիկա օր մը իր խմելիք ջուրը պիտի ունենայ, գուք ալ ձերինը ուրիշ օր մը»:
- 156. Անոր չլիսսէք, վասնզի մեծ օրուան պատիժը կը կրէք»:
- 157. Անոնք զայն սպաննեցին, բայց զղջացին հեռուեալ օրը:
- 158. Պատիմը հասաւ անոնց: Այն երկինքէն նշան մըն էր. շատերը անոր չեն հաւատար»:
- 159. Սակայն քու Տէրդ հզօր եւ ողորմած է:
- 160. Եւ Ղովտի ժողովուրդն ալ սուտ համարեց

Աստուծոյ մարգարէները:

- 161. Երբ իրենց հայրենակից Գովաք ըսաւ անոնց «Աստուծմէ չէ՞ք վախնար»:
- 162. «Ես ձեզ կուգամ իրր վստահելի մարգարէ մը»:
- 163. «Ուրեմն վախցէ՛ք Աստուծմէ եւ հնազանդեցէ՛ք ինձ»:
- 164. «Ես ձեզմէ վարձք չեմ պահանջեր ասոր համար. իմ վարձքս տեղերքի տիրոջ Աստուծոյ վրայ է»:
- 165. «Աշխարհի բոլոր արարածներուն մէջ արուեստուն կը մերձաւորիք»:
- 166. Զգելով կիները զորս Աստուած ձեզ համար ստեղծած է: Արդարեւ դուք օրինազանց 'ժողովուրդ մը' էք»:
- 167. Անոնք անոր պատասխանեցին. «Եթէ չդադրես քարոզելէ, քաղաքէն պիտի վճռուես»:
- 168. Նա ալ ըսաւ, «Ես կատեմ ձեր գործերը»:
- 169. «Տէր, ազատէ զիս ու ընտանիքս անոնց ընելիքներէն»:
- 170. Մենք ազատեցինք զանի ու իր ընտանիքը»:
- 171. Բացի պառաւէ մը որ ետ մնացած էր»:
- 172. Յետոյ բնաջնջեօինք միւսները»:
- 173. Անոնց վրայ անձրև մը տեղացուցինք. ինչ սարսափելի անձրև մեր խրատած մարդոց վրայ տեղացող անձրևը»:
- 174. Սա երկինքէն նշան մըն էր, բայց չատերը չեն հաւատար»:
- 175. Սակայն քու Տէրդ հզօր եւ ողորմած է»:
- 176. Մատիանի բնակիչները ստախօս համարեցին Աստուծոյ մարգարէները»:
- 177. Ծուէյպը անոնց պոռաց, «վախցէ՛ք Աստուծմէ»:
- 178. «Ես ձեզ կուգամ իրր վստահելի մարգարէ մը»:
- 179. «Ուրեմն վախցէ՛ք Աստուծմէ եւ հնազանդեցէ՛ք ինձ»:

- 180. «Ես ձեզմէ վարձք չեմ ուզեր անոր համար. իմ վարձքս տեղերքի տէր Աստուծոյ վրայ է»:
- 181. «Զափը լեցուն տուէք եւ վնասատու մի ըլլաք»:
- 182. Ուզի՞ր կշիռով կշռեցէ՛ք»:
- 183. Մարդոց ստացուածքներուն վնաս մի հասցնէ՛ք, եւ ծայրայեղութիւններ մի ընէ՛ք ձեր աւերած երկրին մէջ»:
- 184. Վախցէ՛ք ձեզ եւ նախնիքը ստեղծողէն»:
- 185. Անոնք անոր պատասխանեցին. «Վ' ճուէյպը իրաւի դու կախարդուած ես»:
- 186. «Ի՞նչ ալ մեզի պէս մարդ մըն ես եւ կը կարծեսք թէ դու ստախօս մ'ես»:
- 187. «Եթէ ճշմարտախօս մըն ես, երկինքի մէկ մասը մեր վրայ ձգել տուր»:
- 188. —Աստուած կատարելագէտ գիտէ ձեր գործերը, ըստ ճուէյբի»:
- 189. Անոնք զանի խաբւբայ կը համարէին: մթազին ամպերու պատիժը անոնց հասաւ. որ անծ պատժոյ մը օրն էր»:
- 190. Այդ երկնից մէկ նշանն էր. բայց մարդոց չատերը չեն հաւատար»:
- 191. Քու Տէրդ հզօր եւ ողորմած է»:
- 192. Եւ սա (Գուրանը) տեղերքի տիրոջ մէկ յայտնու թիւնն է»:
- 193. Հաւատարիմ հոգին (Գարբիէլը) զայն վերէն բերաւ»:
- 194. Եւ զայն դրաւ քու սրտիդ վրայ. որպէսզի մարգարէ ըլլաս»:
- 195. Գուրանը յատակ արարական լեզուով է»:
- 196. Նախնիքներու գիրքերուն մէջ յէշտած է այն»:
- 197. Միթէ սա նշան մը չէ՞ անոնց, քանի որ իսրայելի որդւոց գիտունները զայն գիտէին»:

198. Եթէ մենք զայն օտարագգիւ մը իջնցուցած ըլլայինք:

199. Եւ նա զայն անհաւատներուն կարգար, առնոք չպիտի հաւատային:

200. Այսպէս մենք անհաւատութիւնը ապաւորեցինք մեղաւորներու սրտերուն չմէջ:

201. Անոնք չպիտի հաւատան, մինչեւ որ անողօք պատիժը չտեսնեն:

202. Ստուգիւ, այս պատիժը յանկարծ կը հասնի անոնց, երբ չեն սպասեր անոր:

203. Այն ատեն պիտի աղաղակեն, «Մեզ պայմանաժամ պիտի տրուի»:

204. «Միթէ պատիժը այսօր պիտի փութացնեն»:

205. Քեզ ինչպէս կը թուի, եթէ անոնց վայելել տրուի երկար տարիներ այս աշխարհի բարիքները,

206. Յետոյ անոնց սպառնացուած պատիժը հասնի,

207. Ինչ բանի կը ծառայէ անոնց կեանքս վայելածը:

208. Մենք երբէք չենք կործանած քաղաք մը որ իր մարգարէները ունեցած չըլլայ:

209. Ազգարարիւ պաշտօնով: Մենք բնաւ անիրաւ չենք չարժամ:

210. Սատանաները չեն Գուբանը երկիրքէն բերողները:

211. Այդ անոնց չէր պատշաճէր, եւ անոնք չէին կրնար:

212. Անոնք նոյնիսկ զրկուած են լսելէ:

213. Աստուծմէ զատ ուրիշը մի կանչեր որ [պատժուողներէն չըլլաս:

214. Քու մերձակայ ազգակիցներուդ քարոզէ:

215. Քու թեւերդ տարածէ քեզ հետեւող հաւատացեալներուն վրայ:

216. Եթէ քեզ չհնազանդին, [ըսէ անոնց, «Ես անմեղ եմ ձեր գործերէն»:

217. Վստահ եղի՛ր հզօր և ողորմած Աստուծոյ մասին,

218. Որ կը տեսնէ քու աշխի՛տ կայնիւղ:

219. Որ կը տեսնէ քու վարմունքդ, երբ իր պաշտօղներուն մէջ կը գտնուիս:

220. Վասնզի նա կը լսէ ու գիտէ բոլորը:

221. Ըսե՛մ ձեզ թէ սատանաները որոնց վրայ կ'ընեն:

222. Անոնք կ'ընեն ամեն ստախօս մեղաւորի վրայ:

223. Եւ կը թելագրեն իրենց լսածը և շատերը կը ստեն,

224. Մոլորեալները բանաստեղծներուն ալ կը հետեին:

225. Չե՛ս տեսներ որ անոնք ամեն կողմ կը շրջին իբր գատարկապորտ:

226. Որոնք կըսեն ինչ որ իրենք չեն ըներ,

227. Բացի հաւատացողներէն որոնք բարիք կը գործեն և անդադար կը յիշեն Աստուծոյ անունը,

228. Որոնք կը պաշտպանուին երբ յարձակում կրեն. վասնզի որոնք որ կը հարուածեն առաջինները որ մը պիտի հասկնան թէ ինչ վիճակ վերապահուած է իրենց:

ԻԷ. Գ Լ Ո Ի Խ

(ՍՈՒՐԷԹ՝ ԷԼ - ՆԵՄԼ)

ՄԷֆֆէական, Իննսուց հինգ պատգամ

Յանուս Աստուծոյ գթածի եւ ողորմածի

1. Թ. Ս. Ասոնք Գուրանին եւ ծանօթ գիրքին նշաններն են.
2. Անոնք առաջնորդութիւն եւ աւետարներ են հաւատացեալներուն .
3. Որոնք ազօթք կը կատարեն, ողորմութիւն կուտան եւ խորապէս կը հաւատան հանդերձեալ կեանքին :
4. Իսկ որոնք որ հանդերձեալ կանաքին չեն հաւատար, անոնց գործերը մենք զարգարած ենք յաչա իրենց, անոնք չմտածողներ են.
5. Անոնց վերապահուած է ամենադառն պատիժը. անոնք հանդերձեալ աշխարհի մէջ ամենանաթշուառներ պիտի ըլլան :
6. Գուրանը քեզ տրուեցաւ Գիտունին եւ Իմաստունին կողմէ :
7. Յէ՛շ որ Մովսէս որ մը ըսաւ իր ընտանիքին. «տեսայ կրակը, ես անկէ լուր պիտի բերեմ ձեզ, թերեւ անկէ ձեզ բերեմ վառող կտոր մը, որպէսզի անով տաքնաք :
8. Նա հոն գնաց, և ձայն մը աղաղակեց անոր. «որչնեալ ըլլայ այն որ կրակին մէջը և շուրջն է : Գովութիւն տիեզերքի տէր Աստուծոյն» :
9. «Ով Մովսէս, ես միակ Աստուածն եմ հզօր և Իմաստուն :

10. Նեաէ՛ գաւազանդ» : Երբ տեսաւ որ այն կը շարժի օձի մը պէս, սկսաւ փախչիլ առանց ետ դառնալու : «Ով Մովսէս, մի վախնար մարգարէները ինձմէ վախնալու ոչինչ չունին» :
11. «Բացի անկէ որ անիրաւութիւն մը գործած ըլլայ. բայց եթէ չարութենէ յետոյ բարութիւն ըրած է, ես ներող և ողորմած եմ :
12. «Ձեռքդ ձագղ դիր և զայն դուրս պիտի հանես ճերմիցած առանց հիւանդութեան : Այս ինը նշաններէն մէկը պիտի ըլլայ Փարաւոնի և իր ժողովուրդին, այն չար ժողովուրդ մըն է» :
13. Երբ մէր հրաշքները անոնք տեսան բացօթոյ ապէս, ըսին, «այս կախարդութեան գործ է» :
14. Թէ և անոնք իններքուստ համոզուեցան ճշտութեանը, բայց հոգարաւթեամբ և անիրաւութեամբ ուրացան : Նկատէ՛ թէ ինչ եղաւ չարերու վախճանը :
15. Մենք առինք գիտութիւն Դաւիթին և Սողոմոնին : Անոնք կրսէին, «գովութիւն Աստուծոյ, որ մեզ բարձր ըրած է իր շատ մը ծառաներէն» :
16. Սողոմոն Դաւիթին ժառանգորդն եղաւ ու ըսաւ, «Ով մտրդիկ, ես սովրած եմ թոշուներու լեզուն և ամեն բան տրուած է ինձ. այս Աստուծոյ յայտնի պարգևն է :
17. Սողոմոնի առջև հաւաքուեցան անոր դեերէ, մարդերէ և թոշուներէ կազմուած զօրագունգերը. բոյորը զատ զատ դասակարգուած :
18. Երբ այս բոյոր բանակը հասաւ մրջիւններու ձորը, անոնցմէ մէկը ըսաւ, «ով մրջիւններ մտէք ձեր բնակարաններուն մէջ որ Սողոմոն և իր գունգերը ձեզ չկոխտան անգիտակցաբար.
19. Եւ Սողոմոն խնդաց մրջուինին այս խօսքին, և ըսաւ, «ո՛՛ Տէր, զիս երախտագէտ ըրէ այն բոյոր

բարիքներուն համար, զորս պարգևեցիր ինձ ինչպէս նաև իմ հայրերուս, առաջնորդէ զիս բարեգործութեան՝ քեզ հաճելի ըլլալու համար, և քու ողորմութեամբդ զիս զասակից ըրէ արդար ծառաներուդ :

20. Թռչուններուն բանակը աչքէ անցուց և բաւ, քնու ինչ չեմ տեսներ յոպոպը. բացակայ է :

21. «Ճշմարիտ որ անոր ծանր պատիժ պիտի տամ կամ զայն պիտի սպաննեմ, եթէ անիկա չտալ ինձ օրինաւոր բացատրութիւններ :

22. Արդարև նա շատ չուշացաւ, և բաւ Սողոմոնին, «ես սուրբցայ քու չգիտցածդ. ես Սապաէն կուգամ ստոյգ լուրերով » :

23. «Հոն կին մը գտայ որ կը թագաւորէ մարդոց վրայ, և անիկա ունի ամեն բան և մեծ գահ մըն ալ » :

24. «Տեսայ որ ան և իր ժողովուրդը արևը կը պաշտեն Սատուծոյ հետ : Եւ սատանան անոնց դործերը կը պատրաստէ յաշս անոնց. և զանոնք հեռացուցած է ուղիղ ճամբէն, այնպէս որ անոնք չեն առաջնորդուիր :

25. «Եւ անոնք չեն պաշտեր զԱստուած որ արտադրած է երկնից և երկրի գալանիքները, որ գիտէ ձեր պահածը ու հրապարակածը :

26. Այս Աստուածը որմէ զատ Առտուած չկայ տէրն է մեծ գահին, .

27. — Պիտի տեսնե՞ք, ըսաւ Սողոմոն, թէ դու ի՞նչու կըսես թէ սուտ :

28. «Սա իմ նամակովս զնա հոն, ձգէ անոնց քով և մէկ կողմ քաշուէ, պիտի տեսնես թէ ինչ պիտի ըլլայ անոնց պատասխանը :

29. Գողթը քնաց : Թագուհին ըսաւ իր թագաւորութեան մեծամեծներուն, « պարոններ, ինձ չքեզ նա՝ ձակ մը հասած է :

30. Սողոմոնէն է այն. անա անոր պարունակութիւնը. «Յանուն Աստուծոյ գթածի և ողորմածի»,

31. «Մի հպարտանաք ինձ դէժ, այլ ինձ եկէք զձեզ Աստուծոյ յանձնելով » :

32. «Պարնայք, ըսաւ թագուհին. ինձ խորհուրդ տուէք այս գործին մէջ, ես առանց ձեր համաձայնութեան որոշում չեմ տար » :

33. «Մենք զօրաւոր և պատկառելի ենք, ըսին անոնք, բայց քեզ կը պատկանի հրամաններ տալ. տեսնե՞ք թէ դու ինչ կը հրամայես մեզ .

34. «Երբ թագաւորները քաղաք մը կը մտնեն, ըսաւ Թագուհին, կը քանդեն և անոր ամենաերեւելիները ամենաթշուառներ կը դարձնեն : Անոնք անա այսպէս կրնեն » :

35. «Ընծաներ պիտի զրկեմ և տեսնեմ թէ զրկած դեպքերն ինչ տեղեկութիւն կը բերեն » :

36. Երբ գեսպանները Սողոմոնին առջև ելան, սա ըսաւ անոնց, «Ուրեմն դուք կուզէք ձեր գանձերով ինձ օգնել, ինչ որ Աստուած ինձ տուած է աւելի կարծէ ձեզ տուածէն. ուստի ձեր ընծաներով դուք ուրախագէք :

37. Դարձէք ձեզ զրկող ժողովուրդին. մենք պիտի գանք զայն հարուածելու բանակով մը որուն չպիտի կրնայ դիմագրել. զանոնք պիտի արտաքսենք իրենց երկրէն անպատուաւոր և ստորնացած :

38. Սողոմոն ըսաւ իրեններուն. «պարոններ, ձեզմէ ո՞վ ինձ կը բերէ թագուհիին գահը, անոնք իբր անձնատուրներ իմ քով ինքնին գալէ առաջ » :

39. Դևերէն Իֆրիթ ըսաւ, «ես կը բերեմ զայն քեզ. դու տակաւին սեղեղ չելած : Ես այդ գործին կարող եմ և հաւատարիմ » :

40. Ուրիշ դէ մը՝ որ գիրքը գիտէր, ըսաւ Սողոմոնին, «ես զայն քեզ կը բերեմ աչքդ գոցելէ ա-

առջ: Եւ երբ Սողոմոն տեսաւ գահը իր առջև զրու-  
ած, ըսաւ «Սա Աստուծոյ մէկ պարգևն է. նա ինձ  
կը փորձէ գիտնալու: համար թէ երախտագէտ եմ կամ  
ապերախտ: Ով որ երախտագէտ է յօգուտ իր ան-  
ձին է, ով որ ապերախտ է, Աստուած զայն կ'անդէ-  
վասն զի հարուստ և վեհանձն է»:

41. Այս գահը անճանաչելի ըրէք, ըստ Սողոմոն  
դեմեթրոսի: Տեսնենք թէ նէ ուղիղ ճամբուն մէջ է,  
կամ թէ անոնցմէ ոմանք պիտի կրնան առաջնոր-  
դուիլ:

42. Եւ երբ նէ (Թագուհին) ներկայացաւ Սողոմոն  
նին առջև, անոր հարցուեցաւ թէ քու գահդ ա՞յս  
է. պատասխանեց, «կրտսէր թէ այս է: Գիտութիւնը  
մեզ տրուած է անկէ առաջ, և մենք միւսլիմներ  
(Ասորոշոյ կամայը հպարտկամներ) էինք»: (\*)

43. Աստուծմէ զատ անոր պաշտած աստուածները  
զանի մոլորեցուցած էին, և նէ անհաւատներէն էր:

44. Անոր ըսուեցաւ, «Մտէք այս պալատը. և  
երբ նէ տեսաւ զայն, կարծեց թէ լիճ մըն էր. և  
հագուստը սրունքներէն զեր առաւ: «Սա ապրկիներ-  
բով սալայատակուած պալատ մըն է» ըսաւ Սո-  
ղոմոն:

45. — Թագուհին ըսաւ, Տէ՛ր, իմ, ես իմ անձիս  
դէմ անիրաւութիւն գործած եմ կոտորելու պաշտելով,  
այժմ, Սողոմոնին պէս, ես ալ տիեզերքի տիրոջ  
կամացը կը հպատակիմ:

46. Մենք Սալի՛նը զրկեցինք իր եղբարց Սամու-  
ցիներուն, զանոնք Աստուածապաշտ ընելու համար:  
Անոնք երկու մասի բաժնուեցան:

47. Ո՛վ զեղակիցներս, կըսէր Սալի՛ն, ի՞նչու հա-

(\*) Մահաւէտ իր կրօնէքը, իսլամութիւնը, կը ջանայ վերա-  
դարձնել իր կրօնը: Իսլամութիւնը մարգարէներուն Աբրահամին սկսեալ

մար հարիքը կը փութացնէք բարիքը չեկած: Թողու-  
թիւն չինդրէք Աստուծմէ, որ զթալ ձեր վրայ:

48. Անոնք ալ ըսին, «մենք քեզմէ և քու կիներե-  
րէդ դէջ բաներ կրեցինք»: — Զեր բազըը Աստուծոյ  
մօտ է պատասխանեց նա. դուք ժողովուրդ մըն էք  
զոր Աստուած կուզէ փորձել:

49. Քաղաքին մէջ ինը մարդիկ կային որոնք եր  
կիրր կապականէին, և յաւ գործ մը չէին կատարեր:

50. Անոնք ըսին իրարու, «Աւստեցէք Աստուծոյ  
առջև երգմամբ, զիչեր ատեն Սալի՛նը և անոր ըն-  
տանիքը մեռցնելու. յետոյ անոր արեան վրէժը պա-  
հանջողներուն կըսենք, թէ մենք ներկայ չէինք ա-  
նոր ընտանիքի մահուան, մենք ճշմարտութիւնը կը  
խօսինք կոր»:

51. Անոնք ի գործ զրին իրենց գաւը, և մենք  
ևս մեր դաւերը ի գործ զրինք երբ անոնք անկաս-  
կած էին:

52. Եկատէ՛ թէ ինչ եղաւ անոնց խորամանկու-  
թեանց վերջը. մենք զանոնք բնաջնջեցինք, ինչպէս  
անոնց բոլոր ազգը:

53. Անոնց բնակարանները հողին տակը իջած են  
վասն զի անիրաւներ էին: Ասոր մէջ նշան կայ հաս-  
կըցող մարդոց համար:

54. Ազատեցինք որոնք որ Աստուծոյ կը հաւատա-  
ցին և երկրւած էին:

55. Ղովար զրկեցինք, որ կրտէր իր ժողովուրդին  
«Դուք անառակութիւն կընէ՞ք, զիտնալով հանդերձ»:

56. Դուք կիները թողած արուներուն կը մեր-  
ձենաք ինչտասիրութեամբ: Դուք մոլորութեան  
մէջ էք:

57. Եւ ի՞նչ եղաւ անոց ժողովուրդին պատաս-  
խարը: Անոնք իրարու ըսին, «վռնտենք Ղովար ըն-  
տանիքը մեր քաղաքէն, վասնզի անոնք մաքրու-

թիւն պահել ուղոյ մարդիկ են» :  
53. Մենք ազատեցինք Ղովտին ընտանիքը բացի իր կիներն, որուն ետ մնալոյ որոշած էինք :

54. Անոնց վրայ Ժառէ անձրե տեղացուցինք : Ինչ սոսկալի եղաւ մարդոց վրայ ինկած անձրեը, անոնց ի դուր կ'ազգարարուէր :

55. Ըսէ, գովութիւն Աստուծոյ և խաղաղութիւն իր բնորած ծառաներուն. արդ. ո՞րը նախընտրելի է Աստուծոյ թէ անոր ընկեր տրուած կուսքերը :

56. Նա որ ստեղծած է երկինքը ու երկիրը, որ ձեզ կը զրկէ ջուրը (Չուրին օգնութեամբ կը հասցընենք ձեզ համար զուարթ պարտէզներ. վասնզի զուք չէ որ կը բուսցնէք անոնց ծառերը) : Միթէ մի այն Աստուծոյ զատ ուրիշ աստուած կայ : Սակայն անոնք անոր հաւատարմեր կը գտնեն :

57. Նա որ երկիրը ամրապէս հաստատեց, որ անոր մէջ գետակներ հոսեցուց, որ լեռները կանգնեց որ երկու ծովերուն միջև պատնէշ մը բարձրացուց, միթէ այն սիբակ Աստուծոյ չեա ուրիշ աստուած ալ կայ : Եւ սակայն շատերը զայն չեն հասկնար :

58. Կամ նա որ նեղեալի ազօթքին արձագանք կուտայ և շարիքէն կազատէ զանի, որ և ձեզ իրեն տեղակալեո ըրած է երկրիս վրայ : միթէ այն իրակ Աստուծոյ չեա ուրիշ աստուած կայ : Ա՛հ, զուք որ չափ քիչ կը մտածէք :

59. Նա որ ձեզ կառաջնորդէ ցամաքի և ծովի խաւարներէն, որ հովերը կը զրկէ իր ողորմութեան աւետաւոր. միթէ կայ աստուած մըն ալ այն միակ Աստուծոյն չեա : Նա խիստ բարձր է այն բաներէն որոնք իրեն ընկերներ կը տրուին :

60. Նա որ ստեղծագործութիւն կընէ և ետ կը բերէ զայն, որ ձեզ կը սնուցանէ երկինքէն ու երկրէն : Միթէ կայ Աստուած մըն ալ այն միակ Աստուծոյն չեա :

66. Ըսէ՛. «բացի Աստուծոյ մէկը չըկայ երկնից մէջ ու երկրի վրայ որ դիտնայ գազանիքները» : Մարդիկ չեն գիտեր,

67. Թէ երբ յարութիւն պիտի առնեն :

68. Անոնք քիչ տեղեկութիւն ունին մուսաշխարհի մասին, բայց կասկածի մէջ են կամ կոյր են այդ մասին :

69. Անհաւատները կրտսն, «երբ մենք ու մեր հայրերը հող պիտի դառնանք, միթէ կարելի է որ կրկին ողջնանք» :

70. «Մեզի և մեր հայրերուն աւելի առաջ ալ կը խոստացուէր այդ, բայց ատոնք միայն չընեցու առասպելներ են» :

71. Ըսէ անոնց, «չըջեցէք երկիրը և տեսէք թէ ինչ է եղած յանցաւորներուն վերջը» :

72. Մի տիրիր անոնց մասին, և քու սիրտդ թող չյուզուի անոնց խաղախութեանց համար :

73. Զեզ կը հարցնեն, «երբ պիտի կատարուի այս սպառնալիքները, բռէ՛ք, եթէ անկեղծ էք» :

74. Պատասխանէ անոնց, «կրնայ ըլլալ որ ձեր շուտով ուղած պատիժին մէկ մասը հասնի ձեզ» :

75. Քու Տէրդ բարութեամբ լի է մարդոց համար, բայց անոնցմէ շատը երանապաշտ չեն :

76. Քու Տէրդ գիտէ թէ անոնց սրտերը ինչեր կը պահեն ու ինչեր կը յայտնեն :

77. Երկնից մէջ ու երկրի վրայ պահուած բան մը չկայ որ յայտնի գիրքին մէջ գրուած չըլլայ :

78. Գուրաւը կը յայտնէ Իսրայէլի որդւոց շատ մը բաները որոնց վրայ կը վիճէին :

79. Գուրաւը հաւատացեալներուն ուղեցոյցն է, և կը հաստատէ աստուծային ողորմութեան ապացոյցը անոնց հանդէպ :

80. Աստուած ձեր մասին իր դատաստանի վճիռը

պիտի արձակէ: Նա է Հգօրը և Իմաստունը:

81. Գու զքեզ Աստուծոյ վստահացի՛ր քանզի դու յայտնի ճշմարտութեան յենած ես:

82. Գու չէիր կրնար մեռելներուն բան մը ըսել տալ. դու չէիր կրնար խույսերուն լսել տալ կոչը, երբ անոնք կանակնին քեզ դարձնեն:

83. Գու չես կոյրերը իրենց մոլութենէն առաջ նորոգողը: Գու միայն անոնց կրնաս լսել տալ որոնք հաւատացած են մեր նշաններուն և որոնք Աստուծոյ կամաց հպատակածներ (մեռելի) են:

84. Երբ անոնց զէմ տրուած վճիռը կը գործադրուի այն ատեն մենք երկրէն կը հանենք ճիւղ մը որ անոնց պիտի ազաղակէ, «ճշմարիտ որ մարդիկ հաստատագէտ չհաւատացին մեր հրաշքներուն»:

85. Օր մը պիտի հաւաքենք մեր նշանները սուտ համարողները. անոնք խուճերու պիտի բաժնուին:

86. Մինչև որ անոնք հասնին Աստուծոյ առջև, նա պիտի ըսէ անոնց, «զուք իմ նշաններս սուտ համարեցի՞ք չկրնայ հասկնալով. կամ պատճառ մը ունէի՞ք այդպէս վարուելու»:

87. Վճիռը պիտի գործադրուի ի պատիւ անոնց անպարշտութեան, և անոնք բառ մը չպիտի արտասանեն:

88. Ձկն տեսներ որ գիշերը հաստատած ենք իւրր ժամանակ հանգիստի, և պայծառ օրը աշխարհի մէջ համար: Արդարև ասոր մէջ նշաններ կան ժողովուրդի մը համար որ հաստատագէտ կը հաւատայ:

89. Փողը ննչելու օրը պիտի սարսափին րոյորբ որոնք երկնից մէջ և երկրի վրայ կը գտնուին, իսաց առեալ անոնք զորս Աստուած աշխուժ պիտի ուզէ: Ամեն մարդիկ պիտի գան խոնարհելու անոր առջև:

90. Գու պիտի տեսնես լեռներուն՝ զորս կը կար-

ծէիր թէ հաստատ դրուած են, քալելը ինչպէս ամպերը կը քալեն: Այս Աստուծոյ գործն է որ կը կարգադրէ ամեն բան իմաստութեամբ: Նա զիտէ ձեր բոյոր գործերը:

91. Ով որ լաւ գործերով ներկայանայ, անկէ օգուտներ պիտի ընդունէ: Ասոնք ամէն սարսափէ ապահովուած պիտի ըլլան:

92. Որոնք որ միայն իրենց մեղքերով ներկայանան, անոնց երեսը կրակին մէջ պիտի այրի: Միթէ ձեր գործերէն տարբէր հաւուցում պիտի ստանար:

93. Հրաման ստացալ պաշտելու այս երկրին Տէրը, այս Աստուածը որ զայն սրբացուցած է և որուն կը պատկանի բոլորը: Ինձ հրամայուած է անոր կամացը հպատակիլ:

94. Եւ Գուրանը մարդոց պատմելի, Ով որ ուզիլ ճամբէն ընթանայ, իր արձին օգնած կըլլայ. և թէ մոլորութեան մէջ մնացողներ կան, ըսէ անոնց, «Ես միայն խրատող եմ»:

95. Ըսէ՛ «Փառք Աստուծոյ: Նա շուտով պիտի տայ ձեզ իր գորութեան նշանները, և դուք չէք կրնար ուրանալ զայն: Գու Տէրդ անուշաղիբ չէ ձեր ըրածներուն»:



Ի Ը . Գ Լ Ո Ի Ի

(ՍՈՒՐԷԹ ԻՆՂ ԳԸՍԱՍ)

Մէքէալան, ուրսուն ուրը պատգամ

Յանուն Աստուծոյ գթածի ողորմածի

- 1. Թ. Ս. Մ. Ասոնք ծանօթ գիրքի նշաններն են:
- 2. Մենք քեզ պիտի պատմենք կատարեալ ճշ-

դու թեամբ Մովսէսի և Փարաւոնի պատմութեան քանի մը դժեքը հաւատացեալներուն համար:

3. Փարաւոն հպարտացաւ Նֆէպտայի մէջ, և պատճառ տուաւ իր ժողովուրդին բաժնուելու զանազան կուսակցութեանց: Ե թշուառացուց մէկ մասը, մեռցուց անոնց արու զաւակները և խնայեց միայն կիներուն: Նա չարագործ մըն էր:

4. Սենք ուզեցինք մեր շնորհքներով նպաստաւորել հարստանարեալ ժողովուրդը այն երկրին, ուզեցինք զանոնք առաջնորդող և երկրին ժառանգորդները ընել:

5. Ուզեցինք անոնց զօրութիւնը հաստատել երկրին մէջ և ցոյց տալ Փարաւոնին Համանին և իրենց բանակներուն այն բաները որոնցմէ կը վախնային:

6. Ահա մեր տուած յայտնութիւն Մովսէսի մօրը, «ձծցուր զանի, և եթէ կը վախնաս անոր մասին, ծովը նետէ զանի ու մի վախնա, մի յուզուիր, վասնզի օր մը մենք զանի քեզ պիտի վերադարձնենք և մարգարէ մը պիտի ընենք:

7. Փարաւոնի ընտանիքը ազան ազատեց, որ օր մը իրենց թշնամի և վիշտ ըլլայ: Արդարեւ Փարաւոն և Համան ու իրենց բանակները մեղաւորներ էին:

8. Փարաւոնի կինը օր մը ըսաւ իրեն «այս տղան մեզ աչքի յոյս պիտի ըլլայ, մի սպաննէք զանի, թերեւս օր մը մեզ օգտակար ըլլայ, զանի մեզ որդեգրենք»: Անոնք ոչինչ չէին գիտեր:

9. Մովսէսի մօրը սիրտը տխրեցաւ. քիչ մնաց որ յայտնէր իր ծագումը, եթէ մենք չզօրացնէինք իր սիրտը որ նէ ալ հաւատացեալ ըլլար:

10. Նէ ըսաւ իր քրոջ, «տղին հետեւէ»: Նէ հեռուէն կը դիտէր ինքը առանց նշմարուելու:

11. Մենք անոր արգիլած էինք օտար ստնտու-

ներէ ծծել, մինչև որ մօրաքրոջը հասնելով ըսաւ Փարաւոնի ընտանիքին, «կուզէ՞ք որ ցոյց տամ տուն մը, ուր զայն խնամեն ձեր հաշույն և անոր հոգ տանին»: Հասանէցան:

12. Այսպէս զանի իր մօրը վերադարձուցինք, որ անոր աչքի յոյս ըլլայ, որ ա՛լ չտխրի և հասնայ թէ Աստուծոյ խոստումները անսխալ են: Բայց մարդոց շատերը չեն գրտեր:

13. Երբ Մովսէս չափոհոս եղաւ և իր մարմնը ուժեղացաւ, անոր իմաստութիւն և գիտութիւն տուինք, ահա այսպէս կը վարձատրենք առաքինի մարդիկը:

14. Օր մը քաղաքը մտաւ առանց նշմարուելու և տեսաւ որ երկու մարդ կը կուռէին, մէկը իր տղաէն էր, միւսը իր թշնամիներէն (Նֆէպտայի): Իր ազգակիցը օգնութիւն ուզեց թշնամիին դէմ: Մովսէս բռունցքի հարուած մը տուաւ և զանի մեռցուց: Բայց, ըսաւ, «սա սատանայի գործ է, նա թշնամի է, որ կը մոլորեցնէ մեզ»:

15. Եսաւ «Տէ՛ր իմ, ես իմ անձիս դէմ մեղանչեցի, ներէ՛ ինձ: Եւ Աստուած անոր ներեց, վասնզի ներող եւ ողորմած է:

16. «Տէ՛ր իմ, ըսաւ, որովհետեւ դու ինձ բարիք ըրիր, ես ելլէք չպիտի օգնեմ յանցաւորներուն:

17. Հետեւեալ օրը կը շրջէր վախով քաղաքին մէջ և զգուշութեամբ կը դիտէր շուրջը, և ահա երէկ իր օգնած մարդը պոռալով կը կանչէր զանի: Մովսէս անոր ըսաւ, «դուն յայտնի կուռարար մըն «ես սէս անոր ըսաւ, «դուն յայտնի կուռարար մըն «ես

18. Եւ երբ նա ուզեց մարդը ետ մղել իրենց թըշնամիէն, Հըբէան ըսաւ անոր, «զիս սպաննել կուզես ինչպէս երէկ մարդ մը սպաննեցիր: Ուրեմն դու բռնակալ ըլլալ կուզես այս երկրին մէջ, դու բարեգործ ըլլալ չես ուզեր»:

19. Քաղաքին ծայրէն մարդ մը վազեց և ըսաւ անոր, «Մովսէս, մեծերը քեզ կը փնտռեն սպաննելու համար: Հեռացի՛ր քաղաքէն, բարեկամական խորհուրդ կուտամ քեզ»:

20. Մովսէս դուրս ելաւ անկէ դողաճար և իր շուրջը դիտելով. «Ո՛վ Տէր, ազազակեց, ազատէ զիս չարերէն»:

21. Մատիանի կողմերը գնաց: Թերևս ըսաւ նա, Աստուած զիս ուղիղ ճամբուն մէջ պիտի առաջնորդէ»:

22. Մատիանի ազբուրը հասնելով, հոն գտաւ խուճր մը մարդիկ որոնք էրենց հօրերը կը ջրէին:

23. Եւ անդին տեսաւ երկու կիւն որ իրենց հօտը կ'արգիլէին: Ինչ կ'ընէք հօս, հարցուց:—Մենք չը պիտի ջրենք մեր հօտերը մինչև որ հովիւները մեկնին, պատասխանեցին. մեր հայրը պատկառելի ծեւ մըն է:

24. Մովսէս անոնց հօտերուն ջուր տուաւ, և շուքը քաշուելով, ազազակեց, «Տէ՛ր. ես կարօտ եմ ինձ հանդիպուցած այս բարիքիդ»:

25. Երկու աղջիկներէն մէկը անոր եկաւ, և պարկեշտօրէն մօտենալով ըսաւ անոր, «հայրս կուզէ քեզ որ վարձատրէ քեզ այն ձանձրոյթին համար զոր կըրեցիր մեր հօտը ջրելու. Մովսէս հոն գնաց եւ անոր պատմեց իր արկածները: Ի՛նչու՞նչ ըսաւ անոր, «բանէ մը մի վախնար. արդէն դուն ազատուեր ես չարերու ազգէն»:

26. Աղջիկներէն մին ըսաւ այն ատեն իր հօրը, «Հա՛յր իմ, այս մարդը ծառայ բռնէ, վասնզի դու այլեւս չես կարող ինքը ծառայել, լաւ է որ զօրաւոր և հաւատարիմ մարդ մը բռնես»:

27. «Ես կուզեմ քեզ ամուսնութեան տալ իմ սա

ձրկու աղջիկներէս մին, ըսաւ շէրուին՝ պայմանաւոր գու ինձ ծառայես ութ տարի. իսկ եթէ տասը լրացնես քու կամքիդ: Սակայն ես ծանրութիւն տալ չեմ ուզեր՝ եւ եթէ Աստուած կամի, դու զիս միշտ բարի պիտի գտնես»:

28. Համաձայնութիւնը կայացած է մեր մէջ, ըսաւ Մովսէս, և իմ լրացնելիս պայմանաժամս որն ալ ըլլայ, իմ կողմէ թերութիւն չըլլար: Աստուած նքն ալ լկայ ըլլայ մեր յանձնառութեանց:

29. Երբ Մովսէս լրացուց իր ծառայութեան պայմանաժամը աներին քով, մեկնեցաւ իր ընտանիքին հետ: Յանկարծ կրակը տեսաւ իրան կողմը, և ըսաւ իր ընտանիքին. «Կեցէք հօս քիչ մը, կրակ տեսայ պիտի երթամ անկէ ձեզ յուրեր բերելու, կամ վառող կտոր մը բերելու ձեզ որ տաքնաք»:

30. Եւ երբնա հոն հասաւ, ձայն մը կանչեց զանի հովիտին աջ կողմէն, որնուեալ ձորին մէջէն, մացառի մը խորէն, «Ո՛վ Մովսէս, ես տիեզերաց տէր Աստուածն եմ»:

31. Նեոէ՛ քու գաւազանդ. Եւ երբ Մովսէս նետեց, տեսաւ որ անիկա օձի մը պէս կը շարժէր, ըսկըսաւ փախչիլ առանց ետ դառնալու: «Ո՛վ Մովսէս, գոչեց ձայն մը, մօտեցի՛ր՝ մի՛ վախնար բանէ մը, ապահովութեան մէջ ես»:

32. Չեաք ծոցգ դիր, ան ձերմակ դուրս պիտի ելլէ առանց հիւանդութեան. և յետոյ զայն քնդ քաշէ՛ աներկիւղ: Ասոնք երկու ապացոյցներ պիտի ըլլան քու Տիրոջ կողմէ Փարաւոնին և անոր թագաւորութեան մեծամեծներուն առջեւ. այն չարագործ ժողովուրդ մըն է:

33.—Տէ՛ր, պատասխանեց Մովսէս, անոնցմէ մէկը սպաննեցի, և կը վախնամ որ զիս չմոռցնեն»:

34. «Եղբայրս Ահարոն ինձմէ աւելի դիւրախօս է՝

զանի ինձ հետ դրկէ որ օգնէ ինձ եւ խօսքերս հաստատէ. վասն զի կը վախնամ որ զիս ստախօս համարեն:

35. Մենք քու բազուկդ պիտի զօրացնենք քու եղբայրս զ, ըսաւ Աստուած անոր. քեզ անանկ զօրութիւն մը պիտի տանք որ Եփեմացիէ չպիտի կրնան բնաւ մեր հրաշքներուն զօրութեանը հասնիլ:

36. Երբ Մովսէս երեւցաւ անոնց առջեւ մեր յայտնի նշաններով, անոնք ազաղակեցին, «Ուս նորահար կախարհութիւն է, ասանկ բան լուսնայինք մեր նախնայրերէն»:

37. «Աստուած, իմ Տէրս, ըսաւ Մովսէս անոնց, ամենայաւը գիտէ թէ որու տրուած է առաջնորդութիւնը եւ մեզմէ ով պիտի վայելէ յաւիտենական հանգիստը. վասնզի չարերը երջանիկ չեն ըլլար քնաւ»:

38. Փարաւոն, դառնալով մեծերուն ըսաւ, «Ես գիտէի որ դուք ինձմէ զատ Աստուած չունիք. եւ դու Համան, ինձ համար ցիխէ աղիւս եփէ եւ պալատ մը շինէ որպէս զի ես վեր ելլեմ. Մովսէս Աստուծոյն քով. վասնզի կը կարծեմ որ Մովսէս սուս կը խօսի»:

39. Փարաւոն եւ իր բանակը անբարտաւանացած էին Եգիպտոսի երկրին մէջ անխրաւութեամբ. կը կարծէին թէ մեր առջեւ չեն բերուիր դժուարութիւնք:

40. Բայց մենք բռնեցինք զանի եւ իր բանակը ու ծովը նետեցինք: Նկատէ՛ թէ ինչ եղաւ ամբարշտաներուն վախճանը

41. Մենք զանոնք առաջնորդողներ (իմամ) ըրինք անոնք կրակի կը հրաւիրեն մարդիկ: Յարութեան օրը անոնք օգնութիւն չպիտի գտնեն:

42. Մենք անոնց անէծք զրկեցինք այս աշխարհի մէջ, եւ յարութեան օրը պիտի խայտոտակուին:

43. Մենք նախորդ սերունդները ջնջելէ յետոյ Մովսէսին առինք Գիբթը՝ իբր զեկուցիչ օրինակ մարդոց համար եւ առաջնորդութիւն եւ ապացոյց մեր ողորմութեան, որ մտածեն:

44. Դու արեւմտեան կողմը չէիր, երբ Մովսէսին պաշտօն յանձնեցիք. դու հոն ներկայ չէիր:

45. Մովսէսէն ի վեր մենք շատ սերունդներ առաջ բերինք անոնց կեանքը երկար տեւեց եւ դու Մատիանցիներուն մէջ չես եղած որ անոնց պատմէիր մեր նշանները. բայց մենք անոնց զրկեցինք մարգարէներ:

46. Դու Սինայ լեռան զառիվայրը չէիր երբ Մովսէսը կանչեցինք. բայց քու Տիրոջ ողորմութեան շնորհիւ է որ կը քարոզես ժողովուրդի մը որ երբէք մարգարէ մը չունեցաւ քեզմէ առաջ խրատելու, որ մտածեն:

47. Որպէս զի չըսեն, երբ պատուհասը հասնի անոնց, «Տէ՛ր, ի՞նչու համար մեզ չզրկեցիր մարգարէ մը, որ մենք հետեւէինք քու նշաններուն եւ հաւատայինք»:

48. Բայց երբ ճշմարտութիւնը մեր կողմէ անոնց յայտնուեցաւ, ըսին, «Ի՞նչու համար անոր չտրուեցաւ ինչ որ շնորհուեցաւ Մովսէսին»: Բայց աւելի առաջ Մովսէսին տրուած գիրքը միթէ չուրացան. չըսին, «Գուրանը եւ Հինգգիրքը (\*) երկու կախարչութիւններ են իբարու օգնող: Մենք ոչ մէկին եւ ոչ միւսին կը հաւատանք»:

49. Ըսէ՛ անոնց, «Ուրեմն Աստուծոյ կողմէ բերէք

(\*) Աստուածաշուքի Ծննդոց, Ելեց, Դեպքոց, Թընց եւ Երկրորդ օրինաց հինգ գիրքեր:

ուրիշ գիրք մը. որ այդ երկուքէն աւելի լաւ առաջ-  
նորդող ըլլայ, եւ ես կը հետեւիմ անոր, եթէ ճշմար-  
տախօս էք»:

50. Եւ եթէ չբերեն. գիտցիր որ անոնք իրենց  
հաճոյքին կը հետեւին: Արդ, կա՞յ մէկը աւելի մա-  
լորեալ քան այն որ կը հետեւի իր հաճոյքին առանց  
Աստուծոյ առաջնորդութեանը: Եւ ճշմարիտ որ Աս-  
տուած չառաջնորդեր շարերը:

51. Մենք անոնց լսելի ըրած ենք մեր խօսքը. որ  
խորհրդածեն:

52. Անոնցմէ առաջ որոնց որ տուած ենք Գիրքը,  
հաւատացած են:

53. Երբ անոնց կը պատմուի, կ'ըսեն, «կը հաւա-  
տանք այս գիրքին, որովհետեւ ճշմարտութիւնն է  
որ մեր Տիրոջմէ կուգայ, մենք անոր դալէն առաջ  
ալ միւսիքներ էինք»:

54. Ասոնք կրկնակ վարձատրութիւն պիտի ընդու-  
նին՝ վասնզի կը համբերեն, չարը բարիով կը փո-  
խարինեն և մեր անոնց պարգեւածէն ողորմութիւն  
կուտան:

55. Երբ սնտախի խօսքեր լսեն, կը հեռանան չը-  
լսելու համար, և կըսեն, «մեր գործերը մեզի, ձե-  
րիններն ալ ձեզի, խաղաղութիւնը ձեր հետ ըլլայ՝  
յիմարներու հետ գործ չունինք»:

56. Դու չէ որ քու ուղածներդ պիտի առաջնոր-  
դես. այլ Աստուած կառաջնորդէ իր ուղածները. նա  
ամէնէն լաւ գիտէ ուղիդ ճամբուն հետեւողները:

57. Անոնք (Մեռեցիները) կըսեն՝ «եթէ քեզ հե-  
տեւինք, երկրէն պիտի վաճառուինք»: Բայց մենք  
անոնց տուած չենք սուրբ եւ ապահով տեղ մը, ուր  
ամեն տեսակ պտուղներ անոնց սնունդին համար  
մեր կողմէ տրուած է Բայց մարդոց շատերը չեն  
հասկնար:

58. Ո՛րչափ քաղաքներ կործանած ենք, որոնց  
բնակիչները առատութեան մէջ կ'ապրէին: Կը տես-  
նէք անոնց բնակատեղիները, որոնց մէջ՝ անոնցմէ  
յետոյ, փչեր կը բնակին, և մենք ենք մատանգած:

59. Դու Տէրչ կործանած չէ քաղաքներ, որոնց  
մարաքաղաքը զրկած չըլլայ մարգարէ մը իր հրա-  
մանները զեկուցանելու պաշտօնով: Մենք միայն այն  
քաղաքները կործանած ենք որոնց բնակիչները ա-  
նիրաներ էին:

60. Զեզ տրուած ինչքերը միայն այս աշխարհի  
վայելքն ու զարդն են. բայց ինչ որ Աստուած կը  
վերապահէ թանկագին ու անւական է: Զպիտի՞ հաս-  
կրնոք:

61. Որուն որ մենք փայլուն խոստումներ ըրինք,  
եւ որ զանոնք ստանալ, միթէ հաւատա՞ր է այն մա-  
ղուն որուն այս աշխարհի բարիքները վայելել տը-  
ւած ենք, եւ որ յարութեան օրը դատաստանի պիտի  
բերուի միւսներուն հետ:

62. Այն օրը Աստուած պիտի ազազակէ անոնց,  
«Ո՛ւր են ձեր ինձ ընկերիւր երևակայածները»:

63. Այն ատեն որոնց վրայ որ այս խօսքը պիտի  
արտասանուի, պիտի ըսեն, «Տէ՛ր, անա մեր մոլո-  
րեցուցած մարդիկը, մենք զանոնք մոլորեցուցինք  
ինչպէս մենք մոլորեալ էինք: Մենք յանցաւոր չենք  
քեզ հանդէպ: Անոնք մեզ չէին պաշտեր, այլ իրենց  
անյանալիս կրէրը»:

64. Եւ պիտի բուռի այն մարդոց. «կանչեցէ՛ք ձեր  
աստուածընկերները»: Անոնք կը կանչեն. բայց ա-  
սոնք չեն պատասխաներ անոնց, եւ կը տեսնեն ի-  
րենց վերապահուած պատիժը. այն ատեն պիտի ու-  
զեն ուղիդ ճամբուն հետևիլ:

65. Այն օրը Աստուած անոնց պիտի ազազակէ ու-  
րէ. «Ի՞նչ պատասխանեցիք մեր մարգարէներուն»:

66. Անոնք ամօթահար պիտի ըլլան այնօրը. չըպիտի կրնան նոյնիսկ իրարու հարցնել:

67. Բայց ով որ գղջայ ու հաւատայ և բարիք գործէ, կարելի է երջանիկներէն ըլլայ:

68. Կու՛՛՛՛ Տէրգ կ'ստեղծէ իր ուզածը եւ ազատ կը գործէ, բայց անոնք (սոսոր սոսորսաճնէրը) կամք չունին Փա՛ռք Աստուծոյ, նա խիստ բարձր է այն էակներէն՝ զորս անոր կընկերացնեն:

69. Ձեր Տէրր գիտէ ինչ որ ձեր սրտերը կը պահեն ու կը յայտնեն:

70. Նա միակ Աստուածն է, անկէ զատ ուրիշ Աստուած չկայ, անորն է այս աշխարհի եւ հանդերձեալի փառքը, անորն է խորձրագոյն զօրութիւնը, զուք անոր պիտի դառնաք:

71. Ըսէ՛՛՛՛ անոնց, «Ի՞նչ կը կարծէք, եթէ Աստուած ուզէր ձեր վրայ տարածել յաւիտեանական գիշերը՝ մինչեւ յարութեան օրը, անկէ զատ ո՞ր աստուածը ձեզ լոյս պիտի տար»: Ձէ՞ք լսեր:

72. Ըսէ՛՛՛՛ նաեւ անոնց, «Ի՞նչ կը կարծէք, եթէ Աստուած ուզէր ձեր վրայ տարածել միշտ ցերեկը՝ մինչեւ յարութեան օրը, անկէ զատ ո՞ր աստուածը գիշերը պիտի բերէր ձեզ հանգստութեան համար: Ձէ՞ք տեսներ»: Ձէ՞ք տեսներ»:

73. Բայց Աստուած իւր ողորմութեան՝ շնորհիւ ձեզ առած է գիշերը ու ցերեկը, Մերթ ձեզ հանգըստացնելու, եւ մերթ իր բարութենէն հարստութիւն խնդրելու համար, որպէսզի երախտագէտ ըլլաք:

74. Օր մը անոնց պիտի ազազակէ, «Ո՞ր են իմ ընկերները, զորս կրեակայէք»:

75. Մենք իւրաքանչիւր ազգէ վկայ մը պիտի բերենք, ու պիտի ըսենք, «Երէ՛ք ձեր փաստերը: Եւ պիտի հասկընան թէ ճշմարտութիւնը Աստուծոց հետ է. անոնց յօրինած աստուածները պիտի կորսուին»:

76. Գարուն Մովսէսի ցեղէն էր, բայց նա անիւրբաւ կը վարուէր իր ազգակիցներուն հանդէպ: Մենք անոր այնչափ գանձ տուինք որ անոր բանալիները հազիւ կրնար կրել ուժեղ մարդոց խուճը մը: Իր հայրենակիցները անոր կըսէին, «մի՛ փառաւորուիք թու գանձերովդ՝ վասնզի Աստուած չսիրեր փառասէրները»:

77. «Ձանք ըրէ՛՛ Աստուծոյ քեզ տուած բարիքներով հանդերձեալի բնակարանը շահելու. մի մտնարքու բաժինդ այս աշխարհի մէջ, և բարիք ըրէ ուրիշներուն ինչպէս Աստուած քեզ ըրած է, զգուշացի՛ր աշխարհի վրայ չարիք գործելէ, վասնզի Աստուած չսիրեր չարագործները»:

78.— Ես ատոնք ստացած եմ, ըսաւ անիկա, իմ ունեցած գիտութեամբս միայն:— Ձէ՞ք գիտեր նա թէ Աստուած անորմէ առաջ կործանած էր շատ մը սերունդներ աւելի անարկու իրենց ուժովը և բազմաթիւ»:

79. Գարուն կը յառաջնար փառապանձ դէպի ժողովուրդը: Այս աշխարհի կեանքին սիրանարները կըսէին, «Ա՛հ, երանի թէ մենք այ Գարունի պէս հարստութեան ունենայինք: Անիկա անհուն հարստութիւն մ'ունի»:

80. Բայց իմաստունները անոնց կըսէին, «Թըշուառներ, Աստուծոյ վարձքը նախամեծար է հաւատացողին ու բարեգործին համար. իսկ որոնք որ համբերութեամբ կը տանին տառապանքը անոնք միայն պիտի վարձատրուին»:

81. Հրամայեցինք որ երկիրը ճեղքուէ՛՛ իլլէ զոնի և իր պայտոր: Անոր բազմաթիւ մարդիկը չկրցին անոր օգնել Աստուծոյ դէմ. և նա զուրկ մնաց ամեն օգնութենէ:

82. Հետեւեալ օրը անոնք որ անոր տելը ըլլալ

կը բաղձային, կըսէին. «Աստուած իր գանձերը կուտայ որու որ ուզէ լիարուան կամ նուազ: Առանց Աստուծոյ չնորհին երկրէն պիտի կլլուած ըլլայինք:»

83. Հանդերձեալ կեանքը անոնց պիտի տանք որոնք չեն ցանկար ուրիշներէն բարձր ըլլալ, ոչ ալ չարիք գործել: Երջանիկ վախճանը վերապահուած է երկրւղածներուն:

84. Ով որ բարի գործ մ'ընէ, անկէ պիտի օգտուի. բայց չարիք ընող... չարագործները ըստ իրենց գործոց հատուցում պիտի ստանան:

85. Գութանը քեզ տուողը քեզ քունախելին տեղը պիտի դարձնէ: Ըսէ՛. «Աստուած ամենէն լաւը գիտէ, թէ ով ուղիղ ճամբուն կը հետեւի և ով մոլորեալ է:»

86. Գու չէիր յուսար թէ Գիրքը քեզ կը տրուի: Ան քեզ տրուեցաւ աստուածային ողորմութեան շնորհիւ: Անհաւատներուն նեցուկ մի ըլլար:

87. Անոնք քեզ չմոլորեցնեն Աստուծոյ նշաններէն որ յայտնուած են: Մարդիկը Աստուածոյ կրօնքին հրաւիրէ, և կռապաշտներէն մի ըլլար:

88. Աստուծմէ զատ ուրիշ աստուածի մի աղօթեր, անկէ զատ Աստուած չկայ, բոլորը պիտի կորսուի. բացի Աստուծոյ դէմքէն: Բարձրագոյն զօրութիւնը անորն է. մենք բոլորս անոր պիտի վերադառնանք:



ԻԹ. Գ Լ Ո Ւ Խ

(ՍՈՒՐԷԹ ԻՆԼ ԷՆՅԻՊՈՒԹ) (\*)

Մէքէական, վարսուն և ուրբ պատգամ

Յանուն Աստուծոյ գթածի ողորմածի

1. Ա. Լ. Մ. Մարդիկ կը կարծեն թէ «մենք կը հաւատանք» ըսելով հանգիստ կը ձգուին առանց քննութեան ենթարկուելու:

2. Մենք քննած ենք անոնցմէ առաջ եղողները. և արդարև Աստուած լաւ կը ճանչնայ ճշմարտութիւնը ըսողները ու ստողները:

3. Չարութիւն գործողները արդեօք կը խորհին թէ մեղմէ առաջ կանցնին և պարտէն կաշտին: Ի՛նչ գէշ կը վճռեն:

4. Որոշեալ ժամանակը պիտի հասնի անոնց համար որոնք կը յուսան որ մը Աստուծոյ առջև ելլել: Նա գիտէ ու կը լսէ բոլորը:

5. Ով որ կրօնքի համար կը պատերազմի, նա իր օգտին համար պատերազմած կըլլայ, վասնզի Աստուծոյ պէտք չունի աշխարհներու:

6. Մենք պիտի ջնջենք մեղքերը անոնց որոնք պիտի հաւատան և բարի գործեր կատարեն, և զանոնք պիտի վարձատրենք իրենց լաւագոյն գործերուն համեմատ:

7. Մենք պատուիրեցինք մարդուն բարի ընթացք ունենալ հանդէպ իւր հօր ու մօր: Եթէ քեզ ստիպեն որ ընկերացնես քու չգիտցած բաներդ (չաստուածներ) մի՛ հնազանդիր անոնց: Ամէնքդ ինձ պիտի վերադառնաք, և այն ատեն ես ձեզ պիտի

(\*) Էնիպուսի կը նշանակէ մատակ:

հասկցնեմ թէ ինչքեր էք ըրած:

8. Արդարներուն մէջ պիտի դասենք զանոնք ուրոնք պիտի հաւատան և բարիք դորձեն:

9. Կան մարդիկ որ կրսեն. «կը հաւատանք». և երբ Աստուծոյ համար ներութիւն կրեն, մարդոցմէ կրած փորձանքնին Աստուծոյ պատիժը կը համարեն: Եւ եթէ իր օգնութիւնը տայ, անոնք կրսեն, «Մենք ձեր նեան էինք». բայց Աստուած ամենէն աղէկ զիտէ մարդոց սրտերուն մէջ եղածը:

10. Աստուած կը ճանչնայ հաւատացեալները. կը ճանչնայ նաև կեղծաւորները:

11. Անհաւատները կրսեն հաւատացեալներուն. «Դուք մեր ճամբուն հետեցէք. մենք կը կրենք ձեր սեղօքը» բայց անոնք ոչինչ չեն կրեր անոնց մեղքերէն. այլ կը ոտեն:

12. Անոնք իրենց բեռները պիտի կրեն և իրենցինէն զատ ուրիշներ այ. Յարութեան օրը անոնցմէ հաշիւ պիտի պատկարար իրենց սուտ յերիւրանքներուն:

13. Մենք զրկեցինք Նոյն իր ժողովուրդին նա անոնց մէջ մնաց հազար տորիէն յիսուն տարր պակաս և ջրհեղեղը առաւ զանոնք, վասնզի ամբարիշտ էին:

14. Ազատենք զանի և իրեն հետ նաւին մէջ դըրտնուողները, ատով նշան մը տուինք մարդոց համար:

15. Յետոյ Աբրահամը զրկեցինք: Նա ըսաւ իր ժողովուրդին, «պաշտեցէք զԱստուած և վախեցէք անկէ. այս աւելի լաւ է ձեզ համար, եթէ կը հասկընաք:

16. Դուք Աստուծմէ զատ միայն հուռքեր կը պաշտէք, և սուտեր կը յերուրէք. ձեր պաշտած աստուածները, բացի միակ Աստուծմէ, չեն կրնար ձեր օրապահներ տայ: Դուք Աստուծմէ խնդրեցէք զայն անիկա պաշտեցէք և շնորհակալութիւն յայտնեցէք

անոր: Դուք անոր պիտի վերադառնաք:

17. Եթէ քեզ սուտ համարեն, քեզմէ առաջ ապրող ժողովուրդներն այ այնպէս վարուեցան: Մարդարէին պարտքն է միայն քարոզել բացայայտ:

18. Չեն նկատեր որ Աստուած ինչպէս կարարչագործէ և յետոյ ինչպէս առ ինքն պիտի վերադարձընէ: Այս դիւրին է Աստուծոյ համար:

19. Ըսէ՛, «չըջեցէք աշխարհը և տեսէք թէ Աստուած ինչպէս ստեղծած է արարածները: Նա զանոնք պիտի վերածնեցնէ երկրորդ ստեղծագործութեամբ որ վասնզի նա ամենակարող է»:

20. Նա կը պատժէ որը որ ուզէ, և կ'ողորմի իր իր կամեցածին: Դուք Աստուծոյ պիտի վերադառնաք:

21. Դուք չպիտի կրնաք տկարացնել անոր զօրութիւնը ոչ երկնի մէջ և ոչ երկրի վրայ. և դուք Աստուծմէ զատ ոչ պաշտպան ունիք ոչ տէր:

22. Որոնք որ չեն հաւատար Աստուծոյ նշաններուն և անոր առջև ելլելու, կը յուսահատին անոր յողորմութենէն: Անոնց դառն տանջանք վերապահուած է:

23. Եւ ինչ պատասխանեց Աբրահամի ժողովուրդը: Իրարու կրտէին, «զանի սպաննեցէք կամ ողջ ողջ այրեցէք»: Աստուած զանի ազատեց կրտէն: Ասոր մէջ նշան կայ հաւատացեալներուն համար:

24. Նա ըսաւ, «Դուք Աստուծմէ զատ կուռքեր կ'ընդունիք իբր հաւատալիք, այս աշխարհի ձեր հեանքին սիրոյն համար. բայց յարութեան օրը դուք զիրար պիտի ուրանաք և անիծէք. կրտկը պիտի ըլլայ ձեր բնակատեղին և պաշտպան մը չպիտի ունենաք:

25. Դովտ հաւատաց Աբրահամին, և ըսաւ, «կը ձգեմ իմիներս, և կ'ապաւինիմ Տիրոջը, նա իզօր

և իմաստուն է» :

26. Արքայաճամբն տուինք Իսահակը և Յակոբը, և անոր սերունդին մէջ հաստատեցինք մարգարէութիւնը և Գիրքը. անոր շնորհեցինք վարձատրութիւն մը այս աշխարհի մէջ, և նահանգերձեալին մէջ արդարներէն է :

27. Նոյնպէս զրկեցինք Ղովար: Անիկա ըսաւ իր ժողովուրդին, «դուք այնպիսի անբարոյականութիւն մը կընէք որ աշխարհի և ոչ մէկ ժողովուրդը բրած է ձեզմէ առաջ» :

28. «Դուք արունբու հետ մերձաւորութիւն պիտի ընէք. դուք անոնց պիտի յարձակի՞ք ճամբանելու վրայ. ձեր ժողովներուն մէջ չարութիւններ պիտի ընէ՞ք» : Եւ ի՞նչ եղաւ պատասխանը այդ ժողովուրդին : Անոնք կըսէին. «Եթէ դու ճշմարտախօսես, մեր վրայ Աստուծոյ պատիժը բե՛ր» :

29. Տէ՛ր. ազազակեց Ղովա, ինձ օգնութեան հասիր այս չար ժողովուրդին դէմ :

30. Երբ մեր զրկածները աւետիսով մը եկան գըտան Արքայամը, ըսին. «մենք կերթանք բնաջնջելու այս քողաքի բնակիչները. վասնզի անոր բնակիչները ամպարիչներ են» :

31. — Ղովաը անոնց մէջն է, ըսաւ Արքայամ. — Գիտենք, ըսին անոնք. թէ ով կայ անոնց մէջ : Զայիտի ազատենք. նաև իր ընտանիքը, բոցի իր կիներէն, որ ետ պիտի մնայ :

32. Երբ մեր զրկածները Ղովաի քով եկան, տըրմեցաւ տնոնց մասին, և իր բազուկը անհարող եղաւ զանոնք պաշտպանելու : Ըսին անոր. «Մի՛ վախնարու մի տխրիր. մենք քեզ և քու ընտանիքդ պիտի ազատենք, բացի քու կիներդ, որ ետ պիտի մնայ» :

33. «Երկիրքէն պատիժ պիտի իջեցնենք այս քաղաքի բնակիչներուն վրայ ի փոխարէն անոնց ոճիր-

ներուն» :

34. Մենք յայտնի օրինակ մը տուինք անով բան հասկցող մարդոց :

35. Մատիանցիներուն զրկեցինք իրենց եղբայր Շուէյպը, որ ըսաւ անոնց, «ով իմ ժողովուրդս, «պաշտեցէք զԱստուած և սպասեցէք վերջի օրուան և մի ջանաք երկրի վրայ չարիք գործելու» :

36. Բայց անոնք ստախօս համարեցին զանի. երկրաշարժ մը անոնց վրայ հասաւ. հետեւեալ օրը անոնք իրենց տուններուն մէջ փռուած զանուեցան :

37. Այնպէս ալ Ատցիները թէմուցիները շնջեցինք : Անոնց բնակարաններու աւերակներէն այդ որոշապէս կը տեսնէք : Սատանան պատրաստեր էր անոնց գործերը և հեռացուցեր էր զանոնք ուղիղ ճամբէն : Սակայն անոնք կը տեսնէին :

38. Եւ այսպէս ալ Գարունը և Փարաւոնը և Հաւմանը կորնցուցինք. և սակայն Մովսէս երեզաւ անոնց մէջ յայտնի ապացոյցներով : Անոնք երկրի վրայ ինքզինքնին հզօր կը կարծէին. բայց չկրցին առաջ անցնիլ և պարտէն խոստովել :

39. Ամէնը պատժուեցան իրենց մեղքէն. անոնցմէ ոմանց վրոյց քարեր տելացնող հով մը զրկեցինք. ոմանք սոսկալի գոռումէ մը բռնուեցան, ոմանք երկրին տակը անցուցինք, և միւսներն ալ խեղդեցինք : Եւ Աստուած չէ որ անոնց անիրաւութիւնը բաւ, այլ իրենք իրենց անիրաւութիւն ըրին :

40. Որոնք որ Աստուծամէ զատ պաշտպաններ կը փնտռեն, կը նմանին մտմուկին որ իրեն բնակարան կը չիւնէ. կ'այ միթէ աւելի տկար բնակարան քան մամուկին ոստայնը : Եթէ գիտնային :

41. Աստուած գիտէ անոնց բոլոր աղօթածը իրմէ զատ : Եւ է Հզօրը և Իմաստունը :

42. Անա առակներ որ մարդոց կը բերենք, բայց

միայն գիտուն մարդիկ զանոնք կրճառեն :

43. Աստուած ստեղծած է երկինքը ու երկիրը ճշմարտութեամբ : հաւատացողներուն համար ասոր մէջ կրթիչ նշան մը կայ :

44. Կարգա՝ ուրեմն գիրքին այն մասերը որ յայտնուած են և կատարէ աղօթքը, վասն զի աղօթքը կը պահպանէ խայտառակութենէ և պարսկի գործերէ : Աստուած յիշելը մեծ պարտք մըն է : Աստուած գիտէ ձեր գործերը :

45. Գիրք սենեցողներուն նեւ միայն ամենապարկեշտ կերպով վիճարանեցէք, միայն թէ անոնք չար մարդիկ չըլլան : Ըսէ՛ք, «մենք կը հաւատանք մեզ զրկուած գիրքերու», նաև ձեզ զրկուածներուն : Մեր Աստուածը և ձերինը միեւնոյնն է, և մենք կը յանձնուինք բոլորովին անոր կամքին» :

46. Այսպէս քեզ իջեցուցինք Գիրքը : Որոնց որ գիրք տուած ենք անոնք անոր կը հաւատան, Արարներէն շատեր կը հաւատան անոր, և միայն անհաւատներն են որ կուրանան մեր նշանները :

47. Առաջ դու գիրք չէիր կարգար կամ ոչ ալ գիծ մը քաշէիր աջ ձեռքովդ : Ա՛ն, այնատեն, ճշմարտութիւնը գրծողները կրնային կասկածիլ :

48. Այն յայտնի նշաններու հաստատումն է անոնց սրտերուն մէջ որոնք գիտութիւնը ընդունած են. միայն չարերը կտն որ կը մերժեն մեր նշանները :

49. Անոնք կ'ըսեն. «եթէ դոնէ անոր հրաշքներ չնորձուած ըլլային իր Տիրոջ կողմէ պէտէ հասարակէն» : Ըսէ անոնց, «հրաշքները Աստուծոյ զօրութեան անկ են, և ես միայն մարգարէ մըն եմ բացայայտ գեկուցանելու պաշտօնով» :

50. Անոնց չի բաւեր որ քեզ զրկած ենք գիրքը որուն պատգամները անոնց կը պատմեո : Արդարև ասոր մէջ ապացոյց մը կայ Աստուծոյ ողորմութեանը

և զեկուցում մը բոլոր հաւատացեալ մտրոց համար :

51. Ըսէ անոնց. «Կը բաւէ որ իմ և ձեր միջև Աստուած վկայ ըլլայ» :

52. Նա գիտէ բոլորը որ կայ երկնից մէջ և երկրի վրայ : Անոնք որ ունայնին (հոռտերուն) կը հաւատան և Աստուծոյ չեն հաւատար, թշուառներ են :

53. Անոնք քեզմէ պիտի պահանջեն որ պատիժը շուտով հասնի : Եթէ ժամանակը անխօսիտելիօրէն որսչուած չըլլար, պատիժը յանկարծ պիտի հասնէր անոնց, երբ չէին սպասեր :

54. Անոնք պատիժին փութացումը պիտի պահանջեն քեզմէ : Արդէն զեհներ կը պարփակէ անհաւատները :

55. Օր մը պատիժը զանոնք պիտի պարփակէ իրենց գլուխներէն վեր և իրենց ոտքերէն վար : Այն տան Աստուած պիտի գոչէ անոնց, «ճաշակեցէք ձեր գործերուն պտուղը» :

56. Ով իմ ծառանքս, աշխարհը ընդարձակ է (\*) դուք պարտաւոր էք զիս պաշտել :

57. Ամէն հոգի մահը պիտի ճաշակէ. յետոյ դուք բոլորդ ինձ պիտի վերադառնաք :

58. Որոնք որ պիտի հաւատան և բարի գործեր կատարեն, անոնց պիտի տանք դրամներ մէջ պոլատներ, պարտէզներ հոսուն ջուրով ոռոգուած, ուր պիտի միան յաւիտեան : Ի՛նչ լաւ վարձատրութիւն բարեգործներուն :

59. Որոնք վիշտերուն կը համբերեն, և Աստուծոյ կապաւինին :

60. Ո՛րքան արարածնէր կան, որոնք իրենց սնունդին հոգ չեն տանիր : Աստուած է որ կը սնուցանէ զանոնք, ինչպէս ձեզնա. էոր կը լսէ ու գիտէ ամէնը :

(\*) Այսինքն, էլ ինչ յեղաբեկէն զէն պաշտեմէ, որքէն երկիր գաղտնեցէ :

61. Եթէ անոնց հարցնես թէ ո՞վ երկնից և երկրի ստեղծողը, քեզ պիտի պատասխանեն, «Աստուած է»։ Ի՞նչու կը ստեն ուրեմն «բիշ ապրանքներ պաշտելով»։

62. Աստուած չիարուուն պարզ և կուտայ իր ծառաներէն որուն որ ուզէ, կամ որոշ չափով կուտայ։ Աստուած ամէն բան գիտէ։

63. Եթէ անոնց հարցնես, թէ ո՞վ է որ երկինքէն ջուրը կիջեցնէ, որ անկենդան երկիրը անով կը կենդանացունէ. անոնք քեզ պիտի պատասխանեն, «Աստուած է», Ըսէ, «Աւրեմն փա՛ռք Աստուծոյ»։ Բայց անոնցմէ շատերը ոչինչ չեն հասկնար։

64. Այս աշխարհի կեանքը զբոսանք մը ու խաղ մըն է մրայն. բայց միւս աշխարհինը ճշմարիտ կեանքն է։ Ա՛հ, եթէ գիտնային։

65. Երբ նաւը նստին, անոնք Աստուծոյ անունը կը յիշեն. սուրբ և անկեղծ հաւատքով. բայց երբ նա ողջ և առողջ զանոնք ցամաք հանէ, անա անոր ուրիշ աստուածներ կ'ընկերացնեն։

66. Եւ չեն հաւատար յայտնուած գիրքերուն ու կը վայելեն այս աշխարհի բարիքները. բայց որ մը պիտի հասկնան ճշմարտութիւնը։

67. Չեն տեսներ թէ ինչպէս մենք ապահովութիւնը հաւատարած ենք սուրբ տեղւոյն մէջ, մինչ շուրջը կողոպտում ու յարձակում կայ։ Պիտի հաւատան սուտերուն, և պիտի դժգոհանան Աստուծոյ բարիքներէն։

68. Ա՛հ, ո՞վ աւելի չար է քան այն որ Աստուծոյ մասին յերիւրանքներ կ'ընէ, կամ ճշմարտութիւնը սուտ կը համարէ։ Չէ՞ որ գեհնին մէջն է անհաւատներու բնակատեղին։

69. Մեզ համար կուտողները մեր ճամբէն պիտի առաջնորդենք, և ճիշդ է որ Աստուած բարեգործներուն հետ է։

L. Գ Լ Ո Ւ Խ

(ՍՈՒՐԷԹ ԻՒՂ-ԲՈՒՄ)

Մէքէական, վարսուն պատգամ

Յանուն Աստուծոյ գթածի եւ ողորմածի

1. Ա. Լ. Մ. Հոռոմները յաղթուեցան
2. Մերինին շատ մօտիկ երկրի մը մէջ. բայց այս յաղթանակէն յետոյ անոնք ալ պիտի յաղթեն իրենց կարգին (\*).
3. Քանի մը տարուան միջոցին։ Առաջ նայնպէս յետոյ բաները Աստուծմէ կախեալ են։ Այն օրը հաւատացեալները պիտի ուրախանան
4. Աստուծոյ օգնութեամբը ձեռք բերուած յաղթութիւնէն. նա կօղնէ իր ուզածին. նա ինքն է Հզօրը և Ողորմածը։
5. Այս է Աստուծոյ խոստումը։ Նա անհաւատարիմ չէ իր խոստմանց բայց շատ մարդիկ չեն գիտեր։
6. Անոնք գիտեն այս աշխարհի կեանքը արատքուտ և հանդերձեալի մասին տգէտ են։
7. Չեն խորհիր թէ Աստուած ստեղծած է երկինքը ու երկիրը և բոլոր անոնց մէջ եղածը. արդարութեան համար, և որ կանխաւ որոշած է անոնց տեղութիւնը։ Բայց շատ մարդիկ չեն հաւատար թէ որ մը պիտի ներկայանան իրենց Տիրոջ առջև։
8. Անոնք չեն պաշտած երկիրներ. չեն տեսած

(\* ) Կախարհի Պարսից Սուրով Եւսթատիոս յաղթանակներ Արեւելեան կայսրութեան դէմ, Եւ յետոյ Հերակլ կայսեր յաղթանակը Պարսից վրայ, 4625 Եւսթատիոս Քրիստոս

թէ ինչ է եղած վերջը իրենց նախորդներուն, որոնք աւելի զօրաւոր էին: Անոնք նեաքեր թողուցին երկրի վրայ և աւելի ապրեցան անոնցմէ: Մարգարէնք եկան անոնց յայտնի ապացոյցներով: Չէ սր Աստուած անոնց անիրաւութիւն ըրաւ, այլ իրենք իրենց հանգէպ գէշութիւն ըրին:

9. Գէշ եղաւ վախճանը անոնց որոնք գէշ գործեր կրնէին: Անոնք մեր նշանները սուտ համարեցին և իրենց ծաղրանքին առարկայ ըրին:

10. Աստուած գոյացուցած է արարածները և նա առ ինքն կը վերադարձնէ զանոնք Գուք անոր պիտի վերադառնաք:

11. Այն օրը երբ ժամը կը հասնի, յանցաւորները յուս կը մնան.

12. Անոնք բարեխօսներ չպիտի գտնեն իրենց աստուածընկերներէն. անոնք պիտի ուրանան իրենց աստուածընկերները (\*).

13. Այն օրը երբ ժամը պիտի հասնի, մարդիկ իրարմէ պիտի բաժնուին:

14. Անոնք որ պիտի հաւատան և բարիք գործեն պիտի զուարճանան ծաղկաստանի մը մէջ:

15. Որոնք որ չեն հաւատար և մեր նշանները ու միւս աշխարհի գոյութիւնը սուտ կը համարեն, պատժոյ պիտի հանուին:

16. Գովաբանեցէ՛ք զԱստուած իրեկուն և առաւօտ:

17. Վասնզի փառքը անորն է երկնից մէջ եւ երկրի վրայ, Գովաբանեցէ՛ք զանի իրիկնամուտին և ձեր կէսօրուան հանգիստին:

18. Նո կենդանին մեռեալէն կը յարուցանէ, եւ

(\* Այս բառը կը գործածենք կտրուելու եւ երեւակայան շարժումներու համար, զորս Աբաբները կը պաշտէին բռն Աստուծմէ զար, էբը ընկերներ Աստուծոյ:

մեռեալը կենդանիէն. նա կը կենդանացնէ մեռեալ երկիրը, այսպէս ալ դուք յարու թիւն պիտի առնէք:

19. Նշաններէն մին այն է որ ձեզ հողէն ստեղծած է: Յետոյ դուք իրր մարդ աարածուած էք ամէն կողմ:

20. Անոր նշաններէն մին ալ է ձեզ ամուսնուհիները: Երբ ամուսնու ըլլալը ձեզմէ ստեղծուած, որ անոնց հետ քնակիք: Նա ձեր միջև սէք և գորով հաստատած է: Ասոր մէջ նշաններ կան խորհողներու համար:

21. Երկնից եւ երկրի ստեղծումը, ձեր լեզունքու և ձեր գոյներու զանազանութիւնը նոյնպէս նշան մը են. ստուգիւ ասոնց մէջ ալ նշաններ կան տիեզերքի համար:

22. Անոր նշաններէն է նաև ձեր զգիչրուան ու ջերեկուան քունը, և ձեր իղձը հարստութիւն ստանալու համար. Աստուծոյ առատածեռնութենէն: Ասոր մէջ նշաններ կան լսողներու համար:

23. Իր նշաններէն մին է նաև, որ կը փայլատակեցնէ կայծուկը ձեր աչքերուն ձեզ վախ և յոյս ներշնչելու համար, որ կիջեցնէ երկինքէն ջուրը որով անկենդան երկրին կեանք կուտայ: Ասոր մէջ նշաններ կան ուշիմ մարդոց համար:

24. Նաև անոր նշաններէն մին է որ երկինքը ու երկիրը իր հրամանով կանգուն կը մնան: Յետոյ երբ ձեզ կը կանչէ երկրի մէջէն, յանկարծ դուք պիտի ելլէք:

25. Անոր կը պատկանին երկնից մէջ ու երկրի վրայ բոլոր եղածները. բոլորը անոր հպատակ է:

26. Նա որ ստեղծած է արարածները, զանոնք հո պիտի դարձնէ էբն. սա անոր դիւրին է: Միւսին նա իրաւունք ունի բազդատուելու երկնից և երկրի

ամենարարձր քաներուն հէր, և նա հոգի և իմաստուն է:

27. Եւ ձեզ օրինակներ կը բերէ ձեզից իսկ: Ձեր ձեռքով վաստակած գերիները միթէ ձեզ հաւատարմութիւն կրնէ՞ք մեր ձեզ տուած բարիքները վայելելու մէջ: Անոնցմէ այնպէս կը վախնաք, ինչպէ՞ս որ կը վախնաք իրարէ: Մտնք այնպէս կը բացատրենք մեր նշանները հասցոյ մարդոց:

28. Ո՛ր միտն անիրաււերը սգիտութեամբ կը հետեւին իրենց հանգիստն եւ ո՞վ պիտի ստանայ որդէ Աստուծոյ յոյսերը: Եւ ո՞վ կրնայ անոր պաշտպան ըլլալ:

29. Աւրեմն բարեպաշտութեամբ երեսգլ զործուր կրօնքին, այն Աստուծոյ գործն է որուն համար ըստեղծած է մարդիկը: Աստուծոյ արարչագործութիւնը անփոփոխ է: Այս կրօնքը հաստատուն է, բայց մարդոց շատերը այդ չեն հասկնար:

30. Գէպի Աստուած դարձէ՞ք եւ անկէ վախցէ՞ք, ազօթքը կատարեցէ՞ք, եւ կապաշտ մի՞ ըլլաք:

31. Եւ ոչ ալ անոնցմէ որք իրենց կրօնքը բաժնած են եւ խուճերու բաժնուած եւ մէն մի խումբ կը պարծենայ իրենովը:

32. Երբ դժբաղլութիւն մը հասնի անոնց կը դառնան իրենց Տիրոջ ու կաղաչեն անոր, յետոյ՝ երբ նա իր ողորմութիւնը ճաշակել տայ անոնց, իրենցմէ շատերը Տիրոջ ընկերներ կուտան:

33. Ահա ապացոյցը անոնց ազերախտութեան մեր տուած բարիքներուն հանդէպ: Վայլեցէ՞ք, շուտ կ'իմանաք:

34. Միթէ մենք իրաւասութիւն տուած ենք մէկու մը որ անոնց խօսի շատուածներու մասին զորս Աստուծոյ կրնկերացնեն:

35. Երբ մարդոց ողորմութիւն ճաշակել տանք

Վարսիան ան, բայց, եթէ չարիք մը հասնի անոնց թպտիմ իրենց մեղքերուն ան կը յուսահատին:

36. Արդեօք չե՞ն տեսներ որ Աստուած երբէնն աստուօրէն սնունդ կուտայ իր ուզածին, եւ երբէնն չափուոր:

37. Տուր իր իրաւունքը ազգականից, ազրատին եւ ճամբորդին Այս աւելի օգտակար է անոնց որոնք կուզեն իրենց Տիրոջ բարեմած ակնարկին արժանանալ: Անոնք երջանիկ պիտի ըլլան:

38. Ինչ որ առիտ կուտաք անկու համար որ ինչնորուն ինչքովը, չպիտի անի Աստուծոյ անկու, բայց Աստուծոյ երեստ տեսնելու համար ինչ ողորմութիւն որ տաք, անոր կրկնապատիւր կ'ստանաք:

39. Աստուած ձեզ տեղծած է եւ նա կը սնուցանէ ձեզ նա ձեզ պիտի մեղցնէ եւ յետոյ վերականգնուտ ցընէ: Ձեր աստուածը իրենքնէն մէկը կա՞յ որ այդ բաներէն մին կարենա ընել: Փա՛սք անոր, որ խիտ բարձր է իրեն ընկեր տրուածնէն:

40. Մարդոց ձեռքերով կատարուած գործերու պատճառու ցամաքի եւ ծովու վրայ ապակախութիւն երեւան եկաւ, որպէսզի իրենց յաւոյրբութեանց մէկ մասին պարտ իրենք ալ ճաշակեն, որ զարժի գան:

41. Ըսէ՛ անոնց, ազտեցէ՞ք երկիրը եւ անէ՞ք թէ ինչ եղած է վախճար այն հին ժողովուրդներուն որոնք մեծամասամբ անաւատներ էին:

42. Երեսգլ զէպի ճշմարիտ կրօնքը գործուր հասնել առաջ այն օրը զոր մէկը չպիտի կրնայ Աստուծոյ հետացնել: Այն ատեն երկու մասի պիտի բաժնուին:

43. Անաւատները ծանրաբեռնուած իրենց անհաւատութեամբ մէկ կողմ, եւ բարեգործները եւ իրենց հանդուստալայր պատրաստողները միւս կողմ:

44. Որպէսզի Աստուած վարձարարէ իր շնորհքով հաւատացողները ու բարեգործները: Կա բնաւ չտրեի անհաւատներ:

45. Իր դորութեան նշաններէն մին այն է: որ կը զրկէ աւետարեր հովերը, ճաշակել տալու համար մարդոց իր ողորմութեան ընծաները: եւ որ իր հրա մանովը նաւեր կ'ընթանան, եւ որ մարդիկ ապրուստ կը խնդրեն իր ողորմածութենէն, որպէսզի երախտապէտ ըլլաք:

46. Բեզմէ առաջ մարգարէներ զրկեցինք այդ ազգերու իւրաքանչիւրին: անոնք հրաշքներով ներկայացան անոնց: Մենք յանցաւորներէն վրէժ լուծեցինք: Մեր պարտքն էր օգնել հաւատացեալներուն:

47. Աստուած կը զրկէ հովերը եւ հովերը կը բարձրացնեն ամզը: Աստուած զայն կը տարածէ երկինքի վրայ, իր ուղածին պէս կտորներու կը բաժնէ: եւ կը տեսնես անձրեւին ելլելը անոր ծոցէն. եւ երբ նա անձրեւը կը տեղացնէ իր ուղած ծառաներուն վրայ, անոնք կուրախանան:

48. Որոնք անձրեւը տեղայէ առաջ յուսահատութեան մէջ էին:

49. Արդ, գիտէ Աստուծոյ ողորմութեան հետեւանքները, տես թէ ինչպէս կեանք կուտայ մեռեալ երկրին: Այս միեւնոյն Աստուածը պիտի կենդանացնէ մեռեալները. նա ամենակարող է,

50. Բայց, եթէ այլ ուրիշ ուրիշ զրկենք, որ տեսնեն տեղիւր ցանքերուն, տես թէ այնտեղ ինչպէս անհաւատ կը դառնան:

51. Դու չպիտի կրնաս, «ՎՄահմէդ», քեզ լսելի ընել մեռելներուն, դու չպիտի կրնաս խուլերուն ձայն մը լսել տալ, երբ անոնք կոնակնին դարձուցած կէրէն:

52. Դու չես կոյրերուն առաջնորդը զանոնք մտւորութենէ ազատելու համար: Դուն քեզ լսելի ընել կրնաս միայն անոնց որոնք կը հաւատան մեր նշաններուն և միւսյիմներ են:

53. Աստուած է որ քեզ տկար ստեղծած է. աղկարութենէ յետոյ քեզ ոյժ կուտայ, և ոյժէն յետոյ կրկին կը բերէ տկարութիւնը և ճերմակ մազերը: Եւ կ'ստեղծէ իր ուղածը. նա է Գլխուեր և Հղօրը:

54. Այն օրը որ ժամը հասնի, մեղաւորները պիտի երզնուն,

55. Թէ իրենք միայն ժամ մը մնացած են Գերեզմանէ մէջ: Անա այսպէս կը ստեն անոնք:

56. Բայց որոնց որ գիտութիւնը և հաւատք արբւած է, պիտի ըսուի, «Դուք հոն մնացիք, Աստուծոյ գիրքին վճռոյն համաձայն մինչև յարութեան օրը: Անա այդ օրը: բայց դուք չէիք գիտեր զայն»:

57. Այն օրը չարերուն պատճառարանութիւնները անօգուտ պիտ ըլլան անոնց, և Աւժտուծոյ հաճութեան չեն հրաւիրուիր:

58. Այս Գուրանին մէջ մենք ամէն տեսակ օրինակներ բերած ենք մարդոց: Եթէ դու հրաշք մը ցոյց տաս անոնց, անհաւատները պիտի ըսեն «դուք խաբերաներ էք»:

59. Անա այսպէս Աստուած կնիք կը դնէ ագէտներու սրտերուն վրայ:

60. Եւ դու, «ՎՄահմէդ», համբերէ՛, վասնզի Աստուծոյ խոստումները ճշմարիտ են: Բեզ թող չըխախտեցնեն անոնք որոնք հաստատապէս չեն հաւատար:



ԼԱ. Գ Լ Ո Ի Խ

(ՍՈՒՐԵԹ ԻՒԼ - ԼՕԳՄԱՆ)

Մէքէական, երեսուն չորս պատգամ

Յանուն Աստուծոյ գթածի ոգորմածի

1. Ա. Լ. Մ. Ասոնք իմաստուն Գիրքին նշաններն էն:

2. Որ ուղեցոյց և ողորմութիւն է բարեգործներու համար:

3. Որոնք աղօթքը կը կատարեն, ողորմութիւն կուտան և հանդերձեայ կեանքին կը հաւատան:

4. Ասոնք իրենց Տրրոջմէ առաջնորդուած են և երջանիկ են:

5. Մարդոց մէջ կայ մէկը որ փուճ պատմութիւններ կը գնէ, մոլորեցնելու համար ուրիշները Աստուծոյ ճամբէն. նա գիտութիւն չունի և զուարէննայ կու գէ: Այն տեսակ մարդոց համար նախատալից տանջանք կայ:

6. Եւ երբ մեր պատգամները անոր կարդացուին. նա անարգանքով երես կը դարձնէ իբր թէ չլսեր. իբր թէ խուլ է: Ուրեմն, տուր անոր դառն տանջանքի լուրը:

7. Որոնք որ հաւատան և բարեգործութիւններ անեն, հեշտալի դրախտներու մէջ պիտի բնակին:

8. Աստուծոյ ճշմարիտ խոստման համաձայն, անոնք հոն յուրանայպէս պիտի բնակին. նա է Հզօրը և իմաստունը:

9. Նա ստեղծած է երկինքը ու երկիրը առանց անասնելի սիւներու, և երկրի վրայ նետած է լեռ:

ները, որ ձեր հետ չչարժի. և անոր վրայ տարածած է ամեն տեսակ անասուններ: Մենք կիջեցնեք ջուրը երկինքէն, և անով կարաողիենք ամեն ընտիր բոյսեր:

10. Այս Աստուծոյ ստեղծագործութիւնն է. արդ ինձ ցոյց տուէք թէ ինչ ստեղծած ունին մի աներբե Սյո՛, չարերը յայտնի մոլորութեան մէջ են:

11. Մենք տուինք իմաստութիւնը Լօգմանին, և և ըսինք իրեն, «Երախտագէտ եղի՛ր Աստուծոյ հանդէպ. վասնզի ով որ երախտագէտ ըլլայ իր սեփական օգտին եղած պիտի ըլլայ. իսկ ով որ ապերախտ է Աստուծոյ կարօտ չէ փառքով լի է:

12. Օր մը Լօգման ըսաւ իր որդւոյն. խրատելով «Զաւակս, Աստուծոյ մի բնկերացնե՛ր ուրիշ աստուածութիւններ: Վասն զի կռապաշտութիւնը անօրէնութիւն է»:

13. Պատուիրած ենք մարդուն իր ծնողաց մասին (մայրը իր ծոցին մէջ կրած է զանի ցաւ դաւի վրա քաշելով, և երկու տարի լեռոյ ձիճէն կտրած է), երախտագէտ եղի՛ր ինձ հանդէպ և ծնողացդ հանդէպ բոլորը ինձ կը վերադասանայ:

14. Եթէ քեզ ստիպեն ինձ բնկերացնելու չգիտցածնիդ, մի ննազանդիր անոնց, բայց պարկեշտաբար վարուէ անոնց հետ այս աշխարհի մէջ, և հետեւ ինձ վերադարձողներու ճամբուն. Գուք բոլորդ ինձ պիտի վերադասանաք, և ձեզ պիտի վերաբնակենք ինչ որ բրած էք:

15. Ո՛վ զաւակս, մանանկսի հատիկի մը չափ ծանրութիւն չունեցածը եթէ պահուած ըլլայ մայրի մը մէջ, կամ երկինքը կամ երկրի մէջ. Աստուծոյ զայն դուրս կը հանէ. վասն զի նա թափանցող է և անզեակ է բոլորին:

16. Որդևակ իմ, աղօթքը կատարէ, բարիքը հրատայէ և չարիքը արգիլէ, և համբերութեամբ տար չարիքները որ կրնան քեզ հանդիպել. վասնզի այս է իրաց անհրաժեշտ լուծումը:

17. Բերանովք ծամառութիւններ մի՛ ընեն մարդոց համար և հպարտութեամբ մի պտըտիր, վասն զի Աստուած չսիրեր սնանարծ և գոռոզ մարդը:

18. Ձանա քայլք չափաւորել և ձայնդ ցածցնել վասնզի ձայներուն է՛ն տնաճելին էջին ձայնն է:

19. Միթէ չէ՞ք տեսներ որ Աստուած ձեզ հպատակեցուցած է այն բոլորը որ կայ երկնից մէջ և երկրի վրայ: Եւ ձեր վրայ թափած է իր տեսանելի և անտեսանելի պարգևները: Եւ մարդիկ կան որոնք կը սիրեն Աստուծոյ մասին տգիտաբար, առաջնորդութեան և առանց լուսաւորող գիրքի:

20. Երբ անոնց կ'ըստիր, «հետեցէք Աստուծոյ ձեզ իջեցուցածին» կրտեն, «Մենք պիտի հետեինք մեր հայրէն դամնուս»: Բայց, եթէ սատանան զանոնք այրող կրակի պատիժին կը հրաւիրէ:

21. Ով որ բոլորովին Աստուծոյ կը յանձնուի արգար է, ան հաստատուն ունկէն բռնած է:

22. Անհաւատին անհաւատութիւնը քեզ թող չըտրտեցնէ. անոնք ամէնը մեզ պիտի վերադառնան, անոնք պիտի յիշեցնեն ք իրենց գործերը: Աստուած գիտէ սրտերու մէջ կըլածը:

23. Մենք վայելել կուտանք անոնց քիչ մը ատեն յետոյ զանոնք ծանր պատժոյ կենթարկենք:

24. Եթէ անոնց հարցնես թէ ո՞վ է ստեղծած երկինքը, կը պատասխանեն, «Աստուած», Ըսէ՛ անոնց «Փառք Աստուծոյ», բայց անոնցմէ շատերը զայն չեն գիտեր:

25. Անորն է ինչ որ կայ երկնից մէջ և երկրի վրայ: Եւ հարուստ է և փառքով լի:

26. Եթէ երկրի վրայ կըլած ծառերը գրիչներ ըլայն, և ծովը եօթն անգամ մէջ մղար, վերսուէր. Աստուծոյ խօսքերը չպիտի սպառէին. նա հղօր և իմաստուն է:

27. Ձեր բոլորին ստեղծումը ու կանգնումը անոր համար մէկ անհատ մը ստեղծելու պէս է. վասնզի Աստուած կը լսէ ու կը տեսնէ բոլորը:

28. Ձե՛ս տեսներ որ Աստուած գիշերը ցերեկին մէջ կը մտցնէ և ցերեկը գիշերին մէջ, և արեւը ու լուսինը նա ձեզ հպատակեցուցած է. թէ՛ մին և թէ միւսը իրենց շրջանը կընեն միշտ և սահմանաւ փամանակը: Աստուած գիտէ ձեր բոլոր ըրածները:

29. Վասնզի Աստուած ինքն է ճշմարտութիւնը, և անկէ դատ ձեր աղօթած շատուածները ոչնչութիւններ են: Ստուգիւ, Աստուած է Բարձրագոյնը և Մեծը:

30. Ձե՛ս տեսներ նաեւ որուն ծովի վրայ սահիլը լեցուն Աստուծոյ պարգևներով ձեզ ցոյց տալու համար իր հրաշքները: Ասոր մէջ նշաններ կան հախքերով և երախտագէտ մարդոց համար:


31. Երբ ամպերու նման ալիքները կըլ ծածկեն նաւը, անոնք անկեղծ հաւատքով մը զԱստուած կը կանչեն բայց երբ զանոնք ազատէ ու ցախաբը հանէ. այն ատեն անոնցմէ ոմանք կասկած: մէջ կը տարուբերուին: Սակայն ո՞վ կուրանայ մեր հրաշքները, եթէ ոչ նենգաւորները ու ապերախտները:

32. Ով մարդիկ, վախցէք ձեր Տիրոջմէ, և սարսափեցէք այն օրէն, յորում ոչ հայրը իր զաւակին և ոչ ալ զաւակը իր հօրը կրնայ սգնել:

33. Աստուծոյ խոստումները ճշմարիտ են: Այս աշխարհի կեանքը թող չհրապուրէ ձեզ. պատրաստը թող չկուրացնէ ձեզ Աստուծոյ մասին:

34. Վերջին ժամը գիտնալը Աստուծոյ յատուկ է:

նա կիջնցնէ երկինքէն անձրևը: նա գիտէ ծովն խորը  
գտնուածները: Մէկը չգիտեր թէ վաղը ինչ պիտի  
չա՛նի. ոչ ոք գիտէ թէ որ երկրի մէջ պիտի մեռնի:  
Աստուած գիտուն և իմացող է:



ԼԲ. Գ Լ Ո Ի Խ

(ՍՈՒՐԷԹ ԻՒՍ-ՍԷՃՏԷ)

Մէքէական. Երեսուն պատգամ

Յանուն Աստուծոյ գեժածի և ոգորմածի

1. Ա. Լ. Մ. Այս Գիրքին յայանու թիւնը՝ որուն  
ժառին կասկած չկայ, կուգայ արեւզերաց Տիրոջ  
կողմէն:

2 Պիտի բռնն. «անիկա (Մահամէր) հնարած է  
զայն»:—Մէջ այս ճշմարտութիւնն է քու Տիրոջմէ-  
նկամ. որ խրատես փողովւարդ մը, որ քեզմէ առաջ  
մարգարէ չէ ունեցած, և որպէսզի բոլոր ուզիլ ճա-  
բուն մէջ առաջնորդուին:

3. Աստուած է որ ստեղծեց երկինքը ու երկիրը և  
անոնց մէջ բոլոր եղածները վեց օրուան մէջ. յետոյ  
ստած է գա՛նին վրայ: Դուք անկէ ուրիշ պաշտպան-  
ունիք, ոչ ալ բարեխօս: Սիթէ այս չէ՞ք խորհիր:

4. Նա կը վալէ գործերը երկինքէն մինչև երկիր-  
յետոյ ասէնք վեր կիլիէ ան. որ քով մէկ օրուան մէջ,  
որուն տեսութիւնը հազար տարի է ձեր հաշուով:

5. Նա է որ գաղանթները ու յայանիները գիտէ.  
Հգորը: Աղորմածը:

6. Նա կտարբերագործած է իր բոլոր ստեղծածներ-  
քը, և մարդու ստեղծու մը նախ կուէ կազմած է:

7. Յետոյ անոր սերունդը սերմէ շինեց, ոչինչ կա-  
թիլ մը չուրէ:

8. Յետոյ զայն կազմեց բառ որոյ չափի, և անոր  
մէջ փչեց իր հոգիէն մաս մը: Չեզ տուա յսողու-  
թիւն և տեսողութիւն ու սիրտ: Դուք սրչափ քիչ  
երախտագէտ էք:

9. Անոնք կրսնն. «Մենք հոգին տակ անյայտանալէ  
յետոյ, կրկին նոր արարած պիտի ըլլա՞նք»:

10. Անոնք չեն հաւատար թէ իրենց Տիրոջ առջև  
կրկիս պիտի ելլեն:

11. Ըսէ՛ անոնց. «Մահուան հրեշտակը՝ որ ձեզի  
կը հսկէ, ձեզի կը մեռցնէ, յետոյ դուք Աստուծոյ կը  
վերադառնաք»:

12. Եթէ տեսներ թէ ինչպէս մեղաւորները կը  
խոնարհեցնեն զյու խնին իրենց Տիրոջը առջև: Անոնք  
պիտի ազազակեն, «Տէ՛ր, տեսանք ու յսեցինք. մեզ  
վերադարձուր երկրի վրայ ու ա՛լ բարիք պիտի գոր-  
ն» ք. հի՛ն հաստատապէս կը հաւատանք»:

13. Եթէ մենք ուզենք, ամեն հոգիի ցայց կու-  
տայինք իր ուզիլ ճամբան. բայց իմ անփոփոխ խօս-  
քը սա է եզած. «Գժօխքը անպատճառ պիտի լեցնեմ  
մարդոցմով և բոլոր դեկերով»:

14. «Այսօրուան հանդիպումը մուսցած ըլլայնուդ  
պատժը կրկնէ՞ք ՚իմա: Սենք ալ ձեզ մոռցանք.  
կրեցէք պատիժը յախտեանկան ի պահարէն ձեր  
գործելուն»:

15. Միայն անոնք կը հաւատան մեր հրաչքնե-  
րուն՝ որոնք իրենց պատմուած ատեն կ'երկրպագեն  
ի նշան պաշտումի և կերպենք իրենց Տիրոջ գովա-  
բանութիւնը, ու չեն հպարտանար:

16. Իրոնք անկողինէն կ'ելլեն աղօթելու համար  
իրենց Տիրոջ երկիւզով ու իղձով, և որոնք ողոր-  
ժութիւն կը բաշխեն մեր իրենց շնորհած պարգե-  
ներէն:

17. Ուսք չգիտեր, թէ որչափ ուրախութիւններ իրենց վերապահուած է ի փոխարէն իրենց գործնութիւնն :

18. Հաւատացողն ալ մեղք գործողին նման պիտի ըլլայ : անոնք իրարու հաւասար պիտի ըլլան :

19. Անոնք որ հաւատացած են և բարի գործեր կատարած գրախտներ պիտի ունենան յաւիտեանական բնակութեան ի վարձատրութիւն իրենց գործերուն :

20. Ամբարիշտներուն համար կրակը պիտի ըլլայ իրենց բնակարան : Ամէն անգամ որ ուզեն անկէ ելլել, հոն պիտի վերադարձան : Անոնց պիտի ըսուի, «ճաշակեցէ՛ք կրակին պատիժը, զոր սուտ կը համարէիք առաջ» :

21. Մենք անոնց բէթե-պատիժ մը պիտի տանք այս աշխարհի վէջ, մեծ պատիժը տալէ առաջ, որ թեքու ազախարհին :

22. Ո՛վ աւելի անիրաւ է քան այն, որ Աստուծոյ նշանները ծանուցուելէ յետոյ ետ կը քաշուի : Յանցաւորներէն վրէժ պիտի առնենք :

23. Գիրքը Մովսէսին տուինք : Մի կասկածիր անոր Տիրոջ հետ տեսնուելու մասին : Այն գիրքը մենք առաջնորդութիւն ըրինք Իսրայէլի որդւոց :

24. Անոնց մէջ հաստատեցինք քահանաներ (Իճոճ) զանոնք մեր հրամաններուն համաձայն առաջնորդելու համար, որ յետոյ ըլլան հաստատ և ջերմ հաւատացեալներ մեր նշաններուն :

25. Ճշմարիտ, Աստուած յարութեան օրը պիտի վճռէ ձեր միջև եղած վիճարանութեանց մասին :

26. Ձե՞ն գիտեր թէ որչափ սերունդներ բնաջրնջած ենք անոնցմէ առաջ : Սակայն այն հին ժողովուրդներու բնակատեղիներուն վրայ կը կոխեն : Ահա ասոր մէջ նշաններ կան Միթէ շե՞ն լսեր :

27. Ձե՞ն տեսներ թէ մենք ինչպէս մեր առջևէն կը մղենք իւրը անպէտք ճշտեցաւ դէպի շոր երկիր մը, և ինչպէս կը բուսցնենք ցորենները, որոնցմով թէ իրե՛ք և թէ իրենց անասունները կը սնանին : Ձե՞ն տեսներ այդ :

28. Անոնք պիտի հարցնեն. «Ե՞րբ պիտի կատարուի այդ լուծումը. ըսէ՛ք եթէ անկեղծ էք» :

29. Ըսէ՛ անոնց, «Լուծումին օրը անօգուտ պիտի ըլլայ անհաւատքներուն հաւատքի գալը, Այն անոնց ժամանակ չպիտի տրուի» :

30. Դու անոնցմէ հեռու կեցի՛ր և սպասէ : Անոնք ալ կ'սպասեն :

ԼԳ Գ Լ Ո Ւ Ի

(ՍՈՒՐԷԹ ԻՒՂ - ԷՆՁԱՊ)

ՄԷՏԻՆԵՒԱԿԱՆ ԵՐԱՄԱՍԱՆ ԵՐԵՒ ԿԱՍՏԱՄ

Յանուն Աստուծոյ գթածի և ողորմածի

1. Ո՛վ մարգարէ, վախցիր Աստուծմէ և մի նազանդիր անհաւատներուն ու կեղծաւորներուն : Աստուած գիտուն և իմաստուն է :

2. Հետևէ Աստուծմէ եղած յայտնութեանը նա զիտէ ձեր գործերը

3. Վստահութիւնդ Աստուծոյ վրայ դիր, քեզ կը բաւէ Աստուած իբր պաշտպան :

4. Աստուած երկու սիրտ չէ տուած մարդուն, և ձեր կիները՝ զօրս դուք կրնաք արձակել. ձեզ համար իբր ձեր մայրերը չէ ըրած, ոչ ալ ձեր որդեգիրները ձեզի բուն զաւակներ : Անոնք ձեր բերանի խօսքերն են : Աստուած միայն կըսէ ճշմարտութիւնը և կառաջնորդէ օղիղ ճամբուն մէջ :

5. Չոր որդեգիրները իրենց հարերուն անունով կոչեցէք. այս աւելի շիտակ է Աստուծոյ առջև և թէ չէք ճանչնար անոնց հայրերը, անոնք թող բլլան ձեր կրօնքի եղբայրները և պաշտպանեալները և յանձնեալք չէ եթէ այս մասին սրտիք. բայց յանցանք պիտի բլլայ եթէ գիտակցաբար ընէք այլ: Աստուած իր է բարութեամբ և ողորմութեամբ:

6. Մարգարէն աւելի մօտ է հաւատացեալներուն քան թէ իրենք իրենց. և անոր կինն յառնոց մայրերն են: Ըստ Աստուծոյ զիրքին արհեստակցական կազմ կազուածները իրարու աւելի մօտ են քան թէ ուրիշ հաւատացեալները և գալթականները. բայց ինչ բարիք որ ընէք ձեր բարեկամներուն, զիրքին մէջ պիտի արձանագրուի:

7. Յիշէ որ մենք դաշինք դրինք մարգարէներուն ու քու հետդ. նոյնն հետ և Աբրահամին հետ, և Մովսէսին հետ, և Մարեամի որդի Յիսուսին հետ. հաստատուն դաշնակցութիւն մը կազմեցինք:

8. Արպէս զի Աստուած հարցնէ ճշմարտասուս մարդոց իրենց ճշմարտասուութեան հասին. վասն զի անհաւատներուն համար խիստ տանջանք պատրաստած է:

9. Ո՞վ հաւատացեալներ, յիշեցէք Աստուծոյ ձեզ բրած բարիքները, իբր, ձեր դէմ գունդեր եկան և երբ մենք զրկեցինք ձով մը և անտեսանելի դուռներ. վասն զի Աստուած կը տեսնէ ձեր բրածը:

10. Երբ վերէն ու վարէն ձեր վրայ յարձակեցան, այն ատեն ձեր աչքերը մօլորեցան ու ձեր սրտերը կտրորեցուց հասան. և զուք Աստուծոյ նկատմամբ կատկածներ ունեցաք:

11. Այն ատեն հաւատացեալները խիստ փորձութեան մը կենթարկուէին, և սաստիկ սարսուռով մը սարսուացին:

12. Այն ատեն կեղծասրները և օրտի հիւանդութիւն ունեցողները կրնին. «Աստուած և մարգարէն մեզ միայն սուտ խոստում բրած են»:

13. Այն ատեն մէկ մասն ալ կրնէք. «Ո՞վ ետեւրիցցիներ (\*) չոս ձեզ համար անգ չկայ. Չոր տարիք տարձէք»: Այն ատեն անոնցմէ խոճէ մը մարգարէն հրաման ուզեց ետ քաշուելու, բեկնով. «Ինչ ատենը անպաշտպան են», բայց ոչ, անպաշտպան չէին այլ անոնք մրայս փախչիլ կուզէին:

14. Եթէ այս միջոցին թշնամբն ներս մտած բլլար, և անսեցմէ խոստարթիւն պահանջուէր, անոնք պիտի ընէին քոչոյ այս պարագային միջ անոնք հանչաւ կտրծ մամանակ կը մնային:

15. Եւ սակայն անոնք առաջէն խոստացած էին Աստուծոյ բնաւ կոնակ չըլարձնել: Աստուծոյ եղած յախտին հաշիւը կը պահանջուի:

16. Ըսէ՛, «Փախուստը ձեզ անօգուտ է: Եթէ դուք փախչիք մտնէ կամ սպանութեանէ, անկէ անդին չառ չէք ապրիր»:

17. Ըսէ՛, «Ո՞վ կրնայ ձեզ պաշտպանել Աստուծոյ դէմ, եթէ նա ձեզ չարիք ընել ուզէ, կամ ձեզ սգորմիլ ուզէ: Դուք անոր դէմ ոչ պաշտպան, ոչ օգնական պիտի գտնէք»:

18. Աստուած լաւ գիտէ թէ ձեր մէջէն որոնք կարգիւն ուրիշները մարգարէին շտակել. անոնք կրան իրենց եղբայրներուն, «ձեր քով եկէ՛ք». և քիչերը մրայն կեցիման պատերազմի:

19. Սա ագահութիւն է ձեզ նկատմամբ, որովհետեւ երբ երկիւղը պատէ զանոնք, կը տեսնես որ օգնութիւն կը փնտռեն, և աչքերնին չուրջ կը յածնես կարծես մաշուան ստուերներ պատեր են զիրենք: Բայց երբ վախը անցնի, պիտի տեսնես թէ ինչպէս

(\*) Մեթիսէն էին անոնք Եսայիի էր:

քեզ կը հարձակին իրենց սրած լեզուներով. ազատ են անոնք: Այդ մարդիկը հաւատք չունին: Աստուած անոնց գործերը պիտէ ոչնչացնէ: Եւ այդ դիւրին է անոր համար:

20. Անոնք կերեակայէին թէ դաշնակիցները չպիտի հեռանային: Եթէ դաշնակիցները վերստին գահին անոնք կը բաղձային այն ատեն. թափառիկ Արաբներուն հետ ապրիլ, և կը գոհանային ձեր մասին միայն լուր առնելով, վասնզի, թէ և չիմա ձեր հետն են. քոյց տկար կերպով կուուեցան:

21. Բայց ձեր մարգարէին անձին վրայ սքոնչելի օրինակ մը ունիք, օրինակ մը բոլոր անոնց համար որոնք Աստուծոյ կը յուսան և վերջին օրուան կը հաւատան, և յաճախ Աստուած կը յիշեն:

22. Երբ հաւատացեալներու տեսան դաշնակիցները ազազակեցին. «հա՛ա այս է Աստուծոյ և իր մարգարէին. մեզ յոստացածը. Աստուած և իր մարգարէն մշմարիտ ըսած են»: Այս բոլորը աւելցուց անոն հաւատքը և անոնց անձնութիւնը դէպի Աստուած:

23. Հաւատացեալներու մէջ կան մարդիկ որ կը պահեն իրենց խոստումը առ Աստուած. ոմանք ալ կազ որ կատարած են, ուրիշներ ալ ալ կան որ իրապառեն. առաջ փոփոխութիւն ընելու:

24. Աստուած պիտի վարձատրէ ուղիղ մարդիկ իրենց ուղղութեանը համար. նա պիտի պատժէ կեղծաւորները եթէ ուղէ, կամ անոնց պիտի ներէ, վասն զի Աստուած հակամէտ է ներելու և զթալու:

25. Աստուած մերժեց անհաւատները իրենց բարկութեամբ: Անոնք ընաւ չօգտուեցոյն այս պարբերակէն. հաւատացեալներուն Աստուած բաւական է կըուսոյ ատեն. վասնզի Աստուած ուժեղ և զօրաւոր է:

26. Նա զուրս հանեց իրեն բերդերէն զիրք ունե-

ցողներէն որոնք որ օգնուր էին դաշնակիցներուն. անոնց սրանքուն մէջ երկիւղ և յուսահատութիւն ձգեց. անոնցմէ մաս մը դուք սպաննեցիք և մաս մըն ալ գիրք առիք:

27. Աստուած ձեզ ժառանգորդներ ըրաւ անոնց երկրին, անոնց տուներուն և հարստութիւններուն. այն երկրին դուք ոտք չէիք դրած մինչեւ այն ատեն: Աստուած ամենակարող է:

28. Ո՛վ մարգարէ, բռէ քու կիներուդ, «եթէ դուք այս աշխարհի կեանքը կուզէք իր պերճութեամբը, և կէք ձեզի լաւ բաժին մը, ասմ եւ պարկեշտօրէն արձակեմ» (\*):

29. Իսկ, եթէ դուք Աստուած եւ իր մարգարէն կուզէք եւ հանգերձեալ կեանքը, Աստուած պատրաստած է փոռաւոր վարձատրութիւններ անոնց որոնք առաքինի են:

30. Ո՛վ մարգարէի կիներ, ձեզմէ մէկը որ չնայ, ու հաստատուի, Աստուած անոր պատիժը պիտի կրկնապատկէ ասիկա դիւրին է Աստուծոյ:

31. Իսկ ձեզմէ ով որ հաւատայ Աստուծոյ և անոր մարգարէին ու բարիք գործէ, մենք զանի կրկնապատիկ կը վարձատրենք. եւ անոր ընտիր բաժին մը պատրաստած ենք:

32. Ո՛վ մարգարէի կիներ, դուք ուրիշ կիներու պէս չէք. եթէ երկիւղած էք, ձեր խօսքերուն մէջ շատ հաճոյակտասար մի երևաք, որպէսզի սրտի տկարութիւն ունեցող մարդը մեղապարտ ցանկութիւն չկազմէ ձեր վրայ: Միշտ պարկեշտ լեզու գործածեցէք:

(\*) Մոհամմէդ այս պարբերակէն արդարեւեց իր կիներուն պահանջարկները ստիճանաբար նպաստեալ:

33. Հանդարտ նստեցէք ձեր տուներուն մէջ, արգիտութեան անցեալ ժամանակներուն նման մի պրծնութիւն պատուով ժամերուն ուշագիր եղէք. ոչոր տութիւն տուէք. Աստուծոյ եւ անոր մարգարէին հնազանդեցէք: Աստուած կուզի ազատութիւնը հեռացընել եւ ձեզ ապահովել պատարեալ մարքութեամբ:

34. Չեր տուներուն մէջ կարգացու Քուրանի պատգամները ձեր մտքին մէջ վերջիցեցէք, նոյնպէս ալ իմաստութեան խորհրդերը: Աստուծոյ Աստուած բարի է եւ ահեհի սեղեակ:

35. Ինքզինքնին բոլորովին Աստուծոյ յանձնող (միւսլիմ) այլը ու կիները, երկու սեռէ հաւատացեալները, երկու սեռէ բարեպաշտները՝ արշարները, երկու սեռէ համբարատարները, խոնարհները, սղորմութիւն տուող այրերը ու կիները երկուսն ծոնապանները, պարկեշտները՝ միշտ Աստուած ինչող այրերը ու կիները, բոլորը Աստուծոյ թողութիւն պիտի ըստանան եւ մեծ վարձատրութիւն:

36. Երկու սեռէ հաւատացեալները իրաւունք չունին Աստուծոյ եւ իր մարգարէին որոշածէն տարրեր ընտրութիւն ընելու: Ով որ անհնազանդ կը գտնուի Աստուծոյ եւ իր մարգարէին յայտնի մոլորեալ մըն է:

37. Ով Մահմէտ, դու ըսիր օր մը այն մարդուն որուն նկատմամբ Աստուած բարութեամբ լի է եւ որ անոր բարիքներովը յզփացած է, «պահէ՛ քու կիներ եւ վաճիր Աստուծոյ», եւ դու կը ծածկէիր քու սրտիդ մէջ ինչ որ Աստուած չուտով կը յայտնէր: Դու մարգարդէ վախցար, թէ եւ աւելի շիտակը Աստուծոյ վախնալու էիր: Բայց երբ Ձէյտ իր կնոջ վր ճարեց ու զանի թողուց, մենք քեզ հետ ախուսացուցինք զանի, որպէսզի հաւատացեալներուն համար յանցանք չըլլայ ամուսնանալ իրենց որդեգիրներու ձգած կիներուն հետ:

38. Գանդանք չի մարգարէին ընդունել ինչ որ Աստուած անոր տուած է. Աստուած սոլոր էր այնպէս ընել քեզմէ առաջ ապրողներուն համար ալ. (Աստուծոյ հրամանները կանխաւ որոշուած են)

39. Անոնց համար որոնք Աստուծոյ իրենց յանձնած պաշտօնը կը կատարէին եւ որոնք կը վախնային Աստուծոյ, եւ միմիայն անկէ կը վախնային Աստուած կը բառէ բոլորին համար:

40. Մահմէտ ձեր մէջէն ոչ մէկ մարդու հայրն է: Եւ Աստուծոյ մարգարէն է եւ մարգարէն ըլլալը: Աստուած գիտէ ամէնը:

41. Ով հաւատացեալներ, կրկնեցէք յաճախ Աստուծոյ անունը եւ փառարանեցէք զանի առաւօտ եւ իրիկուն:

42. Եւ բարեհաճութիւն ունի ձեզ համար. իր հրաշտակները կը բարեխօսեն ձեզ համար, որպէսզի խաւարէն յոյսը ելլէք. Եւ ոչորմամբ է հանդէպ ճշմարիտ հաւատացեալներուն:

43. Այն օրը յորում անոր առջեւ պիտի ներշնչանան, «աբառով բարեւ պիտի ընդունին» «խաղաղութիւն» (Սէլամ): Ի մէջ այլոց նա անոնց պատրաստած է մեծ վարձատրութիւն մը:

44. Ով մարգարէ, քեզ զրկեցինք վկայ ըլլալու աւետիս տալու եւ զեկուցանելու համար:

45. Մարգարէի Աստուծոյ հրահրէ. դու լուսաւորող ճրագ մըն ես:

46. Աւետէ՛ հաւատացեալները թէ մեծ շնորհք կայ անոնց համար Աստուծոյ քով:

47. Մի լսիր ոչ անհաւատները եւ ոչ կեղծաւորները: Սակայն անոնց շարիք մի բներ: Վստահութիւնը Աստուծոյ վրայ դի՛ր: Աստուած իրը պաշտպան բառ է քեզ:

48. Ով հաւատացեալներ, հաւատացեալ կնոջ մը

հետ ամուսնանալէ յետոյ ստանց անոր մերձենալու եթէ զանի արձակէք, մի արգիլէք զանի մինչև կանխորոյ ժամանակը. այլ առէք անոր օրէնքին սահմանած ինչը եւ արձակեցէք պարկեշտութեամբ:

49. Ո՛վ մարգարէ, քեզ ներհալ է ամուսնանալ այն կանանց հետ որոնց օմիտը կուտաս եւ այն զերուհիներուն հետ զորս Աստուած քու ձեռքդ ձգած է. նաեւ քու հօրեղբոր այջիկներուն հետ եւ հօրաքոյրերուդ այջիկներուն հետ, եւ քու քեռիիդ ու մօրաքրոյիդ այջիկներուն հետ, եւ անոնց հետ որոնք քեզ հետ կը փախչին եւ այն ամէն հաւատացեալ կրնոջ հետ որ իր անձը մարգարէին կը յանձնէ. եթէ մարգարէն ուզէ անոր հետ ամուսնանալ: Այս ամուսնանալնորում մըն է զոր քեզ կուտանք ուրիշ հաւատացեալներուն վրայ:

50. Մենք գեանք ինչ որ ձեզ օրէնք դրած ենք ձեր կանանց եւ ձեր զերուհիներուն մասին, որ քեզ համար մեզք չհամարուի: Աստուած ներող եւ ողորմած է:

51. Դու կնիկներէն ուզածդ կը հեռագնես եւ ուզածդ անկողինդ կառնես, նաեւ արձակածդ եթէ ուզես կրկին կառնես այս քեզի համար յանցանք չէ: Անոնք այսպէսով ուրախացնելը զիւրին է, որ բնաւ չարամին եւ դո՛ս մնան բոլորը քու իրենց տուածովդ: Աժտուած գիտէ ձեր սրտերու մէջ եղածը. նա գիտուն եւ մարգասէր է:

52. Ասկէ յետոյ այլեւս կիներ անհելու իրաւունք չունիս (\*). եւ ոչ ալ զանոնք փոխելու ուրիշներու հետ, նոյնիսկ եթէ ասոնց զեղեցկութիւնը քեզ հրապարէ, բացի զերուհիներէն զորս կրնաս ստանալ: Եւ Աստուած հսկող է բոլորին:

(\*) Այդ մէջոցին Մոհամէդ արդէն օրէնաւոր էր կնիկներ Բացի աղախներէն ու քերթներէն որոնք եւ իրենք արամարտած էին ըստ ամենայնի:

53. Ո՛վ հաւատացեալք, մարգարէին տուները մի ամենէք ստանց արտօնութեան, բացի այն պարագայէն որ ճաշել թոյլագրուիք իրէն հետ եւ ստանց ձեր սպասելուն: Բայց երբ հրախրուիք, մտէք հոն, եւ ճաշելուդ պէս մեկնեցէք եւ խօսակցութիւններով մի զբազիք ընտաներար. որովհետեւ ասկէ անիկա կը նեղուի, մարգարէն կամչնալ այդ յեւ ըսելով. բայց Աստուած չամչնար ճշմարտութենէն: Եթէ դուք բան մը խնդրել ուզէք իր կիներէն, վարադոյրի մը ետեւէն խնդրեցէք. այսպէս ձեր սրտերը եւ անոնցինը մաքուր պիտի մնան: Զգուշացէք Աստուծոյ մարգարէին նեղութիւն տալէ: Մի ամուսնանաք անոր կիներուն հետ, վասնզի այդ յաչս Աստուծոյ ծանր է:

54. Դուք բան մը յայտնէք կամ ծածկէք, Աստուած գիտէ բոլորը:

55. Ձեր կիները կրնան բացուիլ իրենց հայրերի, իրենց գաւակներուն, իրենց եղբայրներուն, իրենց եղբոր որդիներուն. իրենց քեռորդիներուն եւ իրենց աղախներուն առջև: Վայցէք Տիրոջմէ. նա վկայ է ձեզ բոլոր գործերուն:

56. Աստուած եւ հրեշտակները կը պատուեն մարգարէն: Ո՛վ հաւատացեալներ, անոր անուան ուղղեցէք ձեր աղօթքի խօսքերը, եւ անունը արտասանեցէք «խաղաղութիւն» բառով:

57. Որոնք որ զԱստուած եւ իր մարգարէն դառնացնեն, պիտի անիծեալ ըլլան այս եւ միւս աշխարհի մէջ եւ նախատալի պատժոյ ենթակայ:

58. Որոնք որ չարիք կընեն հաւատացեալ մարդոց կամ կիներու ստանց յանցանքի, անոնք խաբէութիւն եւ մեծ մեղք կը գործեն:

59. Ո՛վ մարգարէ, պատուիրէ քու կիներուդ, աղջիկներուդ, եւ հաւատացեալներու կիներուն որ ի-

քենց ծածկոցները մինչև վար ձգեն. այսպէս թէ՛ գլխաւորութիւն չեն կրեր և թէ՛ անճանաչելի չեն ըլլար: Աստուած ներող և ողորմած է:

60. Եթէ կեղծաւորները, սրտով հիւանդ եղողները և Մէտինէի խռովարարները չը գաղթեցնեն իրենց չարիքները, մենք քեզ պիտի գրգռենք տնոնց դէմ՝ զանոնք պատժելու համար. և մենք շատ քիչ ժամանակ կը թողունք որ անոնք ձեր քով բնակին:

61. Անոնք անիծեալ են ուր որ ալ ըլլան, և պիտի բռնուին ու սպանուին սոսկալի հատորածով մը:

62. Այսպէս եղած է Աստուծոյ վերաբերումը հանգէպ նախկին մարդոց: Դու չես կրնար ո՛ր և է փոփոխութիւն գտնել Աստուծոյ վարմունքին մէջ:

63. Անոնք քեզ պիտի նարցենն թէ ժամը ե՛րբ պիտի գայ: Պատասխանէ՛, «Ժամուն գիտութիւնը Աստուծոյ մօտ է», և նա կրնայ քեզ ըսել թէ՛ ժամ մ'մօտիկ չէ:

64. Նա անիծած է անհաւատները և կրակ սպառնացած է անոնց:

65. Անոնք հոն պիտի բնակին յաւիտեան առանց պաշտպանի և առանց օգնակի:

66. Այն օրը երբ անոնք հայեացքնին բոցերուն զուղղեն, պիտի ազաղակեն, «Երանի թէ Աստուծոյ և մարգարէին հնազանդած ըլլայինք»:

67. Եւ պիտի ըսեն «Տէ՛ր. մենք մեր իշխաններուն ու մեծերուն հետեւեցանք, և անոնք մեզ մոլորեցուցին ուղիղ ճամբէն»:

68. Ո՛վ Տէր. անոնց կրկնապատիկ պատիժ տուր, և սե՛ծ անէ՛ծ քով անի՛ծէ զանոնք»:

69. Ո՛վ հաւատացեալներ. մի նմանիք Մովսէսը՝ գառնացողներուն, Աստուած զանի հանեց անոնց զպարտութիւններէն, և նա ընդունելի էր Աստուծոյ առջև:

70. Ո՛վ հաւատացեալներ, վախճէք Աստուծմէ՛-

ճշմարտութեամբ խօսեցէ՛ք՝:

71. Որ Աստուած բարին դարձնէ ձեր գործերը, և ջնջէ ձեր մեղքերը. և ով որ հնազանդի Աստուծոց և իր մարգարէին մեծ երջանկութիւն պիտի վայելէ:

72. Մենք առաջարկեցինք երկինքին, երկրի և լեռներուն որ հաւատաքր կրեն. անոնք մերժեցին ա՛նով բեռնաւորուիլ, վախցան զայն ընդունելու. բայց մարդը յանձն առաւ. որովհետեւ անիրաւ և տգէտ էր:

73. Աստուած պիտի պատժէ երկու սեռէ՛ կեղծաւորները և կռապաշտները. սակայն պիտի ներէ հաւատացեալ այրերուն ու կիներուն: Նա ներող և ողորմած է:



ԼԳ. Գ Լ Ո Ի Խ

(ՍՈՒՆԷԹ ԻԻՍ - ՍՍ.ՊԱ.)

Մէքէական, յիսուն չորս պատգամ

Յանուն Աստուծոյ գթածի ողորմածի

1. Փառք Աստուծոյ, որուն կը պատկանի երկնից մէջ և երկրի վրայ եղածը, նաև միւս աշխարհի փառքը անորն է. նա իմաստուն ու տեղեակ է:

2. Նա գիտէ ինչ որ երկրի մէջ կը մտնէ ու կելլէ ինչ որ երկէնքէն կ'իջնէ կ'ելլէ. եւ է Ողորմածը և Ներողը:

3. Անհաւատները կ'ըսեն, «Վերջին ժամը մեզ չգար»: Պատասխանէ՛, «Ճշմարտ, պիտի գայ, կը երդնու՛մ Տիրոջ վրայ, որ գիտէ գազանիքները. ա՛նոր գիտութենէն չվրիպիր նոյն իսկ մըջունի մը ծանրութիւնը: Երկնից մէջ և երկրի վրայ չկայ բան

մը որ մըջիւնէ մը ծանր կամ թեթեւ ըլլայ ու յայտնի գիրքին մէջ չգտնուի»,

4. Որպէսզի նա վարձատրէ զանոնք որ կը հաւատան և բարիք կրննն: Անոնց ներում և ընտիր ապարուստ կայ:

5. Որոնք որ կաշխատին մեր նշանները տկարացնելու, պիտի ընդունի՝ յառն տանջանքի պատիժը:

6. Գիտութիւնը բնութենոցները լաւ կը տեսնեն որքա՛ն Տիրոջմէջ բարձրէն զրկուած գիրքը ճշմարտութիւնն է, որ կ'առաջնորդէ Հզօրին և Փառաւորեալին ճամբուն մէջ:

7. Անհաւատները կրանն, «կուզէ՞ք որ մենք ձեզիցոյց տանք մարդ մը որ ձեզ կանխաւ բռէ, թէ դուք հող ու փոշի ըլլայէ յետոյ նոր կազմ պիտի ստանաք»:

8. Այ՛ո՛ւ անիկա Աստուծոյ դէմ սուտ մը հնարած է կամ անիկա դէսեր ունի: Ըսէ, «Որոնք որ չեն հաւատար ապագայ կեանքին, պատժոյ և անվերջ մոնորութեան մէջ պիտի ըլլան»:

9. Չեն տեսներ ինչ որ կայ իրենց առջևը և ետեւը, երկինքը ու երկիրը: Եթէ ուղէինք կրնայինք երկիրը ճեղքելով զանոնք տակը անցնել, կամ անոնց գլխուն ձգել տալ երկինքին մէկ կտոր: Ասոր մէջ նշան մը կայ Աստուծոյ դառնալ կրցող ամէն ծառայի համար:

10. Մենք Դատիթիւն տուինք մեր կողմէ պարզերու ըսինք, «ով յեռներ ու թռչուններ, անոր հետ փոփոխակի երգեցէք իր երգերը: Մենք անոր համար կահուցուցինք երկաթը, և ըսինք «զրահներ շինէ՛՛ օղակներով և օլակներու չափին ուշադիր եզիր: Բարիք գործէ՛, վստանի կը տեսնեմ քու գործերդ»:

11. Սողոմոնին հպատակեցուցինք չովը, որ ամբամբ առաւօտուն կը փչէ և ամբամբ իրիկունը: Անոր համար պղինձ, ազօր մը հոսեցուցինք: Դեերը

կաշխատէին իր աչքին առջև Տիրոջը հրամանով: և որը որ մեր հրամանէն շեղէր, կի զիչկրակի պատիժին կ'ենթարկուէր:

12. Անոնք անոր ուզած բոլոր բաները կը յինէին. պալատներ, արձաններ, լիճի չափ լայն կոնքեր և հաստատուն կաթսաներ: Ո՛վ Դատիթիւն ընտանիք, երախտագիտութիւն յայտնեցէք մեզ: Որչա՛փ քիչ է իմ ծառաներուս մէջ երախտագէտը:

13. Եւ երբ վճռեցինք անոր մ'անը, երկրին մէկ որդն էր միայն որ ցոյց տուաւ զայն բոյորին. ան կրճած էր անոր գաւազանը, որուն կոթնա՞ք էր դէտէք Սողոմոնէ և երբ այս ինկու, զեքը յայտարարեցին, թէ եթէ զաղտնիքը գիտցած ըլլային, իրենք այնչափ երկար առնն չպիտի մնային այս նախատալի տանջանքին մէջ:

14. Սապայի բնակիչները իրենց բնակած երկրին մէջ ունէին նշան մը. այսինքն երկու պարտէզ, աջ և ձախ կողմը: Ըսենք անոնց, «կերէք ձեր Տիրոջը ձեզ տուած սնունդէն և չնորձակալութիւն յայտնեցէք անոր: Դուք գեղեցիկ երկիր մ'ունիք և ողորմած Տէր մը»:

15. Բայց անոնք երես դարձուցին: Մենք այ՛ տանոնց դէմ զրկեցինք թուճրերու հեղեղը, և փոխեցինք անոնց երկու պարտէզները ուրիշ երկու պարտէզի, որոնք կարտագրէին լեզի պտուղներ, հնդկար տմաններ, և փոքրիկ յուտուսներ:

16. Այսպէս հատուցում ըրինք անոնց անհաւատութեանը, բացի ապերախտներէն՝ միթէ մենք այսպէ՛ս կը հատուցանենք:

17. Մենք այ՛ հաստատեցինք անոնց և այն քաղաքներուն միջև՝ զորս օրհնած էինք. ծաղկեալ աւաններ, և այս երկրին մէջ ճամբայ մը հաստատեցինք ու ըսինք. «ճամբորդեցէք հոն ապահով կերպով գիշեր ու ցերեկ»:

18. Բայց անոնք ըսին, «Ո՛վ Տէո, մեր ճամբա-  
ները իրարմէ հեռացուր»: Անոնք մեզանչեցին իրենց  
անձին զէմ. և մենք զանոնք առակ ըրինք ազգե-  
րու, և ցրուեցինք ամէն կողմ: Ասոր մէջ նշան կայ  
ամէն տառապիլ գիտցող և Երախտագէտ մարդու  
ճա՛հար:

19. Եւ ստանան անոնց մասին իր կարծիքը հաս-  
տատեց, բոլորը անոր հետեւեցան. բացի մաս մը հա-  
ւատացեալներէ:

20. Սակայն անոնց վրայ նա ոչ մէկ իշխանութիւն  
չունէր. միայն մենք կուգէինք գիտնալ թէ անոնցմէ  
որն է որ պիտի հաւատայ ապագայ կեանքին և «ըս-  
տիտի կասկածի այդ մասին»: Քու Տէրդ կը հսկէ ա.  
մէն բանի վրայ:

21. Ըսէ անոնց, «կանչեցէք ձեր հաւատացածները  
Աստուծո՛վ զառաջ: Անոնք նոյնիսկ մըջուրի մը ծան-  
րութեամբ բան մը չեն կրնար ընել ոչ երկնայց մէջ և  
ոչ երկրի վրայ: Անոնք ոչ մէկ մաս չունին այդ եր-  
կուքի սակզծումին մէջ. և Աստուած իրեն սգնու-  
թեան չէ առած բնաւ զանոնք:

22. Ոչոքի բարեխօսութիւնը բանի մը կը ծառայէ  
բացի անորինէն որ Աստուծո՛վ արտօնուած ըլլայ: Պի-  
տի սպասեն մինչև որ անոնց սրտերէն վախը անցնի  
և այն ատեն պիտի ըսեն, «Աստուած ի՛նչ ըսաւ»: Անոնց  
պիտի պատասխանուի, «Ճշմարտութիւնը: Եւ նա է  
Բարձրագոյնը ու Մեծը:

23. Ըսէ անոնց, «Ո՛վ կը զրկէ ձեզ սնունդը եր-  
եքիինքէն ու երկրէն»: Ըսէ, Աստուած»: Արդ ե՛ս  
թէ դուք, ո՞րերնիս ենք ու զիդ ճամբուն վրայ կամ  
մոլորութեան մէջ:

24. Չեղ չպիտի հարցուի մեր յանցանքներուն հա-  
մար, ոչ ալ մեզ ձեր յանցանքներուն համար:

25. Ըսէ, «մեր Տէրը պիտի հաւարէ մեզ բոլորս և»

մեր միջև դատաստան պիտի ընէ ճշմարտութեամբ:  
Նա է Բարձրագոյն և Իմաստուն դատաւորը:

26. Ըսէ, «ցոյց տուէք ինձ զանոնք, զորս իբրև  
ընկեր կաւելցնէք անոր: Նա բնաւ ընչէր չունի: Նա  
է Հղօրը և Իմաստունը:

27. Մենք քեզ զրկեցինք բոլոր մարդոց առանց  
բացառութեան, իբրև աւետող ու սպառնացող մի-  
անգամայն. բայց մարդոց շատերը չեն գիտեր:

28. Անոնք կըսեն, «Այս խոստումը ե՞րբ պիտի  
կատարուի. ըսէք եթէ անկեղծ էք»:

29. Ըսէ՛ անոնց, «ձեզ որոշուած է այն օրը, զոր  
չպիտի կրնոք ոչ յապաղեցնել և ոչ փութացնել վայր-  
կեան մը»:

30. Անհաւատները կըսեն, «մենք չենք հաւատար  
ոչ այս Գուրանին. ոչ ալ անկէ առաջ զրկուած գիր-  
քերուն»: Եթէ տեսնէիր շարերը երբ պիտի բերուին  
իրենց Տիրոջ առջև և և զիրար պիտի մեղադրեն.  
աշխարհի տկարները պիտի ըսեն զօրաւորներուն,  
«եթէ դուք չըլլայիք, մենք հաւատացեալ կ'ըլ-  
լայինք»:

31. Եւ զօրաւորները պիտի պատասխանեն տկար-  
ներուն, Միթէ մե՛նք արգիլեցինք ձեզ ուղիղ ճամ-  
բէն որ տրուած էր, ատոր մէջ դուք էք յանցաւոր»:

32. Եւ տկարները պիտի պատասխանեն զօրաւոր-  
ներուն, «Ոչ. ձեր նենգութիւններն էին, որով դուք  
ամէն օր ու գիշեր մեզ կը հրամայէիք չհաւատալ  
Աստուծոյ և անոր ընկերներ տալ»: Ամէնը պիտի  
ծածկեն իրենց զղջումը տեսնելով պատիժները:  
Մենք չղթանք պիտի դնենք անհաւատներու պա-  
բանոցը: Միթէ կարելի՞ է որ անոնք իրենց ընթաց-  
քէն տարբեր հատուցում ստանան:

33. Մենք ոչ մէկ մարգարէ չենք զրկած քաղաք  
մը, որուն մեծատունները ըսած չըլլան. «մենք չենք

հաւատար անոր պաշտօնին»:

34. Անոնք կրտէին, «մենք ինչքով ու գաւակնե-  
րով աւելի հարուստ ենք, քան թէ մենք չենք տան-  
ջուիր»:

35. Ըսէ՛ անոնց, «յիմ Տէրս կուտայ իր պարգեւ-  
ները որու որ ուզէ առատաձեռնութեամբ կամ չա-  
փաւոր. բայց մրադոց շատերը չեն գիտեր»:

36. «Ձեր ինչքերը և ձեր գաւակները չեն որ ձեզ  
աւելի պիտի մօտեցնեն մեզի, այլ միայն անոնք որք  
կը հաւատան և բարիք կը գործեն. ասոնք իրենց  
գործերուն փոխարէն կրկին վարձք կ'ստանան. և  
ասոնք զբախտի վերնայարկերուն մէջ ապօճով պի-  
տի հանգչին»:

37. Իսկ անոնք որ ոչնչայնչ կը ջանան մեր նը-  
շանները, տանջանքի պիտի ենթարկուին»:

38. Ըսէ՛, «Իմ Տէրս իր ծառաներէն ուղածին  
կուտայ իր պարգևները իրարուան կամ չափաւոր:  
Այն բոլոր սղորմութիւնները զորս դուք պիտի տաք  
նա ձեզ պիտի վերադարձնէ: Նա ամենալաւ պարգե-  
ւաբաշխն է»:

39. Այն օրը նա ձեր բոլորը պիտի ժողվուէ. ու  
պիտի հարցնէ հրեշտակներուն, «ասոնք էին ձեզ պոչ-  
տողները»:

40. Եւ հրեշտակները պիտի պատասխանեն, «Փա՛ռք  
քեզ. դու ես մեր պաշտպանը և ոչ թէ անոնք»:  
Անոնք աւելի դեերուն կը ծառայէին և անոնցմէ  
շատը անոնց կը հաւատար»:

41. Այն օրը ձեզմէ մէկը չպիտի կրնայ օգնել միւ-  
սին, ոչ ալ փրատել: Մենք պիտի բսնք անհաւատ-  
ներուն: «Ճաշակեցէք կրակին պատիժը, զոր դուք  
սուտ համարած էիք»:

42. Երբ մեր յայտնի նշանները անոնց կը կար-  
դացուին, կրսեն անոնք, «այս ժարզը կուզէ միայն

ձեզ դարձնել մեր հայրերուն պաշտած աստուածնե-  
րէն»:  
անոնք պիտի բսնն նաև Գուրա՛րը նորահար-  
ստութիւն մըն է»:  
Երբ ճշմարտութիւնը կ'երևայ ա-  
նոնց, անհաւատները կ'ըսեն, «այս մոգական խաղ  
մըն է»:

43. Քեզմէ առաջ մենք անոնց ս'էէ զիրք չէինք  
ստած, ոչ ալ մարգարէ մը զրկած»:

44. Անոնցմէ առաջ եղողները մեր մարգարէները  
ստախօս կը համարէին: Թէև ասոնք մէկ ասանե-  
րորդը ստացան մեր ուրիշներու տուածներէն, բայց  
նորնպէս սուտ համարեցին մեր մարգարէները:  
Ի՛նչ սոսկալի եղաւ իմ պատիժս»:

45. Ըսէ՛ անոնց, «Ես ձեզ միայն սա կը խրա-  
տեմ. որ Աստուծոյ առջեւ ներկայանաք երկուքա-  
կան կամ մէկ մէկ, և յետոյ խորհիք թէ ձեր հայ  
րենակցին մէջ զե չկայ և ոչ ուրիշ բան, այլ նա  
մարգարէ մըն է ձեզ զեկուցանելու համար մերձե-  
ցումը սոսկալի պատժին»:

46. Ըսէ՛ անոնց, «Ես ձեզմէ վարձք չեմ ուզեր,  
այն ձեզի թող մնայ. իմ վարձքս միայն Աստուծոյ  
գրայ է: Նա վկայ է ամէն բանի»:

47. Ըսէ՛, «Աստուած միմիայն ճշմարտութիւն կը  
զրկէ իր մարգարէներուն: Նա լաւ զիտէ զազանի  
բաները»:

48. Ըսէ՛, «Ճշմարտութիւնը եկած է. ստութիւնը  
չպիտի երևայ և ալևս չպիտի վերադառնայ»:

49. Ըսէ՛, «Եթէ ես մօլորութեան մէջ եմ այն ի-  
փրատ իմ անձիս է. եթէ ես ուղիղ ճամբուն մէջն  
եմ, այդ իմ Տիրոջ ինձ յայտնածին հետեանքն է:  
Նա կը լսէ ամէնը և մօտ է ամենին»:


50. Ահ, եթէ տեսնէիր թէ ինչպէս անոնք պիտի  
սարսուան առանց ասպատանի մնացած, և ինչպէս  
անոնք պիտի բռնուին ժօտէն յարձակում կրելով»:

51. Անոնք պիտի բռնեն, «եր հաւատաւնք անոր» . բայց ինչպէս անոնք պիտի հասնին այ՞ հասարակին, երբ այնչափ հեռացած են իրենց անդեակով :

52. Անոնք արդէն առաջուց չէին հաւատար, և կը ծագրէին գաղանիքները որբարբէն որբորբէն կամ հանրերջեւէլ կեանքին, զորս հասկնալէ խիստ հեռու էին :

53. Մէկ անձուն անջրպէտ մը պիտի դրուի անոնց և իրենց ուղածին միջև :

54. Առաջ ալ այսպէս եղաւ, անոնց նմաններուն որոնք կասկածի մէջ էին, ամէնէն տարակուսելով :



ԼԵ. Գ Լ ՈՒ Խ

(ՍՈՒՐԵԹ ԻԻԼ-ՄԷԼԱՅԻՔԷ)

ՄԷՖԲԷԱԿԱՆ, ԲԱՌԱՍՈՒՆ ԻՐԵՂ ԱՅՏԳԱՄ

Յանուն Աստուծոյ գթածի եւ ողորմածի

1. Փա՛ռք Աստուծոյ, երկնից և երկրի ստեղծողին որ երկուքական, երեքական և չորսական յոյ՛՛թ թեւերով հրեշտակները պատգամաւոր կը գործածէ : Իր արարածները ուղածին չափ կաւելցնէ՛ նա ամենա-կարող է :

2. Աստուած ինչ որ մարդոց կը շնորհէ, ոչինչ չը-հրնար զայն արգիլել, և ինչ որ Աստուած կրխնայէ ոչոք չկրնար անկէ յետոյ զրկել տալ : Նա է Հղօրը և Իմաստունը :

3. Ո՛վ մարդիկ, յիշեցէք Աստուծոյ ձեզ ըրած չը-նորհները, միթէ կա՞յ ուրիշ արարիչ մըն ալ բացի Աստուծմէ որ ձեզ կը սնուցանէ երկնի և երկրի պարզեաներով : Անկէ զառ ուրիշ Աստուած չկայ :

Աւերմն ինչու համար անկէ երես կը դարձուէք :

4. Եթէ քեզ ստախոս կը համարեն, ո՛վ Մահաւէր, քեզմէ առաջ եկած մարգարէներն ալ ստախոս հա-մարուած են. բայց ամէն ինչ Աստուծոյ պիտի վե-րագառնան :

5. Ո՛վ մարդիկ, Աստուծոյ խոստումները ճշմա-րիտ են, այս աշխարհի կեանքը ձեզ թող չ'սարէ . ունայնութիւնը ձեզ թող չ'կուրացնէ Աստուծոյ նը-կատմամբ :

6. Մատանան ձեր թշնամին է, զայն ձեզ' թշնա-մի նկատեցէք Անիկա իր հետեւողները կը կանչէ որ յետոյ կրակին մէջ նետուին :

7. Որոնք որ չեն հաւատար սոսկալի տանջանք պիտի կրեն :

8. Որոնք որ կը հաւատան եւ բարիք կը գոր-ծեն, թողութիւն պիտի ստանան իրենց յանցանքնե-րուն եւ փառաւոր վարձատրութիւն :

9. Այն մարդը որուն գէշ գործեր պատրաստուած են եւ որ զայնս լաւ կը կարծէ, արդ՞՞ր կը նկա-տուի : Աստուած իր ուղածը կը մոլորեցնէ եւ իր ու-ղածը կառաջնորդէ : Ո՛վ Մահաւէր, սիրադ թող չը-խորատուզի տրամութեան մէջ՝ անոնց նկատմամբ, Աստուած գիտէ անոնց գործերը :

10. Աստուածէ որ կը զրկէ հովերը որոնք կը վանեն ամպերը : Երբ որ առջևէն ամպերը կը մղենք դէպի Երաշխաւէնէն մեռեալ երկիր մը, անով կը վերակեն-դանացնենք մեռած երկիրը : Յարութիւնն ալ այսպէս պիտի ըլլայ :

11. Եթէ մէկը փառք կուզէ, փառքը բոլորովին Աս-տուծոյ կը պատկանի, դէպի նա կը բարձրանան բո-լոր լաւ խօսքերը և բոլոր լաւ գործերը, և նա զա-նոնք ալ աւելի կը բարձրացնէ : Որոնք որ չարու-

թիւն կը նիւթեն ծանր պատիժ պիտի կրեն: Անոնք նենգութիւնները պիտի ոչնչանան:

12. Աստուած ձեզ ստեղծած է հողէ, յետոյ կաթիլ մը սերմէ. յետոյ ձեզ բաժնած է երկու սեռի. կիրք չյղանար ու չծնիր առանց անոր գիտութեանը: Բան մը չէ աւելցած շատ ապուրջ ապրարածի մը տարիքին և ոչ ալ պակասած է բան մը անկէ. առանց գիրքին մէջ գրուած ըլլալու: Այս գիւրջին է Աստուծոյ համար:

13. Երկու ծովեր իրարու չեն նմանիր. մէկը թարմ և քաղցր ջուր է բոլորիս. յարմար, միւսը դառն և ազի ջուր է: Եւ դուք երկուքին ալ թարմ միտով կը սնանիք և անոնցմէ կը հանէք ձեր կրած զարդերը: Կր տեսնէք որ նաւերը կը ճեղքեն ալիքները՝ Աստուծոյ շնորհիւ հարստութիւններ ստանալու համար: Թերևս անոր շնորհակալութիւն լատնէք:

14. Նա գիշերը ցորեկին մէջ կը մտցնէ և ցորեկը գիշերին մէջ: Արևը և լուսինը հպատակեցուցած է, որոնց ամէն մէկը իր շրջանը կրնէ միշտ և որոշ ժամանակ մը: Այսպէս է ձեր Տէրը. զօրութիւնը միայն անորն է: Անկէ զատ ձեր կանչածները արմատի կեղևի մը չափ անկարող են:

15. Եթէ զանոնք կանչէք, չպիտի լսեն, եթէ լռակէն բսկ ձեզ ձայն չէին կրնար տալ: Յարութեան օրը անոնք պիտի ուրանան ձեր կապակցութիւնը: Եւ ո՞վ կրնայ քեզ իմացնել, եթէ ոչ նա, որ տեղեակ է:

16. Ո՞վ մարդիկ, դուք Աստուծոյ կարօտ աղքատներ էք, և Աստուած հարուստ է և փառօք լի:

17. Եթէ նա ուզէ, կրնայ ձեզ ոչնչացնել և ուրիշ արարչագործութիւն մը ընել:

18. Այս դժուար չէ Աստուծոյ:

19. Իր սեփական բեռնով բեռնաօրում հոգի մը ուրիշի մը բեռը չկրեր, եւ եթէ ծանրաբեռնուած մը իր բեռին մէկ մասը թեթեւցնել խնդրէ, բան մը չը թեթեւցուիր, նոյն իսկ իր ազգականէն: Խրատէ՛ դու անոնք որ Աստուծմէ կը վախնան գաղտնարար է սրբէ, եւ ազօթքը կը կատարեն: Ո՞վ որ մաքրուի, յօգուտ իրեն մաքրուած կըլլայ. վասնզի բոլորը օր մը պիտի վերագանան Աստուծոյ:

20. Կոյրը եւ տեսնողը միեւնոյն բանը չեն, ոչ ալ լոյսը եւ խաւարը. նաեւ շուքին զովութիւնը եւ ջերմութիւնը մէկ չեն:

21. Կենդանիները եւ մեռեալները միեւնոյնը չեն, Աստուած կը լսեցնէ որուն որ ուզէ. իսկ դու, դու չես կրնար քեզ լսել առ զերեզմաններու մէջ: Դու միայն քարոզելու պաշտօն ունիս:

22. Մենք քեզ՝ զրկեցինք ճշմարիտ պաշտօնով մը, աւետելու եւ իրատելու: Չկայ մէկ ազգ մը որ մարգարէ մը ունեցած չըլլայ:

23. Եթէ քեզ ստող կը համարեն, անոնց նախնիքներն ալ օտոզներ համարած էին այն մարգարէները որոնք ներկայացան յայանի հրաշքներով, Սաղմոսներով եւ լուսատու գիրքով (Աւետարան):

24. Ես պատժեցի չաւատացողները. եւ ի՛նչ սուս կալի պատիժ:

25. Չե՞ս տեսներ որ Աստուած կ'իջեցնէ ջուրը երկինքէն: Այդ ջրով այնչափ այլազան պտուղներ հանած ենք երկրէն. լեռներուն մէջ խաւեր կան դոյնըզդոյն եւ ազաւներու նման սեւ, եւ մարդոց և անասնոց ու չորքոտանեաց մէջ զանազան տեսակներ կան: Անա այսպէս Աստուծոյ ծառաներուն մէջէն ամէնէն գիտունները կը վախնան անկէ: Նա հօրը եւ ներող է:

26. Որոնք որ Աստուծոյ գիրքը կը կարգան եւ ազօթքը կը կատարեն եւ ողորմութիւն կուտան մեր իրենց պարգեւուածէն յայտնի եւ գաղտնի, անոնք պէտք է շահու մը ակնկալութիւն ունենան, որ չըկորսուիր :

27. Աստուած պիտի հատուցանէ անոնց վարձքը եւ պիտի աւելցնէ խկ իր շնորհքէն վասնզի նա ներող է երախտագէտ է :

28. Ինչ որ յայտնած ենք քիչ Գիրքէն, ճշմարիտ է. այն կը հաստատէ անկէ առաջ գրուածները : Աստուած սեղեակ է իր ծառաներու ըրածներուն, եւ գիտէ բոլորը :

29. Մենք այս գիրքը տուինք իբր ժառանգութիւն մեր ծառաներէն անոնց զորս մենք ընտրած ենք. անոնց մէջ կան իրենց հոգուն զէմ անիրաւողներ, չափաւորութեան մէջ եղողներ, եւ այնպիսիներ ալ որոնք Աստուծոյ հրամանովը բարեգործութեամբ գերազանցած են բոլոր միւսները : Այս մեծ արժանիք մըն է :

30. Եղեմի պարտէզները պիտի մտնեն անոնք եւ հոն պիտի զարգարուին ոսկէ ապարանջաններով եւ մարգարիտներով, անոնց հագուստները հոն մետաքսէ պիտ'ըլլան :

31. Պիտի ըսեն, «Փառք Աստուծոյ, որ մեզմէ նեւաացուցածէ տխրութիւնը, մեր Տէրը ներող է եւ բոխտագէտ է» :

32. «Որ իր շնորհովը մեզ հիւրասիրած է յաւիտեանական բնակարանին մէջ, ուր բնաւ չպիտի յոգնինք եւ հոգ չպիտի ունենանք» :

33. Չնաւատացողներուն զեհներն կրակը կայ : Անոնց մահուան վճիռը այլեւս ետ չառնուիր, ոչ ալ կը մեղմանայ դժոխքի տանջանքը : Մենք այսպէս պիտի պատժենք ով որ չհաւատար :

34. Անոնք պիտի գոչեն «Ո՛վ Տէր մեզ յորս հանել տուր ասկէ, մենք առաքինութիւն պիտի ընենք ինչ որ առաջ չէինք ըրած» : — 2<sup>է</sup>՝ որ մենք բաւական երկար կեանք տուած ենք ձեզ որ մտածել ուզողը ժամանակ ունենայ մտածելու : Մարգարէ մը զրկուեցաւ ձեզ :

35. «Կրեցէ՛ք ուրեմն ձեր տանջանքը» : Բնաւ պաշտպան չկայ չարերուն համար :

36. Աստուած գիտէ երկնից եւ երկրի գազանիքները եւ սրտերու սէջ, եղածները :

37. Նա է որ ձեզ իր տեղակայները ըրած է երկրի վրայ, ով որ չհաւատար, պիտի կրէ իր անհաւատութեան բեռը. անհաւատութիւնը պիտի աւելցնէ միայն Աստուծոյ ատելութիւնը անհաւատներուն զէմ եւ անոնց աւերումը կատարեալ պիտի ընէ միայն :

38. Ըսէ՛ անոնց, «Ինչ կը կարծէք սա չաստուածներու մասին, որոնց դուք կազօթէիք Աստուծմէ զառաջ յոյց տուէք ինձ թէ երկրի ո՞ր մասը անոնք ստեղծեր են՝ անոնք ունի՞ն մաս մը երկնից ստեղծագործութեան մէջ : Անոնց ո՞ր է գիրք զրկ'ած ենք միթէ որ անոնց իբր յայտնի փաստ ծառայէ : Ո՛չ ամպարիշտները իբրբու ունայն խոստումներ միայն կընեն :

39. Աստուած կը պահպանէ երկինքը ու երկիրը փլչելէ. եթէ փլչէին, անկէ զատ ո՞վ պիտի կրնար նեցուկ ըլլայ անոնց : Նա հեզ է ներող է :

40. Անոնք երգում ըրին Աստուծոյ առջեւ հանդիտաւորապէս, թէ եթէ իրենց մէջ մարգարէ մը գար, անոնք ուղիղ ճամբուն պիտի հետեւէին աւելի քան ո՞ր է ժողովուրդ աշխարհի, բայց երբ մարգարէն երեւցաւ, անոր զպուստը աւելցուց անոնց հեռացումը :

41. Անոնց հպարտութիւնը այս երկրի վրայ եւ

անոնց անիրաւ նենդոնթիւնները միայն հնարողներու  
ն պիտէ վնասեն: Միթէ անոնք տարբեր բան-  
կանկալին քան ինչ որ պատահած է նախկին ժողո-  
վուրդներուն: Ոչ, դու չպիտի գտնես փոփոխութիւն  
Աստուծոյ ընթացքին մէջ:

42. Դու չեղում չպիտի գտնես Աստուծոյ ընթաց-  
քին մէջ:

43. Անոնք չեն ճամբորդեր այս երկրին մէջ, չեն  
տեսած թէ ինչպէս եղած իրենց նախորդներուն վի-  
ճակը, որոնք անոնցմէ աւելի գորաւոր էին: Երկին-  
կը եւ երկրի վրայ բան մը չէ կարող դանի ակարա-  
ցընել: Նա գիտուն եւ հօր է:

44. Եթէ Աստուած ուզէր մարդիկը պատեկ  
անոնց գործերուն, երկրի վրայ կենդանի մը խկ-  
չէր ձգեր, բայց նա ձեզ միջոց կուտայ մինչեւ որ ոչ-  
եալ ժամանակը

45. Երբ ժամանակը հասնի, Աստուած կը տեսնէ  
իր ծառաները:



ԼԶ. Գ Լ Ո Ւ Ի

(ՍՈՒՐԷ Ե. Ս.)

Մէֆֆէական, ուքուն հինգ պատգամ

Յանուն Աստուծոյ գթածի եւ ողորմածի

- 1. Ե. Ս. Կ երդնում իմաստուն Գուրանով,
- 2. Թէ դու մարգարէ մըն ես
- 3. Ուղիղ ճամբէն ընթացող,
- 4. Յայանութեամբը Հգորին եւ ողորմածին,
- 5. Որպէսզի խրատես ժողովուրդ մը որոնց հաց-

ըրբը չեն խրատուած, և որոնք անհոգ կապրին:

6. Մեր խօսքերը իրականացած են անոնց շատերու-  
մասին, և անոնք չպիտի հաւատան:

7. Մենք անոնց վիզին շղթաներ անցուցինք որ-  
ոնք անոնց գունչերը կը սեղմեն, չեն կրնար այլ-  
ևս վեր բռնել իրենց դուռները:

8. Անոնց ետևը և առջևը մէյ մէկ պատ քաշեցինք  
անոնց աչքերը քողով մը ծածկեցինք, և ոչինչ չեն  
տեսներ:

9 Անոնց համար միևնորին խրատես թէ ոչ, չըպի-  
տի հաւատան:

10. Դու միայն անոնց քարոզէ որոնք Գուրանին  
կը հետեին և կը վստահան Աստուծոյ ի խորոց սրտէ:  
Անոնց աւետէ մեզոյ թողութիւնը և փառաւոր վար-  
ճատութիւնը:

11. Մեռեալները կը կենդանացնենք և կ'արձա-  
նագրենք անոնց գործերը և հետեանքները: Ամէնը  
գրած ենք յայտնի հաշուեգրքին մէջ:

12. Պատմէ՛ անոնց իբր օրինակ բնակիչներու մա-  
սին այն քաղաքին ուր մարգարէները այցելեցին:

13. Նախ երկու զրկեցինք, և խաբեբայ նկատ-  
ուեցան, յետոյ երրորդ մը անոնց օգնական զրկե-  
ցինք, և ըսին երեքը միասին, «մենք ձեզի զրկե-  
ւած ենք»:

14.— Դուք ալ մեզի պէս մարդիկ էք, և Ողոր-  
մածը ձեզի բան մը չէ իջեցուցած: Դուք խաբեբա-  
ներ էք լոկ, ըսին:

15.— Մեր Տէրը, պատասխանեցին անոնք, չա-  
ղիտէ թէ մենք ձեզի զրկուած ենք,

16.— Մենք պաշտօն ունինք միայն քարոզելու  
ձեզ յայտնօրէն:

17.— Ձեր մասին հաւանմանութեամբ գուշակե-  
ցինք, և եթէ չգաղբիք մեզ +ուրէ՛լէ, ձեզ պիտի

քարկոծենք, ձեզի ծանր տանջանք կը վերապահենք :

18. Ղրկուածները պատասխանեցին, «ձեր գէշ գուշակութիւնը ձեզի հետ է, ձեզ քարոզուի աշխարհում չլ, ստուգիւ դուք ծայրայեղ ժողովուրդ մըն էք» :

19. Քաղաքին ամենահեռաւոր մասէն մարդ մը կը վազէր ու կազազակէր անոնց, «Ո՛վ հայրենակիցներս, վախցէք այս առաքեալներէն» :

20. «Հետեւեցէք անոնց որոնք ձեզմէ ո՛րէն վարձք չեն պահանջեր, և դուք ուղիղ ճամբուն մէջ պիտի ըլլաք» :

21. «Ի՞նչու չպաշտեմ զայն որ զիս ստեղծած է, և որուն պիտի վերագառնաք դուք բոլորդ» :

22. «Անկէ զատ միթէ ուրիշ աստուածնե՞ր ընդունիս : Եթէ Ոգորձածը ինձ փրակելու չէ, անոնց բարեխօսութիւնը ո՛րէն օգուտ չտար ինձ, անոնք զիս են կրկար ազատել» :

23. «Ես յայտնի մոլորութեան մէջ կ'ըլլամ. եթէ զանստ պաշտեմ» :

24. «Ես կը հաւատամ ձեր Տիրոջը, ուրեմն ինձ մտիկ ըրէ՛ք» :

25. Չունի բարիքեցի՞ն ըսելով. «գրախօս մտիր» : Եւ չլուսաւ, «Ա՛հ, երանի թէ իմ հայրենակիցներս հասկնային» :

26. «Թէ Տէրը ինչպէս ներեց ինձ և պատուեց» :

27. Եւ անկէ յետոյ այն քաղաքին գէմ չզրկեցինք ոչ երկիրն քին գունդերը և ոչ ալ ուրիշ հարուած ինչպէս կը զրկենք ուրիշներու :

28. Միայն գոռում մը լսուեցաւ, և անոնք ջնջուեցան :

29. Վա՛յ իմ ծառաներուս : Ոչ մէկ մարգարէ չեկաւ անոնց քով որ անոնց ծաղրանաց առարկայ եղած չըլլայ :

30. Չե՞ն տեսներ, թէ որչափ սերունդներ անոնցմէ առաջ կործանած են :

31. Չէ որ անոնք պիտի երթան անոնց (չաստըւածներուն) առջև :

32. Այլ բոլորը հաւաքուած մեր առջև պիտի ընդունին :

33. Եւ չորութենէ մեռած երկիրը անոնց նշան մըն է մէր լըրու-թեան մասին : Մենք զայն կը վերակենդանացնենք, և անկէ կը բուսցնենք հացահատիկներ որոնցմով կը սնանին :

34. Մենք հոն տեղած ենք արմաւի պարտէզներ և խազողի այգիներ, և բլխեցուցած ենք ազրիւրներ :

35. Որպէս զի անոնց պտուղները ուտեն և վայելելին իրենց ձեռքի աշխատութեան արդէնքը : Անոնք մեզ երախտագէտ չպիտի ըլլան :

36. Փա՛ռք անոր որ ստեղծած է բոլոր զոյգերը. ինչպէս երկրէն արտադրուածներուն մէջ, նոյնպէս ձեր մէջ և այն բաներուն՝ մէջ չորս մարդիկ չեն գիտեր :

37. Նշան մըն է գիշերն ալ, երբ ցորեկը կը քաշենք և մարդիկ մթութեան մէջ կը մնան :

38. Նաեւ նաև մըն է. որ արեգակը կը քայլէ մինչև իր մարը մտնելը : Այսպէս է վճիւր Հզօրին և Իմաստունին :

39. Եւ լուսնին համար հաստատած ենք կայարանները ուրիշ արմաւիտիք գեղեցիկ ճիւղի մը պէս ետ կը դառնայ :

40. Արեւին չէ թոյլատրուած լուսնին հասնիլ, ոչ ալ գիշերուան՝ ցորեկը անցնիլ. ասոնցմէ իւրաքանչիւրը փառք կուտայ երկնի մը մէջ :

41. Նաև նշան մըն է անոնց համար, որ մարդոց նախնիքները նաւի մը մէջ լեցուած պահպանեցինք :

42. Եւ անոր նման ուրիշ նաւեր չի նեցիկնք ուր կը նստին :

43. Եթէ ուզենք, զանոնք կ'ընկղմենք ծովերուն մէջ, և անոնք չեն ազատիր, չեն փրկուիր :

44. Առանց մեր շնորհին, և այս անոր համար, որ ժամանակ մըն ալ վայելին այս աշխարհը :

44. Երբ անոնց ըսուեցաւ. «վախեցէք ձեր առջևը և ձեր ետևը եղածէն» (\*), որպէսզի աստուածային ոգորմութիւն ստանաք, կարեւորութիւն չեն ընծայեր :

45. Աստուծոյ նշաններէն մէկը անոնց չբերուեցաւ որ չմերթեն (ամեն ալ մերթեցին) :

47. Երբ անոն ըսուի. «Աստուծոյ ձեզ տուած ինչքերէն ոգորմութիւն տուէք»,

անհաւատները կըսեն հաւատացեալներուն, «Միթէ պիտի անուցանենք զանոնք զորս Աստուած եթէ կամէր կը սնուցանէր: Սաուզիւ դուք մօլորեալներ էք» :

48. Անոնք կըսեն նաև, «Ե՞րբ պիտի կատարուի պատիժի այս սպառնալիքը ըսէք եթէ անկեղծ էք» :

49. Ի՞նչ բանի կ'սպասեն անոնք, եթէ ոչ երկինքէն եկող միակ ազալակի մը որ պիտի յաիշտակէ կռուած ատեննին :

50. Անոնք չպիտի կրնան ոչ կտակներն բնել, ոչ ալ իրենց ընտանիքին վերադառնալ :

51. Փողը պիտի չնչէ, և անոնք գերեզմաններէն ելին, և անազարանօք դէպի Տէրը պրտի վազեն :

52. «Վայ մեզ, պիտի ազալակեն անոնք, ո՞վ հանեց մեզ մեր հանգստավայրէն: Ահա Աստուծոյ խոստումները կիրականանան: Իւր մարգարէները ճշմարիտը ըսած են եղեր մեզ» :

53. Միայն մէկ ձայն մը պիտի ելլէ, և բոլոր մարդիկ այն ատեն մեր առջև պիտի համախմբուին :

54. Այն օրը ոչ մէկ հոգիի անարդարութիւն չը-

(\*) Այս աշխարհէ եւ հանրերէստի պարէմէնէն

պիտի ըլլայ. անոնք միայն իրենց գործերուն համեմատ հատուցում պիտի ընդունին :

55. Այն օրը դրախտի ընակիչները ուրախութեան մէջ պիտի ըլլան :

56. Անոնք իրենց կիներուն հետ շուքի մէջ թիկնաթոռներու վրայ հանգիստ նստած պիտի ըլլան :

57. Անոնք հոն պտուղներ պիտի ունենան, և այն ամէնը՝ որ ուզեն :

58. «Աղաղակութիւն» խօսքով պիտի ողջունուին իրենց ողորմած Տիրոջ կողմէ :

59. Ահա այն օրը, դուք պիտի բամբուլիք, ո՞վ անհաւատներ :

60. Ի՞՞վ Աղամի որդիներ, ես ձեզ հետ չե՞մ պայմանաւորած որ սատանային չծառայէք, վասնզի նա ձեր ծանօթ թշնամին է :

61. Զիս պաշտեցէք, այս է ուղիղ ճամբան :

62. Սակայն նա ձեզմէ շատերը մօլորեցուցած է : Այդ չէ՞ք հասկցած :

63. Այս այն դժոխքն է որ ձեզ սպառնացուած էր :

64. Հիմա այրեցէք հոն, ձեր գործերուն ի հատուցում :

65. Այսօր անոնց շրթներուն վրայ կնիք կը դրնենք, և անոնց ձեռքերը մեզ հետ կը խօսին, և անոնց օտքերը կը վկայեն անոնց գործերու մասին :

66. Եթէ ուզէինք, անոնց աչքերը կը կուրացնէինք անոնք երբ յառաջ նետուէին ճամբուն վրայ. ե՞նչպէս պիտի տեսնէին :

67. Նաև եթէ ուզէինք, անոնց կազմը կը փոխէինք, և չէին կրնար ոչ առաջ քայել և ոչ ետև :

68. Որուն որ կեանքը երկար ընենք, անոր քամակը կը ծոննք : Այդ չե՞ն հասկնար :

69. Մենք անոր (Մուհամմէտին) բանաստեղծու-

Թիւն չենք սովրեցուցած, և անոր պէտք չէ, և այս գիրքը, Գուբարը, միայն խրատ մըն է և յստաւ գրուածք մը

70. Խրատելու համար ապրողները, և հասկնելու համար թէ անհաւատներուն դէմ տրուած որոշումը կը գործադրուի:

71. Չե՞ն տեսներ որ մեր ձեռքի գործերէն աւնոնց համար անասուններ ստեղծած ենք, և անոնք կը տիրեն. անոնց.

72. Անոնց հպատակեցուցինք անասունները, որոնց մէկ մասին վրայ կը հեծնեն և միւսներէն կը սընանին:

73. Այս անասուններէն անոնք շատ կ'օգտուին. անոնցմէ ըմպելիք կառնեն: Անոնք մեզ հանգէպ եւ բախտագէտ չե՞ն:

74. Անոնք Սատուծմէ զատ ուրիշ աստուածներ կը պաշտեն, անոնցմէ օգտուելու համար:

75. Բայց ասոնք չեն կրնար օգնել անոնց, այլ միայն իրենց աստուածներուն զինուորագրուած կըլլան:

76. Ուրեմն անոնց խօսքերը քեզ թող չտխրեցնեն, «Չ՛ Մահամէ», մենք զիտենք ինչ որ անոնք կը պահեն ու կը յայտնեն:

77. Մարդը չտեսնե՞ր որ մենք ստեղծած ենք զինք. կաթիլ մը սերմէ, և ա՛հ նա յայտնի հակառակորդ մը կը դառնայ:

78. Նա մեզ օրինակներ կը բերէ և ինք կը մտնայ իր ստեղծուիլը: Նա կըսէ մեզ, «Ո՞վ կրնայ վերականգանացնել անգամ մը փտած ոսկորները»:

79. Պատասխանէ անոնց, «Չանոնք կը վերականգնուին անոնցնէ նա որ առաջին անգամ ստեղծած է, անոր գիտէ բոլորը ստեղծել:

80. Նա որ կանաչ ծառէ մը կրակ կը ցատկեցնէ»

ուրիշ դուք ձեր կրակները կը վառէք:

81. Նա որ ստեղծած է երկինքը ու երկիրը, չը կրնա՞ր ձեզ նման արարածներ ստեղծել: Այո՛, անտարակոյս. նա զիտուն արարիչն է:

82. Հրամանը միայն անորն է. երբ նա ուզէ քանի մը ըլլալը, կըսէ «Եղի՛ր» և նա կըլլայ:

83. Փա՛նք անոր, որուն ձեռքին յմէջն է ամէն քանի իշխանութիւնը: Դուք բոլորդ անոր պիտի վերադառնաք:



ԼԷ. Գ Լ Ո Ի Խ

(ՍՈՒՐԷԹ ԻԻՍ - ՍՍ.ՃԵՍ.Թ)

Մէքէական, հարիւր ու քսուն երկու պատգամ

Յանուն Աստուծոյ զթածի ողորմածի

1. Կ'երգնում անոնցմով որոնք կարգաւ շարուած են. (\*)
2. Եւ որոնք ետ կը մղեն արդէնլու համար.
3. Եւ որոնք կը պատմեն քարանձն խոտերը յորդուրելու համար:
4. Ճշմարիտ մէկ է ձեր Աստուածը.
5. Իշխողը երկնից և երկրի, և անոնց մէջ գըտնուածներուն և Տէրը արեւելքներուն:
6. Մենք զարդարեցինք ամենամօտիկ երկինքը աստղերով.
7. Որոնք պահապան են բոլոր ըմբօստներուն զէմ.
8. Որպէսզի անոնք չզան մտիկ ընելու բարձրա-

(\*) Հրեւոսկներու շարերը ըսելու համար:

գոյն ժողովին մէջ եղածները. անոնք ետ կը մղուին ամէն կողմէ.

9. Մերժուած և յարատե պատժոյ ենթարկուած :

10. Որո որ մօտենայ՝ մինչև քանի մը խօսք լսելը՝ վառուած ասուպով մը կը հարուածուի :

11. Հարգուր անհասարկութեան, թէ անոնք ուժեղ են ստեղծմամբ, թէ մեր ստեղծածները: Մենք մարդիկը ստեղծեցինք կարծր ցեղէ :

12. Դու կ'սքանչանաս Աստուծոյ զօրութեանը, և անոնք կը ծաղրեն զանի :

13. Եթէ անոնց խրատ տրուի, քնու կարեւորութիւն չեն տար :

14. Եթէ զեկուցիչ նշան մը տեսնեն, կը խնդան անոր վրայ,

15. Եւ կ'ըսեն, «այս պարզապէս վնասութիւն է».

16. «Մեռնելէ և փոշիանալէ յետոյ միթէ յարուածիւն կառնենք».

17. «Եւ մեր նախնիքներն այ պիտի առնե՞ն» :

18. Ըսէ անոնց, «Այ՛ո, և զուք խայտառակութեամբ պիտի ծածկուիք» :

19. Փողը պիտի հնչէ միայն անգամ մը, և անոնք պիտի ելլեն էրեւոյ քերեղմաներէն. և ամէն կողմ պիտի նային :

20. «Աւանդ մեզի, պիտի աղաղակեն, այս դատաստանի օրն է» :

21. Այս վճռին օրն է, պիտի ըսուի անոնց, որ զուք սուտ կը համարէիք :

22. «Ժողովեցէ՛ք ամբարիշտները և անոնց ընկերուհիները և անոնց պաշտած աստուածները :

23. Աստուծմէ զատ, և դէպի դժոխքի ճամբան քը չեցէք զանոնք :»

24. Եւ կայնեցուցէք զանոնք, պիտի հարցաքըննուին :

25. Ի՞նչու չէք օգներ իրարու :

26. Բայց այն օրը անոնք Աստուծոյ դադաւասանին պիտի ենթարկուին :

27. Այնատեն անոնք իրար մօտենալով զիրար պիտի մեղադրեն :

28. Եւ պիտի ըսեն մոլորեցնողներուն «զուք աջ կողմէն (ճշմարտութեան էրեւոյնով) մեզի կուգայի՞ք :»

29. — Ի՛չ, պիտի պատասխանեն մեռնելը, աւելի զուք չէիք ուզեր հաւատալ : վասնզի մենք ձեր վրայ ո՛րէէ իշխանութիւն չունէիք. այլ զուք ապստամբեր էիք :

30. «Մեր արքով խօսքը ուրեմն ճշմարտութիւն է եզեր մեզ նկատմամբ և մենք պիտի պատժուինք :»

31. «Մենք ձեզ մոլորեցուցինք վասնզի մենք ալ մոլորեալներ էինք :»

32. Այսպէս անոնք այնօրը պիտի ընկերակցին միեւնոյն պատժով :

33. Այսպէս պիտի վարուինք յանցաւորներուն հետ :

34. Վասնզի երբ անոնց ըսուէր, «Աստուծմէ զատ ուրիշ Աստուած չկայ», անոնք կը հպարտանային,

35. Եւ կըսէին, «խենթ բանաստեղծի մը համար մենք մեր աստուածները ձգե՞նք» :

36. — Նա ձեզ կը բերէ ճշմարտութիւնը, և կը հաստատէ նախկին մարգարէները :

37. Արդարեւ, զուք դառն տանջանք պիտի կրէք :

38. Դուք միայն ձեր դորձերուն համեմատ հատուցում պիտի ստանաք :

39. Բայց Աստուծոյ հաւատարիմ ծառաները

40. Պիտի ստանան որոշ թանկագին պարգևներ,

41. Ընտիր պատուներ, և պիտի պատուուին

42. Հեշտալի դրախտներու մէջ

43. Գահերու վրայ դէմ դիմաց նստած զիրար զրտելով :

44. Պիտի շրջապատուին ջուրի լեցուն գաւաթ-  
ներով,

45. Յատակ, ճշմարիտ հեշտանք խմողներուն հա-  
մար:

46. Անիկա անոնց իմացականութիւնը չպիտի խան-  
գարէ և չպիտի գինովցնէ զանոնք:

47. Անոնք կոյսեր պիտի ունենան պարկեշտ նայ-  
ւածքով, մեծ սեսև աչքերով, և իրենց գոյնովը նը-  
ման ջրայտի խմով պահուած հաւկիթներու:

48. Անոնք իրարու մօտենալով հարցումներ պիտի  
ընեն:

49. Անոնցմէ մէկը պիտի ըսէ. «բարեկամ մ'ունէի  
աշխարհի վրայ,

50. Որ կըսէր ինձ, «գու ալ կը հաւատամս յա-  
րութեան»:

51. Միթէ կարելի՞ է որ անգամ մը մենք մեռնե-  
լէ և ոսկոր ու փոշի դառնայէ յետոյ դատուինք:

52. Նա պիտի ըսէ, «կուղէ՞ք վարը դիտել»:

53. Անոնք պիտի նային ու տեսնեն դժոխքին  
խորը:

54. Արդարը պիտի ըսէ. «կերդնում Աստուծով,  
քիչ մնաց որ զիս մոլորեցնէիր»:

55. Աւանց Աստուծոյ ողորմութեանը ես դատա-  
պարտեալներէն պիտի ըլլայի:

56. Ուրիշ մահուամբ մըն ալ չպիտի մեռնինք:

57. Մեր առաջին մահէն զատ: Տանջանքի չպի-  
տի ենթարկուինք:

58. Արդարև սա մեծ երջանկութիւն մըն է,

59. Գործողներ, նմանը չահելու համար գործե-  
ցէ՛ք:

60. Այս՞ լաւ հանգստավայր է, թէ դարնիի ծառը:

61. Մենք զայն չարերուն համար վէճի առարկայ  
ենք ըրած:

62. Այն ծառ մըն է որ դժոխքի խորէն կը բուսնի:

63. Անոր պտուղները իբր սատանաներու գլուխ-  
ներ են:

64. Մերժուածները անկէ պիտի սնանին և անով  
պիտի լեցնեն իրենց փորը:

65. Յետոյ անոնց եռացող ջուր կուտան խմելու,

66. Եւ յետոյ անոնք դժոխք կը վերագտնան:

67. Անոնք իրենց հայրերը մոլորեալ կը տեսնէին:

68. Եւ փութացին անոնց հետքէն ընթանալ:

69. Հին ժողովուրդներու մէկ մեծ մասը արդէն  
մոլորեալ էր անոնցմէ առաջ:

70. Իսկ մենք անոնց զրկեցինք խրատողներ:

71. Դիտէ և տես թէ ինչ եղաւ վախճանը այն  
խրատողներուն:

72. Եւ անոնց որոնք մեր հաւատորիմ ծառաները  
չէին:

73. Նոյ թախանձեց մեզ, և մենք անմըջապէս նը  
պատառոր պատասխանեցինք:

74. Զանի և իր ընտանիքը ազատեցինք մեծ վը-  
տանգէն:

75. Անոր սերունդները տունք որ կը մնան:

76. Եւ ապագայ սերունդին մէջ փրկութիւնը ա-  
նոր վերապահեցինք:

77. Որ խաղաղութիւնն ալ Նոյի նետ ըլլայ ամբողջ  
տիեզերքին մէջ:

78. Բարեգործները մենք այսպէս պիտի վարձա-  
տրենք:

79. Անիկա մեր հաւատացեալ ծառաներէն էր,

80. Միւսները ընկղմեցինք:

81. Եւ ա՛հ Աբրահամ անոր դասէն է:

82. Երբ նա մաքուր սրտով իր Տիրոջը քով  
եկաւ,

- 83. Ըսաւ. որ մը իբ հօրը և իր ժողովուրդին. «ստի՛նչ է որ կը պաշտէք»:
- 84. «Սուտ աստուածներ նախամեծար կը համարէ՛ք Աստուծմէ»:
- 85. «Ի՞նչ կարծիք ունիք տիեզերաց Տիրոջ մասին»:
- 86. Նա նայուածք մը նետեց աստղերուն:
- 87. Ըսաւ, «ես հիւանդ եմ, պաշտե՛մ ինչ որ կը ինձ բերէ»:
- 88. Անոնք գացին և զանի թողուցին:
- 89. Նա գաղտնի գնաց անոնց կուռքերը տեսնելու, և ըսաւ անոնց, «չէ՞ք ուտեր»:
- 90. «Ի՞նչու չէք խօսիր»:
- 91. Եւ լետոյ գնաց, աջ ձեռքովը զարկաւ անոնց,
- 92. Իր ժողովուրդը անոր վրայ վազեց:
- 93. «Դուք ձեր շինածները կը պաշտէք» ըսաւ անոնց Աբրահամ:
- 94. «Մինչդէռ ձեզ և ձեր գործերը Աստուած ըստեղծած է»:
- 95. Անոնք իրարու կ'ըսէին. «խարոյղ մը շինեցէք և զանի նետեցէք կիզիչ կրակին մէջ»:
- 96. Ուղեցին անոր որոգայթ մը լարել, բայց մենք ընկճեցինք զանոնք:
- 97. «Ես իմ Տիրոջ մօտ կ'երթամ, ըսաւ Աբրահամ, անիկա զիս կ'առաջնորդէ»:
- 98. «Տէ՛ր իմ, ինձ որբէ մը տուր, որ արդարնեքէն համարուի»:
- 99. Անոր աւետեցինք քաղցր նկարագրով որդւոյ մը ծնունդը:
- 100. Երբ այն հասաւ պատանեկութեան տարիքին,
- 101. Ի՛ր հայրը ըսաւ անոր, «որդեակ իմ, երազիս մէջ տեսայ, որ քեզ Աստուծոյ կը զոհեմ: Ի՛նչ

- մը խորհէ. դու ինչ կը մտածես այդ մասին:
- 102. — Ո՛վ հայր իմ, ըրէ ինչ որ քեզ կը հրամայուի. եթէ այդպէս հաճոյ է Աստուծոյ, դու զիս համբերող պիտի գտնես:
- 103. Եւ երբ երկուքն ալ համակերպեցան Աստուծոյ կամքին. և Աբրահամ զանի գետինը պատկեցուց ճակատը վար,
- 104. Մենք ձայնեցինք անոր, ո՛վ Աբրահամ,
- 105. «Դու տեսիլքդ կատարեցիր. և ահա մենք ինչպէս կը վարձատրենք առաքինիները»:
- 106. Ստուգիւ, այս յայտնի փորձ մըն է:
- 107. Մենք փոխարինեցինք իր «բռն» մեծ զոհով մը:
- 108. Մենք անոր վերապահեցինք ապագայ սերունդին մէջ ինչպէ՛ս ինչպէ՛ս:
- 109. Որ խաղաղութիւնը Աբրահամի հետ ըլլայ:
- 110. Արդպէս կը վարձատրենք առաքինիները:
- 111. Նա մեր հաւատարիմ ծառաներէն է.
- 112. Անոր աւետեցինք մարդարէ մը յանձին արգար իսահակին:
- 113. Մեր օրհնութիւնը՝ տարածեցինք Աբրահամի և Իսահակի վրայ: Անոնց սերունդներէն կան բարեգործներ և անիրաւողներհանդէպ իրենց անձին:
- 114. Բարիքով լեցուցինք Մովսէսը և Ահարոնը:
- 115. Ազատեցինք մեծ թշուառութենէ մը երկուքըն, նաեւ անոնց ժողովուրդը:
- 116. Անոնց օգնեցինք, եւ անոնք զօրաուր եղան:
- 117. Այն երկուքին տունք յայտնի գիրքը:
- 118. Եւ զանոնք առաջնորդեցինք ուղիւ ճամբան:
- 119. Եւ այն երկուքին վերապահեցինք ապագայ սերունդին ինչպէ՛ս ինչպէ՛ս:
- 120. Որ խաղաղութիւնը ըլլայ Մովսէսի եւ Ահա-

քոնի հետ :

- 121. Մենք այսպէս կը վարձատրենք առաքինիները :
- 122. Երկուքն ալ մեր հաւատարիմ ծառաներէն են :
- 123. Եղիան ալ մեր մարդարեններէն էր :
- 124. Երբ ըսաւ իր ժողովուրդին «դուք չէ՞ք վախնար» :
- 125. «Դուք Բահադրին պիտի աղօթէք ձգելով ամենակարող արարիչը,
- 126. Ձեր աէր Աստուածը եւ ձեր հայրերուն ու նախնիքներուն Տէրը» :
- 127. Բայց անոնք զանի ստախօս համարեցին, եւ Աստուծոյ դատաստանին տարուեցան,
- 128. Բացի մեր հաւատարիմ ծառաներէն :
- 129. Եւ անոր վերապահեցինք ապագայ սերունդին մէջ ու ինչ :
- 130. Թէ «խաղաղութիւն ըլլայ էլիսախին» :
- 131. Մենք այսպէս կը վարձատրենք առաքինիները :
- 132. Նա մեր հաւատարիմ ծառաներէն էր :
- 133. Ղովան ալ մեր մարգարէներէն մէկն էր :
- 134. Չանի ազատեցինք իր ամբողջ ընտանիքովը :
- 135. Բացի պատաէն. որ ետ մնացած էր.
- 136. Միւսները բնաջնջեցինք :
- 137. Դուք անոնց բնակալայրերու մօտէն կանցնիրք առաւօտ
- 138. Եւ իրիկուն. չէ՞ք մտածեր :
- 139. Եւ Յովնանն ալ մեր մարգարէներէն էր :
- 140. Նա փախաւ րեանաւորեալ նաւի մը մէջ.
- 141. Վիճակ ձգեցին եւ նա դատասպարտուեցաւ ծովը ինչ :
- 142. Չուկը զանի կլլեց, վասն զի նա յանցաւոր էր :

- 143. Եւ եթէ նա մեզ չփառաբանէր.
- 144. Պիտի մնար ձուկին փորին մէջ մինչեւ այնօրը յորում մարդիկ լարութիւն պիտի առնեն :
- 145. Եւ մենք զանի հանեցինք մերից ցամաքի մը վրայ. եւ նա հիւանդ էր :
- 146. Անոր քով գգմինի մը բուսցուցինք :
- 147. Յետոյ զանի զրկեցինք հարիւր հազար հոգինոց կամ աւելի ժողովուրդի մը :
- 148. Անոնք Աստուծոյ հաւատացին. մենք անոնց պարգեւեցինք այս աշխարհի վայելքը մինչեւ որոշ ժամանակ մը
- 149. Հարցուր Մէլէքընէրու, որ քեզ բան թէ Աստուած աղջիկներ ունի, մինչ անոնք մանչեր ունին :
- 150. Միթէ մենք հրեշտակները պատսճամբ է՞ք ստեղծած ենք : Անոնք ատոր ականատես եղած են :
- 151. Ո՛չ. բայց անոնք իրենցմէ սուտեր կը հանեն :
- 152. Անոնք կըսեն, «Աստուած զաւակներ ունեցաւ» : կը ստեն :
- 153. Նա նախամեծօր համարած կըլլայ աղջիկները մանչերէն :
- 154. Ի՞նչ իրաւունք ունիք այսպէս խորհելու :
- 155. Դուք չէ՞ք մտածեր միթէ,
- 156. Կամ դուք որոշ փաստ ունի՞ք այդ մասին,
- 157. Յոյց տուէ՞ք ձեր գիրքը, եթէ անկեղծ էք :
- 158. Աստուծոյ եւ գեւերուն միջեւ անոնք ազգականութիւն կը գնեն. բայց գեւերը գիտեն թէ որ մը Աստուծոյ դատաստանին պիտի քաշուին :
- 159. Աստուած իր փառքով խիստ բարձր է անոնց վերազրումներէն :
- 160. Աստուծոյ հաւատարիմ ծառաներուն այնպէս չպիտի ըլլայ :

- 161. Բայց դուք եւ ձեր պաշտածները
- 162. Չէք կրնար մեկը Աստուծոյ գէժ գրգռել
- 163. Բացի անկէ որ արդէն մոլորեալ ըլլալով՝  
գէտի գծուք կերթայ:
- 164. Մեզմէ իւրաքանչիւրը իր որոշ տեղը ունի:
- 165. Մենք կարգաւ կը շարուինք.
- 166. Եւ անոր փառքը կօրհնեցենք:
- 167. Եթէ անհաւատները ըսին.
- 168. «Եթէ մենք ունենայինք գիրք մը մեր սախ-  
նիքներէն մեզ մնացած
- 169. «Մենք Աստուծոյ հաւատարիմ ծառաներէն-  
կըլլայինք»:
- 170. Անոնք Գուրանին չեն հաւատար, բայց պի-  
տի հասկնան որ չը:
- 171. Մենք խոստացանք արդէն մեր զրկած ծա-  
ռաներուն
- 172. Թէ անոնց կ'օգնենք:
- 173. Մեր զօրքերը անոնց կը յաղթեն:
- 174. Հեռացիր անոնցմէ ժամանակ մը. «ՎՄ»  
հասկը,
- 175. Տե՛ս անոնց խեղճութիւնը: Անոնք ալ պիտի  
տեսնեն:
- 176. Կուզե՛ն ուրեմն որ մեր պատիժը փութացուի.
- 177. Երբ նա յանկարծ անոնց շրջանակներուն  
մէջ երևի, ի՛նչ սոսկալի պիտի ըլլայ խրատ մտիկ  
չընող մարդոց առաւօտը:
- 178. Հեռացի՛ր անոնցմէ ժամանակ մը
- 179. Տես ի՛նչ կլայ անոնց զերջը: Անոնք ալ կը տեսնեն:
- 180. Փառք Աստուծոյ, մեծութեան Աստուծոյն.  
Նա խիստ բարձր է անոնց վերադրումներէն:
- 181. Խաղաղութիւն ըլլայ մարգարէներուն:
- 182. Փա՛ռք Աստուծոյ, տիեզերքի տիրոջ:

ԼԸ. Գ Լ Ո Ի Խ

Մէքէական, ուրսուն ուրբ պատգամ

Յանուն Աստուծոյ գթածի ողորմածի

- 1. Ս. Կ'երգնում յայանութեամբ լի Գուրանով,  
թէ անհաւատները հպարտութեան և ըմբոստութեան  
մէջ են:
- 2. Ո՛րքան սերունդներ ջնջած ենք անոնցմէ ա-  
ռաջ: Բոլորը օգնութիւն կազաղակէին, բայց ժամա-  
նակ չիար այլևս ազատելու:
- 3. Անհաւատները կը զարմանան իրենց մէջէն յան-  
կարծ մարգարէ մը ելլելուն, և կըսեն. «Սա լիութիւն  
մըն է, ստախոս մըն է»:
- 4. «Բոլոր աստուածներէն միայն մէ՞կ աստուած  
կուզէ շինել: Ի՞նչ, սա տարօրինակ բան մըն է»:
- 5. Անոնց մեծերը զատուեցան ըսելով անոնց «գա-  
ցէք և ձեր աստուածներու կրօնքին մէջ հաստատ  
կեցէք: Նա կուզէ որ դուք կրճատե՛ք ինչ-որ»:
- 6. Վերջին կրօնքին մէջ այդպէս բան մը չլսեցինք՝  
Մահահարի կրօնքը միայն խաբէութիւն մըն են:
- 7. «Մեր մէջէն միթէ՞ միայն անո՞ր իջուցուեր է  
յայանութեան գիրք»։—Այո՛, անոնք կը կասկա-  
ծին մեր յայանութիւններէն, վասն զի տակաւին չեն  
կրած իմ պատիժներս:
- 8. Ունի՞ն անոնք իրենց արամադրութեան տակ  
գանձերը հօր և պարզեաբաշխ Աստուծոյն:
- 9. Կամ անօճցն է երկնից ու երկրի և այդ երկու-  
քին մէջ գանուածներու թագաւորութիւնը: Ուրեմն  
թող փորձեն սանդուխներով վեր ելլել:
- 10. Դաշնակիցներուն ունեցած քանի մը գունդե-  
րէն անոնք պիտի փախչին:

11. Անոնցմէ առաջ ալ Նոյի ժողովուրդը, Ատ-  
ցիք և ցից հանող Փարաւոնը ստախոս համարեցին ի-  
րենց մարգարէները :

12. Թէմուտցիները, Ղուլտի ժողովուրդը և Մատի-  
անի բնակիչները այնպէս վարուեցան. Աստուծո՞՞  
մարգարէներուն դէմ դաշնակցեցան :

13. Ամէն անոնք որ մեր մարգարէները ստախոս  
համարած էին, մեր պատիժը հասաւ զանոնք պատ-  
ժելու :

14. Ի՞նչ կ'սպասեն ուրեմն Սէ++էշէները : Միայն  
մէկ ազազակ մը ելլէն+էն, որ պիտի հասնի անոնց  
առանց միջոց տալու :

15. Անոնք կըսեն, «Ո՛վ Տէր, ուրեմն մեր վճիռը  
փութացուր հաշուի օրէն առաջ» :

16. — Համբրութեամբ տօկա՛, ո՛վ Մահաճէր, ա-  
նոնց խօսքերուն և լիշէ մեք Դաւիթ ծառան, որ ու-  
ժեղ էր. և յաճախ դարձի կուգար :

17. Մենք հնազանդեցուցինք լեռները մեր գովա-  
բանութիւնը երգելու անոր հետ իրիկուն և առաւօտ :

18. Նոյնպէս ալ թռչունները՝ որոնք հաւաքուէին  
յաճախ անոր քով :

19. Անոր թագաւորութիւնը մենք ամբացուցինք :  
Անոր մենք տուինք իմաստութիւնը, և ճարտարու-  
թիւն վէճերը վճելու :

20. Գիտե՛ս պատմութիւնը այն երկու վիճողնե-  
րուն, որոնք պատէն անցնելով սրահը մտան :

21. Երբ ներկայացան Դաւիթի առջև, նա սարսա-  
փեցաւ զանոնք տեսնելով : Անոնք ըսին, «մի վախ-  
նար, մենք երկու հակառակորդներ ենք. մեզմէ մէ-  
կը անիրաւութիւնըրաւ միւսին. արդ, սեր մէջ դա-  
տաստան ըրէ արդարութեամբ, առանց աջաուրթեան  
և առաջնորդէ մեզ ամէնաուղիղ ճամբան» :

22. «Առ իմ եղբայրս է, որ ունէր 90 ոչխար և ես

մէկ հատ ունէի : Անիկայ օր մը ըսաւ «զայն ինձ տուր  
պահելու, և խօսքով զիս ստիպեց» :

23. Դաւիթ անոր պատասխանեց, «Անիկա անի-  
րաւութիւն ըրեր է քեզի դէմ, ուզելով քու մէկ ոչ-  
խարդ աւելցնելու համար իրենները : Իրարու հետ  
գործակցող շատ մարդիկ զիրար կը խաբեն, բայց  
հաւատացողները ու բորեգործները այդպէսչեն վա-  
րուիր, սակայն անոնք քիչեր են : Դաւիթ զգաց որ  
մենք կուզէինք այս օրինակով զենք փորձել. ներու-  
զութիւն խնդրեց Աստուծմէ, երկրպագեց և ապաշ-  
խարհեց :

24. Մենք անոր ներեցինք, անոր պարգևեցինք  
դբախտին մէջ տեղ մը մեր քով. և լաւ տեղ մ'ունի :

25. Ո՛վ Դաւիթ, մենք քեզ մեր տեղակալը հաս-  
տատեցինք երկրի վրայ, ուրեմն մարդոց վէճերը դու  
կարգադրէ արդարութեամբ, և քու կիրքերուդ մի  
հետեւիր, անոնք քեզ կը մոլորեցնեն Աստուծոյ ճամ-  
բէն : Որոնք որ կը մոլորին սոսկալի պատիժ մը պի-  
տի կրեն, վասնզի չեն մտածած բնաւ հաշուի օրը (\*) :

26. Երկրները ու երկիրը և անոնց մէջը եղածները  
ի զուր չենք ստեղծեր : Անհաւատներու կարծիքը այս  
է. և վայ անհաւատներուն, կրակը պիտի ձգուին :

27. Հաւատացողները և բարեգործները միթէ հա-  
ւասա՞ր պիտի նկատենք երկիրը ապականողներուն  
հետ : Երկրվաճները չարագործներուն հաւասա՞ր հա-  
մարենք :

28. Այս օրհնելի գիրքը քեզ զրկած ենք, որ ի-  
մաստուն մարդիկ անոր պատգամներու մասին խոր-  
հըրդած են և խրատուին :

29. Դաւիթին տուինք Սողոմոնը : Ի՛նչ գերազնիւ  
ծառայ, նա կը սիրէր դարձի գալ Աստուծոյ :

(\*) Վերջէն դատաստանէ օրը

30. Օր մը իրիկուան դէմ անոր բերին արագընթաց ձիեր:

31. Եւ ըսաւ, «կը նախընտրեմ աշխարհի ինչքը Տերոջ յիշատակէս՝ մինչև որ արևը մարըրանէ: Ինձ բերէք զանոնք»

32. Եւ երբ անր առջև բերին, սկսաւ անոնց ծունկերը և գլուխը կտրել:

33. Փորձեցինք Սողոմոնը, և անոր գահին վրայ դրինք անկերպարան մարմին մը. և Սողոմոն ապաշխարհեց

34. Եւ ազաղակեց. «Տէր իմ, ներէ իմ սխալներըս, պարգևէ ինձ այնպիսի գորութիւն մը որուն նշանը մէկը չունենայ ինձմէ վերջը: Դու բարձրագոյն բաշխիչն ես»:

35. Անոր հպատակեցուցինք չովը, որ անոր ուղածին պէս կը փչէր ամէն կողմ:

36. Եւ անոր հպարակեցո՞ղնք ստատանները, բուրբ ճարտարագետներ ու ջրասուղներ:

37. Եւ ուրիշներ ալ տալինք որոնք շղթաներով կապուած էին իրարու:

38. Ասոնք մեր պարգևներն են, ըսինք անոր, «Ըստ հաճոյս բաշխէ ու խնայէ՛ անոնց հաշիւը չպիտի տաս»:

39. Սողոմոն մեզ մօտ տեղ մը գրաւած էր, և ամենալու բնակավայրը կը վայելէր:

40. Յիշէ՛ նաև մեր Յոր ծառան, ինչքը նա սախոսքերը ուղղեց իր Տիրոջ, «ստատանան զիս չիւանդութեանն և տանջանաց ենթարկեց»:

41. Զայն մը ըսաւ անոր, «ոտքդ գետինը զա՛րկ» նա զարկաւ եւ զարկաւ մը ցոյտեց: Այս ջուրը քեզ պիտի բուժէ, պաղ է, և պիտի խմես անկէ:

42. Զանի իր ընտանիքին վերադարձուցրնք, այնչափ ալ վրան աւելցնելով: Այս ապացոյց մըն է մեր

ողորմութեան և խրատ մը իմաստուն մարդոց համար:

43. Անոր ըսինք, «խուրձ մը ա՛ռ, զարկ անով և մի դրձեր քու երգումդ»: Մենք Յօրը համբերող գտանք:

44. Ի՛նչ գերընտիր ծառայ՝ նա զղջացող էր:

45. Յիշէ՛ նաև մեր ծառաները, Աբրահամը, Իսահակը և Յակոբը, ուժեղ և հասկցող մարդիկ:

46. Սաքրեցինք զանոնք, հանդերձեալ բնակավայրը յիշեցնելով անոնց:

47. Ասոնք մեր առջև առանձնաշնորհեալ ընտրեալներն են:

48. Յիշէ՛ նաև Իսմաիլը, Եղիսէն և Տուլ-Քէֆիլը՝ անոնց բոլորը արդար էին:

49. Ահա խրատը՝ որոնք որ երկիւղած են լաւ տեղիկայ անոնց

50. Եղեմի դրախտներուն մէջ, որոնց դաները պիտի թացուին անոնց առջև:

51. Ասոնք ճոն պիտի բազմին, և պիտի ուզեն ամէն տեսակ պտուղներ ու գինի:

52. Անոնց քով համեստ նայուժքով և իրենց հասակակից կիներ պիտի ըլլան:

53. Անոնց պիտի ըսուի, «տճա այս է խոստացուածը հաշուի օրուան համար»:

54. Արդարև մեր պաշարը չդիտի պակսի, պիտի ըսեն անոնք:

55. Այո՛, այնպէս պիտի ըլլայ: Բայց ըմբոստներուն ամէնազգուելի վայրը վերապահուած է:

56. Դժոխքն է այն, ուր պիտի այրին: Ի՛նչ զրգուելի բնակավայր:

57. «Ճաշակեցէ՛ք, պէտէ ըստ էանոնց, եռացող ջուրը և թարախ

58. «Եւ ուրիշ զանազան տանջանքներ»:

59. Պէտերոսն պիտի ըստի, «ձեզ հետեող այս խումբը ձեր հետ դժոխք պիտի նետուի: Անոնց «բարի եկաք» չկայ բնաւ, վասնզի կրակին մէջ պիտի այրին»:
60. Ասոնք պիտի ըսեն իրենց պետերուն. «ճշ, չպիտի ըսուի ձեզ «բարի եկաք», դուք էք որ մեզ կրակի պատրաստեցիք»: Ի՞նչ սոսկալի բնակավայր է:
61. Եւ պիտի ըսեն Ասորոսոյ ուղիքով, Տէ՛ր, կըրկնապատկէ կրակի պատիժը անոնց, որոնք մեզ այս պատժին մղեցին»:
62. «Ի՞նչու չենք տեսներ, պիտի ըսեն անհաւատները՝ այն մարդիկը որոնք մեզ չարեր կը համարէին»:
63. «Եւ զանոնք կը ծաղրէինք. մեր նայուածքն երէն պիտի վրիպին անոնք»:
64. Իրօք, ճշմարիտ է որ կրակին դատապարտուածները այսպէս պիտի վիճին իրարու մըջէն:
65. Ըսէ՛ անոնց, «՛՛՛ Մահա՛՛՛նք, «ես միայն խրատող մըն եմ. Աստուծոյ զատ ուրիշ աստուած չկայ, նա է Միակը և Ամենակարողը»:
66. Որ Տիրողն է երկնից և երկրի և անոնց մէջ բոլոր եղածներուն, նա է Հոգորը և ներողը:
67. Ըսէ՛ անոնց, «յուրը մեծ լուր մըն է»:
68. «Եւ Դուք չէք ուզեր զայն լսել»:
69. Ես տեղեկութիւն չունէի այն բարձրագոյն ժողովի մասին, ուր կը վիճարանուէր մարդոսն սրբաշքան մասին,
70. «Ինձ յայտնուած էր միայն թէ ես ճշմարիտ մարգարէ մըն եմ»:
71. Երբ Աստուած ըսաւ հրեշտակներուն, «մարդը կուէ կ'ստեղծեմ»:
72. «Երբ անոր կատարեալ կողմը տամ և փչեմ անոր իմ հոգիէս մաս մը, դուք ալ երկրպագեցէք անոր ստիչ»:
73. Բոլոր գանուող հրեշտակները երկրպագեցին անոր ստիչ և .

74. Բացի սատանանէն՝ ան հպարտացաւ և ապերախտ եղաւ:
75. Ո՛վ սատանայ, կոչեց Աստուած անոր, ի՞նչ բան կարգիլէ քեզ երկրպագել այն էակին առջև, զոր ես իմ ձեռքովս ստեղծեցի»:
76. «Հպարտացա՛ր կամ դու աւելի բարձր ես»:
77. Սատանան պատասխանեց, «ես անկէ արժէքաւոր եմ՝ դու զիս ստեղծած ես կրակէն, և զանի կուէ»:
78. Դուք ե՛լ ասկէ ըսաւ անոր Աստուած՝ դուքարկոծուած ես»:
79. «Իմ նզովքս քու վրադ ըլլայ մինչև դատաստանի օրը»:
80. — Տէ՛ր. ազազակեց սատանան, ինձ պայմանաժամ տուր մինչև յարութեան օրը»:
81. «Տրուեցաւ քեզ այդ», ըսաւ Աստուած,
82. «Մինչև կանխորոշ պայմանաժամին օրը»:
83. — Կ'երդնում քու մեծութեանդ վրայ, պատասխանեց սատանան, որ անոնց ամէնն ալ պիտի մուրեցնեմ,
84. «Բացի անկեզծ ծառաներէն»
85. — Այսպէս պիտի ըլլայ, և ճշմարիտ կըսեմ, որ դժոխքը քեզմով և քեզի հետեողներով պիտի լեցնեմ:
86. Ո՛վ Մահա՛՛նք, ըսէ անոնց, «ես ձեզմէ վարձք չեմ ուզեր, և ես չեմ անոնցմէ որոնք իրենց տարողութենէն աւելի կը բռնաւորուին»:
87. Գուրանը ազդարարութիւն մըն է տիեզերքէ համար:
88. Ժամանակէ մը յետոյ դուք լուրը պիտի իմանաք:



ԼԹ. Գ Լ Ո Ւ Խ

Մէֆֆէական, Եօրանատուն հինգ պատգամ

Յանուն Աստուծոյ գթածի և ողորմածի

1. Գիրքին յայտնութիւնը հղօր և իմաստուն Աստուծոյ կուգայ:

2. Գիրքը քեզ գրկեցինք ճշմարտութեամբ, ուրեմըն պաշտէ զԱստուած, և անկեղծ եղիր կրօնքիդ մէջ:

3. Ճշմարիտ կրօնքը Աստուծոյ յտուել է:

4. Իսկ Աստուծոյ զատ ուրիշ պաշտպաններ ընդունողները կրսեն «մենք զանոնք կը պաշտենք միայն անոր համար որ մեզ Աստուծոյ մօտեցնեն»: Աստուած պիտի վճռէ անոնց վէճերու առարկայի մասին:

5. Աստուած չառաջնորդեր ստախօսը եւ անհաւատը:

6. Եթէ Աստուած ուզէր որդի ունենայ, իր ըստեղծածներէ ուզածը ընտրած կ'ըլլար Բայց անոր փառքը անկէ շատ գերիվեր է, նա միակ և հղօր է:

7. Աստուած ստեղծեց երկինքը ու երկիրը ճշմարիտ նախապէս: Նա գիշերը ցերեկի վրայ կը գըլորէ և ցերեկը գիշերի վրայ նա հնազանդեցուց արեւը և լուսինը, թէ մին և թէ միւսը իրենց շրջանը կը բոլորեն մինչև որոշեալ ժամանակը: Չէ՞ որ նա Հղօր և ներող է:

8. Նա ձեզ ստեղծեց մէկ անհատէ մը, որմէ առաւ յետոյ իր բնկերուհին: Չեզի տուաւ ութ զոյգ անասուններ, նա ձեզ կ'ստեղծէ ձեր մայրերու արգանդներուն մէջ, ձեզ մէկ կազմէ միւս կազմի փոխելով կրեք խաւերու մէջ: Նա է ձեր Տէր Աստու-

ւածը, անորն է թագաւորութիւնը: Անկէ ուրիշ աստուած չկայ, ուրեմն ինչու երես կը դարձնէք անկէ:

9. Եթէ դուք ապերախտ էք, նա բաւական հարուստ է ձեզմէ վաղ անցնելու համար: Բայց իր ծառաներուն ապերախտութիւնը անոր անհաճոյ է, նա կուզէ որ դուք երախտագէտ ըլլալք: Բեռնաւորւած մը չպիտի տանի ուրիշի բեռը: Դուք ամէնքդ պիտի վերադառնաք ձեր Տիրոջը, և նա ձեզ ցոյց պիտի տայ ձեր գործերը:

10. Վասնզի նա գիտէ ձեր սրտերուն մէջ եղածը:

11. Երբ մարդուս չարիք պատահի, կազազակէ իր Տիրոջ և անոր կը դառնայ, Բայց Աստուած անոր ողորմելու պէս, կը մոռնայ իր առջի աղօթքը եւ Աստուծոյ նմաններ կը շինէ. ուրիշներ մոլորեցնելու համար: Ըսէ՛ «յնպէսէ՛ մարդուն», «ժամանակ մը վայելէ քու ապերախտութիւնդ բայց խօր մը կրակէ պիտի ձգուիս»:

12. Այն բարեպաշտ մարդը որ գիշերը Աստուծոյ հաղօթէ երկրպագեալ կամ յոտնկայս, որ ակնկալուէ հանդերձեալ կեանքին և Աստուծոյ ողորմութեանը միթէ անբարիշի նման պիտի համարուի: Ըսէ՛, «Գիտցողները ու չգիտցողները միթէ միեւնոյն եղանակաւ պիտի ընդունին»: Այս մասին միայն խելացիները կը մտածեն:

13. Դու ըսէ՛, «ո՛վ իմ հաւատացեալ ծառաներ, վախցէք ձեր Տիրոջմէ: Որոնք որ բարիք կընեն այս աշխարհի մէջ լաւ վարձատրութիւն պիտի ստանան»: Տիրոջը երկիրը ընդարձակ է, համբերողները իրենց վարձքը պիտի ընդունին անհաշիւ:

14. Ըսէ՛, «ինձ հրամայուեցաւ անկեղծ կրօնքով պաշտել զԱստուած, ես հրամանը ընդունեցի որ միւս յիմներու առաջինը ըլլամ»:

15. Ըսէ՛, «Եթէ արեւը չհնազանդիմ, կը վախնամ մեծ օրուան պատիմէն»:



31. Դու պիտի մեռնիս, ով Մահաճոյ, և անոնք ալ պիտի մեռնին :

32. Յետոյ յարութեան օրը պիտի վիճիք Աստուծոյ առջև :

33. Եւ ով աւելի չար է քան այն, որ սուտ մը կը հնարէ Աստուծոյ մասին, և որ սուտ համարած է ճշմարտութիւնը երբ որ իրեն յայտնուեցաւ : Չէ՞ որ գեհննը անհաւատներուն վերապահուած բնակավայրըն է :

34. Ով որ ճշմարտութիւնը կը բերէ, և ով որ անոր կը հաւատայ, երկուքն ալ երկիրը զանք են :

35. Անոնք Աստուծոյ քով պիտի գտնեն ինչ որ ցանկան : Այսպէս պիտի ըլլայ վարձատրութիւնը բարեգործներուն :

36. Աստուած պիտի ջնջէ անոնց չարագործութիւնները, և պիտի վարձատրէ զանոնք իրենց լաւագոյն գործերուն համար :

37. Միայն Աստուած բաւական չէ՞ իր ծառան պաշտպանելու : Անհաւատները կը ջանան քեզ վախցնել իրենց կուռքերու անունով, բայց այն որ Աստուած մոլորեցուցած է, այլևս առաջնորդ չպիտի գտնէ :

38. Աստուծոյ առաջնորդածը ո՞վ կրնայ մոլորեցընել : Չէ՞ որ Աստուած հզօր և վրէժխնդիր է :

39. Եթէ անոնց հարցնես թէ ով ստեղծած է երկինքը ու երկիրը, պիտի պատասխանեն, «Աստուած» : Ըսէ անոնց, «Եթէ Աստուած ուզեր ինձ չարիք հասցնել, կը խորհիք որ ձեր պաշտած աստուածները պիտի կրնային զիս ազատել, և եթէ Աստուած ինձ բարիք ուզէր, անոնք կրնային զայն արգելել : Ըսէ՛, «Աստուած բաւական է ինձ, մարդիկ միայն Աստուծոյ պէտք է վստահին» :

40. Ըսէ՛, «Ո՞վ իմ ժողովուրդս, կրցածիդ պէս վարուէ, ես ալ կը վարուիմ, և պիտի տեսնենք,

41. Թէ մեզմէ ո՞վ պիտի կրէ նախատալի պատիժ, որ մշտապէս պիտի ըլլայ :

42. Գեղ զրկեցինք գիրքը մարդոց փրկութեան համար և լուրջ նպատակով մը : Արդ, ուղիղ ճամբուն հետեւողը յօգուտ իրեն ըրած կրլայ : Իսկ ով որ կը մոլորի իրեն ի վնաս ըրած կըլլայ : Դու անոնց համար պատասխանատու չես :

43. Աստուած կ'ընդունէ հոգիները մահուան ատեն : կրնդունէ նաև անոնց հոգիները, որոնք կը քնանան առանց մեռնելու. նա կը պահէ մահու վրձարւածներու հոգիները, և ետ կը դարձնէ միւսները որոշ պայմանաժամի մէջ : Ասոր մէջ որոշ նշաններ կան խորհողներու համար :

44. Մի գուցէ անհասկնալիքը Աստուծմէ զատ բարխօսներ ընդունին : Ըսէ՛, «Չէ՞ որ այդ աստուածները բան մը չունին և բան մը չեն հաճկնար» :

45. Ըսէ՛ անոնց խարխիստութիւնը միմիայն Աստուծոյ հաճութեան վերապահեալ է, երկնից ու երկրի թագաւորութիւնը անորն է. դուք մոլորդ անոր առջև պիտի հանուիք» :

46. Երբ միակ Աստուծոյ անունը յիշուի, հանգիւրդեալ կեանքին չհաւատացող մարդոց սրտերը կ'ահաբեկին Բայց եթէ բացի Աստուծմէ անոնց պաշտածները յիշուին, անոնք կու բախանան :

47. Ըսէ՛, «Ո՞վ Աստուած իմ, արարիչն երկնից և երկրի. դու որ գիտես տեսանելի և անտեսանելի բաները, դու պիտի դատես քու ծառաներուդ վէճերը :»

48. Եթէ անբարիշտները ունենային աշխարհի մէջ բոլոր եղածը և նոյնչափ ալ աւելի, անոնք պիտի տային յարութեան օրը ինքզինքնին պատիժէ

ազատուելու համար: Բայց այն ատեն պիտի տեսնէին Աստուծոյ կողմէ անանկ բաներ որ չէին երեւակայեր:

49. Անոնց գէշ գործերը պիտի երեւան անոնց, և ծաղրածնին պիտի պաշարէ զանոնք ամէն կողմէ:

50. Մարդուն եթէ չարիք մը հասնի մեզ կաղաչէ, բայց երբ անոր հասնի մեր շնորհը, կըսէ, «իմ գիտութեանս շնորհիւ ստացայ այդ»: Սակայն այդ Աստուծոյ մէկ փորձն է, բայց մարդոց շատերը չեն գիտեր:

51. Այնպէս կը խօսէին անոնց նախնիքներն այլ բայց ի՞նչ բանի ծառայեց անոնց ջանքը:

52. Անոնց գործած ոճիրները իրենց վրայ ինկան, ասոնց ալ (Մէռէցիներուն) ոճիրները պիտի իյնան իրենց վրայ, անոնք չպիտի կրնան Աստուծոյ դէմ յաղթանակել:

53. Ձեռն գիտեր որ Աստուած լիարուսն սնունդ կուտայ որու որ ուղէ կամ քիչ կուտայ: Ասոր մէջ հաւատացողներուն համար նշաններ կան:

54. Ըսէ, «Ո՛վ իմ ծառաներս, դուք որ անիրաւ վարուած էք ձեր անձին դէմ, մի յուսահատիք ատուածային ողորմութենէն, վասնզի Աստուած կը ներէ բոլոր մեղքերը, նա է ներողը և ողորմածը»:

55. «Գարձէք ուրեմն Աստուծոյ, և յանձնուեցէք բոլորովին անոր պատիժը ձեզ հասնելէ առաջ, եթէ ոչ օգնութիւն չպիտի դասէք»:

56. «Աստուծոյ ձեզ յայտնած լաւ հրամաններուն հետեւեցէք՝ յանկարծ ձեզ հասնելէ առաջ պատիժը, որուն չէք սպասեր»:

57. «Եւ նախ քան հոգիին ազաղակելը, թէ «վա՛յ ինձ, որ Աստուծոյ հանդէպ յանցաւոր գտնուած եմ, և ծաղրած եմ ճշմարտութեանը»:

58. Նախ քան ազաղակելը «եթէ Աստուած զիս առաջնորդէր, ես երկիւղածներէն կըլլայի»:

59. Նախ քան ազաղակելը ի տես պտտո՞ւոյ, «Ա՛հ, եթէ երկէր վերադարձուէի, բարիք կը գործէի»:

60. Ո՛հ. — Ընդ նշանները սակայն քեզ երեւացին, և դու զանոնք սուտ համարեցիր, դու գտող և ապերախտ եղար:

61. Յարութեան օրը՝ որոնք որ ստած են Աստուծոյ դէմ, սե դէմք պիտի ունենան. Միթէ դժուարը չէ՞ գոողներուն բնակավայրը:

62. Աստուած պիտի ազատէ երկիւղածները և զանոնք ապանով տեղ մը պիտի մտցնէ. անոնց ոչ վնաս պիտի հասնի, և ոչ ալ պիտի տխրին:

63. Աստուած ամէն բանի ստեղծիչն է, նա կը խնամէ բոլորը, երկնից և երկրի բանալիները անոր քով են: Որոնք որ չեն հաւատար իր նշաններուն, անոնք ճշմարիտ թշուառներ են:

64. Ըսէ՛, «Ինձ կը հրամայէ՞ք որ Աստուծմէ զտառուրիչը պաշտեմ, ով ազգէտներ»:

65. Արդէն յայտնուած է քիչ և քեզ մէ առաջիններուն, թէ ձեր գործերը ի զոր պիտի ըլլան եթէ կոպտաշտ էք, և թէ թշուառներ պիտի ըլլաք:

66. Այլևս զԱստուած պաշտէ, եւ երախտագէտ եղիր:

67. Բայց անոնք չեն գիտեր Աստուծոյ արժէքը բոտ արժանօրէն: Յարութեան օրը ամբողջ աշխարհը անոր ձեռքին մէջ միայն տի մը փոշի պիտի ըլլայ, և երկինքները գլանիքի մը պէս պիտի փաթուին անոր սջ ձեռքին մէջ: Փա՛ռք անոր, նա խիստ բարձր է այն չաստուածներէն զորս անոր կրնկերացընեն:

68. Փոզը պիտի հնչէ, և բացի Աստուծոյ կամեցածներէն, երկինքի մէջ և երկրի վրայ բոլոր զըսնողները պիտի անշնչանան. յետոյ երկրորդ անգամ ալ պիտի հնչէ, և անա բոլոր էակները պիտի կանդնին ու սպասեն:

69. Եւ երկիրը պիտի լուսաւորուի իր Տիրոջ լուսէն, եւ անա գիրքը կը դրուի, եւ մարգարէները ուսկաները կը կոչուին, եւ արդարութեամբ կարտասանուի դատաւճիռը, եւ բնաւ անիրաւութիւն չըլլար:

70. Եւ ամէն հոգիի իր գործերուն փոխարէնը կը հատուցուի: Մարդոց ըրածները Աստուած աւելի լաւ գիտէ:

71. Անհաւատները խումբ խումբ կը քշուին դէպի գոթոսք, եւ երբ հոն հասնին անոր դռները պիտի բացուին անոնց առջեւ. եւ պահապանները պիտի բռնեն անոնց, «Ձեր մէջէն ընտրուած մարգարէներ չեկան ձեզ կարգալու Տիրոջ հրաշքները, եւ ձեզ զեկուցանելու թէ այսօր անոր առջեւ պիտի հանուիք»: —Այո՛, պիտի պատասխանեն անոնք. բայց արդէն պատժոյ վճիռը պիտի պաշարէ անհաւատները:

72. Կրտսի անոնց, «մաէ՛ք գոթոսքի դռներէն. դուք հոն պիտի մնաք յաւիտեան»: Ի՛նչ սոսկալի է հպարտներու տեղը:

73. Հաւատացեալները պիտի տարուին խումբ խումբ դէպի դրախտ, եւ երբ հոն հասնին, անոր դռները պիտի բացուին անոնց առջեւ, եւ անոնց պահապանները անոնց պիտի բռնեն, «խաղաղութիւնը ձեզ հետ ըլլաւ. դուք առաքինի եղաք, մաէք դրախտը հոն յարիտեան բնակելու համար»:

74. «Փա՛ռք Աստուծոյ, պիտի ըսեն անոնք, նա կատարեց իր խոստումները, եւ նա ձեզ ժառանգութիւն տուած էր երկիրը, որպէսզի յետոյ կարենանք բնակիլ դրախտին մէջ ուր որ ուզենք: Ո՛րքան գեւեղեցիկ է բարեգործներու վարձքը»:

75. Պիտի տեսնես հրեշտակները շրջանակ կազմած գահին շուրջը՝ անոնք Տիրոջը փառքը պիտի օրհներգեն: Դատաւճիռը պիտի արտասանուի արդարու-

թեամբ, եւ պիտի ըսուի, «Փա՛ռք Աստուծոյ, տիեզերքի տիրոջ»:



Խ. Գ Լ Ո Ի Խ

(ՍՈՒԻԷԹ ԻՒԼ-ՄՈՒՄԻՆ)

Մէքէական, ութսուն հինգ պատգամ

Յանուն Աստուծոյ գթածի և ողորմածի

1. Հ. Մ. Գուրանին յայտնութիւնը կուգայ հօօր եւ իմաստուն Աստուծմէ,

2. Որ մեղքերը ներող, զղջումը ընդունող եւ խիստ պատժող է,

3. Երկայնամիտ է. անկէ զառ Աստուած չկայ, ամէն բանի վախճանը նա է:

4. Միայն անհաւատներն են, որ վէճ կը յարուցանեն Աստուծոյ նշաններու մասին. բայց անոնց յաջողութիւնները այս երկիրներու մէջ քեզ թող չըշփոթեցնէ:

5. Անոնցմէ առաջ Նոյի ժողովուրդը զանի ստախոս համարեց. անոնցմէ յետոյ ուրիշներ այլ անպէտ ըրին: Ամէն մէկ ժողովուրդ իր մարգարէներու գէմ գաւեր կը նիւթէր, եւ կուգէր բռնութեամբ արգելել եւ ստութեամբ կը վիճէին ճշմարտութիւնը խափանելու համար. բայց բոլորը ես պատժեցի. եւ տեսէք թէ ինչպէս եղած է իմ պատիժը:

6. Այսպէս իրականացաւ քու Տիրոջ վճիռը անհաւատներուն գէմ. անոնք կրակին պիտի մատնուին:

7. Որոնք որ գահը կը կրեն եւ որոնք որ զայն

կը չըջագատեն. Տիրոջ փառքը կ'օրհնեիրդեն՝ անոնք կը հաւատան եւ անկէ ներում կը խնդրեն հաւատացելոց համար, ըսելով. «Տէ՛ր, դու կը յովանդակես յոգորմու թիւնը եւ զիտութիւնը. ներէ անոնց քեզ կը վերագառնան եւ քու ճամբուդ կը հեանին. ազատէ զանոնք բոցերու պատիժէն»:

8. «Տէ՛ր, զանոնք եղէմի գրախտները մտցուր. գոր խոստացած ես անոնց. եւ իրենց ծնողքնեբուն, կիներուն եւ իրենց զաւակներուն որ բարիք կը գործեն: Դու ես Հղօրը եւ իմաստունը»:

9. «Պաշտպանէ զանոնք գէշ գործերէ: Ով որ պահպանուի գէշ գործերու գէժ, դու անոր գթացած պիտի ըլլաս», եւ այդ անհուն երջանկութիւն մըն է:

10. Անհաւատները պիտի լսեն այն օրը ձայն մը որ իրենց կ' գոչէ, «Աստուծոյ ատելութիւնը ձեզ գէժ աւելի մեծ է քան ձերինը իրարու գէժ. դուք երբ որ հաւատքի հրաւիրուեցաք, չհաւատացիք»:

11. «Տէ՛ր, պիտի պատասխանեն անոնք դու մեզ երկու անգամ մեղացիք եւ երկու անգամ կննդանացուցիր: Կը խոստովանինք մեր մեղքերը: Արդեօք միջոց մը չկա՞յ հոսկէ ելլելու»:

12. Ահա ինչ որ դուք պիտի կրէք այն պատճառաւ է, որ չհաւատացիք երբ ձեզ միակ Աստուածը քարոզուեցաւ, բայց հաւատացիք երբ անոր աստուածընկերներ արուեցաւ: Մակայն բարձրադոյն վճիռը կը պատկանի բարձր եւ մեծ Աստուծոյն:

13. Նա է որ ձեզ ցոյց կուտայ իր հրաշքները. ձեզ սնունդ կը դրկէ երկինքէն. բայց միայն անոր վերագործողը կրնայ հասկնալ:

14. Ուրեմն մաքուր եւ անկեղծ կրօնքով ազօթեցէք Աստուծոյ, թէեւ անհաւատներուն անհաճոյ ըլլայ:

15. Անոր աստիճանները բարձր են, զահին տէրե-

է. իր կամքովը միայն կը զրկէ իր հոգին իր ծառաներուն որուն որ հաճի, զեկուցանելու համար զաստատանի օրը:

16. Այն օրը ճարտէ՛լ դուրս պիտի ելլեն իրենց զերեզմաններէն, եւ անոնց գործերէն եւ ոչ մին Աստուծմէ ծածուկ չպիտի ըլլայ: Այն օրը ո՞րոնք պիտի ըլլայ բարձրագոյն զօրութիւնը: — Միակ եւ հզօր Աստուծոյն:

17. Այն օրը ամէն հոգի հատուցում պիտի ստանայ բառ իւր գործոց: Այն օրը երբէք անիրաւութիւն. Աստուած չուտ կը տեսնէ հաշիւները:

18. Զգուշացուր զանոնք զաստատանի օրուան մասին, երբ սրտերնին կոկորդիլուն հասնելով խեղդուելու վրայ պիտի ըլլան:

19. Զարագործները չպիտի ունենան ոչ բարեկամ ոչ բարեխօս որ ընդունուի:

20. Աստուած կը ճանչնայ նենդաւոր աչքերը եւ ինչ որ սրտերը կը ծածկեն:

21. Աստուած կը դատէ արդարութեամբ. իսկ անհաւատներուն իբր աստուած կանչածները ոչինչ չեն կարող դատել. վասնզի միայն Աստուած կը յօէ ու կը տեսնէ բոլորը:

22. Անոնք չեն ճամբորդած այս երկիրներուն մէջ. չեն տեսած թէ ինչ եղած է վախճանը անոնցմէ առջի ժողովուրդներուն: Այն ժողովուրդները անոնցմէ աւելի կարժէին իրենց գօրութիւնով եւ իրենց թողած շնորհքով այս երկրի մէջ. բայց Աստուած պատժեց զանոնք իրենց մեղքերուն համար. եւ ոչ ինչ կարող չեղաւ զանոնք պաշտպանել Աստուծոյ գէժ:

23. Վասնզի մարգարէներ եկան անոնց մէջ յայտնի շշաններով. իսկ անոնք չհաւատացին. Աստուած ալ պատժեց զանոնք: Նա խիստ է իր պատիժներուն մէջ:

24. Մովսէսը զրկեցինք մեր հրաշքներով եւ յայտնի զօրութեամբ մը,

25. Փարաւոնի եւ Համանի եւ Գարունի քովբայց անոնք ըսին, «սա վհուկ է, ստախօս է»

26. Երբ նա անոնց եկաւ մեր կողմէ ճշմարտութիւն բերելով, գոչեցին անոնք. «սպաննեցէք անոր հետեւողները. խնայեցէք անոնց կիներուն միայն» բայց անհաւատներու նենգութիւնները վրիպեցան:

27. Փարաւոն ըսաւ, «ինձ ձգեցէք Մովսէսը րապաններ, թող նա իր Աստուածը կանչէ կը վախնամ որ ձեզ ձեր կրօնքէն չդարձնէ, կամ երկրին մէջ խռովութիւն չսերմանէ»:

28. Մովսէս պատասխանեց, «ես կապաւինիմ իմ եւ ձեր Տիրոջը՝ ընդ դէմ գառողներուն որոնք չեն հաւատար գառաստանի օրուան:

29. Փարաւոնի ընտանիքէն հաւատացեալ մարդ մը՝ որ կը պանէր իր հաւատքը, ըսաւ անոնց, «պիտի սպաննէ՞ք մարդ մը. «ես Աստուած կը պաշտեմ, որ իմ տէրս է» ըսելուն համար, եւ որ որոշ ապացոյց ներով կուգար: Եթէն օրհանրայէ, իր խաբուութիւնը իր վրայ է ծանրիանայ. եթէ ճշմարիտ է, ձեր վրայ կիջեցնէ իր սպաննացած դժբախտութիւններէ մին. վասն զի Աստուած շտապնորդեր օրինազանչները ու ստախօսները»

30. «Ո՛վ իմ ժողովուրդ, կը՛եր նա այսօր զօրութիւնը ձեր ձեռքն է այս երկրին մէջ. բայց մեզ ո՛վ պիտի պաշտպանէ Աստուծոյ բարկութեան դէմ եթէ մեր վրայ հասնի»: Փարաւոն ըսաւ, ես միայն իմ տեսութիւնս ձեզ կը յայտնեմ, եւ ձեզ ուղիղ ճամբուն կառաջնորդեմ»:

31. Հաւատացեալ մարդը այն ատեն ըսաւ անոնց, «Ո՛վ իմ ժողովուրդ, ես կը վախնամ ձեր մասին այն օրէն՝ որ կը նմանի դաշնակից խումբերու օրին,

32. «Ինչպէս Նոյի, Ատի եւ Սամուտի ժողովուրդներու օրին,

33. եւ անոնց յաջորդողներուն: Սակայն Աստուած չուզեր ճնշել իր ծառաները»:

34. «Ո՛վ իմ ժողովուրդ, կը վախնամ ձեզ համար այն օրէն յորում մարդիկ զիրար պիտի կանչեն (Էբրա՛ մօբսսոսնէլ)»:

35. Այն օրէն յորում ճամբէն ետ կը դարձուիք. եւ մէկը ձեզ չպիտի պաշտպանէ այնատեն Աստուծոյ դէմ. վասնզի այն որ Աստուած կը մոլորեցնէ, ո՛վ պիտի առաջնորդէ զանի:

36. Արդէն Յովսէփը եկած էր ձեր մէջ, յայտնի նշաններով. բայց չդադրեցաք կասկածելէ անոնց ճշմարտութեան մասին մինչև որ մեռաւ: Այն ատեն կըսէիք, «Աստուած անոր մահէն յետոյ մարգարէ չը զրկեր այլևս»: Աստուած անա այսպէս կը մոլորեցնէ օրինազանցները եւ կասկածողները:

37. Անոնք՝ որ Աստուծոյ հրաշքներուն մասին կը վիճին առանց փաստի, Աստուծոյ եւ հաւատացեալներու բուն ատելութեան կը մատնուին: Աստուած կնիք մը կը զարնէ ամեն հպարտ եւ բռնախալ մարդոց սրտին վրայ:

38. Փարաւոն ըսան Համանին, «ինձ պալատ մը շինէ որ կարենամ հասնիլ այն տեղերը.

39. «Երկիրքի այն տեղերը, եւ ելլեմ Մովսէսի Աստուծոյն քովը, վասնզի ես զանի ստախօս կը կարծեմ»:

40. Այսպէս Փարաւոնի շար գործերը իր աչքին լաւ երևացին. նա մերժուեցաւ լաւ ճամբէն, եւ Փարաւոնի նենգութիւնները պարագ ելան:

41. Հաւատացեալ մարդը ըսաւ անոնց, ո՛վ ժողովուրդս, իմ խորհուրդիս հետեւեցէք. ես ձեզ ուղիղ ճամբէն պիտի առաջնորդեմ:

42. «Ո՛վ իմ ժողովուրդ. այս աշխարհի կեանքը միայն անցաւոր վայելք է. իսկ միւս աշխարհինը մշտական բնակարանն է»:

43. «Ով որ չարիք ընէ փոխարէնը միայն չարիք պիտի ընդունի. ով որ բարիք ըրած ըլլայ. արու թէ էգ, և հաւատացած, ընտրեալներէն պիտի ըլլայ. որոնք դրախտ պիտի մտնեն և պիտի վայելեն աւ մէն բարիք առանց հաշուոյ»:

44. «Ո՛վ ժողովուրդս, ես ձեզի փրկութեան կը հրաւիրեմ, և դուք զիս կրակի կը հրաւիրէք»:

45. «Ինձ կառաջարկէք չհաւատայ Աստուծոյ, և անոր ընկերացնել աստուածներ զորս ես բնաւ չեմ գիտեր. իսկ ես ձեզ կը հրաւիրեմ Հօգորին և Ողորմածին»:

46. «Արդարև, այն աստուածները՝ որոնց կը հրաւիրէք զիս, անարեան են ազօթելու թէ այս աշխարհի և թէ միւսին մէջ, վասն զի մանք բոլորս Աստուծոյ պիտի դառնանք և օրինազանցները կրակը պիտի նետուին»:

47. «Դուք այն ատեն պիտի յիշէք իմ խօսքերս. իսկ ես Աստուծոյ կապաւինիմ, որ կը տեսնէ մարգիկը»:

48. Աստուած պանգանեց այս մարդը անոր դէմ նիւթուած չար խորհուրդներէն, և Փարաւոնի ընտանիքը ենթարկուեցաւ իրիս պատիժներու:

49. Անոնք իրիկուն առաւ կրակի մէջ կը նետուին. և այն օրը յորում կը հասնի վերջն ժամը, կը բսուի. «Ո՛վ փարաւոնի ընտանիք, գացէք պատիժներու ամենասոսկայիին»:

50. Կրակին մէջ երբ մեղաւորները իրարու հետ պիտի վիճին, տիարները պիտի ըսին հպարտներուն «Սենք աշխարհի մէջ ձեզ հետեւեցանք. հիմա դուք կրնա՞ք սա կրակէն բան մը պակսեցնել»:

51. Եւ հպարտները պիտի պատասխանեն, «Մենք ամէնքս ալ ա՛յա հոս ենք. Աստուած իր վճիռը տըւած է մարդոց մասին»:

52. Կրակին մէջ եզօյները պիտի ըսեն դժօխքի պահապաններուն, «Ենդրեցէք ձեր մէկ Տիրոջմէ որ օր մը թեթեւցնէ մեր տանջանքը»:

53. Անոնք ալ պիտի պատասխանեն, «Դուք չունեցա՞ք մարգարէներ, որոնք ձեզ ցոյց տուած ըլլան յայտնի նշաններ»: Անոնք ալ «այո՛», կը պատասխանեն. — Ուրեմն զանոնք կանչեցէք ձեր օգնութեան: Բայց անհաւատներու ալազակը պիտի կորսուի ձամբուն մէջ:

54. Անտարակոյս մանք պիտի օգնենք մեր մարգարէներուն և հանդերձեալին հաւատացողներուն այն օրը երբ յարութիւն պիտի առնեն վկաները:

55. Այն օրը չարերուն պատճառաբանութիւնները անօգուտ են. անոնցն է անէծքը և սոսկալի բնակավայրը:

56. Մովսէսին տուինք «ձեզ առաջնորդութիւնը, և Իսրայէլի որդւոց տուինք Գիբքը, իբր առաջնորդութիւն և իբր խրատ խելացի մարդոց համար»:

57. Համբերէ՛ ուրեմն, «Չ Մահամէք», վասն զի Աստուծոյ խոստումները բուն ճշմարտութիւնն են. քու մեղքերուդ համար անկէ ներում խնդրէ, և փառաբանէ՛ քու Տէրդ իրիկուն և առաւօտ»:

58. Անոնք որ Աստուծոյ նշաններու մասին կը վիճին առանց փաստի մը վրայ յենելու, ուրեմն ի՞նչ ունին սրտերուն մէջ, եթէ ոչ հպարտութիւն: Բայց անոնք չպիտի հասնին նպատակնուն: Դու, Մահամէք Աստուծոյ ապաւինէ՛, վասնզի նա կը լսէ ու կը տեսնէ բոլորը:

59. Երկնից և երկրի ստեղծումը աւելի մեծ գործ մըն է քան մարդկային սերունդի ստեղծումը. բայց

շատ մարդիկ չեն գիտեր:

60. Կոյրը և տեսնող մարդը հաւասար չեն. ոչ ալ բարեգործը ու չարագործը: Քիչ մարդիկ կը խորհին ասոնք:

61. Վերջին ժամը պիտի հասնի. ատոր կասկած չկայ, և սակայն մարդոց շատերը չեն հաւատար անոր:

62. Աստուած ըսաւ, «կանչեցէք զիս, և ես ձեզ պիտի պատասխանեմ, վասնզի որոնք որ հպարտութեամբ կը մերժեն զիս պաշտել, պիտի մտնեն դրժոխք խայտառակարար:

63. Աստուած է որ կուտայ ձեզ գիշերը ձեր հանգիստին համար, և օրը՝ որ լոյս կուտայ: Արդարև, Աստուած բարութեամբ լի է մարդոց հանդէպ, բայց անոնցմէ շատերը երախտագէտ չեն անոր:

64. Այն Աստուածը ձեր Տէրն է, ստեղծիչը ամէն բաներու. անկէ զատ ուրիշ Աստուած չկայ. ուրեմն ի՞նչու ետ կը քաշուիք անկէ:

65. Այսպէս ետ կը քաշուէին անոնք, որոնք կուրանային իր հրաշքները:

66. Աստուած է որ ձեզ տուած է երկիրը բնակելու համար և երկիրքը շէնքի համար. նա է որ ձեզ կազմած է, և ի՞նչ հրաշալի կազմ տուած է ձեզ, նա է որ ձեզ կը սնուցանէ իր պարզեւնեքով. այս Աստուածը ձեր Տէրն է: Օրհնեալ ըլլայ Աստուած, Տէրն տիեզերաց:

67. Նա է կենդանի Աստուածը, անկէ զատ Աստուած չկայ: Ուրեմն ազօթեցէք անոր մաքուր կրօնքով մը: Փառք Աստուծոյ, տիրոջն տիեզերաց:

68. Ըսէ՛, «Աստուծմէ զատ ձեր ազօթած աստուածները պաշտել ինձ արգիւտած է անկէ ի վեր որ յայտնի ապացոյցներ եկան ինձ Աստուծոյ կողմէ: Հրաման ընդունած եմ ապաւինելու տիեզերքի Տիրոջ:

69. Նա է որ ձեզ ստեղծած է հողէ, յետոյ կաթիլ մը սերմէ, թանցրացած արիւնէ, յետոյ ձեզ ծնեցուցած է մանուկներ, չափահաս ըրած է, և յետոյ ձեզ կը ծերացնէ: Այնպէս ալ կը մեռցնէ ձեզմէ ոմանք աւելի առաջ, հասնելէ առաջ որոշեալ պայմանաժամը. այս ամէնը ձեզ հասկցնելու համար:

70. Նա է որ կապրեցնէ և կը մեռցնէ. երբ նա բան մը որոշէ, կըսէ, «եղի՛ր» ու կըլլայ:

71. Տեսա՛ր Աստուծոյ մասին վիճաբանողները. ի՞նչ եղան անոնք:

72. Որոնք որ գիրքը և մեր մարգարէներուն վրատահացուած յայտնութիւնները սուտ կը համարեն, օր մը պիտի ճանչնան ճշմամտութիւնը:

73. Այն ատեն անոնք անուրները վզերնին և շըղ թայեալ պիտի քաշուին դժոխքին մէջ, յետոյ կրակին ճարակ տրուին:

74. Յայնժամ կ'ըսուի անոնց, «ճւր են ձեր Աստուծոյ ընկերացուցածները», Անոնք պիտի ըսեն, «մեզմէ հեռացան. թէև մենք ոչինչ չէինք պաշտեր»: Ահա այսպէս Աստուած կը մոլորեցնէ անհաւատները:

75. Ահա փոխարինութիւնը երկրի վրայ ձեր ըրած անիրաւ լրբութեան և չափազանց ուրախութեանց:

76. Մտէ՛ք գեհննի դռներէն ներս, հոն յաւիտեան մնալու համար: Ի՞նչ սոսկալի է ամբարտաւաններու բնակարանը:

77. Համբերէ՛, «Չ. Մահաճեալ. Աստուծոյ խոստումները նոյն ինքն ճշմարտութիւնն են: Կա՛մ մենք քեզ տեսնել կուտանք մաս մը մեր սպառնացած պատիժներէն, կա՛մ քեզ կը մեռցնենք աւելի առաջ և անոնք մեզ կը վերադառնան:

78. Քեզմէ առաջ ալ մենք մարգարէներ զրկած էինք. անոնց մէկ քանիին պատմութիւնը քեզ պատմած ենք, և հաս ուրիշներ ալ որոնց մասին բան

մը չենք ըսած քեզ: Մարգարէի մը չպատկանիր ՚ը-  
բաշք մը գործել. եթէ Աստուած չթողարէ. բայց  
եբք Աստուծոյ հրամանը հասնի, այն ատեն ճշմար  
տութեամբ կը կատարուի. և ունայն համարողները  
կը կորսուին:

79. Աստուած է որ ձեզ համար ստեղծած է անա-  
սուններ. որը ձեզ հեծնալու համար և որն ալ ձեր  
սնունդին համար:

80. Գուք անկէ շատ օգուտներ կը քաղէք. անոնց  
միջոցաւ կիրականացնէք ձեր սրտերու բազմաւնջնե-  
րը. կը հստիք անասուններու և նաւերու վրայ:

81 Աստուած ձեզ կը ցուցնէ իր նշանները, որը  
կրնաք ուրանալ Աստուծոյ նշաններէն:

82. Միթէ անոնք չեն ճամբորդած երկրի մէջ.  
չեն նկատած թէ ինչ է եղած վախճանը իրենց նա-  
խորդներուն, որոնք աւելի բազմաթիւ և նշանաւոր  
էին իրենց գորութեամբը և չէնքիրովը որ կը մնան  
երկրի մէջ: Բայց անոնց գործերը իրենց սէլ օգուտ  
չունեցան:

83. Եբք որ մորգարէները երեցան անոնց մէջ  
յայտնի փաստերով, անոնք իրենց ունեցած զրտու-  
թեամբը կը նպարտանային. բայց իրենց ծաղրած  
պարէշը ամէն կողմէ պաշարեց զանոնք:

84. Եւ եբք կրեցին մեր պատուհասները, սկսան  
ազազակիլ. «անա կը հաւատանք միտի Աստուծոյն  
և ա՛յ բնաւ չենք հաւատար չաստուածներուն զորս  
անոր կ'ընկերացնէինք»:

85. Բայց անոնց յանկարծակի հաւատքը օգուտ  
չունեցաւ. երբ արդէն մեր պատուհասը տեսած էին:  
Այսպէս է Աստուծոյ հաստատ սովորութիւնը մարդոց  
հանդէպ: Այսպէս կը կորսուին անհաւատները:

ԽԱ. Գ Լ Ո Ի Խ

Մէֆֆէական. յիսուն եւ չորս պատգամ

Յանուն Աստուծոյ գթածի ողորմածի

1. Հ. Մ. Ահաւասիկ Գթածն և Ողորմածին կողմէ  
զրկուած Գիրքը:

2. Գիրք մը որուն պատգամները յստակօրէն բա-  
ցատրուած են և կը կարեն արարերէն Գուրան մը  
խելք ունեցող մարդոց համար:

3. Գիրք մը որ կաւետէ և կ'սպասնայ. բայց շա-  
տուրը անկէ կը հեռանան և չեն ուզեր լսել:

4. Անոնք կրան. «մեր սրտերը գոցուած են քու  
հրաւիրած բանիդ դէմ. և մեր ականջները ծանրա-  
ցած են, վարուէ քու ուղշէդ պէս», մենք ալ կը վար  
ւինք մեր ուղշէն պէս:

5. Ըսէ՛ անոնց, «Այո՛, ես ալ ձեզի պէս մարդ  
մըն եմ, որուն յայտնուած է թէ ձեր Աստուածը մի-  
ակ Աստուածն է. ուրեմն ուղղակի անոր դիմեցէք.  
և անկէ ներում խնդրեցէք: Վա՛յ անոնց որոնք ու-  
րէշ սարսափներ կ'ընկերացնեն Աստուծոյ.

6. «Եւ անոնց որոնք ողորմութիւն չեն տար եւ  
հուրանան հանգերձեալ աշխարհը»:

7. Իսկ անոնք որ կը հաւատան և առաքինու-  
թիւն կրնան, պիտի ընդունին յախտենական վար-  
ձատրութիւն:

8. Ըսէ՛ անոնց, «Ձե՛ք հաւատար անոր որ աշ-  
խարհը ստեղծած է երկու օրուան մէջ, անոր նմա-  
նութիւններ պիտի չինէ՛ք, նա է անկերքի տէրը:

9. Նա լեռներ դրաւ անոր մակերեսին վրայ զայն  
օրհնեց և սահմանեց չորս օրուան մէջ որոշ քանա-  
կութեամբ զանազան սնունդները՝ հաւասարապէս  
բոլոր կնիքողներուն համար:

10. Յետոյ զնաց բազմելու երկինքը, որ ծուխբէրոյ մըն էր, և ըսաւ երկնից ու երկրի, «ինձ եկէ՛ք կամովին կամ ակամայ»: Անոնք ըսին, «ձեզ կուգանք կամովին»:

11. Այն ատեն կարգադրեց եօթը երկինքները երկու օրուան մէջ, և իւրաքանչիւր երկինքի պաշտօնները յայտնեց: Եւ մենք զարգարնցինք երէշի ամէնամօտ երկինքը լուսատուներով և պահապաններ կարգեցինք: Այսպէս եղաւ օրոշումը Հզօրին և իմաստունին:

12. Եթէ չլսելու համար հեռանան, ըսէ անոնց, «ես ձեզ կ'սպառնամ փոթորիկ մը նման Ատի և Սամուտի փոթորիկին»:

13. Երբ մարգարէները կուգային ամէն կողմէ անոնց մէջ ու կ'ըսէին անոնց. «Միմիայն Աստուած պաշտեցէք», անոնք կը պատասխանէին, «եթէ Աստուած ուզեր մեզ կըծնափոխել, հրեշտակներ կը զրկէր մեզ, մենք քու պաշտօնիդ, չենք հաւատար»:

14. Ատ անիրաւօրէն հպարտացաւ երկրի վրայ, և իր զաւակները կ'ըսէին, «Ուրեմն մեզմէ ո՞վ աւելի զօրաւոր է»: Միթէ չեն մտածեր որ զիրենք ստեղծող Աստուածը իրենցմէ աւելի զօրաւոր է: Եւ կ'ուրանային մեր նշանները:

15. Անոնց դէմ զոկեցինք բուռն մտրիկ մը դըժբազդ օրերու մէջ. պատժելու համար զանոնք այս աշխարհի մէջ ըրած գէշութիւններուն առթիւ. միւ աշխարհի պատիժը աւելի նուաստացուցիչ է. անոնք մէկը չպիտի գտնեն որ անկէ ազատէ զիրենք:

16. Առաջ Սամուտը առաջնորդեցինք բայց անիհա նախամեծար համարեցին կոյր վարժուները: Խայտառակուզ պատժոյ փոթորիկ մը եկաւ անոր ժողովուրդին վրայ ի պատիժ անոնց գործքերուն:

17. Ազատեցինք հաւատացեալները և երկիւղած-

ները:

18. Զեկուցէ՛ք անոնց այն օրը յորում Աստուծոյ թշնամիները պիտի հաւաքուին կրակին առջև և խմբովին ներս պիտի քլուին:

19. Մինչ անոնք կրակին առջև կը գանուին, անոնց ականջները, աչքերը և կաշիները անոնց դէմ պիտի վկայեն իրենց գործքերուն մասին:

20. Անոնք իրենց կաշիներուն պիտի ըսեն, «Ի՞նչու համար մեզ դէմ կը վկայէք, և անոնց կաշիները պիտի պատասխանեն. «Աստուած մեզ խօսիչ կուտայ. այն Աստուած, որ ամէն բան կը խօսեցնէ. նա ձեզ ստեղծած է անգամ մը, և դուք անոր պիտի վերադառնաք»:

21. Իսկ դուք չէք կրնար ծածկել որ ձեր ականջները, ձեր աչքերը և ձեր կաշիները չվկայեն ձեզ դէմ, և դուք երեւակայեցիք թէ Աստուած չպիտի գիտնայ ձեր գործերու մեծ մասը:

22. Այս ձեր սխալ կարծիքն էր օրով օրորուեցաք որ ձեզ աւերեց, և ահա կորսուեցաք:

23. Եթէ անոնք կրակին համբերեն, այն անոնց ընազատեցին կըլլայ, և եթէ Աստուծմէ ներում խնդրեն, այլևս չպիտի լսուի թախանձանքնին:

24. Մե՛ք անոնց անբաժանելի ընկերներ տուած էինք, ոյոնք կը պատրաստեն բոլորը անոնց այքին: Վճիռը կատարուեցաւ նախորդ սերունդներուն վրայ մտրդ թէ դե. անոնց վրայ ալ պիտի կատարուի և անոնք պիտի կորսուին:

25. Անհաւատները կ'ըսեն, «Գուրանին ընթերցանութեան ականջ մի դնէ՛ք կամ բարձրաձայն խօսեցէ՛ք որ չլսուի զայն կարգացողներու ձայնը»:

26. Մենք անհաւատները սոսկալի պատժոյ պիտի ենթարկենք:

27. Անոնց պիտի հատուցանենք իրենց ամէնագէշ գործերուն համաձայն:

28. Աստուծոյ թշնամիներուն հատուցումը կրակըն է. անոնց յաւիտենական բնակավայրը այն պիտի ըլլայ, վասնզի մեր նշանները մերժեցին:

29. Անոնք պիտի աղաղակեն այն ատեն, «Տէր, ցոյց տուր մեզ զմեզ մոլորեցնող մարդերը կամ դեւերը. զանոնք մեր ռաքերուն տակ պիտի առնենք որ նաւաստանան»:

30. Իսկ անոնք որ կ'ըսեն, «մեր Տէրը Աստուած է» և զէպի անոր կուզուին, կ'ընդունին հրեշտակներու այցելութիւնը, որոնք կըսեն անոնց, «մի վախնաք բանէ մը, և մի արամիք. այլ վայելեցէք դրախտը որ ձեզ խոստացուած է»:

31. «Անք ձեր պաշտպաններն ենք այս աշխարհի մէջ և հանդերձեալին մէջ. դուք հոն պիտի ունենաք ինչ որ փափաքիք և ինչ որ խնդրէք»:

32. «Իբր շնորհ ներողին և ողորմածին:

33. Ո՛վ աւելի գեղեցիկ լեզու կը գործածէ քան այն որ Աստուծոյ կաղօթէ, որ բարիք կը գործէ և կ'ըսէ, «ես միւսիմ եմ»:

34. Բարութիւնը և չարութիւնը չեն կրնար զոյգ ընթանալ: Չարութեան տեղ բարիք ըրէ, և պիտի տեսնես թշնամիդ պաշտպանի և բարեկամի փոխուած:

35. Բայց համբերողէն զատ և առանձնաշնորհեալէն զատ ուրիշ մէկը չպիտի հասնի այս կատարելութեան:

36. Եթէ ստանան քեզ չարին հրապուրէ, դու Աստուծոյ ապաւինէ, վասնզի նա կը լսէ ու գիտէ ամէնը:

37. Անոր նշաններէն են գիշերը և ցերեկը, արևը և լուսինը, ուրեմն երկրպագութիւն մի՛ ընէք ոչ

արևին առջև և ոչ լուսինին, այլ այն Աստուծոյն առջև որ զանոնք ստեղծած է, եթէ կուզէք անոր ծառայել:

38. Եթէ անոնք ամբարտաւանան, Աստուծոյ քով եղողները գիշեր ու ցերեկ անոր փառքը կ'օրհնաբանեն անդադար:

39. Նաև անոր նշաններէն ժին է երկրի թափումիւր, որ կը շարժի ու կածի անմիջապէս երբ երկինքէս ջուր կը զրկենք: Նա որ զայն կը կենդանացնէ, պիտի կենդանացնէ նաև մեռեալները, վասնզի նա ամենակարող է:

40. Որոնք որ մեր նշանները կ'անտրգեն չպիտի կրնան մեզմէ ծածկուիլ: Կրակի՛ դատապարտումը յաւ է, թէ այն որ ամենայն ապահովութեամբ պիտի ներկայանայ յարութեան օրը: Ինչոր կուզէք, ըրէք, Աստուած կը տեսնէ ձեր գործերը:

41. Որոնք որ չեն հաւատար իրենց տրուած գրքերն յանգուոր են. այս թանկագին գիրք մըն է:

42. Ստութիւնը անոր չպիտի հասնի որ կողմ ալ գայ, սա իմաստունին և Փառաւորեալին յայտնութիւնն է:

43. Քեշ բան մը չըսուիր որ ըսուած չըլլայ քեզմէ առաջի մարգարէիերուն. բայց Աստուած՝ որ կը ներէ, սոսկալի պատիժներ ևս կը սահմանէ:

44. Եթէ մենք Գուրանը օտար լեզուով ընէինք, պիտի ըսէին, «գէթ այս քերքին պատգամները յրատակ ու բացայայտ ըլլային, օտար լեզուով են և ժողովուրդը արար է»: Դու ըսէ՛, սա առաջնորդութիւն է դէպի ճշմարտութիւնը, և դարման մը հաւատացողներուն. իսկ անհաւատներուն ակամջները ծանրացած են ու չեն տեսներ. անոնք կը նմանին անոնց որոնք հեռուէն կը կանչուին:

45. Արդէն գիրքը Մովսէսին տուած էինք, բայց

անոնք վէճ յարուցին անոր մասին: Եթէ Տիրոջ խօսքը սուտ ըլլաւ ըստ ըստ ըլլաւ, անձի պէտք անոնց մէջ գատաստան պիտի ըլլար, վասնզի անոնք կասկածանքի մէջ էին այս գիրքի մասին:

46. Ով որ բարիք գործէ յօգուտ իրեն կը գործէ, ով որ ալ չարիք գործէ ի մնաս իրեն կը գործէ: և Աստուած անիրաւութիւն չընէր իր ծառաներուն:

47. Վերջին ժամի մասին միայն նա գիտէ, ոչ մէկ պտուղ չծիր իր կորիչէն. ոչ մէկին չյղանար ու չծնիր առանց անոր գիտութեան: Այն օրը Աստուած անոնց պիտի ըսէ, «Ո՛ւր են իմ ընկերները, այն աստուածները զորս ինձ կընկերացնէիք»: անոնք պիտի պատասխանեն, «մենք չենք լսած ատանկ բան մեր մէջ»:

48. Այն աստուածները որոնց կԱզօթէին առաջ, պիտի առայտանան անոնց աչքերէն. անոնք պիտի համոզուին այլևս իրենց համար ապաստան չկայ:

49. Մարդ չդադրիր Աստուծոյ բարիք խնդրելէ. քայց երբ անոր դժբաղդութիւն հասնի, անա կը յուսահատի ու կը կասկածի:

50. Եթէ անոր չարիք հասնելէն յետոյ, անոր ճաշակել տանք մեր ողորմածութեան բարիքները, ան կը ըսէ, «այս իմն էր. չեմ կարծեր որ վերջին ժամը հասնի, և եթէ Աստուծոյ վերադառնամ, նա ինձ լաւ վարձք կը վերապահէ»: Անհաւատներուն պիտի ճանչցնենք իրենց գործերը, և զանոնք խիստ պիտի մը պիտի ենթարկենք:

51. Երբ մարդու մը շնորհ կընենք, նա կը հեռանայ, մեզմէ կը խուսափի և երբ դժբաղդութիւն մը հասնի անոր, անիկա մեզ երկար ազօթք մը կուզուի:

52. Էսէ՛ անոնց, «ինչ կը մտածէք, եթէ Գուրանը Աստուծոյ կու գայ և դուք չհաւատաք անոր, ըսէք ինձ, կա՞յ մարդ մը աւելի մոլորեալ քան այն որ երբ չար երկպառակութիւն մը կը հանէ:

53. Մենք մեր նշանները պիտի ցոյց տանք աշխարհի զանազան մասերուն վրայ և անոնց վրայ ալ մինչև որ անոնց պարզուի թէ Գուրանը ճշմարտութիւն մըն է: Ինչ չբաւեր քու Տիրոջ վկայութիւնը:

54. Անոնք չէ՞ որ կը կասկածին Աստուծոյ առջև հանուելու մասին. Չէ՞ որ Աստուած ամէն բան պարփակող է:



ԽԲ. Գ Լ Ո Ի Խ

Մէքէական, յիսուն երեք պատգամ

Յանուն Աստուծոյ գթածի և ողորմածի

1. Հ. Մ. Ա. Ս. Գ. Հոգի և Իմաստուն Աստուածը այսպէս յայտնութիւն կուտայ քեզ ինչպէս արւած էր առաջիններուն:

2. Երկնից մէջ և երկրի վրայ բոլոր նշանները անոր կը պատկանին. նա է Ամէնաբարձրը և Մեծը:

3. Քիչ կը մնայ որ երկինք պատուին իրենց կամարէն, չընչտախները անոր փառքը կօրններգեն և ներում կը խնդրեն աշխարհի բնակչաց համար: Արդարև Աստուած ներող և ողորմած է:

4. Աստուած կը հսկէ անոնց՝ որոնք անկէ ուրիշ պաշտպաններ կընդունին: Եւ դու անոնց գործերուն պատասխանատու չես.

5. Այսպէս ալ մենք քեզ յայտնութիւն տուինք արարելէն գիրքով մը. որպէսզի խրատես մայրաքաղաքը (Մէքքէ) և չըջախյ ժողովուրդները, և խրատես գատաստանի օրուան մասին, որուն համար կասկած չկայ, երբ մարդոց մէկ մասը դրախտին մէջ պիտի ըլլայ և միւս մասը դժոխքին մէջ:

6. Եթէ Աստուած ուղեր միայն նշանակած մէկ ազգ-  
կը հաստատէր, բայց ոմանց պիտի տայ տեղ մը իր  
ողորմութեան մէջ, մինչգեոս չարերը ոչ պաշտպան  
պիտի ունենան և ոչ օգնական:

7. Միթէ անոնք անկէ զատ պաշտպաններ պիտի  
ընդունին: Բայց ճշմարիտ պաշտպանը Աստուած է.  
նա կապրեցնէ և նա կը մեռցնէ և ամենակորոզ է:

8. Ինչ որ սլ ըլլայ անոնց վիճարանութեանց ա-  
ռարկան, վճիռը միայն Աստուծոյն է: Այս Աստու-  
ածը իր Տէրս է: Ես անոր ազաւինած եմ և անոր  
պիտի վերապաճնամ:

9. Նա է երկինքը ու երկիրը ստեղծողը, որ ձեր-  
տեսակէն զոյգեր (կենէր) ստեղծած է, ինչպէս որ ա-  
նասուններէն ալ ստեղծած է, զոյգեր այս միջոցաւ  
ձեզ կաճեցնէ: Բան մը անոր չը նմանիր, նա կը լսէ  
ու կը տեսնէ բոլորը:

10. Երկինքին և երկրին բանալիները անորն են.  
իր ուղածին իր պարգևները կուտայ յիարուուն կամ  
չափաւոր, վասնզի նա գիտէ ամէնը:

11. Նա ձեզ համար հաստատած է կրօնք մը, զոր  
յանձնարարած է Նոյին, այն քիչ լաւտնուած կրօնքն  
է, ո՛վ Մահամբար այն է որ յանձնարարած է ինք Ար-  
քրահամին, Մովսէսին, Յիսուսին, անոնց բնիով,  
«այս կրօնքը հաստատ պահեցէք, հատուածներու մի-  
բաժնուիք»: Ծանր եկաւ կռապաշտներուն:

12. Այն կրօնքը, որուն դու կը հրաւիրես զանոնք:  
Աստուած կրնարէ այս կրօնքին համար իր ուղածը և  
անոր կառայնորդէ ով որ Աստուծոյ կը վերադառ-  
նայ:

13. Անոնք գիտութիւնը ընդունելէ ի վեր միայն-  
հատուածներու բաժնուած են նախանձուութեամբ:  
Եթէ Աստուծոյ խօսքը՝ որ կը վճռէ պատիժը կան-  
խորոչ ժամանակի մը համար, արտասանուած չըլլար

կանխաւ, անոնց մէջ դատաստան կ'ըլլար, և ար-  
քարե անոնք՝ որ անոնցմէ յետոյ ժառանգաձ են գիր-  
քը, կասկածի մէջ են անոր մասին:

14. Ուրեմն դու զանոնք հրաւիրէ այս կրօնքին,  
և ուղիղ վարուէ ինչպէս որ հրաման ստացած ես,  
մի համակերպիր բնաւ անոնց բայձանքին, և լսէ  
անոնց, «ես կը հաւատամ այն գիրքին զոր Աստուած  
ինձ յայտնած է. հրաման ստացած եմ ձեր մէջ ար-  
դարութեամբ դատելու: Աստուած իմ և ձեր Տէրն է.  
իմ գործերս ինձ և ձեր գործերը ձեզ կը վերաբերին  
մեր և ձեր միջև վէճ չկայ: Աստուած մեզ պիտի  
միացնէ բոլորս, վասն զի ամէն բանի վախճանը նա է:

15. Իսկ անոնք որ Աստուծոյ մասին կը վիճին  
անոր հպատակելէ յետոյ, իրենց իրաւունքը կը կոր-  
սընցնեն: Անոնց խիստ պատիժ կայ:

16. Աստուած ինք զրկած է գիրքը ու կշիռը: Ե  
դու ինչ գրեաս, կարելի է որ վերջին ժամը մօտ  
ըլլայ:

17. Որոնք որ չեն հաւատար, կուղեն որ այն շուտ  
գայ, որոնք որ կը հաւատան կը սոսկան անկէ. վա-  
նչի գրեան թէ ճշմարիտ է: Վերջին ժամուան մա-  
սին կասկածողները որչափ մոլորեալ են:

18. Աստուած բարութեամբ լի է իր ծառաներուն  
հանդէպ. Նա հզօր և զօրաւոր է:

19. Ով որ կուղէ մշակել հանգերձեալ կեանքի  
գաշար, մենք զայն կ'աճեցնենք՝ ով որ կը բաղձայ  
մշակել այս աշխարհի գաշար, կստանայ զայն, բայց  
հանգերձեալին մէջ ոչ մէկ բաժին չունենար:

20. Արդեօք անոնք աստուածընկերներն՝ որ ունին որ  
անոնց կրօնքը դրած ըլլան բան մը, զոր Աստուած  
չթալարէր: Եթէ վճիռը սանձանուած չըլլար, անոնց  
մէջ դատաստան կ'ըլլար արդէն, արդարեւ դառն  
տանջանք կայ չարերուն:

21. Օր իջ պիտի տեճնես որ չարերը կը սոսկան իրենց գործերուն պատճառաւ, և պատիժը պիտի հասնի անոնց, բայց հաւատացողները ու բարեգործները դրախտի պարտէզներուն մէջ պիտի բնակեն. անոնք ու զածինին կունենան իրենց տիրոջ քով այս անձուն շնորհք մըն է:

22. Անա թէ Աստուած ինչ կաւետէ իր հաւատացեալ և բարեգործ ծառաներուն: Ըսէ անոնց, «ես ձեզմէ վարձք չեմ պահանջեր իմ քարոզներուն, այլ միայն սէք դէպի ազգականները: Ով որ բարեգործ մը կատարէ, մենք անոր արժէքը կը բարձրացնէք: Աստուած ներող և երախտագէտ է»:

23. Անոնք պիտի ըսեն, «Աստուծոյ մասին սուտ մը հնարած է»: Սակայն եթէ Աստուած ուզէր, կրնայ կնիք մը դնել քու սրտիդ վրայ, ջնջել սուտը և ճշմարտութիւնը հաստատել իր խօսքերովը: Վասնզի նա գիտէ սրտերու խորը:

24. Ես է որ կրնդունի իր ծառաներու զղումը, որ կը ներէ անոնց մեղքերը: նա գիտէ ինչ որ կընէք:

25. Հաւատացեալներուն ու բարեգործներուն ազաւանքը կընդունի, իր պարգևներով զանոնք կը լեցնէ: Սոսկալի պատիժ վերապահուած է անհաւատներուն:

26. Եթէ Աստուած իր պարգևները առատացնէր մարդոց վրայ, անոնք կ'ըմբոստանային երկրի վրայ. նա իր ուղած չափովը կը պարգևէ անոնց, վասնզի նա տեղեակ է իր ծառաներու վիճակին և չկը տեսնէ զանոնք:

27. Ես է որ անձրև տուաւ երբ մարդիկ յուսահատած էին. նա այսպէս կը տարածէ իր ողորմութիւնը: Ես է Պաշտպանը և Փառաւորեալը:

28. Անոր հրաշքներէն է ստեղծուած երկնից և

երկրի և բարձր անասնոց որոնք տարածուած են երկրի վրայ: նա կարող է զանոնք համախմբել անմիջապէս:

29. Եթէ ձախորդութիւն մը պատահի ձեզ, ձեր ձեռքի գերծերուն պատճառաւ է. և Աստուած կը ներէ շատը:

30. Դուք երկրի վրայ անոր զէմ պայքարողներ չէք, և Աստուծմէ զատ ոչ պաշտպան և ոչ նեղուկ ունիք:

31. Անոր հրաշքներէն մին են սա նաւերը որոնք արագօրէն կը ճեղքեն ալիքները որոնք յեռներու նման կը բարձրանան եթէ ուզէր կը հանդարտեցնէր հողմը նաւերը անշարժ կը մնային ջուրին երեսը. անասոր մէջ նշաններ կան համբերող և երախտագէտ մարդոց համար:

32. Կամ զանոնք կը խորտակէր, բայց նա կը ներէ շատ մեղքեր:

33. Որոնք որ կը վիճին մեր նշաններու մասին, պիտի իմանան որ մը թէ ապաստան չկայ իրենց համար:

34. Այն ամէնը որ դուք ստացած էք միայն առժամանակեայ վայելք մըն է, իսկ ինչ որ Աստուած կը վերապահէ աւելի արժէքաւոր է և աւելի տեւական անոնց համար որոնք կը հաւատան և Աստուծոյ կապաւինին:

35. Որոնք կը զգուշանան մեծ մեղքերէն և չարագործութենէ, որոնք բարկութեան միջոցին կը ներեն:

36. Որոնք կը հնազանդին իրենց Տիրոջ աղօթքը կը կատարեն. Որոնք իրենց հասարակաց գործերը խորհրդակցութեամբ կ'որոշեն, և ողորմութիւն կուտան մեր անոնց տուած ինչքերէն:

37. Որոնք երբ զրկանքի մը հանդիպին, ինքզինքնին կազատեն:

38. Եւ չարիքը նման չարիքով մը կը հատուցաւնեն: Սակայն որ կը ներէ և էը հաշտուի էր հակարէքսքէն հետ, Աստուած կը վարձատրէ զանի, վասն զի նա չարիքի կեղեքիչները:

39. Իսկ իրեն եղած չարիքի մը վրէժը լուծողին զէժ բան մը չկայ:

40. Բայց պատասխանատու են անոնք որոնք ուրիշները կը կեղեքեն և բանութիւն ի գործ կը դնեն և անիրաւութիւն կընեն. ասոնց վերապահուած է դառն տանջանք մը:

41. Համբերատարութիւնը և ներելը կեանքի իմաստութիւնն է:

42. Աստուծոյ մոլորեցուցածը ինչպէս պիտի գտնէ որ ինչ պաշտպան մը: Դու պիտի տեսնես չարերը.

43. Որ պատիժը տեսնելուն, կըսեն, «միջոց չը կայ այլևս աշխարհի վերադառնալու»:

44. Դու զանոնք պիտի տեսնես երբ պատիժի տեղը կը բերուին աչքերնին վար առած ու նուաստացած. անոնք աչքերուն տակէն պիտի նային և հաւտտալով պիտի ըսեն. «Ահա դժբաղդները որոնք թէ՛ ինքզինքնին և թէ՛ իրենց ընտանիքները կորսըցուցին: Յարութեան օրը չէ՞ որ չարերը յաւիտեանական տանջանքի պիտի մատնուին»:

45. Ինչու համար անոնք Աստուծմէ զատ պաշտպաններ փնտոեցին: Աստուծոյ մոլորեցուցածը ինչպէս պիտի գտնէ ճամբան:

46. Ուրեմն նազանդեցէ՛ք Աստուծոյ չհասած վերջին օրը որ ետ չդառնար երբ Աստուած կը բերէ Այն օրը դու ք չպիտի ունենաք ապաստան մը: Զը պիտի կրնաք ուրանալ ձեր գործերը:

47. Եթէ անոնք կը մերժեն, դու անոնց պահապանը չես. Ո՛վ Մահամբար: Դու միայն խրատելու պաշտօն ունիս: Եթէ մարդուն բարիք մ'ընենք:

կուրախանայ, բայց իր գործերուն հետեանքով երբ անոր չարիք մը հասնի. կը հայնոյէ:

48. Երկնից և երկրի թագաւորութիւնը Աստուծոյ կը պատկանի, նա ինչ որ ուզէ կ'ստեղծէ. օմանց ազջիկներ կուտայ օմանց մանչ զաւակներ:

49. Ուրիշներուն ալ երկու սեռէ զաւակներ կուտայ, մանչեր և ազջիկներ. նաև ուզածը ամուլ կը ընէ: Նա գիտուն և զօրաւոր է:

50. Մարդուն տրուած չէ որ Աստուած անոր հետ խօսի. այդ կըլլայ միայն յայտնութեամբ, կամ վարագոյրի մը ետեւէ:

51. Կամ մարգարէ մը կը զրկէ. որպէս զի ասիկա յայտնէ Աստուծոյ կամքը:

52. Այսպէս մենք յայտնեցինք քեզ մեր հոգին մեր հրամանով. քեզ որ չէիր գիտեր թէ ինչ է գիրքը կամ հաւատքը: Մենք զայն լոյս մ'ըրինք. որուն միջոցաւ կառաջնորդենք մեր ծառաներէն անոնք որ ուզենք: Դուն ալ զանոնք առաջնորդէ ուղիղ ճամբան:

53. Դէպի Աստուծոյ ճամբան, որուն կը պատկանի ինչ որ կայ երկնից մէջ և երկրի վրայ: Զէ՞ որ ամէն բան Աստուծոյ պիտի վերադառնայ:



ԽԳ. Գ Լ Ո Ի Խ

Մէքէական, ութուն ինը պատգամ

Յանուն Աստուծոյ գթածի ողորմածի

- 1. Հ. Մ. Կէրքնո՛ւմ յայտնի գիրքով,
- 2. Մենք զայն զրկեցինք արար լեզուաւ. որպէս զի հասկնաք:

3 Անոր բնագիրը մեր քով գտնուող մայր գիրքին մէջն է. այն բարձր է, իմաստութեամբ լի:

4 Հեռացնենք ձեզմէ խրատը. քանի որ դուք օրինազանց ժողովուրդ մըն էք:

5. Որքան մարգարէներ զրկած ենք դէպի նախկին ժողովուրդները:

6. Ոչ մէկ մարգարէ չերևցաւ անոնց մէջ որ ծարղած չըլլան:

7 Մենք ջնջեցինք անոնցմէ (Մէքէցիներէն) աւելի զօրաւոր ժողովուրդներ, չին մարդոց օրինակը հոն է:

8. Եթէ անոնց հարցնես թէ ո՞վ է ստեղծողը երկինքը ու երկիրը. կը պատասխանեն, «Հզօրը և իմաստունն է որ գանոնք ստեղծածէ»:

9. «Որ երկիրը ձեզ համար անկողին չի նեց, և ճամբաներ գծեց որ առաջնորդուիք:

10. «Որ երկինքէն ջուր կիջեցնէ որոչ չափով. այս ջուրով կը վերակենդանացնենք մեռած երկիրը: Այսպէս ալ դուք պիտի վերակենդանացուիք:

11. Որ ստեղծած է ձեզ համար զոյգեր ամէն տեսակէ, ձեզ վրանին կրելու համար ստեղծած է անասուններ և հաստատած է նաւեր:

12. Երբ անոնց կռնակին կը նստիք մարմինն իդ հաւասարակշռած, ձեր Տիրոջ պարզեւ յիշեցէք և ըսէք, «Փա՛ռք անոր որ մեզ հնազանդեցուցած է այս բաները, եթէ ոչ մենք չէինք կրնար գլուխ ելլել»:

13. Մենք մեր Տիրոջ պիտի վերադառնանք»:

14. Սակայն անոնք անոր վերագրեցին զաւակներ անոր ծառաներուն մէջէն. Իրաւի մարդիկ ապաշնորհ են:

15. Աստուած միթէ աղջիկներ առած է իր և ստեղծածներէն ձեզ իրն որդիներ ընտրած է:

16. Եւ սակայն, երբ անոնցմէ մէկին աւետուի էակի մը ծնունդի որ Աստուծոյ կը վերագրէ. անոր

դէմքը կը մթագնի և խեղդուածի պէս կըլլայ:

17. Աստուծոյ էջը զատի պիտի նկատեն էակ մը որ զարգերու մէջ կը մեծնայ, և որ միշտ անխառ վէճի մէջ է:

18. Անոնք իբր կիներ կը համարեն հրեշտակները որոնք Աստուծոյ ծառաներն են: Անոնց ստեղծմանը միթէ ականատե՞ս եղած են: Անոնց վկայութիւնը պիտի գրուի և անոնց պիտի հարցուի որ մը այդ մասին:

19. «Եթէ Աստուած ուզած ըլլար, կըսէն անոնք մենք զանոնք չպիտի պաշտէինք: Անոնք բան մը չեն զիտեր այդ մասին, և միայն սուտեր կը խօսին:

20. Միթէ մենք անոնց ո՛րեւէ վաւերագրօր տուած ենք զոր իրենց քով հաստատ կը բռնեն:

21. Բնաւ երբէք: — Բայց անոնք կըսեն, «մենք մեր հայրերը այս կրօնքին մէջ գտանք, մենք ալ անոնց ճամբէն կը քալենք:

22. Քեզմէ առաջ ալ այսպէս եղաւ. ամէն անգամ որ խրատիչ մը զրկեցինք քաղաք մը, անոր հարուստ բնակիչները կրտէին, «մենք մեր հայրերը այս կրօնքին հետեւող գտանք, մենք ալ անոնց ճամբէն պիտի քալենք»:

23. Ըսէ՛ անոնց՝ «Եթէ ես ձեր հայրերու կրօնքէն աւելի ուղիղը բերե՞մ»: Անոնք պիտի պատասխանեն «ո՛չ, մենք չեն հաւատար քու բերածիդ»:

24. Այդ ժողովուրդներէն մենք վրէժ առինք: Տես ինչ եղած է վախճանը անոնց որոնք մեր մարգարէները ստախօս համարած են:

25. Յիշէ թէ Աբրահամ ինչ բաւ իր հօրը եւ իր ժողովուրդին, «ես անպարտ իմ ձեր կրօնքի մասին»:

26. «Ես կը պաշտեմ միայն զիս ստեղծողը. նա զիս ուղիղ ճամբան պիտի առաջնորդէ»:

27. Նս (Աբրահամ) այս խօսքը ըսաւ իբր յաւիտե-

նական խօսք մը իրմէ լեռնոյ իր վաւակներուն մը-  
նայու, որպէսզի անոնք անխախտ Աստուծոյ զառնան :

28. Ես թողազրեցի անոնց (Կապուլար Արաքսէրուն)  
եւ իրենց հայրերուն աշխարհային բարիքներ վայե-  
լիլ մինչեւ որ ճշմարտութիւնը եւ ճշմարիտ մարդա-  
քէն զան իրենց մէջ :

29. Բայց երբ ճշմարտ թիւեր անոնց երեւցաւ, ա-  
զազակեցին «սա կախարհութիւն է միայն, չինք  
հաւատար ասոր» :

30. Անոնք կրսեն «Եթէ Գուրանը յայտնուած  
ըլլար երկու քաղաքներէն (Մէսէէ եւ Մէսքէն) զէթ  
մէկ պատկասելի մարդու մը, կրնայինք անոր հա-  
ւատալ» :

31. Անոնք միթէ աստուածային պարզեւ բաշխող-  
նե՞ր են : Մենք ենք որ անոնց ապրուստ կը բաշ-  
խենք այս աշխարհի մէջ. մենք անոնց մէկը միւսէն  
բարձր կընենք, այնպէս որ մէկը միւսը ծստայ բրո-  
նէ : Բայց Աստուծոյ ողորմութիւնը աւելի կարժէ  
քան անոնց հաւաքած ի՛չքերը :

32. Եթէ բոլոր մարդիկ մէկ կրօնքի ժողովուրդ  
չըլլային, մենք Աստուծոյ չհաւատացողներուն տուած  
կըլլայինք արծաթէ տանիքներ իրենց տուներուն եւ  
սանդուղներ հոն ելլելու համար :

33. Եւ արծաթեայ դուռներ ու նստարաններ ըստ  
հաճոյս բազմելու համար :

34. Եւ ոսկեղէն չարդեր : Այս բոլորը միայն վա-  
զանցուկ վայելքն է ալս կեանքի, վասնզի հանդերձ-  
եալ կեանքը քու Տէրդ վերապահած է երկիւղած-  
ներուն :

35. Ով որ Ամենաբարձրեային խրատներէն ետ  
քաշուել ուզէ, մենք անոր սասանայ մը կ'ընկերա-  
ցնենք չղթայով. ան անոր անբաժանելի ընկերը  
կըլլայ :

36. Սորանաները կը մոլորեցնեն ճարտէլը Աստուծոյ  
ճամբէն, եւ սակայն ասոնք կը կարծեն թէ ուղիղ  
ճամբուն կը հետեւին :

37. Մինչեւ այն վայրկեանը, երբ մեր առջեւ հաս-  
նի, մարզը պիտի ազազակէ, «Ա՛ն երանի թէ ի՞մ եւ  
սատանային մէջ արեւելքէն արեւմուտքի հեռաւո-  
րութիւնը ըլլար» : Ի՛նչ զզուելի ընկեր է սատանան :

38. Բայց այս աւազուած ձեզ ոչ մէկ օգուտ կը բե-  
րէ այն օրը. եթէ մեղաւոր եղած էք, պատժին մաս-  
նակից պիտի ըլլաք :

39. Կրնա՞ս լսել տալ խուլին եւ առաջնորդել կոյ-  
րն եւ յայտնապէս մօլոր ճամբու մէջ եղողը :

40. Եթէ ձեզ հեռացնենք անոնց մէջէն իսկ, վը-  
րէժ պիտի լուծենք անոնցմէ :

41. Եթէ քեզ տեսնել տանք մեր սպառնալիքնե-  
րուն իրագործու՞մը, մեր իշխանութեան տակ պիտի  
պահենք զանոնք :

42. Քեզ եղած յայտնութեան վրայ հաստատ կեցիք  
վասնզի ուղիղ ճամբուն մէջն ես :

43. Գուրանը քեզ եւ քու ժողովուրդիդ համար  
խրատ է : Օր մը քեզմէ հաշիւ պիտի պահանջուի  
անոր մասին :

44. Հարցուր քեզմէ առաջ մեր զրկած մարդարէ-  
նիւրուն, թէ մենք Աստուծմէ զատ անոնց ուրիշ ա-  
տուածներ ցոյց տուած ենք պաշտելու համար :

45. Մովսէսը զրկեցինք մեր նշաններով Փարաւ-  
ոնին եւ իր թագաւորութեան մեծամեծներուն «Ես  
զրկուած եմ, ըսաւ նա անոնց, տիեզերքի տիրոջմէ» :

46. Երբ նա անոնց ներկայացաւ մեր նշաններով,  
զանի ծաղրեցին :

47. Այն բոլոր հրաշքները որ մենք ցոյց տուինք  
անոնց, մէկը միւսէն աւելի ապշեցուցիչ էին : Եւ  
զանոնք տանջանքներու ենթարկեցինք որ թերեւս  
ապաշխարհեն :

48. Անգամ մը անոնք ըսին Մովսէսին, «Ո՛վ կա-  
խարդ, խնդրէ դու տիրոջմէն որ խոստացածը կատա-  
րէ, վասն զի անա մենք ուղիղ ճամբուն կը հետե-  
ւինք»:

49. Եւ հաղիւ զանոնք զժբարդութենէ ազատե-  
ցինք, տնա անոնք իրենց յանձնատու թիւնները  
դրժեցին:

50. Փարաւոն սա խօսքերը ծանուցանել տուաւ  
իր ժողովուրդի, Եգիպտոսի թագաւորութիւնը եւ սա-  
գնաւորը որ իմ ոտքերու տակէն կը հոսին միթէ ի-  
մըս չեն չէ՞ք տեսներ այդ:

51. «Ես աւելի զօրաւոր չե՞մ սա անարդ մարդէն:

52. «Որ հաղիւ կրնայ խօսքը հասկցնել:

53. «Եթէ գէթ անոր վրայ ասկէ ապարանջան-  
ներ տեսնուէին, կամ հրեշտակներ անոյ ընկերա-  
նային»:

54. Փարաւոն իր ազդեցութեանն [ենթարկեց իր  
ժողովուրդը, եւ անոնք անոր հնազանդեցան,  
վասնզի անպիտան ժողովուրդ էին:]

55. Բայց երբ մեզ բարկացուցին, վրէժ լուծե-  
ցինք անոնցմէ, եւ ընկղմեցինք բոլորը:

56. Մենք զայն օրինակ եւ լառակ ըրինք իրենց  
յաջորդներուն:

57. Եթէ քու ժողովուրդիդ օրինակ բերուի Մարիա-  
մի որդի Յիսուսը, անոնք չեն ուզեր լանոր մասին  
խօսուիլը լսել:

58. Եւ կըսեն, «Մեր աստուածները՝ աւելի կար-  
ժե՞ն Մարիամ որդիէն, թէ Մարիամի որդին աւելի  
կարժէ մեր աստուածներէն»: Անոնք այս հարցումը  
կընեն միայն վէճ յարուցանելու մտքով: Ստուգիւ  
անոնք կուտասէր են:

59. Յիսուսը միայն ծառայ մըն է զօր մեք չնոր.  
հօգը լեցուցած ենք, եւ զօր մենք իբր օրինակ բե-

րինք Իսրայէլի որդոց:

60. Եթէ ուզէինք, ձեզմէ ալ հրեշտակներ կընէ-  
ինք երկրի վրայ, ձեզ յաջորդելու համար:

61. Նա նշանը պիտի ըլլայ վերջին ժամու մօտե-  
նալուն ուրեմն անոր մասին մի կատկածիք. ինձ հե-  
տեւեցէք, վասնզի այս է ուղիղ ճամբան:

62. Որ ստանան քեզ չհանէ ճամբէն, վասնզի ա-  
նիկա ձօր որոշ իշխամին է:

63. Երբ Յիսուս մարդոց մէջ եկաւ նշաններով,  
բաւ. «Ձեզ կը բերեմ իմաստութիւնը. եւ կուզամ  
ձեզ բացատրելու ձեր վէճերու առարկան: Ուստի  
վախեցէք Աստուծմէ եւ հնազանդեցէք ինձ»:

64. «Աստուած իմ Տէրս է եւ ձերինը, պաշտեցէք  
զանի. անա այս է ուղիղ ճամբան»:

65. Չանազան կուսակցութիւններ սկսան իրարու  
հետ վիճարանիլ: Վայ չարերուն դասն պիտիօր օրը:

66. Անոնք ի՞նչ կ'սպասեն: Միթէ այն ժամը որ  
անոնց յանկարժ պիտի հասնի երբ անոր չէին ըս-  
պասէր:

67. Այնօրը էն մտերիմ բարեկամները լծչնամինք  
պիտի ըլլան. իսկ հաւատացեալներուն ասոր հա-  
կատակը պիտի ըլլայ:

68. Ո՛վ մեր ծառաները, այն օրը դուք բանէ մը  
երկիւղ չպիտի ունենաք. երբէք չպիտի տխրիք:

69. Ձեզ՝ որ կը հաւատաք իմ նշաններու, ձեզ,  
սր միւսկիմներ եղած էք, պիտի ըսուի:

70. «Մտէ՛ք զբախտին մէջ, զուք եւ ձեր կիները,  
վախեցէք ուրախութեամբ.»

71. Անոնց շուրջը պիտի մատուակեն օսկի-  
ալներու եւ գաւաթներու մէջ լեցուած բաներ, որոնց  
այնչափ կը բաղձան եւ որոնք աչքի հաճոյ են:

72. Ահաւասիկ այն զբախտը զոր պիտի ժառան,  
գէք ձեր գործերուն ի գին:

73. Դուք հոն առատ պտուղներ պիտի ունենաք, զորս պիտի ուտէք :

74. Իսկ մեզաւորները յաւիտենապէս պիտի կրեն զժոխքի տանջանքը :

75. Անոնց տանջանքը չպիտի մեղմանայ, անոնք ազատելու յոյսէն բոլորովն զուրկ են :

76. Մենք չէ որ անոնց անիրաւութիւն ըրինք, ալ իրենք իրենց անիրաւեցին :

77. Անոնք պիտի աղաղակեն, «Ո՛վ Մալիք, քու Տէրդ վերջ ըր թող զնէ մեր տանջանքներուն :

— Ո՛չ, պիտի պատասխանէ նա, զուք հոն պիտի մնաք :

78. Մենք ձեզի բերենք ճշմարտութիւնը, բայց ձեզմէ չառերը կը հակառակին ճշմարտութեան :

79. Եթէ անհաւատները որոգայթ կը լարեն, մենք ալ անոնց կը լարենք :

80. Միթէ կը կարծեն թէ մենք չենք գիտեր անոնց գաղտնիքը, իրարու ականջի ըսածները : Այո՛, մեր առաքեալները որ անոնց մէջ են բոլորը կը գրեն :

81. Ըսէ՛, «Եթէ Աստուած որդի ունենար, ես առաջինը պիտի ըլլայի զանի պաշտող» :

82. Փա՛ռք երկնից ու երկրի Տիրոջը, Գահին տիրոջ, հե՛ռու անկէ ինչ որ կը վերագրեն անոր :

83. Զգէ անոնք որ ըուսն վիճին եւ խաղան մինչեւ որ զէ՛մ առ դէ՛մ գան այն օրուան, որ խոստացուած է անոնց :

84. Նա է այն որ Աստուած է երկնի մէջ եւ Աստուած է երկրի վրայ : Նա է Գիտուն Իմաստունը :

85. Օրհնեալ ըլլայ նա, որուն կը պատկանին այն բոլորը որ կը գանուին երկնից մէջ, երկրի վրայ, եւ գանոնք բաժնող միջոցին, մէջ միայն նա գիտէ վերջին ժամը, մենք անոր պիտի վերադառնանք :

86. Աստուծմէ գաա որոնց որ կաղթէք, չպիտի

կրնան միջնորդել ի նպատակէ իւր մը միայն նա (\*) պիտի կրնայ, որ ճշմարտութեան վկան է : Անհաւատները գայն պիտի իմանան :

87. Եթէ անոնց հարցնես ըսելով, «Զեզ ո՞վ ստեղծած է», անոնք պիտի ըսեն, «Աստուած» : Աւրեմ ի՞նչու ես կը քաջուին :

88. Աստուած լսեց Մահմե՛տէ՛ սա խօսքերը, «Տէ՛ր իմ ժողովուրդը չը հաւատար, եւ նա պարտախանեց,

89. Ուրեմն, քաջու է անոնցմէ եւ ըսէ անոնց, «խաղաղութիւն» : — Եւ անոնք պիտի իմանան :



### ԽԳ. Գ Լ Ո Ի Խ

(ՍՈՒՐԵԹ ԻԻՏ - ՏԻԻԽԱՆ)

Մէֆէական, յիսուն ինը պատգամ

Յանուն Աստուծոյ գթածի և ողորմածի

1. Հ. Մ. կ'երգնում յայտնի գիրքով,
2. Մենք գայն իջնցուցինք օրհնեալ գիշերուան մը մէջ՝ ուզեցինք մարդիկը խրատել,
3. Գիշերուան մը մէջ, յոյսում օրջուեցաւ ամէն իմաստուն գործ մի առ մի
4. Ըստ մեր հրամանին : Մենք մարգարէներ կը զրկենք
5. Իբր ապացոյց քու Տիրոջ ողորմութեան (նա կիմանայ ու կը լսէ բոլորը) :
6. Երկնից եւ երկրի եւ անոնց մէջ բոլոր գանուածներուն Տիրոջը, եթէ կը հաւատաք անոր :

(\*) Մեկնեմքը ստի՛ Յիսուսը կը հասկնան, որ Կարոջ է միջնորդելու : Ինչն :

7. Անկէ ուրիշ Աստուած չկայ, որ կապրեցնէ ու  
կը մեռցնէ: Նա է ձեր Տէրը եւ ձեր նախահայրերու  
Տէրը:

8. Սակայն անոնք կասկածի մէջ ըլլալով կը  
խաղան:

9. Ոչազիր եղիր այն օրուան, երկինքը ծուխ պի-  
տի արձակէ տեսանելիօրէն:

10. Որ պիտի պաշարէ բոլոր մարդիկը: Այս դառն  
տանջանք պիտի ըլլայ:

11. «Ո՛վ Տէր, պիտի աղաղակեն, մեզմէ ետ առ  
այս պատիժը. մենք հաւատացեալներ ենք»:

12. Ուրկէ խրատուեցան անոնք, արդէն ճշմարիտ  
մարգարէ մը եկաւ անոնց:

13. Եւ անկէ ետ դարձան ըսելով, «Սա կախարդ-  
ներէն ստրված մարդ մըն է»:

14. Եթէ պատիժը քիչ մը թեթեւցնէինք, անոնք  
անհասարակեան պիտի վերադառնային:

15. Այն օրը երբ բուն կերպով յարձակինք, մեր  
վրէժը կանենք:

16. Արդէն անոնցմէ առաջ, փորձեցինք Փարաւոնի  
ժողովուրդը, եւ փառաւոր մարգարէ մը զրկուեցաւ  
այս ժողովուրդին:

17. Կըտէր անոնց, «ձգեցէք որ իմ հետ երթան  
Աստուծոյ ծառաները եւ զէպի ձեզ եկած իմ իրր  
զատահելի մարգարէ»:

18. «Եւ Աստուծմէ վեր մի՛ բարձրանաք. եւ ձեզ  
եկած եմ անվիճելի զօրութեամբ»:

19. «Եթէ զիս քարկոծէք, եւ իմ ու ձեր Տիրոջը  
պիտի ապաւինիմ»:

20. «Եթէ ինձ չէք հաւատար, բաժնուեցէ՛ք ինձմէ»:

21. Նա (Մօլթէ) այն ատեն աղօթեց Աստուծոյ,  
«Այս յանցաւոր ժողովուրդ մըն է» կըսէր:

22. Աստուծոյ ըստ, «Գիշերը ճամբայ ել իմ ծառա-

ներս հետդ առած: Եփեդայեի՛ ձեզ պիտի հետա-  
պընդեն»:

23. Բացուած ծովին ալիքները թո՛ղ, անոնց գուն-  
դը պիտի խեղդուի:

24. Անոնք լքեցին որչափ պարտէզներ եւ ազբիւր-  
ներ:

25. Յանուած դաշտեր եւ փառաւոր բնակարաններ:

26. Նաև զուարճութիւններ. որոնցմով հաճելի  
կանցնէին իրենց կեանքը:

27. Այսպէս եղաւ, բայց մենք զանոնք ժառան-  
գութիւնաւորինք ուրիշ ժողովուրդի մը:

28. Ոչ երկինքը, ոչ ալ երկիրը չլացին անոնց վը-  
րայ, եւ ժամանակ չունեցան:

29. Ազատեցինք Իսրայէլի զաւակները ստրկակաւ-  
տանջանքէն:

30. Փարաւոնի, որ հպարտ ու ծայրայեղ էր:

31. Աշխարհի բոլոր ժողովուրդներու մէջէն գի-  
տութեամբ ընտ, եցինք զանոնք:

32. Անոնց հրաշքներ ցոյց տուինք, որ անոնց հա-  
մար լայանի փորձանք էին:

33. Այս մարդիկը (անհասարկ) կըսեն.

34. «Միմիայն մէկ մաս կայ, առաջինը, եւ յարու-  
թիւն չպիտի առնենք»:

35. «Ուրեմն ետ բերէք մեր հայրերը, եթէ ձեր  
ըսածները ճիշդ են»:

36. Անոնք Թօպպայի ժողովուրդէն, լաւ են,

37. Եւ իրենց նախորդ սերունդներէն: Մենք զա-  
նոնք բնաջնջեցինք, վասնզի յանցաւոր էին:

38. Երկինքը ու երկիրը եւ անոնց մէջ եղածները  
չստեղծեցինք մեզ համար իրր խաղ:

39. Մենք զանոնք ստեղծած ենք ճշմարտութեամբ  
բայց անոնցմէ չատերը չեն գիտեր:

40. Վճռին օրը բոլորին ժամադրութիւն պիտի ըլլայ:

- 41. Այն օրը բարեկամ մը միւս բարեկամին չկրնար օգնել. սպասելիք ոչ մէկ օգնութիւն չպիտի ունենան:
- 42. Միայն օգնութիւն պիտի ըլլայ անոնց որոնց որոնց որ Աստուած գթայ: Նա հզօր և ողորմած է:
- 43. Դարնիի ծառը (չբլբլմաշն)
- 44. Կերակուրը պիտի ըլլայ լանցաւորին:
- 45. Անոնց փորերուն մէջ հալած մետաղի պէս պիտի եռայ:
- 46. Ինչպէս ջուրը կեռայ:
- 47. «Բռնեցէք չարը և ձգեցէք զայն դժոխքի խորը» պիտի ըսուի:
- 48. «Եւ անոր զլխուն վրայ թափեցէք եռացող ջուրի պատիժը:
- 49. Ծաշակէ ասիկա, ով հզօր և փառաւոր(1):
- 50. Ահա այս ձեր կասկածածն է:
- 51. Երկիւղածները ապահով տեղ մը պիտի ըլլան:
- 52. Պարտէզներու և ազրիւրներու մէջ տեղ:
- 53. Մեծաքսէ և սնդուսէ հազուսաներ հազուած, և նստած դէմ-դիմաց:
- 54. Այս՝ «այսպէս պէտէ ըլլայ, և անոնց ընկեր պիտի տանք սե եւ մեծ աչքերով կրննք:
- 55. Անոնք հոն բերել պիտի տան ամեն տեսակ պտուղներ, և պիտի վայելեն ապահովութեամբ:
- 56. Անոնք հոն այլևս չպիտի մեռնին անգամ մը մեռած ըլլալէ յետոյ, Աստուած զանոնք պիտի պահպանէ պատիժներէ:
- 57. Այս Աստուծոյ մէկ շնորհքն է ձեզ, անհուն երջանկութիւն մը:
- 58. Մենք զայն (Գորանը) զիւրահասկնալի բրինձքու լեզուովդ տալով, որ մարդիկ խորհրդածեն:
- 59. Ուրեմն հսկէ, Ո՛վ Մահաճեա, վասն զի անոնք ալ կը հսկին և կը դիտեն զէպտերը:

ԽԵ. Գ Լ Ո Ւ Խ

Մէքէական, երեսուն վեց պատգամ

Յանուն Աստուծոյ գթածի ողորմած

- 1. Հ. Մ. Գիրքին յայտնութիւնը կուգայ հզօր և իմաստուն Աստուծմէ:
- 2. Երկնից մէջ և երկրի վրայ նշաններ կան հաւատացեալներուն համար:
- 3. Չեր ստեղծման մէջ, և երկրի վրայ տարածուած բոլոր կենդանեաց մէջ նշաններ կան հաստատ հաւատացողներուն համար:
- 4. Գիրքումն ու ցերեկուան յաջորդութեան մէջ, Աստուծոյ երկինքէն զրկած բարիքներուն մէջ՝ որոնցմով կը կենդանացնէ մեռեալ երկիրը, և հովերուն տուած ուղղութեան մէջ նշաններ կան խելացի մարդոց համար:
- 5. Ասոնք Աստուծոյ պատգամներն, զորս քեզ կը պատմենք ճշմարտութեամբ, ուրեմն ի՞նչ բանի պիտի հաւատան անհասարկերը, եթէ կը մերժեն զԱստուած և անոր նշանները:
- 6. Վայ այն բոլոր ստախօս սճրագործներուն,
- 7. Որոնք կը լսեն Աստուծոյ պատգամները, և սակայն կը յամառին ամբարտաւանութեան մէջ, իբր թէ չէին լսեր, ուրեմն անոնց դուժէ՞ անողոք պատիժը:
- 8. Եւ երբ անիկայ իմանայ այս պատգամներէն մէկ քանին, կը ծաղրէ: Այս մարդոց խայտառակող տանջանք կայ:
- 9. Անոնց ետեւը դժոխքը կայ, վաստկած ինչքերը անօգուտ պիտի ըլլան. նոյնպէս ալ Աստուծմէ զատ

իրբ պաշտպան ընդունածնին : Մեծ պատիժ մը կսպառ-  
աւէ անոնց :

10. Այսպէս է Աստուծոյ առաջնորդութիւնը Յա-  
ւայի տանջանաց պատիժ պատրաստուած է անոնց  
որոնք չեն հաւատար Աստուծոյ նշաններուն :

11. Աստուած է որ ծովը ձեզ հպատակեցուցած է  
որպէսզի նաւերը ընթանան իր նրամանով, և դուք  
ստանաք Աստուծոյ պարգևները, և երախտագէտ  
ըլլաք անոր :

12. Նա ձեզ հպատակեցուցած է ինչոր կայ երկնից  
մէջ և երկրի վրայ : ամէնը անկէ կուգայ : Ասոր մէջ  
նշաններ կան մտածող մարդոց համար :

13. Ըսէ՛ հաւատացեալներուն որ ներքն անոնց  
որոնք չեն յուսար Աստուծոյ այն օրերուն զորս հաս-  
տատած է մարդիկը վարձատրելու համար ըստ ի-  
րենց գործոց :

14. Վասնզի ով որ բարիք գործէ, իրեն համար  
կը գործէ, ով որ չարիք ընէ, իրեն ի վեաս կընէ :  
Ամէնքդ Աստուծոյ պիտի դառնաք :

15. Մենք տուած ենք Իսրայէլի որդւոց զիրքը .  
իմաստութիւնը և մարդարէկները, մենք անոնց սը-  
նունդի համար տուինք սքանչելի բաներ, և զանոնք  
բարձրացուցինք բոլոր ժողովուրդներէն վեր :

16. Անոնց տուինք մեր նրամաններու յայտնի  
փաստերը, և անոնք սկսան երկպառակիլ զիտու-  
թեանը ստանալէ ի վեր, և այս իրարու դէմ շարու-  
թեան հետեանքով : Յարութեան օրը քու Տէրդ ա-  
նոնց մէջ դատաստան պիտի ընէ, իրենց վէճերու  
մասին :

17. Անկէ ի վեր մենք քեզ օրինակիր նշանակե-  
ցինք : Դու անոր հետեւէ, և մի հետեւիր բազ մը չը-  
գիտցողներու հաճոյքին :

18. Վասնզի անոնք քեզ չեն կրնար օգնել Աս-

տուծոյ դէմ : Չարերը իրարու բարեկամ են, բայց  
Աստուած պաշտպան է երկիւղածներուն :

19. Այս Գուրանը մարդոց համար իբր լոյս է և  
առաջնորդութիւն և ապացոյց Աստուծոյ ողորմու-  
թեանը անոնց համար որոնք կը հաւատան հաստ-  
ատարաբար :

20. Չարագործները կը խորհին թէ մենք զանոնք  
հաւատար պիտի նկատենք հաւատացողներուն, բա-  
րեգործներուն, այնպէս որ թէ՛ անոնց և թէ՛ ասոնց  
կեանքը ու մահը միեւնոյնը ըլլայ : Ինչ գէշ է դա-  
տողութիւնը անոնց :

21. Աստուած ստեղծած է երկինքը ու երկիրը ճշ-  
մարտութեամբ : նա պիտի վարձատրէ բոլոր մարդիկ  
ըստ իրենց գործոց, և ոչ ոք չպիտի անիրաւուի :

22. Ինչ կը մտածես անոր մասին որ իր կիրքերը  
իրեն Աստուած բրած է : Աստուած զանի կը մոլորե-  
ցնէ գիտութեամբ, անոր ականջին ու սրտին վրայ  
կնիք կը գնէ, անոր աչքը կը կապէ, ո՞վ կրնայ ա-  
ռաջնորդիլ ատանկ մօրդ մը՝ Աստուած զանի մոլո-  
րեցնելէն յետոյ : Զէ՞ք խորհիր :

23. Անոնք կըսեն, «նեկայ կեանքէն զատ կեանք  
չկայ, մենք կը մեռնինք ու կը կենդանանանք .  
ժամանակը միայն մեզ կ'ոչնչացնէ» : Անոնք բան մը  
չեն գիտեր այդ մասին, միայն ենթադրութեամբ  
կըսեն :

24. Երբ անոնց կարգացուին մեր յայտնի պատ-  
գամները, ի՞նչ կըսեն : Անոնք կըսեն, «Ուրեմն մեր  
հայրերը կենդանացուցէք, եթէ ճշմարիտը կըսէք» :

25. Ըսէ՛ անոնց, «Աստուած ձեզ պիտի վերակեն-  
դանացնէ և յետոյ մնացնէ, վերջապէս ձեզ պիտի  
համախմբէ յարութեան օրը : Ասոր դէմ բնաւ կաս-  
կած չկայ, բայց մարդոց շատերը չենգիտեր :

26. Աստուծոյ կը պատկանին երկինքը ու երկիրը

երբոր օրը պիտի գայ, ճշմարտութիւնը մերժող-  
ները պիտի չլսասուն:

27. Բոլոր ժողովուրդները ծունկի վրայ պիտի  
տեսնես: Ամէն մէկ ժողովուրդ պիտի կօչուի իր գիր-  
քին առջև (\*): Այն օրը դուք ձեր գործքին համե-  
մատ հատուցում պիտի ստանաք:

28. Այս մեր գիրքն է, ձեր մասին պիտի խօսի  
ճշմարտութեամբ, վասնզի մենք կը գրենք ձեր բոլոր  
բրածները:

29. Որոնք որ հաւատացին ու բարիք գործեցին,  
Աստուած զանոնք պիտի մտցնէ իր ողորմութեան  
մէջ: Ասիկա յայտնի երջանկութիւն է:

30. Անհաւատներուն համար պիտի ըսուի, «ձեզ  
չկարգացուեցան մեր հրաշքները: Բայց դուք ամ-  
բարտաւանացաք, և չարագործ ազգ մըն էիք»:

31. Երբ ձեզ կըսուէր, «Աստուծոյ խոստումները  
ճշմարտութիւն են, և վերջին ժամուն հասնիլը ան-  
կասկածելի է»: դուք կըսէիք, «չենք գիտեր թէ վեր-  
ջին ժամը որն է, մենք միայն զուր կարծիք մը ու-  
նինք, և չունինք ո՛ր և է համոզում»:

32. Այն ատեն իրենց գէշ գորքերը պիտի երևան-  
աչքերնուն, և պիտի պաշարուին իրենց ծաղրած  
դարձիչով:


33. Այն օրը պիտի ըսուի անոնց, «Մենք ձեզ պի-  
մուռնաք ինչպէս դուք մոռցաք ձեր Տիրոջ ներկայա-  
ցուելու օրը. կրակը ձեր բնակատեղին պիտի ըլլայ»  
և դուք օգնող չէք ունենար»:

34. Եւ այս անոր համար որ դուք Աստուծոյ նը-  
շանները ծաղրեցիք, և այս աշխարհի կհանքը ձեզ  
հրապուրեց: Այն օրը անոնք աշխարհ չպիտի վերա-  
դարձուին, օրէնակէլէ կենսով մը Աստուծոյ հաճելի-  
դատնալու համար:

(\*) Յանգաներու արշանաբրութեան գիրքը.

35. Բոլոր փառքը կը պատկանի Աստուծոյ. որ  
տէրն է երկնից և երկրի, տիեզերքին:

39. Մեծութիւնը անորն է երկնից մէջ նոյնպէս ալ  
երկրի վրայ. նա է Հզօրը և իմաստունը:



### ԽՉ. Գ Լ Ո Ւ Խ

Մէկէական. Երեսուն հինգ պատգամ

Յանուն Աստուծոյ Գլխածի ողորմածի

1. Հ. Մ. Գիրքին յայտնութիւն հզօր և իմաս-  
տուն Աստուծոյ կողմէ է:

2. Երկինքը ու երկիրը և անոնց միջև բոլոր ե-  
ղածները մենք ստեղծած ենք ճշմարիտ ստեղծումով  
մը և որոշեալ ժամանակի մը համար. բայց անհա-  
ւատները կը հեռանան իրենց արուած խրատ-  
ներէն:

3. Ըսէ անոնց. «Ի՛նչ է այն մասին ձեր կարծիքը:  
Տոյց տուէք ինձ ձեր պաշտած աստուածներուն ըս-  
տեղծած մէկ բանը աշխարհի վրայ: Բաժին ունին  
երկինքէն: Եթէ ճշմարիտ կը խօսիք, բերէք ինձ  
գիրք մը ասկէ (Գործունէ) առաջ յայտնուած կամ մի-  
այն գիտութեան քանի մը հետքեր որ հաստա-  
տեն զայն»:

4. Միթէ կա՞յ մէկը աւելի մոլորեալ քան այն որ  
Աստուծմէ զատ ուրիշին կազօթէ. որ անոր ոչ մէկ  
պատասխան չտար մինչև յարութեանը օրը: Այն աս-  
տուածները անուշադիր են իրենց եղած կոչին:

5. Երբ մարդիկ համախմբուին վերջն դատարանին,  
այն աստուածները անոնց թշնամի պիտի ըլլան և

ապերախտ պիտի գտնուին :

6. Երբ անհաւատներուն կը կարդացուին մեր յըստակ պատգամները, կրսեն այն ճշմարտութեան համար որոնց մէջ եկաւ, թէ «սա յայտնի կախարդութիւն է» :

7. Անոնք պիտի բռնեն «ինքն (Մահաճեղ)ը է որ Գործունը հնարած է» : Ըսէ՛ անոնց, «եթէ ես հնարած ըլլամ, ըրէ՛ք կրցածնիդ որ ես Աստուծմէ բան մը չը ստանամ. բայց Աստուած լաւ գիտէ ձեր խօսածները այն մասին. նա բաւական է իմ և ձեր մինչև իբր վկայ. նա է ներողն և Ողորմածն» :

8. Ըսէ՛, «ես նոր բան մը յօրինող մարգարէ մը չեմ, և չեմ գիտեր թէ Աստուած ինչ պիտի ընէ ինձ և ձեզ. ես միայն ինձ եղած յայտնութեան կը հետեւիմ. ես միայն յայտնօրէն խրատող մարգարէ մընեմ» :

9. Ըսէ՛ անոնց, «ի՞նչ կը կարծէք. եթէ այս գէրքը Աստուծմէ կուգայ և դուք չէք հաւատար անոր. թէ և Իսրայէլի ընտրեալ որդիներէն մէկը կը վկայէ թէ սա Մահաճեղ գէրքն է համաձայն է և կը հաւատամ անոր. մինչդեռ դուք կը մերժէք հպարտութեամբ. բայց Աստուած չառաջնորդեր անիրաւները» :

10. Անհաւատները կրսեն հաւատացողներուն «եթէ Գործունը լաւ բան մ'ըլլար, անոնք մեզմէ առաջ չէին անցնիր զայն ընդգրկելու» : Եւ ինչպէս ալ իրենց առաջնորդ չին բռներ զայն. անոնք կրսեն թէ «սա հին ստութիւն մըն է» :

11. Գուրանէն առաջ Մովսէսին գիրքը կար, որ տրուած էր մարդոց առաջնորդութեան համար և Աստուծոյ բարութեան իբր ապացոյց. իսկ այս (Գործունը) կը հաստատէ միւս արարներէն լեզուաւ, որպէսզ խրատուին չարերը, և աւետուին առաքինիները :

12. Անոնք որ «մեր Տէրը Աստուած է» կրսեն, և ուղիղ կը վարուին, անոնք չպիտի վախնան ու չը պիտի տխրին :

13. Անոնք դրախտ պիտի երթան, ինչ պիտի մնան յախտեան և ինչ պիտի ստանան իրենց գործոց վարձքը :

14. Մենք խրատեցինք մարդիկ լաւ վարուիլ իրենց ծնողաց հետ. մայրը զանի կրած է իր ծոցին մէջ ցաւով և ծնած է ցաւով, և յղութենէն մինչև կաթէն կտրելը երեսուն ամիս տեւած : Բառասուն տարիէն երբ չափանաս կըլլայ, Աստուծոյ կուզէ՛ սա աղօթքը, «Մ'վ Տէր, ինձ երախտագիտութիւն ներչէ՛չը այն բարիքներուն համար զորս ինձ բրած էք, որ ես ալ քեզ հաճոյ բարիք գործեմ. ինձ երջանկացուր իմ գաւակներուս մէջ : Ես քեզ կը դառնամ, և միւսլիմներէն եմ» :

15. Ասոնք այն մարդիկն են որոնց ամէնայաւ գործերը պիտի ընդունինք և անոնց գէշութիւններէն լաւ պիտի անցնինք. անոնք դրախտը պիտի ընդունուին : Անոնց եղած խոստումները անսուտ են :

16. Այն որ կրսէ իր ծնողաց. «Վայ ձեզ որ ինձ կը խոստանաք թէ ես գերեզմանէն պիտի ելլեմ, մինչդեռ այնչափ սերունդներ ինձմէ առաջ անցեր անյայտացեր են» : Իր ծնողքները պիտի թախանձեն Աստուծոյ անոր ի նպաստ. և պիտի ըսեն անոր. «Վա՛քեզ, հաւատա՛՛ վասնզի Աստուծոյ խոստումները ճշմարիտ են» : Բայց նա պիտի ըսէ՛ «ատոնք հիներու առասպելներ են» :

17. Ասիկա անոնցմէ է, որոնց մասին կատարուած է Աստուծոյ խօսքը. այն խօսքը որ արատասանուած է աւելի առաջ եկած դեւերու և մարդոց ցեղերու դէմ. անոնք պիտի կորսուին :

18. Ամէնին համար աստիճաններ կան իրենց գործերու համեմատ. որպէսզի Աստուած ճշղութեամբ հատուցանէ բոլորին գործերը և անիրաւութիւն չըլլայ անոնց :

19. Այն օրը՝ երբ անհաւատները կրակը պիտի տարուին. անոնց պիտի ըսուի, «Դուք աշխարհային կեանքին մէջ վատնեցիք ան թանկագին պարգևները որ ձեզ տրուեցան. դուք ուզեցիք շուտով վայելի. այսօր նախատալից պատիժով պիտի վարձատրուիք, վասնզի դուք անիրաւարար հպարտացաք աշխարհի վրայ և ապականութիւններ գործեցիք».

20. Յիշէ՛ Ատին եղբայրը. որ Այա՛գաֆի մէջ կը քարոզէր իր ժողովուրդին, ինչ իրմէ առաջ և իրմէ յետոյ ուրիշ մարգարեներ եղան. նա անոնց կըսէր. «Աստուծո՛ւ ուրիշ մի՛ պաշտէք. վասնզի ձեր մասին մեծ օրուան պատիժէն կը վախնամ»:

21. Գու մեզ մեր աստուածներէն նեոացնելու համար եկար. ըսեն անոր, եթէ դու ճշմարտասուս ես. քու մեզ սպառնացածներդ բերել տուր:

22. Նա ես ըսաւ, «Աստուած մրայն զիտէ. ես մրայն իմ պաշտօնս կը ներկայացնեմ ձեզ. բայց կը տեսնեմ որ դուք ազէտ ժողովուրդ մըն էք»:

23. Եւ երբ տեսան թէ ամպ մը կը յառաջանար դէպի իրենց հովիտները. կըսէին իրարու, «Այս ամպը մեզի անձրև պիտի բերէ»: — Ո՛չ. այս այն է զոր փութացնել կուզէիք, այս անողոք պատիժ բերող հողն է.

24. Ան կուգայ ջնջել ամէն բան Տիրոջը հրամանաւ: Էտեւեալ օրը իրենց բնակարաններէն ուրիշ բան չէին տեսներ: Այսպէս մենք հատուցում կընենք յանցաւորներուն,

25. Ձանոնք ձերինն իման վիճակի մը մէջ դրած էինք, «Վ՛րէ՛ք քեզ. անոնց տուած էինք լսելիք, տեսանելիք և սրտեր. բայց ոչ լսելիքը, ոչ տեսանելիքը և ոչ սրտերը անոնց օգուտ չընծայեցին. վասնզի անոնք Աստուծոյ նշանները կը մերժէին. վերջապէս սն պատիժը որ կը ծաղրէին զիրենք պաշարեց:

26. Ձեր չուրջի քաղաքները կործանեցինք. ամէն կողմ մեր նշանները յայտարարեցինք որ մեզ վերադառնան:

27. Եւ ի՞նչու համար անոնց չօգնեցին Աստուծո՛ւ զատ իրենց բնարած աստուածները և իրենց կրօնքի առարկան: Ատկէ զատ իրենց աչքերէն աներեւոյթացաւ: Այդ ատոնց սուտն էր. իրենք հնարած էին:

28. Օր մը զեւերու խումբ մը բերենք անոնց լսել տալու համար Գուրաւը. եկան անոնք, և ըսին իրարու «Մտիկ բրէք»: և երբ ընթերցանութիւնը լրջացաւ, անոնք մարգարէներ դարձան իրենց ժողովուրդին մէջ քարոզելու:

29. «Ով մեր ժողովուրդ, ըսին անոնք Մէլսէսէն յետոյ երկինքէն իջած գիրք մը մտիկ բրինք, և որ կը հաստատէ նախկին գիրքերը, կառաջնորդէ ճշմարտութեան ուղիղ ճամբուն մէջ»:

30. Ո՛վ մեր ժողովուրդը. ունկնդրեցէք Աստուծոյ քարոզչին. և հաւատացէք անոր. նա պիտի ջնջէ ձեր մեղքերը և զձեզ պիտի ազատէ անողոք տանջանքէն»:


31. Ով որ Աստուծոյ քարոզչին հրաւերին չպատասխանէ, չպիտի զօրանայ երկրի վրայ, և Աստուծո՛ւմէ զատ պաշտպան չպիտի գտնէ: Այնպիսիները յայտնի մոլորութեան մէջ են:

Ձե՛ն տեսներ որ Աստուած է ստեղծած երկինքը ու երկիրը: Նա չէ յոգնած անոնց ստեղծումէն, և հարող է մեռեալները յարուցանել. այո՛, կարող է ամէնի:

33. Եւ այն օրը, երբ անհաւատները դժոխքի կըրահին առջև պիտի տարուին, անոնց պիտի հարցուի. «Ճշմարի՞տ է»: — Այո՛ պիտի ըսեն, Տէրը վկայ որ ճշմարիտ է: — Ուրեմն ենթարկուեցէ՛ք, պիտի ըսեն, այն տանջանքին, ի փոխարէն ձեր անհաւատութեան:

34. Եւ դո՛ւ, ո՞վ Մուհամմէտ, լաճերէ՛ր ինչպէս կը համբերէին մարգարէներէն հաստատածիտները. անոնց պատիժը փութացնել մի ջանար: Օր մը, երբ անոնք նշմարեն սպառնալիքներուն իրականացումը,

35. Այն վայրկեանին պիտի կոչուին տեսնելու իրենց խոտապուծը. անոնց պիտի թուի թէ գերեզմանին մէջ օրուան մէկ ժամը կեցած են: Այսպէս է յորդորը: Եւ ուրեմն ո՞վ պիտի կորսուի, եւ թէ ո՞չ չարերը:



### ԻՒՆ. Գ Լ Ո Ւ Խ

### (Մ Ո Ւ Հ Ա Մ Մ Է Տ)

## Մէտիմեական. Բաւասուն պատգամ

Յանուն Աստուծոյ գլխածի և ողորմածի

1. Աստուած չպիտի յաջողցնէ գործերը անոնց որոնք չեն հաւատար և ճամբաէն կը շեղին:

2. Իսկ որոնք որ հաւատք ունին, բարիք կը գործեն և կը հաւատան Մուհամմէտին եղած յայտնութեան որն որ ճշմարիտ է Աստուծոյ առջև. Աստուած պիտի ջնջէ անոնց մեղքերը և պիտի ուղղէ անոնց սրտերը:

3. Այսպէս պիտի ըլլայ, որովհետև անհաւատները ստույթնան հետեւեցան, և հաւատացեալները հետեւեցան ճշմարտութեան որ իրենց Տիբոջմէ կուգար: Այսպէս օրինակներ կը բերէ Աստուած մարդոց:

4. Ուրեմն երբ որ անհաւատներու հանդիպիք, սպաննեցէք զանոնք մեծ կոտորած ընելով, և գերիներուն կապերը լաւ սեղեցէք:

5. Պատերազմը լմնայէ յետոյ, զանոնք կամ ձրի կամ փրկանքով ազատ ձգեցէք: Այսպէս վարուեցէք: Եթէ Աստուած ուզէր, ինք վրէժ կառնէր անոնցմէ. Բայ նա յեւ կը կոտորէ իրարու դէմ, ձեզ փորձելու համար: Իրոնք որ Աստուծոյ ճամբուն մէջ լինան, Աստուած անոնց գործքերը չկորսնցնէր:

6. Եւ կ'առաջնորդէ զանոնք և սրտերնին կուղղէ:

7. Եւ զանոնք դրախտ կը մտցնէ, զոր անոնց ծանոթացուցած է արդէն:

8. Ո՞վ հաւատացեալներ, եթէ օգնէք Աստուծոյ շարժումը դէ՛մ իր պտերաջնէն՝ Տէջ, նա ևս ձեզ կ'օգնէ, և կը հաստատէ ձեր քայլերը:

9. Իսկ անհաւատները թող կորսուին, և Աստուած կը կորսնցնէ անոնց գործերը:

10. Այս պիտի ըլլայ իբր հատուցում անոնց ատելութեան Աստուծոյ յայտնութեանց մասին. ջնջուին անոնց գործերը!:

11. Չե՛ն անցած անոնք այս երկիրներէն: Չե՛ն տեսած թէ ինչ է եղած վախճանը անոնց նախորդներուն զորս Աստուած բնաջնջեց: Եոյն վիճակը կրպակէ այժմո՛ւ անհաւատներուն ևս:

12. Վասնզի Աստուած պաշտպանն է հաւատացեալներուն, և անհաւատները պաշտպան չունին:

13. Աստուած հաւատացեալները ու բարեգործները կը մտցնէ դրախտներու մէջ ուրկէ ջուրեր կը հոսին Իսկ անհաւատներուն որք կը վայելեն և անասուններու պէս կուտեն: Բնախորանը կրակը պիտի ըլլայ:

14. Ո՞րքան քաղաքներ ջնջուեցան, քաղաքներ որոնք աւելի զօրաւոր էին քու քաղաքէդ որ քեզ վրէժեց, և անոնց օգնող չկար:

15. Իր Տիրոջ յայտնութեանց հետևողը մրթէ նո՞յնը պիտի համարուի այնպիսիին հետ, որուն գէշ գործերը լաւ երեւցին և որ իր կիրքերուն հետեւեցաւ:

16. Ահա նկարագրութիւնը դրախտին որ խոտաւ

ցուած է երկիրը անհրաժեշտ. կան առուներ որոնց ջուրը չապահանիր բնաւ, կաթի առուակներ որոնց համբ չգիտութիւր, գինիի առուակներ խմողներուն ախորժեխի:

17. Մաքուր մեղրի առուակներ, ամէն տեսակ պտուղներ. և ներուժ մեղքերու: Միթէ այսպէս պիտի ըլլայ կրակի դատապարտուածին, որուն և աացող ջուր պիտի խմցուի. որ անոր աղիքները պիտի պատուէ:

18. Անոնց մէջ մարդիկ կտն որոնք կուգան քեզ ունկնդրել. բայց քեզմէ հեռացածնուն պէս, կերթան կրսեն գիտութիւն ստացողներուն, «ի՞նչ կրսէ անիկայ»: Ասոնք են որոնց վրայ Աստուած կնիք գրած է, որոնք միայն իրենց կիրքերուն կը հետեին:

19. Ուղիղ ճամբուն հետեողներուն առաջնորդութիւնը Աստուած պիտի աւելցնէ, և պիտի սովորեցնէ անոնց թէ ինչ բանէ պարտին զգուշանալ:

20. Անհաւատները ուրեմն ի՞նչու կ'սպասեն: Վերջին ժամու՞ն որ յանկարծ պիտի հասնի: Արդէն այն օրուան քանի մը նշանները երեցան. բայց խրատը ի՞նչ օգուտ կընէ անոնց:

21. Գիտցիր որ Աստուծմէ զատ աստուած չկայ անկէ թողութիւն խնդրէ քու մեղքերուդ և հաւատացեալ մարդոց ու կանանց մեղքերուն համար, Աստուած գիտէ ձեր շարժումները եւ ձեր բնական վայրը:

22. Ըշմարիտ հաւատացեալները կըսեն, «Ա՛հ, եթէ սուրբէթ մը իջուցուէր որ պարբերա՞ւ հրամայէր անհատու ներուժ դէ՛մ»: Բայց վճռական սուրբէթ մը իջնէ բարձրէն և պատերազմի մասին խօսի. պիտի տեսնես որ սրտով տկար մարդիկը մահու երկիրը զառամարի նայուածքով մը կը նային քեզ: Սակայն ա-

նոնց աւելի կը վայէր հնազանդութիւն և պատշաճ լեզու մը:

23. Պարբերա՞ւ որոշուելուն, եթէ անոնք Աստուծոյ հանդէպ իրենց յանձնառութիւնը յարգէին. աւելի լաւ կըլլա՞ն իրենց:

24. Ձեր սխալներուն վերադառնալով պիտի ուղէի՞ք երկրի վրայ խռովութիւն յարուցանել և արիւնակցական կապերը խզել:

25. Ասոնք այն մարդիկն են, զորս Աստուած անիծած և խուլ ու համբ րած է.

26. Չպիտի խորհո՞ւ. Գուրանի մասին, կամ անոնց սիրտը կզպանքով գոցու՞ած պիտի ըլլայ:

27. Անոնք որ ետ կը դառնան ճշմարիտ առաջնորդութիւնը իրենց յայտնուելէն յետոյ, սատանան է որ զանոնք կը մոլորեցնէ և անոնց ուղեցոյց կըլլայ:

28. Ասոր պատճառը այն է որ անոնք կըսեն Աստուծմէ յայտնուած Գիրքին հակառակող մարդոց թէ «քանի մը բաներու մէջ մենք ձեզ պիտի հետեւինք»: Աստուած գիտէ անոնց գաղտնիքը:

29. Ի՞նչ պիտի ըլլայ անոնց վիճակը երբ հրեշտակները անոնց հոգին առնելով, զարնեն անոնց երեսին ու կռնակին:

30. Սա անոր համար է որ անոնք Աստուած բարկացնող վարմունք մ'ունեցան և անարգեցին անոր հաճութիւնը. հետեալաբար նա պիտի ոչնչացնէ անոնց գործերուն պտուղը:

31. Անոնք՝ որոնց սրտերը տկարացած են, կը մըտածե՞ն թէ Աստուած իրենց շարութիւնը երեւան չըհաներ:

32. Եթէ կամէինք, զանոնք քեզ կը ցուցնէինք. քեզ կը ճանչցնէինք, «՛՛՛ Մահա՛մադ. որոշ նշաններով որ զանոնք կը յառկանչեն բայց դու պիտի ճանչնաս»:

առանձինք իրենց ծուռումուռ լեզուէն: Մա'րաթն Աստու-  
ուած գիտէ ձեր գործերը:

33. Մենք ձեզ պիտի փորձենք մինչև որ հասկե-  
նանք թէ որոնք են կրօնքի համար պատեարագմող-  
ները և համբերողները: Պիտի քննենք ձեր ըն-  
թացքը:

34. Որոնք որ չեն հաւատար և ուրիշները կը-  
դարձնեն Աստուծոյ ճամբէն, և բաժնուած են Աս-  
տուծոյ մարգարէէն ճշմարիտ առաջնորդութիւնը ա-  
նոնց յայտնուելէ յետոյ, անոնք Աստուծոյ չեն կըր-  
նար միասել. բայց Աստուած կրնայ ոչնչացնել ա-  
նոնց գործերը:

35. Ո՛վ հաւատացեալք, հնազանդեցէ՛ք Աստու-  
ծոյ, հնազանդեցէ՛ք մարգարէին, և ձեր գործերը մի-  
ոչնչացնէք:

36. Աստուած չպիտի ներէ այն անհաւատներուն  
որոնք ջանացած են ուրիշները խտարեցնել Աստու-  
ծոյ ճամբէն և սրտնք անհաւատութեան մէջ մե-  
ռած են:

37. Երբէք երկչտութիւն մի ցոյց տաք, և ան-  
հաւատները խաղաղութեան մի հրաւիրէք երբ դուք  
աւելի դորաւոր էք. Աստուած ձեր հետն է. նա ձեզ  
չզրկեր ձեր գործերու արդիւնքէն:

38. Այս աշխարհի կեանքը միայն խաղ ու ժա-  
մանց է: Եթէ դուք հաւատաք Աստուծոյ և վախնաք  
անկէ, ձեզ պիտի վարձատրէ և ոչինչ չպիտի պա-  
հանջէ ձեր ինչքերէն:

39. Եթէ նա ձեզմէ պահանջեր զանոնք և ձեզ ըս-  
տիպէր, դուք ազատ պիտի երևայիք. այն ատեն ձեր  
չարութիւնը մէջտեղ պիտի դնէր:

40. Հասկցէք որ դուք հրաւիրուած էք ձեր հարս-  
տութիւնը Աստուծոյ ճամբուն համար ծախսելու. և  
ձեր մէջ կան մարդիկ որ ազատութիւն կընեն. բայց

ազատը ի միաս իր անձին ազատ է. վասնզի Աստու-  
ած հարուստ է և դուք աղքատ, և եթէ դուք խոյս  
տաք, նա ձեր անզը ուրիշ ժողովուրդ մը պիտի  
քերէ, ժողովուրդ մը որ ձեզ չպիտի նմանի բնաւ:



ԽԸ. Գ Լ Ո Ի Խ

ՍՈՒՐԷԹ ԻԻԼ-ՃԱԹՇ

ՄԷՏԻՆԷԱԿԱՆ. ԲԱՏՆ ԻՆՐ ԱՍՏԳԱՄ

Յանուն Աստուծոյ Գթածի ողորմածի

1. Քեզ համար փայլուն յաղթութիւն մը տուինք.
2. Որպէսզի Աստուած ապշուցանէ ի՛նչ կը ներէ  
քու հին և նոր մեղքերդ, և որպէսզի լրացնէ դէպի  
քեզ իր շնորհները, և առաջնորդէ ուզիդ ճամբան:
3. Եւ քեզ օգնէ իր հօր օգնութեամբը:
4. Նա է որ հաւատացեալներու սրտերուն մէջ  
կիջեցնէ անդորրութիւնը, որպէսզի հաւատքնին ան-  
դադար աւելցնեն: (Երկնից ու երկրի գունդերը  
կը պատկանին զիտութեամբ և իմաստութեամբ լի  
Աստուծոյն.)
5. Որպէսզի Աստուած հաւատացեալ մարդերը ու-  
կինները մտցնէ դրախտներու մէջ, որոնց մէջ գետեր  
կը հոսին, յախտենապէս հոն մնալու համար. որ-  
պէսզի անոնց չարագործութիւնները ներէ: Այս ան-  
հօտն երջանկութիւն մըն է Աստուածոյ վերապահ-  
ուած:
6. Նա պիտի պատժէ այր և կին կեղծաւորները,  
պապաշտները և այն ամէնը որ Աստուծոյ մասին

գէշ կարծիք ունին: Դժբաղդութեան անիւր անոնց  
դէմ կը դառնայ: Աստուած բարկացած է անոնց  
դէմ և կանխի՞ծէ զանոնք. անոնց համար պատրաս-  
տած է դժոխքը, և ի՞նչ գէշ վախճան:

7. Երկնից ու երկրի բանակները Աստուծոյն են,  
նա հզօր և իմաստուն է:

8. Մենք քեզ զրկեցինք, «ՎՄ...» իբր վը-  
կայ մը, իբր մարգարէ խրատող և աւետող:

9. Որպէսզի դուք՝ ո՞վ մարդիկ, հաւատաք Աս-  
տուծոյ և իր մարգարէին, օգնէք անոր, յարգէք  
զանի, և օրհնաբանէք իրիկուն և առաւօտ:

10. Որոնք օր, քեզ ձեռք տալով, հաւատարմու-  
թիւն կուխտեն, Աստուծոյ կուխտեն, Աստուծոյ  
ձեռքը անոնց ձեռքին վրայ դրուած է (\*):  
Ով որ իր երգումը գրծէ, ի վիաս իր հօգուոյն գրծած  
կըլլայ. և ով որ իր ուխտին հաւատարիմ մնայ, Աս-  
տուած անոր փառաւոր վարձք պիտի տայ:

11. Անապատի Արաբները որք ձեր ետեր մնացին  
և պարտաւոր չեն երթալ, պիտի ըսեն քեզ... «մեր  
հօտերը և ընտանիքները մեզ արգիյեցին քեզ հետե-  
ւելէ. ուստի Աստուծմէ խնդրէ որ մեզ ներէ մեր  
մեղքերը»: Անոնց լեզուները ըսածը սրտերնուն պէս  
չէ: Ըսէ՛ անոնց, «Ո՞վ կրնայ Աստուծոյ դէմ կուտիլ  
եթէ նա ձեզ վիասել կամ ձեզի նպաստել ուզէ: Աս-  
տուած գրտէ ձեր գործերը:

12. Բայց դուք երեւակայեցիք. թէ մարգարէն և  
հաւատացեալները ընաւ չպիտի վերադառնան իրենց  
ընտանեաց քով, և այս մտածումը հաճոյ էր ձեր սրը-  
տերուն. դուք գէշ կարծիքներ կազմեցիք, դուք  
կորսուած մարդիկ էք:

13. Յոցավառ հնոց մը պատրաստած ենք այն ան-  
հաւատներուն համար որոնք չեն հաւատացած Աս-  
տուծոյ և իր մարգարէին:

14. Երկնից ու երկրի թագաւորութիւնը Աստու-

(\*) Արաբները յեւ+ յեւ+է սուլ երբեմն կընեն.

ծոյն է. նա կը ներէ իր ուղածին, և կը պատժէ որը  
որ ուզէ: Նա ներող և ողորմած է:

15. Երբ ապահով աւար մը առնել կերթաք, «յե-  
պէն տուներնին կեցող Արարները պիտի ըսեն ձեզի.  
«Թողէք որ մենք ալ ձեր հետք գանք»: Կուզեն Աս-  
տուծոյ խօսքը փոխել: Ըսէ՛ անոնց, «Դուք մեր հե-  
տը չպիտի գաք: Աստուած առաջուց այդպէս որոշած  
է»: Բեզ պիտի ըսեն որ կը նախանձիք: Բայց ա-  
նոնցօ՞՞ք քիչերը հասկցող են:

16. Ըսէ՛ նաև իրենց տուները մնացած Արաբնե-  
րուն. «մենք ձեզ պիտի հրաւիրենք շատ զօրաւոր  
ժողովուրդի մը դէմ արշաւելու. պիտի կուտինք ա-  
նոնց դէմ մինչև որ իսլամանան: Եթէ հաւանիք,  
Աստուած ձեզ լաւ պիտի վարձատրէ: Բայց եթէ ետ  
քաշուիք, ինչպէս առաջ անգամ մ'ըրիք, նա ձեզ  
դառն պատժոյ պիտի ենթարկէ:»

17. Եթէ կոյրը, կազը և հիւանդը պատերազմի  
չերթան յանցաւոր չեն նկատուիր: Ով որ կը հնա-  
զանդի Աստուծոյ և իր մարգարէին, հոսուն ջուրով  
ոռօգուած դրախտներու մէջ պիտի մտցուի: Բայց  
Աստուած դառն պատժոյ պիտի ենթարկէ զանոնք  
որոնք ետ կը քաշուին անոր հրամաններէն:

18. Աստուած գո՛հ էր այն հաւատացեալներէն ո-  
րոնք քեզ հաւատարմութիւն ուխտեցին ծառին տակ.  
Նա գիտէր անոնց սրտին խորհուրդները. հանդար-  
տութիւն իջեցուց անոնց վրայ, և զանոնք վարձա-  
տրեց անմիջական յաղթանակով մը:

19. Այսպէս հարուստ աւարներ առին: Աստուած  
հզօր և իմաստուն է:

20. Առատ աւարներ խոստացած էր ձեզ, և փու-  
թաց տալ ձեզ. և ձեր թշնամիներու բազուկը ետ  
մղեց ձեզմէ, որպէսզի այս դէպքը նշան մ'ըլլայ հա-  
ւատացելոց, և ձեզ համար առաջնորդութիւն ուղիղ

ճամբուն մէջ :

21. Նաև ձեզ ուրիշ աւարներ ալ խոստացաւ զոր չկրցաք գրաւել . բայց Աստուած զանոնք պաշարեց , և նա ամենակարող է :

22. Եթէ անհաւատները ձեր հետ պատերազմին , չուտով պիտի փախչին , և չիպիտի գտնեն ոչ պաշտպան ոչ օգնութիւն :

23. Աստուծոյ կանոնը այս է . այսպէս բրաւ նախորդ սերունդներուն : Աստուծոյ կանոններուն մէջ փոփոխութիւն չպիտի գտնես :

24. Նա է որ ձեր թշնամիներուն բազուկը ետ մղեց ձեզմէ , ինչպէս որ զանոնք ալ ձեր հարուածներէն պաշտպանեց Մէքքէի հովիտին մէջ , անոնց վրայ ձեզ յազթանակ տալէ յետոյ : Աստուած կը տեսնէ ձեր գործերը :

25. Անոնք են որ չեն հաւատար և ձեզ կը հեռացնեն սուրբ տաճարէն , նաև բնծաները տեղը հասցնել չեն ձգեր : Եթէ երկտեղ հաւատացեալները զորս չէք ճանչնար , անոնց մէջ չխառնուէին , դուք զանոնք կոխտած կրկայիք . և յանգէտս ոճիր մը գործած կը լինէիք : Աստուած իր ուզածին կազորմի : Եթէ հասարակելիքը անհասարակելի զատուած ըլլային , մենք զաւայի պատիժ մը կուտայինք անհաւատներուն :

26. Երբ անհաւատները իրենց սրտերուն մէջ յիմար ատելութիւնը հաստատեցին , Աստուած հանդարտութիւն իջեցուց մարգարէին և հաւատացելոց սրտերուն մէջ , և ամբացուց Չերմեռանդութեան խօսքը . անոնք արժանի էին անոր և շատ յարմար զայն բնդունելու : Եւ Աստուած ամենագէտ է :

27. Աստուած իրականացուց մարգարէին նրազը երբ անոր սա խօսքերը լսեցուց . « Դուք սուրբ տաճարը պիտի մանէք , եթէ Աստուած կամենայ , ողջ

առողջ , գլուխնիդ ամիլուած և մագերնիդ կարծկարուած առանց երկիւղի » : Նա դիտէ ձեր չգիտցածը : Նաև ձեզ վերապահած է յազթութիւն մը , որ չպիտի ուշանայ :

28. Նա է որ զրկած է իր մարգարէն առաջնորդութեամբ և ճշմարիտ կրօնքով , զայն ամէն կրօնքի վրայ բարձր բնծայելու համար : Աստուծոյ վրկայութիւնը քեզ կը բաւէ :

29. Սուհամմէար Աստուծոյ մարգարէն է . անոր հետ եղողները խիստ են անհաւատներուն հանդէպ և զորովայի իրարու հանդէպ . դու զանոնք պիտի տեսնես ծնրադրած , երկրպագած Աստուծմէ շնորհ և անոր գոհունակութիւնը կը խնդրեն . անոնց ճակատներուն վրայ պէտէ րեւելու նշանը իրենց ջերմեռանդութեան : Մովսէսի Գիրքին և Աւետարանին մէջ անոնք այսպէս կը նկարագրուին . անոնք նման են ցանքին որ կը ծլի , կը մեծնայ կը հաստանայ և կը կանգնի իր ցօղունին վրայ , կուրախացնէ մշակողը : Այսպէս է , որ անհաւատները հակառակին անոր : Աստուած թողութիւն և մեծ վարձք խոստացած է հաւատացողներուն ու բարեգործներուն :



ԽԹ. Գ Լ Ո Ի Խ

Մէտիսիէական, ԶԱՄԱՆ ԵՒ ՈՒՔ ԱՎԱՏՊԱՄ

Յանուն Աստուծոյ զթածի և ողորմածի .

1. Ո՛վ հաւատացեալներ , Աստուծմէ և իր մարգարէն առաջ մի անցնիք . հաւատացէք Աստուծոյ , վասնզի նա լսող և ամենագէտ է :

2. Ո՛վ հաւատացեալներ, ձայներնիդ մի բարձրացնէք մարգարէին ձայնէն վեր, և ձեր իրարու հետ խօսելուն պէս բարձրաձայն մի խօսիք անոր հետ որ պէտքի ձեր գործերը անպտուղ չմնան յանդէտս:

3. Մարգարէին ներկայութեան ձայներնին խօսեալն անհոգիներուն սրտերը Աստուած երկրպագութեան տրամադրած է: Անոնք մեղաց թողութիւն և մեծ վարձք պիտի ընդունին:

4. Անոնք որ բարձրաձայն քեզ կը կանչեն քու տանդ մէջ ելած ատենդ, չհասկցող մարդիկ են մեծաւ մասամբ:

5. Եթէ սպասէին մինչև քու դուրս ելլելիդ անձամբ իրենց խօսելու համար, աւելի լաւ պիտի ըլլար: Բայց Աստուած ներող և ողորմած է:

6. Եթէ չար մարդ մը ձեզի լուր մը բերէ, նախ քաննցէք զանն, մի գուցէ ազիտութեամբ չարիք հասցնէք մէկու մը և յետոյ ձեր բրածի վրայ զղջաք:

7. Գիտցէ՛ք որ Աստուծոյ մարդարէն ձեր մէջն է: Եթէ անիկա շատ բաներու մասին ձեզ համակերպի, մեղքի մէջ կ'իյնաք: Բայց Աստուած ձեզի յարգի բրաւ հաւատքը, զայն գեղեցկացուց ձեր սրտերուն մէջ, և ձեզ զգուանք ներշնչեց անհաւատութեան և չարագործութեան և անհնազաղութեան մասին: Այդպիսի մարդիկ ուղիղ ճամբուն մէջ են:

8. Ծնորձիւ և ողորմութեամբն Աստուծոյ: Աստուած գիտուն և իմաստուն է:

9. Երբ երկու հաւատացեալ ազգեր իրարու դէմ պատմագմին, ջանաղէք հաշտեցնել: Եթէ անոնցմէ մէկը մի սին դէմ անիրաւ չարուի, անիրաւի դէմ պատրաստեցէք մինչև որ ան վերադառնայ Աստուծոյ պատուէրներուն: Եթէ անիկա ճանչնայ իր անիրաւութիւնը, հաշտեցուցէք զանի միւսին հետ ըստ արդարութեան: անկողմնակալ եղէք, վասնզի

Աստուած կը սիրէ անկողմնակալ վարուողը:

10. Վասնզի բոլոր հաւատացեալները եղբայրներ են, Ուրեմն կարգադրեցէք ձեր եղբայրներուն վէճերը և հաւատացէք Աստուծոյ, որ գթայ ձեզ:

11. Ո՛վ հաւատացեալներ, ժողովուրդ մը ուրիշ ժողովուրդ մը թող չծաղրէ, ծաղրուողը թերևս ժողրողէն աւելի արժէ: ոչ այ կիները ուրիշ կիներ ծաղրեն, թերևս ատենք աւելի արժեն քան միւսները: Զիրար մի բամբասէք, զիրար մի անուանարկէք գէշ անուններ տալով: Այդ անունը հաւատալէ յետոյ որքան անզգամութիւն է: Որոնք որ չապաշխարհեն անոնք բոլորովին ամպարիշտներ են:

12. Ո՛վ հաւատացեալներ, զգուշացէք յաճախ կասկածելէ, կասկածներ կան որ մեզք են, մի հետամըտիք ուրիշները յրտեսելու, զիրար մի բամբասէք: ձեզմէ ո՞վ պիտի ուզէր իր մեռած եղբորը միսը ուտել: — Սա ձեզ զգուելի է, չէ՞: Ուրեմն վախցէք Աստուծմէ: Նա կը սիրէ ներել մարդոց, և ողորմած է:

13. Ո՛վ մարդիկ, մենք ձեզ նախաստեղծեցինք մարդէ մը և կինէ մը, ձեզ բաժնեցինք ընտանիքներու և ցեղերու, որ զիրար ճանչնաք: Զեզմէ էն պատուաւորը Աստուծոյ առջև այն որ ամէնէ երկրպագածն է: Աստուած գիտուն և ամէնի տեղեակ է:


14. Անապատի Արարները կրսեն, «մենք հաւատացինք»: Պատասխանէ անոնց, «Զէք հաւատար»: Եւ յետոյ ըսէք, «մենք միւսլիմ ենք, իսկ հաւատքը զեռ չէ ստած ձեր սրտերուն մէջ»: Եթէ դուք հնազանդիք Աստուծոյ և իր մարգարէին, ձեր և ոչ մէկ գործը չկորսուիր, վասնզի Աստուած ներող և ողորմած է:

15. Ըշմարիտ հաւատարցեալները անոնք են, որոնք հաւատացած են Աստուծոյ և անոր մարգարէին, և որոնք բնաւ չեն կասկածիր, որոնք կը պատերազ-

մին Աստուծոյ ճամբուն մէջ իրենց ինչքով եւ ան .  
ձող : Միայն ասոնք անկեղծ են իրենց խօսքերուն մէջ :

16. Աստուծոյ հասկցնե՞ր կուզէք թէ ձեր կրօնքը  
ինչ է : Բայց նա գիտէ երկնից մէջ եւ երկրի վրայ  
բոլոր եղանակները : Նա ամենագէտ է :

17. Անոնք քեզ երախտիք կը յայտնեն իսլամ ըլ-  
լալնուն Գուրաէ, «ինչ երախտիք մի յայտնէք ձեր  
իսլամութեան մասին : Աստուած ձեզ երախտազարտ  
կընէ . որ ձեզ առաջնորդած է զէպի հաւատքը, եթէ  
անկեղծ էք :



Մ. Գ Լ Ո Ի Ե

Մէքէական, Բաւասուն նիւր պատգամ

Յանուն Աստուծոյ գթածի և ողորմածի

1. Գ. Կ երգնում փառաւոր Գուրանով ,
2. Կը զարմանան որ իրենց մէջէն խրատող մը  
ելած է իրենց : Սա զարմանալի է . կըսեն անհա-  
ւատները :
3. Անգամ մը մեռնելէ և հող դառնալէ յետոյ մի-  
թէ դէպքէ վերակենդանանա՞լ : Այս վերադարձը ի՞նչ է  
չառ հետու է :
4. Գիտենք արդէն թէ հողը անկէ որչափ պակսե-  
ցուցած է . և պահպանող զիրքը մեր քովէ է :
5. Անոնք ճշմարտութիւնը սուտ համարեցին եւր  
իրենց եկաւ : Անոնք անելանելի գործի մէջ են :
6. Չեն նայիր միթէ գէպի վեր երկինքը . զոր  
դէպքէ Ենեն թէ մենք ինչպէս հաստատած ենք ու  
զարգարած , եւ ուր ձեզքուածքներ չեն տեսնուիր .
7. Նաեւ երկիրը տարածիր ենք եւ լեռներ զետե-

զեր , եւ հոն արօտագրեր ենք ամէն թանկագին տե-  
սակներ .

8. Եթի թ խորհրդածութեան եւ զեկուցում այն ա-  
մէն ծառայի որ կը սիրէ մեզ դարձի գալ :

9. Մենք կիջեցնենք երկինքէն բարերար ջուրը .  
որով կը բուսցնենք պարտէզներու տունկերը եւ հա-  
ցահաակները զոր կը քաղեն :

10. Եւ բարձր արմաւենիները որոնց ճիւղերը պը-  
տուղներու շարքերով բեռնաւորած ենք

11. Մարգարանունդին համար, երկինքի ջուրովը  
կեանք կուտանք մեռեալ երկրամասի մը : Այսպէս  
պիտի ըլլայ յարութիւնն ալ :

12. Անոնցմէ ատաջ Նոյի ժողովուրդը . Թասի մար-  
դիկը եւ Սամուտցիները խաբերայ համարեցին իրենց  
մարդարէները :

13. Աս եւ Փարաւոն, Ղովաի ժողովուրդը եւ ան-  
ստոյն բնակիչները, Թօպպալի ժողովուրդը, բոլորը  
ստախօս համարեցին իրենց մարդարէները, եւ ար-  
ժանացան մեր սպանացած պատիմին :

14. Յոգնած ենք միթէ ատաջին ստեղծագործու-  
թեամբ, որ անոնք կը կասկածին յարութեան և նոր  
ստեղծման մասին :

15. Մենք ստեղծած ենք մարդը, եւ գիտենք թէ  
անոր հոգին ինչ կըսէ իրեն . մենք անոր աւելի  
ժօռ ենք քան իր վզին երակը :

16. Երբ ճարտար խօսեցը հաւաքող երկու հրէշտակ-  
ները անոր աջ ու ձախ կողմը նստած սկսին հա-  
ւաքել .

17. Անիկա բառ մը չարտասաներ ատանց արջա-  
նաբէլը պատրաստ հոգողին ներկայութեանը :

18. Ստոյգ մանուան ցաւը կը բռնէ զանիւ Ահա-  
վախճանը որմէ դու կուզէիր փախչիլ .

19. Փողը կը հնչէ : Սա խոստացուած օրն է :

20. Ամէն հոգի կ'երթայ հոն, իր հետ ունենալով քչոյ մը եւ վկայ մը:

21. «Այս օրուան մասին դու անփոյթ կապրէիր» պէտէ ըստէ՛ս, բայց ահա մենք վերցուցինք քու աչքերդ ծածկող ծածկոցը. այսօր քու աչքերդ քաջատես են»:

22. Անոր բնկերացոյ հրեշտակը պիտի ըսէ անոր «Ահա ինչ որ պատրաստած եմ քեզ գէմ»:

23. «Դժոխք նետեցէք ամէն յամառ անհաւատ»

24. «Որ բարիին կը հակասակէր, օրէնքները չէր յարգէր ու կը կասկածէր:

25. Որ Աստուծոյ քով ուրիշ աստուածներ կը դնէր: Նետեցէ՛ք զանի բուն տանջանաց մէջ:

26. Անոր ընկերացողը պիտի ըսէ Աստուծոյ «Տէր, ես չեմ զանի մոլորեցնողը. այս մարդը սխալ ճամբու մէջ էր, շատ հեռացած ուղիղէն:»

27. —Մի վիճիք իմ առջեւ. պէտէ ըսէ Աստուծոյ ես առջուց ձեզ զգուշացուցած էի:

28. Իմ խօսքս չիտխուիք, եւ ես բնաւ անիրաւու թիւն չեմ ըններ մարդոց:

29. Այն ատեն պիտի ըսենք դժոխքին, «լեցուեցա՛ր» ան ալ պիտի պատասխանէ, «աւելի ունի՞ք անոնցմէ»:

30. Անկէ ոչ հետու պատրաստուած է հեշտութեանց գրախորդ արդարներու համար:

31. Ահա ինչ որ խոստացուած է այն ամէն մարդու որ կ'ապաշխարհէ եւ Աստուծոյ օրէնքը կը պահէ:

32. Այն ամէն մարդ որ կերկնչի Որողմածէն եւ կ'ուզայ զղջացոյ սրտով մը:

33. Մտէ՛ք հոն իազազութեամբ, ահա յաւետեանականութեան օրը:

34. Դուք հոն պիտի ունենաք ձեր ուղածը. եւ մեր քով ալ աւելին կայ:

35. Մենք քանի՛ ժողովուրդներ բնաջնջած ենք Մեռեցիներէն աւելի զօրաւոր: Պտրտեցէք երկիրները, եւ տեսէք թէ մեր բարիութեան դէմ ապաստան մը կ'ույ՛:

36. Ահա ասոր մէջ խրատ կայ այն ամէն մարդու համար որ սիրտ ունի, որ ապանջ կը գնէ ու կը տեսնէ:

37. Մենք ստեղծած ենք երկիրքը ու երկիրը եւ զանոնք բաժնող միջոցը վեց օրուան մէջ, առանց յոգնելու:

38. Համբերէ անոնց ըսածներուն, օրհնարանէ քու Տէրդ արեւը ծագելէ առաջ եւ մարը մտնելէ առաջ:

39. Նաեւ օրհնարանէ զանի գիշերուան մէջ եւ երկրպագութենէն յետոյ:

40. Ուշադիր եղիր այն օրուան, յորում կանչողը կը գոչէ մօտ տեղէ:


41. Այս կոչին իրապէս լսուած օրը յարութեան օրն է:

42. Մենք կապրեցնենք եւ մենք կը մեռցնենք: Մենք ենք ամէն բանի վախճանը:

43. Այն օրը յորում երկիրը պիտի ձեզքուի անոնց ոտքերուն տակ, հաւաքման օրն է, որ մեզ համար դիւրին է:

44. Մենք լաւ գիտենք թէ անոնք (անհաւատները) ինչ կըսեն, եւ դու չպիտի կրնաս զանոնք ստիպել:

45. Ուրեմն դու զգուշացուր Գուրանով զանոնք որոնք կը վախնան իմ սպառնալիքէս:



ՄԱ. ԳԼՈՒԽ

Մէֆֆէական. վարսուն պատգամ

Յանուն Աստուծոյ գթածի և ողորմածի

1. Կերպնում անոնցմով որոնք կը ցրուեն,
2. Եւ որոնք ծանրութիւն մը կը կրեն,
3. Եւ որոնք թեթեւութեամբ կ'ընթանան,
4. Եւ որոնք կը բաժնեն ըստ ստացուած հրամա-  
նաց,
5. Թէ մեզ զնկուցուածը ճշմարիտ է.
6. Եւ դատաստանը իրօք անգի պիտի ունենայ:
7. Կ'երկնում ուղիներ ունեցող երկիրքովը,
8. Թէ դուք կարծեաց անհամաձայնութիւն ունիք:
9. Ուղիչ հասարակէն կազարձողէն երես պիտի դար-  
ձուի:
10. Սպաննուին ստախոսները,
11. Որոնք ազխութեան անդունդին մէջ վոլոր-  
ուած են:
12. Անոնք կը հարցնեն թէ ե՞րբ է դատաստանի  
օրը:
13. Ան օրը պիտի այրին կրակին մէջ:
14. Պիտի ըսուի անոնց, «կրեցէ՛ք փորձանքը,  
որուն շուտ գալը կուզէիք»:
15. Որոնք որ Աստուծմէ կը վախնան, պարտեղ-  
ներու եւ ազրիւրներու մէջ պիտի ըլլան,
16. Վայելիլով իրենց Տիրոջ տուածը, վասն զի  
անոնք բարիք ըրած էին,
17. Անոնք գիշերուան մէկ մասը միայն կը քնա-  
նային,
18. Եւ արշալոյսին թողութիւն կը խնդրէին ի-  
րենց մեղքերուն:

19. Անոնց ինչքերուն մէջ մարացիկի եւ գծրաղ-  
դի համար բաժին կար:
20. Երկրի վրայ նշաններ կան հաւատացելոց հա-  
մար:
21. Չեր մեջ ալ կան, չէ՞ք տեսներ:
22. Երկիրքին մէջն է ձեր սնունդը. հոն է ինչ  
որ ձեզ խոտացուած է:
23. Կ'երկնում երկիրքի եւ երկրի Տիրոջմով, նա  
ճշմարիտ է ինչ որ կը խօսիք գուք:
24. Կամ ես պատմութիւնը Աբրահա ի հիւրերուն  
որոնք պատիւով ընդունուած են,
25. Երբ անոնք անոր քով եկան ըսին անոր,  
«Խաղաղութիւն»: — Եւ Աբրահամ անոնց ըսաւ  
«Խաղաղութիւն»: — Ասոնք օտարական են,
26. Ըսաւ իբնեւրն. եւ գէր հորթ մը բերաւ:
27. Չայն ներկայացուց իր հիւրերուն, եւ ըսաւ  
անոնց, «Բիչ մը չէ՞ք ուտեր ասկէ»:
28. Եւ անոնցմէ երկուշ մը զգաց: Անոնք ըսին  
անոր, «Բանէ մը մի վախնար» եւ անոր աւետեցին  
իմաստուն մանչ գաւակ մը «նէնալ»:
29. Իր կիներ վրայ եկաւ եւ ճիչ մը արձակեց, եւ  
ձեռքերը երեսին զարկաւ, ըսելով, «Ես ձեր եւ ամուլ  
կիսն մըն եմ»:
30. «Այսպէս կուզէ քու Տէր Աստուածդ, Իմաս-  
տունը ու Գիտունը» ըսին հիւրերը:
31. «Ինչ է ձեր նպատակը, ո՛վ պատգամաբեր-  
ներ» ըսաւ նա:
32. Անոնք պատասխանեցին, «մենք զէպի չարա-  
գործ ժողովուրդ մը զրկուած ենք»:
33. «Որ անոնց վրայ քարեր թափենք»,
34. «Բարեք որոնք քու տիրոջ քով վերապահուած  
են անառակութիւն ընողներուն համար»:
35. Մենք համբեցինք անոնց հաւատացեալ-  
ները:

36. Եւ միայն մէկ ընտանիք գտանք միւսլիմներու (Աստուծոյ ուխտեալներու)

37. Հոն նշաններ ձգեցինք սոսկալի պատիժէն վահագողներուն համար:

38. Նշաններ կային Մովսէսի պաշտօնէն մէջ ալ, երբ զանի զրկեցինք Փարաւոնին յայտնի զօրութեամբ մը:

39. Բայց նա կռնակը դարձուց, իր ուժերուն կռթնած, ընդ Մովսէսի մասին, «Մա կախարդ մըն է կամ զիւհար մը»:

40. Մենք բռնեցինք զանի եւ իր բանակը, ու նետեցինք ծովին մէջ, վասնզի նա պարտաւորի էր:

41. Ատի ժողովուրդին մէջ նշաններ կային, երբ անոնց զէմ զրկեցինք կործանարար հով մը:

42. Որ' որու վրայէ որ անցաւ, անմիջապէս փոշիացուց:

43. Սամուտցիներուն մէջ ալ նշաններ կային, երբ անոնց ըսուեցաւ. «վայելեցէ՛ք մինչեւ որոշ ժամանակ մը»:

44. Անոնք Տիրոջ հրամանին ըմբոստացան, եւ փութորիկը անոնց վրայ հասաւ, երբ անոնք կը տեսնէին անոր քաղցր պայծառ օրոտն մէջ.

45. Անոնք չէին կրնար կանգնիլ ոչ ալ ազատիլ:

46. Նորի ժողովուրդն ալ, անոնցմէ առաջ, անբարիշտ ժողովուրդ մըն էր:

47. Մենք շինեցինք երկինքը մեր ձեռքերով եւ տարածեցինք միջոցին մէջ.

48. Երկիրն ալ տարածեցինք զորդի մը նման: Ինչ ճարտարութեամբ տարածած ենք զայն:

49. Նաեւ ամէն բան զոյգ ստեղծած ենք որ խորհրդածէք:

50. Ուրեմն Աստուծոյ քով ապաւինեցէ՛ք: Ես անոր կողմէ կուգամ յայտնօրէն խրատելու համար:

51. Աստուծոյ քով ուրիշ աստուածներ մի՛ղնէք: Անոր կողմէ կը խրատեմ ձեզ յայտնարար:

52. Այսպէս ալ անոնց նախնիքներուն բնաւ մարգարէ մը չէ զրկուած. որ կախարդ կամ զիւհար հո չհամարէին:

53. Այս ընթացքը արդեօք անոնց իբր ժառանգութիւն փոխանցուած էր: Արդարեւ սա ըմբոստ ժողովուրդ մըն էր:

54. Ուրեմն ձգէ՛ զանոնք, զոնն չպիտի պարսաւուիս:

55. Միայն մի գաղբիր խրատելէ: Արատը օղտակար պիտի ըլլայ հաւատացեալներուն:


56. Ես մարդիկը եւ զեւերը ստեղծեցի միայն զիս պաշտելու համար:

57. Ես անոնցմէ ոչ օրական հաց կուզեմ եւ ոչ ալ կուզեմ որ ինձ սնուցանեն:

58. Միայն Աստուած է սնունդի բաշխիչը, Զօրաւորը եւ Անսասանելին:

59. Որոնք որ անիրաւութիւն կրնեն, պիտի բտանան: Հատուցումը զոր ստացած են ուրիշ անգամ նոյն ընթացքը ունեցողներ: Անոնք չեն փութացներ պատիժը:

60. Վայ անհաւատներուն այն օրուան համար որ իրենց վերապահեալ է:



ՄԲ. Գ Լ Ո Ի Խ

Մէֆֆէական, Բառասուն ինը պատգամ

Յանուն Աստուծոյ զթածի եւ ողորմածի

- 1. Կ'երզնում Սինայ լեռով,
- 2. Կ'երզնում զբուած գիրքով,

- 3. Որ տարածուած մաքաղաթի վրայ է.
- 4. Կ երդնում բազմամարդ տունով (Գլխապէէ հասարկ)
- 5. Կ երդնում բարձր դմբեթովը,
- 6. Կ երդնում ուռած ծովովը,
- 7. Թէ Աստուծոյ պատիժը անխուսափելի է.
- 8. Ոչինչ չկրնար զայն ետ դարձնել:
- 9. Այն օրը երբ երկինքը սոսկումով մը պիտի շարժի,
- 10. Լիռները պիտի քալեն իրան քայլով մը
- 11. Իսկ այն օրը վա՛յ անոնց որոնք սուտ համարեցին մարգարէները,
- 12. Որոնք պարապ բաներով զբաղեցան.
- 13. Ան օրը անոնք դժոխքի կրակին մէջ պիտի նետուին:
- 14. «Այս ձեր սուտ համարած կրակն է», պիտի ըստէ անոնց:
- 15. Հիմա այս կախարհութիւնն է. կամ չէ՞ք տեսներ.
- 16. Այրուեցէք այս կրակին մէջ: Համբերէ՛ք կամ չհամբերէ՛ք, միեւնոյնն է ձեզ համար: Դուք միայն ձեր ըրածին հատուցումը կընդունիք:
- 17. Որոնք որ երկիւզած էին, զրախտներու եւ հեշտութեանց մէջ պիտի ըլլան:
- 18. Վայելելով իրենց Տիրոջ պարգեւածները: Անոնց Տէրը զանոնք պահպանած է կրակի տանջանքէն:
- 19. Կերէ՛ք ու խմեցէ՛ք առողջութեամբ, պիտի ըստէ անոնց, սա ձեր գործոց փոխարէնն է,
- 20. Կոթնած կարգաւ շտկուած անկողիններու վրայ, մենք զանոնք կամուսնացնենք մեծ ու սեւ աչքերով աղջիկներու հետ:
- 21. Որոնք որ հաւատացած են եւ որոնց զաւակները անոնց հաւատքին կը հետեին, պիտի միանան իրենց զաւակներուն հետ. բան մը չենք պակսեցնել անոնց գործերէն: Ամէն մարդ իր գործերուն զբաւական է:

- 22. Պիտի տանք անոնց առատութեամբ իրենց արտոժած պտուղները ու միսերը:
- 23. Անոնք հոն իրարու բաժակներ կը մատուցանեն, որոնցմէ ոչ գէշ խօսք առաջ կուգայ եւ ոչ մեղք:
- 24. Անոնց շուրջ պիտի երթեկեկեն մանչեր, որոնք կարծես խեղճներու մէջ պահուած մարգարիտներ են:
- 25. Իրարու քով գալով, փոխադարձ հարցումներ կընեն:
- 26. Մենք առաջ հոգ կընէինք, պիտի ըսեն, մեր ընտանիքին համար:
- 27. Աստուած մեզ հանդէպ բարեացակամ եղաւ եւ պահպանեց կիզիչ տանջանքէն:
- 28. Մենք առաջ զանի կը պաշտէինք. նա բարի եւ ողորմած է:
- 29. Ո՛վ Մահա՛մադ, յիշեցուր անհատներուն, թէ դու, փառք Աստուծոյ, ոչ կախարդ ես եւ ոչ դիւանար:
- 30. Անոնք պիտի ըսեն, «Սա բանաստեղծ մըն է, պիտի սպասենք անոր հետ բաղդին յաջողութիւններուն»:
- 31. Ըսէ՛ անոնց, «սպասեցէ՛ք, ես ալ ձեր հետ կ'սպասեմ»:
- 32. Անոնք արդեօք իրենց երազներէն կը ներշնչուին: Թէ ըմբոստ ժողովուրդ մը են:
- 33. Պիտի ըսեն, «Գործունէ ինք յօրինած է»:—Սա ճիշդ է որ անոնք չեն հաւատար:
- 34. Ուրեմն անոր նման ճառ մը թող արտադրեն եթէ անկեղծ են:
- 35. Միթէ անոնք առանց աշխատելու ստեղծուած են. կամ իրենք են իրենց արարիչը:
- 36. Անոնք ստեղծեցին երկինքը ու երկիրը:—Ո՛չ, ոչ ոք ճիշդ է որ անոնք չեն հաւատար:

37. Միթէ Աստուծոյ գանձերը անոնց քով է, կամ միթէ անոնք բարձրագոյն բաշխիչնէր են:

38. Անոնք սանդուղ ունին որ երկինքի գազա- նիքնէրը լսեն: Ով որ լսեր է, որոշ ապացոյց մը թող բերէ ուրեմն:

39. Միթէ Աստուած աղջիկնէր ունի, մինչ դուք աղանէր:

40. Միթէ անոնցմէ վարձք հուզես:— Բայց անոնք պարտքերու տակ ընկճուած են:

41. Աստուծոյն զաղանիքները միթէ անոնք գի- տին: Կը գրենք քիչի մէջ ինչէն Աստուծ կընէ:

42. Անոնք միթէ որոգայթ լարել կուզեն քեզ — Առաջին անգամ անհաւատները հոն պիտի իյնան:

43. Աստուծմէ զատ միթէ ուրիշ աստուած մը ու- նին: Փառք Աստուծոյ, որ շատ բարձր է այն աս- տուածներէն զորս իրեն կ'ընկերացնեն:

44. Եթէ տեսնէին երկինքէն հոտորի մը վար իյնա- լը, պիտի ըսէին, «սա թանձր ամպ մըն է»:

45. Չգէ՛ գանոնք մինչև որ հասնին իրենց այն- օրուան, յորում իրենց նենգութիւնները օգուտ մը չպիտի տան անոնց, յորում ոչ մէկ օգնութիւն պի- տի ստանան:

47. Անիրաւները ուրիշ պատիժներու ալ պիտի ենթարկուին, բայց անոնցմէ շատերը չեն գիտեր:

48. Համբերութեամբ սպասէ՛ քու Տիրոջ գատաս- տանին դու մեր աչքին առջևն ես: Փառաբանէ՛ քու տէրդ երբ որ ոտքի կելլես:

49. Եւ գիշերը, աստղերէն յետոյ, օրններդէ անոր- փառքը:



ԾԳ. Գ Լ Ո Ւ Խ

(ՍՈՒՐԷԹ ԱԼ-ՆԷՃԻՄ) Աստղը

Մէֆֆէական. վարսուն երկու պատգամ

Յանուն Աստուծոյ գթածի և ողորմածի

1. Կերզնում այն աստղովր որ մարը կը մանէ
2. Չեր հայրենակիցը, Ո՛վ Գորբէշէնէր, չէ մօրորած ու չէ սխալած:
3. Ես իր կիրքերուն համաձայն չխօսիր.
4. Գորբնը անոր եղած յայտնութիւն մըն է:
5. Չայն սովբեցնողը իր ուժովը Սուկայի է.
6. Ուժեղ է, որ յետոյ կեցուց (\*)
7. Ամենաբարձր երկրագունդին մէջ,
8. Յետոյ գէպի վար իջաւ և առկախ մնաց օ- ղին մէջ:
9. Երկու աղէկներու նեաւորութեան չափ կամ աւելի մօտ եղաւ:
10. Եւ յայտնեց Աստուծոյ ծառային ինչ որ անոր յայտնուելու էր:
11. Մահամէրի սիրտը չխաբեց. նա զայն տեսաւ:
12. Կը կասկածի՞ք անոր տեսածին վրայ:
13. Արդէն զայն տեսած էր առաջի իջնալուն,
14. Սահմանին լուտաս ծառին մօտը,
15. Հոն, ուր հանգստավայր դրախտն է:
16. Լուտաս ծառը երբ ծածկուեցաւ
17. Մարգարէին աչքը վայրկեան մը իսկ ուրիշ կողմ չը դարձաւ:
18. Արդարև իր Տիրոջ մեծագոյն հրաշալիքը տե- աւ:

(\*) Ուժեղը Գորբէշէնէն է որ Մահամէրի յայտ- նութիւնները ըրեր է կամ ստեղծողը է:

19 Ձեր կարծիքը ի՞նչ է էլ-Լ, աթի և Ալ-Օղղայի մասին:

20. Եւ սա միւս երրորդ կուռք Մանաթի մասին (\*)

21. Միթէ գուք արունե՞ր ունի՞ր և Աստուած է՞գեր:

22 Այս բաժանումը անիրաւ է:

23. Ասոնք միայն անուաներ են. դուք և ձեր հայրերը զանոնք այսպէս անուաներ էք: Այս մասին Աստուած ձեզ ո՛րէն ապացոյց չէ յայտնած. գուք միայն ձեր կարծիքին ու հակումներուն կը հետեւիք, և սահայն ձեզ առաջնորդութիւն մը եհած է ձեր Տիրոջմէ:

24. Միթէ մարդ կտանան՞ իր բոյոր ուզածը:

25. Աստուծոյ կը պատկանի վերջինը ինչպէս առաջինը:

26. Մրքան հրեշտակներ կան երկինքը որոնց բարեստութիւնը բանի մը չծառայիր:

27. Բացի այն պարագայէն որ Աստուած թողազրէ բարեստել, որուն որ ուզէ. որուն որ հաճի:

28. Որոնք որ հանդերձեայ կեանքին չեն հաւատար, հրեշտակներուն կիներու անուն կուտան:

29. Անոնք այդ մասին ոչինչ չեն գիտեր. միայն կարծիքներու կը հետեւին: Կարծիքները չեն կրնար ճշմարտութեան տեղը բռնել:

30. Գու հեռացիր անորմէ, որ կանակը կը դարձնէ երբ մեր մասին խօսուի. որ միայն այս աշխարհի կեանքը կը սիրէ:

31. Ահա թէ մինչև ուր կը հասնի անոնց գիտութիւնը: Քու Տէրդ լաւ գիտէ թէ ով խոտորած է անոր ճամբէն. և լաւ գիտէ թէ ով ուղիղ ճամբուն մէջն է:

32. Երկրից մէջ և երկրի վրայ բոլոր եղածը Աս-

(\*) Ասոնք Արաբներուն պէտքով տարածուած են.

տուծոյն է. նա հատուցում պիտի ընէ չարագործներուն ըստ իրենց գործոց. նա պիտի վարձատրէ զեղեցիկ վարձքով մը բարեգործները:

33. Որոնք որ կը կորչին մեծ ոճիրներէ և անառակութենէ, և թեթև յանցանքներու մէջ կեցնան, անոնց համար Աստուած առատօրէն ներողամիտ է: Նա ձեզ լաւ կը ճանչնայ հողէն ձեզ ստեղծելէն ի վեր. նա ձեզ կը ճանչնայ ձեր մայրերու արգանդներու մէջ սաղմանալէն ի վեր: Ուրեմն միջանաք զձեզ արդարացնել. նա լաւ գիտէ թէ ով է նրկուզած:

34. Նկատեցի՞ր զանի որ կանակը կը դարձնէ.

35. Որ քիչ կուտայ և որ կժժութիւն կընէ.

36 Անիկա միթէ ունի՞ գաղտնիքներուն գիտութիւնը, և կը տեսնէ՞ զանոնք:

37 Միթէ անոր պատմած չէ՞ Մովսէսի գիրքերուն գրուածները,

38. Եւ իր յանձնառութեանց մէջ հաւատարիմ Աւրամիմը:

39. Իր բեռնովը բեռնաւորուած հոգի մը ուրիշին բեռը չպիտի կրէ:

40. Մարդուն միայն իր վաստակը իրենը պիտի ըլլայ:

41. Իր ջանքերը պիտի գնահատուին էրէնց Բռնարէտով:

42. Յետոյ պիտի վարձատրուի ճշգրիտ հատուցմամբ:

43. Քու Տէրդ ամէնի վախճանը չէ:

44. Նա կը խնդացնէ և նա կը լացցնէ:


45. Նա կը մեռցնէ և նա կը վերակենդանացնէ:

46. Նա ստեղծած է զոյգը, արուն և էգը.

47. Կաթիլ մը սերմէ երբ ա, ն թափուած է:

48. Երկրորդ ստեղծումը անոր գործն է (այնքն յարմարութեան համար):

- 49. Նա կը հարստացնէ և ստացուածքի տէր կընէ:
- 50. Նա Տէրն է Շնիկ աստղին (որ էլ պաշտօնէր Արքայէրէն)
- 51. Նա բնաջնջեց Ատի հին ժողովուրդը.
- 52. Եւ Սամուէլները, և բան մը չթողուց անոնցմէ:
- 53. Եւ անոնցմէ առաջ Նոյի ժողովուրդը, որ աժէնէն չար և ամենէ ըմբոստ էր:
- 54. Եւ կործանած քաղաքները. նա էր որ զաւնոնք կործանեց:
- 55. Եւ երկնից պատիժը զանոնք պաշարեց ամբողջովին:
- 56. Եւ Աստուծոյ ո՞ր բարիքին վրայ կը կասկածիս:
- 57. Սա մարգարէն որ ձեզ կը խրատէ առջիններէն է:
- 58. Ժա՛նք որ պէտք էր զար, կը մօտենայ. Աստուծմէ զատ մէկը չկրնար անոր դարման ընել:
- 59. Այս խօսքերո՞ւ պատճառաւ դուք կը զարմանաք:
- 60. Եւ կը խնդաք փոխանակ լալու,
- 61. Եւ ձեր ժամանակը (կանցնէք զուարճութեամբ:
- 62. Արդ, Աստուծոյ երկրպագեցէք, և զանի պաշտեցէք:



ՄԴ Գ Լ ՈՒ Ի

(ՍՈՒՐԷԹ ԻԻԼ-ԳԱՄԷՐ) Լուսին

Մէքէական. յիսուն հինգ պատգամ

Յանուն Աստուծոյ Գթածի և Ողորմածի

- 1. Ժամը մօտեցաւ, և լուսինը ճեղքուեցաւ: (\*)
- 2. Բայց անասաբնէրը չբաշտ տեսնելով կը հերքեն ու կըսեն, «սա սովորական կախարդութիւն է»:
- 3. Անոնք ալ սուտ համարեցին և իրենց հաճոյքներուն հետեցան. բայց ամէն ինչ հաստատ է:
- 4. Սակայն անոնց իմաց տրուեցան զճշտած խոսքերէն՝ պատմութիւնները, ուր կը յեշտէ թէ ինչն անարեկուեցան:
- 5. Սա բարձրագոյն իմաստութիւնն է, բայց խըրատները անոնց օգուտ չըրին:
- 6. Ուրեմն ձգէ՛ զանոնք «՛ Մահաբեպ» կոչին օրը հրէշտիկը զանոնք պիտի կոչէ զժուար բանի մը.
- 7. Աչքերնին խոնարհեցուցած դուրս պիտի ելլեն իրենց գերեզմաններէն ցրուած մորեխներու նման:
- 8. Արագ քայլերով կը վազեն կանչող հրէշտակին քով: Անհաւատները պիտի ըսեն այն ատեն, «Ահա զժուարին օրը»:
- 9. Անոնցմէ առաջ Նոյի ժողովուրդն սուտ համարեց ճշմարտութիւնը, մեր Նոյ ծառան ստախոս նրկատեց, և կըսէին «դիւանար է», ու նա հալածուեցաւ:

(\*) Ըստ Իսլամ մեկնիչներու, իբր ընտրեալներն օր մը էր մարտի լուսինը ճեղքած լուսն:

40. Նա ազազակեց իր Տիրոջ. «Ես ճնշուեցայ, օգնէ՛ ինձ»:

41. Սենք ալ բացինք երկինքին զոները ջրօնզեղով:

42. Երկրէն աղբիւրներ բղխեցուցինք և երկնէն ջուրը միացաւ. «Երբեք ջուրը ըստ կանխորոշ ճրամանին»:

43. Մենք զանի դրինք տախաակներէ ու գամեքէ շինուած նախ մը մէջ:

44. Նա կը նաւարկէր մեր աչքերուն առջև: Սա վարձաարութիւնն էր անոր, որուն ապերախտ գրանուեցան անհասարկերը:

45. Մենք այս ըրինք իբր նշան մը: Կա՞յ մէկը որ խորհրդած է:

46. Ուրեմն ինչպէս եզան մեր պատիժը ու ըսպառնալիքը:

47. Մենք Գուրանը դիւրահասկանալի ըրինք յիշեցնելու համար. կա՞յ մէկը որ խորհրդած է:

48. Ատոցինքը սուտ համարեցին ճշմարտութիւնը: Բայց ինչպէս եզան մեր պատիժը ու սպառնանալիքը:

49. Անոնց դէմ զրկեցինք չարախաստիկ օրուան մը մէջ բուռն հով մը տեւական:

50. Որ վերցուց մարդիկը արմատախիլ եղած արմաւենիի կտորներու պէս:

51. Ուրեմն, ինչպէս եզան մեր պատիժը ու սպառնալիքը:

52. Գուրանը դիւրահասկանալի ըրինք յիշեցնելու համար. կա՞յ մէկը որ խորհրդած է:

53. Սամուտցիները սուտ համարեցին մեր սպառնալիքը:

54. Անոնք կըսէին, «միթէ մեզ նման մարդո՞ւ մը պիտի հետեւինք. այն ատեն մենք մոլորութեան և

յիմարութեան մէջ ինկած կըլլանք»:

55. «Երկինքի խրատները մեր մէջէն միայն անոր տրուեր է: Ոչ, այլ նա իբր ստախոս մըն է»:

56. Անոնք վաղը կը հասկնան, թէ մեզմէ որն է իբր ստախոսը:

57. Մենք անոնց կը զրկենք էգ ուզտ մը իբր փորձութիւն. պիտի հսկենք անոնց վարմունքին, և գու համբերէ՛:

58. Նա ալ անոնց իմացուց, թէ իրենց ջրամբարին ջուրը պէտք է բաժնուի անոնց և ուզտին միջև, և կարգաւ խմելու են:

59. Սամուտցիները իրենցմէ մէկը կանչեցին. որ քաշեց օտորը և սպաննեց ուզտը:

60. Ուրեմն, ինչպէս եզաւ մեր պատիժը և ըսպառնալիքը:

61. Անոնց դէմ զրկեցնեք հրէշտակէ՛ մէկ գոչուժը. և անոնք զարձան չոր յարդի կտորներ որ ցիխի կը խառնուի:

62. Գուրանը դիւրահասկանալի ըրինք յիշեցնելու համար. կա՞յ մէկը որ խորհրդած է:

63. Եւ Ղովտի ժողովուրդը սուտ համարեց սպառնալիքները:

64. Այդ ժողովուրդին դէմ զրկեցինք քարեր արձակող փոթորիկ մը. միայն Ղովտի ընտանիքը ազատեցինք սաւաօտուն:

65. Իբր նորո՞ մը մեր կողմէ: Մենք այսպէս կը վարձաարենք երախտագէտ եղողը:

66. Նա (Ղւժր) սպառնացեր էր անոնց մեր խտտութիւնը, բայց անոնք կասկածեցան մեր սպառնալիքի մասին:

67. Անոնք կուզէին հիւրերը չարչիկել. բայց մենք կուրացուցինք, և ըսինք, «կրեցէ՛ք իմ պատիժս ու սպառնալիքս»:

38 Եւ հետեւեալ առաւօտ անոնց հասաւ որոշեալ պատիժը:

39. Կրեցէք իմ պատիժներս և սպառնալիքներս, Գըւէին:

41. Եւ Փարաւոնի ժողովուրդն ալ խրատներ ունեցաւ:

42. Եւ անոնք մեր բոլոր հրաշքները սուտ համարեցին: Եւ զանոնք պատժեցինք սաստիկ ու զօրաւոր պատժով:

43. Եւ ձեր անհաւատները, «Վ Մէսէցէնէր, միթէ անոնցմէ լա՛ւ են. կամ գիրքերէն արտօնութիւնն ունիք:

44. Անոնք պիտի ըսեն, «մենք բազմաթիւ ենք, Կօգսենք իրարու»:

45. Անոնք շուտով պիտի գրուին ու փախչին ամէնն ալ:

46. Անոնց դատարանէ ժամը որոշուած է. Ո՛հ, սրչափ խիստ ու զառն պիտի ըլլայ այդ ժամը անոնց:

47 Մեղաւորները մոլորութեան և յիմարութեան մէջ ընկղմած են:

48. Այն օրը՝ յորում երեսի վրայ դեռ են ինկած պիտի քշուին դժոխքի կրակին մէջ, պիտի բռուէ անոնց, «կրեցէք դժոխքին հաղորդակցութիւնը»:

49. Մենք ամէն բան չափով ստեղծած ենք:

50. Մեր հրամանը միայն բառ մըն է՝ ակնթարթի մը պէս արագ:

51. Չեղ նման ժողովուրդներ բնաջնջած ենք: Չկա՛յ մէկը որ խորհրդածէ:

52. Ինչ որ կ'ընեն, Գիրքին մէջ գրուած է:

53. Մեծ ու փոքր ամէն բան հոն գրուած է:

54. Արդարեւրը պիտի բնակին զբախտներուն մէջ գետերու քով:

54. Ճշմարտութեան կայարանին մէջ, հզօր թափաւորին քով:



ՄԵ. Գ Լ Ո Ի Խ

Մէքէական, եօթանասուն ութ պատգամ

Յանուն Աստուծոյ գթածի և ողորմածի

1. Ողորմածը սովբեցուցած է Գուրանը:
2. Նա ստեղծած է մարդը:
3. Նա սովբեցուցած է անոր ճարտարախօսութիւնը:
4. Արևը և լուսինը հաշուով մը կը շարժին:
5. Տունկերը ու ծառերը կերկրագագնս Աստուծոյ:
6. Եւ երկինքը անիկա բարձրացուցած է, և կը շիւռը հաստատած է,
7. Որպէսզի խարդախութիւն չընէք ծանրութեան:
8. Արդարութեամբ կշռեցէք և կշիռքի կորուստ մի ընէք:
9. Նաև երկիրը դրած է ժողովուրդներու համար:
10. Երկրի վրայ հան պտուղներ և արմաւենիներ պտուղներով ծածկուած:
11. Եւ հացահատիկներ իրենց ցօղուններով և անուշահոտ տունկեր:
12. Արդ, Աստուծոյ պարգևներէն դ՞րը կուրանաք:
13. Մարդը հողէն կազմած է, ինչպէս բրուար:
14. Նա ստեղծած է դեերը առանց մուխի զուտ կրակէ:
15. Արդ, Աստուծոյ բարեքներէն դ՞րը կուրանաք,
16. Երկու արևելքներուն Տէրն է:

- 17. Եւ երկու արեւմուտքերու տէրը. (\*)
- 18. Աստուծոյ բարիքներէն ո՞րը պիտի ուրանաք :
- 19. Նա զատած է երկու ծովերը ոչ իրարու կը հաղորդակցին :
- 20. Անոնց միջև պարիսպ մը բարձրացած է : Էրո՞ր չեն խառնուիր :
- 21. Աստուծոյ բարիքներէն ո՞րը պիտի ուրանաք :
- 24. Անորն են ծովերէն անցնող լեռան պէտ՛նաւերը :
- 25. Աստուծոյ բարիքներէն որ՞ը պիտի ուրանաք :
- 26. Աշխարհի վրայ բոլոր եղածը անցաւ որ է :
- 27. Միայն վեհափառ ու փառաւոր Աստուծոյ գէ՛տքը պիտի մնայ :
- 28. Աստուծոյ բարիքներէն ո՞րը պիտի ուրանաք :
- 29. Երկնից մէջ և երկրի վրայ բոլորը Աստուծոյ կազաչէ : Նա ամէն օր նոր գործով մը զբաղած է :
- 30. Աստուծոյ բարիքներէն ե ալլին :
- 31. Օր մը ձեզմէ հաշիւ պիտի պահանջենք. ո՞վ մարդիկ և ղեւեր :
- 32. Աստուծոյ, և ալլին :
- 33. Ով մարդկանց և ղեւերու խումբեր, եթէ դուք կրնաք անցնիլ երկինքի ու երկրի սահմաններէն անդին, անցէ՛ք. բայց դուք հրամանով միայն պիտի անցնիք :
- 34. Աստուծոյ, և ալլին :
- 35. Չեր վրայ կրակի բոցեր և հալած պղինձ պիտի թափուի : Դուք չպիտի ազատիք :
- 36. Աստուծոյ, ալլին :
- 37. Երբ երկինքը ձեզքուի և վարդազոյն դառնայ ներկուած կաշիի նման :
- 38. Աստուծոյ, և ալլին :
- 39. Այն օրը ալլեա չեն հարցաքննուիր մարդիկ և ղեւեր իրեց մեղքերուն մասին :
- 40. Աստուծոյ, և ալլին :

(\*) Չհետաւան արեւմուտքի եւ արեւմուտքի արեւմուտքի

- 41. Չարադործները պիտի ճանչցուն իրենց նը- շանն երէն և անոնք պիտի բռնուին ճակատեուն մագերէն եւ սարքերէն :
- 42. Աստուծոյ, և ալլին :
- 43. Այն դժոխքն է, զոր չարադործները առակ կը համարէին :
- 44. Անուք պիտի դառնան բոցերու և եռացող ջուրին մէջ :
- 45. Աստուծոյ, և ալլին :
- 46. Որոնք որ կը վախնան Աստուծոյ վեհափառու- թե՛ն էն երկու պարտէզ պիտի ունենան :
- 47. Աստուծոյ, և ալլին :
- 48. Երկուքն ալ ծառերով զարդարուած :
- 49. Աստուծոյ, և ալլին :
- 50. Երկուքին մէջ ալ երկու հոսու աղբիւրներ :
- 51. Աստուծոյ, և ալլին :
- 52. Երկուքին մէջ ալ խրաքանչիւր պտուղէ եր- կու տեսակ :
- 53. Աստուծոյ, և ալլին :
- 54. Անոնք պիտի հանգստանան ընկողմացած գորգերու վրայ որոնց աստարը մետաքսէ պիտի ըլ- լայ : Երկու պարտէզներուն պտուղներուն քաղուիլը ուղողին արամաղբիլի պիտի ըլլայ :
- 55. Աստուծոյ, և ալլին :
- 56. Անոնց մէջ կան խոնարհ նայուածքով թարմ կայսեր, որոնց անկէ առաջ չեն դպած ոչ մարդիկ եւ ոչ ղեւերը :
- 57. Աստուծոյ, և ալլին :
- 58. Էնոնք հակենթի (եպութ) և բուստի կը նմանին :
- 59. Աստուծոյ, և ալլին :
- 60. Բարութեան վաճքը միթէ բարիքէն սար- քե՞ր բան է :

- 61. Աստուծոյ, եւ այլն,
- 62. Այս երկու պարտէզներէն զառ ուրիշ երկու պարտէզներ ալ կան:
- 63. Աստուծոյ, եւ այլն:
- 64. Երկու պարտէզ կանանչով ծածկուած.
- 65. Աստուծոյ, եւ այլն:
- 66. Անոնց մէջ երկու ազրիւրներ կը բոլորի.
- 67. Աստուծոյ, եւ այլն:
- 68. Հոն կը գտնուին պտուղներ, արմաւենիներ եւ նոննիներ.
- 69. Աստուծոյ, եւ այլն:
- 70. Հոն ընտրեալ գեղեցիկ կոյսեր կան.
- 71. Աստուծոյ եւ այլն,
- 72. Խոշոր եւ սեւ աչքերով կոյսեր վրաններու մէջ.
- 70 Աստուծոյ, եւ այլն:
- 74. Էնոնք երբէք մարդու եւ գետի դպած չեն.
- 75. Աստուծոյ, եւ այլն:
- 6. Էնոնց ամուսինները պիտի հանգստանան կանանչ բարձերու եւ շքեղ գորգերու վրայ.
- 77. Աստուծոյ եւ այլն:
- 78. Օրհնեալ ըլլայ վեհութեամբ եւ առաաաձեւեւ նութեամբ լի Տիրոջը անուներ:



### ՄՁ ԳԼՈՒԽ

Մէքէական. իննսուն վեց պատգամ

Յանուն Աստուծոյ զթածի եւ որորմածի

- 1. Երբ (վերջին դարաստեղ) պատահի,
- 2. Անոր մասին ոչ ոք չպիտի կասկածի:

- 3. Այն պիտի խոնարհեցնէ շքերը եւ պիտի բարձրացնէ առաքինիները:
- 4. Երբ չարժք սարսեցնէ նրկիբը,
- 5. Եւ լեռները բշտախն,
- 6. Եւ փոշիանալով ցիրու ցան ըլլան,
- 7. Այն աստիճան գուք. մարդիկդ, երեք խումբերու կը բաժնուիք:
- 8. Անկողմեանները, ո՞նջ ազակոմեան ի՞նչ երջանիկ.
- 9. Չախակողմեանները, ո՞նջ ձախակողմեանները քչ իշտառ:
- 10. Եւ տասթիւները պիտի ըլլան առաջին
- 11. Ասոնք Աստուծոյ մերձաւորներն են.
- 12. Հեշտութեանց շրախախն մէջ պիտի բնակին.
- 13. Կախիքներէն չատերը,
- 14. Եւ նորերէն միայն քիչ թուով
- 15. Հոն կը հանգչին ոսկեհաւա եւ ալկանիուս աթոռներու վրայ.
- 16. Ընկողմեացած գեղեցիկ մաց:
- 17. Անոնց չարժ պիտի դատան յաւիտենապէս մտաղաչ մանչեր.
- 18. Բամախներով, քրիստիներով (եւրբէ) եւ գինի (վրամ մաքուր ընկրի) լեցուն գաւաթներով
- 19. Անոնց գլուխը չցաւիք ու չգառնար,
- 20. Պտուղներով, զարս իրենք կ'ընտրեն ըստ ճաշակի,
- 21. Եւ թուշուններու միտ ըստ իրենց ախորժին
- 22. Խոշոր սեւ աչքերով աղջկէնէն գեղեցիկ նման խնամքով պտուած մարգարիտներու:
- 23. Այս պիտի ըլլայ անոնց գործերուն վարձքը.
- 24. Անոնք հոն չպիտի լսեն ոչ գէշ խօսք եւ ոչ մեղադրանք:
- 25. Այլ պիտի լսուի միայն սխողաղութիւն, խաղաղութիւն:

- 26. Աջակողմի մարդիկը, (ի՛նչ երջանիկ) -
- 27. Պիտի նստին անփուշ լուսասի ծափին
- 28. Եւ պողալի ատամաթղենիին մէջ տեղը,
- 29. Տարածուն չուքի տակ
- 30. Հոտուն ջուրի մը քովը
- 31. Առատ պտուղներու մէջ,
- 32. Չորս ոչ ոք չպիտի կտրէ և ոչ ոք չպիտի արգիլէ անոնց մօտենալ.
- 33. Եւ անոնք հոն պիտի բազմին բարձր անկողիններու վրայ:
- 34. Մենք ստեղծած ենք մասնաւոր ստեղծմամբ, քրտեքի զեզուհիները:
- 35. Մենք պահպանեցինք քրտեքի կենդանի կուսու թիւը.
- 36. Սիրուած իրենց ամուսիններէն և հասակակից անոնց.
- 37. Էնոնք պիտի յատկանան աջակողմի մարդոց.
- 38. Հին մարդոցմէ շատեր պիտի ունենան անոնցմէ.
- 39. Եւ նորերէն ալ շատեր անկէ պիտի ունենան.
- 40. Եւ ձախակողմի մարդիկը (ո՛հ ձանակողմեանս ներք)
- 41. Պիտի ըլլան յապականիչ հովի և ևսացող ջուրի մէջ տեղը,
- 42. Սեւ ծուխի չուքին մէջ,
- 43. Որ ոչ զով է և ոչ հաճելի.
- 44. Առաջ անոնք զուարճալի կեանք մը կանցունէին:
- 45. Անոնք կը յամտէին անհաշտ ատելութեան մը մէջ.
- 46. Եւ կըսէին,
- 47. «Երբ մեռնինք, և հոգի ու ոսկորի վերածուինք միթէ կրին պիտի վերակենդանանանք,
- 48. Նոյնպէս ալ մեր նախահայրերը»:

- 49. Ըսէ՛, «Թէ՛ հիները ինչպէս նորերը
- 50. «Պիտի համախմբուին անպատճառ ըստ մաճաղութեան կանխորոշ օրուան.
- 51. Յետոյ դուք, ո՞վ մոլորեալներ, որ չէք հաւատար
- 52. Չըլլմ ծառէն պիտի ուտէք
- 53. Անկէ պիտի լեցնէք ձեր փորը
- 54. Յետոյ եռացող ջուրէն պիտի խմէք,
- 55. Ինչպէս որ կը խմէ խիստ ծարաւցած ուղտ մը
- 56. Այսպէս պիտի ըլլայ անոնց դատաստանի օրուան ճաշը.
- 57. Մենք ստեղծած ենք ձեզ և ի՞նչու չէք հաւատար յարութեան.
- 58. Սերմանումը՝ զար կընէք
- 59. Դուք կոտեղծէք թէ մենք ենք ստեղծողը:
- 60. Մենք որոշած ենք մարը ձեր մէջ, և մենք չպիտի աճահարենք.
- 61. Ձեր տեղ ուրիշ մարդիկ դնելու որ ձեզ նրմա՛ին կամ ձեզ ուրիշ կազմի վերածելու որ չէք գիտեր:
- 62. Դուք գիտէք առաջին ստեղծագործութիւնը ի՞նչու չէք խորհրդ:
- 63. Ուշադիր եղած էք ձեր սերմանումին,
- 64. Դուք կը ցանէք գաշտերը, թէ մենք ենք ցանողները.
- 65. Եթէ ուզենք, մենք զայն չոր յարդի ցօղունի կը վերածէինք, և դուք զարմանալով կ'աղաղակէիք
- 66. «Մենք պարտքի տակ ինկանք, մեր յոյսերը փճացան, կորսուեցան»:
- 67. Ուշադրութիւն կընէք ձեր խմած ջուրին,
- 68. Չայն ամպերէն իջեցնող դուք էք, թէ մենք է:
- 69. Եթէ ուզէինք զայն աղի ջուրի կը վերածէինք և Աւրեմի ի՞նչու երախտագէտ չէք:

70. Կը նայի՞ք այն կրակին զոր կստանաք քայտը  
էրբը չփեղով :

71. Գո՞ւք ստեղծած էք փայտը որ ձեզ կրակ կու-  
տայ, թէ մենք :

72. Մենք զայն նշան մ'ընել ուզած ենք և օգ-  
տակար անարկայ մը անապատի ճամբորդներուն  
համար :

73. Ուրեմն օրհնէ՛ ամենաբարձր Աստուծոյ անունը :

74. Այո՛, կերգնում աստղերու տեղերովը :

75. (Եւ սա մեծ երգում է եթէ գիտէք)

76. Թէ Գուրանը օգտական ընթերցում մըն է

77. Որուն քննէր Աստուծոյ քով պահուած գիրքի-  
մը մէջ է :

77. Մէկը անոր չպիտի գպչի, եթէ մաքուրներէն չէ :

79. Տրեղերքի Տիրոջ յայնու թիւնն է այն :

80. Այս գիրքն է որ գուք կարճամարչէք :

81. Ձեր ապրուստը այս քերէն զէ՛մ սուտ ամբաս-  
տանութիւններ ընելու մէջ կը կայացնէք :

82. Ի՞նչու համար ուրեմն, երբ ձեզմէ մէկին հո-  
գին կոկորդը հասնի,

83. Աչքերնիդ ամէն կողմ կը դարձնէք :

84. Երբ մենք ձեզմէ աւելի մօտ ենք անոր, ա-  
ռանց ձեզմէ տեսնելու :

85. Ի՞նչու համար ուրեմն, եթէ դուք չպիտի դատ-  
ուիք և չպիտի վարձատրուիք :

86. Ձէք վերադարձներ Բռնէլը — իրոյ եղբայր հօգին :

87. Եթէ անիկա Աստուծոյ ամէնամարձաւորներէն է

88. Անոր վերապահուած են հանգիստը, հաճոյքը  
և երանելի դրախտը :

89. Անոր որ աջակողմի մարդոցմէ է :

90. Անոր պէտէ ըստէ. «խաղաղութիւն քեզ աջակող-  
մեաններէն» :

91. Իսկ եթէ նա ըլլայ մարդարէները սուտ հա-

մարդներէն :

92. Մոլորեալներէն :

93. Եռացող ջուրը իրեն բաժին պիտի ունենայ :

94. Մենք զանի կրակին մէջ պիտի այրենք :

95. Անա այս է անսխալ ճշմարտութիւնը :

96. Օրհնէ՛ ուրեմն քու Տիրոջդ մեծ անունը :



### ԾԷ. Գ Լ Ո Ի Խ

#### Մէտնիւական, քան ինը պատգամ

Յանուն Աստուծոյ գթածի և ողորմածի

1. Այն ամէնը՝ որ երկնից մէջ և աշխարհ, վրաց  
կը գտնուի, Աստուծոյ փառքը կերգէ :

2. Անոր կը պատկանի երկնից ու երկրի թագաւո-  
րութիւնը. նա կ'ապրեցնէ և նա կը մեռցնէ. և նա  
ամէնակարող է :

3. Նա է առաջինը ու վերջինը արտաքինը ու  
ներքինը, նա ամէնագէտ է :

4. Նա ստեղծած է երկնքը ու երկիրը վեց օր-  
ւան միջոցին. յետոյ գացած բազմած է գահին վը-  
րայ. նա գիտէ թէ երկիրը ինչ կը մտնէ ու կելլէ,  
երկնքէն ինչ կ'ըջնէ ու վեր կելլէ. նա ձեր հետն է  
ուր որ ալ ըլլաք նա կը տեսնէ ձեր դործերը :

5. Երկնից ու երկրի թագաւորութիւնը անորն է՝  
ամէն բան անոր կը վերադառնայ :

6. Նա կը յաջորդեցնէ գիշերը ցերեկուան և ցե-  
րեկը գիշերուան. նա գիտէ սրտերու մէջ կզածը :

7. Հաւատացէք Աստուծոյ և իր մարգարէին, և  
ողորմութիւն տուէք մաս մը այն ինչքերէն, որոնց  
Աստուած մառանգորդ ըրած է ձեզ : Ձեզմէ որոնք  
որ կը հաւատան և կ'ողորմին, պիտի ընդունին մեծ  
վարձք մը :

8. Ի՞նչ ունիք որ չէք հաւատար Աստուծոյ և իր մարգարէին, որ զձեզ կը հրաւիրէ ձեր Տիրոջ հաւատալու, որ արդէն ձեզմէ ուխտ առեր է, եթէ հաւատացեալներ էք:

9. Նա է որ իր ծառաներուն կիջեցնէ յայտնի նըշաններ զձեզ մութէն յոյս առաջնորդելու համար: Արդարև, Աստուած ձեզ հանդէպ գլխած և ողորմած է:

10. Գուք ի՞նչ պատճառաւ Աստուծոյ ճամբուն չէք ծախսեր ձեր ինչքը, քանի որ երկնից ու երկրի ժառանգութիւնը միայն Աստուծոյն է: Ձեզմէ ով որ իր ունեցածը առաւ յաղթութենէն առաջ, և անձամբ ալ կուսեցաւ, նա աւելի բարձր աստիճան պիտի ունենայ քան անոնք որոնք յաղթութենէն յետոյ ընծայած ու կուսածն: Բայց Աստուած ամէնուն ալ լաւ վարձք խօստացած է: Նա գիտէ ձեր գործեր:

11. Ո՞վ է որ Աստուծոյ առատ փոխ կուտայ, նա անոր երկնապատիկը կը հատուցանէ, և անկէ զատ ալ առատ վարձք կուտայ:

12. Այն օրը պիտի տեսնես այր և կին հաւատացեալները, անոնց առջևէն և աջէն պիտի երթայ լոյսը Անոնց պիտի ըսուի, «այսօր ձեզ կուտանք լոյսը ինչուն ջուրով ոռոգուած գրախաներուն, որոնց մէջ պիտի մնաք յաւիտեան: Այս անձան երջանկութիւն մըն է:

13. Այն օրը կեղծաւորները ու կեղծաւորութիւնները պիտ' ըսեն հաւատացեալներուն, «մեզ նայեցէ՛ք, քիչ մը սպասեցէք որ ձեր լոյսին մասնակցի՛նք»: Բայց անոնց պիտի ըսուի, «աշխարհ վերադարձէք և ինչ փնտռեցէք լոյսը»: Անոնց միջև պարբապ մը պիտի բարձրանայ, որ մէկ գուռ պիտի ունենայ, Ողորմածը ներսն է, իսկ գուռը և անոր դէմնէ Պատիժը: Կեղծաւորները պիտի ազգազակեն հաւատացեալներուն «Ահնք ձեր հետ չէլինք»: Անոնք ալ պի-

տի ըսեն «Այո, բայց դուք զձեզ վտանգի մէջ ձրգեցիք պատեն վայրկեանը սպասելով, դուք կասկածեցաք, և աշխարհի ցանկութիւնները ձեզ կուրացուցին մինչև որ Աստուծոյ հրամանը հասաւ: Մ'որոքիչը ձեզ կուրացուց Աստուծոյ մասին:

14. Այսօր փրկանք չընդունուիր այլևս ոչ ձեզմէ ոչ անհաւատներէն: Ձեր բնակարանը կրակն է, անոնք ալ է ձեր շահածը: Ի՞նչ ստեղծուի վերջ

15. Հաւատացեալներու համար չէ՞ եկած ժամանակը սրտերնին խոնարհեցնելու Աստուծոյ յիշատակին առջև և ճշմարտութեան գիրքին առջև զօր ինք զրկած է: Որ անոնք չմտնին գիրքը առաջ, ընդանոյններուն որոնց սրտերը կարծրացան մէջոցը երկարելով, և որոնց շատերը շարագործներ եղան:

16. Գիտցէք որ Աստուած կեսանք կուտայ երկրին: Արդէն ձեզ բացատրեցինք հրաշքները, որպէս զի հասկնաք:

17. Որոնք սր ողորմութիւն կուտան, այր և կին, որոնք որ Աստուծոյ առատ փոխ կուտան, անոր կրկինը պիտի ստանան, և անկէ զատ ալ առատ վարձք մը:

18. Որոնք որ կը հաւատան Աստուծոյ և իր մարգարէներուն արդար մարտիկ են, անոնք վկայ պիտի ըլլան իրենց Տիրոջ առջև, անոնք իրենց վարձքը և իրենց լոյսը պիտի ունենան: Իսկ որոնք որ չեն հաւատացած և մեր նշանները սուտ համարած են, դժօխքի կրակին պիտի յանձնուին:

19. Գիտցէ՛ք որ այս աշխարհի կեանքը խաղ մը և ունայն պերճանք մըն է ձեր մէջ, և ինչքերու և գաւակներու բազմանայր անձրևի կը նմանի, որուն անեցուցած բոլորները կուրսխացնեն անհաւատները, բայց շուտով կը տեսնես որ կը շարունակուի և կը զեղնին և չոր խոտ կը գառնան: Նաև միւս աշխարհի մէջ խիստ պատիժ կայ:

20. Կամ Աստուծոյ թողութիւնը ու գո՛ւունակութիւնը կայ: Այս աշխարհի կեանքը հրապուրող առժամանակեայ վայելք մըն է միայն:

21. Աւրեմն ջանացէք ձեր Տիրոջմէ թողութիւնը դրախտն ստանալ. որուն ընդարձակութիւնը երկինքի ու երկրի չափ է. և որ պատրաստուած է Աստուծոյ և անոր մարդարէններուն հուստացողներուն համար: Այս Աստուծոյ շնորհն է զոր կը պարգևէ իր ուզածին. վասնզի Աստուած անհուն բարեբար է:

22. Այ երկրին և ոչ ձեր անձին ո՛րքէ պատուհաս չպատահիր որ գրուած չըլլայ Գիրքին մէջ առաջուց թէ մե՛ք ստեղծած ենք: Այս դիւրին էր Աստուծոյ:

23. Աւրեմն մի տրամիք ձեր կորսնցուցածին համար, ոչ ալ ուրախացէք ձեզ արուածին համար: Աստուած չսիրեր գոռոզները և ինքնաճանաչները:

24. Որոնք որ ազան են, ուրիշներն ալ աշահութեան կը թելադրեն, թէ ազանք քաշուի ձէն քորձերէ. հոգ չէ, Աստուած հարուստ և օրհնեալ է. Ի՞նչ կը կորսի:

25. Մենք մարգարէներ զրկեցինք հրաշքներով. անոնց տուինք Գիրքը և կշիւը. որպէսզի մարգրկարգարութեամբ վարուին: Մենք իջեցուցինք երկինքէն երկաթը: Անոր մէջ ծանր չարիք կայ. բայց օգտակարութիւն ալ կայ մարդոց համար: Նա չեղարձ է շոյ՛ն գիտնալու համար թէ ձեզմէ ո՞վ պիտի օգնէ անոր և իր մարգարէին անկեղծօրէն: Աստուած հզօր և զօրաւոր է:


26. Մենք զրկեցինք Նոյն և Աբրահամը, և անոնց սերունդին մէջ հաստատեցինք մարգարէութեան շնորհը, նոյնպէս Գիրքը: Կան անոնց մէջ ուղիղ ճամբուն նեակողներ, բայց շատերը ամպարիշտ են:

27. Յետոյ անոնց ճամբէն զրկեցինք միւս մարգարէները, ինչպէս՞ Մարիամի որդի Յիսուսը, որուն

տուինք Աւետարանը. և անոր նեակողներու սրտերուն մէջ գրինք գթութիւն և համակրութիւն. իսկ վանական կեանքը իրենք հնարած են: Միայն Աստուծոյ հաճութիւնը ինչորեւ պատուիրած էինք, բայց անոնք չյարգեցին զայն ինչպէս որ պարտաւոր էին: Մենք վարձատրութիւն տուինք անոնցմէ հաւատացողներուն, բայց շատերը ամպարիշտներ են:

28. Ով հաւատացեալներ, վայցէք Աստուծոյ և անոր մարգարէէն. նա ձեզ պիտի տայ կրկնապատիկ իր ողորմութենէն. նա ձեզ պիտի տայ լոյսը, որպէսզի անոր օգնութեամբը պարտիք. և նա պիտի ջնջէ ձեր մեղքերը, վասնզի նա ներող ողորմած է:

29. Որպէսզի գիրք օւնեցող մարգրիկո գիտնան, թէ Աստուծոյ շնորհքէն ոչինչ ունին, թէ Աստուծոյ շնորհքը իր ձեռքերուն մէջն է, և կուտայ որու որ ուզէ Աստուած մզմ շնորհքի տէր է:



ՄԸ. Գ Լ Ո Ի Խ

Մէքէական, Բասն Երկու պատգամ

Յանուն Աստուծոյ գթածի և ողորմածի

1. Աստուած լսեց խօսքերը այն կնոջ որ քեզ կը գանգատէր իր ամուսնոյն դէմ նաև զանգատեցաւ Աստուծոյ: Աստուած լսեց ձեր նուսակցութիւնը, վասնզի Աստուած կը լսէ ու կը տեսնէ բոլորը:

2. Ձեզմէ որոնք՝ որ իրենց կիները արձակեն ըսելով թէ զէնոնք իրենց մայրերը պիտի նկատեն (էնոնք իրենց մայրերը չեն, այլ իրենց մայրերն են զիրենք ծնողները). պարսաւելի և զուր խօսք մը ըրած կ'ըլլան:

3. Արդարեւ Աստուած ներող և թողութիւն տուող է .

4. Անոնք որ իրենց կիները «մայրս թող ըլլայ» ի բանաձևով կարճակեն և յետոյ կը զզջան իրենց այդ խօսքէն, գերի մը պէտք է ազատ թողուն, «բձկ- ութ շոյքը վերստին միանայէն առաջ: Այսպէս պատ- ուրբութեամբ է ձեզ և Աստուած տնդեակ է ձեր բրած- ներունի:

5. Իսկ ով որ չկրնայ գիրի մը ազատել, պարտի երկու ամիս ծով պահել իրարու մօտենայէ առաջ, և եթէ ծովագահութեան չզիմանար, պարտի վաթ սուն ազգատ կերակրել: Այս ձեզ կը հրամայուի որ հաւատաք աստուծոյ և իր մարգարէին: Ասոնք Աս- տուծոյ սահմանումներն են: Անհաւատներուն դասն ամենջանք վերապահուած է:

6. Անոնք որ կը հակառակին Աստուծոյ և անոր մարգարէին, պէտք է կործանին ինչպէս որ անոնցմէ առաջ եզոզները կործանած են: Եւ արդէն յայտնի նշաններ իջեցուցած ենք, և անհաւատներուն խայ- տառակով պատիժ վերապահուած է:

7. Այն օրուան յարում Աստուած ամէնին յարու- թիւն տանել պիտի տայ և պիտի յիշէ անոնց. գոր- ձերը: Աստուած ամէնը հաշուած է, մինչդեռ իրենք մտացած են: Աստուած զիայ է բոյորին:

8. Չնս տեսներ որ Աստուած գիտէ երկնից մէջ և երկրի վրայ բոյոր եզածը: Երեք անհատներ չեն կրնար իրարու հետ գաղտնի տեսակցել եթէ նա չոր- բորդ չըլլայ. ոչ ալ ինչքը եթէ նա վեցերորդը չըլ- լայ: Աչ ալ անկէ աւելի կամ պակաս՝ եթէ նա տ- նոնց հետ չըլլայ, ուր որ ալ գտնուին: Եւ յետոյ, յարութեան օրը անոնց պիտի յիշեցնէ իրենց գոր- ձերը, փասնզի տեղեակ է ամէնին:

9. Չնս տեսներ զանոնք, որոնց արգիլուած է

գաղտնի խօսակցութիւնը, և որոնք իրենց արդէր- ուածին հակառակ կը վարուին, և որոնք մարգա- րէին դէմ մեղք, թշնամութիւն և անհնազանդու- թիւն կը փսփսան իրարու: Յետոյ երբ քու- առջևդ ներկայանան, քեզ կը բարեկեն այն կերպով որ Աստուած քեզ չէ բարեւած իրարու կրտն, «ինչու Աստուած մեզ չպատժեր մեր խօսածին հա- մար»: Անոնց բաժինը դժոխքն է. անոնք անօր- կրակովը պիտի այրին: Ինչ անպիտան վարձան է:

10. Ով հաւատացեալներ, երբ գաղտնի կը խօ- սակցիք, մարգարէին դէմ մեղք թշնամութիւն և անհնազանդութիւն մի փսփսաք, այլ խօսակցեցէք արդարութեան և երկիւղածութեան մասին, վախ- ցէք Աստուծմէ որուն առջև պիտի հաւաքուիք:

11. Գաղտնի խօսակցութիւնը սատանանէ կուգայ, որ կուզէ ձեզ տխրեցնել, բայց չէ կարող ձեզ չարիք հասցնել առանց Աստուծոյ արտօնութեանը: Ուրեմն հաւատացեալները Աստուծոյ թող ապաւինին:

12. Ով հաւատացեալներ, երբ ձեզ ըսուի, «ձեր ժողովներուն մէջ տեղ տուէք», Տուէք տեղ, Աստ- ուած ալ ձեզ տեղ կուտայ «բնակարան մէջ: Եւ երբ ձեզ ըսուի, «վեր ելէք», վեր ելէ՛ք Աստուած ալ վեր կը բարձրացնէ ձեր մէջէն հաւատացողները և գիտուն թիւն ընդունողները, վասնզի Աստուած կը տեսնէ ձեր ըրածները:

13. Ով հաւատացեալներ, երբ դուք մարգարէին հետ մասնաւոր ու գաղտնի տեսակցութիւն կունե- նաք, նախ ողորմութիւն տուէք այս ձեզ համար լա-ւագոյնէ և շատ պատշաճ, բայց եթէ միջոցներ չու- նենաք, Աստուած ներող և ողորմող է:

14. Կը վարանիք մարգարէին հետ խօսակցելէ- առաջ ողորմութիւն տալ: Եթէ այդ չէք ըներ, ինչ որ Աստուած ձեզ պիտի ներէ, գէթ աղօթքը կատա-

րեցէք և օրինական տուրքը տուէք և ճնազանդեցէք Աստուծոյ և իր մարգարէին: Աստուած տեղեակ է ձեր բրածներուն:

15. Աւշազիր չեղա՞ր անոնց. որոնք բարեկամ ընդունեցին այն ժողովուրդը (\*) որուն դէմ Աստուած բարկացած է: Անոնք ոչ ձեզի կուսակից են և ոչ անոնց և անոնք սուտ երգում կրնն գիտակցաբար:

16. Աստուած սոսկալի պատիժ պատրաստած է անոնց համար. վասնզի անոնց գործերը չար են:

17. Անոնք իրենց երդումով կը զիմակա որուն և կը չեղին Աստուծոյ ճամբաներէն. բայց խայտառակող պատիժ մը կ'սպասէ անոնց:

18. Այ իրենց հարստութիւնները և ոչ իրենց զաւակները օգուտ մ'ունին անոնց Աստուծոյ հանդէպ անոնք յաւեանական կրակին գոհերը պիտի ըլլան:

19. Այն օրը յորում Աստուած անոնց ամէնին յարութիւն առնել պիտի տայ, պիտի երզնուն ինչպէս ձեր առջև կերդնուն, թէ ի՞նչ նախա՞ն. անոնք կը կարծեն թէ այդ օգտակար կըլլայ իրենց: Ա՛յ որչափ ստախոս են:

20. Սատանան զանոնք յաղթած է և անոնց մոռցուցած է Աստուծոյ յիշատակը: Անոնք Սատանային կուսակցութիւն են որ միասուած է:

21. Որոնք որ կը հակառակին Աստուծոյ և անոր մարգարէին, պիտի անարգուն: Աստուած որոշած է թէ «ես պիտի յաղթեմ, նաև իմ մարգարէներս»: Աստուած հզօր և զօրաւոր է:

22. Դու չպիտի տեսնես այնպիսիներ, որոնք հաւատան Աստուծոյ ու վերջին օրուան, և սիրեն Աստուծոյ ու մարգարէին հակառակողը, թէև սա ըլլայ

(\*) Մահաբեր հրեաները խնամարկէ

Իրենց հայրը որդին, եղբայրը կամ ցեղակիցը: Անոնց սրտերուն մէջ Աստուած քանդակած է հաւատքը, և ներշնչած է զանոնք: Նա պիտի մացնէ զանոնք ջորի առունքով ուսուցած ճշտութեանց պրախտներուն մէջ: Անոնք հոն պիտի բնակին յախտեանս: Աստուած անոնցմէ գոհ է և անոնք Աստուծմէ գոհ են ու կը կազմեն Աստուծոյ ժողովուրդը: Աստուծոյ ժողովուրդն է որ երջանիկ է:



### ԾԹ. Գ Լ Ո Ւ Խ

## Մէտիմէական. բաան չորս պատգամ

### Յանուն Աստուծոյ գթածի և ողորմածի

1. Այն բոլորը որ կայ՝ երկնից մէջ և երկրի վերայ, Աստուծոյ գովեստը կ'երգէ: Նա է հզօրը և բմաստունը:

2. Նա է որ գիրք ունեցողներէն անհաւատները դուրս հանեց իրենց բնակավայրերէն: Այս սկիզբն է անոնց դաղթումին: Դուք չէիք հաւատար որ անոնք դուրս ելլեն անկէ, և իրենք կը կարծէին թէ իրենց բերդերը կը պաշտպանեն լիբանք Աստուծոյ դէմ: Բայց Աստուած յարձակեցաւ անոնց վրայ մէկ կողմէ ուրկէ չէին սպասեր. սարսափ ձգեց անոնց սրտերուն մէջ, անոնք կաւերէին իրենց տունները իւրենց ձեռքով և հաւատացնալներու ձեռքով: Խրատեցէ՛ք այս օրինակէն, ո՛վ բանիմաց մարդիկ:

3. Եթէ Աստուած անոնց դաղթը կանխաւ որոշած չըլլար, զանոնք այս աշխարհի մէջ կը պատժէր: Կրակի տանջանքը անոնց կ'սպասէ միւս աշխարհի մէջ:

4. Եւ այս անոր համար որ անոնք հակառակեցան Աստուծոյ և իր մարգարէին: Արդ, ով որ հակառակի Աստուծոյ, զիստաւս է թէ Աստուած է իր պատիժներուն մէջ:

5. Անոնց արմատենիներէն այնչափը կարեցիք և և մոտ մըն ալ կատարու ձգեցիք: այս Աստուծոյ հրամանան էր. ամպարիշտները խոնարհեցնելու համար:

6. Այն աւարը զոր Աստուած մարգարէին տուաւ, դուք չբերիք ոչ ձերով ոչ ձեր ուղտերով. Աստուած է որ յաղթանակ կուտայ իր մարգարէներէն որուն որ ուզէ: Եւ ամենազօրաւոր է:

7. Ինչ որ Աստուած իր մարգարէին տուած է քաղաքներու բնակչաց ստացուածքներէն, անոնք կը պատկանին Աստուծոյ, մարգարէին, իր ազգականներուն և որբերուն. այգատներուն ու ճամբորդներուն. պէտք չէ անկէ բաժին հանել ձեր շէջի հարուստներուն: Առէ՛ք ինչ որ մարգարէն ձեզ կուտայ, և զգուշացէք անոր արգիլածէն: Վախցէ՛ք Աստուծմէ, վասնզի նա խիստ է իր պատիժներուն մէջ:

8. Աստուծ մէկ մասը կը պատկանի աղքատ գաղթականներուն որոնք արտաքսուած են իրենց բնակատեղիներէն և զրկուած իրենց ինչքերէն, և որոնք Աստուծմէ պարգև և գոհացում կը խնդրեն, և կողնեն Աստուծոյ և իւր մարգարէին: Ասոնք առաքինի մարդիկ են: (\*)

9. Որոնք որ իրենց բնակարաններուն տէրն են և առաջուց հաւատացած էին, կը սիրեն իրենց քով

(\*) Այս աւարտութեան դեպքը Մեդիանի մօտ Նաբոլէր անունով հրէական խառնի մը վրայ Մասնամեդի կարարած յարձակումն է, որուն աւարները Քիւստոսի տէրն զիստաւս էր:

աղթողները, Անոնց սրտերը զերծ են միւսներուն տրուածին զանկալէ և անոնք վեհանձնաբար նախապատու թիւն կուտան անոնց, և թէ նոյն իսկ այն քաներուն պէտք ունենան: Արդ որոնք որ իրենց սիրար զուգեն ագահութեան դիմ, անոնք են երջանիկները:

10. Անոնցմէ վերջ, եկողներն են ալ կըսեն, «Տէ՛ր, ներէ՛ սեզ և մեր եղբայրներուն որոնք հաւատքով մեզմէ ասաջ են, և մեր սրտերուն մէջ քէն մի դներ հաւատացեալներուն դէմ: Տէ՛ր գո՛ւ զթած եւ ոգորմած ես»:

11. Ընչազիր չես եղեր կեղծաբարներուն, որոնք կըսեն իրենց զիրք ունեցող անհաւատ եղբայրներուն. «Եթէ ձեզ վստահն, մենք ալ ձեր հետ կելինք» մենք մէկու մը չենք հնազանդիր երբ ձեր մասին խնդիր ըլլայ. Եթէ ձեզի դէմ պատերազմ ըլլայ, մենք ձեզ կօգնենք»: Աստուած կը տեսնէ թէ անոնք սուտ կը խօսին:

12. Ո՛չ. եթէ անոնք վստահին, ասոնք չեն երթար անոնց հետ. եթէ անոնց դէմ պատերազմ ըլլայ ասոնք չեն օգներ անոնց. եթէ նախ օգնութեան երթան, ետ կը դարձնան ու կը փախչին և անոնց ոչ մէկ օգնութիւն չըլլայ:

13. Գուք. «Վ Մեդիանէք. անոնց սրտերուն մէջ սարսափ ձգած ըլլալնուդ համար Աստուծմէ զօրաւոր կը թուիք անոնց վասնզի անոնք բան չեն հասկնար»:

14. Անոնք բոլորը միասին չեն պատերազմիր ձեզի դէմ, այլ իրենց քաղաքներու ամրոցներու մէջէն կամ պատնէշներու ետեւէն: Անոնց հակառակութիւնը իրենց մէջ պատիկ է. դու կը կարծես թէ միացած են. ոչ, անոնց սրտերը բաժնուած են, վասնզի այն խենթ ժողովուրդ մըն է:

15. Անոնք կը վարուին իրենց նախորդներուն պէս, եւ քիչ մնացած է որ ճաշակեն իրենց գործերուն գէշ պտուղները վասնզի վշտալի ասնջանք մը կոպասէ անոնց :

16. Անոնք Մատանային նման կը վարուին, որ մարդուն կրսէ, «անհաւատ եղի՛ր», եւ երբ մարդը անհաւատ կըլլայ, կրսէ, «ես քու ըրածիդ մէջ մաս չունիմ, վասնզի ես կը վախնամ տիեզերաց տէր Աստուծոյն :»

17. Անոնց երկու քին ալ վերջը կրակն է. հոն պիմնան յաւեան : Այսպէս է անիրաւներուն հատուցումը :

18. Ո՛վ հաւատացեալներ, վախցէ՛ք Աստուծոյն : Ամէն հոգի թող նայի թէ, վաղուան համար ինչ պատրաստած է : Վախցէ՛ք Աստուծոյն, վասնզի նա տեղեակ է ձեր գործերուն :

19. Մի նմանիք անոնց որոնք մոռցած են զԱստուած, եւ Աստուած ալ անոնց մոռցուցեր է իրենց հոգիները. ասոնք ամպարիշտներ են :

20. Կրակին բնակիչները եւ գրախտի հիւրերը հաւատար չեն կրնար ըլլալ. ասոնք գերեջանիկներ պիտի ըլլան :


21. Եթէ մենք Գուրանը լերան մը վրայ իջեցընէինք, դու պիտի տեսնէիր որ կը խոնարհէր ու կը պատուուէր Աստուծոյ վախէն : Այսպէս առակներ կըսենք մտրդոց, որպէսզի խորհրդածեն :

22. Նա է Աստուածը, անկէ զատ աստուած չկայ : Նա գիտէ ճշմարտութիւնը և անտեսանելին : Նա է Գթածը եւ ողորմածը :

23. Նա է Աստուածը, անկէ զատ աստուած չկայ. նա է Թագաւորը, Սուրբը, Ազատարարը, Հաւատարիւրը, Պահպանը, Հօրը, Զօրաւորը, Ամէնարարծաւը, փառք Աստուծոյ եւ հետեւ անկէ ինչ որ մար-

դիկ անոր կ'ընկերացնեն :

24. Նա է Տալ Աստուածը, Ստեղծողը, Արարիչը, կազմողը : Ամէնագեղեցիկ անունները անոր կը պատկանին : Ինչ որ կայ երկնից մէջ եւ երկրի վրայ դանի կը փաստարանէ : Նա է զօրաւորը եւ իմաստունը :



Կ Գ Լ Ո Ի Խ

Մէտիմէտկան. աստեղեք պասգամ

Յանուն Աստուծոյ Գթածի եւ Ողորմածի

1. Ո՛վ հաւատացեալներ, իմ եւ ձեր թշնամիները բարեկամ մի ընդունիք : Գուք անոնց բարեկամութիւն ցոյց կուտաք, բայց անոնք արդէն ապացուցէն թէ չեն հաւատար ձեզ լայտնուած ճշմարտութեան : անոնք դուրս վանեցին իրենց քովէն ձեզ եւ մարգարէն, ձեր տէր Աստուծոյն հաւատալուն համար : Երբ դուրս կ'ելլէք սուրբ պատերազմի համար, իմ ճարտուս մէջ կուտելու համար եւ իմ գոհունակութիւնս ստանալու համար, անոնց բարեկամութիւն ցոյց պիտի տաք : Բայց ես լաւ գիտեմ ձեր ծածկածը ու յայտնածը : Եւ ով որ ձեզմէ այդպէս ընէ կը խոտորի ուղիղ ճամբէն :

2. Եթէ անոնք տեղ մը ձեզ ընդհարուին ձեզ ցոյց պիտի տան թէ որչափ թշնամի են ձեզ, անոնք ձեռքերնին ու լեզուներն կ'երկնցնեն ձեր վրայ : Դնասելու համար, անոնք կուզեն որ դուք կրկին անհաւատ դառնաք :

3. Յարութեան օրը ձեզ չպիտի օգնեն ոչ ձեր աղ-

գաղանները եւ ոչ զաւակները: Աստուած ձեզ իրարմէ պիտի բաժնէ. նա կը տեսնէ ձեր գործերը:

4. Գուք լաւ օրինակ մ'ունիք Աբրահամը եւ Իսահոր հետեւողները, երբ անոնք ըսին իրենց ցեղակիցներուն. «մտնք ձեր մեղսակիցները չենք, մենք անպարտ ենք այն կրօնքի մասին, որով Աստուծմէ զատ ուրիշ աստուածներ կը պաշտէք: Մենք կրմեր ժենք ձեզ, եւ թշնամութիւն եւ ատելոյցութիւն կայ միշտ մեր մէջ, մինչեւ որ հաւատք միակ Աստուծոյն»: Աբրահամ իր հօր ըսաւ. «քեզ համար ներողութիւն պիտի խնդրեմ Աստուծմէ, բայց չեմ կրնար բան մը ստանալ անկէ քեզ համար»: «Ո՛վ Տէր, մենք քեզ ապաւինած ենք, քեզ կը վերագառնանք, ամէնի վախճանը դու ես»:

5. «Ո՛վ Տէր, մեզ անհաւատներու փորձութեան մի մատներ, ներէ՛ մեզ, զու հօրք եւ իմաստուն ես»:

6. Աստուծ մէջ գուք լաւ օրինակ մը ունիք, օրինակ մը անոնց համար որոնք յոյսերնին Աստուծոյ վրայ դրած են եւ կը հաւատան վերջին օրուան: Բայց ով որ ետ քաշուի, Աստուծ լաւ կանցնէ անկէ: Նա է Հարուստը եւ Փառաւորը:

7. Թերեւս օր մը Աստուած բարեկամութիւն հաստատէ ձեր եւ ձեր թշնամիներուն միջեւ փոխադարձ: Աստուած ամէնակարող է. նա ներող եւ ողորմած է:

8. Աստուած ձեզ շարգիւեր որ հաշուիք անոնց հետ որոնք ձեզ զէմ չեն պատերազմած կրօնքի պատճառաւ, եւ որոնք ձեզ ձեր երկրէն չեն վանաւ: Աստուած կը սիրէ արդարութեամբ շարժողները:

9. Բայց նա ձեզ կարգիլէ ամէն կապահցութիւն անոնց հետ որոնք ձեզ զէմ պատերազմած են կրօնքի պատճառաւ, որոնք ձեզ վանաւ են ձեր երկրէն կամ օքնած են ուրիշներուն այգպէս ընելու: Որոնք որ զանոնք բարեկամ նկատեն, անիրաւիներ կ'ըլլան:

10. Երբ հաւատացեալ կիներ կոպապաշտութենէ փախչելով, ձեր քով գան փորձեցէ՛ք անոնց հաւատքը: Աստուած լաւ գիտէ անոնց հաւատքը—եթէ վըստահ ըլլաք թէ անոնք հաւատացեալներ են, այ մի թողուք որ անոնք անհաւատներուն քով վերագառնան օրիւտութիւնը որ այն կիները անոնցը ըլլան, ոչ այ անոնց օրիւտները դառնան. բայց անոնց ծախքերը սր բրած են անոնց համար, վճարեցէք: Ձեզ յանցանք չէ անոնց հետ ամուսնանալ, բայց անոնց օժիտը ապահովեցէք: Անհաւատ կիները մի պահէք, բայց պահանջեցէք ձեր առած օժիտը, նոյնպէս ալ անհաւատները ձեզմէ ետ պիտի պահանջեն ինչ որ անոնց առած ըլլան: Աստուծոյ վճիռը այս է ձեր միջեւ. նա գիտուն եւ իմաստուն է:

11. Եթէ ձեր կիներէն մէկը կորսուի անհաւատներուն քով երթալու համար, եւ զոր գուք աւարտած էիք, վերագարձուցէք անոնց որոնց փախած են կիները այն չափ օժիտ որչափ փախչող կինը կինը ունեցած է:

12. Ո՛վ մարգարէ, եթէ հաւատացեալ կիներ քիչ գան եւ հաւատարմութեան երդում ընեն, թէ Աստուծոյ ընկեր չեն ըներ բան մը, թէ չեն գողնար եւ չեն շնար եւ չեն սպաններ իրենց զաւակները, թէ չեն զրպարտեր եւ թէ օրինաւոր բանի մը մասին քեզ անհնազանդ չեն գտնուիր ընդունէ՛ անոնց զաշինքը, եւ ներում խնդրէ Աստուծմէ անոնց համար: Նա զթած եւ ողորմած է:

13. Ո՛վ հաւատացեալներ, բարեկամութիւն մի հաստատէք անոնց հետ որոնց զէմ Աստուած բարկացած է. անոնք արդէն յուսահատած են ապագայ կեանքէն, ինչպէս անհաւատները յուսահատած են գերեզմաններու: Էջ Էղզնիներու մասին:

ԿԱ. Գ Լ ՈՒ Խ

Մէտնեական, սասն չորս պատգամ

Յանուն Աստուծոյ գթածի և ողորմածի

1. Այս բոլորը՝ որ երկնից մէջ ու երկրի վրայ է, Աստուծոյ գովեստները կ'երգէ: Նա է հօգորը և իմաստունը:

2. Ո՛վ հաւատացեալներ, ինչու կրսէք թայն չորս չէք ընենք:

3. Աստուծոյ ատելութիւնը մեծ է անոնց դէմ, որոնք կ'ըսեն այն, զոր չեն ընենք:

4. Աստուած կը սիրէ անոնք որոնք շարքով կը պատերազմին իր ճամբուն մէջ, և եւ որոնք ամուր-ւորին հաստատուն չէնք ի մը պէս:

5. Մովսէս կրսէր իր ժողովուրդին «ով իմ ժողովուրդս, ինչու կը նեղէք զիս: Իսկ արդէն գիտէք թէ ես դէպի ձեզ գրկուած մարգարէն եմ Աստուծոյ» Բայց երբ անոնք շեղեցան ուղիղ ճամբէն, Աստուած ալ շեղեցուց անոնց սրտերը: Վասնզի Աստուած չառաջնորդեր ամպարիչները:

6. Մարիամի որդի Յիսուսը ըսաւ. «Ո՛վ Իսրայէլի որդիներ, ես Աստուծոյ մարգարէն եմ ձեզ գրկուած, հաստատելու համար Մովսէսի Գիրքը որ ինձ մէ առաջ ձեզ արուած է, և ձեզ աւետելու համար մարգարէի մը գալուստը ինձմէ յետոյ, որուն անունը Անձէտ պիտ' ըլլայ»: Եւ երբ Յիսուս անոնց յայտնի նշաններ ցոյց տուաւ, անոնք կրսէին, «սա յայտնի կախարհութիւն է»:

7. Եւ ո՛վ աւելի ամպարիչա է քան այն որ Աստուծոյ մասին սուտ կը հնարէ, երբ իսլամութեան կը հրաւիրուի: Աստուած շարերը չառաջնորդեր:

8. Անոնք կ'ուզէին Աստուծոյ լոյսը բերանովէն խաւարեցնել, մինչ՝ Աստուած կաւելցնէ իր լոյսը: Թէեւ անհաւատները զգուանքով լսեն:

9. Նա է որ տուած է իր մարգարէին առաջնորդութիւնը և ճշմարիտ կրօնքը, որ զայ բոլոր միւսներէն աւելի վեր բարձրացնէ (կամ յաղթել տայ), թէեւ կռուպաշտները զգուանքով լսեն:

10. Ո՛վ հաւատացեալներ, ձեզի դրամագլուխ մը ցոյց տամ որ կարող ըլլայ ձեզ դժոխքէն ազատել:

11. Հաւանացէ՛ք Աստուծոյ և իր մարգարէին և պատերազմեցէք Աստուծոյ ճամբուն մէջ, զո՛ն գովելուն ընելով ձեր ինչքէն և անձէն. այս ձեզ աւելի օգտակար է, եթէ կը հասկնաք:

12. Աստուած պիտի ներէ ձեր մեղքերը. Ձեր պիտի մտցնէ Գուրի առուններով օռողուած դրախաներու մէջ, եղեմի դրախտին սքանչելի շնականներուն մէջ. այս անուն երջանկութիւն մըն է:

13. Նաև ձեզ պիտի պարգեւէ ուրիշ բարիքներ որոնց կը ցանկաք. օգնութիւնը Աստուծմէ է և յաղթութիւնը անխիջական: Աւետէ՛ հաւատացեալներուն երջանիկ յուրերը:

14. Ո՛վ հաւատացեալներ, օգնական եղէ՛ք Աստուծոյ, ինչպէս որ ըսաւ Մարիամի որդի Յիսուսը իր առաքեալներուն, «ո՛վ պիտի օչնէ ինձ Աստուծոյ համար»: Առաքեալները ըսին, «մե՛ք Աստուծոյ օգնականներն ենք»: Այսպէս ահա Իսրայէլի զաւակներէն մէկ մասը հաւատաց և միւս մասը անհաւատ եղաւ: Բայց մենք զօրացուցինք հաւատացեալները իրենց թշնամիներուն դէմ, և անոնք յաղթեցին:



ԿԳ. Գ Լ Ո Ւ Խ

Մէտիքեական. քաւն եւ մէկ պատգամ

Յանուն Աստուծոյ գթածի և ողորմածի

1. Այն բոլորը որ երկնից մէջ ու երկրի վրայ է. Աստուծոյ գովեստները կերպէ, Թագաւորին, Սուրբին, Հօրին և Իմաստունին:

2. Նա է որ անգրագէտներու մէջ մարգարէ մը գրկած է իրենցմէ, անոնց պատմէ Տիրոջը հրաշքները, որ զանանք մաքրէ անոնց սոխրեցնէ Գիրքը և իմաստութիւնը, անոնց որոնք յայտնի մտութեան մէջ էին:

3. Անոնցմէ կան ուրիշներ ալ որոնք չմիացան առաջններուն հաւատքի մէջ: Աստուած հօր և իմաստուն է:

4. Մա Աստուծոյ շնորհքն է. կը պարգևէ որուն որ ուզէ, և Աստուած անունը բարութեամբ յի է:

5. Որոնք որ Մովսէսին Գիրքով, բռնաորում են ու զայն չեն կրեր, կը նմանին էջին որ գիրքեր կը կրէ. որչափ գէշ է նմանութիւնը այն մարդոց որոնք Աստուծոյ նշանները սուտ կը համարեն: Աստուած չպիտի առաջնորդէ ամպարիշները:

6. Ըսէ, «Ո՛վ Հրեաներ, եթէ կը կարծէք թէ բոլոր մարդոց մէջ միայն դուք էք Աստուծոյ բարեկամները, ուրե՞՞ն մահուան փախաբեցիք, եթէ ճշմարտութիւն է ըսածնիդ»:

7. Ո՛ր, անոնք բնաւ հեռուան չեն բաղձար իրենց գործերուն պատճառաւ վասն զի Աստուած կը ճանչնայ մեղաւորները:


8. Ըսէ՛ անոնց, «ձեր վախցած մահը որ մը ձեզ

չանկարծակիի պիտի բերէ: Դուք յետոյ պիտի տարտիք անոր առջև որ գիտէ տեսանելի և անտեսանելի բաները. նա ձեզ պիտի յիշեցնէ ձեր գործերը»:

9. Ո՛վ հաւատացեալներ, երբ ժողովի օրը աղօթքի կը կանչուիք, փութացէ՛ք Աստուած վերսիշելու: Զգեցէ՛ք առեարական գործերը, այս ձեզ աւելի օգտակար պիտի ըլլայ, եթէ գիտնայիք:

10. Երբ աղօթքը լմննայ, ուզած տեղերնիդ գոցէք, և աստուածային շնորհաց պարգևները փնտրուեցէ՛ք: Ստէպ խորեցէ՛ք Աստուծոյ մասին և երջանիկ պիտի ըլլաք:

11. Բայց, երբ անոնք չան մը տեսնեն կամ զուարճութիւն մը, կը հրուին և քեզ հոն մինակ կը ձգեն: Ըսէ՛ ազոնց, ինչ որ Աստուած վերապահած է աւելի արժէքաւոր է քան առեարքը և քան զուարճութիւնը: Աստուած լաւագոյն սնունդ բաշխուն: (\*)



ԿԳ. Գ Լ Ո Ւ Խ

(ՍՈՒՐԷԹ ԷԼՄՐՆԱՔԸԳԸՆ) կեղծաւորներ

Մէտիքեական. քաւն եւ մէկ պատգամ

Յանուն Աստուծոյ գթածի և ողորմածի

1. Երբ կեզձաւորները քու քովդ գան կրտսն, «կը վկայենք որ դու Աստուծոյ մարգարէն ես: Աստուած ալ լաւ գիտէ եթէ դու իր մարգարէն ես, նա

(\*) Մահաբեր ուրբեր որ հոգեւոր մէջ արդարեւ արեւ ընթացի յայն լուսելով. ճշգրտորէրը գործը կ'էլի: Այս դէպքին վրայ անկէ վերէ պարտաւորը խորհայ:

վկայ է որ կեղծաւորները կը ստեն:

2. Անոնք իրենց խոստումները գիմակ կընեն, եւ Աստուծոյ ճամբէն կը խոտորեցնեն ուրիշներու: Ինչ զգուցիլ է անոնց վարմունքը:

3. Անոնք նախ հաւատացին, յետոյ անհաւատութեան վերադարձան: Կնիք զրուած է անոնց սրտերուն վրայ եւ իրենք չեն հասկնար:

4. Երբ զանոնք տեսնես, կըզմայիլս անոնց արաքինէն. երբ կը խօսին, հաճութեամբ կուսկնդրես անոնց. անոնք կը նմանին պարիսպներուն նեցուկ զրուած մարդակներու, անոնք երբ ձայն մը լսեն, կը կարծեն թէ իրենց զէմ է: Անոնք քու թիւամփներդ են. զգուշացիր անոնցմէ: Աստուած կ'սուրբանոնց զէմ. ո՛րչափ խոտորած են:

5. Երբ անոնց ըսուի, «եկէ՛ք. Աստուծոյ մարգարէն ձեզ համար ներողութիւն պիտի խնդրէ», անոնք գլուխնին կը դարձնեն ու կը հեռանան չը պարտութեամբ:

Անոնց համար Աստուծմէ քու ներողութիւն խնդրելը ոչինչ է. Աստուած չպիտի ներէ անոնց, վասնզի Աստուած չառաջնորդեր ամպարիշները:


7. Անոնք են որ կրսեն Մեփիսէօֆէրու. «բան մը մը տաք մարգարէին նետ եղողներուն, մինչև որ անկէ բաժնուին». Երկնից ու երկրի գանձերը Աստուծոյ կը պատկանին. բայց կեղծաւորները չեն հասկնար:

8. Անոնք կրսեն, «եթէ քաղաք (Մեփիսէ) վերադառնայինք, զօրաւորը կը վաճառէր աւելի տկարը. զօրութիւնը կը պատկանի Աստուծոյ, անիկա մարգարէին եւ հաւատացեալներուն նետ է բայց կեղծաւորները չեն հասկնար:

9. Ո՛վ հաւատացեալներ, ձեր հարստութիւնները ու գաւակները թող ձեզ արգելք չըլլան Աստուած յիշելէ. այդպէս ընողները յայտնապէս կը փաստին:

10. Ոչորմութիւն տուէ՛ք այն բարիքներէն՝ զորս ձեզ շնորհած ենք, մասը ձեզի հասնելու փայլեանէն առաջ. յորում պիտի ըսէ մարդը, «Տէ՛ր, եթէ ինձ կտրճ պայմանաժամ մը տայիր, ոչորմութիւն կուտայի եւ բարեպաշտներէն կըլլայի»:

11. Աստուած ոչ մէկ նոգիլի միջոց չտար երբ անոր ժամը հասած է: Անիկա գիտէ ձեր գործերը:



ԿԳ. ԳԼՈՒԻ

Սէֆէական, սասն եւ ուր պատգամ

Յանուն Աստուծոյ գթածի եւ ոչորմածի

1. Ինչ որ կայ երկնից մէջ ու երկրի վրայ զԱստուած կ'օրհնեցէ: Անորն է՝ զօրութիւնը. անոր է փառքը. նա է միակ ամենակարողը:

2. Անիկա ձեզ ստեղծած է: Ձեր մէջ կան անհաւատներ եւ կան հաւատացեալներ: Աստուած կը տեսնէ ձեր բրածները:

3. Նա ստեղծած է ճշմարտապէս երկինքը ու երկիրը. նա կազմած է ձեզ եւ գեղեցկագոյն կերպարանքը տուած է, եւ դուք բոլորդ անոր պիտի վերադառնաք:

4. Նա գիտէ երկնից մէջ եւ երկրի վրայ բոլոր եղածները: նա գիտէ ձեր ծածկածները ու յայտնածները: Աստուած զիտէ սրտերու մէջ եղածները:

5. Հսօ՞ժ էք ՚իւն ժամանակներու անհաւատներու պատմութիւնը: Անոնք ընդունեցին իրենց արարքին դառն հատուցուժը. եւ ցաւալի պատիժ մը անոնց բաժին պիտի ինայ:

6. Վասն զի երբ մարգարէները անոնց եկան յայտնի նշաններով, անոնք կ'ըսէին, «միթէ մա՞րդ մը

պիտի ըլլայ մեզ առաջնորդողը: Եւ չէին հաւատար  
և իրաւաներուն երես կը դարձնէին: Աստուած ա-  
անոնցմէ վազ անցաւ. անիկայ հարուստ է և փառք լի:

7. Անհաւատները կը կարծեն գիտնալ թէ յարու-  
թիւն չպիտի առնեն: Ըսէ՛ անոնց. «Աստուած ձեզ  
յարութիւն առնել պիտի տայ և ձեզ պիտի ըսէ ինչ  
որ գործած էք. այդ դիւրին է անոր համար»:

8. Հաւատացէք Աստուծոյ և մարդարէին. և լոյ-  
սին զոր Աստուած զրկած է ձեզ: Աստուած տեղ-  
եակ է ձեր բոլոր գործերուն:

9. Այն օրը որ համայնքումի սրուն համար ձեզ  
պիտի հաւտքէ, ա՛հա այդ օրը իրար խաբելու օրն  
է: Ով որ Աստուծոյ հաւատացած և բարիք գործած  
ըլլայ, իր սեղփերուն ներում պիտի ստանայ, և պի-  
տի մացուի ջուրի առուններով ոռոգեալ գրախանե-  
րու մէջ: Այս մարդիկ հոն պիտի բնակին յաւիտ-  
եան: Այդ անհուն երջանկոտթիւն մը պիտի ըլլայ:

10. Իսկ անհաւատները որոնք մեր նշանները սուտ  
կը համարեն կրակը պիտի նետուին և հոն պիտի  
մնան յաւիտեան: Ի՛նչ նողկալի բնթացք:

11. Առանց Աստուծոյ հրամանին դժբաղդութիւն  
մը չպատահիր մարդուն: Աստուած կառաջնորդէ իր-  
մէ վախճողին սիրտը: Աստուած կը տեսնէ բոլորը:

12. Հնազանդեցէ՛ք Աստուծոյ և իր մարդորէին.  
բայց եթէ ետ քաշուիք, յանցանք մէր հարգութիւնն չէ.  
անիկա յայտնապէս քարոզելու միայն պարտուոր է:

13. Աստուած է անկէ զատ ուրիշ աստուած չը-  
կայ, և հաւատացեալները ուրիշն անոր պէտք է ա-  
պաւինին:

14. Ո՛վ հաւատացեալներ դուք թշնամիներ ու-  
նիք ձեր կիներուն և գաւակներուն մէջ. զգո՛ւ շացէք

անոնցմէ (\*): Եթէ ներէք ու զիջանիք, գիացէք որ  
Աստուած ներող և ողորմած է:

15. Զոր ինչքերը և ձեր զաւակները ձեզի փոր-  
ձանք են: Մինչգեւ Աստուած փասուոր վարձ վե-  
րապահած է:

16. Վախցէք Աստուծմէ ձեր բոլոր ուժովը. լսե-  
ցէ՛ք հնազանդեցէք և ողորմութիւն տուէք նոյն իսկ  
ձեր օգտին համար: Ով որ ինքզինքը կը զսպէս ա-  
գահութենէն երջասիկ պիտ ըլլայ:

17. Եթէ Աստուծոյ լաւ փոխատուութիւն մ՛ընէք  
կրկնապատիկը պիտի վճարէ ձեզ, նա ձեզի պիտի  
ներէ, վասնզի նա երախտագէտ և երկայնամիտ է:

18. Անիկա գիտէ տեսանելի և անտեսանելի բա-  
ները: Նա է Հզօրը և Իմաստունը:

ԿԵ. Գ Լ Ո Ւ Խ

(ՍՈՒՐԷԹ ԻԻԹ-ԹԱԼԱԳ) Ամուսնալուծութիւն

ՄԷՏԻՆԷԱԿԱՆ. ՏԱՄՆ ԵՐԿՈՒ ԱՄՍՁԱՄ

Յանուն Աստուծոյ զթաժի և ողորմածի

1. Ո՛վ մարգարէ, երբ ձեր կիները կարճակէք,  
որոշեալ ժամանակին միայն արձակեցէք. օրերը ճիշդ  
հաշուեցէք (որ յո՛ւ ելա՞ չըլլայ: Այդ ժամանակէն ա-  
ռաջ չէք կրնար զանոնք ձեր տունէն դուրս ընել,  
ոչ ալ թողուլ որ իրենք երթան, եթէ ապացուցուած  
չնութիւն մը չեն գործած: Այսպէս են Աստուծոյ  
կանոնները, և ով որ չյարգէ զանոնք իր հոգուն կը  
մնասէ: Ղուք չէք գիտեր զուցէ Աստուած ասկէ լե-  
պաւինին:

(\*) Հոս ըսել կուզէ թէ յեր կիներու եւ գաւակներու գո-  
րովը կարգէն յեւ պարտերով երթուի. բայց պէտք է եր-  
թուի: Նոյն նպատակը ունի 7-է- 16 բարը:

տոյ ուրիշ հրաման մը կուտայ որ համայնի:

2. Նաեւ եւր անոնց որոշ փամանակը հասնի, կրնաք զանոնք պոնի հաճութեամբ կամ բաժնուիլ անոնցմէ օրինաւորութեամբ. և վկայ կանչեցէք ձեզմէ արգարտէք մարդիկ և Աստուծոյ առջև կատարուի վկայութիւնը: Այս խրատ է այն մարդուն որ կը հաւատայ Աստուծոյ և վերջին օրուան, և ով որ կը վախնայ Աստուծմէ, Աստուած անոր վերջը բարի կընէ և կը սնուցանէ զանի անսպասելի պարգևներով:

3. Աստուած բաւականութիւն կուտայի բնն ապաւինողին. Աստուած լաւ կը վերջաւորէ իր օրոշումները, որովհետև Աստուած ամեն բանի սահման մը դրած է:

4. Պայով այն կրներուն, որոնք չեն յուսար (փռիհուն քերհմբ) ամսական արիւն ունենալ, թէև դուք այդ մտոյն վստոյ չըլաք, երեք ամիս է սամանեալ փամանակը. նաև անոնց համար որոնք ամսական արիւն չունին. յղի կնանց համար սպասեցէք որ ծնանին: Աստուած կը կարգադրէ դժուարութիւնները անոր որ երկրւղած է:

5. Այս է Աստուծոյ հրամանը զոր ձեզի զրկած է: Աստուած պիտի ջնջէ մեղքերը անոնց որոնք կը վախնան, եւ պիտի աւելցնէ անոնց վարձքը:

6. Զեր արձակած կրները բնակեցուցէք հոն ուր որ դուք կը բնակիք ըստ ձեր միջոցներուն, անոնց վիշտ մի պատճառէք նեղելով: Խնամք տարէք յղիններուն, անոնց պէտքերը հոգացէք մինչև որ ծնանին. եթէ անոնք ձեր զաւակներուն կտթ տան, անոնց վարձատրութիւն ըրէք. իրարու հետ լաւ վարուեցէք: Եթէ արգելքներ պատահի, ուրիշ կին մը թող ձձցունէ նրախան:

7. Կարողութիւն ունեցողը ըստ իւր հարողութե.

ան թող տայ, և անձկութիւն ոտնեցողն ալ Աստուծմէ իր ստացածին համեմատութեամբ թող տայ: Աստուած միայն իր տուածին չափովը պարտք կը դնէ մարդուն վրայ: Աստուած նեղութիւնէ յետոյ դիւրութիւն կուտայ:

8. Որչափ քաղաքներ խոտորած են Աստուծոյ եւ անոր մարգարէներուն պատուէրներէն և մենք անոնց հաշիւը խոտորեամբ տեսանք և ծանր պատիժի մը եւթարկեցինք զանոնք:

9. Անոնք կրեցին իրենց դառն հատուցումը և անոնց վախճանը կործանումը եղաւ:

10. Աստուած անոնց վերապահած է անողոք պատիժ մը: Վախցէ՛ք Աստուծմէ, ով խելացի մարդիկ:

11. Հաւատացեալներուն Աստուած զրկած է խրատ մը, մարգարէ մը որ անոնց կը պատմէ յայտնի նըշանները, խաւարէն լոյսը հանելու համար հաւատացեալները և արդարները: Աստուած հաւատացեալները և արդարները պիտի մտցնէ ջուրի առուններով ոռոգեալ դրախտներուն մէջ. անոնք յաւիտեան հոն պիտի մնան: Ի՛նչ գեղեցիկ բաժին կը վերապահէ Աստուած արդարին:

12. Աստուած է որ ստեղծած է եօթը երկինքը և նոյնպէս ալ երկիրներ. Աստուծոյ պատուէրները հոն կիջնեն, որպէսզի գիտնաք թէ՛ Նա ամենակարող է և իր գիտութիւնը ամէնը կը պարփակէ:



ԿԶ. Գ Լ Ո Ւ Խ

(ՍՍԻՐԷԹ ԷԹ ԹԱՀՐԻՄ) Արգէլք

Մէտիմէական սասն երկու պատգամ

Յանուն Աստուծոյ գթածի և ոգորմածի

1. Ո՛վ մարգարէ, ի՞նչու կարգիլես Աստուծոյ թոյլազրածը (նկայ)։ Գու թու կի՛ններդ զո՛հացնել կուզես Տէրը ներող եւ ոգորմած է։ (\*)

2. Աստուած թոյլատրած է ձեր երգումները լուծելու. նա ձեր տէրն է։ Նա է Գիտունը եւ իմաստունը։

3. Օր մը մարգարէն գազանիք մը հազոտեց իր կի՛ններէն մէկին. սա ալ ուրիշ կնոջ մ'ըսաւ. Աստուած զայն դիտողուց մարգարէին, որ այդ յայտնութեան մէկ մասը իմացուց եւ միւսը պահեց. եւ երբ մարգարէն այս կնոջ իմացուց, սա անոր հարցուց. «Ատիկա քեզի ո՞վ իմացուց»։ Նա ալ պատասխանեց. «Ինձ իմացուց Գիտունը»։ (\*\*)

4. Եթէ դուք՝ երկուքդ Աստուծոյ դարձի գաք, վասնզի ձեր օրտերը աւրուեր են, Աստուած յեղ պիտի ներէ. բայց եթէ իրարու օգնէք մարգարէին դէմ,

(\*) Մահամէտ այս յայտնութեանը արդասանեց սա առեւիտ. մարգարէն բաժնութիւ կի՛ներ ունենալով. քնէրը կարգով կանցը ներ ունոց սեռ. բայց Հաֆեղէին կարգը եղած մէկ գիշերը Մարիամին հետ. անցուց. ուստի Հաֆեղէ բարկացաւ իստիկ Մահամէտ անոր սիրտը առնելու համար երդումս ըրաւ Սըռոյքի Մարիամին բարբաժին յետո՛ւ Բայց յետոյ երդումս աւրել ուղեւով այս յայտնութեանը յօրինեց։

(\*\*) Միւսքեւ մարգարէն գազանէն իմացող միւս կնկան շարմանէին կռահած էր։

գիտէ՞ որ Աստուած անոր պաշտպանն է, և Գարրիէլը և հաւատացեալներէն բոլոր արդարները ու հրեշտակները անոր պիտի օգնեն»։

5. Եթէ նա ձեզ արձակէ, Աստուած անոր կուտայ ձեզմէ աւելի լաւ կի՛ններ, միւսյիման, հաւատացեալ հնազանգ, ազաշխարհասէր, հյուս, ծոմուզան և ա՛մուծնագեալ կի՛ններ, ինչպէս և կոյսեր։

6. Ո՛վ հաւատացեալներ, ազատեցէ՛ք ձեզ ու ձեր բնաւորքները հրակէն որուն ճարակ պիտի երթան մարդեր և քարերը։ Անոր վրայ կան խոստ և ահարկու հրեշտակներ, որոնք Աստուծոյ հրամանները չեն անսաստեր և կը գործադրեն ինչ որ հրամայած է իրենց։

7. Ո՛վ անհաւատներ, այսօր ի դուր մի արդարացնէք զձեզ։ Ձեր գործերուն համեմատ հատուցում պիտի ստանաք։

8. Ո՛վ հաւատացեալներ, դարձի եկէ՛ք անկեղծ զղումով, թերեւս Աստուած ջնջէ ձեր մեղքերը և ձեզ մտցնէ ջուրի առուններով սուգուած դրախտներու մէջ. այն օրը Աստուած չպիտի ամօցնէ մարգարէն և իրեն հետեողները։ Անոնց լոյսը պիտի երթայ իրենց առջևէն և աջէն։ Անոնք պիտի ըսեն. «Ո՛վ Տէր, կատարեալ ըրէ այս լոյսը և ներէ մեր մեղքերը. վասնզի դու ամէնակարող ես։


9. Ո՛վ մարգարէ, պատերազմէ՛ անհաւատներու և կեղծաւորներու դէմ, և խիստ եղիւր անոնց հանգեպ։ Գիտունը անոնց բնակավայրը պիտի ըլլայ։ Ի՛նչ զըզուելի վայր։

10. Աստուած անհաւատներու համար օրինակ կը բերէ Նոյ՛։ կի՛նը եւ Ղովթի կի՛նը, որոնք մեր ծառաներէն երկու արդար մարդոց իշխանութեան տակ

էին: Երկուքն ալ անհաւատարիմ եղան իրենց այրե-  
րուն. բայց սա անոնց օգուտ մը չտուաւ Աստուծոյ  
դէմ: Անոնց ըսուեցաւ, «Կրակը մաէ՛ք հոն մանուկ-  
ներուն հետ»:

11. Քաղաքի հաւատացեալներուն, Աստուած օրի-  
նակ կը բերէ անոնց Փարաւոնի կինը: «Ո՛վ Տէր,  
կազազակէր նէ, ինձ տուն մը չի՛նէ քովդ, զբախտին  
մէջ, ազատէ զիս Փարաւոնէն և անոր գործերէն. ազատէ զիս չարերէն»:

12. Եւ Իմբանի գուտարը, Մարիմը, որ պահեց  
իր կուսութիւնը, մենք անոր միջ փշեցիք մեր հո-  
գիէն: Նէ հաւատաց Աստուծոյ և զիրքերաւ խօսքե-  
րուն և նէ հնազանդներէն էր:



### ԿԷ. ԳԼՈՒԻ

#### Մէքէական. Երեսուն պատգամ

Յանուն Աստուծոյ զթածի եւ ողորմածի

- 1. Օրհնեալ ըլլայ նա որուն ձեռքն է թագաւո-  
րութիւնը և որ ամէնակարող է
- 2. Նա է որ ստեղծած է մա՛ր ու կեանքը տես-  
նելու համար թէ ձեզմէ որը լատագոյն պիտի վար-  
ուի: Եւ նա է զօրաւորը և ներողը:
- 3. Նա կազմած է եօթը երկինքները իրարմէ  
բարձր գրուած: Ողորմածին արարչութեան մէջ ան-  
կատարութիւն չպիտի գտնես: Բարձրացուր աչքերդ  
դէպի երկնակամարը. հոն կը տեսնես միակ ձեզ-  
քուածք մը:
- 4. Երկու անգամ այ դարձուր աչքերդ, և քու  
աչքերդ ետ պիտի դառնան ունայն եւ յոգնած:
- 5. Երկրի ամէնամերձ երկինքը զարդարած ենք

ճրագներով զօրս հոն զբաժ ենք քարկոծելու: Եւ  
մաք Սատանաները, որոնց համար պատրաստած ենք  
դժօխքի կրակը:

- 6. Որոնք որ Աստուծոյ չհաւատան, պիտի ստա-  
նան դժօխքի պատիժը: Ի՛նչ գէշ վայր:
- 7. Երբ անոնք հոն նետուին, կը լսեն կրակին  
ձայնը և անիկա կը վառի սաստկութեամբ:
- 8. Քիչ կը մնայ որ դժօխքը բարկութենէն պայթի  
ամէն անգամ որ խուժը մը անհաւատներ կը նետու-  
ին հոն. դժօխքին պահապանները անոնց պիտի պո-  
ռան, մարգարէ մը չեկա՞ւ ձեզ խրատելու»:
- 9. — Այո, պիտի պատասխանեն անոնք, մարգարէ  
մը երեղաւ մեր մէջ. բայց զանի ստախօս համարե-  
ցինք և ըսինք անոր, «Աստուած քեզ բան մը չէ  
յայտնած. դուք մեծ մոլորութեան մէջ էք»:
- 10. Անոնք պիտի բռնեն. «Եթէ լսած և խորհրդա-  
ծած ըլլայինք, այս կրակին մէջ չէինք նետուեր»:
- 11. Անոնք պիտի խօստովանին իրենց մեղքերը:  
Հեռացէ՛ք առիկէ, ո՛վ դժօխքի բնակիչներ:
- 12. Անոնք որ իրենց սրտի խորէն կը վախնար ի-  
րենց Տիրոջմէ, պիտի ստանան մեղքերնուն թողու-  
թիւն և մեծ վարձատրութիւն:
- 13. Չեր խօսքերը ձածկէք կամ յայտնէք, Աստու-  
ած գիտէ սրտերու մէջ եղածները:
- 14. Եւ ի՞նչպէս չպիտի գիտնայ նա որ ամէնը  
ստեղծած է սուրբ է ու իմացող:
- 15. Նա է որ ձեզ համար երկրը տալիարակ ը-  
րած է. չըջեցէք անոր գաւառներուն մէջ, եւ կե-  
րէք ինչ որ Աստուած ձեզ կուտայ: Դուք յարու-  
թիւն պիտի առնէք դէպի նա:
- 16. Վստա՞ն էք որ երկինքին մէջ եղողը չբանայ  
երկիրը ձեր քայլերուն տակ: Արգէն ան կը սարսիւ:
- 17. Վստա՞ն էք որ երկնից մէջ չեղողը ձեզ դէմ

չպիտի զրկէ քարեր արձակող փոթորիկ մը: Այն-  
ատեն պիտի հասկնաք թէ ինչ է ին իմ խրատներս:

18. Արդէն անոնցմէ առաջ ուրիշ ժողովուրդներ  
ստախօս կը համարէին իրենց մարգարէները: Ի՞նչ  
սոսկալի եղաւ իմ զարոյթս:

19. Անոեք միթէ չե՞ն տեսներ թռչնոց չարք շարք  
թռչիլը իրենց գլխուն վրայէն, տարածելով կամ  
քաշելով իրենց թևերը: Ո՞վ զանոնք կը պահպանէ  
օդին մէջ, եթէ ոչ Ողորմածը: Նա կը տեսնէ ամէնը:

20. Ով է որ կարինայ ձեզ բանակի մը տեղ բըռ-  
նել և ձեզ օդնել Ողորմածին դէմ: Արգարե ան-  
հաւատները կուրուժեան մէջ են:

21. Ո՞վ է որ ձեզ սնունդ պիտի տայ եթէ Աստ-  
ուած չտայ: Եւ սակայն կը յաճառին իրենց չարու-  
թեան մէջ և խոյս կուտան ճշմարտութենէ:

22. Երեսը գետին ծռած քալող մարդը լաւ ա-  
ռաջնորդուած է, թէ ուղիղ ճամբէն շրտակ քալողը:

23. Դու ըսէ՛. «Նա է որ ձեզ ստեղծած է. ձեզ  
սկանչ, աչք և սրտեր տուած է: Դիչ մարդիկ ա-  
նոր երախտագիտութիւն կը յայտնեն»:

24. Ըսէ՛, նա է որ ձեզ ջրուած է երկրի վայ և  
նա պիտի հաւաքէ ձեզ օր մը:

25. «Ուրեմն ե՞րբ կը կատարուի այս սպառնալիք-  
ները կը հարցնեն, եթէ ճշմարտաւոս ես ըսէ մեզ»:


26. Պատասխանէ՛. «Աստուած միայն գիտէ այդ-  
եւ միայն բացայայտ խրատող մըն եմ»:

27. Բայց երբ որ պատիժը մօտէն տեսնեն, դէմ-  
քերին պիտի մթազնեն: Անոնց պիտի ըսուի, «հա-  
րնչ որ դուք կուզէիք»:

28. Դու ըսէ՛, «Ի՞նչ կը կարծէք. եթէ Աստուած  
դիւ և ինձ հեռեւորները մեռցնէ. կամ մեզ գթայ,  
բայց ո՞վ պիտի պաշտպանէ անհաւատները սոսկալի  
պատիժին դէմ»:

29. Ըսէ՛. «Նա է ողորմածը, մենք կը հաւատանք  
անոր և անոր կը վստահինք: Դուք օր մը պիտի  
հաակնաք թէ մեզմէ որը մաւրութեան մէջ է»:

30. Ըսէ՛, «Ի՞նչ կը կարծէք. եթէ վաղը երկիրը  
ձձէ բուր ջուրերը, ո՞վ ջուր պիտի հոսեցնէ ձեզի»:



ԿԸ. ԳԼՈՒԽ (ԳՐԻՂ)

Մէկհակամ. յիսուց երկու պատգամ

Յանուն Աստուծոյ գթածի և ողորմածի

1. Ն. Կերզնուս գրիչով և ինչ սվ որ կը գրեն.
2. Դու Տիրոջ շնորհիւ գու գիւտնար չեա,  
ո՞վ Մահամեդ:
3. Բեք կատարեալ վարձատրութիւն վերապահած է:
4. Դու բարձր յատկութեան մը տէր ես:
5. Դու պիտի տեսնես և անհասարկէն ալ պիտի  
տեսնեն,
6. Թէ ձեզմէ որն է խենթեցած:
7. Աստուած լաւ գիտէ թէ ով կը մոլորի. և գիտէ  
թէ որոնք ուղիղ ճամբուն կը հետեին:
8. Մի հետեիր բնաւ սուտ համարողներուն,
9. Անոնք կուզէին որ դու անոնց հետ քաղցրու-  
թեամբ վտրուէիր, որ իրենք ալ քու հետք քաղ-  
ցրութեամբ վարուէին:
11. Ականջ մի տար բնաւ զրպարտիչին, որ ուրիշ-  
ները բամբասելով կը շրջի,
12. Բարիքը արգելողին, օրինազանցին, մեղա-  
պարտին,
13. Անգութին և ծննդեամբ անհարազատին,
14. Նոյն իսկ եթէ անիկա հարստութեանց և զա-  
ւակներու տէր ըլլայ:

- 15. Երբ մեր պատգամները կաբղացուին այն մար-  
դը կրէ, «ասոնք նախնիքներու սոսակներ են»:
- 16. Մենք անոր քիթը պիտի խարանենք:
- 17. Մենք փորձեցինք զանոնք, ինչպէս Փարձա-  
էինք այն պարտէզի տէրերը երբ երդում ըրին թէ  
վազը առաւօտ պտուղները պիտի քաղեն:
- 18. Անոնք երդում ըրին անոնց վերապահումի (\*):
- 19. Անոնց քնացած պահուն, գիշերը պատուհաս  
մը հասաւ:
- 20. Հեանեհայ առաւօտուն պարտէզը աւերուած  
էր, կարծես ամէնը կտրուած էր:
- 21. Առաւօտուն զիրար կանչեցին:
- 22. «Կանուխ դացէք ձեր դատար, եթէ կուզէք  
քաղել ձեր արմաւները»:
- 23. Անոնք ալ գացին իրարու տկանին փսփալով:
- 24. «Այսօր մէկ աղքատ է՛նչ չպիտի մտնէ ձեր պար-  
տէզը»:
- 25. Այս որսուձով կանուխ դացին որ աղքատ է  
քան քան էլ:
- 26. Եւ երբ տնտան ալգիին իճակը, ըսին, մենք  
սխալեցր ենք»:
- 27. «Անա մենք յուսախար եղած ենք»:
- 28. Անոնցմէ է՛ն արդարադատը բաւ, «ես ձեզ  
չըսի՞ որ ինչու Աստուծոյ փառք չէք տար»:
- 29. Անոնք ալ յարեցին, «փա՛ռք Աստուծոյ, մենք  
անխրատութիւն ըրեր ենք»:
- 30. Եւ սկսան զիրար մեղադրել:
- 31. Ըսին «ո՛հ, վայ մեզ, չարեր ենք եղեր»:
- 32. «Թերեւս Աստուած փոխարէնը տայ մեզ ասկէ  
յաւազոյն պարտէզ մը, Աստուծոյ շնորհը թախան-  
ձենք»:
- 33. Այսպէս եղած է մեր պատիժը, բայց միւս

(\*) Այսինքն առանց ըսելու «Ելէ Աստուած կառն»:

- աշխարհի պատիժը աւելի սարսափելի պիտի ըլլայ:
- Ա՛հ, եթէ գիտնային:
- 34. Հեշտալի դրախտներ կան երկիւղած մարդոց  
հաճար:
- 35. Միթէ հուսաւոր պիտի համարենք Աստուծոյ  
կամաց ապաւինածները (միւս իմանները) մեղա-  
ւորներուն հետ:
- 36. Ի՞նչ ունիք այսպէս զատելու համար:
- 37. Գրութիւն մ'ունի՞ք ուր կարգաք:
- 38. Թէ ձեր ուղածը պիտի ստանայ:
- 39. Միթէ խոստում մը ստացած է՞ք մեզմէ որ  
մեզ հարկադրէ միշտ եւ մինչեւ յարութեան օրը  
ձեզ հայթայթելու ինչ որ ունենալ ուզէք:
- 40. Հարցո՛ւր անոնց, թէ ձեզ է՞ ո՞վ է տտար ե-  
րաշխաւսըր:
- 41. Անոնք աստուածը նկերեն՞ որ ունին, Ելէ անին  
եւ եթէ ճշմարիտ կը խօսին, թող բերեն զանոնք:
- 42. Այն օրը երբ սրունքնին սօթած են, պիտի  
կանչուին երկրպագութեան, բայց անոնք պէտք ե-  
ղած ուժը չպիտի ունենան:
- 43. Այլքերնին խոնարհեցուցած: Ղեմքով ամօթա-  
հար, պէտէ ըլլան, որ իրենց ողջ առողջ եղած ատեն  
երկրպագութեան հրաւերին չեն եկած:
- 44. Ուրեմն այ ինձ մի խօսիր անոնց մասին ու-  
րոնք այս գիրքը սուտ կը համարեն: Մենք զանոնք  
աստիճանաբար իրենց կորստեան պիտի տանինք ա-  
ռանց անոնց գիտնալուն:
- 45. Անոնց երկար միջոց մը պիտի սամ, վասնզի  
իմ հնարագիտութիւնս հաստատ է:
- 46. Միթէ դու անոնցմէ վա՛րձք պիտի ուզես  
Բայց անոնք պարտքով ծանրաբեռնուած են:
- 47. Միթէ զազանի բաները գիտեն, անոնք կը  
գրեն Աստուծոյ գիրքին մէջ:

48. Աւրեմն համբերութեամբ սպասէ Տիրոջ վրձ-  
ախն. եւ մի նմանիք ձուկին մէջի մարդուն (\*)  
որ նեղացած աղաղակեց Աստուծոյ:

49. Եթէ իր Տիրոջ պարտութիւնը անոր չհաննէր,  
ցամաք տեղ մը կը նետուէր անարդուած:

50. Բայց Աստուծոյ զանի իր ընտրեալը ըրած էր  
եւ արգարացուց:

51. Դիչ կը մնայ որ անհաւատները քեզ խախտեն  
իրենց նաչուած քովը երբ կը լսեն քարոզը. եւ կը բն  
ասա դիւանար մըն էն:

52. Բայց այն Գաբանը քարոզ է միայն բար  
համար:



### ԿԹ. Գ Լ Ռ Ի Խ

## Մեկեական. յիսուն երկու պատգամ

Յանուն Աստուծոյ Գեղամի եւ Ոգործածի

1. Անխուսափելի օրը.
2. Ի՞նչ է անխուսափելի օրը.
3. Ո՞վ քեզ պիտի հասկցնէ թէ ինչ է անխուսա-  
փելի օրը:
4. Սամուտ եւ Ատ սուտ համարեցին վճռին օրը:
5. Բայց Սամուտ կործանեցաւ սաստիկ ազաղակով  
մը երկինքէն եկած.
6. Իսկ Ատ կործանեցաւ սոսկալի փոթորիկով մը
7. Աստուծոյ անոնց վրայ իշխել տուաւ եօթը գի-  
շեր եւ ութը օր անընդհատ Այն ատեն զուտ անսնե-  
լու է իր այն կործանած ժողովուրդը, նման դեպին

(\*) Յովնանին նամար կըսէ

ապաղած եւ մէջը պարպուած արեւախնիի բաւնին.

8. Փռ անտօ՛ր անսոցմէ մէկը աղաւած.

9. Փարաւն, իրմէ անաջ պարոզ ծողպարքները  
եւ մործածած ջաղաքները մեղք գործած էին:

10. Անոնք ընտանացած էին Աստուծոյ մարդա-  
բէներուն դէմ. եւ Աստուծոյ զանսնք պատճեց խցո-  
ւի:

11. Զօրք երբ որ բարձրացաւ, նեղ նաւի մը  
մէջ գրկեց.

12. Որպէզո՞ր այժմ նեղի զեկուցում մ'ըլլայ, եւ ու  
չիմ լուրը ինչէ:

13. Երբ ցօղք ննչէ անաջին անգամ

14. Երբ երկիրը է լեռները արաւին օդին մէջ. եւ  
կրար դարձուելով փչրուին

15. Անտ այն օրն է որ դէպքը, վերջին գառաւ-  
ածը տեղի օրտ ունենայ:

16. Այն օրը երկինքը պիտի պատուի ու վար իյ-  
նայ կտօք կտօք:

17. Այն օրը կրեչաւկները անոր քովերը պիտի  
ըլլան, եւ ութը հրեչաւկներ պիտի կրեն Տիրոջ  
դան:

18. Գուք այն օրը Աստուծոյ անաջ պիտի տարուիք  
եւ ներ զաղանի գործերէն եւ ոչ մին ծածուկ չըպի-  
տի մնայ:

19. Որու որ այժմ ձեռքը արուի իր գիրքը պիտի  
ըսէ, «անէ՛ք կարգացէ՛ք իմ գիրքը»:

20. Կը խորհէի թէ օր մը հայրես տալու եմ.

21. Այս մարդը հանելի կեանք մը պիտի վայելէ.

22. Բարձր դրախտին մէջ.

23. Որուն պատուները դեանին մօտիկ պիտի ըլ-  
լան եւ դիւրաւ քաղուելիք:

24. «Կերէ՛ք, անուշ ըլլայ, ի փոխարէն անցեալին  
մէջ ըրած ներ գործերուն:

25. Իսկ որուն ձախ ձեռքը որ պիտի տրուի անոր գիրքը, անիկա պիտի ազալակէ, «ո՛հ, երանի թէ գիրքս ինձ չտրուէր»:

26. «Որ ես ալ չգիտնայի իմ հաշիւս,

27. «Երանի թէ մահը կեանքս վերջացներ.

28. «Ի՞նչ բանի կը ծառային իմ հարստութիւններս

29. «Իմ կարողութիւնս մարած է»:

30. Այն ատեն Աստուած պիտի ըսէ գժոխքի պահպաններուն՝ «բռնեցէ՛ք զանի և կապեցէ՛ք»:

31. «Յետոյ դժոխքի կրակին մէջ այրեցէ՛ք զանի»:

32. Յետոյ եօթանասուն կանգուն երկայնութեամբ շղթայով մը կապեցէ՛ք զանի.

33. Վասնզի չէ հաւատացած, Ամէլարարձր Աստուծոյն:

34. Անիկա հոգածու չէ եղած աչքառը կերակրելու:

35. Այսօր ալ անիկա պաշտպան չունի հոս:

36. Ոչ ալ ուրիշ ուտելիք, բացի թարսիէ.

37. Զոր մտայն մեղաւորները պիտի ուտեն:

38. Կ'երդնում ձեր տեսածովը.

39. Եւ ձեր չտեսածով.

40. Թէ այս պատուական մարգարէի խօսքն է:

41. Սա բանաստեղծի մը խօսքը չէ, աւա՛ղ որ քիչերդ կը հաւատաք:

42. Ո՛չ ալ կոխարդի խօսք չէ այս, աւա՛ղ որ քիչերդ կը խորհիք:

43. Սա տիեզերքի Տիրոջ յայտնութիւնն է:

44. Եթէ Մահաճեմալ քանի մը խօսք յերուրելով մեզ վերագրէր.

45. Անոր աջ ձեռքէն կը բռնէինք.

46. Եւ կը կտրէինք անոր սրտի երակը.

47. Եւ զանի չէինք պաշտպաններ ձեզմէ ոչ ոքի գէտ:

48. Այս գիրքը խրատ մըն է երկիւղածներու համար:

49. Մենք լաւ գիտենք թէ ձեր մէջ կան զայն սուտ համարողներ:

50. Այս գիրքը յուսահատութիւնն է անհաւատներուն.

51. Վասնզի Գործուն ինքն է ճշմարտութիւնը.

52. Ուսի՛ք փառաբանէ՛ ամէնաբարձրեալ Աստուծոյ անունը:



### Հ. Գ Լ Ո Ւ Խ

Մէքիլական, Բառասունի չորս պատգամ՝

Յանուն Աստուծոյ գթածի և ողորմածի

1. Մէկը հարցուց այն անպայման պատիժի մասին  
2: Անհաւատներուն համար: Բան մը կարող չէ արգիլելու զայն.

3. զԱստուած գործադրելէ, Աստուած որ տէ՛ն է աստիճաններուն.

4. Որոնցմով հրեշտակները և հոգին վեր կելլեն անոր քով մէկ օրուան մէջ, որուն չափը յիսուն հազար տարի է:

5. Սպասեցէ՛ք ուրեմն զեղեցիկ համբերութեամբ:

6. Անհաւատները դատաստանի օրը հեռու կը տեսնեն.


7. Եւ մենք զայն մօտիկ կը տեսնենք:

8. Այն օրը յորում երկինքը հալած պղինձի պէս պիտի ըլլայ,

9. Յորում լեռներն կարմիր ներկուած բուրդի կծիկի պիտի նմանին.

- 10. Եւ յորում բարեկամը բարեկամին չպիտի հարցնէ .
- 11. Մինչդեռ անոնք զիրար կը տեսնեն : Այն առանձնը ազատեալը պիտի ուզէ պատիժէ ազատիլ փրկանք առնել իր բաւակները :
- 12. Իր կիներ և եղբայրը :
- 13. Եւ անպատկանները որոնք անոր դորով ցոյց տուած են ,
- 14. Եւ կրկրի զբայ բարբ և զամենքը , որ ինք ազատի :
- 15. Ինձա՛նք երբէք : վառնալի դժգոյքի կրակը ,
- 16. Դանկերէն բռնած .
- 17. Եւ արեւի ջայէ ժարջոյ այն ամէնը որ կռնակ կը դարձնէր ու կերթար :
- 18. Որ զանն էր զիջէր և ազատ էր :
- 19. Մարդու ժայտ սաեղծուած է .
- 20. Երբ դժբաղդութիւն մը պատահի , կը վհափ .
- 21. Եւ երբ իրեն բարեք մը հասնի կը լրբանայ ,
- 22. Իտրեղաշա ժարդիկ աչսպէս չեն ըլլար ,
- 23. Որոնք չեն գաղբիք աղօթելի :
- 24. Որոնք ինչքերէն միշտ բաժին կայ .
- 25. Մարտիկին և ամօթխած ազգատին համար :
- 26. Որոնք հաստատ կը հաւատան դատաստանի օրուան ,
- 27. Որոնք Աստուծոյ պատիժին մտած ումէն կը աքաղափին .
- 28. Վասնզի Աստուծոյ պատիժէն իսկապէս համար ապաստան չկայ :
- 29. Որոնք որ ժուժկալութեամբ կապրին ,
- 30. Եւ սեռային յարաբերութիւն չեն սեննար բացի իրենց կիներէն և գերուհիներէն զորս վաստը կած են աջ բազուկով , պարսաւելի չեն .
- 31. Իսկ ով որ իր ցանկութիւնները առկէ անդին տանի , օրինազանց է .

- 32. Որոնք հաւատարմաբար հակեն իրենց վատանուած միջերջներուն և կատարեն իրենց յանձնառութիւնները .
- 33. Որոնք որ իրենց վկայութեանց մէջ հաստատ կ'ըլլան .
- 34. Որոնք որ աղօթքը ճշդիւ կը կատարեն ,
- 35. Անոնք դրախտներուն մէջ պիտի պատուուին :
- 36. Արեւմե սա անհաւատները ինչ ունին որ փութով կը վազեն քու առջևդ .
- 37. Խուժբերու բաժնուած աջ ու ձախ .
- 38. Մի գուցէ անոնց իւրաքանչիւրը ուզէ հելատութեանց դրախտը մտնել .
- 39. Երբէ՛ք : Անոնք զիտեն թէ մենք ինչէ ստեղծած ենք զիրենք (\*) :
- 40. Կերզուում Արեւելքի և Արեւմուտքի տիրոջմով , որ մենք կրնանք .
- 41. Որիչ ժողովուրդ մը բերել անոնց տեղը աւելի արժէքաւոր , և մեր որոշումներու փորձադրութեան մէջ մենք անգերազանցելի ենք :
- 42. Զգէ՛ զանոնք որ խաղան ու զուարճանա մինչեւ որ հասնին այն օրուան որ խոստացուած իրենց .
- 43. Այն օրը անոնք աճապարանքով դուրս պիտի նետուին իրենց գերեզմաններէն իբր թէ դրօշներու տակ հաւաքուելու երթալին ,
- 44. Բայց աչքերնին խոնարհեցուցած , ամօթա հար : Անա այսպէս է անոնց ազգարարուծ օրը :



(\*) Անոնք ստեղծուած են մեղսելով որոնք արքելէ և արախոյ հրեւելու-

ՀԱ. Գ Լ Ո Ի Խ (Նոյ)

Մէքէական. քաւի ինք պատգամ

Յանուն Աստուծոյ գթածի և ողորմածի

1. Մենք նոյն զրկեցինք իր ժողովուրդին և ա- նոր ըօրնք «Գնա՛ խրատելու քու ժողովուրդդ. դա- արն պատիժը անոր հասնելէ առաջ».

2. Նոյ ըսաւ. «Ո՛վ ժողովուրդ իմ, կուգամ ձեզ յայնորէն խրատելու».

3. «Պաշտեցէ՛ք միակ Աստուածը. վանցէ՛ք անկէ. և հնազանդեցէ՛ք անոր».

4. «Նա պիտի ջնջէ ձեր մեղքերը և ձեզ երկար միջոց պիտի տայ մինչև որոշեալ ժամանակը. վասն զի Աստուծո՛վ որոշեալ ժամանակը երբ հասնի, ոչինչ չպիտի կրնայ զայն յապաղեցնել: Եթէ կրնայիք հասկնալ:

5. Յետոյ նոյ աղաղակեց առ Աստուած և ըսաւ. «Տէ՛ր, իմ ժողովուրդս զէպի քեզ կոչեցի տիւ և գիշեր. բայց իմ հոչս միայն հեռացումը աւելցուց»:

6. «Ամէն անգամ որ անոնց կոչ ըրի զլլալս՝ որ- պէսզի անոնց ներես, անոնք մատաղանն ականջնին կը խցէին և կը ծածկուէին իրենց հազուապատկուցը. յամառեցան և հպարտացան»:

7. «Յետոյ գանոնք հրաւիրեցի, և վերջը հրապա- րակաւ ալ քու կրօնքիդ կոչեցի».

8. «Անոնց քարոզեցի թէ՛ հրապարակաւ և թէ՛ գաղանօրէն,

9. «Կըսէի անոնց, Տիրոջմէ ներողութիւն իւրնդ- րեցէ՛ք. նա ներելու շատ հակամիտ է»:

10. «Նա ձեր վրայ անձրև պիտի տեղացնէ երկին- քէն»:

11. «Անիկա պիտի աճեցնէ ձեր հարստութիւնը և ձեր զաւակաց թիւը. նա ձեզ պարտէզներ և ջուրի առունք պիտի տայ:

12. «Ի՛նչ ունիք Աստուծոյ բարութեան չհաւա- տալու»:

13. «Անիկա ստեղծած է ձեզ զանազան ձևերով»:

14. «Զէ՛ք տեսներ թէ Աստուած ինչպէս ստեղ- ծած է եօթը երկինքը կառուի իրարմէ բարձր:

15. Եւ հաստատած է յուսինը յաւառորելու հա- մար, և հոն զեանդած է արևը ճրագի ձևով»:

16. Նա ձեզ բոյսեր կը բուսցնէ երկրէն:

17. Յետոյ ձեզ անոնց մէջ պիտի մտցնէ և նորէն դուրս պիտի հանէ:

18. «Անիկա երկիրը ձեզ համար իբր գորգ տա- րածած է.

19. «Որ դուք հոն քայլէք յայն ճամբաներէն».

20. Նոյ աղաղակեց առ Աստուած, «Տէ՛ր, այն անոնք ապստամբած են ինձ դէմ, և կը հետևին ա- նոնց. որոնց հարստութիւնները ու զաւակները կա- ւելցնեն միայն անոր աւերը»:

21. Անոնք ալ նոյն դէմնչանաւոր խարդախութիւն մը խորհեցան:

22. Անոնց պէտք էլուէր անոնց, «Մի լքանէք ձեր աստուածները, և մի ձգէք Վէտար և Սօվանը,

23. Ոչ ալ Եակուսար, ոչ Եատագր և ոչ Նէսարը:

24. Այս կուռքերը շատերը մոլորեցուցած են. և չարեքուն մոլորութիւնը կաւելցնեն միայն:

25. Ի պատիժ իրենց մեղքերուն անոնք խեղդու- եցան ու յետոյ կրակին մէջ նետուեցան:


26. Աստուծոյ դէմ պաշտպաններ չկրցին գտնել:

27. Նոյն աղաղակեց առ Աստուած. և ըսաւ. «Տէ՛ր, անհաւատներէն հատ մը իսկ մի թողուր.

28. «Վասնզի եթէ անոնցմէ թողուս, ծառաներդ

կը մոյրեցնեն, և միայն անպարհլտ և անհաւատ  
զաւակներ կարտադրէն»:

29. «Ո՛վ Տէր, ներէ՛ ինձ, նաև իմ զաւակներու  
այն հաւատացեալ այրերուն, կիներուն որոնք իմ  
տունս կը մտնեն, և բնաջնջէ բոլորովին չարերը»:



### ՀԲ. Գ Լ Ո Ւ Խ դեւերը

Մէքէակաւ. Բաւն ուրք պատգամ

Յանուն Աստուծոյ գլխածի և ողորմածի

1. Դու բռէ՛. «ինձ յայտնութեան եղաւ թէ կարգ  
մը դեւեր Գորանին ընկերոջմը լսած ըլլալով, աշա-  
ղակեցին. «զարմանալի ընթերցում մը լսեցինք»:

2. «Որ դէպի ճշմարտութիւն կառաջնորդէ. մենք  
անոր կը հաւատանք. և մենք աւրիչ էակ չենք ըն-  
կերացներ մեր Տիրոջ»:

3. Մեր Տէրը (բարձր ըլլալ իր վեհափառութիւնը)  
ոչ ընկեր ունի ոչ զաւակ:

4. Մեզմէ մէկը՝ որ յիմար մըն էր, դատարկարա-  
նութիւններ ըրաւ Աստուծոյ մասին.

5. Մենք կը խորհէինք թէ ոչ մարդիկ, ոչ դեւերը  
չպիտի կրնան սուտ արտասանել Աստուծոյ նկատ-  
մամբ.

6. կարգ մը մարդիկ ապաստան փնտռեցի դեւերէն  
ոմանց քով, բայց այդ միայն աւելցուց անոնց յի-  
մարութիւնը.

7. «Այս մարդիկը, ո՛վ դէ-էր, ձեզ նման կը կար-  
ծէին թէ Աստուած մէկը չպիտի յարուցանէ:

8. «Մենք շօշափեցինք երկինքը, բայց զայն լե-

ցուն գտանք զօրաւոր պահապաններով աստղերով  
(փայլուն սլաքներով).

9. «Մենք նստանք նստարաններու վրայ լսելու  
համար հոն անցա՞ք դէ-էրը: Բայց ով որ այսու հե-  
տե ուղէ լսել. պիտի գտնէ աստղը որ կ'սպասէ  
զանի հարուածելու:

10. Մենք չէինք գիտեր թէ անոյ երկրի բնակիչ  
ներուն չարիք պիտի պատահէր, կամ թէ Տէրը կու-  
ղէր անով առաջնորդել զանոնք ուղիղ ճամբէն:

11. «Մեր մէջ կան առաքելի դեւեր և կան ող-  
որ այնպէս չեն, մենք զանալան տեսակներու բաժ-  
նուած ենք:

12. Հաւոգուեցանք թէ չենք կրնալ երկրի վրայ  
տկարացնել Աստուծոյ ոյժը, և թէ չենք կրնալ զայն  
տկարացնել մեր փախուստովը:

13. Երբ լսեցինք առաջնորդութեան գիրքը. հա-  
ւատացինք անոր, և ով որ կը հաւատայ Աստուծոյ  
չվախնար ոչ տուգանքէ ոչ կշմարտանքէ:

14. Մեր մէջը կան որ մանձնատական են. խտոր-  
հալներ ալ կան. ով որ փսլամութիւնը կընդունի ու-  
ղիկ ճամբուն կը հետեի:

15. Որոնք որ անկէ կը հեռանան դժոխքին կրա-  
կին ճարակ պիտի ըլլան:

16. Եւ եթէ անոնք ուղիղ ճամբուն վրայ հաստատ  
մնան, մենք անոնց առատ ջուր կը խմցնէք:

17. Մենք անով կը փորձէինք զանոնք. ով որ ետ  
կենայ Աստուած յիշելէ, անոր ցաւալի պատիժ պի-  
տի ապ Աստուած:

18. Ազօթատեղիները Աստուծոյ նուիրեալ են,  
ուստի Աստուծմէ զատ ուրիշին մի ազօթէք:

19. Երբ որ Աստուծոյ ծառան Մահմա՞դ ալօթքի  
կեցաւ, քիչ մնաց որ դէ-էրը զանի խեղդէին:

20. Ըսէ՛ անոնց, «ես միայն Տիրոջը կաղօթեմ և անոր ոչինչ չեմ ընկերացնեմ».

21. Ըսէ՛ անոնց, «ես ձեզ ոչ կը մնասեմ և ոչ բարիք մը կընեմ».

22. Ըսէ՛ անոնց, «մէկը չէ կարող զիս պաշտպանել Աստուծոյ դէմ».

23. Աստուծմէ զատ ազատտան չունիմ:


24. Իմ միակ իրաւասութիւնս է ձեզի՛ քարոզել Աստուծմէ եկածը, և ձեզ հաղորդել իր առաքումները: Ով որ ըմբոստ է Աստուծոյ և իր մարդարէին՝ դժոխքի կրակը իրեն վարձք պիտի ունենայ, և անոր մէջ պիտի մնայ յաւիտեան:

25. «Մինչև որ իրենց եղած սպառնալիքը աչքովն ինչ տեսնեն անոնք ամպարիշտ պիտի ըլլան: Այն ատեն է որ անոնք պիտի հասկնան թէ մեզմէ ով աւելի տկար է օգնութեամբ և աւելի փոքր է թիւով»:

26. Ըսէ՛ անոնց, «ես չեմ գիտեր թէ ձեզ սպառնացուածները մօտ են, թէ Աստուած անոնց հետաւոր ժամանակամիջոց մը սահմանած է: Միայն Աստուած գիտէ գաղտնի բաները, և մէկու մը չյայտնեք զանոնք»:

27. Բացի իրեն հաճելի այն առաքելալէն, որուն առջեւէն և ետեւէն պահպաններ կը զրկէ:

28. Որպէսզի գիտնայ թէ անոնք իրենց Տիրոջ պատգամը կը կատարեն և անիկա անոր քով եղածները կը շրջապատէ և ամէն բան հատով կը հաշուէ:



ՀԳ. Գ Լ Ո Ւ Խ

Մէքէական. Բասն պատգամ

Յանուն Աստուծոյ գթածի և ողորմածի

1. Ո՛վ Մարգարէ, վերաբերուովք ծածկուած,
2. Աղօթքի կայնէ արքայ զիշերը, կամ յիչ մը պակաս.
3. Կէսը կամ անկէ քիչ մը պակաս.
4. Կամ բան մը աւելցուր անոր վրայ, և Գուրանը կարգալով կարգա՛ (սաղմոսէ),
5. Մենք քեզ ծանր խօսքեր կը յայտնենք:
6. Գիշերուան մէջ, աղօթքի կայնիլը աւելի ազդեցիկ է և խօսքը աւելի հաստատ.
7. Վասնզի ցերեկը դու երկար զբաղում ունիս:
8. Յիչէ քու Տիրոջ անունը, և քեզ բոլորովին անոր նուիրէ՛.
9. Աստուծոյ, արեւելքի և արեւմուտքի աիրոջը: Անկէ զատ Աստուած չկայ. Ուստի զանի քեզ պաշտպան ընդունէ:
10. Անհաւատներու խօսքերուն համբերէ՛, և բաժնուէ անոնցմէ պատշաճ կերպով մը.
11. Զա մինակ ձգէ այս աշխարհի բարիքները վայելող անհաւատներուն հետ: Անոնց քիչ մը ժամանակ սուր:
12. Մենք անոնց համար ունինք ծոնը շղթաներ և կիզիչ հնոց մը:
13. Ոնեղող կերակուր մը և դառն պատիժ:
14. Այն օրը պիտի սարսիս երկիրը նոյնպէս լեռները, և լեռները հոգն գրուած աւազի թումբեր պիտի ըլլան:

15. Մենք ձեր զրկեցինք մարգարէ մը, ձեզ դէմ վկայելու համար, ինչպէս որ մարգարէ մը գրկած էինք Փարաւոնին:

16. Փարաւոն ըմբոստ գտնուեցաւ մարգարէին ձորին, և մենք զանի պատժեցինք խիստ պատժով մը:

17. Եթէ անհաւատ մնաք, ինչպէս պիտի ապահովուէիք այն օրէն որ աղաքները պիտի ձերացնէ:

18. Երկիրքը պիտի ձեզքուի այն օրը. Աստուծոյ խոստումները պիտի կատարուին:

19. Ահա զեկուցումը. և ով որ ուզէ, Տիրոջը ձամբան կը բռնէ:

20. Գու Տէրդ լաւ գիտէ, թէ Մահաձեռն, որ դու աղօթքի կը կայնիս մերթ գիշերուան երկու երրորդին չափ, մերթ մինչև կէտը, և մէկ երրորդը՝ ժեզ հետևողներուն մեծ մասն ալ նոյնպէս կընէ: Եւ Աստուած է որ կ'որոշէ օրը և զիշերը՝ նա գիտէ որ դուք ձեռք չէք կրնար հաշուել զայն, կը ներէ ձեզ: Աւրեմն կարդացէք Գուրանէն ինչ որ ձեզ դիւրին է կարդալ: Աստուած գիտէ թէ ձեր մէջ հիւանդներ կան, թէ կան ուրիշներ ալ որոնք երկիրը կը պարտին՝ Աստուծոյ շնորհիւ ինչքեր հալթայթելու համար. նա գիտէ թէ ուրիշներ ալ կը պատերազմին Աստուծոյ ձամբուն մէջ: Աւրեմն կարդացէք Գուրանէն ինչ որ ձեզ դիւրին է: Աղօթքը կատարեցէք, օղորմութիւն աուէք, Աստուծոյ փոխ աուէք առատօրէն: Ինչ բարիք որ կանխաւ կընէք ձեր հոգիին համար, զայն պիտի գիտէք Աստուծոյ քով: Այս ձեզի աւելի օգտակար պիտի ըլլայ, և աւելի մեծ վարձք պիտի ստանաք անով: Աստուծմէ ներսը զօրութիւն խնդրեցէք, վասնզի նա ներող և օղորմած է:



ՀԴ. ԳԼՈՒԽ

Մէտէական. յիսուն հինգ պատգամ

Յանուն Աստուծոյ գթածի և օղորմածի

1. Ո՛վ վերաբերուով ծածկուած,
2. Ե՛լ և խրատէ մարդիկը:
3. Փառարանէ՛ քու Տէրդ:
4. Մաքրէ՛ քու հագուստներդ.
5. Եւ աղտոտութենէ հեռացիր:
6. Այ աւելի առնելու համար մի տար:
7. Համբերութեամբ սպասէ քու Տիրոջը:
8. Երբ որ փողը հնչէ,
9. Այդ օրը դժուարին օր մը կըլլայ,
10. Անհաւատներուն համար առժանկի օր մը:
11. Զո՛ւ մինակ ձգէ՛ իմ ստեղծած մարդուս հետ.
12. Անոր աուած եմ անհուն հարստութիւններ
13. Եւ որդիներ իր աչքին առջև դարգացող:
14. Կարգաբեցի անոր ամէն ինչը,
15. Եւ նա կուզէ որ շատցնեմ ինչքերը:
16. Բնաւ վասն զի անկա հակասակեցաւ մեր հարաչքներուն:
17. Զանի առժանքի մը պիտի մատնեմ.
18. Վասնզի մտածեց և որոշեց Գուրանէն հակառակէ:
19. Թող սպաննուի, ինչպէս որ որոշած էր.
20. Թող դարձեալ սատկի՛ ինչպէս որ որոշած էր.
21. Յետոյ իր շուրջը դիտեց:
22. Յետոյ յօնքերը պոսկեց և արեւեցաւ,
23. Յետոյ ճշմարտութենէն դարձաւ և հպարտացաւ:
24. Եւ բոաւ, «Գուրանը սովորուած կախարչութիւն մըն է:

- 25. Ատիկա մարդու մը խօսք է:
  - 26. Չանի շուտով կայրեմ դժոխքի կրակին մէջ:
  - 27. Գու ինչ գիտնաս որ դժոխքը ինչ է:
  - 28. Բան մը չձգեր չլինասուած ու ազատուած:
  - 29. Կայրէ մարդուս միտը,
  - 30. Վրան կը հսկեն տասն ինը հրեշտակները:
  - 31. Միայն հրեշտակներ պահապան դրած ենք կրակին անոնց թիւը անհաւատներու համար միայն փոքրածանք բրած ենք, որպէսզի գիրք ունեցողները հաւատան Գուրանին ճշմարտութեանը և հաւատացեալներուն հաւատքը անով անի:
  - 32. Եւ թէ գիրք ունեցողները և հաւատացեալները չկասկածին անկէ:
  - 33. Սրտերնին տկար եղողները և անհաւատները հըռոն, «Աստուած ի՞նչ ըսել կուզէ Քայս առակով»:
  - 34. Այսպէս Աստուած կը մոյրորեցնէ իր ուզածները, և կառաջնորդէ իր ուզածները: Անոր քանակներուն թիւը իրմէ զատ ուրիշ մէկը չգիտեր:
- Ատիկա միայն զեկուցում մըն է մարդոց համար:
- 35. Այո՛, և ես կերդնում այդ մասին լուսինով:
  - 36. Եւ գիշերով երբ ետ կը քաշուի:
  - 37. Եւ առաւօտով որ կը լուսնայ
  - 38. Թէ դժոխքը սարսափելի երէն մին է,
  - 39. Սա զեկուցում մըն է մարդոց համար:
  - 40. Չեղմէ անոնց համար որ առաջ կ'երթան ինչպէս անոնց համար որք ետ կը մնան:
  - 41. Ամէն հոգի պատասխանատու է իր գործերուն, բայց աջակողմեանները
  - 42. Դրախտներու մէջ պիտի մտնեն և պիտի հարցնեն մեղաւորներուն.
  - 43. «Չեր ո՞վ առաջնորդեց դժոխք»:
  - 44. Անոնք պիտի պատասխանեն, «մենք երբէք ազօթք չըրինք»:

- 45. «Մենք չկրակրեցինք ազքօտը»:
- 46. «Մեր ժամանակը (անցուցինք դատարիտնօտութեամբ զրախօսներու հետ»:
- 47. «Մենք սուտ կը համարէինք դատաստանի օրը»:
- 48. «Մինչև այն վայրկեանը յորում համոզուեցանք անոր ճշգրտութեանը»:
- 49. Բարեխօսներու բարեխօսութիւնը այն ատեն անոնց օգուտ չպիտի ընէ:
- 50. Ուրեմն ի՞նչու խոյս կուտային խրատէն,
- 51. Ինչպէս էլ մը սարսափահար կը փախչի առիւծի մը առջևէն:
- 52. Անոնցմէ ամէն մէկը կուզէր որ Աստուծմէ իրեն հասնի մասնաւոր հրովարտակ մը:
- 53. Այդպէս չպիտի ըլլայ, բայց անոնք չեն վախնախ միւս աշխարհէն:
- 54. Այդպէս չպիտի ըլլայ: Գուրանը խրատ մըն է, ով որ ուզէ կը խրատուի:
- 55. Անոնք որ Աստուած ուզէ, պիտի լսեն միայն իր խրատները. Աստուած կարժանացնէ երկիւղածը: Եւ կը սիրէ ներել:



ՀԵ. ԳԼՈՒԽ (Յարութիւն)


Մէլլէական. հառասուն պատգամ

Յանուն Աստուծոյ զթածի եւ ողորմածի

- 1. Կերդնում յարութեան օրովը.
- 2. Կերդնում յարութեան օրը ինք զէնք մեղադրող հոգովը.

3. Միթէ մարդը կը կարծէ՞ որ մենք անոր սակոր- ները չպիտի ժողովենք :
4. Կրնանք նախ իս'յ անոր մատերուն ծայրերը հաւաքել ճշդիւ :
5. Բայց մարդ կուզէ ուրանայ իր առջև եղածը :
- 6 Անիկա կը հարցնէ. «Երբ պիտի դայ յարու- թեան օրը» :
7. Իսկ աչքը երբ մթագնի
8. Երբ լուսինը խաւարի :
9. Երբ արևը ու լուսինը միանան :
10. Այն ատեն մարդը պիտի ալաղակէ. «Տ՛ւր է ապաստանարանը» :
11. Ո՛ր, ապաստանարան չկայ :
12. Այն օրը վերջին ապաստանը քու Տիրոջ քով պիտի ըլլայ :
13. Նոյն օրը մարդուն կիմացնեն թէ ինչ ըրած է ու չէ ըրած :
14. Մարդ ինք իր դէմ սկանառես վկայ պիտի ըլլայ :
15. Ինչ առարկութիւններ ալ ներկայացնէ :
16. Ո՛վ Մոհամմէդ, +եղ եզած յայրնու-թիւնը մահալը- վախով լեզուդ աճապարանքով մի՛ շարժեր :
17. Վասնզի մեր դործն է անոր մասերը միացնել ու կարգալ ըստ պարզի :
18. Երբ մենք քեզի կարգանք քէրէք նետեւ ըն- թերցումին մեղ նետ :
19. Յետոյ անոր բացատրութիւնը մենք կուտանք քեզ :
20. Բնա՛ւ. բայց դուք կը սիրէք վաղանցալը :
21. Եւ կը թողուք հանգերձեալը (ապագայ կէտնէլ) :
22. Այն օրը ինչ պիտի փայլին կարգ մը դէմքեր պայծառութեամբ :
23. Եւ որոնք իրենց նախացքը պիտի ուղղեն ի- րենց Տիրոջ :

24. Այն օրը կարգ մը դէմքեր տխուր պիտի ըլլան
25. Որոնք պիտի կասկածին թէ մեծ թշուառու- թիւն մը պիտի դայ իրենց վրայ :
26. Այո՛. անդարակոյս : Երբ իոգին մինչև կոկոր- զը ելլէ :
27. Երբ ըսուի, «Տ՛վ կրնայ նմայել» :
28. Երբ մարդ հասկնայ թէ մեկնումի վայրկեանը եկած է
29. Երբ ազգքը ազգքին կանցնի :
30. Այն վայրկեանին անիկա պիտի տարուի քու Տիրոջ :
31. Վասնզի նա ոչ կը հաւատար և ոչ կազթէր :
32. Սուա կը համարէր քէրէք և երես կը գարձնէր
33. Յետոյ իրեններուն միացու հպարտութեամբ :
34. Սակայն օրը կը հասնի, մօտ է :
35. Ամէն օր աւելի կը մօտենայ, և յետոյ՛ալ աւելի կը մօտենայ
36. Մարդը կը կարծի թէ ազա՛տ պիտի ձգուի :
37. Անիկա միթէ նախ սերմը կաթիլ մը չէ՞ր ո՞ր կը տարածուի դիւրաւ :
38. Չէ՞ որ յետոյ այն արեան կտոր մ'եղաւ, զոր Աստուած կազմակերպեց :
39. Նա անկէ շինեց զոյգ մը. մարդը և կինը :
40. Անա այս Աստուածը միթէ կարող չէ՞ մեռեալ- ները վերակենդանացնելու :



ՀԶ. Գ Լ Ո Ի Խ (Մարդը)

Մէքէական. Երեսուն մէկ պատշամ

Յանուն Աստուծոյ Գթածի եւ Ոգործածի

1. Շատ ժամանակ չէ՞ անցած մարդուն վրայէն առանց յիշուելու :
2. Մենք ստեղծած ենք մարդը երկնէն՝ հեղուկ սերմէ՛ որ դանի փորձենք. ասոր համար աչք եւ ազանջ տուինք :
3. Անոր ճամբայ ցոյց տուինք. երբեմն երախտագէտ է. երբեմն ապերախտ :
4. Պատրաստած ենք անհաւատներուն համար չըզթաներ՞, անուրներ եւ կիզիչ զժոխք :
5. Արդարները պիտի խմեն լեցուն դաւաթներով՝ քէնէի խառուած քափուրով :
6. Այս ազրիւր մըն է որմէ միայն Աստուծոյ ծառաները պիտի խմեն եւ ուզած տեղերնին կը վազեն :
7. Արդարները կը կատարեն իրենց ուխտը, եւ կը վախնան այն օրէն որուն չարիքը կը տարածուի հեռուն :
8. Անոնք անոր սիրոյն համար կը կերակրեն ազքատը, որրը եւ զերին :
9. Եւ կրօնն. «Այս կերակուրը ձեզ կուտանք Աստուծոյ սիրոյն համար. եւ ձեզմէ՛ ոչ փոխարինութիւն կուզենք ոչ չնորհակալութիւն» :
10. «Կը վախնանք Աստուծոյ կողմանէ սոսկալի եւ չարաբաստիկ օրուան մը մասին» :
11. Նաև Աստուած կը պաշտպանէ զանոնք այսօրուան թշուառութենէն եւ անոնց կը պարգևէ գութութիւն եւ ուրախութիւն :
12. Եւ ի վարձ անոնց համբերութեան կուտայ

- անոնց դրախտը եւ մեծաքսեայ հազուատներ :
13. Ուր թիկնաթոռներու վրայ բազմած, ոչ աբուի սոսկէն կը նեղուին եւ ոչ սառուցիչ պաղէն :
  14. Մերձակայ ծառերը անոնց շուք պիտի բնեն եւ պտուղնին պիտի վար կախնն որ առանց դժուարութեան քաղուին :
  15. Անոնց շուքը պիտի պտըտղնեն արծաթէ աւոթներ եւ սափորաձեւ գաւաթներ :
  16. Արծաթեայ սափորներ զորս պիտի լեցնեն որոչ չափով մը :
  17. Անոնց հոն խմել պիտի տան լեցուն դաւաթներով կոճապղպեղի (զէնճէֆի) խառնուրդ :
  18. Հոն կը գտնուի ազրիւր մը Սէյսէպիլ կոչուած :
  19. Անոնց շուքը կը գառնան մանչեր յախտեանապէս թարմ. Զանոնք տեսնելուդ կը կարճես թէ ցրուած մարգարիաներ են :
  20. Եթէ տեսնէիր առիկա տեսած կըլլայ հեշտանքի վայր մը որ ընդարձակ թագաւորութիւն մըն է :
  21. Անոնք պիտի հազուին կանաչ սնդուսէ եւ թախչէ հազուատներ եւ զարչարած արծաթեայ ապարանջաներով : Անոնց Տէրը անոնց պիտի խլցնէ մաքուր ըմպելի մը :
  22. Այս բոլորը ձեզ պիտի տրուի ի վարձատրութիւն : Զեր ջանքերը պիտի գնահատուին :
  23. Մենք Գուրանը ձեզ զրկեցինք բարձրէն :
  24. Համբերութեամբ սպասէ քու Տիրոջ հրաւանին, եւ մի՛ հնազանդիր անոնցմէ չարազործներուն եւ ապերախտներուն :
  25. Կրկնէ՛ Աստուծոյ անունը առաւօտ է իրիկուն :
  26. Եւ գիշերն ալ պաշտէ՛ զԱստուած, եւ փառաբանէ իւր անունը բոլոր գիշերը :
  27. Այս մարդիկը կը սիրեն ներկան, որ չուտով


Վանցնի, եւ անփոյթ են հանդէս չեալ զժուար օրումն մասին:

28. Մենք ստեղծած ենք զանոնք եւ զօրացուցած. եթէ ուզէինք, կրնայինք անոնց տեղ ուրիշ ժարք դնել:

29. Անա զեկուցումը ով որ ազէ կը բռնէ այն ճամբան որ իր Տիրոջ կը տանի:

30. Բայց անոնք չեն կրնար ուզել այն դար Աստուած պիտի ուզէ, վասն զի նա գիտուն եւ իմաստուն է:

31. Նա իր ողորմութեամբը պիտի ընդդրկէ իբր ուղածները: Իսկ չարերուն պատրաստած է զանոն տանջանք:



### ՀԷ. Գ Լ ՈՒ Խ

#### Մէքէական, յիսուն պատգամ

Յանուն Աստուծոյ զթածի և ողորմածի

1. Կ'երգնում իբարու ետեւէ գրկուածներով,
2. Կ'երգնում արագօրէն շարժողներով
3. Կ'երգնում տարածուողներով,
4. Կ'երգնում տարբերութիւնը հաստատողներով,
5. Կ'երգնում անոնցմով որոնք խօսք կը նետեն
6. Արգարացումի եւ սպաննայիքի,
7. Թէ ձեզ կանխասացուածը կատարուելու վրայ է:
8. Երբ որ աստղերը մթննան,
9. Երբ Երկինքը պատուի,
10. Երբ լեռները փչրուին փոշի նման,
11. Երբ որ անաբուածներուն որոշ միջոց կը տաի:
12. Մինչեւ ո՞ր օրը սահման պիտի որոշուի:

13. Մինչեւ վճաի օրը:

14. Ի՞նչ է այն որ թեղ պիտի ստրեցնէ վճաի օրը:

15. Վա՛յ այն օրը անհաւատներուն:

16. Զ.՞ որ մենք բնաջնջեցինք նախկին ժողովուրդները:

17. Զէ՞ որ անոնց տեղը գրիէք աւելի նոր ժողովուրդներու

18. Անա մենք այսպէս կընենք յանցաւորներուն:

19. Վա՛յ այն օրը անհաւատներուն:

20. Զ.՞ որ մենք ձեզի անարգ ջուրէ մը ստեղծեցինք:

21. Եւ զետեղեցիինք ազանով տեղ մը.

22. Մինչեւ սահմանալ ժամանակը.

23. Մենք կըցինք այդ ընելու եւ ո՞րչափ կարող ենք:

24. Վա՛յ այն օրը անհաւատներուն:

25. Զէ՞ որ հաստատեցինք Երկիրը պարունակելու համար:

26. Ողջիւրը եւ մեռելները:

27. Հոն հաստատեցինք բարձր լեռները, եւ ձեզ կը խմցնենք քաղցր ջուրը:

28. Վա՛յ այն օրը անհաւատներուն:

29. «Փայէ՛ք տանջուիլ, որ սուտ կը համարէիք:

30. «Փայէ՛ք եռածիւղ շուքին:

31. Որ չլքաւորիք, այն ձեզ օղուտ չպիտի ընէ բոցերէն պաշտպանուելու:


32. Անիկա կոյժեր կարձակէ աշտարակներու պէս:

33. Նման կարմիր ուղտերու,

34. Վա՛յ այն օրը անհաւատներուն:

35. Այն օրը մեղաւորները համար պիտի ըլլան:

- 36. Անոնց չպիտի թոյլաքրուի պատճառներ բերուաւ:
- 37. Վա՛յ այն օրը անհաւատներուն:
- 38. Սյս այն օրը պիտի ըլլայ, յորում պիտի ժող-վենք թէ ձեզ եւ թէ ձեր նախորդները:
- 39. Եթէ ճարտարութիւն մ'ունիք, ի գարձ գրէք:
- 40. Վա՛յ այն օրը անհաւատներուն:
- 41. Բարեպաշտ մարդիկ չուքերու և ջուրի աղե-րու մէջտեղ պիտի ըլլան:
- 42. Իրենց սիրած պտուղները պիտի ունենան:
- 43. Անոնց պիտի ըսուի. «Կերէք ու խմեցէք մեծ հաճոյքով, ի վարձ ձեր գործերուն»:
- 44. Անա այսպէս կը վարձատրենք բարեգործները:
- 45. Վա՛յ այն օրը անհաւատներուն:
- 46. Կերէք ու վախկեցէք հոս քիչ մը ատեն և սպառք մեղաւորներ էք:
- 47. Վայ այն օրը անհաւատներուն:
- 48. Երբ անոնց ըսուեցաւ «ծնրագրեցէ՛ք» չծրն-րագրեցին:
- 49. Վա՛յ այն օրը անհաւատներուն:
- 50. Այ այսուհետեւ ի՞նչ գիրքի պիտի հաւատան:



### ԸԸ. Գ Լ Ո Ի Խ (Մեծ լուրը)

#### Մէքէնիական, Բառասուն մէկ պատգամ

Յանուն Աստուծոյ գթածի և ողորմածի

- 1. Ի՞նչ բանի մասին կը հարցնեն:
- 2. Մեծ լուրի (յորո-թեան) մասին,
- 3. Որուն մասին անոնք կը վիճին,
- 4 Անոնք անկասկած պիտի իմանան զայն

- 5. Այ՛ո, պիտի իմանան զայն:
- 6. Չէ՞ որ երկիրը անկողնոյ պէս տարածած ենք,
- 7. Լեռներն ալ ցիցերու նման:
- 8. Մենք ձեզ զոյգ ստեղծած ենք.
- 9. Ձեր հա՛ գտաւթիւնը ձեր քունին մէջ սահմա-նեցինք.
- 10. Գիշերն ալ ձեզ իօր վերաբկու տուինք.
- 11. Յերեկն ալ միջոց ըրինք ապրտաա շահելու:
- 12. Ձեր գլխուն վրայ հաստատուն եօթը երկինք-ներ կառուցինք.
- 13. Լուսաւոր ճրագ մըն ալ հոն առ կախեցինք:
- 14. Ամպերէն ալ առաա ջուր կ'իջեցնենք.
- 15. Բուօցնելու համար անով հացահատիկ և տուն-կեր:
- 16. Եւ ծառեր տնկուած պարտէզներ:
- 17. Վճռին օրը կանխաւ սահմանուած է.
- 18. Այն օրը փողը պիտի հնչէ, և դուք խումբով պիտի գաք:
- 19. Երկինքը պիտի բացուի և բազմաթիւ դուռ-ներ պիտի ըլլաւ:
- 20. Լեռները պիտի շարժին և օդերեոյթի պէս պիտի երևին:
- 21. Գեհները դարաններու ձեւը պիտի առնէ,
- 22. Իբր բնակատեղ մեղաւորներու,
- 23. Հոն դարերով բնակելու համար:
- 24. Անոնք հոն չպիտի ճաշակեն ոչ զովութիւն և ոչ ըմպելի,
- 25. Այլ միայն եռացած ջուր և թարախ,
- 26. Իբրև յարմար վարձք Իրէնց գործերուն.
- 27. Վասնզի անոնք չեն մտածած թէ հաշիւ տալ պէտք պիտի ըլլայ,
- 28. Եւ անոնք կուրանային մերնշանները, և սուս կը համարէին:

29. Բայց մենք ամէնը հաշուած ու գրած ենք:  
30. Աւրեմն հաշակեցէ՛ք. և մենք միայն ձեր տան-  
ջանքը կաւելցնենք:

31. Երջանկութեան վայր մը վերապահուած է եր-  
կիւզածներուն համար:

32. Պարտէզներ ու այգիներ,

33. Աղջիկներ կլորիկ ծիծերով և անոնց հաս-  
կակից:

34. Լեզուն գաւաթներ:

35. Անոնք ինչ չեն լսեր գէշ խօսքեր ու սուտեր:

36. Այս վարձատրութիւն մըն է քու Տիրոջ կող-  
մէ հաշուած:

37. Երկինքի ու երկրի և ասոնք մէջ բոլոր եղա-  
ծի տիրոջ կողմանէ, որ սղործած է. բայց անոր  
խօսք չպիտի ուղղեն:

38. Այն օրը երբ հողին և հրեշտակները կարգաւ  
կը շարուին, մէկը չպիտի խօսի, բացի անկէ որուն  
պիտի թոյլատրէ Ողորմածը, և որ միայն ճշմար-  
տութիւնը պիտի ըսէ:

39. Այս անվրիպելի օրն է. ով որ կուզէ կը բռ-  
նէ իր Տիրոջ ճամբան:

40. Մենք քեզ զեկուցինք տանջանքին մօտեցած  
ըլլալը:

41. Այն օրը մարդը պիտի տեսնէ իր ձեռաց  
գործերը, և անհաւատը պիտի ազազակէ. «ե-  
րանի թէ հող ըլլայի»:



ՀԹ. Գ Լ Ո Ւ Խ

ՀՈՒԻ ԱՌՆՈՂ ՀՐԵՇՏԱԿՆԵՐԸ

Մէքէական. Բառասուն վեց պահպամ

Յանուն Աստուծոյ գլխածի և սղորմածի

1. Կ'երզնում խտութեամբ հոգի հանողներով,
2. Մեղմութեամբ քաշողներով,
3. Օղբն մէջ սահողներով,
4. Ապելէ բնթացողներով,
5. Տիեզերաց գործերը վարողներով (\*)
6. Այն օրը երբ գղբապնդը կը գղբապնէ,
7. Ետեւէն կուգայ երկրորդ հարուածը,
8. Այն օրը սրտերը գողահար եղած,
9. Աչքերը խոնարհած,
40. Անհասկանալի կըսեն. «մենք այխարհ պիտի  
վերադառնա՞նք»
41. Թէեւ փոշիացած սկորններ ենք. . . :
42. Այս պարագային. անոնք կըսեն, «այն կորըս-  
տաբեր վերադարձ մը կըլլայ»:
43. Միայն մէկ ձայն պիտի լսուի,
44. Եւ արդէն անոնք դժօխքի խորը պիտի ըլլան:
45. Մովսէսին պատմութիւնը գիտես:
16. Երբ Աստուած զանի կանչեց Թաւա հովիտի  
խորէն.
47. «Գնա՛, Փարաոնը գտիր. անիկա ամպա-  
րիշտ է»
18. «Եւ ըսէ անոր. կը փափաքի՞ս արգարանալ»
49. «Ես քեզ պիտի առաջնորդեմ գէպի Աստուած.  
վախցի՛ր անկէ»:

(\*) Այս հինգ արաներու մէջ երբեմն առարկայ երգները  
աւրբելինէ մէջ իբրևան մանկներով են.

- 20. Մոլխէս անոր ցուցուց մեծ հրաշք մը:
- 21. Փարաւոն զանի խարերայ համարեց եւ ըմբոստացաւ:
- 22. Կռնակ դալձուց անոր եւ սկսաւ գործել:
- 23. Մարդիկ կանչեց եւ իր հրամանները տուաւ:
- 24. Ըսելով, «ես ձեր գերագոյն աէրն եմ»:
- 25. Աստուած ալ զանի պատժեց այս եւ մ/ւս աշխարհի պատիժովը:
- 26. Ասոր մէջ օրինակ կայ վախցողին համար:
- 27. Ձեզ ստեղծելը դժուար է, թէ երկինքը կառուցանելը:
- 28. Աստուած է որ զայն հաստատած է, նա է որ զայն բարձրացուցած է եւ կատարեալ ձեւը տուած է:
- 29. Նա տուած է գիշերուան մթութիւնը, եւ նա ծաղեցուցած է օրը (արեւը):
- 30. Եւ յետոյ տարածած է երկիրը:
- 31. Անիկա բղխեցուցած է անոր ջուրերը եւ բուսցուցած խոտերը:
- 32. Նա հաստատած է լեռները:
- 33. Ձեք եւ ձեր անասուններուն վայելման համար:
- 34. Եւ երբ կը հասնի մեծ կործանման օրը:
- 35. Այն ատեն մարդ պիտի խորհի իր ըրածը:
- 36. Երբ ալ դժոխքին կրակը կը տեսնէ:
- 37. Այն ատեն ով որ ըմբոստ է:
- 38. Եւ նախամեծար համարած է այս աշխարհի կեանքը:
- 39. Դժոխքը պիտի ունենայ իրեն բնակավայր:
- 40. Բայց այն որ Տիրոջը վեհախառութեան առջեւ կը դադար, եւ իր անձը կը զսպէր իր ցանկութիւններէն:
- 41. Անիկա իրեն բնակավայր պիտի ունենայ դժբախտը:
- 42. Քեզ պիտի հարցնեն վերջն ժամուան մասին:

«Թէ երբ պիտի ըլլայ:

- 43. «Թէ ի՞նչ կը հասկնաս զայն իշխելով»:
- 44. Անոր ժամանակը միայն Աստուած գիտէ:
- 45. Դու միայն իրատող ես անկէ վախցողները:
- 46. Այն օրը՝ որ զանի կը տեսնեն, անոնց կը թուի թէ քերէզմնի մէջ միայն մէկ իրիկուն կամ մէկ ատուօտ մնացած են:



### Չ. ԳԼՈՒԽ

#### Մէքիւական. Իսաաաուն Երկու պատգամ

Յանուն Աստուծոյ զթածի եւ ոգորմածի

- 1. Մուհամմէտ գէմքը խոժոռեցուց եւ ետ քաշուեցաւ:
- 2. Երբ որ կուր մը իրեն ներկայացաւ:
- 3. Եւ քեզ ո՞վ իմացուց թէ անիկա չպիտի մաքրուի:
- 4. Թէ չպիտի ուզէ իրատուիլ եւ անկէ օգտուիլ:
- 5. Բայց հարուստ մարդ որ ըլլայ:
- 6. Դու զանի յարգանքով կ'ընդունիս:
- 7. Եւ դու հոգ չես ընել թէ անիկա մաքրուած չէ:
- 8. Բայց այն որ քեզ կը դիմէ հասարակ եասնդով:
- 9. Որ երկիւղած է:
- 10. Դու զանի կարճամարհես:
- 11. Չգուշացիր այսպէս վարուելէ. Գուրանը զեկուցում մըն է:
- 12. Ուզողը զայն իր միտքին մէջ կը պահէ:
- 13. Այն դրուած է պատուական էջերու վրայ:
- 14. Բարձր, մաքուր:
- 15. Գրուած պատուական եւ արդար զբողնեցու:

Ճեռքով:

- 16. Թող կորսուի մարդը. Որչա՛փ տպերախո է:
- 17. Աստուած ի՞նչէ ստեղծած է զանի:
- 18 Սերմի կաթիլէ մը.
- 19. Նա զանի ստեղծած է եւ կազմած որոշ չափով մը:
- 20. Անոր ճամբան զիւրացուց արքանդէն ելլելու.
- 21. Չանի կը մեռցնէ եւ գերեզման կը դնէ.
- 22 Յետոյ զանի պիտի յարուցանէ երբ որ ուզէ:
- 23. Մարդ տակաւին չկատարեց Աստուծոյ հրահանները:
- 24. Մարդը իր սնունդին թող նայի:
- 25. Մենք առատապէս ջուր կը տեղացնենք.
- 26 Երկիրը ճեղք ճեղք կրնենք:
- 27. Եւ անկէ կը բուսցնենք հատիկը.
- 28. Խաղողը եւ խոտը.
- 29. Զիթապտուղը եւ արմաւը.
- 31. Պարտէզներու թանձրախիտ ծառերը:
- 31. Պտուղները եւ կանաչեղէնները.
- 32. Ի վայելումն ձեր եւ ձեր անասնոց:
- 33 Երբ որ փողին խլացուցիչ ձայնը լսուի.
- 34. Այն օրը մարդ կը փախչի իր եզրօրմէն.
- 35. Իր հօրմէն եւ իր մօրմէն.
- 36. Իր ընկերէն եւ իր գաւազներէն.
- 37. Անա այն օրը ամէն մարդու զբաղումը իրեն պիտի բաւէ:
- 38. Նոյն օրը ոմանց զէմքերը պիտի ըլլան փայլուն.
- 39. Ժպտուն, ուրախ.
- 40. Եւ միեւնոյն օրը ոմանց ալ զէմքերը փոշիւով ծածկուած պիտի ըլլան.
- 41. Խաւարը պիտի պատէ զանոնք.
- 42. Ասոնք անհաւատները եւ անառակներն են:

ԶԱ. ԳԼՈՒԽ


Մէքէական. քսան ինը պատգամ

Յանուս. Աստուծոյ գթածի. եւ ողորմածի

- 1. Երբ որ արեւը ծայլուի
- 2. եւ երբ աստղերը վար թափին.
- 3. եւ երբ լեռները չարժին.
- 4 Երբ էգ ու զտերը լքուին.
- 5. Երբ վայրենի անասունները միպտեղ խմբուին:
- 6. եւ երբ ծովերը ետան.
- 7. Երբ հողիները միանան.
- 8. Երբ որ ողջ թաղուած աղջկան հարցուի.
- 9. Թէ ի՞նչու հաժար զանի սպաննած են (\*)
- 10. Երբ պիքքին էջը բացուի.
- 11. Երբ երկինքը մէկ կողմ դրուի.
- 12. Երբ զժոխքին կրակը բորբոքի.
- 13. Երբ զբախտը մօտենայ.
- 14. Այն ատեն ամէն մարդ կ'իմանայ թէ ինչ է ըրած:
- 15. Ես կերգնում չըջուն աստղերով.
- 16. Որոնք արագ կընթանան ու կը կորսուին.
- 17. Կ'երբնո՞ւմ այն գիշերով երբ կը մթնէ.
- 18. Այն արշալոյսով երբ կը բացուի.
- 19 Թէ Գուրանը խօսքն է յարգելի զրկուածին (Պարբրիէին)
- 20. Որ կարողութեան տէր է գահին տիրոջ մօտ.
- 21. Որան հնազանդ և հաւատարիմ է:
- 22. Չեր հայրենակիցը զիւրահար չէ

(\*) Կառապալտ Արաբները աղջկանց ծնունդը դժբաղդոտութեան համարելով, յաճախ էին նորածինները ողջ կը լնայէին:

- 23. Նա զանի տեսաւ յայտնապէս երկինքը.
- 24. Եւ չկասկածիր այն ծածուկներու մասին որ յայտնուեցան:
- 25. Ասոնք քարկոծուած սատանային խոսքերը չեն:
- 26. Ուրեմն ո՛ւր կերթաք, է՛նչու կը լ՛անէք.
- 27. Գուրանը խրատ մըն է բոլոր աշխարհի համար
- 28 Ձեզմէ անոնց համար որոնք ուզելը ճամբանս կը փնտռեն:
- 29. Դուք չէք կրնար ուզել ինչ որ կուզէ Աստուած, տիեզերքի տէրը.



### ՁԲ. ԳԼՈՒԽ

Մէքէական. ասան ինը պատգամ

Յանուն Աստուծոյ գթածի և ողորմածի

- 1. Երբ երկինքը ճեզքուի.
- 2. Եւ աստղերը ցրուին.
- 3. Եւ երբ ծովերը իրար խառնեն իբեւց ջուրերը.
- 4. Եւ երբ զերեզմանները տակն ու վրայ ըլլան.
- 5. Այն ատեն ամէն հոգի պիտի տեսնէ իր չըն և նոր գործածները:
- 6. Ո՛վ մարդ, քեզ ո՛վ կուրացուց չտեսնելու համար քու բարերար Տէրդ.
- 7. Բու Տէրդ որ քեզ ստեղծած է, որ քեզ կատարելագործած և ուղղած է:
- 8. Որ քեզ ձեւաւորած է իր ուզած կերպովը:
- 9. Բայց դուք անոր կրօնքը սուտ կը համարէք.
- 10. Ծշմարիտ, նա ձեր վրայ հսկող պահապաններունի.

- 11. Ընտիր պահապաններ, որոնք կը գրեն ձեր գործերը:
- 12. Անոնք գիտեն ինչ որ դուք կընէք:
- 13. Ծշմարիտ, արդարները հեշտութեանց վայրին մէջ պիտի ըլլան:
- 14. Եւ ճշմարիտ, ըմբոսաները դժոխքին մէջ պիտի ըլլան:
- 15. Դատաստանի օրը ասոնք կրակին մէջ պիտի այրուին:
- 16. Անոնք անկէ չեն կրնար 'սուսափիլ:
- 17. Ի՞նչ բան քեզ պիտի իմացնէ թէ ինչ է դատաստանի օրը.
- 18. Անգամ մըն այ. ի՞նչ բան քեզ պիտի իմացնէ թէ ինչ է դատաստանի օրը:
- 19. Այն օրը հոգի մը ուրիշ հոգիի չպիտի կրնամ բան մը ընել: Այն օրը ամէնը Աստուծոյ պիտի անցնի:



### ՁԳ. ԳԼՈՒԽ

Մէքէական. երեսուն վեց պատգամ


Յանուն Աստուծոյ գթածի եւ ողորմածի

- 1. Վայ, անոնց որոնք պակաս կը չափեն ու կը կշռեն.
- 2. Որոնք գնելու ատեն լման չափ կը պահանջեն.
- 3. Եւ որոնք՝ երբ ուրիշներուն կը չափեն կամ կը կշռեն՝ պակաս կուտան:
- 4. Ձե՞ն գիտեր թէ օր մը պիտի յարուցուին,
- 5. Մեծ օրուան համար:
- 6. Այն օրը մարդիկ պիտի ներկայանան տիեզերքի Տիրոջ առջև:

7. Այս՝ պարտազանցներու ցուցակը Միտհինի մէջն է :
8. Ո՞վ իմացուց քեզ թէ Միտհինը թնչ է :
9. Անիկա գրերով լեցուն գիրք մըն է :
10. Այն օրը վա՛յ անոնց որոնք ձեր հաշմանքը սուտ կը համարեն :
11. Որոնք զատաստանի օրը սուտ կը համարեն :
12. Միտայն օրինազանցը և մեղաւորը կրնան զայն սուտ համարել :
13. Անոնք՝ երբ իրենց կարգացուին մեր պատգամները, կ'ըսեն, «Ասոնք ինչերու առասպելներն են» :
14. Ոչ, Բայց անոնց գէշ գործերը պատեր են անոնց սրտերը :
15. Ազատ լապէս, այն օրը անոնք զատուած պիտի ըլլան վարագուրով մը իրենց Տիրոջ տեսութենէն :
16. Յետոյ անոնք դժօխք պիտի նետուին :
17. Պիտի բուռի անոնց, «ասա այն պատիժը զոր դուք սուտ կը համարէիք» :
18. Ազատ լապէս, արդարներուն ցուցակը Իլլիւսներն մէջն է : (\*)
19. Քեզ ո՞վ պիտի իմացնէ թէ ինչ է Իլլիւսներ :
20. Անիկա գիրքերով լեցուն գիրք մըն է :
21. Որոնք որ Յաւիտենականին կը մօտենան, վըկայ են նոն եղածին :
22. Ճշմարիտ որ արդարները նեշտութեանց վայրին մէջ պիտի ըլլան :
23. Բազմած գանձերու վրայ, նոս նոն պիտի դէտեն :
24. Անոնց զէմքերուն վրայ պիտի տեսնես եր-

(\*) Իլլիւսն ինչպէ՛ս Միտհին, ըստ Դուրանի Բացատրութեան, գիրք մըն է որ մարդոց բորժանքերը բրտած են :

- Ջանկութեան զուարթութիւնը :
25. Անոնց խմել պիտի տան կնքուած գինիներ :
  26. Անոր կ'իջը մուշկէ պիտի ըլլայ անոր մասին ջանալ ուղղուները թող ջանան :
  27. Այն գինին խառնուած է թօանիմի ջուրով :
  28. Անիկա աշրիւր մըն է ուրիշ իրենց պապակը պիտի անցնեն Յաւիտենականին մօտեցողները :
  29. Մեղաւորները կը ծաղրէին հաւատացեալները :
  30. Երբ անոնց մօտէն կացնէին աչքով նշաններ կընէին իրարու :
  31. Եւ երբ իրենց ընտանիքներուն վերադառնալին, կատակելով կը զանաւորին :
  32. Երբ զանոնք տեսնէին, կըսէին, «ասոնք մօտրեալ մարդիկ են» :
  33. Եւ «այն անոնք հակելու չեն զրկուած անոնց վրայ :
  34. Այսօր հաւատացեալները պիտի խնդրան անհաւատներուն վրայ :
  35. Ընկողմացած իրենց աթոռներուն վրայ և հոս հոն գիտելով :
  36. Անհաւատները միթէ իրենց գործերուն համաձայն չպիտի՞ վարձատրուին :



ՁԴ. Գ Լ Ո Ւ Խ

Մէքէական, Իսան հիւնգ պատգամ

Յանուն Աստուծոյ գթածի և ողորմածի

1. Երբ որ երկինքը պատուի,
2. Անիկա ալ իր տիրոջ պիտի հնազանդի և պիտի գործադրէ անոր հրամանները :

3. Երբ որ երկիրը տարածուի բոլորովին,
4. Անիկա դուրս պիտի նետէ ինչ որ կայ ի բնն մէջ, և անապատ պիտի դառնայ.
5. Եւ անիկա պիտի ննազանդի իր Տիրոջ. և պիտի գործադրէ անոր հրամանները:
6. Այն ատեն, ով մարդ, դու որ կը բաղձայիր քու Տէրդ տեսնել, պիտի տեսնես:
7. Որուն որ աջ ձեռքը տրուի գիրքը,
8. Մեղձութեամբ պիտի դատուի:
9. Անիկա ուրախ պիտի վերադառնայ իր ընտանիքին.
10. Իսկ նրուն որ իր գործերուն գիրքը, ետեւէն (կամ ձախէն) տրուի,
11. Անիկա մահը պիտի կանչէ,
12. Կրակին մէջ այրելու ատենը:
13. Աշխարհի վրայ անիկա իր ընտանիքին մէջ ուրախ էր.
14. Կը կարծէր թէ Աստուծոյ առջև բնաւ չպիտի ելլէ:
15. Բայց Աստուած ամենը կը տեսնէր:
16. Կ'երգնում վերջալոյսովը,
17. Կ'երգնում գիշերով և անոր ծածկածներովը,
18. Կ'երգնում լրացած լուսինով,
19. Որ դուք աստիճանէ աստիճան պիտի փոխադրուիք:
20. Ի՞նչու ուրեմն անոնք չեն հաւատար:
21. Երբ Գուրանը անոնց կարգացուի, ի՞նչու չեն երկրպագեր.
22. Իսկ անհաւատները զայն սուտ կը համարեն:
23. Բայց Աստուած գիտէ անոնց ծածկած ատելութիւնը:
24. Դառն տանջանքը սպառնացի՛ր անոնց.
25. Բացի հաւատացեալներէն որոնք բարեգործու-

թիւն կրնեն, վասնզի անոնք կատարեալ վարձա-  
տրութիւն պիտի ստանան:



ՁԵ. Գ Լ Ո Ի Խ


Մէֆֆիական, քան Երկու պատգամ

Յանուն Աստուծոյ գթածի և ողորմածի

1. Կ'երգնում շնորհակցան նշաններովը օժտուած երկիրն օրովը,
2. Կ'երգնում խոստացուած օրովը,
3. Կ'երգնում վկայովը և վկայուածովը.
4. Թող կորսուին խրամին տէրերը (\*).
5. Որ լեցուած է մշտավառ կրակով:
6. Երբ անոնք բոլորը նստած էին շուրջը,
7. Իրենք ալ վկայ ըլլալու համար հաւատացեալ ներուն տուած տանջանքնուն.
8. Տանջեցին զանոնք ձիայն անոր համար որ կը հաւատային հզօր և օրհնեալ Աստուծոյն,
9. Որունն է երկնից և երկրի թագաւորութիւնը, և որ կը տեսնէ ամէն բան:
10. Անոնք որ տանջանքի կենթարկէին երկու սեռէ հաւատացեալները և չեն ապաշխարած, գոնաքի տանջանքը և կրակին պատիժը պիտի կրեն:
11. Իսկ անոնք որ հաւատացած և բարիք գործած ըլլան, վարձատրութիւն պիտի ստանան գրախտներ որոնցմէ ջուրի առուններ կանցնին: Սա անունն երջանկութիւնն մը պիտի ըլլայ:

(\*). Ըստ Աբաբայ պարմաբեան. Եթէն արեւմտեան կրօնով լազարոսը մտնէ ելէր, որ բրիտանականները կրակով լեցան իրամէ մը մէջ կը նետէ ելէր որ կրօնագիր ըլլան

- 12 Քու Տիրոջդ վրէժխնդրութիւնը սոսկալի է:
13. Եւ ստեղծեց Քուրը և էրէն կը վերադարձրնէ քուրը:
14. Եւ ներսդ է ու սիրոյ:
15. Եւ տէրն է փառաւոր զանին:
16. Եւ կընէ ինչ որ կուզէ:
17. Չե՞ս յսած զորագունդերու պատմութիւնը:
- 18 Փարաօնին և Սամուէղիներուն:
19. Բայց անհաւանները կուրանան ամէնը:
20. Աստուած անոնց ետէն է. կը պաշարէ զանոնք:
21. Այս փառաւոր Գուրանը
22. Գրուած է ինձնէ: պահուած տախտակի մը վրայ:



### ՁԶ. Գ Լ Ո Ի Խ

#### Մէֆէական. քան խոր պատգամ

Յանուն Աստուծոյ Գթածի և Ոգործածի

1. Կ'երգնում երկինքով և գիշերուան աստղով:
- 2 Ո՞վ քեզ պիտի սուրբեցնէ թէ ինչ է գիշերուան աստղը:
3. Աստղն է որ յոյս կարձակէ:
4. Ամէն հոգի պահապան մ'ունի հսկող:
5. Մարդը թող խորհի թէ ինչէ ստեղծուած է:
6. Դուրս ցալտած ջուրի կաթիլէ մը:
7. Ելած օղնայարէն և կուրծքի ոսկորէն:
8. Արդարև Աստուած կրնայ զանի յարուցանել:
9. Այն օրը յորում ամէն զազանիք պիտի յայտնուի:
10. Եւ յորում ոչ յոյժ պիտի ըլլայ և ոչ օգնող:

Քուր Աստուծոյ:

11. Կ'երգնում երկինքով որ կը կատարէ իր յեղաշրջումները:

12. Կ'երգնում երկրով որ կը ճեղքուի ստեղծելու քուրը:


13. Արդարև Գուրանը որոշող խօսք է:

14 Պարտապ խօսք չէ քնա:

15. Անոնք խորամանկութիւններն ի գործ կը դնեն:

16. Եւ ես իմիններս ի գործ պիտի դնեմ:

17. Միջոց տուր անհաւաններուն. զանոնք հանաքիստ ձգէ պահ մը:




### ՁԷ. Գ Լ Ո Ի Խ

#### Մէֆէական. քան ինք պատգամ

Յանուն Աստուծոյ Գթածի և Ոգործածի

1. Փառաբանէ՛ քու բարձրեալ Տիրոջ անունը:
2. Որ ստեղծած և կարգադրած է ամէնը:
3. Որ սահմանած է բոլորը և կառաջնորդէ:
4. Որ կը բուսցնէ մարգագետիններու խոտը:
5. Եւ յետոյ զայն չոր խոտի կը վերածէ:
6. Մենք քեզ պիտի սուրբեցնենք Գուրանը կարգալ:
7. Բայցի Աստուծոյ հաճածէն՝ վասնդի նա զիտէ թէ մեծ օրը ինչ կը յայտնուի և ինչ կը ծածկուի:
8. Մենք քեզ մեր զիւրին ճամբան կը մտցնենք:
9. Խրատէ՛, քանզի խրատը օգտակար է:
10. Ով որ երկիւղած է, պիտի մտածէ յայնմ:
11. Չարը միայն անկէ պիտի հեռանայ:
12. Որ այրուելու համար կրակը կը նետուի:
13. Անիկա հոն ոչ կը մեռնի և ոչ կ'ապրի:
14. Երանի՛ անոր որ ինքզինք մաքուր կը պահէ:

- 15. Որ Աստուծոյ անունը կը յիշէ և կազօթէ:
- 16. Բայց դուք կը նախընտրէք աշքարհիս կեանքը:
- 17. Եւ սակայն սպագայ կեանքը լաւագոյն է և տեւական:
- 18 Այս քրոնոսք է հին գիրքերուն մէջ,
- 19. Արքայամբի և Մովսէսի գիրքերուն մէջ:




### ՁԸ. Գ Լ ՈՒ Խ

#### Մէքէական, քան վեց պատգամ

Յանուն Աստուծոյ գթածի և ողորմածի

- 1. Քեզ հասած է ծածկող օրուան պատժութիւնը:
- 2. Այն օրը սմանց երեսները կախ պիտի ըլլան:
- 3. Աշխատած և յոգնած:
- 4. Կիզիչ կրակը կը նեատին:
- 5. Եռացող աղբիւրէն կը խմցնեն անոնց:
- 6. Անոնց կերակուր չկայ փռչէ զատ:
- 7. Որ ոչ կը գիրացնէ և ոչ կը կշտացնէ:
- 8. Այն օրը միւս ղէմքերը տրախ պիտի ըլլան:
- 9. Եւ գոհ իրենց ջանքերէն:
- 10. Անոնք բարձր դրախտի մը մէջ պիտի ըլլան:
- 11. Ուր զէշ խօսք չլսուիր:
- 12. Հոն հոսուն ջուրի ակեր կան:
- 13. Բարձր նստարաններ կան:
- 14. Պատրաստուած գաւաթներ:
- 15. Ծարուած բարձեր:
- 16. Եւ փռուած գորգեր:
- 17. Անոնք չեն նայած ուղտին, թէ ինչպէս ստեղծուած է:

- 18. Եւ երկինքին, թէ ինչպէս բարձրացած է:
- 19. Եւ շեռներուն, թէ ինչպէս հաստատուած են:
- 20. Եւ երկրին, թէ ինչպէս տարածուած է:
- 21. Խրատէ՛ մարդիկը. վասնզի դու միայն խըքատող ես:
- 22. Գու անոնց վրայ բացարձակ իշխանութիւն չունիս:
- 23 Բայց ով որ երես դարձնէ ու չհաւատայ:
- 24. Աստուած պիտի պատժէ զանի ծանր պատժով:
- 25. Վասնզի անոնք մեզ պիտի վերադառնան:
- 26. Եւ յետոյ հաշիւներն մեզ պիտի տան:



### ՁԹ. Գ Լ ՈՒ Խ

#### Մէքէական. Երեսուն պատգամ

Յանուն Աստուծոյ գթածի և ողորմածի

- 1. Կերդնում արշալոյսովը և տասը օրերովը:
- 2. Կերդնում զոյգով և պարզով:
- 3. Կերդնում իր ընթացքին հետևող գիշերով:
- 4. Միթէ ատոր մէջ երդում չկա՞յ խելքի տէր մարդու մը համար:
- 5. Գու չե՞ս տեսներ թէ Տէրդ ինչ ըրաւ Ատի ժողովուրդին:
- 6. Որ մեծ սիւներ ունեցող Իրամի մէջ կը բընակէր:
- 7. Որուն նմանը չկար ոչ մէկ երկրի մէջ:
- 8. Նաև ի՞նչ ըրաւ Սամուտցիներուն, որոնք հովիտին մէջ ժայռերէ տուններ փորած էին:
- 9. Նոյնպէս ալ գամերու պատիժը հնարող Փարաւունին:

10. Մրոնք բոլորը կ'ըմբոստանային երկրի վրայ
11. Եւ չարիք կը տարածէին.
12. Այդ պատճառաւ այ Աստուած դանոնք ենթարկեց պատժոյ խարազանին.
13. Վասնզի քու Տէրդ միշտ ուշադիր է:
14. Իսկ երբ Աստուած՝ մարդը փորձելու համար, անոր բարիքներ կը պարզուէ.
15. Մարդը կըսէ. «Տէրս զիս յարգեց».
16. Բայց երբ Աստուած՝ զանի փորձելու համար, իր պարզեանքը կը պակսեցնէ անիկ.
17. Մարդը կաշաղակէ. «Տէրը զիս արձա՛րարձեց»:
18. Բնաւ. բայց դուք որքին անփոյթ գտնուեցաք.
19. Աղքատը կերակրելու համար չէք մրցակցիր:
20. Ուրիշներու ժառանգութիւնը ազանութեամբ կը յարէք:
21. Եւ հարստութիւնը կը սիրէք անուն սիրով:
22. Այո՛, երբ երկիրը փշրուի ու փոշիանայ:
23. Երբ Տէրդ գայ. և հրեշտակները շարքեր կազմեն,
24. Երբ դժոխքը բերուի. ո՛հ այն ատեն մարդը պիտի մտածէ. բայց ինչ օգուտ ունի այն ատեն մտածելը:
25. Անիկա պիտի ազազակէ. «Երանի՛ թէ կեանքիս տեղութեան միջոցին բարիք ըրած ըլլայի»: Այն օրը մէկը չէ կարող զանի պատժել ինչպէ՛ս Աստուած:
26. Այ մէկը կարող է անոր շղթայովը կապել:
27. Ո՛վ հասարակեալէ ազանութեամբ հոգի,
28. Վերադարձի՛ր Աստուծոյ մօտ. գո՛հ և հաճելի Աստուծոյ.
29. Մտի՛ր իմ ծառաներու կարգը,
30. Մտի՛ր իմ դրախտիս մէջ:

### Ղ. Գ Լ Ո Ւ Խ


#### ՄԷԼԷԱԿԱՆ ԲՈՒՆ ԱՅՏԱՊԱՄ

Յանուն Աստուծոյ զթաճի ևւ ողորմածի

1. Կ'երկնում այս գաւառովը.
2. Այս երկրովը ուր գու կը բնակիս.
3. Կ'երկնում ծնողքով ևւ զաւակովը.
4. Ստեղծած ենք մարդը տառապանքի մէջ:
5. Միթէ կը կարծէ՛ թէ անկէ զօրաւոր մէկը չկայ:
6. Նա կըսէ. «Ես մեծ գումարներ մտղած եմ».
7. Կը կարծէ թէ մէկը զանի չէ՞ տեսած:
8. Չէ՞ որ մենք անոր տուած ենք երկու աչք.
9. Լեզու մը ևւ երկու շրթունք:
10. Չէ՞ որ մենք զանի դրած ենք երկու մեծ ճամբու վրայ (բարեկէ՛ս եւ շարեկէ՛ս):
11. Եւ սակայն նա չէ ուզած զառիվեր երթալ:
12. Ի՞նչ բան քեզ կը սովորեցնէ թէ ինչ է զառիվերը:
13. Այն է գերինները ազատել.
14. Կերակրել սովի օրերուն
15. Որքը որ մեզ ազգական է,
16. Կամ անանի աղքատը:
17. Եւ այն ատեն անիկա կըլլայ հաւատացեալներէն ևւ զիրար համբերութեան ու զթասարտութեան յորգորողներէն:
18. Այս բոլորը իբրև զարհուրանքը աջակողմեան մարդիկները պիտի ըլլան.
19. Իսկ որոնք որ մեր նշաններուն չեն հաւտարար:

ձախակողմեան մօրդիկը պիտի ըլլան:

20. Ասոնց վրայ կրակը պիտի պատէ:



ՂԱ. Գ Լ Ո Ւ Խ (Արեւը)

Մէֆֆէական. ասան հինգ պատգամ

Յանուն Աստուծոյ գթածի եւ ողորմածի

1. Կ'երգնում արեգակով եւ անոր լոյսով:
2. Լուսինովը՝ երբ սա անոր կը հետեւի,
3. Յերեկովը՝ երբ զայն կը փայլեցնէ իր լոյսով
4. Գրչերովը՝ երբ կը ծածկուի,
5. Երկինքովը եւ անով որ զայն կառուցած է,
6. Երկիրովը եւ անով որ զայն տարածած է.
7. Հողիովը՝ եւ անով որ զայն կազմած է,
8. Եւ որ անոր ներշնչած է իր շարութիւնը ու իր բարեպաշտութիւնը.
9. Ով որ զայն մաքրէ, երջանիկ պիտի ըլլայ:
10. Իսկ ով որ զայն ոչնչացնէ, պիտի կորսուի:
11. Սամուտ իր ըմբոստ մաքովը սուտ համարեց Սալէին՝ դաշտը:
12. Երբ ամէնաչարերը վազեցին ուղիւ սպաննելու:
13. Այն ատեն Աստուծոյ զրկած Սալիհը անող ըսաւ, «սա Աստուծոյ էգ ուղտն է. ձգեցէք խմելու»:
14. Անոնք զանի խարերայ համարեցին եւ ուզալը սպաննեցին: Տէրը զանոնք պատժեց իրենց մեղքին համար, եւ իր պատիժը տարածեց բոլորին վրայ.
15. Եւ անոնց հեաեւանքէն չվախնար:



ՂԲ. Գ Լ Ո Ւ Խ

Մէֆֆէական. ասան մէկ պատգամ

Յանուն Աստուծոյ գթածի եւ ողորմածի

1. Կ'երգնում գիշերով, երբ կը տարածէ իր քողը.
2. Կ'երգնում ցերեկով, երբ կը փայլի իր լոյսովը.
3. Եւ կ'երգնում անով որ օտեղծած է արուն եւ էգը.
4. Չեր ջանքերը նոր տարբերութիւններ ունին.
5. Բայց սվ որ կուսայ եւ կը վախնայ
6. Ու կը հաւատայ հաստատապէս յայտնուելան գեղեցիկ Խուսէն.
7. Անոր պիտի զիտացնենք երջանկութեան ճամբան:
8. Իսկ ով որ աղան է իր ինչքերու մասին եւ կ'արհամարհէ ազնւ Քան,
9. Որ ստութիւն մը կը նկատէ յայտնուելան գեղեցիկ Խուսէն.
10. Անոր տաժանեկի պիտի ընենք այն ճամբան որ հակառակութեան կառաջնորդէ:
11. Իր հարստութիւնը իրեն անօգուտ պիտի ըզլայ երբ դժոխքին մէջ իյնայ կորսուի:
12. Մեր պատքն է առաջնորդել ճաշքիլը:
13. Մերն է հանդերձեալի եւ այս աշխարհի կեանքը
14. Ես սպառնացայ ձեզ կիզիչ կրակով:
15. Անով պիտի այրի միայն թշուառախարը.
16. Որ սուտ կը համարէ յայտնութիւնը ու երես կը դարձնէ:
17. Անկէ հետո պիտի ըլլայ երկիւղած մարդը.
18. Որ իր ստացուածքը կուտայ մարբուհու.
19. Եւ ոչ թէ իր գործած բարիքին փոխարէնը ստանալու համար.

20. Այլ միայն բարձրեալ Աստուծոյ նայուածքին արժանանալու բաղձանքով՝

21. Եւ ապահովապէս դո՛հացու՛մ պիտի ստանայք:




### ՂԳ. Գ Լ Ո Ւ Խ

#### Մէֆֆէական. քնսն մէկ պատգամ

Յանուն Աստուծոյ Գթածի եւ Ողորմածի

1. Կ'երզնում առաւօտովը,
2. Կ'երզնում գիշերովը երբ կը մթնէ,
3. Դու Տէրդ քեզ չէ մոռցած եւ չէ ատած:
4. Հանդերձեալ կեանքը լաւագոյն է քեզ ներկայէն:
5. Աստուած քեզ բարիք պիտի պարգևէ եւ դու զո՛ւ զո՛ւ պիտի մնաս:
6. Չէ՞ որ դու որք էիր, եւ նա պատասպարեց քեզ:
7. Նա քեզ սուրբեալ գտաւ, եւ առաջնորդեց,
8. Նա քեզ աղքատ գտաւ, եւ հարստացուց:
9. Դու ալ որքը մի՛ անարգեր:
10. Մուրացիկը պարսպ էր մի՛ գարձներ:
11. Մանաւանդ պատմէ Տիրոջդ բարիքը:



### ՂԴ. Գ Լ Ո Ւ Խ


#### Մէֆֆէական. ուրբ պատգամ

Յանուն Աստուծոյ գթածի եւ ողորմածի

1. Չէ՞ որ մենք բացած ենք քու սիրտդ (\*)

(\*) Այս 1, 2, 3 տուները կանխորէն Մոսկովիայի կաթողիկոսին պարտաճ այն առասպելը, թէ երկու հրեշտակներ էրանայ Մոսկովիային սիրտը ճեղքած ու լաւացած են, եւ անկէ հետո՛ք են սե կեզր մը, որով էբր թէ Մոսկովիայ նախ նախան ճեղքեն աղաթէր է:

2. Եւ վերցուցած ենք բեռը,
3. Որ քու ուսերդ կը ճնշէր:
4. Չէ՞ որ մենք բարձրացուցինք քու անունդ:
5. Բայց դժուարութեան հետ հեշտութիւն ալ կայ:
6. Արդարեւ, դժուարութեան հետ հեշտութիւն ալ կայ:
7. Երբ դու գործդ լմնցնես աշխատէ՛ (աղօթէ՛),
8. Եւ եռանդով վա՛վաքէ՛ Աստուծոյ:




### ՂԵ. Գ Լ Ո Ւ Խ

#### Մէֆֆէական. ուրբ պատգամ

Յանուն Աստուծոյ գթածի եւ ողորմածի

1. Կ'երզնում թղենիով եւ ձիթենիով,
2. Կ'երզնում Սինայ լեռովը,
3. Կ'երզնում այս նուիրական երկրովը,
4. Թէ մարդը ստեղծած ենք ամէնագեղեցիկ կազմով:
5. Յետոյ պիտի իջեցնենք զայն ամէնաստորին սատիճանին,
6. Բայց՛ անոնցմէ որոնք կը հաւատան եւ բարիք կը գործեն. վասնզի ասոնք կատարեալ վարձատրութիւն պիտի ստանան:
7. Ասկէ յետոյ ի՞նչ բան քեզ կրնայ սուտ համարել տալ ճշմարիտ կրօնքը:
8. Միթէ Աստուած զատաւորներուն ամէնալաւը չէ՞:



ՂԶ. Գ Լ Ո Ւ Խ

Մէֆֆէական. սասն ինը պատգամ

Յանուն Աստուծոյ գթածի և ողորմածի

1. Կարգա՛ք քու Տիրոջ անունով որ ստեղծած է .
2. Որ ստեղծած է մարդը թանձրացած արիւնէ ,
3. Կարգա՛ք , վասնզի քու Տէրդ խիստ վեհանձն է :
4. Անիկա սովրեցուցած է գրիչ գործածել .
5. Նա սովրեցուցած է մարդուն ինչ որ չէր գիտեր .
6. Այո՛ , բայց մարդը ըմբոստացաւ .
7. Ինչպիսիք հարուստ տեսածին պէս :
8. Ամէնը պարտի Աստուծոյ վերադառնալ :
9. Ինչ կը կարծես անոր մասին որ կարգիլէ
10. Ծառան Աստուծոյ ազօթելէ :
11. Քեզ կը թուի , թէ անիկա ուղիղ ճամբուն կը  
հետեւէր
12. Եւ երկիւղածութի՞ւն կը պատուիրէր .
13. Քեզ կը թո՞ւի , թէ եթէ մարդը սուտ համարէ  
ճշմարտութիւնը և մերժէ .
14. Ա իթէ չգիտե՞ր որ Աստուած կը աննէ :
15. Այո՛ , և եթէ շղագրի , մենք պրտի բունք  
անոր ճակատի մազէն
16. Իր ստախօս և մեղաւոր ճակտէն :
17. Թող հաւաքէ իր մտղովը
18. Եւ մենք պիտի հաւաքենք մեր պահագանները :
19. Մի հնազանդի՛ր անոր , այլ պաշտէ՛ զԱստու-  
ած և ջանա՛ որ անոր մօտենաս :



ՂԷ. Գ Լ Ո Ւ Խ

Մէֆֆէական. հինգ պատգամ

Յանուն Աստուծոյ գթածի և ողորմածի

1. Մենք անոր իջեցուցած ենք Գուրանը Գատրի  
գիշերը (\*) :
2. Ո՞վ պիտի իմացնէ քեզ թէ ինչ է Գատրի գի-  
շերը :
3. Գատրի գիշերը հօգար ամրօէ աւելի կարժէ :
4. Այն գիշերը հրեշտակները և հօգին աշխարհ  
կիջնեն Աստուծոյ հրամանովը , կարգադրելու համար  
բոլոր գործերը :
5. Այդ գիշերը խաղաղութիւն է մինչև արշալոյս :



ՂԸ. Գ Լ Ո Ւ Խ

Մէֆֆէական. ութը պատգամ

Յանուն Աստուծոյ գթածի և ողորմածի

1. Գիրք ունեցողներէն անհաւատները , նոյնպէս  
այ կուպաշտները չէին պառակտած մինչև որ յայտ-  
նութեան շչանք երևցաւ .
2. Աստուծոյ կողմէ գրկուած մը գալով , անոնց  
կը կարգայ էջեր ճշմարիտ Գրութիւններէն :
3. Անոնք որ գիրք ստացած են , միայն այն ատեն

(\*) «Գուր Կիճեհեհի» (որ Րամազանի 23-24 գիշերը ըլ-  
լալ կը կարժուի) էբր թէ Գուրանը միջոց յայտնուած ըլլալ  
Մահաճեհեհի : Այդ գիշերը կը լծուին եղբր ուրեղբրէ  
գործերը միջոց պարսոյն համար :

բաժան բաժան եղան երբ յայտնութիւնը անոնց յայտնուեցաւ :

4. Անոնց պատուիրուեցաւ միայն անկեղծ կրօնքով պաշտել զԱստուած, անձնուէր ըլլալ Աստուծոյ, աղօթք ընել և ողորմութիւն տալ : Անա այս է ճշմարիտ կրօնքը :

5. Գիրք ընդունողներէն անհաւատները և կապաշատները դժոխքի կրակին մէջ պիտի ըլլան յաւիտեան : Անոնք արարածներու ամէնաչարերն են :

6. Որոնք որ կը հաւատան և բարիք կը գործեն լաւագոյններն են յոյս արարածներուն :

7. Աստուծոյ քով անոնց ստանալիք վարձատրութիւնն Եդէմի դրախտներն են ջուրի առուներով ուսողուած, անոնք հոն պիտի մնան յաւիտեան :

8. Աստուած գոյ պիտի ըլլայ անոնցմէ, և տնոնք ալ Աստուծմէ : Անա թէ ինչ վերապահուած է երկիւղածին :



### ՂԹ. ԳԼՈՒԽ (Երկրաւարժը)

#### Մէքէական. ուրք պատգամ

Յանուն Աստուծոյ գթածի և ողորմածի

1. Երբ երկիրը շարժի իրեն յատուկ շարժովը,
2. Եւ երբ էրկիրը իր մէջէն դուրս տայ իր բեւը, (\*)
3. Մարդը պիտի հարցնէ, թէ ի՞նչ պատահեցաւ :
4. Այն ատեն նա պիտի պատմէ իր դէպքերը :
5. Տիրոջդ անոր ընելիք յայտնութեան համաձայն :
6. Այն օրը մարդիկ կ'ելլեն խումբ խումբ որ գիտեն իրենց գործերը :
7. Ով որ հիւլէի մը չափ բարիք քրած է պիտի տեսնէ գայն :

(\*) Մեծերն յարութիւնը կ'ունենան

8. Եւ ով որ հիւլէի մը չափ չարիք գործած է այն ալ պիտի տեսնէ :




### Ճ. ԳԼՈՒԽ

#### Մէքէական. սառն մէկ պատգամ

Յանուն Աստուծոյ գթածի և ողորմածի

1. Կ'երգնում հեալով վաղողներով,
2. Կ'երգնում էրենց հարուածներէն կայծեր ցայտեցնողներով,
3. Կ'երգնում առաւօտուն թշնամիներուն յարձակողներով,
4. Որոնք փոշի կը յարուցանեն իրենց քայլերէն,
5. Որոնք ճամբայ կը բանան թշնամի գունդերուն մէջէն.
6. Երաւի մարդս ապերախտ է իր Տիրոջ հանդէպ :
7. Արդարեւ ինքն ալ կը վկայէ ասոր :
8. Նա չափազանց կը սիրէ այս աշխարհի ինչքերը :
9. Միթէ չգիտնէ որ երբ գերեզմաններու մէջ եղածները տակնուվրայ ըլլան,
10. Սրտերու գաղտնիքները երբ յայտնուին,
11. Աստուած ալ գիտէ այն ատեն իր գործերը :



### ՃԱ. ԳԼՈՒԽ


#### Մէքէական. քառասուն վեց պատգամ

Յանուն Աստուծոյ գթածի և ողորմածի

1. Հարուածը Ի՞նչ է հարուածը (\*):

(\*) Վերջին դասարանի օրը :

2. Ո՞վ պէտքի սովորեցնէ քեզ, թէ ի՞նչ է նարուածը.
3. Այն որը մարդիկ թիթեռնիկներու պէս ցրուած պիտի ըլլան.
4. Այն որը լեռները պիտի թռչին բուրդի գունաւոր գնդակներու նման:
5. Որու որ գործերը ծանր կշռեն կշիռքին մէջ, անիկա հաճելի կեանք մը պիտի ունենայ:
6. Իսկ որու որ գործերը թեթեւ ըլլան, անոր բընակարանը դժոխքը (Հավիշէ) պիտի ըլլայ:
7. Քեզ ո՞վ կրնայ իմացնել թէ ի՞նչ է դժոխքը:
8. Այն կրակ մըն է բոցավառ.




### ՃԲ Գ Լ Ո Ւ Խ

#### Մէքէական ուրբ պատգամ

Յանուն Աստուծոյ գթածի և ողորմածի

1. Ազահութիւնը ձեզ կ'զբաղեցնէ.
2. Մինչև այն վայրկեանը որ գերեզման իջնէք.
3. Դուք յետոյ պիտի իմանաք.
4. Անգամ մըն ալ, յետոյ կ'իմանաք թէ ի՞նչ է այն հոն:
5. Ահ եթէ զայն գիտնայիք ճիշդ գիտութեամբ.
6. Դուք պիտի տեսնէք դժոխքի կրակը.
7. Ձայն պիտի տեսնէք կասարեայ ճշդութեամբ.
8. Այն ատեն ձեզ պիտի հարցնեն այն աշխարհէ գուարճութեանց մասին:



### ՃԳ Գ Ի Ո Ւ Խ

#### Մէքէական երեք պատգամ

Յանուն Աստուծոյ գթածի և ողորմածի.

1. Կերզնում կէսօրէ վերջի ժամովը.
2. Թէ մարդը ի վիստ իրեն կաշխատի
3. Բացի անոնցմէ, որոնք կը հաւատան և բարիք կը գործեն և իրարու կը յանձնարարեն ճշմարտութիւն և համբերութիւն:

### ՃԴ Գ Լ Ո Ւ Խ

#### Մէքէական ինը պատգամ

Յանուն Աստուծոյ գթածի և ողորմածի

1. Վա՛յ ամէն մէկ բամբասող չարախօսի.
2. Որ հարստութիւն կը դիզէ և կը պահէ ապագային համար.
3. Անիկա կը կարծէ թէ իր գանձերը զինքը յաւիտենապէս կապրեցնեն:
4. Երբէ՛ք. այլ անիկա Հօթամայի մէջ պիտի նետուի (\*):
5. Ո՞վ քեզ պիտի սովորեցնէ թէ ի՞նչ է Հօթաման:
6. Աստուծոյ կրակն է այն, վառուած կրակը.
7. Որ սրտերու վրայ կը յարձակի.
8. Ան կը պաշարէ զայնս կամարի պէս.
9. Որ կը հանգչէ երկար սիւններու վրայ:

(\* ) Դժոխքին մասերէն մին է Հօթաման. որ մասնաւոր քեզ մըն է. որ ներս-մտերը կը գրուին.



ՃԵ՛ ԳԼՈՒԽ

Մէֆէական. ինը պատգամ

Յանուն Աստուծոյ գթածի և ողորմածի

1. Գու չտեսա՞ր թէ Տէրը ինչպէս վարուեցաւ Փիղի տէրերուն հետ.
2. Նա անոնց պարտաւորական նարքները չօղնչացօւց.
3. Անոնց վրայ չղրկե՞ց ապա պիլ թռչունները,
4. Որոնք երկինքէն պիտակուած քարեր կը նետէին անոնց վրայ:
5. Եւ այդ կերպով զանոնք որդերէ կերուած տերեւներու նման րբաւ:




ՃԶ ԳԼՈՒԽ

Մէֆէական. չորս պատգամ

Յանուն Աստուծոյ գթածի և ողորմածի

1. Գօրէյցիներուն միութեանը համար,
2. Անոնց միութեանը կարաւաններ զրկելու համար ամառ ու ձմեռ:
3. Անոնք կը ծառայեն այս տաճարի Աստուծոյն. որ զանոնք կերակրեց և պաշտպանեց սովէն.
4. Եւ որ զանոնք ազատած է երկիւղէ:



ՃԷ՛ ԳԼՈՒԽ

Մէֆէական. եօթը պատգամ

Յանուն Աստուծոյ գթածի և ողորմածի

1. Ի՞նչ կը խորհիս անոր մասին որ սուտ կը համարէ այս կրօնքը:
2. Սա նա է որ կը մերժէ որբը,
3. Որ չթեւաղրեր ուրիշները աղքատը հերակրելու:
4. Վա՛յ անոնց որ ազօթք կընեն,
5. Եւ անհողութեամբ կընեն.
6. Որոնք ազօթք կընեն ի ցոյցս.
7. Եւ կը մնրժեն առանց փոխարինութեան ողորմութիւն ապ կարօտալիներէն:



ՃԸ՛ ԳԼՈՒԽ

Մէֆէական երեք պատգամ

Յանուն Աստուծոյ գթածի և ողորմածի

1. Մենք քեզ տուինք Գօլօտէրը (\*):
2. Ազօթքը Տիրոջը սուղէ՛ և զոհեր կտրէ անոր:
3. Ով որ քեզ կ'ատէ, պիտի կորսուի առանց հեաք մը ձգելու:




(\*) Գօլօտէր անունն է զբաւերելու մեղքի հետ մը կամ աստուծոյ հետ մը:

ձԹ. Գ Լ Ո Ւ Խ (Աճհաւասները)

Մէքէական վեց պատգամ

Յանուն Աստուծոյ գթածի և ողորմածի

1. Ըսէ՛ «ո՛վ անհաւատներ,
2. «Ես չպիտի պաշտեմ ինչ որ կը պաշտէք դուք» :
3. «Դուք չպիտի պաշտէք ինչ որ ես կը պաշտեմ
4. «Ոչ ալ ես կը պաշտեմ ինչ որ դուք պաշտէք :
5. «Դուք ալ չէք պաշտեր ինչ որ ես պաշտեմ :
6. Դուք ձեր կրօնքը ունիք, և ես իմ կրօնքս ։»



ձԺ. Գ Լ Ո Ւ Խ

Մէքէական երեք պատգամ

Յանուն Աստուծոյ գթածի և ողորմածի

1. Երբ Աստուծոյ օգնութիւնը և յաղթութիւնը մեզ հասնին,
2. Եւ տեսնես որ մարդիկ խումբ խումբ կը մըտնեն Աստուծոյ կրօնքին մէջ,
3. Այն ատեն փառաբանէ՛ քու Տէրդ և ներողութիւնը խնդրէ. վասնզի նա կը սիրէ ներել :



ձԺԱ. Գ Լ Ո Ւ Խ


Մէքէական հինգ պատգամ

Յանուն Աստուծոյ գթածի և ողորմածի

1. Թող կորսուի՛ն Ապու-Լահապի երկու ձեռքերը

և կորսուի ինքն ալ (\*)

2. Անոր հարստութիւնները և գործերը անոր ոչ մէկ օգուտ պիտի ընեն :
3. Նա պիտի այրի բոցավառ կրակին մէջ,
4. Անոր կիներն ալ փայտ թող կրէ անոր :
5. Անոր վիզին կապուած պիտի ըլլայ արմաւինիի թելերէ չուան մը :




ձԺԲ. Գ Լ Ո Ւ Խ

Մէքէական չորս պատգամ

Յանուն Աստուծոյ գթածի և ողորմածի

1. Ըսէ՛. «Աստուած մի է» :
2. «Աստուծոյ է որ բոլոր էակները կը գիմեն իւրենց պէտքերուն առթիւ,
3. «Նա ոչ ծնած է և ոչ ծնունդ ունեցած է.
4. «Իրեն հաւասար մէկը չէ եղած» :



ձԺԳ. Գ Լ Ո Ւ Խ

Մէքէական հինգ պատգամ

Յանուն Աստուծոյ գթածի և ողորմածի

1. Ըսէ. «Ես ապաստան կը փնտռեմ արչալոյսի Տիրոջ քով,
2. «Ընդդէմ չարութեան այն էակներուն զորս նա ստեղծած է,

(\*) Ապու-Լահապ Մահաբէտի +ե-ին է և միտքամոյն միտքամուն ընտանիքէն մին էր :

- 3. «Ընդ դէմ մութ գիշերուան չարին երբ որ հասնի»
- 4. Ընդ դէմ չարութեան անոնց որոնք հանգոյցներու վրայ կը փշին (\*):
- 5. Եւ ընդ դէմ նախանձողի չարքքին որ մեզ նախանձ կը բերէ:




### ՃԺԴ Գ Լ Ո Ւ Խ

#### Մեկեական վեց պատգամ

Յանուն Աստուծոյ գիթածի և ոգորմածի

- 1. Ըսէ՛, «Ապաստան կը փնտռեմ մարդոց Տիրոջը»
- 2. «Մարդոց թագաւորին քով»
- 3. «Մարդոց Աստուծոյն քով»
- 4. «Ընդ դէմ չարութեան անոր որ գէշ մաքեր կը թելադրէ և կը պահուի»
- 5. «Եւ որ մարդոց սրտերուն չարը կը թելադրէ»
- 6. «Ընդ դէմ դեկորուն և ընդ դէմ մարդոց» (\*\*)



(\*) Մեկեական վեց պատգամն ինչ կարծես թէ վերջինս (պիտիւնի եւ համայնի) մասին կը խօսի հոս: Ըստ անոնց, Մոհամմէդի ալ պիտիւն ըրած էր Հրեայ ղը. որ դերձանի ղը լրաց 11 հանգոյց ընելով հորը կտրած էր. Գաբրիէլ յայտնեց Մոհամմէդին թէ՛ կտրարդութեան գաղտնիքը եւ թէ վերջինս երկու գլխիւնը, շրտ կտրարդ ղէյ ղէկ հանգոյց կը լրածուի եղէր:

(\*\*) Այսինքն ապաստան կը փնտռեմ Աստուծոյ քով. զեւապահովելու համար շար մարդերու եւ դեւերու դէմ:

### ՊԱՏԿԵՐ ՆԻՒԹՈՑ



Հայկական (Ա. Բ. Գ.) ով ցոյց կուտանք գլուխներու քիւերը. եւ միջազգային բուսանցաններով (1. 2. 3.) պատգամներու կամ տուներու քիւերը

#### Ա.

Ա.ՀԱՐՕՆ. Մովսէսի եղբայրը. Բ. 249: Գ. 461: Զ. 84: Է. 449-138: Ժ. 76: ԺԹ. 29: Ի. 31-73, 92: ԻԳ. 47: ԻԵ. 37: ԻԶ. 12: ԻԸ. 34: ԼԵ. 414:

ԱԲՐԱՀԱՄ, Բ. 12), 127-134: Գ. 30: Դ. 57, 164: Զ. 162: Թ. 71: ԺԱ. 72: ԺԵ. 51: ԺԶ. 121: ԻԹ. 45, 23 և. և. ԼԸ. 45: ԽԳ. 25: ԾԳ. 33: ԾԷ. 26: Կ. 4: ԶԷ. 49:

— Իմամ կամ բանաստեղծութիւններու Բ. 448, 449:

— Բարեկամ Աստուծոյ, Գ. 125:

— Իր հայրը, իր յերը. Թ. 145: ԺԹ. 42, 43: ԺԳ. 38, 40, 41:

— Կոտորելու իւր քրտի, Զ. 76, 83: ԻԱ. 52, 59: ԼԵ. 81 և. և. ԻԶ. 69 և. և. ԻԱ. 68:

— Մեծիկ Ս. Գրուի իւր կոտորուածի, ԻԲ. 27, 43:

— Պատրաստ պահելու իր սրտին. ԼԵ. 401 և. և:

— Հրեշտակներու այսք ինքնուրուի ԺԱ. 72-74:

ԱՏ. Կամ Աստուծոյ, Արարիչի խորհրդարար ընկալած Աստուծոյ բարեկամութիւնը. Է. 63: Թ. 71: ԺԱ. 52: և. և.

ԱԳԱՄ. Նախահայր մարդկային յերին. Բ. 28-35: Գ. 30-52: Ե. 30: ԺԷ. 63, 72: ԺԹ. 59: Ի. 114-120

— Իր զորքը. Է. 48:

— Կը պաշտուի հրեշտակներին. ԺԸ. 48:

ԱՀՄԷՏ. ԿԱ. 6:

ԱԻՇԷ. Մոհամմէդին ինչ շրտարդութիւն. ԻԳ. 10. 41:

ԱղէֆՍԱՆԴՐ ՄԵՐ, ՏԵՆ ԶՆԱԳՐՆԵՆ. ԺԸ. 82 և 5:  
 ԱԼՅՕՐԳԱՆ, ԳՆԱԳՐՆԵՆ ՏԵՆ ԶՆԱԳՐ, ԻԲ. 4:  
 ԱՐԳԻԼԵԱԼ ԿԵՐԱԿՈՒՐ, Զ. 145, 148: ԺԶ. 146: Բ.  
 168: Ե. 1. 4:  
 ԱՄԷՆ, Ա. 7:  
 ԱՐԱԲՆԵՐԸ, Բ. 137: Թ. 121: ԻԸ. 46:  
 — Պարտաւորի պարտաւոր. Թ. 82: ԽԸ. 11: ԽԹ. 40:  
 — Կարողութիւն. ԽԳ. 30:  
 ԱԶԻԱ Փարսիայի կիսը. ԿԶ. 11:  
 ԱՍՏԳԵՐԸ, Ասորի պարտաւոր. ԽԱ. 37:  
 ԱԳԱՀՆԵՐԸ, անոնց պարտաւոր. Թ. 34. 35: ԾԷ. 24:  
 Դ. 40, 41.  
 ԱԳԱՀՈՒԹԻՒՆԸ Գարապարտաւոր. ԽԷ. 40: ԾԹ. 9:  
 ԱԶԱՐ Աբրահամի հայրը. Զ. 74: Կ. 4:  
 ԱԻԱԶԱԿՈՒԹԻՒՆ, Ե. 37:  
 ԱԻԱՐ, Ը. 1. 42: ԽԸ. 18, 19: ԾԹ. 7:  
 ԱՍՏՈՒԱԾ, Աստի զինուորի կը իւր Միւս Ասորիայի քա-  
 ռութեան, Կարողութեան, Գարտի Լայնի մասին:  
 — Զուտի չափ. Բ. 110: Զ. 100, 101: ԺԹ. 36.  
 91-93: ԻԱ. 26: ԼԷ. 149: ԼԹ. 6: ԶԲ. 3:  
 — Ինչ կը մտաբերեն չարք. ԺԳ. 30: ԿԱ. 5:  
 — Կարգի որ մարտիկ զինուոր պարտաւոր. Բ. 254: Զ. 122:  
 Է. 178:  
 — Ինչնէ սահման շահաւորութեանը, Զարապարտութեանը  
 մարտիկ զինուոր. ԽԳ. 31:  
 — Բարեկէ Ասորիայի կարողութեան, Կ. 81:  
 ՂԱ. 8:  
 ԱՇԱԿԵՐՏԻ Յիսուսի ԾԷ. 27:  
 ԱՄՈՒՍՆԱԼՈՒԾՈՒԹԻՒՆ, Դ. 24: ԼԳ. 48: ԾԸ. 4:  
 ԿԵ. 1, 2, 6: Բ. 226-233:  
 ԱՍՈՒՊՆԵՐԸ Ինչ Էն. ԺԵ. 16, 17: ԼԷ. 40: ԿԷ. 5:  
 ԶԲ. 8:

ԱԻԵՏՍՐԱՆԸ, Կ. 2. 43, 58: Ե. 5), 70, 140: Է.  
 156: Թ. 112: ԽԸ. 29: ԾԷ. 27:  
 ԱՂԶԻԿ շահաւորի Զինուորի Էքս Կարողութեան. ԺԶ. 59-  
 64: ԽԳ. 16:  
 ԱՆՀԱԻԱՏԵՐԸ, Բ. 165: Զ. 19, 29, 409-111:  
 ԶԴ. 40: ԾԳ. 29:  
 — Ինչպէս Կարողութեան է անոնց հետ. Գ. 144, 145, 85,  
 187: Ը. 4): Թ. 5. 6: ԽԷ. 4:  
 — Կարողութեան ինչպէս Կարողութեան, ԻԲ. 15:  
 ԱՄՈՒՍՆԱԼՈՒԹԻՒՆ, ԼԳ. 50: Ա. 120: Ե. 7: Դ. 26-  
 30: Այլապէս մտաւորութեանը ԻԳ. 33:  
 ԱՄԻՍ Նորմալ, Բ. 214: Թ. 5. 36:  
 ԱՂՔԱՏԵՐԸ, Բ. 27: ԺԷ. 28: ԻԴ. 32:  
 ԱՂՕԹԸ, Բ. 109 136-140. 239: Դ. 46: Ե. 8:  
 Ե. 204: ԺԱ. 146: ԺԷ. 80, 81, 100: ԻԹ.  
 44: Ծ. 39:  
 — Պարտաւորի զինուոր, Դ. 102-104:  
 ԱԶԳԱԿԱՆԱՅ Կարողութեան պարտաւորութեան. ԺԷ. 28:  
 ԱՐՁԱՆՆԵՐ Լ Կարողութեան պարտաւորութեան Ե. 92:  
 ԱՆՁՆԱՍՊԱՆՈՒԹԻՒՆ Կարողութեան. Դ. 33:  
 ԱԻԵԼՈՐԴԱՊԱՇՏՈՒԹԻՒՆ, Բ. 185:  
 ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ Կարողութեան. Թ. 48:

Բ.

ԲԱԽՏԱԽԱՂ, Բ. 216: Ե. 92, 93:  
 ԲԱՐՈՅԱԿԱՆ (պատկերներ), Բ. 77. 147-150. 263-  
 267: ԻԳ. 98: ԼԱ. 13, 14: ԽԱ. 34, ԽԲ. 37:  
 ԽԶ. 14-16: ԽԹ. 10-13: ԾԸ. 40:  
 ԲԱՐԵԻ, Դ. 88:  
 ԲԱՆՆ ԱՍՏՈՒԾՈՅ. Դ. 169:

Պ.

- ԳԵՐԻ. Ազգայնական գերբերան. ԻԳ. 32, 33:
- ԳԻՐՔԵՐԸ. Ս. Գերբերան խորհրդանշան էն Հրեաները — Քրիստոսականները Բ. 39, 73:
- Գերբ անկեցողներն են քրիստոսականները և հրեայտ, ԻԹ. 45: Անուց բարբն ալ շարեր լին. Գ. 109, 110:
- ԳԱՅՐԻԷԼ հրեալուսիք, ԺԶ. 104: ԿԶ. 4: ՁԱ. 22:
- Յայտնական բերող. ԾԳ. 5, 6: ԹՆՎԻ հրեայ. Բ. 91, 92:
- ԳԵՀԷԼ. Տե. դժոխտ: Ե:Լը Կոստանտնուպոլիս, ԺԵ. 43, 44:
- Պահպանները, Խ. 52, 53:
- ԳՕԳ և ՄԱԳՈԳ. Եսոսոս և Մոսոս: ԺԸ. 93: ԻԱ. 96:
- ԳԻՆՈՎՈՒԹԻՒՆ, Դ. 46:
- ԳՍՏ ԳԷՆԵՐԸ, ԽԴ. 2, 3: ԴԷ. 1-5:
- ԳԸՊԱ. արքայական կոնստ, Բ. 109, 136, 138-145:
- ԳՍՂԹԱԿԱՆՆԵՐԸ (Մահապար), Թ. 101. ԾԹ. 8:
- ԳԱՀՆ Ասորոս, Բ. 256:
- ԳՈՂԻՆ յեւերը կորեցեթ, Ե. 42:

Պ.

- ԳՍՇԱԿՑՈՒԹԻՒՆ Անհասարակ բերան. Խ. 1-9: Թ. 4, 5: ԺԶ. 94, 96:
- ԳՍԻԹ, Բ. 252: Դ. 161: Ե. 82: Զ. 84: ԺԷ. 57: ԻԱ. 78: ԻԷ. 15: ԼԴ. 10, 11: ԼԸ. 16, 17, 20: ԺԴ. 49, 50: ԼԷ. 53, 60: ԼԹ. 57: ԼԹ. 48: ԽԱ. 24: ԽԷ. 17: ԿԷ. 8: ՀԴ. 26, 38:
- Թէ ճարտար և թէ դեկորացիոն: Է. 36: ԺԱ. 120:
- Դժոխտի պարթեաները, նաև դրոսիան հեղուկականները կրեան յատկանշան լուսը. ԺԱ. 109, 111:
- ԴԵԻՐԸ, (ձիգիւր.) Զ. 100, 128: ԼԸ. 157: ԽԱ. 24, 29:
- Կրակէ սրեղծանանքն. ԺԵ. 27: ԾԵ. 14:

- Անուց ճշ Քրիստոս և շարեր կան, ԺԱ. 120: ԻԷ. 39: ԼԸ. 36: ԽԶ. 28: ԻԶ. 212: Տե. Սարանա ԴԱՏԱՍՍԱՆ (Վերջից) ԻԲ. 2: ԻԳ. 103-105: ԻԸ. 84-90: ԼԴ. 67-69: ԽԴ. 9-10: Ծ. 19: ԾԴ. 41: ԿԸ. 42: ԿԹ. 14 և 5: 2, 8: ՀԱ. 8 և 5: ՀԷ. 7 և 5: 2, 33: ՁԱ. 1-14: ԶԲ. 1: ԶԴ. 1-6: ԶԸ. 1, Թ. 5: 9: ԾԱ. 3:
- Անի ժողովուրդ էր գերբերան Կոստանտնուպոլիս, Ե. 49-52:
- ԴՐԱՍ Կոստանտնուպոլիս (Ճեճճեթ). Բ. 23: Դ. 60: Ժ. 9: ԺԴ. 22-34: ԺԹ. 61-63: ԼԵ. 30: ԼԶ. 54 և 5: ԼԷ. 38, և 5: ԼԸ. 50: ԼԹ. 21. ԽԱ. 33: ԽԴ. 70: ԽԷ. 46: ԾԵ. 46-78: ԾԶ. 14-39: ԾԷ. 21: ՀԶ. 11-23: Դ. 13:
- ԴԷՄՔԵՐ ճեղքի և Դեփեր ալ. Դ. 102:

Ն.

- ԵՐՁԱՆԻԿՆԵՐԸ, Դ. 102, 103: Է. 40, 41, 42: Ժ. 26, 29: ԺԱ. 109: ԺԵ. 45: ԺԸ. 107: ԻԱ. 101: ԻԲ. 23: ԻԵ. 26: ԼԱ. 7: ԼԲ. 15, 16: ԼԵ. 30: ԼԶ. 38, 54 և 5: ԼԹ. 71-73: ԽԴ. 51: ԽԷ. 16: ԾԲ. 17: ԾԵ. 46-78: ԿԹ. 19: ՀԶ. 11-23: ՀԷ. 41: ՀԸ. 31: ԶԴ. 21-35: ԶԸ. 8:
- ԵՐԿԻՆԻՐԸ. Ե:Լը Երկնի կայ. ԿԷ. 3: ՀԸ. 12:
- ԵԴԵՄ. Թ. 73: ԺԴ. 23: ԺԸ. 30: ԼԷ. 30: ԿԱ. 12: Տե. Դրոսիան:
- ԵՂԻԱ ճարտար. Զ. 85: ԼԷ. 128:
- ԵՂԻԱԷ ճարտար. Զ. 86: ԼԸ. 48:
- ԵՐԿԻՆԻՐԱԾՈՒԹԻՒՆԸ Բնու. Բ. 172: Լ. 29:
- ԵՐԴՈՒՄ. Ե. 91: ԿԸ. 17, 18:
- ԵՆԹԱԴԻՆԸ Կոստանտնուպոլիս յայտնելու Դրոսիան, ԽԹ. 12:
- ԵՐԿԻՆԻՐԸ արեղծանանքն Երկնի, ԽԱ. 8: Ս. Երկնը, Ե. 24, 29:
- ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ, հասարակ քրիստոսական. Դ. 169: Ե. 77:

Չ.

ՉՐՊԱՐՏՈՒԹԻՒՆ առաջինի կանոց դեմ, ԻԴ. 23:  
 ՉԱԻԱԿ, ԼԱ. 13:  
 ՉՕՐԱԻՈՐՆԵՐԸ և պիտիները վերջին արարածներն ԼԴ-  
 30-36:  
 ՉԱՐԴԱՐԱՆՔ. է. 29, 30:  
 ՉՈՂ. ԸՆԾԱՅ. ԻԲ. 34-38: Ե. 2:  
 ՉԱՐԱՐԻԱ. Գ. 32: Չ. 85: ԺԹ. 1: ԻԱ. 85:  
 ՉԷՅՏ. Մահաձգողի արդեգները. ԼԳ. 37, և ծանօթ:

Տ.

ՏՊԼԻԱ. Մարանայ, Բ. 32: է. 40: ԺԵ. 31-33: ԺԷ.  
 63, 65: ԺԸ. 48: Ի. 115: ԻԶ. 95: ԼԴ. 49:  
 ՏՏՐԻԱ կամ Բարեբե. Տարգարե. ԺԹ. 57: ԻԱ. 85:

Թ.

ԹՇՆԱՄԻ: Ինչպես վարդաբերողը է ԽԱ. 34:  
 ԹՈՉՈՒՆԸ. Ավեր Տարդ էր ինչպես կամ ճակատագրերը ունի  
 ԺԷ. 14: ԻԷ. 48: ԼԶ. 18: ՃԵ. 3:  
 ԹՕՎԱ. հավերժ ուր Աստուծոյ Մովսէսին խօսեցաւ, Ի. 12:

Ր.

ՐԱՍԼԱԿ, Բ. 127, 130, 134: Չ. 84: ԺԱ. 74:  
 ՐԱՍԼԱՐԸ կամ Բարձրագոյնը, Բ. 122, 127, 134: Գ. 78:  
 ԺԲ. 78: ԽԹ. 14:  
 ՐԱՄԱՅԻԼ, Բ. 119, 121, 123, 127: Չ. 86: ԺԹ.  
 55: ԼԷ. 107: ԼԸ. 48:  
 ՐԱՐԱՅԷԼ, ԺԹ. 59: Տան երկու ցեղերը. Բ. 130:  
 ՐԱՐԱՅԷԼԱՅԻՔ. Բ. 35-87, 244: Ե. 74, 82: ԺԷ.  
 102. և Ի. 81, 82: ԼԲ. 23: ԽԴ. 29: ԽԵ. 15:  
 — Չին ուղիք կուտի էրեւոյ ինչպէսին դեմ Ե. 24-27:  
 ՏԵ. Հրեաները:

Ս.

ՍԱՐԴԱԽՆԵՐԸ Կշիւնի և շիւնի ճագին, ՉԳ. 1-3:  
 ՍԸՏՐ, ԺԸ. 62 և Ե:  
 ՏՈՒՐԱՆԸ, Չ. 92: ԺԱ. 46: ԺԵ. 47-49: ԺԹ. 97:  
 Ի. 112, 113: ԻԵ. 32, 34: ԻԷ. 78: ԻԸ. 48:  
 84: ԻԹ. 46-50: ԼԶ. 69: ԽԵ. 19: ԿԹ. 50:  
 ՉԱ. 49, 27: ՉԳ. 21: ՉԶ. 13: ՉԷ. 6:  
 — Աստուծոյն քորք ղնի է, Դ. 84: ԽԶ. 2-7:  
 — Պահապան է երկրիսին ղնի, ԺԳ. 39: ՉԵ. 24:  
 — Մաս ճագ յայտնաւոր. ԺԵ. 107:  
 — Ոչ ոք կարող չէ նմանը յորինել, Բ. 21, 22: Ժ. 39:  
 ՄԲ. 33, 34:  
 — Ստանալ էն դիւրը: ԽԶ. 28: Ի՞նչ կընեն անհա-  
 րանները, ԻԵ. 5, 6: Գործուն Մ. Գերգործն հաս-  
 րարարիանն է Գայն, Ժ. 38: Մտայնաւոր և Գա-  
 ղնաւոր. Բ. 100: ԺԶ. 103:  
 ՄՈՄԱՊԱՆՈՒԹԻՒՆ. Բ. 179-183:  
 ՄՆՈՂԻ: Պարտ ծնողաց հանդէպ, ԺԷ. 24, 25: ԻԹ.  
 7: ԼԱ. 13: ԽԶ. 14-16:

Վ.

ՎՇԻՈՒՐ, ԻԱ. 48: ՄԷ. 25:  
 ՎՆՈՒՆՔ կամ Մարտիրոսիան, Բ. 132:  
 ՎԱՅԷՆ Ե. 30-34:  
 ՎԻՆԵՐԸ և ճայրը, ԼԳ. 4: Դ. 1. և Ե: ԻԴ. 2, 6, 10,  
 26, 31, 59: ԿԵ. 1-6: ԿԶ. 1-5:  
 ՎԻՆԵՐԸ արեղծաւոր էն Տարդոց համար, Լ. 20:  
 — Պարտերները կընէր. Բ. 226, 222, 242:  
 — Ծեծեցէ՛ք. Մարտիրոսեալ էն Տարդոց, Բ. 228:  
 Դ. 38: ԽԴ. 17:  
 — Ո՛րո՞ւ աւել կընան Բարդաբեկ ԼԳ. 55:  
 — Շատ խորհրդի էն, ԺԲ. 28, 31: Շնայողները Դ. 19:  
 — Ինչպէս վարդաբերող է կընէր. հետ. Դ. 23, 38.

- Հասարակական և անհատական կենտրոններ Կ. 10: ԿԶ. 11, 12:
  - Մարտիրոսի ոգի կենտրոն կենտրոն արևելք. ԼԳ. 49, 51 59:
  - Անանյ պահպանակները. ԼԳ. 28, 29, 32: ԱժԷ կենտրոններին համար է. ԼԳ. 49:
  - ԿԵՂՄԱԻՈՐՆԵՐԸ. Բ. 9-49: Գ. 137-142: Ե. 57: Թ. 65-71: ԾԹ. 41: ԿԳ. 1. և և:
  - Ինչպես վարդապետ է անանյ հիշ. ԼԳ. 47: ԾԷ. 43:
  - ԿՈՍՊՈՆՏՆԵՐԸ, որան՝ Ասորոսի ընկերները կուսակցություն. Բ. 107, 112: ԺԹ. 66: ԻԵ. 2. 13. 15: ԻԸ. 62-74: ԾԲ. 34-49:
  - Պետրոս և պարտիկոսի անանյ դեմ. Թ. 36, 114, 115:
  - ԿՈՍՊՈՆՏՆՈՒԹՐՈՒՆԸ. Բ. 187, 214, 220: Է. 193, 194:
  - Երբեք ներքին լին. Գ. 51, 116:
  - ԿՈՒՌՔԵՐԸ Արարիչի պարտություն. Գ. 54:
  - ԿՈՍՊՈՆՏՆԵՐԸ ԵՔԷՊՈՍԻՆՆԸ. Ժ. 78-81: Ի. 60-75: ԻԶ. 37:
  - ԿԵՐԱԿՈՒՐՆԵՐԸ. Տես Արարիչի կերպարները
  - ԿՍԱԿ. Բ. 176-187: Ե. 105-107:
  - ԿԵՍՆՔԸ Հանրապետական. Զ. 32: ԽԲ. 19: Տես Յարդեգիանը:
  - Այս աշխատանքի. ԾԷ. 19:
- Հ.
- ՀՈԳԻ. ԺԲ. 53: ՂԱ. 7: ԺԷ. 87: Ասորոսի հոգին ներշնչություն Մարտիրոսի. Գ. 139: Բ. 81, 254:
  - ՀԱՄԱՅՆՈՒԹՅԱՆ ԾՃԳ. Զանգեզուր
  - ՀՐԵՇՏԱԿՆԵՐ. Բ. 28, 92, 156, 172, 206, 249: ԻԱ. 26, 27: ԻԲ. 74:
  - Ասորոսի արարիչները. ԼԵ. 1:
  - » Գառնի կենտրոն և ինքնավարության մասին. Խ. 7: ԽԲ. 3: ԿԹ. 17:
  - Անանյ և Պետրոսի խնդիրները Կենտրոնական օրենսդրություն. ԼԹ. 75:
  - Հասարակական կենտրոն օրենսդրություն. Գ. 120:
  - Կենտրոնական Արարիչի. Է. 10: ԺԸ. 48: Ի. 115:

- Կասարյանները որան՝ Ասորոսի աշխատանքի կենտրոններին. ԺԶ. 59: ԺԷ. 42: ԼԷ. 150: ԽԳ. 18:
- Գիտության պահպանակներ են, ՀԻ. 30:
- ԱժԷ մարդ անանյի պահպանակներին. Զ. 61, ԺԳ. 12:
- Մահաբան հրեշտակներ, Զ. 61: Է. 35: Ը. 52: ԺԶ. 3), 34. 35: ԼԲ. 41: ԽԷ. 29: Լ. 46:
- Ըմբոս հրեշտակներ ԺԵ. 28, 29: ԺԷ. 63: Բ. 96:
- ՀԱԻՍՏԱՅԵԱԿԸ. Թ. 72: ԻԵ. 64 և և. ԼԲ. 15-17: ԼԳ. 21, 26: ԽԹ. 44:
- ՀԱԻՍՏԻ և Բարեգործություն, ԺԶ. 99: ԿԲ. 4:
- ՀՐԵՍՆԵՐԸ Մահաբանի ժամանակակից. Բ. 59-88:
- Գ. 61: Թ. 30: ԾԸ. 15: Անանյ պարտիկոս, Գ. 50: Ե. 69: Անանյ ընկալություն. Գ. 117-179, 184-185:
- Գիտություն էլ ինչ են, Բ. 98: Գ. 48: Անանյ էլ ինչ 69:
- Աշխարհական են ասել մարդիկ ասել. Բ. 90: Չեքոսլովակիան, Ե. 69: ԽԽ. հակառակ են ինքնավարության. Ե. 65:
- ՀՆԳՍՄՍՏԵԱՆԸ կամ Մովսեսի հինգ զինվորները. Գ. 2, 4, 56, 87: Ե. 47, 48, 70, 72, 110: Է. 156: Թ. 112: ԻԸ. 43, 48: ԽԸ. 29: ԿԱ. 6: ԿԲ. :
- ՀՈՐԹԸ ասել. Բ. 48, 51, 85, 87: Գ. 152: Է. 146:
- ՀՈՎԵՐԸ Ասորոսին ինքնավարություն. ԼԸ. 33:

Պ.

- ՂՈՎՏ մարտիրոս. Զ. 86: Է. 78: ԺԱ. 73, 79-84: ԺԵ. 58, 59: ԻԱ. 71-74: ԻԲ. 43: ԻԶ. 160: ԻԷ. 55: ԻԹ. 24 և և: ԼԷ. 133: ԼԸ. 13: Ծ. 13:

Ջ.

- ՃԱԿԱՍՏԱԳՐԱԿԱՆՈՒԹՐՈՒՆ, Գ. 139: Ը. 17: ԺԳ. 30: ԺԴ. 4: ԽԲ. 6: Նախասահմանադրություն, ԺԸ:
- ՃԱՆՈՒԹ. Գառնի. Բ. 250-252:
- ՃԱԿԱՍՏԱԳՐԻ, ասել մարդ ճակարակները ասել: Տես Նախանք
- ՃԱՄՈՐՈՐԿՆԵՐԸ. ԺԷ. 28:

Մ.

- ՄԱՐԳՈՅ Բարձր Գրքերը Գրուած Եւ Աստուծոյ Իմ Թ. 122:
- ՄԱՐԴԱՍՊԱՆԸ, Գ. 94, 95: Ե. 33-37:
- ՄԱՏԻԱՆՅԻՔ, Է. 83: Թ. 71: ԺԱ. 85, 98: ԺԵ. 78: ԻԲ. 43: ԿՆ:
- ՄՈԳԵՐԸ, ԻԲ. 47:
- ՄՈՒՀՍՄԱՆՏ. ԼԲ. 2: ԽԸ. 29:
- Առաջ Գրքեր Եր, ԽԲ. 52: — Մարտիկ Եր ԳԳ. 7:
  - Անգրագրէր Ժամարէ. Է. 156, 158: ԿԲ. 2: ԺԹ. 29:
  - Կանխապայտած Է Գրքերուն Տե՛լ, Է. 456: ԽԶ. 9:
  - Մարտիկներու Ինչու Կա՛ Մարտիկ Է, ԼԳ. 40:
  - Յայտնութիւն Կընդունի Գրքերէլ Կրեւորի՛ Գընջաւ, ԾԳ. 9-11:
  - Կը Յարդի Կը Բա՛րձրանի, Թ. 64: ԻԱ. 27: ԻԵ. 5:
  - Ոչ Բանաստեղծ Է ոչ Գրեւոր, Է. 483: ԻԱ. 3-5: ԿԼ. 2: ԿԹ. 40, 42: ԶԱ. 22:
  - Բան Տը Կրեւոր Կարգայի Ժաման, ԽԶ. 8:
  - Կը Բանաստեղծ ԺԶ. 100: Յանրի՛մանուած Է 2 1-11:
  - Գրեւորան Ժամբարդութիւնը, Կա՛ Գրեւորը ԺԷ. 4:
- ՄԱՐԻԱՍ Յիսուսի Ժայռը, Գ. 31. 37-42: Գ. 169: Ե. 79: ԺԹ. 16: ԻԱ. 94, ԿԶ. 42: Զրպարտուած Կրեւորներէ. Գ. 155:
- ՄԷՍԻԱ, Գ. 156, 170, Ե. 77-79, 20: Տես Յիսուս:
- ՄՈՎՍԵՍ, Յիշուած ու պարտուած Է շար Տը Կընտրեւոր Տե՛լ:
- Անոր Գրեւորութիւնը Աստուծոյ Կեր, Է. 104, 138: Ի. 8, 9: ԻԷ. 7-10:
  - Փարսանի աղբի, Ի. 6-75: ԻԶ. 9: ԻԷ. 12: ԻԸ. 2-30 Կն: Տես Իսրայէլացիէ:
- ՄԵՂԻՅԵՐ Կէ Կրեւորի՛ ԾԳ. 33:
- ՄԱՐԳԱՐԷ Մարտիկին առանյնաշորհութիւնները Է Կարողեւորան պարտը անոր Կանրէլ, ԻԳ. 63: ԼԳ. 49-52 Կն: ԽԸ. 8, 9, 40:
- Որո՛ւ Է, ԻԱ. 7, 8: Բարդը յայտնութիւն Ընդուն

- Կան Էւ Աստուծոյ, ԻԱ. 25: Անոնց Տե՛լ Կարբէրութիւն Գրեւոր Բ. 254, 285: ԺԷ. 57:
- Պարտիկ Կեր Կ. Գ. 74: — Սուր Զ. 93:
- ՄԱՐԲՈՒԹԻԻՆ, Լուսար, Բ. 269: Գ. 46: Ե. 9:
- ՄԵՂԱՆՈՐԵՐԸ, Գ. 80-82, 102: Զ. 69: Է. 42-48: ԺԱ. 109: ԺԸ. 28, 400: ԻԱ. 45 Կն: ԻԲ. 20 Կն: ԻԵ. 26: ԼԱ. 5, 6: ԼԹ. 48, 61: ԽԳ. 43-48: ԾԳ. 43 Կն: ԾԶ. 40-57: ԿԱ. 19, 20 ԿԹ. 25: ԶԷ. 7-40: ԶԸ. 1-7: ԶԹ. 22 Կն:
- ՄԱԿԱՆՈՒՆ Կրեւոր (լուսար բարձր) Կրեւորան Է, ԽԹ. 12:
- ՄԱՆՄԵՍԱԿԱՆԵՐ Կարեւոր Թ. 43-58: — Անոնց շար Կարդուոր Կարդու Աստուծոյ. ԽԸ. 19:

Յ.

- ՅՈՅՆԵՐԸ. Լուսարները, Լ. 4:
- ՅԱԿՈՒՐ, Բ. 126, 127, 130, 134: Գ. 87: Զ. 84: ԺԱ. 74: ԺԲ. 6, 14, 48, 63, 66, 83, 94-100:
- ՅՈՎՀԱՆՆԷՍ, Զ. 85: Կա՛ Եանիւ. ԺԹ. 7: ԻԱ. 90:
- ՅԻՍՈՒՍ Մարտիկ Կրեւոր Բ. 81, 254: Ե. 50: Զ. 85: ԻԳ. 52: ԾԷ. 27: ԿԱ. 6, 14:
- Անոր Կարդուութիւնը, Գ. 40-52: Անիկա Աստուծոյ Կ. Գ. 73: Անիկա Ապանուած Կ. Գ. 156: Կա Աստուծոյ Ժաման Է Կայի, Ե. 109, 110, 116, Կն: ԽԳ. 50, 63: Անոր շնորհը, ԺԹ. 23, 24: Անոր Կարդուը, ԺԹ. 31: Տես Միւր:
- ՅՈՒՐ, ԻԱ. 83: ԼԸ. 40: Յո՛ւան, ԼԷ. 139: ԿԸ. 48:
- ՅՈՎՍԷՓ, Զ. 84: ԺԲ. 1-114: Խ. 36:
- ՅԱՉՈՐԳՈՒԹԻԻՆ, Գ. 8, 9, 12-16, 175:
- ՅԱՐՈՒԹԻԻՆ Կրեւոր, Բ. 261-263: Գ. 102: Է. 53: ԺԳ. 5: ԺԶ. 40: ԺԷ. 52, 100, 101: ԺԹ. 69: ԻԲ. 5: ԻԳ. 37, 82: ԻԷ. 67, 84: Լ. 49, Կն:

Ն.

ՆՈՅ (մարգարէ), Գ. 30: Դ. 164: Զ. 84: Է. 57:  
 ՆԱԽԱՍՍԱԶՄԱՆՈՒՄ (նախասագիր) Գ. 148: Զ. 35:  
 ԺԶ. 38, 39: ԼԲ. 13: ԼԳ. 38: ԼԴ. 19: ԼԵ.  
 9: ԼԶ. 6 և ն: ԾԳ. 83 և ն: ԾԷ. 22:  
 ՆԱԻԸ ԿՆՏ ԳՐԱԿԱՆ ԺԷ. 68-71: ԼԱ. 30:  
 ՇՆԱՅՈՂ. Դ. 19, 30: ԺԷ. 34: ԻԴ. 2-10: ԼԳ. 30:  
 ՇՈՍՅԼՆԵՐԸ. ԺԷ. 29-31:

Ո.

ՈՐԴԵԳՐ, ԼԳ. 4, 5, 37: ՈՐԵ. Ե. 95, 96:  
 ՈՂՈՐՄՈՒԹԻՒՆ. Բ. 214, 255, 265, 266, 268-275:  
 Գ. 86, 128: Թ. 60, 68, 99, 100: Լ. 38:  
 ԾԷ. 7, 40: ԾԸ. 13, 14: ԿԳ. 40: ԿԴ. 16, 17:  
 ՈՒՂՏԸ, ԻԲ. 37: ՆԱԽԳՐԱՆՆԻ ԳՐԱԿԱՆ. Է. 71: ԺԱ. 67:  
 ԻԶ. 155 և ն: ԾԴ. 27:  
 ՈՐԹԵՐԸ. Բ. 218: Դ. 2-6, 126: Զ. 153: ԺԷ. 36:  
 ՈՒՆՏԱԳՆԱՅՈՒԹԻՒՆ. Բ. 153, 154, 192, 193: Գ.  
 91: Ե. 2, 95, 96, ԻԲ. 25:

Պ.

ՊԱՐՏԱԿԱՆԸ, ԻՆՎԵՍՏԻՄԵՆՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆ. Բ. 280:  
 ՊԱՏՇԱՆՈՒԹԻՒՆ, ԻԴ. 57-59, ԻԵ. 72:  
 ՊԱՏԵՐԱԶՄ. Դ. 103: Ը. 47, 59, 60: Թ. 123, ԽԷ.  
 4, 5, 37: ԽԸ. 16, 17, Կ. 6:  
 — ԶԳՆՆԵՐԸ. Թ. 82-92: ԽԸ. 17:  
 — ԵՐԿՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆ. ԽԹ. 9:  
 Ս. ՊԱՏԵՐԱԶՄ, Բ. 186, 187, 212-215: Դ. 76:  
 Թ. 36, 38, 40-52: ԽԷ. 5, 37, 39, 40:  
 ՊԱՏԵՐԱԶՄԻ ԳԵՐԵՆԵՐԸ, Ը. 68-75:

Ղ.

ՂԱՁԵԼ ԳՐԱԿԱՆ ԳՐԱԿԱՆ. Բ. 100: ԺԶ. 103:  
 ՂՐԶԵՂԵՂ, ԾԴ. 9: ԿԹ. 11: ՏԵ. ՆՅ

Ս.

ՍՏԵՂՈՒՄԸ ԱՂԵՐՈՒՄ. ԺԶ. 67-69: Լ. 37: ԺԳ. 3-4:  
 — ԵՐԿՆԱԿԱՆ ԵՐԿՆԱԿԱՆ. ԽԱ. 8-11:  
 — ՄԱՐԿՈՍ ԿՆՏ ԳՐԱԿԱՆ. ԺԶ. 4-14, 81-83:  
 — ՄԱՐԿՈՍ. Ի. 5: ԶԶ. 2: ՏՆԱ ՄԱՐԿՈՍ:  
 ՍՈՒՏ ԼՈՒՐ ԳՐԱԿԱՆ. ԽԸ. 85:  
 ՍԱՂՄՈՒԸ, ԺԷ. 57: ԻԱ. 105:  
 ՍԱԼԷՆ, Է. 71: ԺԱ. 64, ԻԶ. 142 և ն: ԻԷ. 46:  
 ՍՈՂՈՄՈՆ, Բ. 60: Զ. 84: ԻԱ. 78-82:  
 — ԿԸ ԿՐԱԿԱՆ ԳՐԱԿԱՆ ԵՆԻՆՈՒՄ. ԻԱ. 81: ԻԷ.  
 17-28, ԼԴ. 11, 13: ԼԸ. 29, 38:  
 ՍԱՄԱՐԱՅԻՆ, ՈՒՂԵ ԿՐԱԿԱՆ. Ի. 87, 96:  
 ՍԱՏԱՆԱՅ. ԺԵ. 17: ԼԷ. 7, 27: ԺԸ. 48, ԺԹ. 69-  
 86: ԻԴ. 21: ԻԵ. 31: ԼԵ. 6: ԼԶ. 60 և ն:  
 ԽԷ. 27: ԾԸ. 11, 20: ԾԹ. 16: ԿԷ. 5: ՀԲ:  
 — ԻՐ ԳՐԱԿԱՆ ԳՐԱԿԱՆ. ԿՐԱԿԱՆ, Դ. 118: ԼԷ. 40-11:  
 — ԿԸ ԿՐԱԿԱՆ ԳՐԱԿԱՆ. Ի. 118: ԺԶ. 100:  
 ՍԻՃԻԼ, ԻԱ. 104: ՍԷՏԷՆ, ԶԴ. 7, 10:  
 ՍԻՆԱՅ ԼԵՌԸ, Բ. 87: Դ. 153: Ի. 82: ԻԸ. 44-46:  
 ՍԵՂԱՆԸ. ԵՐԿՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆ, Ե. 112, 113 և ն:  
 ՍԱՄՈՒՏՏԻՔ ԿՆՏ ԹԵՄԱԿԱՆ. ԱՐԻՔ ԳՐԱԿԱՆ ԳՐԱԿԱՆ,  
 ԴԸ. 71: ԺԱ. 64,  
 98: ԽԱ. 12-16: և ն:  
 ՍԱԽՈՒՂ (Թալար). Բ. 248-250.  
 ՍՈՒՏ ԵՐԴՈՒՄ ԸՆՏ ԳՐԱԿԱՆ ԱՐԻՔԱԿԱՆ ԿՐԱԿԱՆ. Ե. 91:

Պ.

ՎԱՏԱԶԱՄԲԱԿԱՆ ԳՐԱԿԱՆ. ԽԹ. 11:  
 ՎԱՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԿՆՏ ԳՐԱԿԱՆ. ԼԷ. 27:  
 ՎԱՐՁԱՍՐՈՒԹԻՒՆ ԳՐԱԿԱՆ. Զ. 161: Ժ. 28:  
 ՎՐԷՃԻՆԳՐՈՒԹԻՒՆ (Գրաստ), Բ. 173: Ե. 48, 49:  
 ՎԿԱՅՈՒԹԻՒՆ. Բ. 282: Դ. 134: Ե. 11: ՍԱՐԻՔ  
 ԿՐԱԿԱՆ. Բ. 177:



ՎԱՇԽԱՌՈՒԹԻՒՆ, Բ. 276, 277: Գ. 127: Լ. 31:

Փ.

ՓԱՅՏԸ որ կրկն կոչույ ասելով. ԼԶ. 8): ԾԶ. 74:

ՓԱՐԱԻՈՆ, Բ. 46: Գ. 9: Խ. 25-48: ԽԳ. 45-55:

— Կուսէ անդրախոյ երկնէ եւսլ. Խ. 38:

ՓՈՈՏՈՒՄ ՍՈՒԷՔ Արարչոյ ԼԵ. 41: ՓԷՂԸ ճԵ.

ՓՈՂԸ ԳԷՂԷՆ Գրարարանին, ԲԳ. 103: ԼԶ. 51: ԼԵ.  
19: ԳԹ. 13: ՀԹ. 6: Չ. 33:

Փ.

ՔԱՒԱՐԱՆ Կա՛ Մարանոյ (Արաճ). Է. 44. 48:

ՔՐԻՍՏՈՆԵԱՆԵՐԸ, Բ. 39, 407, 429: Թ. 30, 31:

— Նաալ Բնակի են Մանգրոնոյ ասն Հրեաները Լ  
Կապուշերը, Ե. 85:

— Ասնէ ու Խորդախոյ են քերտերը, Ե. 18:

ՔԵԱՊԷ Մեհեհի ասք արանը, անոյ Կապուշոյնը, Բ. 124:

ՔԱՂԱՔՆԵՐ Կրթանեալ. Թ. 71: ԾԳ. 54: ԳԹ. 9:

№ 9.

4922

2013

« Ազգային գրադարան



NL0032143

